ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ. Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ

(1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՆՐԻԿ ՄՈՒՇԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ

(1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ - 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ա 161

Մենագրությունը հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի պատմության
ֆակուլտետի գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝
պատմ. գիտ. դոկտ. պրոֆ. Հ. Մ. Հարությունյան
Գրախոսներ՝
պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Է. Գ. Մինասյան
փիլ. գիտ. դոկ., պրոֆ. Հ. Ղ. Միրզոյան
պատմ. գիտ. թեկն., դոց. Է. Լ. Զոհրաբյան

Հեղինակը շնորհակալություն է հայտնում իր ասպիրանտ Լիլիթ Մատինյանին, ուսանողուհի Նարե Մկրտչյանին, Արփինե Աբելյանին և Արմինե Սարգսյանին՝ աշխատության համակարգչային տարբերակը կազմելու համար:

Աբրահամյան Հ. Մ.
Ա 161 Հայաստանի անկախացման հասարակական-քաղաքական նախադրյալները և կայացման սկիզբը (1956 թ. փետրվար - 1991 թ. սեպտեմբեր)/Աբրահամյան Հենրիկ Մուշեղի, Եր.: ԵՊՀ հրատ., 2019, 398 էջ:

Աշխատությունում անդրադարձ է կատարվում 1956-1991 թ. պատմական իրողություններին՝ հայ ժողովրդի պատմության նշանավոր էջերից մեկին՝ այլախոհական շարժմանը, ընդհատակյա կազմակերպությունների գործունեությանը, Հայաստանի անկախության համար մղած պայքարին, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքի վերլուծությանը: Արխիվային բազմաթիվ նյութերի, փաստաթղթերի, ուսումնասիրությունների հիման վրա վերլուծվում և բացահայտվում են այն գործընթացները, որոնք հանգեցրին Խորհրդային Հայաստանում ընդհատակյա կազմակերպությունների ու այլախոհական շարժման ձևավորմանը, 1980-ական թթ. գորբաչովյան «վերակառուցմամբ» ծնված Արցախյան և հայ ժողովրդի համաժողովրդական շարժումների ծավալմանը, ինչպես նաև սկզբնավորեցին անկախության համար մղվող պայքարը:

Մենագրությունը նախատեսված է պատմաբանների, հասարակագետների և ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2413-5

© ԵՊՀ հրատ., 2019
© Աբրահամյան Հ. Մ., 2019

Աշխատությունը նվիրում եմ կնոջս՝ Իրինա Անժելյանի, հորս՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Մուշեղ, մորս՝ վաստակավոր ուսուցիչ Ղումաշ Համբարձումյանների անմոռաց հիշատակին, ինչպես նաև անկախության համար պայքարի ավելի քան 30 և Երևանի պետական համալսարանի 100-ամյակին:

Ներածություն

Ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի երրորդ հանրապետության ավելի քան 30-ամյա անկախության համար պայքարի և պետականության կերտման պատմությունը նշանակում է գնահատել և ներկայացնել անկախությանը նախորդած ժամանակաշրջանը, Խորհրդային Միության կառավարման այն համակարգը, որը, ի տարբերություն ամենօրյա պաշտոնական քարոզչության, կառուցված էր այնպիսի սկզբունքների և արժեքների վրա, որոնք կաշկանդում և խոչընդոտում էին մարդ-անհատին ազատորեն ներկայացնելու իր կարծիքը, պաշտպանելու իր իրավունքները, դրսևորելու տարբեր կարգերի նախաձեռնություններ, որոնք կարող էին հակադրվել երկրում գործող համակարգին: Նման քայլերը խստորեն հետապնդվում և պատժվում էին, որքան էլ որ դրանով երկիրը կանգնեցնում էին նոր դժվարությունների, անգամ փակուղու առաջ:

Մինչդեռ առանց արմատական փոփոխությունների Խորհրդային Միությունը չէր կարող լինել մրցունակ և դիմակայել ժամանակի մարտահրավերներին: Նման փորձ կատարեց Խորհրդային Միության վերջին ղեկավար՝ Մ. Ս. Գորբաչովը՝ իրականացնելով պատմությանը հայտնի «Վերակառուցման» քաղաքականությունը, քաղաքականություն, որն ավելի բացահայտեց Միության արատները՝ արագացնելով Խորհրդային Միության փլուզումն ու նորանկախ պետությունների, այդ թվում՝ նաև Երրորդ հանրապետության կայացումը: Այդ իմաստով հայոց պատմագիտության ներկա ժամանակաշրջանի կարևոր հարցերից մեկը Հայաստանի երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրումն ու նրա գործունեության օբյեկտիվ վերլուծությունն են, իսկ իշխանությունների կարևոր խնդիրներից մեկը՝ նախորդ պատմությունից դասեր քաղելը և երկրի զարգացման համար նորմալ պայմանների ապահովումը, ժողովուրդ-իշխանություն հարաբերությունների ամրապնդումն ու հուսալի հենարանի ստեղծումը:

Թվարկված խնդիրները միանգամից չէ, որ լուծում են գտնում: Այստեղ իրար են միահյուսվում բազմաթիվ հարցեր, ներքին և արտաքին քաղաքականության նորանոր գործոններ, որոնց վերհանումը, իրական դիրքերից լուսաբանումն ունեն գիտատեսական և գիտագործնական կարևոր նշանակություն: Եվ որքան էլ հայ ժողովուրդը պատմության տարբեր ժամանակներում կորցրել է պետականությունը, միևնույն է, պետականությունը վերականգնելու ձգտումը հայ ժողովրդի գիտակցության, ոգու մեջ չի մարել, ինչն էլ նոր ուժով կրկին դրսևորվեց 20-րդ դարի ավարտին՝ նպատակին հասցնելով այդ երազանքը, որն ավելի շոշափելի դարձավ 1980-1990-ական թվականներին:

Նշենք, որ ժամանակակից աշխարհի անընդհատ, հարահոս փոփոխվող նոր մարտահրավերներին դիմակայելու և պետությունների միջև տեղի ունեցող հախուռն սերտաճմանը (ինտեգրում) կուլ չգնալու և սեփական, ազգային դիմագիծն ու ինքնությունը պահպանելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր պետություն մշակի երկրի զարգացման, նրա անվտանգության ամրապնդման համար նոր ռազմավարություն, որը համաշխարհայնացման (գլոբալացում) նոր պայմաններում միակ հուսալի և կարևոր գործոնն է հասարակության առաջընթացն ապահովելու համար:

Փաստ է նաև, որ երկար տասնամյակներ հայ ժողովուրդը բազմաթիվ այլ ժողովուրդների հետ միասին եղել է Խորհրդային Միության կազմում և բոլորի հետ անցել բավական մեծ ճանապարհ, ունեցել է և՛ հաջողություններ և՛ թերություններ, նաև սխալներ ու բացթողումներ: Իսկ դա բացատրվում է այն հանգամանքով, որ Խորհրդային Միության կառավարման համակարգն այնպիսին էր, որ Միության մեջ մտնող ժողովուրդները, հանրապետությունները, ինքնուրույն չէին կարող տնօրինել իրենց ճակատագիրը, լուծել հանրապետություններում ծառացած խնդիրները, որոնք տարիների ընթացքում կուտակվում և առաջացնում էին կենտրոն-ծայրամաս, ազգային հանրապետությունների միջև հակասություններ, ներքին դժգոհություններ, կենտրոնին հակադրվելու, նույնիսկ նրանից ան-

ջատվելու ձգտումներ, տրամադրություններ, որոնց մասին բարձրաձայնել հնարավոր չէր: Կառավարման նման համակարգը գնահատվում և որակվում էր որպես ամբողջատիրական (տոտալիտար) համակարգ, որի ժամանակ հաճախ ոտնահարվում էին մարդ-անհատի, նաև առանձին ժողովուրդների իրավունքները, ինչն էլ օր օրի էլ ավելի էր մեծացնում կենտրոնի և ծայրամասերի, Միության մեջ մտնող սուբյեկտների, երկրի ղեկավարության և աշխատավորական զանգվածների միջև հակասությունները, որոնք ձգտում էին դուրս գալ Միությունից և ինքնուրույն տնօրինել իրենց ճակատագիրը:

Ուսումնասիրել վերոնշյալ խնդիրները և լայն հասարակայնությանը ներկայացնել հայոց նորագույն պատմության՝ 1950-1980-ական թթ. և Երրորդ հանրապետության կայացման պատմությունը, նրա անցած ճանապարհի առաջին քայլերը, դժվարություններն ու բարդությունները, ներքին և արտաքին մարտահրավերները կարևոր ու արդիական են ներկա և ապագա սերունդների համար:

Աշխատանքը գրված է արխիվային բազմաթիվ նյութերի, փաստաթղթերի հիման վրա, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվում, նրա երկու մասնաճյուղերում՝ նախկին Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական (ՀՀ ՀՔԿՊԿԱ) և Հայաստանի ազգային արխիվի բազմաթիվ ֆոնդերում:

Ի դեպ, հետաքրքիր է նշել, որ արխիվային նյութերի մի զգալի մասը՝ բավական շատ ֆոնդեր, երկար տասնամյակներ պահվում էին գաղտնի թղթապանակներում, որոնց նյութերին ծանոթանալը արգելվում էր հետազոտողների համար: Իսկ եթե անգամ թույլատրվում էր, միևնույն է, ուսումնասիրողը իրավունք չուներ դրանք նույն ձևով հրատարակելու, քանի որ յուրաքանչյուր փաստաթղթի վրա գրված էր՝ «Առանց հրապարակման իրավունքի», որը նշանակում էր, որ ուսումնասիրողը կարող էր հրապարակել այդ նյութի, փաստաթղթի բովանդակությունը և ոչ թե ամբողջ փաստաթուղթը նույնությամբ: Դեռ ավելին, Կոմունիստական կուսակցության պատմության վերաբերյալ ուսումնասիրությունները պետք է գրվեին միայն դրական փաստերի,

նյութերի հիման վրա: Այդ փաստը խորհրդային գրաքննության սկզբունքներից մեկն էր, որը վաղուց արդեն վերացվել և գաղտնազերծվել է՝ հնարավորություն տալով ուսումնասիրողներին այդ նյութերը հրապարակել և դնել գիտական շրջանառության մեջ, ինչին էլ մենք ձեռնամուխ ենք եղել:

Գաղտնի թղթանապանակները կազմվել և հանրապետության ղեկավարությանը՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմին, նրա բյուրոյի առաջին քարտուղարներին են հղվել Խորհրդային Հայաստանի անվտանգության կոմիտեից, ներքին և արտաքին գործերի նախարարություններից, որոնցում վերլուծվում և գնահատվում էին հանրապետությունում ստեղծված օպերատիվ վիճակը, սփյուռքի հայության արձագանքները Խորհրդային Միությունում սկսված գորբաչովյան «վերակառուցման» և Արցախյան շարժման նկատմամբ: Ծանոթանալով աղբյուրագիտական բազմաթիվ նյութերին՝ ավելի լավ պատկերացում ենք կազմում հասարակական-քաղաքական այն մթնոլորտի մասին, որն այդ տարիներին ձևավորվել էր ինչպես Միությունում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում, նրա կյանքի բոլոր օղակներում, աշխատանքային կոլեկտիվներում, բուհերում, գիտական-ստեղծագործական հիմնարկներում և այլուր: Այդ իմաստով անչափ արժեքավոր և հավաստի են արխիվային այն նյութերը, տասնյակ և հարյուրավոր այն փաստաթղթերը, որոնք մենք տարիների ընթացքում ուսումնասիրել և, ինչպես նշեցինք, գիտական շրջանառության մեջ ենք դրել՝ աշխատելով դրանց նկատմամբ ցույց տալ օբյեկտիվ և անկողմնակալ մոտեցում, թողնելով այն նաև ընթերցողի հայեցողությանը:

Ինչ խոսք, թեմայի ուսումնասիրության ուղղությամբ հայ պատմագիտությունը նույնպես բավական աշխատանք է կատարել և շարունակում է կատարել: Հրապարակի վրա են բազմաթիվ աշխատություններ՝ գիտական հոդվածներ, արխիվային նյութերի հրապարակումներ և այլն: Այդ հարցը եղել և այսօր էլ մնում է հայ պատմաբանների, քաղաքագետների, տնտեսագետների և այլ մասնագետների ուշադրության կենտրոնում: Եվ դա հասկանալի է, քանզի դրա

ուսումնասիրումը ներկա սերնդի կողմից, որքան էլ որ այն սուբյեկտիվ դրսևորումներ կարող է ունենալ, քանի որ նա վերջին հաշվով նաև ականատեսը, մասնակիցն ու ժամանակակիցն է եղել այդ գործընթացներին, այնուամենայնիվ պատմական փաստարկների վրա ուսումնասիրություններ կատարելը անհրաժեշտ է՝ հաջորդ սերունդներին այդ օրերի պատկերացումներն ու ընկալումները փոխանցելու համար:

Մեր ուսումնասիրման շրջանը ժամանակագրական տեսանկյունից համընկնում է ինչպես 1950-ական թթ. կեսերից սկսված խրուշչովյան «ձնհալի», այլախոհական շարժման, 1960-ական թթ. ծավալված ընդհատակյա կազմակերպությունների գործունեության, այնպես էլ 1980-ական թթ. երկրորդ կեսից սկիզբ առած գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականության այն ժամանակաշրջանին, որի արդյունքում ինչպես Միությունում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում հասարակական-քաղաքական կյանքը ենթարկվեց մեծ փոփոխությունների: Անկախ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի, Հայաստանի կոմկուսի կենտկոմի, Կենտկոմի բյուրոյի բոլոր քայլերից՝ հնարավոր չէր վերակառուցումը տանել կանխագծած հունով, քանի որ ավելի քան երբևէ բարձրացավ մասսաների, աշխատավորական զանգվածների քաղաքական ակտիվությունը, որոնք, ոգևորված «վերակառուցման» գաղափարներով, ոտքի կանգնեցին և կենտրոնից, հանրապետության իշխանություններից պահանջեցին չբավարարվել միայն տասնամյակներ շարունակ հաստատված ոչինչ չփոխող կարգախոսներով, այլ անել կոնկրետ քայլեր երկիրը՝ փոխելու, անցյալի սխալներն ուղղելու և պատմական ճշմարտությունը վերականգնելու համար:

Ի դեպ, պատմության այդ ժամանակաշրջանի ուսումնասիրման ուղղությամբ որոշակի աշխատանք է կատարվել հանրապետության մի շարք գիտնականների, հետազոտողների, մասնագետների կողմից: Նրանց շարքում են Ռուբեն Ազիզբեկյանը[1], Էդիկ Մինասյանը[2],

[1] Տե՛ս **Ազիզբեկյան Ռ.,** Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Երևան, 1992:

Էդուարդ Պողոսյանը[3], Հրանտ Բագրատյանը[4], Հրանտ Աբրահամյանը[5], Ժիրայր Լիպարիտյանը[6], Գևորգ Պողոսյանը, Սամսոն Մխիթարյանը[7], Գարիկ Քեռյանը[8], Պարույր Հայրիկյանը[9], Արմենակ Մանուկյանը[10], Հենրիկ Աբրահամյանը[11], Սուրեն Հարությունյանը[12], Լևոն

---

[2] Տե՛ս **Մինասյան Է.,** Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Երևան, 2003, Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2014:

[3] Տե՛ս **Պողոսյան Է.,** Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Երևան, 2013:

[4] Տե՛ս **Բագրատյան Հ.,** Հայաստանը դարերի սահմանագծին, Երևան, 2003, Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Երևան, 2000, Հասարակությունը և պետությունը, Երևան, 1999: Տնտեսական աճի պարադիգմ, Երևան, 2003:

[5] Տե՛ս **Աբրահամյան Հ.,** Մարտնչող Արցախը 1917-2000, Գիրք Գ, 1985-2000, Երևան, 2007: «Կռունկ», Ստեփանակերտ, 2013: Արցախի հասարական-քաղաքական կյանքը և հայոց եկեղեցին (1855-1876 թթ.), «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, Երևան, 2014:

[6] Տե՛ս **Լիպարիտյան Ժ.,** Պետականության մարտահրավերները, Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երևան, 1999:

[7] Տե՛ս **Պողոսյան Գ., Մխիթարյան Ս.,** Ժողովուրդ, իշխանություն, առաջնորդներ, Երևան, 1996, **Պողոսյան Գ.,** Հայ հասարակությունը 21-րդ դարասկզբին, Երևան, 2006:

[8] Տե՛ս **Քեռյան Գ.,** Հայաստանի երրորդ հանրապետության կուսակցական համակարգը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 1996, Քաղաքական կուսակցություններ, Երևան, 1996, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Երևան, 2002:

[9] Տե՛ս **Հայրիկյան Պ.,** Անկախության ճանապարհի երեք վավերագրեր, Երևան, 1997: Ազգային միացյալ կուսակցություն. Ծրագիր, կանոնադրություն և պարագայք, Երևան, 1991:

[10] Տե՛ս **Մանուկյան Ա.,** Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ., Երևան, 2005:

[11] Տե՛ս **Աբրահամյան Հ. Մ.,** Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2009, Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011 թթ., Երևան, 2011: Անցումը միակուսակցական համակարգից բազմակուսակցության՝ Հայաստանի Հանրապետությունում որպես ժողովրդավարության գործոն (1991-2012 թթ.), «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, Ա, Երևան, 2013, էջ 3-10: ԽՍՀՄ փլուզումը և նորանկախ պետությունների առաջացումը՝ որպես աշխարհաքաղաքական նոր իրողություն, «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, Բ (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2013, էջ 38-49: Ժողովրդավարությանն ընդառաջ, Երևան, 1998, էջ 92-101: Ժողովրդավարության սկզբունքների դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում, նույն տեղում, էջ 102-109: Հայաստանի Հանրապետության անկախացումը և հասարական-քաղաքական կյանքի առաջին փուլերը 1980-1990-ական թվականներին, «Պատմություն և մշակույթ»,

Տեր-Պետրոսյանը[13], Սերգեյ Համբարձումյանը[14], Հրաչիկ Սիմոնյանը[15], Վազգեն Մանուկյանը[16], Վանո Սիրադեղյանը[17], Կտրիճ Սարդարյանը[18], Հարություն Մարությանը[19], Գրիգոր Գրիգորյանը[20], Ֆադեյ Սարգսյանը[21], Աշոտ Սարգսյանը[22], Վլադիմիր Ստուպիշինը[23],

---

Հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2016, էջ 219-229: Բազմակուսակցությունը՝ որպես ժողովրդավարության կարևոր գործոն, «Պատմության հարցեր», Տարեգիրք N2, Երևան, 2013, էջ 258-277: ՀՀ անկախությունը և հասարակական-քաղաքական կյանքի ակտիվացման առաջին քայլերը 1980-1990-ական թվականներին, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, Գիտաժողովի զեկուցումների դրույթներ, 2016 թ., հուլիսի 15, Երևան 2016, էջ 43-47: Ազգամիջյան հարաբերությունները արդի ժամանակաշրջանում (համահեղինակ՝ Լիլիթ Մատինյան), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2017, N2, էջ 119-228: Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, N3, էջ 3-20: Ներկայացուցչական դեմոկրատիան և ընտրազանգվածների քաղաքական կուլտուրան, «Սահմանադրական դատարան», N2, 1999, էջ 13-18: Արցախյան շարժումը՝ որպես վերակառուցման ծնունդ (համահեղինակ՝ Մատինյան Լիլիթ), «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2017, էջ 229-236: Գորբաչովյան վերակառուցումը և զարգացման փուլերը (1985-1990 թթ.) (համահեղինակ՝ Մատինյան Լիլիթ), «Լրաբեր հասարակական գիտությունների», N2, էջ 94-102, Երևան, 2018: Արդի քաղաքական համակարգի ձևավորումը Ռուսաստանի Դաշնությունում (համահեղինակ՝ Արսեն Գրիգորյան), «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, 1(30), էջ 193-207, Երևան, 2007:

[12] Տե՛ս **Հարությունյան Ս.,** Անցյալի և ներկայի մասին, Երևան, 2011:

[13] Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.,** Ընտրանի, Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Երևան, 2006:

[14] Տե՛ս **Համբարձումյան Ս.,** Երեք տարի սիրո և մահվան սահմանագծին, Երևան, 1998:

[15] Տե՛ս **Սիմոնյան Հ.,** Նորից ազգային արժանապատվության մասին, Ո՞րն է մեր ճանապարհը, Երևան, 1990, էջ 116-124:

[16] Տե՛ս **Մանուկյան Վ.,** Գնացքից թռչելու ժամանակն է, Ո՞րն է մեր ճանապարհը, Երևան, 1990, էջ 7-43: Չորս հարց Վազգեն Մանուկյանին, նույն տեղում, էջ 44-52:

[17] Տե՛ս **Սիրադեղյան Վ.,** Առաջին և վերջին քայլը ազատության ճանապարհին, Ո՞րն է մեր ճանապարհը, Երևան, 1990, էջ 86-92:

[18] Տե՛ս **Սարդարյան Կ.,** Հայաստանի Հանրապետության պատմությունը, «Վերածնված Հայաստան» ամսագրի էջերում, Ո՞րն է մեր ճանապարհը, Երևան, 1990, էջ 67-69:

[19] Տե՛ս **Մարության Հ.,** Հայ ինքնության պատկերագրությունը, Հատոր 1, Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, 2009:

[20] Տե՛ս **Գրիգորյան Գ.,** Ղարաբաղյան օրագիր (1988-1992), Երևան, 2005:

[21] Տե՛ս **Սարգսյան Ֆ.,** Կյանքի դասերը, Երևան, 2013:

[22] Տե՛ս **Սարգսյան Ա.,** Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը (1988-1998 թթ.), Երևան, 2015:

Լ. Մ. Ալեքսեան[24], Ռիմա Դեմիրճյանը[25], Կարլեն Դալլաքյանը[26] և շատ ուրիշներ:

Բավական շատ են նաև պաշտոնական, վիճակագրական, տեղեկատվական տարբեր կարգի հետազոտությունները, օրենսդրական բնույթի որոշումները, ակտերը, որոնք վերաբերում են հայոց պետականության կայացմանը, Արցախյան հիմնահարցի լուծմանը, Հայաստանի երրորդ հանրապետության կառուցման բազմաթիվ խնդիրներին, անցման շրջանի հարցերին և այլն[27]:

---

[23] Տե՛ս **Ступишин В.,** Карабахский конфликт 1992-1994, Москва, 1995: Моя миссия в Армению, Москва, 2000:

[24] Տե՛ս **Алексеева Л. М.,** История инакомыслия в СССР, Москва, 2012:

[25] Տե՛ս **Դեմիրճյան Ռ.,** Հիշատակ, Երևան, 2012:

[26] Տե՛ս **Դալլաքյան Կ.,** Հուշապատում (Դեմքեր, իրողություններ), Երևան, 1998:

[27] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, Երևան, 1991: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, Երևան, 1992: Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995: Հայության կոչերն ու դիմումները՝ ԼԴԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988-1989), Երևան, 2014: Հայաստանի Հանրապետություն. Կուսակցություններ, Երևան, 2002: Հայաստանի Հանրապետություն. Կուսակցություններ. Տեղեկագիր - 2007, Երևան 2007: Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունները, Երևան, 1996: Անկախության և անցումային տասը տարիները Հայաստանում, «Մարդկային զարգացման ազգային զեկույց», Հայաստան 2001: Ազդակ. Անկախութեան տասնամեակ 1991-2001, Ուրբաթ 21, Սեպտեմբեր, 2001: «Մարդկային զարգացման ազգային զեկույց», Հայաստան 1998, Պետության դերը: «Մարդկային զարգացման ազգային զեկույց», Հայաստան 1995, Երևան, 1995: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ 1990-1995, Երևան, 1995: Հայաստանը փոխակերպվող աշխարհում, Երևան, ՌԱՀՀԿ: Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. Կարգավորման ուղիներ. Խորհրդարանի լսումներ, 29-30 մարտի, 2005 թ., Երևան, 2006: Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարի նյութերը, Երևան, 1986: ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը 1986 թ. հունիսի 16-ին, Երևան, 1986: ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը 1987 թ. հունիսի 25-26-ին, Երևան, 1987: **Գորբաչով Մ. Ս.,** Ժողովրդի կենդանի ստեղծագործությունը, Երևան, 1985: **Գորբաչով Մ. Ս.,** Հոկտեմբերը և վերակառուցումը. Հեղափոխությունը շարունակվում է 1917-1987 թթ., Երևան, 1987: **Горбачев М. С.,** Перестройка и новое мышление для нашей страны и для всего человечества, Москва, 1987. **Горбачев М. С.,** О национальной политике партии в современных условиях, Москва, 1989. Правда о Нагорном Карабахе (материалы и домументы), Ереван, 1989. **Богданович, Маначинский А. Я., Егоров Ю. В., Муха В. А., Бортник А. А.,** Конфликты и войны после распада СССР, Киев, 2008. **Саркисян М.,** Нагорный Карабах: война и политика (1990-1993 гг.), Война в Нагорном Карабахе и внутренний конфликт в

Թվարկած հեղինակների շարքում հետաքրքրությամբ է ընթերցվում Ռուբեն Ազիզբեկյանի «Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն» աշխատությունը: Հեղինակը քննարկում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «վերակառուցումը» և Հայաստանը, Արցախյան շարժումը, Ադրբեջանի վարած հայահալած քաղաքականությունը, անկախ պետականության հռչակումը և այլն:

Ռ. Ազիզբեկյանի վերոհիշյալ աշխատությունը գորբաչովյան «վերակառուցման», Արցախյան շարժման, Հայաստանի անկախությանը նվիրված առաջին ուսումնասիրություններից մեկն է, որը գրված է մամուլից և առանձին հեղինակների աշխատություններից քաղած փաստագրական նյութերի հիման վրա: Աշխատության վերջում՝ «Հավելված» բաժնում, հեղինակը ընթերցողին է ներկայացրել Արցախյան շարժման և Հայաստանի անկախ պետականության հաստատման գործընթացի մասին փաստաթղթեր, որոնք հարցի ուսումնասիրման համար ունեն աղբյուրագիտական նշանակություն:

Նույնպիսի հետաքրքրությամբ են ընթերցվում Էդիկ Մինասյանի Արցախյան շարժմանը և Հայաստանի երրորդ հանրապետությանը նվիրված ուսումնասիրությունները՝ «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.)», (Երևան, 2003), «Հայաստանի երրորդ հանրապետության պատմու-

---

армянском обществе, Ереван, 2010. **Елисеева,** История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016. **Волкогонов Д.,** Семь вождей, Книга 2. Леонид Брежнев, Юрий Андропов, Константин Черненко, Михаил Горбачев, Москва, 1995. Подстрочник. Жизнь Лилианы Лунгиной, рассказанная ею в фильме Олега Бормана, Москва, 2015. Армения: проблемы независимого развития, Москва, 1998. **Галичян Р.,** Мифологизация истории, Азербайджан, Армения, вымыслы и факты, Ереван, 2010: **Золян С.,** Нагорный Карабах: проблема и конфликт, Ереван, 2010. Томас де Ваал, Армения и Азербайджан между миром и войной, Москва, 2014. **Оганесян Н.,** Карабахский конфликт: Этапы подходы, варианты решения, Ереван, 1997. Правда о Нагорном Карабахе: материалы и документы, Ереван, 1989. Примаков Евгений, Мир без России? К чему ведет политеческая близорукость. Москва, 2009. Ускорение. Актуальные проблемы социально-экономического развития, Москва, 1985. **Уильям Тауб-ман, Хрущев,** Жизнь замечательных людей, Москва, 2014. **Боффа Дж.,** От СССР к России, Москва, 1996, **Верт Н.,** История Советского государства, Москва, 1999. **Мунчаев Ш. М., Устинов В. И.,** История Советского государства, 2-е издание, Москва, 2008. **Шинкарецкая Г. Г.,** Содружество независимых государств (правовые основы деятельности), Москва, 2006:

թյուն» (Երևան, 2014) մենագրությունները, և տասնյակ այլ հոդվածներ: Չնայած Էդիկ Մինասյանի առաջին աշխատությունը նվիրված է հանրապետության սոցիալ-տնտեսական հարցերին, հեղինակը նաև որոշակի տեղ է տվել նորաստեղծ երրորդ հանրապետության քաղաքական կյանքին, անկախության հռչակմանը, պետականության կայացման դժվարին ու բարդ խնդիրներին, բանակաշինությանը և այլն: Շատ ավելի հանգամանալից ուսումնասիրություն է հեղինակի «Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն» (Երևան, 2014) ստվարածավալ աշխատությունը, որտեղ առանձին գլուխներ են նվիրված Հայաստանի երրորդ հանրապետության կայացման հարցերին՝ սկսած գորբաչովյան «վերակառուցումից» մինչև Հայաստանի անկախությունը, Արցախյան շարժումը և բազմաթիվ այլ հարցեր: Է. Մինասյանի կատարած աշխատանքը Հայաստանի երրորդ հանրապետության պատմության շարքում առանձին տեղ է գրավում և արժանի է ուշադրության, չնայած նրանում բարձրացված առանձին հարցերը, տարբեր մեկնաբանություններն ու գնահատականները որոշ ուսումնասիրողների կողմից արժանացել են քննադատության և բացասական գնահատականների: Մենք չենք անդրադառնա վերոնշյալ տեսակետների ավելի մանրամասն քննարկմանը, մանավանդ որ հեղինակն իր «Հայաստանի երրորդ հանրապետություն» աշխատությունում բավական բարձր դիրքերից է գնահատել թե՛ Արցախյան շարժումը, թե՛ «Ղարաբաղ» կոմիտեի, ՀՀՇ-ի գործունեությունը, նրա անուրանալի դերակատարությունը հայ ժողովրդի անկախության ձեռքբերման և հայոց նոր պետականության կայացման ու զարգացման գործում:

Ուշադրության արժանի է նաև Էդուարդ Վանիկի Պողոսյանի «Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.)» աշխատությունը, որտեղ հեղինակը հանգամանորեն վերլուծել է Երրորդ հանրապետության պետականության կայացման և հաստատման բազմաբնույթ խնդիրները: Նշված ուսումնասիրությունը կարևոր է երրորդ հանրապետության պատմության,

հատկապես պետականության կայացման անչափ բարդ խնդիրների ուսումնասիրման տեսանկյունից:

Արժեքավոր են նաև Հրանտ Աբրահամյանի «Մարտնչող Արցախը 1917-2000», Գիրք Գ. 1985-2000 (Երևան, 2007) և «Կռունկ» (Ստեփանակերտ, 2013) աշխատությունները, որոնցում հեղինակը ներկայացրել է Արցախի ժողովրդի հերոսական պայքարը անկախության համար:

Հետաքրքիր են նաև Արմենակ Մանուկյանի, «Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ.» (Երևան, 2005), «Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ.» (Երևան, 1999) աշխատությունները, որոնցում հեղինակը հանգամանորեն ներկայացրել է ստալինյան բռնությունների պայմաններում Հայաստանում գաղտնի գործող այլախոհական շարժումը:

Գարիկ Քեռյանը նույնպես բավական աշխատանք է կատարել Հայաստանի երրորդ հանրապետության քաղաքական կուսակցությունների գործունեության ուսումնասիրման վերաբերյալ՝ հրատարակելով «Հայաստանի երրորդ հանրապետության կուսակցական համակարգը և քաղաքական կուսակցությունները» (Երևան, 1996), «Քաղաքական կուսակցությունները» (Երևան, 1996), «Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը» (Երևան, 2002) աշխատությունները, որոնցում կարևորել է քաղաքական կուսակցությունների դերը հանրապետության քաղաքական կյանքում, հատկապես կուսակցությունների տիպաբանության, դասակարգման հարցը, որոնք ներկայացրել է քննական-համեմատական վերլուծության ձևով:

Գևորգ Պողոսյանի ու Սամսոն Մխիթարյանի համատեղ հրատարակած «Ժողովուրդ, իշխանություն, առաջնորդներ», (Երևան, 1996) աշխատությունում հեղինակները կատարել են սոցիոլոգիական վերլուծություն, որտեղ ցույց են տվել հանրապետության բնակչության դիրքորոշումը երկրի քաղաքական առաջնորդների և հանրապետության անկախության նկատմամբ: Հեղինակները այդ ամենը ներկայացրել են ըստ տարիների՝ 1991 թվականից մինչև 1996

թվականները, ցույց տվել ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունները:

Հետաքրքիր է նաև անկախության պայքարի բովով անցած, երկար տարիներ դրա համար դատապարտված Պարույր Հայրիկյանի հրապարակախոսական և գրական ժառանգությունը: Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի հատուկ ֆոնդում պահպանվել են նրա քաղաքական կյանքի տարբեր փուլերը ներկայացնող բազմաթիվ նյութեր, հայոց անկախ պետականության համար մղած պայքարին վերաբերող տասնյակ փաստաթղթեր, թղթապանակներ, որոնց հիմնական բովանդակությունը պայքարն է Արցախի անկախության և շարժման պաշտպանության համար: Դրանց շարքում հատկապես կարևորվում են նրա հեղինակած այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են «Անկախության ճանապարհի երեք վավերագրեր» (Երևան, 1997), «Ազգային միացյալ կուսակցություն. Ծրագիր, կանոնադրություն և պարագայք» (Երևան, 1991), «Դեպի բացարձակ ժողովրդավարություն» (Երևան, 2013) աշխատությունները, որոնցում կարմիր թելի պես անցնում է նրա պայքարի հավատո հանգանակը՝ անկախության համար պայքարը:

Հետաքրքիր է նաև Հարություն Մարությանի «Հայ ինքնության պատկերագրությունը. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը» (հ. 1, Երևան, 2009) աշխատությունը, որտեղ հեղինակը ուսումնասիրել և ներկայացրել է Արցախյան շարժմանը նվիրված ամենօրյա հանրահավաքների ընթացքում Թատերական հրապարակում հանրահավաքի մասնակիցների կողմից բերված այն թռուցիկները, պաստառները, որոնց բովանդակությունը գլխավորապես հանգում է մեկ գլխավոր պահանջի՝ Արցախի անկախությունը, Արցախի միացումը մայր հայրենիքին, Սումգայիթի ջարդարարների դատապարտումը և այլն: Իր տեսակի մեջ Հարություն Մարությանի աշխատանքը յուրօրինակ է, որը նաև պատկերազարդ նկարների, թռուցիկների, կոչերի միջոցով ընթերցողին է ներկայացնում հայ ժողովրդի ազատագրական պայքարի այդ օրերի ոգին, տրամադրությունը: Հարություն Մարությանը կատարել է նաև մեկ այլ շնորհա-

կան աշխատանք: Նա կազմել և հրատարակել է իր ընկեր, համակուրսեցի, վաղամեռիկ (չբացահայտված սպանություն) Համբարձում Գալստյանի՝ Մոսկվայի Բուտիրկայի բանտում գրած «Չուղարկված նամակները», տարբեր հոդվածները, հուշագրությունները և այլն, որոնք վերաբերում են «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությանը և Արցախյան շարժմանը:

Բավական հետաքրքիր է նաև Ժիրայր Լիպարիտյանի «Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր» (Երևան, 1999) աշխատությունը, որում նկարագրվել են Ղարաբաղյան շարժումը, հայոց պետականության համար հայ ժողովրդի մղած պայքարը, հայ քաղաքական կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական դիմանկարը, տարբեր քաղաքական գործիչների տարաձայնությունները, բախումները և այլն:

Հայոց երրորդ հանրապետության պատմության, պետականության կերտման, տարբեր մարտահրավերներին դիմակայության, «Ղարաբաղ» կոմիտեի գործունեության, նրա անցած ուղու գնահատման և այլ հարցերի մասին հանգամանալից վերլուծություն է կատարել «Ղարաբաղ» կոմիտեի և հայոց նորանկախ պետության առաջնորդներից մեկը՝ Լևոն Տեր-Պետրոսյանը, որի բազմաթիվ աշխատանքների շարքում հատկապես առանձնանում է «Ընտրանի, ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ» (Երևան, 2006) մեծածավալ աշխատությունը, որտեղ ներկայացված են Արցախյան շարժման «Ղարաբաղ» կոմիտեի ձևավորման և գործունեության շրջանում նրա ելույթները, հրապարախոսական հոդվածները, հարցազրույցները և այլն: Դրանց զգալի մասը պահպանվում է Հայաստանի հանրապետության ազգային արխիվի «Հայոց համազգային շարժում» ֆոնդի նյութերում, որոնք լույս են սփռում Արցախյան շարժման ողջ պատմության վրա:

Կարևոր նշանակություն ունի նաև Սուրեն Հարությունյանի կատարած աշխատանքը: Վերջինս, 1988-1990 թթ. լինելով Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար, հետագայում այդ պաշ-

տոնը թողնելուց հետո թղթին հանձնեց իր մտորումները և հրատարակեց «Անցյալի և ներկայի մասին» (Երևան, 2011) աշխատությունը: Սուրեն Հարությունյանն այդ բարձր պաշտոնը ստանձնեց Արցախյան շարժման վերելքի շրջանում, երբ ամեն օր տեղի էին ունենում բազմահազարանոց հանրահավաքներ, երթեր, տարբեր կարգի բողոքի ակցիաներ, որոնք ուղղված էին թե՛ կենտրոնական իշխանությունների և թե՛ հանրապետության ղեկավարության դեմ: Ի դեպ, նման փոփոխությունը ժողովրդի շրջանում հույսեր էր ներշնչում: Մինչդեռ հետագա դեպքերը, զարգացումները ցույց տվեցին, որ Սուրեն Հարությունյանը նույնպես, որքան էլ որ մտահոգ էր հանրապետությունում ստեղծված լարված մթնոլորտի առթիվ, այնուամենայնիվ չէր կարող շրջանցել կուսակցական, պետական աշխատանքի այն մեթոդները, որոնք տիրում էին երկրում, որքան էլ գորբաչովյան «վերակառուցումը» գոնե տեսականորեն հռչակել էր նոր մտածողություն, նոր մոտեցումներ և աշխատանքի շատ այլ նոր մեթոդներ:

Եվ ահա թե ինչ է գրում Սուրեն Հարությունյանը իր վերոհիշյալ աշխատանքում. «1988 թ. մայիսին, դառնալով հանրապետության ղեկավարը, սկսեցի հենարան փնտրել նրա ներսում, ինչն ամենևին էլ դյուրին խնդիր չէր: Ինչ խոսք, բավական ճիշտ է ասված: Այդ ժամանակ հանրապետությունում սոցիալ-քաղաքական իրադրությունը ծայրաստիճան շիկացած էր: Լեռնային Ղարաբաղը բացահայտեց բնակչության անբավարարվածության աստիճանը, որը բորբոքվում էր ամբոխահաճո կոչերով ու կարգախոսներով: Հանրապետությունը ցնցում էին բազմահազարանոց հանրահավաքները, ցույցերը, գործադուլներն ու հացադուլները՝ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման պահանջով: Ժողովուրդը համակված էր միայն մի ցանկությամբ. Ղարաբաղը մերն է և պետք է լինի Հայաստանի կազմում: Բայց քչերն էին լրջորեն մտածում, թե ինչ ուղիով է հնարավոր լուծել այդ հարցը: Մարդկանց մեջ հուզական նախահիմքը հաղթում էր բանականին: Հանրապետության ղեկավարությունը գտնվում էր Սցիլայի և Քարիբդայի միջև: Մի կողմից՝ ժողովրդի ցանկությունը, մյուս կողմից՝ կենտրոնը՝ Մոսկվան, որը կանգնած էր ԽՍՀՄ Սահմանադ-

թությունը պահպանելու դիրքորոշման կետում, չէր ցանկանում վերանայել երկրի վարչատարածքային բաժանումը: Սկսվեց հիմնախնդրի կարգավորման որոնման ձգձգվող գործընթացը, որում բախվում էին երկու՝ Հայաստանի և Ադրբեջանի դիրքորոշումները»: Անշուշտ, պետք է խոստովանել, որ Սուրեն Հարությունյանը բավական ճիշտ էր գնահատում հանրապետությունում ստեղծված ոչ նախանձելի իրավիճակը՝ միաժամանակ գրելով, որ հանրապետության ղեկավարության դեմ գործող պակաս կարևոր գործոն չէր Լեռնային Ղարաբաղի հարցում հասկանալի և հստակ դիրքորոշման բացակայությունը, որը չարտահայտվեց նաև Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտնելու խնդրանքով ԼՂԻՄ-ի դիմումից հետո էլ: Փաստորեն՝ հանրապետության ղեկավարությունը, ինչպես նկատում է արդեն այլ կարգավիճակում հայտնված Սուրեն Հարությունյանը, խոստովանում էր՝ ճիշտ նշելով, որ չէր կարելի իրենից վանել բնակչությանը, իր ժողովրդին և միևնույն ժամանակ պետք էր խուսափել կենտրոնի դժգոհությունից, որը միանշանակորեն դեմ էր «փորփրելու» այդ հիմնախնդիրը: Դրա հետևանքով (ինչին նպաստում էր նաև ընդդիմության քայքայիչ գործունեությունը) բնակչության շրջանում հանրապետության ղեկավարության հեղինակությունը, փաստորեն, ընկավ մինչև զրոյական նշագիծ[28]:

Գիտակցելով այդ վիճակը՝ Սուրեն Հարությունյանը, որքան էլ որ սրտի խորքում ժողովրդի հետ էր, միևնույն է, չէր կարող անցնել սահմանը, որն էլ վաղ թե ուշ՝ ընդամենը երկու տարուց էլ մի փոքր պակաս՝ 1988 թ. մայիս-1990 թ. ապրիլին, ևս պետք է հեռանար իր բարձր դիրքից՝ փորձելով իր հիշողություններով լրացնել բաց թողածը, հիմնավորելով, որ տվյալ պայմաններում իր կատարածը միակ ճիշտ ճանապարհն էր: Ինչ խոսք, դա անձնական կարծիք է, քանզի պատմությունը այլ ընթացք ունեցավ: Բայց բոլոր դեպքերում Արցախյան շարժման, Հանրապետությունը այդ բարդ պայմաններում ղե-

[28] Տե՛ս **Հարությունյան Ս.,** Անցյալի և ներկայի մասին, Երևան, 2011, էջ 164-165:

կավարելու ժամանակի մասին նրա թողած վերոհիշյալ ուսումնասիրությունը ևս անչափ կարևոր գործ է, որն էլ փորձեցինք արժևորել:

Հետաքրքիր է անդրադառնալ և գնահատել ճանաչված գիտնական, Երևանի պետական համալսարանի այդ տարիների ռեկտոր, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Սերգեյ Համբարձումյանի դիրքորոշմանը Արցախյան շարժման նկատմամբ: Նա այդ օրերի մասին գրել է մի աշխատություն, որը այդ ժամանակաշրջանը ներկայացնող մի շատ դիպուկ անվանում ունի. «Երեք տարի սիրո և մահվան սահմանագծին» (Երևան, 1998), որը սկսել է՝ մեջբերելով Անդրեյ Սախարովի արտահայտություններից. «Ղարաբաղյան հարցը վերակառուցման փորձաքարն է»[29]:

Ծանոթանալով այդ գրքին, նրանում բարձրացված հարցերին՝ ավելի ես համոզվում, որ անկախ գրված դիրքից, պաշտոնից՝ նա համարձակություն ունեցավ ի լուր աշխարհի և ողջ Խորհրդային Միության՝ ասելու Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ ճշմարտությունը՝ հանդիմանելով երկրի ղեկավարությանը նրա վարած խուսանավող քաղաքականության համար և դրանով պաշտպանելով Լեռնային Ղարաբաղի ողջ հայության արդարացի պահանջը:

Արցախյան շարժման, Լեռնային Ղարաբաղի հակամարտության և ընդհանրապես նորանկախ Հայաստանի Հանրապետության կայացման, նրանցում տեղի ունեցող բուռն իրադարձությունների մասին գրած աշխատությունների շարքում անպայմանորեն պետք է անդրադառնալ նաև Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության առաջին դեսպան, պատմաբան Վլադիմիր Ստուպիշինի կատարած աշխատանքին: Վերջինիս հաճախ ենք լսել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդում ունեցած ելույթների ժամանակ: Ստուպիշինը հանրապետությունում տեղի ունեցող իրադարձությունների մասին գրել է երկու աշխատանք՝ «Карабахский конфликт 1992-1994» (Москва, 1998) և «Моя миссия в Армению» (Москва, 2000) (հայերեն թարգմանությամբ՝ «Իմ առաքե-

[29] Տե՛ս **Համբարձումյան Ս.,** Երեք տարի սիրո և մահվան սահմանագծին, Երևան, 1998 էջ 3:

լությունը Հայաստանում», Երևան, 2005), որոնցում նախ ներկայացրել է ՀՀ-ում իր դիվանագիտական առաքելության առաջին քայլերը, իսկ հետո՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող տարբեր դրվագներ, իրադարձություններ, հակամարտության կարգավորմանն ուղղված միջնորդ տերությունների ձեռնարկած քայլերը: Հեղինակի աշխատություններում առավելապես իշխում են անհանգստությունն ու մտահոգությունը տարածաշրջանում ստեղծված իրավիճակի առթիվ և մեծ համակրանքը հայ ժողովրդի, նրա հարուստ պատմության նկատմամբ: Ի դեպ, նման աշխատանքները օգտակար են՝ քննարկվող հարցի նկատմամբ ավելի մեծ հետաքրքրություն դրսևորելու համար: Վլադիմիր Ստուպիշինն իր աշխատություններում նախ վերլուծել է թե՛ Հայաստանի Հանրապետությունում և թե՛ Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը և արել իր դիտարկումները տարածաշրջանում առկա խնդիրների լուծման ուղղությամբ: Նա հատկապես կարևորել է այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ոչ թե Հայաստանի և Ադրբեջանի միջև է, որը ոմանք փորձում են այդպես ներկայացնել, այլ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի, որի նկատմամբ հայ ժողովուրդը չէր կարող անտարբեր և չեզոք լինել, որն էլ դարձավ յուրաքանչյուր հայի հոգու պարտքը: Այդ առիթով Վլադիմիր Ստուպիշինն իր «Карабахский конфликт 1992-1994» (Москва, 1998) աշխատությունում գրում է՝ Ռուսաստանի Դաշնությունը կանգնած էր այն համոզմունքի վրա, որ մենք (նկատի ունի Ռուսաստանի Դաշնությունը – Հ. Ա.), գործ ունենք ուղղակի Ղարաբաղյան և ոչ թե Հայաստան-Ադրբեջան հակամարտության հետ, որի մասին պնդում էին Բաքուն և Անկարան[30]:

Անշուշտ, գնահատելի է Վլադիմիր Ստուպիշինի ոչ միայն դիվանագիտական աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում, այլ նաև նրա գիտական աշխատանքը: Վերջինս Արցախյան պատերազմի խնդիրների լուսաբանմանը մոտեցել է թե՛ պատմական և թե՛ գիտական բարեխղճության և արդարության դիրքերից: Ուստի Վլադի-

[30] Տե՛ս **Ступишин В.,** Карабахский конфликт 1992-1994, Москва, 1998, с. 36:

միր Ստուպիշինի կատարած աշխատանքը վերը թվարկված աշխատությունների շարքում գրավում է կարևոր տեղ, ինչն էլ փորձել ենք արժևորել:

Թվարկված աշխատությունների շարքում առանձնանում է Աշոտ Սարգսյանի «Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը (1988-1998թթ)» (Երևան, 2015) աշխատությունը, որտեղ հեղինակը Հայաստանի պատմության նորագույն շրջանի մեկ տասնամյակի՝ 1988-1998 թթ. պատմությունը գնահատում է որպես կեղծված պատմություն[31]: Անշուշտ, նման ծայրահեղ, ամեն ինչ մերժող գնահատականը հեղինակի իրավունքն է, բայց հայ պատմագիտության կողմից Արցախյան շարժման մասին եղած գիտական ժառանգությունը մերժելը ճիշտ և գիտական չէ, քանզի կան մեծ թվով արժեքավոր աշխատություններ, որոնցում հարուստ փաստերի, նյութերի հիման վրա ներկայացված է Արցախյան շարժման և հայ ժողովրդի հերոսական պատմությունը: Հարկ է նշել, որ Արցախյան շարժման, Հայաստանի երրորդ հանրապետության կայացման, նրա անկախության համար պայքարին նվիրված աշխատություններում կարող են լինել նաև այլ մեկնաբանություններ, սուբյեկտիվ կարծիքներ և այլն, որոնց կարող ենք նաև չհամաձայնել:

Բավական հետաքրքիր է նաև Ռիմա Դեմիրճյանի (Կարեն Դեմիրճյանի կինը – Հ. Ա.)՝ Կարեն Դեմիրճյանին նվիրված «Հիշատակ» աշխատությունը[32], որտեղ նա ներկայացնում է Կարեն Դեմիրճյանի անչափ բեղուն, հարուստ իրադարձություններով լի կյանքը, նրա անցած ուղին, այդ թվում՝ նաև Արցախյան շարժման պատմությունը, ինչպես հեղինակն է նշում գրքում, Ղարաբաղյան հիմնախնդիրը: Այդ հարցում Ռիմա Դեմիրճյանը Կարեն Դեմիրճյանի ձեռնարկած բոլոր քայլերը ներկայացնում է միայն ու միայն դրական, անսխալական դիրքերից, որը, ի տարբերություն որոշ հեղինակների, մեկ այլ ծայրահեղություն է: Ռիմա Դեմիրճյանը հասկանալիորեն

---

[31] Տե՛ս **Սարգսյան Ա.,** Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը (1988-1998 թթ.), Երևան, 2015, էջ 3-101:

[32] Տե՛ս **Դեմիրճյան Ռ.,** Հիշատակ, Երևան, 2012:

շրջանցել է այնպիսի հարց, ինչպիսին Կարեն Դեմիրճյանի դիրքորոշումն է «Ղարաբաղ» կոմիտեի նկատմամբ, որը բավական կոշտ էր, մերժողական, դրա համար էլ արդարացիորեն առաջացրեց նրա նկատմամբ ժողովրդի դժգոհությունը: Այդ տեսանկյունից մի փոքր այլ է երկար տասնամյակներ Կարեն Դեմիրճյանի հետ միասին աշխատած, նրա զինակիցներից ու համախոհներից ՀԿԿ կենտկոմի գաղափարախոսության գծով քարտուղար Կարլեն Դալլաքյանի կարծիքը, որը, իր «Հուշապատում» աշխատանքում, ինչպես ընդունված էր, շատ հարցերում մեծարելով Կարեն Դեմիրճյանին, այնուամենայնիվ, իր խղճի դեմ չմեղանչելու համար ասում էր նաև, որ նրա հիմնական թերությունը ինքնասիրահարվածության և անսխալականության զգացումն էր[33]: Մենք ևս համամիտ ենք հեղինակի նման մոտեցմանը: Այն, որ Կարեն Դեմիրճյանը մեծ ու անուրանալի դերակատարում է ունեցել Խորհրդային Հայաստանի մեկուկես տասնամյա՝ 1794-1988 թթ. պատմության կերտման գործում, անժխտելի է, ինչն էլ արժևորվել և գնահատվել է հայ ժողովրդի կողմից:

Հետաքրքիր են նաև Արցախյան շարժման օրերին և այդ օրերի տպավորության տակ գրված աշխատանքները, հրապարակումները: Վազգեն Մանուկյանը, Կտրիճ Սարդարյանը, Վանո Սիրադեղյանը, Ռաֆայել Իշխանյանը, Հրաչիկ Սիմոնյանը 1990 թ. հրատարակել են «Ո՞րն է մեր ճանապարհը» ուսումնասիրությունը (Երևան, 1990):

Չխորանալով վերոհիշյալ հեղինակների հրատարակած հոդվածների մանրամասն վերլուծության մեջ՝ միայն նշենք, որ Վազգեն Մանուկյանը հրատարակել է «Գնացքից թռչելու ժամանակն է» և «Չորս հարց Վազգեն Մանուկյանին» հոդվածները, Կտրիճ Սարդարյանը՝ «Ո՞րն է մեր ճանապարհը», «Հայաստանի Հանրապետության պատմությունը «Վերածնված Հայաստան» ամսագրի էջերում», «Անկախության վերջին 45 օրը» հոդվածները, Վանո Սիրադեղյանը՝ «Առաջին և վերջին քայլը ազատության ճանապարհին», Ռաֆայել Իշխանյանը՝ «Երրորդ ուժի բացառման օրենքը», Հրաչիկ Սի-

[33] Տե՛ս **Դալլաքյան Կ.,** Հուշապատում (դեմքեր, իրողություններ), Երևան, 1998, էջ 367:

մոնյանը՝ «Նորից ազգային արժանապատվության մասին» հոդվածները: Նրանցում ցույց են տրված Արցախյան շարժման օրերին նոր մտածողությամբ վերածնված հայ ժողովրդի, նրա բոլոր խավերի ոգևորությունը և վճռականությունը պայքարելու ազատության և անկախության համար: Դրանք նույնքան արժեքավոր հրապարակումներ են՝ ավելի լավ տեսնելու և զգալու այն ոգևորությունը և նոր հոգեբանությունը, որը համակել էր ողջ հայ ժողովրդին անկախության պայքարի համար:

Բավական հետաքրքիր և թերևս եզակի աշխատություններից է նաև «Շարժում 1988/25» գիրքը[34], որտեղ զետեղված են շարժման ակունքում կանգնած նրա շատ ղեկավարների, ակտիվ մասնակիցների, լրագրողների, ականատեսների հուշերը, ապրումներն ու հարցազրույցները շարժման մասին: Շարժման ավելի քան 25-ամյա բարձունքից իրենց տեսակետներն են արտահայտել Վազգեն Մանուկյանը, Աշոտ Մանուչարյանը, Ռաֆայել Ղազարյանը, Ալեքսան Հակոբյանը, Իգոր Մուրադյանը և ուրիշներ:

Գրքում զետեղված է նաև Համբարձում Գալստյանի այրու՝ Նատալյա Գալստյանի՝ «Голос Армении» թերթում 19.12.1996 թ. հրապարակած նամակը, Վանո Սիրադեղյանի՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթում 04.06.1998 թ. հրատարակած «Համբարձում Գալստյանի, ընկերների և օտարների մասին» հոդվածը, որոնցում լայն հասարակությանը ներկայացված են անհայտ շատ փաստեր, տեսակետներ ու կարծիքներ: Նման հրապարակումները անչափ օգտակար են հատկապես երիտասարդ սերնդի համար, որի մասին, ի դեպ, նույն գրքում իր տեսակետն է հայտնել ճանաչված լրագրող Աննա Իսրայելյանը: Վերջինս առավելապես ներկայացրել է բուհերի ուսանողների, հատկապես Երևանի պետական համալսարանի ուսանողական ցույցերի, նստացույցերի մասին՝ արտահայտելով նաև այն

[34] Տե՛ս «Շարժում 1988/25», «Մեդիամաքս մեդիա» ընկերություն, Երևան, 2013:

կարծիքը, որ շարժման ժամանակ կուռքի վերածված տղաները զերծ չէին նաև թուլություններից[35]:

Այսպիսով՝ բավական հարուստ և բազմազան են Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության, նրա տարբեր հարցերին ու խնդիրներին նվիրված ուսումնասիրությունները՝ գովեստից, մեծարումից, հերոսացումից մինչև տարբեր կարգի քննադատություններ, սխալներ ու թերություններ: Անկախ այդ ամենից՝ գլխավորը, որն իշխում էր բոլոր կարգի աշխատանքներում, դա այն մեծ ոգևորությունն ու հպարտությունն էր, որը տվյալ ժամանակաշրջանում համակել էր բոլորին, որ հայ ժողովուրդը մուտք էր գործել պատմական մի նոր ժամանակաշրջան, որի գլխավոր նպատակը անկախության համար պայքարն ու նորանկախ Հայաստանի կառուցումն էին: Նշված հարցերի ուսումնասիրմանն ու շարադրմանն էլ նվիրված է մեր աշխատությունը:

[35] Տե՛ս «Շարժում 1988/25», «Մեդիամաքս մեդիա» ընկերություն, Երևան, 2013, էջ 76-81:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1950-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1.1. Խրուշչովյան «ձնհալը» և նրա հետևանքները

1950-1960-ական թվականները Խորհրդային Միության պատմության թերևս ամենահետաքրքիր և ոչ միանշանակ ժամանակաշրջաններից էին: Այդ տարիներն անվանվում են նաև խրուշչովյան «փառավոր տասնամյակի» և «ձնհալի» ժամանակաշրջան: Դա ժամանակաշրջան էր, երբ օր օրի փոփոխվում էր մարդկանց մտածողությունը, երբ մարդիկ, որքան էլ գիտեին, միևնույն է, անակնկալի եկած, բարձրաձայն լսում, քննարկում, վերլուծում էին ստալինյան բռնությունների մասին, դատապարտում անհատի պաշտամունքը, իսկ դատապարտվածներից կենդանի մնացածները արդարացվում և աքսորից վերադառնում էին տուն, հայրենի օջախ, ազատվում իրենց տրված «ժողովրդի թշնամի» գնահատականներից: Ինչ խոսք, դա բեկումնային շրջան էր, որքան էլ որ շատերի հոգեբանության, մտածողության մեջ դեռևս չէին հաղթահարվել նախկին ստալինյան ժամանակներից մնացած վախի, խղճահարության մտայնությունը, հոգեբանությունը: Այդ նոր փոփոխությունները կապված էին կուսակցության XX համագումարի և Ն. Ս. Խրուշչովի անվան հետ: Այն Ն. Ս. Խրուշչովի համար դարձավ աստեղային ժամ, նրա քաղաքական կենսագրության գագաթնակետը: Համագումարը տեղի ունեցավ 1956 թ. փետրվարի 14-25-ը, որին մասնակցում էին 1436 պատգամավորներ և աշխարհի 55 երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունների ներկայացուցիչներ: Նրանց առաջ ելույթ ունեցավ ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ն. Ս. Խրուշչովը: Համագումարը տեղի էր ունենում կուսակցության կանոնադրությամբ սահմանված ժամանակաշրջանից 8 ամիս շուտ, որը պայմանավորված էր նախ Ի. Վ. Ստալինի մահվամբ (1953 թ. մարտի 5), հետո՝

նաև երկրի ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում կուսակցության գծի փոփոխություններով: Վերլուծելով երկրի ներքին և արտաքին քաղաքականության ոլորտներում կուսակցության որդեգրած ռազմավարությունը՝ Ն. Ս. Խրուշչովը կարևորում էր տնտեսական քաղաքականությունը, հատկապես գյուղատնտեսության, արդյունաբերության, բնակչության սոցիալական վիճակի բարելավման խնդիրները և հերթական՝ 6-րդ հնգամյակի հիմնական ուղղությունները, դրանց կատարման ուղղությամբ կուսակցության կատարած քայլերը և այլն:

Հաշվետու զեկուցման մեջ անդրադառնալով կուսակցության գաղափարա-քաղաքական աշխատանքներին՝ Ն. Ս. Խրուշչովը բավական զգույշ էր և այդ հարցում միայն սահմանափակվեց՝ համագումարի պատգամավորներին հիշեցնելով Լ. Բերիայի, նրա հանցախմբի կողմից իրականացված հանցագործությունները, քննադատական խոսք ասելով նաև Մոլոտովի, Մալենկովի մասին: Սակայն համագումարի կարևոր իրադարձությունը փետրվարի 25-ի փակ նիստում Ն. Ս. Խրուշչովի կողմից «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները» զեկուցումն էր, որի հիմքում ընկած էին Պ. Պոսպելովի հանձնաժողովի կողմից ներկայացված նյութերը: Ընդ որում, հետաքրքիր է ասել, որ համագումարի ավարտի պահին, երբ, ինչպես ընդունված էր, ներկայացվում էին կուսակցության նոր ղեկավար մարմինները, Կենտկոմի նախագահության կազմը, ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղար ընտրված Ն. Ս. Խրուշչովը համագումարի խորհրդային պատգամավորներին հայտարարեց, որ երեկոյան՝ համագումարի պաշտոնական փակումից հետո, պետք է ներկայանան փակ նիստին, որտեղ արտասահմանցի հրավիրվածները չէին կարող մասնակցել: Եվ հենց այդ փակ նիստում էլ՝ փետրվարի 24-25-ի գիշերը, Ն. Ս. Խրուշչովը կարդաց Ստալինի մասին «գաղտնի զեկուցումը», որը տևեց չորս ժամ: Այն նախատեսված էր միայն կուսակցականների համար, և բնական է՝ այդ ժամանակ չի հրապարակվել: Այն հրապարակվել է 1980-ական թթ. վերջերին՝ 1989 թվականին: Բայց անկախ դրանից՝ գրեթե բոլորը, քիչ թե շատ գրագետ մարդիկ տե-

դյակ էին Խրուշչովի զեկուցման մասին: Զեկուցման մեջ Ն. Ս. Խրուշչովը ցույց էր տալիս վերջին քսան տարիների ընթացքում (1936-1956 թթ. – Հ. Ա.) անհատի պաշտամունքի ձևավորման փուլերը և հետևանքները[36]: Դա, անկասկած, ցնցող երևույթ էր, որքան էլ խորհրդային ժողովուրդը գիտեր և իր կաշվի վրա զգացել էր անհատի պաշտամունքի պատճառած վնասները, ցավը, տառապանքները և այլն:

Անդրադառնալով Ն. Ս. Խրուշչովի զեկուցմանը՝ պետք է ասել, որ քննադատելով Ստալինին, նշելով նրա կողմից իրականացված անօրինականությունները, անհամար զոհերը և այլն՝ Խրուշչովը երևի չէր կարող ասել, ինչպես նշում է այդ հարցերը հետազոտողներից Վ. Պ. Սյոմինը, ողջ ճշմարտությունը ստալինյան ռեպրեսիաների, բռնի մեթոդներով ոչ մի բանում մեղավոր, ազնիվ մարդկանց հարցաքննությունների ժամանակ կիրառվող խոշտանգումների և ճնշիչ այլ մեթոդների մասին՝ դրանք դիտելով որպես ստալինյան ռեժիմ: Այդ բոլորով հանդերձ Խրուշչովը չքննադատեց սոցիալիստական համակարգը և Ստալինի արարքները գնահատեց որպես կուսակցության աշխատանքի լենինյան սկզբունքների ձևախեղում՝ խնդիր դնելով ընդմիշտ վերջ դնել անհատի պաշտամունքին և վերադառնալ կուսակցական աշխատանքի լենինյան մեթոդներին: Դեռ ավելին, Ն. Ս. Խրուշչովը նշում էր, որ Ստալինը մեծ ներդրում ուներ երկրում սոցիալիզմի կառուցման գործում, որը դրսևորվել էր երկրի ինդուստրացման, գյուղի կոլեկտիվացման և ընդդիմության, հակալենինյան՝ տրոցկիզմի, բուխարինականների, «Ժողովրդի ոխերիմ թշնամիների» դեմ պայքարում[37]:

Դատապարտելով ստալինյան մեթոդները, ստալինյան ռեժիմը՝ Խրուշչովը կոչ էր անում հավատարիմ մնալ կոլեգիալ ղեկավարու-

---

[36] Տե՛ս **Верт Н.,** История Советского государства. 1900-1991, Москва, 1999, с. 391-393. **Дворниченко А. Ю., Тот Ю. В., Ходяков М. В.,** История России, Москва, 2008, с. 402:

[37] Տե՛ս **Дворниченко А. Ю., Тот Ю. В., Ходяков М. В.,** История России, Москва, 2008, с. 402, **Сёмин В. П.,** Русская история: проблемы и спорные вопросы, Москва, 2007, с. 571-576:

թյան լենինյան սկզբունքներին: Գնահատելով Խրուշչովի այդ քայլը՝ պետք է ասել, որ դա բացառիկ երևույթ էր, երբ քաղաքական ղեկավարն իր անձնական իշխանությունը, նույնիսկ կյանքը հանուն հասարակական նպատակների դնում էր վտանգի տակ: Ճիշտ է նկատում Վ. Պ. Սյոմինը, որ միայն Խրուշչովը կարող էր գնալ նման քայլերի՝ այդքան համարձակ, այդքան էմոցիոնալ և շատ դեպքերում այդքան չմտածված: Անհրաժեշտ էր տիրապետել բավական մեծ խիզախության, հանդգնության՝ հասնելով նույնիսկ մինչև արկածախնդրության, որպեսզի հնարավոր լիներ անցնել փորձության այդ ճանապարհը[38]: Անկասկած, դա համարձակ քայլ էր, քանզի Խրուշչովի ելույթը նաև հասարակական պահանջ էր, որն էլ դարձավ, ինչպես ասվեց, նրա քաղաքական կենսագրության գագաթնակետը: Երկար տարիների ընթացքում առաջին անգամ պաշտոնական կուսակցական կյանքը և պետական կամքը գերազանցեցին և առաջ անցան հասարակական տրամադրություններից: Խրուշչովը նույնիսկ շրջանցեց «Պոսպելովի գրառումները», դուրս եկավ նրա շրջանակներից և հակառակ նախագահության՝ նոր բաժիններ ավելացրեց զեկուցման մեջ՝ «Ստալինը և պատերազմը», «Ժողովուրդների տեղահանությունը (դեպորտացիա)», «Հետպատերազմյան ռեպրեսիաները», «Հարավսլավիայի կոնֆլիկտը», «Անհատի պաշտամունքը հասարակական ոլորտում» և այլն: Այդ ամենը Խրուշչովին դարձրեց անհասանելի լիդեր, որը, ընդմիշտ առաջ անցնելով, կտրվեց «կայուն ստալինականներից»՝ դառնալով նրանց մեղադրողը[39]:

Իհարկե, հեշտ չէր այդ ամենը, և նույնիսկ հետագայում՝ իր կյանքի վերջում, երբ Խրուշչովը գրեց իր հուշագրությունը, նշում էր, որ արդեն կարող էր ազատորեն արտահայտել իր կարծիքը՝ նշելով, որ, միևնույն է, ինքը չկարողացավ ազատվել ստալինյան դոգմաների գերությունից, որովհետև, ինչպես ինքն էր պնդում, իրենք հեղափոխության արդյունքն ու արգասիքներն էին: Բոլորը դաստիարակվել

---

[38] Տե՛ս **Сёмин В. П.,** նշվ. աշխ., էջ 572:

[39] Տե՛ս Политические партии Росстии в контексте ее истории, Ростов-на-Дону, 1988, с. 99:

են Ստալինի օրինակների վրա: Նա նաև գրում է, որ գիտակցորեն գնալով «ձնհալին» ընդառաջ՝ խորհրդային ղեկավարությունը, այդ թվում՝ նրա հեղինակ Ն. Ս. Խրուշչովը, վախենում էին, որ այն կարող էր հանգեցնել գետի հորդացմանը, որն էլ կարող էր հեղեղել և կլանել բոլորին, որից դժվար կլիներ գլուխ հանել: Նրանք վախենում էին, որ կգրկվեն երկիրը կառավարելու նախկին հնարավորություններից: Վտանգ կար, որ ղեկավարությունը չէր կարող իրականացնել իր գործառույթները և սկսված գործընթացներն ուղղել այնպիսի հունով, որ այն մնար սոցիալիստական: «Մենք ցանկանում էինք,– շարունակում է Խրուշչովը,– որպեսզի մարդկանց ստեղծագործական ուժերը ազատվեն, բայց այնպես, որ նոր արարումները նպաստեին սոցիալիզմի ամրապնդմանը»[40]:

Հետազոտող Օլեգ Դորմանը գրում է՝ Ն. Խրուշչովը թերագնահատված է: Ամբողջովին ավելորդ չէ հիշեցնել այն դերի մասին, որ նա խաղացել է ապաստալինականացման գործում: Նա ջախջախեց առասպելը, վերջ դրեց ահաբեկչությանը, բացեց «ГУЛАГ»-ի դռները: Իհարկե, նա չէր պատրաստվում վերանայել համակարգը, բայց թեկուզև փորձում էր դարձնել այն քիչ ավելի հումանիստական[41]:

Ամերիկացի հայտնի հետազոտող Ուիլյամ Թաուբմանն իր «Խրուշչով» (նշանավոր մարդկանց կյանքը շարքից) մեծածավալ աշխատությունում գրում է. «Լինելով անձամբ ներքաշված ստալինյան դարաշրջանի հանցագործությունների մեջ՝ Խրուշչովը նախաձեռնեց հերոսական փորձ՝ մաքրել երկիրը ստալինականությունից: Նրա համարձակ, թեկուզև հախուռն վերափոխումները անմարդկային համակարգին տալիս էին մարդկային դիմագիծ»[42]:

Ն. Ս. Խրուշչովի մյուս ծառայություններից մեկն այն էր, որ նա առաջին անգամ հարց բարձրացրեց, թե ինչպես պետք է վերաբերվել կուսակցության մեջ ալյախոհությանը, որը հետստալինյան շրջանում

---

[40] **Хрущев Н. С.,** Воспоминания. Избранные фрагменты, Москва, 1997, с. 50, 507.

[41] Տե՛ս **Дорман О.,** Подстрочник.Жизнь Лилианны Лунгиной, рассказанная ею в фильме Олега Дормана, Москва, 2009, с. 287:

[42] **Уильям Т.,** Хрущев, Москва, 2008, с. 9:

կարևոր քայլ էր: Բայց նաև չի կարելի չտեսնել այդ հարցի նկատմամբ նրա միակողմանիությունը, որը, ինչպես նշում է Վ. Պ. Սյոմինը, ամեն ինչ հանգում էր մարդկանց նկատմամբ, որոնք ունեին այլ հայացքներ, համբերատար, մեղմ և լոյալ լինելուն: Սակայն վերջին հաշվով այդպիսի մարդիկ, ըստ Խրուշչովի, պետք է ենթարկվեին մեծամասնության կարծիքին և քննադատության ազդեցության տակ վերափոխեին իրենց կարծիքը[43]:

Ինչպես տեսնում ենք, Ն. Ս. Խրուշրովը չէր կարող լիովին վերափոխվել և կտրվել հին մտածողությունից: Բայց կրկին անդրադառնալով անհատի պաշտամունքի հարցին՝ նա ասում էր, որ մենք պետք է այդ հարցը լուրջ և ճշգրտորեն վերլուծենք այն բանի համար, որ բացառենք ուզած հնարավորություն՝ անգամ կրկնելու դրա նման որևէ բան, որը տեղ էր գտել Ստալինի ժամանակ, որը դրսևորվում էր անհանդուրժողականություն կոլեկտիվ ղեկավարության հարցում՝ թույլ տալով կոպիտ ուժ, բռնություն այն ամենի նկատմամբ, ինչը նրան թվում էր հակասող իր սահմանած կանոններին: Նա գործում էր ոչ թե մարդկանց համոզելու, բացատրելու, քրտնաջան աշխատելու ուղիով, այլ իր կարծիքը, տեսակետը մարդկանց վզին փաթաթելու, անվերապահորեն իրեն ենթարկվելու սկզբունքով: Իսկ ով հակադրվում էր կամ էլ ձգտում էր ապացուցել իր կարծիքը, տեսակետը, իր ճշմարտությունը, նա զրկվում էր ղեկավար դիրքից՝ դրան հետևող բարոյական և ֆիզիկական ոչնչացման մեթոդներով: Այդ հանգամանքը հատկապես դրսևորվեց կուսակցության 17-րդ համագումարից (1934 թ. – Հ. Ա.) հետո, երբ ստալինյան բռնության զոհեր դարձան շատ ազնիվ, կոմունիզմի գործին նվիրված կուսակցության նշանավոր գործիչներ և կուսակցության շարքային աշխատողներ: Ստալինը շրջանառության մեջ դրեց «ժողովրդի թշնամի» հասկացությունը: Այդ տերմինի բնութագրումը ազատում էր մարդուն կամ էլ մարդկանց որևէ բան ապացուցելու անհրաժեշտությունից, ինչն էլ հնարավորություն էր տալիս, ով համաձայն չէր Ստալինի տեսակետին, ով

[43] Տե՛ս **Семин В. П.,** Русская история: проблемы и спорные вопросы, Москва, 2007, с. 576:

փոքր անգամ կասկածվում էր թշնամական մտադրություններում, ենթարկվելու դաժան ռեպրեսիաների: Հազարավոր մարդկանց առանց դատի, նորմալ հետաքննության բանտարկությունները, աքսորը, ծնում էին անվստահություն, մարդկանց մեջ վախ և նույնիսկ չարություն: Խոսելով նաև անհատի պաշտամունքի հրեշավոր չափերի մասին՝ Խրուշչովը գլխավորապես դա բացատրում էր նաև այն հանգամանքով, որ Ստալինը ամեն կերպ խրախուսում և պաշտպանում էր իր անձի մեծարումը: Դրա դրսևորման օրինակներից մեկն էր Ստալինի կողմից «Համառոտ կենսագրություն» աշխատության հրատարակումը 1948 թվականին: Նրանում նա իրեն աստվածացնում էր, իրեն ներկայացնում որպես «անսխալական իմաստուն», «ամենամեծ առաջնորդ», բոլոր ժամանակների «անգերազանցելի զորավար» և այլն: Ներկայացնելով այդ ամենը՝ Ն. Ս. Խրուշչովը գտնում էր, որ անհրաժեշտ է ընդմիշտ դատապարտել, պսակազերծել անհատի պաշտամունքը, անել անհրաժեշտ եզրակացություններ, հետևություններ՝ ինչպես գաղափարական-տեսական, այնպես էլ գործնական աշխատանքի ոլորտում[44]:

Ճշմարտությունն այս հարցում այն է, որ հետագայում, իր գործունեության շուրջ մեկ տասնամյակի ընթացքում միշտ չէ, որ Ն. Ս. Խրուշչովը հավատարիմ էր իր իսկ առաջ քաշած սկզբունքներին: Բայց անկախ այդ ամենից՝ նման ելույթը, իրոք, ցնցող երևույթ էր: Ն. Ս. Խրուշչովը նաև այն կարծիքին էր, որ իր սերնդի ղեկավարները չկարողացան հոգեբանորեն վերակառուցվել այնպես, որ կարողանային փնտրել ինչ-որ այլ բան, ընդունել արմատական որոշում և կուսակցությունը վերադարձնել կուսակցական դեմոկրատիայի լենինյան ուղու վրա: Այս հարցում ցավն այն էր, որ դեմոկրատիայի հմտությունները, փորձը դեռևս թույլ էին, և դժվար էր այն հաղթահարել: Այդ իմաստով դժվար է գերագնահատել Ն. Ս. Խրուշչովի կատարածը: Նա, հաղթահարելով իրեն, հաղթահարեց նաև ժամանակի

---

[44] Տե՛ս **Ն. Ա. Խրուշչովի** «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները» զեկուցումը, 14 փետրվարի, 1956 թ. (Известия ЦК КПСС, 1989, №3, с. 128-165): Վերցված է «Новейшая история подробности 1945-1999 гг.» աշխատությունից (М., 2000), с. 199-200:

արգելքները, կարծրատիպերը, պատկերավոր ասած՝ կատարեց ճեղքում՝ երկրում ստեղծելով հասարակական-քաղաքական մտածողության մի նոր մթնոլորտ: Իսկ դա նշանակում էր, որ անհատի պաշտամունքի մասին XX համագումարի որոշումը չպետք է մնար Կրեմլի պատերի ներսում, որքան էլ այն «գաղտնի զեկուցում» էր: Առանց այն էլ այն արագորեն դարձավ ոչ միայն խորհրդային մարդկանց ամենօրյա քննարկումների առարկա, այլ նաև, ինչ խոսք, ոչ առանց ԽՄԿԿ կենտկոմի մասնակցության, նրա համաձայնությամբ «դուրս հոսեց» արտաքին աշխարհ՝ առաջացնելով համաշխարհային ցնցող տպավորություն:

1956 թ. մարտի 5-ին երկրի բարձրագույն ղեկավարությունը ընդունեց որոշում՝ Խրուշչովի զեկուցման խմբագրված տեքստը ծանոթացնելու բոլոր կոմունիստներին և կոմերիտականներին, ինչպես նաև անկուսակցական ակտիվ բանվորներին, ծառայողներին և կոլտնտեսականներին: Այդ քայլը դիտվում էր որպես երկրի բնակչության՝ բարձր քաղաքականությանը հաղորդակցվելու անօրինակ ակցիա [45] : Դա բխում էր համագումարի ոգուց: Ցավոք, կուսակցությունը վճռական չէր բացահայտելու Ստալինի անհատի պաշտամունքի բոլոր մանրամասները, ակունքները, պատճառները և այլն: Չէ՞ որ դա նշանակում էր, որ Ստալինի հետ պատասխանատվության պետք է կանչվեին նրանք, ովքեր մասնակից և մեղսակից էին Ստալինի կատարած չարագործությունների մեջ, ովքեր ևս իրենց մեղքի բաժինն ունեին այդ ամենում: Դժվար չէ համոզվել, որ կուսակցությունը այնքան էլ հետևողական չէր իր իսկ բարձրացրած հարցերի նկատմամբ և չդրսևորեց ամուր կամք, ամեն ինչ չարեց այդ արատավոր երևույթները արմատախիլ անելու համար: Բայց անկախ այդ ամենից՝ քաղաքական մթնոլորտը երկրում օր օրի փոխվում էր: Նման փոփոխություններ տեղի էին ունենում նաև Խորհրդային Հայաստանում: Սակայն եթե Մոսկվայում, հատկապես գրական մտավորականության շրջանում սկսում էին արդեն հարցականի տակ դնել այնպիսի սրբա-

---

[45] Տե՛ս **Дворниченко А. Ю., Тот Ю. В., Ходяков М. В.,** История России, Москва, 2008, с. 402:

զան հասկացություններ, ինչպիսիք էին սոցռեալիզմը, գրականության կուսակցականությունը և այլն, և քննադատում էին ստալինյան գրականության դիմոզավրերից մեկի՝ անձեռնմխելի Լեոնիդ Լեոնովի «Ռուսական անտառը» վեպը (հեղինակ՝ Մարկ Շեգլով («Новый мир»)), իսկ հայտնի գրողներ՝ Պաուստովսկին, Իլյա Էրենբուրգը, Դուդինցևը, Եվտուշենկոն, Բելլա Ախմադուլինան և ուրիշներ հանդես էին գալիս նոր ստեղծագործություններով[46], դատապարտում ստալինյան ժամանակաշրջանը և այլն, ապա Խորհրդային Հայաստանում դրանք ավելի շատ դրսևորվում էին ազգայնական տրամադրությունների ակտիվացմամբ, ընդհատակյա կազմակերպությունների ձևավորմամբ և այլն: Սակայն առաջին հերթին Խորհրդային Հայաստանի կուսակցական, պետական ղեկավարությունը, որոնք նաև մասնակցել էին կուսակցության 20-րդ համագումարին, պետք է համագումարի որոշումները, այդ թվում և Խրուշչովի հայտնի ելույթը քննարկեին հանրապետության կուսակցական ակտիվի ժողովում՝ դրանով դրսևորելով իրենց հավատարմությունը կուսակցության գծին, և համագումարի որոշումները տարածեին լայն զանգվածների շրջանում: Այդ նպատակով 1956 թ. մարտի 12-ին հրավիրվեց ՀԿԿ հանրապետական և Երևան քաղաքի կուսակցական ակտիվի ժողով, որը քննարկեց «ԽՄԿԿ 20-րդ համագումարի արդյունքները և Հայաստանի կոմկուսի խնդիրները» հարցը, որի մասին զեկուցել է ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանը: Նա նշում էր, որ փետրվարի 14-25-ը տեղի է ունեցել ԽՄԿԿ 20-րդ համագումարը, որը քննարկել է ԽՄԿԿ կենտրոնական կոմիտեի և Վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները, ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 6-րդ հնգամյա պլանի վերաբերյալ դիրեկտիվները և ԽՄԿԿ կենտկոմի 1-ին քարտուղար Ն. Ա. Խրուշչովի «Անհատի պաշտամունքի և նրա հետևանքների մասին» զեկուցումը:

Համագումարը հանրագումարի էր բերել ԽՄԿԿ 19-րդ համագումարից հետո ընկած ժամանակաշրջանում միջազգային ասպարե-

---

[46] Տե՛ս Подстрочник. Жизнь Лилианны Лунгиной, рассказанная ею в фильме Олега Дормана, Москва, 2015, с. 233-234:

զում և Խորհրդային Միությունում, կուսակցության ներքին կյանքում տեղի ունեցած նշանակալից իրադարձությունները և նշել երկրի հետագա զարգացման ուղիները: Վերլուծելով երկրի տնտեսական, քաղաքական, գաղափարական կյանքում կատարած աշխատանքները և դրանք կապելով հանրապետության խնդիրների հետ՝ Ս. Թովմասյանն ի վերջո խոսել է նաև 20-րդ համագումարի կողմից բարձրացված անհատի պաշտամունքի մասին՝ ասելով, որ Ստալինի մահից հետո սոցիալիզմի թշնամիները հույս էին դրել կուսակցության շարքերում շփոթվածության, նրա ղեկավարության մեջ գժտությունների, նրա ներքին և արտաքին քաղաքականության մեջ տատանումների հնարավորության վրա: Սակայն այդ հույսերը տապալվեցին, և կուսակցությունն էլ ավելի համախմբվեց Կենտրոնական կոմիտեի շուրջ, որը երկիրը տանում էր Լենինի նշած ուղիով և այլն: Նման ոգևորիչ, գովեստի խոսքեր ասելուց հետո Ս. Թովմասյանն ի վերջո ներկայացրել է Խրուշչովի «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները» զեկուցումը, որտեղ բացահայտվում են անհատի պաշտամունքի վնասակար հետևանքները և մարքսիզմ-լենինիզմի ոգուն խորթ լինելը: Ս. Թովմասյանը նաև ներկայացրել է Ստալինի պաշտամունքի առաջացման ակունքները՝ նշելով, որ դա մի տեսություն է, որը անհատին ներկայացնում է գերբնական և գերմարդկային ընդունակություններով, որն ամեն ինչ գիտի, մտածում է ամենքի փոխարեն, երբեք չի սխալվում և այլն: Ս. Թովմասյանը նաև խոսում էր այն մասին, որ Վ. Ի. Լենինը կենդանության ժամանակ անշեղորեն իրականացրել է կոլեկտիվ ղեկավարության սկզբունքները: Նա միաժամանակ նշում էր, որ Ստալինի մոտ կային բացասական գծեր, որոնք հետագայում հանգեցրին ծանր հետևանքների: Դա չափից ավելի կոպիտ, ոչ լոյալ, ընկերների նկատմամբ կամակոր լինելն էր և այլն: Նա նաև չարաշահում էր իրեն տրված իշխանությունը: Ստալինը ոչ թե փարատում, համոզում էր մարդկանց, այլ փաթաթում էր իր կարծիքը նրանց, պահանջում անվերապահորեն ենթարկվել իրեն: Ստալինի կիրառած կամայականությունները այն աստիճանի էին հասել, որ կուսակցության 17-րդ համագումարում 1934 թ. ընտրված Կենտկոմի

139 անդամ-թեկնածուների 70 տոկոսը՝ 98 մարդ, 1937-1938 թթ. բանտարկվել և գնդակահարվել էր, իսկ համագումարի 1966 պատգամավորներից 1108-ը բանտարկվել և մեղադրվել էր հակահեղափոխական հանցագործությունների մեջ[47]:

Ներկայացնելով կուսակցության 17-րդ համագումարից հետո Ստալինի վարքագիծը՝ Ս. Թովմասյանը նշել է, որ նա այլևս հաշվի չէր նստում ո՛չ Կենտկոմի և ո՛չ էլ կուսակցության հետ: Նա նաև ընդգծել է՝ Ստալինը կարծում էր, որ ինքը միայնակ կարող էր լուծել բոլոր հարցերը, իսկ մյուսները հարկավոր էին նրա համար, որ միայն լսեն և գովաբանեն իրեն [48]: Ներկայացնելով կուսակցության 20-րդ համագումարում իշխող մթնոլորտը՝ Ս. Թովմասյանը մատնանշել է համագումարի միահամուռ և միասնական լինելը: Նրա աշխատանքները անցան գործարար մթնոլորտում: Նույն ոգով գովերգելով կուսակցությանը, ցույց տալով արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, մշակույթի և այլ ոլորտներում կուսակցության ձեռք բերած հաջողությունները՝ վերջինս խոսել է նաև ԽՍՀՄ ժողովուրդների անխախտ բարեկամության, խորհրդային հասարակարգի բարոյական միասնության մասին: Կարևոր էր համարում նաև բանվոր դասակարգի և գյուղացիության անխախտ դաշինքի ամրապնդումը և այն միտքը առաջ բերում, որ սոցիալիզմի թշնամիները Ստալինի մահից հետո հույսը դրել էին կուսակցության շարքերի շփոթվածության, նրա ղեկավարության մեջ դժգոհությունների, նրա ներքին և արտաքին քաղաքականության մեջ տատանումների հնարավորության վրա: Բայց այդ հույսերը տապալվեցին: Կոմունիստական կուսակցությունը էլ ավելի սերտորեն համախմբվեց իր Կենտրոնական կոմիտեի շուրջը, էլ ավելի բարձր պահեց մարքս-լենինյան ամենահաղթ դրոշը[49]: Շարունակելով նույն տոնով խոսել՝ Ս. Թովմասյանը նշում էր, որ իմպերիալիստները հույսը դրել էին իրենց երդվյալ գործակալ Լ. Բերիայի վրա: Բայց Կենտրոնական կոմիտեն մեկու-

[47] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 2, 6, 26-37:
[48] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 2, 6, թ. 38:
[49] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 2, 26:

սացրեց այդ վտանգավոր թշնամուն և նրա գործակալների հանցավոր դավադրական գործունեությունը: Կուսակցությունն էլ ավելի միասնական դարձավ: Ըստ Ս. Թովմասյանի՝ կուսակցությունն ավելի միասնական էր, քան երբևէ: Նրա միասնությունը ստեղծվել էր տարիների ընթացքում և այլն[50]:

Կարդալով նման տողերը, նման ոճով, նման ոգով ելույթը՝ թվում է, թե անհատի պաշտամունքը ոչ մի առնչություն չուներ ո՛չ երկրի, ո՛չ կուսակցության, ո՛չ նրա ղեկավորության, Ստալինի հետ տասնյակ տարիներ ձեռք ձեռքի տված գործելու հետ: Անշուշտ, ժամանակն իր կնիքն էր դնում մարդկանց մտածողության, հոգեբանության վրա: Դեռ ավելին, շարունակելով նույն ոգով խոսել՝ Ս. Թովմասյանն ասում էր, որ Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը ղեկավարների մի գործունյա կոլեկտիվ է, որոնց հարաբերությունները կառուցված էին սկզբունքային, գաղափարական հիմքի վրա, որը թույլ չէր տալիս ո՛չ փոխադարձ ներում և ո՛չ էլ անձնական թշնամանք: «Սկզբունքային գիծը սովորեցրել է մեզ Լենինը, միակ ճիշտ գիծն է, և այն մեր կուսակցության հաղթանակների հիմքն է»[51],– ավարտում է իր միտքը Ս. Թովմասյանը՝ վկայակոչելով Լենինի վերոհիշյալ հարցադրումները:

Դեռ ավելին, Ստալինն ասում էր, որ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը ժողովրդի թշնամիներին մերկացնելու գործում չորս տարով ուշացել էր: Դա էլ հենց հիմք դարձավ զանգվածային ահաբեկչություններ սկսելու համար: Եվ համապատասխան մարմինները, օգտագործելով Ստալինի այն հարցադրումը, թե որքան մոտենում ենք սոցիալիզմին, այնքան թշնամիները շատանում են, ավելի մեծ չափով սկսեց իրականացնել զանգվածային ձերբակալություններ, հետապնդումներ[52]: Վկայակոչելով այդ գործերում Լ. Բերիայի դերակատարությունը՝ Ս. Թովմասյանը նշում էր, որ Բերիան, լինելով Անդրերկրկոմի քարտուղար, իսկ հետո՝ երկրի ներքին գործե-

[50] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 27:
[51] ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 27:
[52] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 38:

րի ժողովրդական կոմիսար, ձեռնամուխ է եղել ֆիզիկապես և բարոյապես ոչնչացնելու Հայաստանի կոմկուսի կադրերին: 1934-1936 թթ. այնպիսի վիճակ էր ստեղծվել Հայաստանում, որ ղեկավար կադրերից միայն առանձին մարդիկ դուրս մնացին ահաբեկչությունից: Իսկ ահաբեկչության ենթարկվածների շարքում նշում էր Կասյանին, Խանջյանին և շատ ուրիշներին[53]:

Այն հարցին, թե որտեղ էին Քաղբյուրոյի անդամները, ինչու նրանք ժամանակին դուրս չէին գալիս անհատի պաշտամունքի դեմ և այլն, Ն. Ս. Խրուշչովը բացատրում էր այն հանգամանքով, որ այդ ամենը միաժամանակ չի ստեղծվել, այլ հանդես է եկել տարբեր ժամանակ և տարբեր չափերով: Եվ աստիճանաբար Ստալինը, չարաշահելով իրեն տրված իշխանությունը, անհիմն կասկածանքների, մեղադրանքների էր ենթարկում իր դեմ ելույթ ունեցողներին՝ կիրառելով նրանց նկատմամբ տարբեր կարգի ահաբեկչություններ, մեղադրանքներ և այլն: Եվ ամբողջ խնդիրն այն էր, որ Ստալինն այդ ամենը մեծ մասամբ կատարում էր միայնակ, առանց Քաղբյուրոյի անդամներին մասնակից դարձնելու, որով էլ իջեցվում էր Քաղբյուրոյի դերը՝ դրա փոխարեն ստեղծելով ինչ-որ «եռյակներ», «հնգյակներ», «վեցյակներ» և այլն: Նշելով այդ ամենը՝ Ս. Թովմասյանն իր զեկուցման մեջ խոսում էր նաև այն մասին, որ նույնիսկ Քաղբյուրոյի անդամներից շատերը հնարավորություն չեն ունեցել մասնակցելու նիստերին: Եվ որպես օրինակ նշում էր Վորոշիլովին, որը նիստերին մասնակցելու համար ամեն անգամ նախօրոք հարցնում էր Ստալինի կարծիքը[54]:

Բերելով նման փաստեր՝ Ս. Թովմասյանը բավական լավատեսությամբ է ավարտում իր ելույթը՝ հայտնելով այն համոզմունքը, որ կուսակցությունը չի վախենում դժվարություններից և համարձակորեն առաջ է տանում կոմունիզմի հաղթանակի գործը[55]: Եվ որքան էլ նման ելույթը շատ հարցականներ է առաջացնում, միևնույն է, պետք

[53] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 40:
[54] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 46:
[55] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 64-65:

է ընդունել, որ Ս. Թովմասյանը այլ ձևով չէր կարող հանդես գալ: Դրանք տասնամյակներով կուսակցական աշխատառճի կարծրացած կանոններ էին, սկզբունքներ, որոնք դեռևս շարունակում էին գործել: Անկախ այդ ամենից՝ կուսակցության 20-րդ համագումարում անհատի պաշտամունքի դատապարտումը վիթխարի նշանակություն ունեցող երևույթ էր: Նաև հարկ է ասել, որ Ն. Ս. Խրուշչովի նման քայլը մեծ հետևանքներ պետք է ունենար, ինչն էլ խոսում է այն մասին, որ Ն. Ս. Խրուշչովը, որքան էլ չգնաց մինչև վերջ, չդիպավ սոցիալիզմի հիմքերին, միևնույն է, Ստալինի մասին իր ելույթով, ինչպես որոշ հետազոտողներ են ասում, նա ստորգետնյա վիթխարի ուժեր վեր հանեց և դրեց շարժման մեջ: Երկրում սկսված հակաստալինյան ալիքը շարունակվեց մինչև կուսակցության 22-րդ համագումարը (1961թ.), երբ Ստալինի դին հանվեց Լենինի դամբարանից, ինչն էլ հակաստալինյան նոր ալիք առաջացրեց: Իսկ արդեն 1956 թ.՝ հունգարական դեպքերից հետո, երբ խորհրդային զորքերը Հունգարիայում բնակչության նկատմամբ սկսեցին բռնություններ իրականացնել, Խորհրդային Միությունում մի նոր արատավոր պայքար սկսվեց. ճշմարտությունը ասողների, քննադատողների նկատմամբ սկսեցին իրականացնել հետապնդումներ հատկապես նրանց նկատմամբ, ովքեր համաձայն չէին կուսակցության վարած քաղաքականությանը[56]:

Հայ իրականության մեջ այդ նոր իրողությունը դրսևորվեց նրանով, որ երկրի ղեկավարությունը ամեն ինչ անում էր, որ համագումարի ոգին տեղափոխվեր հանրապետություն, ստեղծեր նոր մտածողություն, նոր մթնոլորտ, որպեսզի մարդիկ նորովի նայեին իրադարձություններին, և որ կարևոր է, մարդիկ ներգրավվեին նոր գործերի մեջ, փոխեին իրենց աշխատառճը և նպաստեին երկրում սկսված «ձնհալին», խոսեին այն թերությունների մասին, որոնք կային հանրապետության կուսակցական, պետական, քաղաքական, տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում:

---

[56] Տե՛ս **Семин В. П.,** Русская история: Проблемы и спорные вопросы, Москва, 2007, с. 575:

Միաժամանակ ճշմարտություն է նաև այն, որ եթե Խորհրդային Միությունում ամենաբարձր մակարդակով ձևավորվել էր անհատի պաշտամունք, ապա նույնպիսի երևույթ, բայց ավելի փոքր մասշտաբով ձևավորվել էին միութենական հանրապետություններում, այդ թվում՝ նաև Խորհրդային Հայաստանում: Երբ Միությունում քննադատությունը, անհատի պաշտամունքի դատապարտումն ուղղված էին Ստալինի և նրա հետ նաև նրա շրջապատի մյուս գործիչների դեմ՝ Բերիայից մինչև մյուսները՝ Մալենկով, Մոլոտով և ուրիշներ, ապա Խորհրդային Հայաստանում այն ուղղված էր, Ստալինից բացի, նաև ՀԿԿ կենտկոմի նախկին առաջին քարտուղար Գ. Հարությունյանի, Ս. Թովմասյանի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Շ. Առուշանյանի և մյուսների դեմ, որոնք նույնպես որոշակի պատասխանատվություն ունեին հանրապետությունում ստեղծված բարոյաքաղաքական մթնոլորտի համար:

Կրկին անդրադառնալով Սուրեն Թովմասյանի զեկուցմանը՝ պետք է ասել, որ ներկայացնելով Լ. Բերիայի հանցագործությունները՝ նա նաև անդրադառնում էր Լ. Բերիայի այն քայլերին, որոնք առնչվում էին դեռևս Անդրկովկասյան երկրային կոմիտեի (Անդրերկրկոմ) քարտուղար և հետագայում Միության ներքին գործերի ժողովրդական կոմիսար եղած ժամանակ նրա գործունեությանը:

Լ. Բերիան անհիմն մեղադրանքներ էր առաջադրել և ահաբեկչության ենթարկել նաև բազմաթիվ հայ նշանավոր գործիչների՝ Ս. Կասյանին, Ա. Խանջյանին, Սահակ Տեր-Գաբրիելյանին և ուրիշների՝ ունենալով իր գործակալները Հայաստանում՝ Ամատունի, Ակոպով, Մուղդուսի և այլն[57]: Ներկայացնելով այդ փաստերը՝ Ս. Թովմասյանն ընդգծել է, որ Խորհրդային Հայաստանում նման վիճակ ստեղծվել էր 1934-1938 թթ., և միայն առանձին մարդիկ դուրս մնացին ռեպրեսիաներից: Իսկ այն փաստը, որ Լ. Բերիան Հայաստան էր ուղարկում իր մարդկանց՝ նրանց առջև խնդիր դնելով կազմալուծել Հայաստանի կոմկուսի, քաղկոմների, շրջկոմների աշխատանքը

[57] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 41, 61:

և նյութեր հորինել՝ կազմակերպությունները գլխատելու համար[58], խոսում էր այն մասին, որ նա հետևողականորեն քայլեր էր ձեռնարկում բարոյապես և ֆիզիկապես վերացնելու Խորհրդային Հայաստանի կուսակցական, պետական կադրերին:

Սուրեն Թովմասյանը խոսում էր նաև Ստալինի կողմից ազգային հարցում թույլ տրված սխալների, անօրինականությունների մասին՝ նշելով, որ Ստալինը կոպտորեն ոտնահարել էր ազգային քաղաքականության լենինյան սկզբունքները, և անհատի պաշտամունքը ստեղծվել էր գերազանցապես այն պատճառով, որ Ստալինը ամեն կերպ հրահրում և խրախուսում էր այդ ամենը: Եվ որպես դրա օրինակ՝ նա բերում էր նրա համառոտ կենսագրությունը, որը լույս էր տեսել 1948 թվականին: Նրանում Ստալինը նկարագրվում էր որպես աստվածացված մարդ, որը անաղարտ իմաստուն էր, մեծագույն առաջնորդ, անգերազանցելի զորավար բոլոր ժամանակների և բոլոր ժողովուրդների համար: Ներկայացնելով այդ ամենը՝ նշվում էր, որ այդ փաստերը ներկայացված էին Ն. Խրուշչովի զեկուցման մեջ: Ստալինը ինքն էլ ավելացրել էր շատ բաներ իր համառոտ կենսագրության մեջ՝ կարծելով, որ հեղինակների գովասանքները քիչ էին: Այսպես, օրինակ, նա իր ձեռքով համառոտ կենսագրության մեջ ավելացրել էր. «Վարպետորեն կատարելով կուսակցության ու ժողովրդի առաջնորդի դերը, ունենալով ամբողջ խորհրդային ժողովրդի լիակատար պաշտպանությունը՝ Ստալինը, սակայն, իր գործունեության մեջ թույլ չի տվել անգամ կասկածանքի, գոռոզամտության և ինքնահիացման ստվեր»: «Ստալինը Լենինի գործի արժանավոր շարունակողն է, կամ, ինչպես ասում են մեզ մոտ, Ստալինը Լենինն է այսօր»: «Ընկեր Ստալինը ավելի զարգացրեց խորհրդային առաջավոր ռազմագիտությունը» և այլն[59]:

Համագումարում բերելով անհատի պաշտամունքի ձևավորման վերաբերյալ նման փաստեր՝ Խրուշչովը նաև օրինական հարց էր բարձրացնում, որ ոմանք կարող են հարցնել՝ որտեղ էին Քաղբյու-

---

[58] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 38:
[59] ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 42-45:

րոյի անդամները, ինչու նրանք ժամանակին դուրս չէին գալիս անհատի պաշտամունքի դեմ և խոսում են այդ մասին վերջերս: Բարձրացնելով այդ հարցը՝ Խրուշչովը նաև նշում էր, որ այդ ամենը միաժամանակ չէր ստեղծվել: Այն հանդես է եկել տարբեր ժամանակ և տարբեր չափերով: Կենտկոմի քաղբյուրոյի անդամները տարբեր ժամանակներ տարբեր ձևերով են գնահատել այդ երևույթները: Առաջին շրջանում նրանցից շատերն ակտիվորեն պաշտպանել են Ստալինին՝ գտնելով, որ Ստալինն ամենաուժեղ մարտավարներից մեկն էր, և նրա տրամաբանությունը, ուժը և կամքը մեծ ազդեցություն են թողել կադրերի և կուսակցության աշխատանքերի վրա:

Լենինի մահից հետո, հատկապես առաջին տարիներին Ստալինն ակտիվ պայքար է մղել լենինիզմի համար: Եվ հենց այդ ժամանակ էլ Ստալինը ձեռք է բերել մեծ ժողովրդականություն, համակրանք և պաշտպանություն ժողովրդի կողմից: Ասելով այդ ամենը՝ Սուրեն Թովմասյանը նաև նշել է, որ Ստալինը այնուհետև սկսել է չարաշահել իրեն տրված իշխանությունը, ինչն էլ հանգեցրել է ծանր հետևանքների:

Բնական է, որ կուսակցության 20-րդ համագումարը, դատապարտելով անհատի պաշտամունքը, խնդիր էր դնում, որ կուսակցական բոլոր կազմակերպությունները տեսական և գործնական աշխատանքի բոլոր ոլորտներում անեն անհրաժեշտ հետևություններ: Ելնելով այդ ամենից՝ ակտիվի ժողովը հանրապետության համապատասխան բոլոր մարմիններին հանձնարարում էր ծանոթանալ Ն. Ս. Խրուշչովի զեկուցմանը և քննադատորեն վերանայելով այդ ամենը՝ աշխատանքն ուղղել՝ վերացնելու անհատի պաշտամունքի հետևանքով եղած բոլոր թերությունները[60]: Ներկայացնելով ստալինյան անօրինականությունները, ակտիվի ժողովը, ղեկավարվելով կուսակցական ղեկավարման դեռևս շարունակվող և գործող կանոնադրական սկզբունքներով և չշեղվելով կուսակցության 20-րդ համագումարում Ն. Ս. Խրուշչովի հանձնարարություններից՝ նշվում էր, որ

[60] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 45-47, 62-63:

Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը մեծ և փառավոր ուղի է անցել: Եվ որքան էլ, որ քննադատական խոսք էր ասվում Ստալինի անհատի պաշտամունքի մասին, միևնույն է, ժողովը արձանագրում էր, որ կուսակցությունը մնացել է իր բարձրության վրա, գրեթե անսխալ[61]: Այդ ամենից հետո նման հետևություն անել նշանակում է գրեթե ամեն ինչ թողնել նախկինի նման, և որ կարևոր է՝ չշոշափել, չկպչել համակարգին, կասկածի տակ չդնել նրա արժեքները: Դժվար չէ տեսնել, որ որքան էլ դատապարտվեց անհատի պաշտամունքը, բայց անխախտորեն պահվեց սոցիալիստական, կոմունիստական գաղափարը՝ ամեն ինչ անելով, որ մարդկանց գիտակցության մեջ որևէ բան չդրվի կասկածի տակ: Եվ երևի դա էր հենց խրուշչովյան «ձնհալի» երկվությունը, հակասականությունը, որը մի կողմից նպաստեց շատ բաներ վերանայելու, քննադատելու և այլն, բայց կասկածի տակ չդնելու համակարգը, որի շարունակողները երկրի ղեկի մոտ գտնվող հիմնականում նախկին կադրերն էին, որոնք ապրել, գործել և աշխատել էին այդ տարիներին՝ գտնվելով քաղաքական, տնտեսական, հոգևոր կյանքի տարբեր ոլորտներում: Բայց բոլոր դեպքերում անհատի պաշտամունքի դատապարտումը մեծ նշանակություն ունեցող երևույթ էր. այն զգալի չափով պետք է նպաստեր հասարակական-քաղաքական կյանքի ակտիվացմանը, որն առավել մեծ չափով դրսևորվեց, երբ այդ հարցը սկսվեց քննարկվել հանրապետության կուսակցական կազմակերպություններում և տարբեր հաստատություններում: Ընդ որում, այդ քննարկումները բավական բազմազան էին: Նրանցում հաճախ իշխում էր հուզական գործոնը: Մարդիկ արդարացիորեն վրդովվում էին ողջ երկրում, հանրապետությունում իրականացված ստալինյան բռնությունների, հազարավոր մարդկանց անտեղի աքսորելու, մահապատժի ենթարկելու, նրանց կյանքը խեղելու և այլ կարգի անօրինականությունների համար: Այդ հարցում բավական ակտիվ էին շարքային շատ կոմունիստներ, որոնք, դատապարտելով ստալինյան բռնությունները, նաև

[61] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 47, թ. 64-65:

արդարացիորեն քննադատում էին հանրապետության կուսակցական, պետական բարձր դիրքեր զբաղեցրած շատ պաշտոնյաների, որոնք ևս, իրենց հերթին չարաշահելով իրենց դիրքը, հաճախ հաշվեհարդար էին տեսնում շատ մարդկանց նկատմամբ: Այդ քննարկումները հատկապես քննադատական տոնով էին անցնում մտավորական, ստեղծագործական կոլեկտիվներում՝ Երևանի պետական համալսարանում, տարբեր բուհերում, Խորհրդային Հայաստանի գրողների միությունում, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայում և բազմաթիվ այլ կազմակերպություններում: Այդ իմաստով հետաքրքիր է ներկայացնել այն մթնոլորտը, որը ստեղծվել էր Խորհրդային Հայաստանի գրողների միությունում, որը, ևս քննարկելով Ստալինի անհատի պաշտամունքի թեման, իր քննադատական խոսքն է ասել նաև հանրապետության կուսակցական, պետական մարմինների, առանձին անհատների մասին: Այդ տեսանկյունից հետաքրքիր են 1956 թ. մարտին՝ ՀԽՍՀ գրողների միության կուսակցական ժողովում անհատի պաշտամունքի հարցի քննարկման ժամանակ, առանձին անձանց ելույթները, նրանցում բարձրացված հարցերը: Օրինակ՝ ելույթ ունեցողներից Սուրեն Այվազյանն ասում էր. «Ջնջելով Ստալինի անունը՝ չի ջնջվի նրա ահավոր ոճրագործությունների հետքերը: Նա ոչնչացրել է ամբողջ երկու սերունդ: Պատմությունը կնզովի այն ղեկավարներին, որոնք նախաձեռնություն, խիզախություն հանդես չէին բերում, մտածում էին իրենց սոսկ պաշտոնին կառչած մնալու մասին: Պատմությունը չներեց Ստալինին, որն աստվածանալու մոլուցք ուներ, և նրան հատուցեց արժանին: Պետին նմանվելը դարձել է մեր սովորությունը, իսկ Հայաստանում նույնպես տառապում էին ընդօրինակելու ցավով: Այստեղ դեռևս չեն հրաժարվել անձի պաշտամունքից: Այդպիսի «խիզախների» համար մարդիկ երբեմն իրենց համար ճանապարհ են հարթում: Այդպես բարձրացան Սուրեն Թովմասյանը և Շմավոն Առուշանյանը: Ընկ. Թովմասյանն իրեն չկեղծեց: Նա շարունակեց աշխատել նախկին «էնկավեդյան» (անվտանգության մարմինները) մեթոդներով՝ հիմնարկներում ականջներ պահելով և ահաբեկելով մարդկանց նրանով, որ ինքը լսում է ամեն բան:

Նա դեռ կարծում է, թե մարդիկ թշնամիներ են, և պետք է որսալ նրանց ասածներից «անառողջ հնչյունները»: Դեռ ավելին, Սուրեն Թովմասյանը, գրողների համագումարում դիմելով աքսորից վերադարձած գրողներին, ասել է. «Մենք ձեզ քաղաքական զիջումներ չենք անում»: Մեկնաբանելով Ս. Թովմասյանի այդ միտքը՝ Սուրեն Այվազյանն ընդգծել է՝ նա այն կարծիքին էր, որ մարդկանց ոչ թե արդարացրել են, այլ ելնելով նրանից, որ նրանք շրջապատի համար այլևս վտանգավոր չեն, ազատել են:

Նույն ոգով խոսելով Սուրեն Թովմասյան-Գրիգոր Արուտինով հարաբերությունների մասին՝ Սուրեն Այվազյանն ասել է. «Ասում են ընկ. Ս. Թովմասյանը մերկացրել է Արուտինովին՝ ասելով, թե տեսնում է ինչպիսի մարդկանցով է վերջինս շրջապատել իրեն, այդ նեղ պահին նրա հետ ոչ ոք չի մնացել և այլն: Բայց մեր ամբողջ դժբախտությունը բխում է նրանից, որ յուրաքանչյուր ղեկավար իր շուրջն է համախմբում իր մարդկանց, որ ինքը մնա անխոցելի: Եվ քանի որ մեզ մոտ չեն ընտրում, այլ նշանակում են, դրա համար էլ մեր ընկերները երախտապարտ են լինում ոչ թե ժողովրդին, իրենց ընտրողներին, այլ նշանակողին: Դրա համար էլ նրանք մոռանում են, որ իրենք կոչված են ոչ թե ժողովրդին իրենց ծառայեցնելու, այլ իրենք ծառայելու ժողովրդին: Ահա այստեղից էլ ծնունդ է առնում անհատի, անձի պաշտամունքը»[62]: Այնուհետև նա նշել է, որ 30 տարի անդադար Ստալինի մասին խոսում էին առանց չափն իմանալու, առանց հաշիվ տալու, թաքցնում էին իսկությունը, կեղծում իրականությունը: «Երեսուն տարվա փակ լեզուներս,– շարունակում է նա,– բացվել է, կարող ենք ասել մեր սրտինը: Նա ճիշտ է նկատում, որ հնարավոր է, որ այժմ խոսելու ընթացքում որոշ ծայրահեղություններ լինեն, բայց այն է ուրախալին, որ այժմ սխալվելը, ծայրահեղության մեջ ընկնելը այլևս չեն հալածվի»: Եվ քանի որ փակագծերը, ինչպես ասում են, բացվել էին, Սուրեն Այվազյանը խոսում էր նաև հայ ժողովրդին հուզող մի հարցի մասին ևս: Խոսքը վերաբերում էր Արևմտյան Հայաս-

[62] ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 58, թ. 26-29, 52-53:

տանին, Լեռնային Ղարաբաղին, Նախիջևանին: Եվ կարծեք հռետորական հարց է տալիս. մինչև ե՞րբ է Հայաստանը բաժանված մնալու իր անբաժանելի մասերից: Առաջին հերթին նա նկատի ուներ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հարցը՝ գտնելով, որ եթե մեկ անգամ սխալվել են, ապա այժմ կարելի է ուղղել: Նկարագրելով Լեռնային Ղարաբաղի ծանր վիճակը՝ նա նշում էր, որ Ղարաբաղի մոտ 300 հայկական գյուղեր և ավաններ էլեկտրական լույս չունեն և դեռ խարխափում են «քոռ ճրագների» լույսի տակ՝ ավելացնելով, որ այդ գյուղերը իրար հետ կապող համարյա ոչ մի խճուղի չկա:

Դեռ ավելին, նա նշում էր, որ անգամ ցարիզմի ամենածանր տարիներին այն հայերը, որոնք ապրում էին Ռուսաստանի տարբեր մարզերում, ունեին ավելի մեծ հնարավորություններ՝ հրատարակելու հայերեն թերթեր, քան բոլոր հայերը, որոնք ապրում էին Հայաստանում: Այդպես Սուրեն Այվազյանը հռետորական հարց էր բարձրացնում, թե ով պետք է այդ մասին մտածի, և ավելացնում էր, որ երկրում ստեղծված այդ վիճակը կապված էր Ստալինի պաշտամունքի հետ[63]: Իսկ ելույթ ունեցողներից Արաքսը, գնահատելով համագումարի փակ նիստում անհատի պաշտամունքի մասին Ն. Ս. Խրուշչովի զեկուցումը, բարձրաձայնում էր իր մտորումները՝ ասելով, որ 20-րդ համագումարը մեծ իրադարձություն էր, քանի որ պատգամավորները համարձակ և սրտաբաց ասում, խոսում էին իրենց հուզող հարցերի մասին: Նրանք երկար տարիներ փոշու մեջ թաղված կուսակցական փաստերն անխոս հրապարակ էին բերում, իսկ խնդիրները դրվում էին պարզ ու միանգամից: Գնահատելով համագումարի փակ նիստում անհատի պաշտամունքի մասին Ն. Ս. Խրուշչովի զեկուցումը՝ Արաքսը նշում էր, որ Ստալինին մեծարելու համար ամեն տեսակ ածականներ, որակումներ էինք հնարում, նրան համարում արև, ամեն բարիք ստեղծող, ամենքին հայր և այլն: Իսկ 20-րդ համագումարը իրավունք է տվել բացելու մարդկանց սրտերը և խոսելու տարիներ շարունակ տանջող հարցերի մասին: Եվ քանի որ Արաքսը 1937 թ. ահեղ

[63] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 57, թ. 14, գ. 58, թ. 45-46:

օրերի, տարիների վկան էր, որն իր ընտանիքի հետ ենթարկվել էր այդ խորշակին, փորձում էր իր հարազատ տանը խոսել տառապանքների, ապրումների և ցավի մասին: Իսկ ցավն այն էր, որ այդ հալածանքները միակողմանի էին: Բավական էր, որ ընտանիքից մեկին անտեղի մեղադրեին, վայն եկել էր նրա ողջ ընտանիքին. տարեց կին, երեխա, մայր ու հարազատներ գանակոծվում էին: Կային նաև մարդիկ, որոնք ակտիվացել էին և դրանով ցանկանում էին իրենց քծնական նվիրվածությունը ցույց տալ *մեծագույնին* (ընդգծումը մերն է – Հ. Ա.):

Իր ամուսնուն՝ Համո Հովհաննիսյանին, որը «Սովետական Հայաստան» թերթի խմբագիրն էր, իսկ հետո՝ Պարտիզդատում (կուսհրատարակչություն) գլխավոր խմբագիր, 1937 թ. ձերբակալել էին որպես ժողովրդի թշնամու, իսկ բնակարանն էլ ձեռքից առել և տվել իր գրչակից Հրաչյա Քոչարին[64]:

Նման կարգի ելույթ է ունեցել նաև Վազգեն Տալյանը, որը, խոսելով անհատի պաշտամունքի մասին և դատապարտելով այդ երևույթը, նշել է, որ դրան առնչվում են նաև ղեկավարների նկատմամբ դրսևորվող շողոքորթությունը, քծնանքը: Ովքեր գովք էին անում Կենտրոնական կոմիտեի քարտուղարի կամ ղեկավարների հասցեին, նրանք ավելի պատիվ ունեին, և նրանց ավելի տեղ էին տալիս, իսկ ովքեր մի թերություն էին նշում, քննադատում էին նրան, արհամարհանքի և ծաղրի էին ենթարկվում:

Նույն հարցերի մասին քննադատական տոնով է խոսել նաև Արշալույս Սարոյանը: Նա, գնահատելով կուսակցության 20-րդ համագումարի պատմական նշանակությունը, նշել է, որ համագումարը վճռական հարված հասցրեց անհատի պաշտամունքին, հարուստ փաստերով ցրեց «հրաշագործ» Ստալինի մասին եղած առասպելները: Նա նաև ասել է, որ համագումարը «Առաջնորդների առաջնորդին», «Ուսը հողագնդին տված դեպի արևը» հրող կիսաստծուն դարձրեց մարդ, որը, ըստ երևույթին, բոլոր մահկանացուներից էլ

[64] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 58, թ. 54-61:

ամենից ավելի արատավորն էր ու ամենից ավելի արյունռուշտը: Նա նաև խաղացել է միլիոնավոր ազնիվ մարդկանց բախտի հետ: Իսկ այդ ամենը հսկայական վնաս հասցրեց մեր երկրին: Իսկ գլխավոր հետևությունն այն էր, որ պետք է վերջ տալ խաբեբայությանը և մարդկանց սրտերից հանել ճորտությունը, իսկ Հայաստանի կոմկուսի աշխատանքները վերակառուցել կուսակցության 20-րդ համագումարի ոգուն համապատասխան: Հայաստանի կոմկուսի կենտկոմի համակարգում կային մարդիկ, որոնք վախենում էին քննադատական խոսք ասել ղեկավարության հասցեին, քանի որ իսկույն կհանդիպեին ոչ միայն Սուրեն Թովմասյանի բռնարարությանը, այլև շատ քծնողների հարձակումներին: Եվ այն հարցին թե ինչու են քծնում, Արշալույս Սարոյանն ասել է՝ Թովմասյանը գնել էր քծնողների հոգին, կուսակցության խիղճը՝ պաշտոններ շռայլելով անարժաններին: Հայ գրականության, հայ գրողների միությունում բույն էին դրել բանսարկությունները, որոնց պատճառով գրեթե գլխատվեց սովետահայ գրականությունը, որի զոհերը դարձան Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Վահան Թոթովենցը, Ալազանը, Նորենցը և շատ ուրիշներ:

Ոգևորված կուսակցության 20-րդ համագումարի, անհատի պաշտամունքի դատապարտման փաստի առթիվ՝ Արշալույս Սարոյանն իր ելույթում անդրադարձել է նաև հայ ժողովրդին հուզող մի հարցի՝ օտարի կողմից զավթված հողերի մասին: Նա նշել է, որ դիվանագետները տարբեր ժամանակ տարբեր կարծիք են հայտնել, մերթ էլ այդ հողերը յուղալի պատառի նման նետել են կատաղած շան երախը, որն իր վրա չհաչի, թեև այդ յուղալի պատառներից գազազած թյուրքական գազանը շարունակում էր հաչել[65]:

Շարունակելով նախորդ ելույթ ունեցողների միտքը՝ Պ. Մարտիրոսյանն ավելի շատ կարևորել է այն մթնոլորտը, որը ստեղծվել էր Խորհրդային Միությունում և Հայաստանում՝ նկատի ունենալով այն, որ յուրաքանչյուր մարդ արդեն կարող էր ազատորեն արտահայտել իր մտքերը: Խորհրդային մարդը, որը 30 տարի հորջորջվում էր որ-

[65] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 58, թ. 1-12:

պես հողագնդի ամենաազատ և երջանիկ մարդ, իրականում ապրում էր կեղծիքի ու մարդկային արժանապատվության ոտնահարման պայմաններում: Կեղծիքն ու ստրկամտությունը թագավորում էին վերից վար, տարածված էին ողջ համակարգում, նույնիսկ թափանցել էին ընտանիք: Եղբայրը վախենում էր եղբոր մոտ խոսել այն, ինչ մտածում էր, հարազատը զրպարտում էր հարազատին: Եվ այդ ողջ ողբերգությունն այն էր, որ այդ ամեն այլանդակությունների հեղինակը մի մարդ էր, որին հայր հորջորջումն էին տվել, որին պաշտում էին:

Ոչ պակաս չափով հետաքրքիր էր նաև գրող Բաղիշ Հովսեփյանի ելույթը: Վերջինիս կարծիքով կուսակցության 20-րդ համագումարը վերջապես փշրեց այն կուռքը, որը անդրդվելի սֆինքսի նման նստել էր ժողովրդի սրտին ու շնչին, դարձել ոչ բնական անանցանելի պատնեշ գրականության ու արվեստի, պատմության, փիլիսոփայության զարգացման ճանապարհին: Դեռ ավելին, նա նշում է, որ համագումարը կիսով չափ է ջախջախել անհատի պաշտամունքը, որը դեռ չի նշանակում, որ մեր հասարակության միջից ինքնաբերաբար կվերանային այն քծնանքն ու ստրկամտությունը, այն պաշտոնական կամայականությունները, որոնք բավականին երկար տարիների ընթացքում Ստալինի արյունոտ քաղաքականության պատճառով ժանգի պես նստել էին յուրաքանչյուրի մտքի ու հոգու վրա: Ստալինն ասում էր մի բան և կատարում ասածի ճիշտ հակառակը: 1936-1938 թթ. նախճիրի շեմին նա հայտարարեց, որ մեր երկրում ամենաթանկ կապիտալը մարդն է: Նա դա հայտարարեց, բայց մենք տեսանք, թե ինչպես հազարավոր ու միլիոնավոր մարդիկ քշվեցին բանտերը՝ ենթարկվելով պատմության ընթացքում չլսված ու չտեսնված խոշտանգումների: Ներոնն էլ էր խոշտանգում, բայց նա խոշտանգում էր՝ սոսկ խոշտանգելու համար, իսկ Ստալինը ժողովրդին խոշտանգում էր «ժողովրդի սիրելի հայր» հռչակվելու մոլուցքով, որն էլ խորհրդային ժողովրդի ամենատխուր ողբերգություններից մեկն էր[66]:

[66] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 58, թ. 15-17, 22, 26-27, 31:

Անդրադառնալով խորհրդային ընտրական համակարգի ստալինյան գնահատականին՝ Բաղիշ Հովսեփյանը բոլորին հիշեցնում էր, որ Ստալինը այն համարում էր աշխարհում ամենադեմոկրատականը: Մինչդեռ նշում է նա, որ թե՛ Գերագույն խորհրդի և թե՛ տեղական խորհուրդների ընտրությունները երբեմն դառնում էին ժողովրդի իրավունքները ծաղրող ընտրություններ, քանի որ ինչպես հայտնի է, նախքան ընտրությունները պատգամավորներն արդեն ընտրված էին լինում կուսակցության Կենտկոմի, քաղկոմների ու շրջկոմների բյուրոներում, և ընտրողին մնում էր միայն մեկ բան՝ թուղթը նետել արկղը և դրանով կատարել իր ավանդական պարտականությունը՝ առանց իմանալու տվյալ անձի գործի ու կարողությունների մասին[67]: Նման փաստերը կրկին վկայությունն են այն անօրինականությունների, որոնք ստալինյան բռնաճնշումների տարիներին իշխում էին երկրում, իսկ ստանալով ազատ խոսելու հնարավորություն՝ մարդիկ իրենց վրդովմունքն ու զայրույթն էին արտահայտում այդ ամենի նկատմամբ հավատով, որ իրական կյանքում շատ բան կփոխվի: Եվ դա է պատճառը, որ անհատի պաշտամունքի դատապարտմանը նվիրված բոլոր կարգի ելույթներում մարդիկ խոսում էին ավելի անկաշկանդորեն և բարձրացնում էին հարցեր, որոնց մասին տասնամյակներ շարունակ չէին կարող խոսել:

Մեր պարագայում դա առանձնապես վերաբերում էր ազգային հարցին, այդ բնագավառում խորհրդային իշխանությունների ժամանակին թույլ տված անարդարություններին, սխալ որոշումներին, որքան էլ իշխանությունների կողմից այդ ամենը, եթե չասենք սվիններով, ապա, մեղմ ասած, հաճույքով չէր լսվում և ընդունվում: Բայց անկախ այդ ամենից՝ միևնույն է, հնարավոր չէր կանգնեցնել մարդկանց և արգելել ասել այն, ինչ մտածում էին: Այստեղ տեղին է ասել, որ խրուշչովյան «ձնհալն» իր դերը կատարում էր:

Վերոհիշյալ միտքը հաստատելու համար բավական է ներկայացնել Երևանի պետական համալսարանում 1956 թ. մարտի 29-31-ը

[67] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 58, թ. 32:

տեղի ունեցած կուսակցական կազմակերպության դռնփակ ժողովում առանձին կոմունիստների կողմից բարձրացրած այն հարցերը, որոնք վերաբերում էին անհատի պաշտամունքի դատապարտմանը և դրանից բխող խնդիրներին: Իսկ ժողովը քննարկել է «ԽՄԿԿ 20-րդ համագումարի արդյունքները և կուսկազմակերպության անելիքները» հարցը, որի մասին զեկուցել է ՀԿԿ կենտկոմի քարտուղար Հ. Մարգարյանը, որից հետո ելույթ են ունեցել բազմաթիվ կոմունիստներ, որոնք, դատապարտելով անհատի պաշտամունքը, խոսել են նաև հայ ժողովրդին հուզող մի շարք հարցերի մասին:

Ժողովի մասնակիցները նախ արձանագրել են, որ կուսակցության 20-րդ համագումարն ունի հեղափոխական և պատմական նշանակություն: Ելույթ ունեցողներից համալսարանի կուսակցական կոմիտեի քարտուղար Հայկազ Աղամյանը նշել է, որ կոմունիստները ոչ մի անգամ իրենց ընկերների առաջ այդքան համարձակ ելույթ չեն ունեցել, որքան կուսակցության 20-րդ համագումարից հետո: Եվ այժմ կարևորն այն է, որ ոչ միայն պետք է խոսենք սոսկ անհատի պաշտամունքի մասին, այլ կարողանանք վերացնել անհատի պաշտամունքի ծանր հետևանքները, պաշտամունքը ծնող պատճառները, որպեսզի այն չկրկնվի:

Գուրգեն Սահակյանը կարևորել է այն հանգամանքը, որ 20-րդ համագումարին նվիրված համալսարանի կուսակցական կազմակերպության ժողովն անցնում էր բարձր մակարդակով, քանի որ ելույթ ունեցող բոլոր ընկերները մեծ հիացմունքով և երախտագիտությամբ էին խոսում մեր կուսակցության կոլեկտիվ ղեկավարության, նրա վարած արտաքին և ներքին իմաստուն քաղաքականության մասին: Այնուհետև նույն կարգի ելույթներ են ունեցել նաև Կ. Անանիկյանը, Ս. Բալյանը, Գ. Բաբաջանյանը, Թ. Կարապետյանը, Մ. Կյուրեղյանը և շատ ուրիշներ: Նաև հարկ է ասել, որ ելույթ ունեցողներից ոմանք խոսել են հայ ժողովրդին հուզող մի շարք հարցերի մասին: Խոսքը գլխավորապես վերաբերում էր Լեռնային Ղարաբաղին և Նախիջևանին: Բարձրացնելով այդ հարցը՝ Ռաֆիկ Հարությունյանը ժողովականներին հիշեցրել է Խորհրդային Ադրբեջանի և

Խորհրդային Հայաստանի համատեղ ընդունած այն դեկլարացիայի մասին, որով Լեռնային Ղարաբաղը համարվում էր Խորհրդային Հայաստանի անբաժան մաս: Իսկ դեկլարացիայում ասվում էր. «Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հեղկոմի դեկլարացիայի և Հայաստանի ու Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմյանից կազմում է Խորհրդային Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը»[68]:

Ռաֆիկ Հարությունյանի կողմից հնչեցրած այդ հարցը պաշտպանվել է ինչպես շատ համալսարանականների, այնպես էլ այդ կապակցությամբ ելույթ ունեցող Պողոս Պողոսյանի կողմից, որը, անդրադառնալով այդ հարցին, իրավացիորեն հարց է բարձրացրել այն մասին, թե ինչպես կարող էր պատահել, որ ավելի քան երեսուն տարի հայ ժողովրդին հուզող հարցը մնացել էր չլուծված: Դրա պատճառը Պողոս Պողոսյանը տեսնում էր Ստալինի վարած ազգատյաց քաղաքականության մեջ: Դեռ ավելին, Պողոս Պողոսյանը խոսել է նաև Նախիջևանի խնդրի մասին՝ նշելով, որ ադրբեջանական իշխանությունների կողմից այնտեղ վարվել է մի քաղաքականություն, որի արդյունքում հայ բնակչությունը խորհրդային իշխանության տարիներին Նախիջևանում գնալով պակասել է, իսկ ադրբեջանցիներինը՝ ավելացել: Եվ քանի որ նա շատ լավ գիտակցում էր, որ որոշ ընկերներ իրեն կարող են մեղադրել նացիոնալիզմի մեջ, ասում է, որ ինքը անասելի խանդավառությամբ և հիացմունքով է ուսումնասիրել կուսակցության 20-րդ համագումարի նյութերը, լիովին համակրել և հավանություն տվել նրա որոշումներին և ոգեշնչված այդ ամենով՝ փորձել է ազնվաբար հանդես գալ և իր կարծիքը հայտնել քննարկվող հարցի վերաբերյալ: Նա գտնում էր, որ իր ասածի մեջ նացիոնալիստական ոչինչ չկա, քանի որ ինքը առաջ էր քաշում արդարացի պահանջ և չէր ոտնահարում որևէ ժողովրդի իրավունք:

---

[68] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 417, թ. 118-124:

Ելույթ է ունեցել նաև Մարտիրոս Կյուրեղյանը, որը, նույնպես հավանություն տալով կուսակցության 20-րդ համագումարի որոշումներին, անհատի պաշտամունքի դատապարտմանը, խոսել է նաև կուսակցական դեմոկրատիայի մասին՝ նշելով այն փաստը, որ ֆրանսիական պառլամենտում 150 կոմունիստների առկայությունը և նրանց պայքարը դեմոկրատիայի համար վկայություն են նրա, որ ֆրանսիական պառլամենտը, համեմատած բուրժուական մյուս պառլամենտների հետ, ավելի դեմոկրատական է [69]:

Հայաստանի կոմկուսի կենտկոմը, բնականաբար, չէր կարող անտեսել Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության ժողովում բարձրացրած այն հարցադրումները, որոնք առնչվում էին հատկապես Լեռնային Ղարաբաղին, Նախիջևանին, կուսակցական, պառլամենտական դեմոկրատիային և այլն: Այդ նպատակով 1956 թ. ապրիլի 7-ին հրավիրվեց Կենտկոմի բյուրո, որտեղ քննարկվեց Երևանի պետական համալսարանի կուսակցական ժողովում ելույթ ունեցած այն կոմունիստների հարցը (Ռաֆիկ Հարությունյան, Պողոս Պողոսյան, Մարտիրոս Կյուրեղյան), որոնք հակակուսակցական ելույթներ էին ունեցել և որոշել համալսարանի կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար Հայկազ Ադամյանին հայտարարել խիստ նկատողություն, ազատել աշխատանքից, ինչպես նաև նշանակել համալսարանում կուսակցական կոմիտեի նոր ընտրություններ՝ նկատի ունենալով այն, որ համալսարանի կուսկոմիտեն այդ հարցում չէր դրսևորել սկզբունքային մոտեցում կոմունիստների, դասախոսների և ուսանողների դաստիարակության գործում, և այդ բնագավառում կային լուրջ թերություններ: Բնական է, որ համալսարանը պետք է անդրադառնար ՀԿԿ կենտկոմի բյուրոյի վերոհիշյալ որոշմանը, տար իր մեկնաբանությունները և հրավիրեր կուսակցական ժողով: Այն տեղի է ունեցել 1956 թ. մայիսի 18-21-ը: Ժողովը քննարկել է ՀԿԿ կենտկոմի բյուրոյի 1956 թ. ապրիլի 7-ի «Երևանի պետական համալսարանի կուսակցական ժողովում հա-

[69] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 416, թ. 28-29, 30, 35:

կակուսակցական ելույթների մասին» հարցը (զեկ.՝ Հ. Ութմազյան) և նշել, որ ՀԿԿ կենտկոմի բյուրոն արձանագրել է՝ համալսարանի կուսակցական կազմակերպության անդամ մի քանի կոմունիստների կողմից թույլ են տրվել հակակուսակցական արտահայտություններ կուսակցության արտաքին, ազգային քաղաքականության, ինչպես նաև ընտրական համակարգի և այլ հարցերի վերաբերյալ:

Չխորանալով ՀԿԿ կենտկոմի բյուրոյի որոշման այլ մանրամասների մեջ՝ նկատենք, որ Կենտկոմի բյուրոն հատկապես անդրադարձել է համալսարանի կուսակցական կոմիտեի աշխատանքին՝ նշելով, որ կոմիտեն լավ չէր նախապատրաստել ժողովը, որում չէին բարձրացվել համալսարանի ներքին կյանքին վերաբերող հարցեր, և համալսարանի ռեկտորատի, դեկանատների և կուսակցական կոմիտեի աշխատանքներում գոյություն ունեն լուրջ թերություններ:

Կենտկոմի բյուրոն նաև նշել է, որ համալսարանի կուսկոմիտեն կադրերի դաստիարակության հարցում չէր վարում սկզբունքային գիծ. նպաստում էր անսկզբունքային ելույթ ունեցողներին, ուստի համալսարանի կուսակցական կոմիտեն պատասխանատվություն էր կրում այդ ամենի համար: Ելնելով այդ ամենից՝ Կենտկոմի բյուրոն որոշել էր Հ. Ադամյանին ազատել համալսարանի կուսակցական կոմիտեի քարտուղար պարտականություններից և համալսարանից, իսկ Պ. Պողոսյանի, Ռ. Հարությունյանի և Մ. Կյուրեղյանի վերաբերյալ հանձնարարել էր Կիրովյան (Կենտրոն) կուսշրջկոմին քննարկել նրանց հարցը՝ կարո՞ղ են արդյոք նրանք մնալ կուսակցության շարքերում, թե՞ ոչ[70]:

Հասկանալի է, որ ՀԿԿ կենտկոմի բյուրոյի նման որոշմանը պետք է հետևեր համալսարանի կուսակցական կազմակերպության արձագանքը՝ նոր ժողովի հրավիրում՝ քննարկելու ՀԿԿ կենտկոմի վերոհիշյալ որոշումը:

1956 թ. մայիսի 18-21-ը հրավիրվել է համալսարանի կուսակցական կազմակերպության դռնփակ ժողով, որն էլ քննարկել է ՀԿԿ

[70] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 417, թ. 4-12, նաև ֆ. 1, ց. 36, գ. 60, թ. 10-15:

կենտկոմի 1956 թ. ապրիլի 7-ի «Երևանի պետական համալսարանի կուսակցական ժողովում հակակուսակցական ելույթների մասին» հարցը (զեկ.՝ ՀԿԿ Կիրովյան շրջկոմի քարտուղար Հայկարամ Ութմազյան):

Հ. Ութմազյանը, ներկայացնելով համալսարանի մասին ՀԿԿ կենտկոմի բյուրոի որոշումը, նշել է, որ կուսակցության 20-րդ համագումարի արդյունքները քննարկելիս համալսարանի առանձին կոմունիստներ իրենց ելույթներում թույլ են տվել կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության արտաքին և ներքին քաղաքականության գլխավոր գծին խորթ արտահայտություններ, որոնք հատկապես վերաբերում են խորհրդային ընտրական համակարգին ու ազգային քաղաքականությանը: Խոսքը հատկապես վերաբերում էր Ռ. Հարությունյանին, Պ. Պողոսյանին և Մ. Կյուրեղյանին, որոնց էլ ժողովը հնարավորություն տվեց ելույթ ունենալու և հայտնելու իրենց դիրքորոշումը: Չխորանալով նրանցից յուրաքանչյուրի ելույթում բարձրացրած հարցերի մեկնաբանությունների մեջ՝ նշենք, որ իրենք ընդունում էին ՀԿԿ կենտկոմի բյուրոյի որոշման մեջ իրենց հասցեին արված քննադատությունը՝ միաժամանակ նշելով, որ իրենց ելույթներում որևէ հակակուսակցական դրսևորում չկար, և իրենք պաշտպանում են կուսակցության 20-րդ համագումարի որոշումները, նրա ներքին և արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև դատապարտում անհատի պաշտամունքը[71]:

Նույնպիսի ելույթներ են ունեցել նաև շատ համալսարանականներ, որոնք իրենց վերաբերմունքն էին արտահայտում, ինչպես ՀԿԿ կենտկոմի բյուրոյի որոշման, այնպես էլ իրենց գործընկերների ելույթների մասին: Այդ ելույթների շարքից հատկապես ցանկանում ենք անդրադառնալ Էդուարդ Աղայանի ելույթին: Վերջինիս կարծիքով ՀԿԿ կենտկոմի բյուրոյի որոշումը Ռ. Հարությունյանի, Պ. Պողոսյանի և Մ. Կյուրեղյանի վերաբերյալ շատ խիստ էր և անարդարացի: Նա նաև ավելացնում էր, որ Պ. Պողոսյանը երիտասարդ կոմու-

[71] Ավելի մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 416, թ. 21-37, նաև գ. 417, թ. 4-17, 118-124:

նիստ է և եթե անգամ սխալ է թույլ տվել, մի սխալ արտահայտության համար նա չպետք է դադարեր կուսակցական լինելուց: Ելնելով դրանից՝ Է. Աղայանն առաջարկում էր նրանց նկատմամբ կատարել մի դիտողություն կամ զգուշացում՝ առաջարկելով Պ. Պողոսյանի, Ռ. Հարությունյանի և Մ. Կյուրեղյանի նկատմամբ Կենտկոմի բյուրոյի որոշումը մեղմացնել[72]:

Ելույթ է ունեցել նաև Գուրգեն Սահակյանը, որը, անդրադառնալով կուսակցության 20-րդ համագումարին նվիրված համալսարանի կուսակցական ժողովին, նշել է, որ ժողովը, հավանություն տալով համագումարի որոշումներին, ընդունել է համապատասխան բանաձև: Անդրադառնալով Ռ. Հարությունյանի, Պ. Պողոսյանի և Մ. Կյուրեղյանի նկատմամբ Կենտկոմի որոշմանը՝ նա գտնում էր, որ ՀԿԿ կենտկոմի նման որոշումը խիստ է և պետք է վերանայվի ու փոխվի: Դրանով Կենտկոմի հեղինակությունը չի ընկնի, այլ, ընդհակառակը, կդիտվի որպես մեծահոգի քայլ: Այդ ամենն էլ ավելի կբարձրացնի նրա հեղինակությունը, քանզի սխալը հանցանք չէ, այլ սխալը պնդելն է հանցանք՝ ավելացնելով, որ ո՛չ Ռ. Հարությունյանի, ո՛չ Պ. Պողոսյանի և ո՛չ էլ Մ. Կյուրեղյանի ելույթներում ոչ մի հակախորհրդային, հակակուսակցական գունավորում չկար, որը փորձում էին տեսնել որոշ ընկերներ: Այլ ընկերների նման կարգի ելույթներից հետո (Թ. Թաղևոսյան, Ռ. Մովսիսյան, Փ. Ենգոյան, Հ. Աղամյան) ժողովը ընդունել է բանաձև, որում առաջարկվում էր վերանայել «Երևանի պետական համալսարանի կուսակցական ժողովում հակակուսակցական ելույթների մասին» ՀԿԿ կենտկոմի որոշումը՝ մեղմացնելու նպատակով: Միաժամանակ հանձնարարվում էր նորընտիր կուսակցական կոմիտեին հաշվի առնել համալսարանի կուսակցական կոմիտեի աշխատանքի վերաբերյալ ՀԿԿ կենտկոմի արած դիտողությունները և քայլեր ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ: Նույն ոգով է անցել նաև Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի կու-

[72] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 416, թ. 43-46:

սակցական սկզբնական կազմակերպության դռնփակ ժողովը, որը 1956 թ. մարտի 23-ին ևս քննարկել է «ԽՄԿԿ 20-րդ համագումարի խնդիրները և մեր անելիքները» հարցը: Դրա մասին զեկուցել է Վ. Ե. Համազասպյանը: Այնուհետև ելույթ են ունեցել Մորուս Հասրաթյանը, Կամո Հարությունյանը, Տելեմակ Վարդումյանը, Լևոն Սարգսյանը, Բոգդան Վերդյանը և շատ ուրիշներ: Նրանք բոլորն էլ, դատապարտելով անհատի պաշտամունքը, նշել են նաև այն թերությունները, որոնք տեղ էին գտել հանրապետության կուսակցական, պետական, տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում և ցանկություն հայտնել, որ այդ ամենից կուսակցությունը դասեր քաղի և վերացնի նման արատավոր երևույթները[73]: Իսկ ելույթ ունեցողներից Մորուս Հասրաթյանն ասել է, որ երկար տասնամյակներ մեր երկրի կուսակցության պատմությունը աղավաղվել է, և մարդիկ ստացել են խեղաթյուրված դաստիարակություն, որը դժվար է հանել մարդկանց գիտակցությունից: Նա կատարել է հարցադրում՝ ընդգծելով, որ մարդիկ, երիտասարդները տարակուսանքի մեջ են, քանի որ ստացել են խեղաթյուրված դաստիարակություն, և չի կարելի 30 տարվա պատմությունը կապել միայն «մեկ մարդու» անվան հետ, քանզի դրանք ավելի շատ կապված են տասնյակ միլիոնավոր մարդկանց ջանքերի, քրտինքի, զոհաբերությունների հետ: Նա նաև առաջ է քաշել այն միտքը, որ քննադատելով անհատի պաշտամունքը՝ չպետք է ընկնել ծայրահեղությունների, չափազանցությունների մեջ և ամեն ինչ ժխտել, տարվել ամբոխավարությամբ[74]:

Նույնպիսի ելույթ է ունեցել նաև Տ. Վարդումյանը, որը, քննադատելով անհատի պաշտամունքը, ընդգծել է, որ այն մեծ վնասներ է հասցրել մեր երկրին, և 30 տարի շարունակ վախեցել ենք ուրիշ բան մտածել, ուրիշ բան ասել, կեղծել մեր դասախոսությունները և այլն: Ելույթ ունեցողներից Ա. Մարգարյանը, լրացնելով նախորդի միտքը, ավելացրել է, որ երիտասարդությունը սովորել է առավոտից մինչև երեկո լսել «Կեցցե՛ Ստալինը»: Այդ ամենը վերացնելու համար ան-

[73] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 416, թ. 69-117:
[74] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 58, թ. 70-71, 76:

հրաժեշտ է երկար և լուրջ աշխատանք տանել: Նա նաև նշել է, որ Ստալինը եղել է ուզուրպատոր, դեսպոտ, որը ցանկացել է ճնշել բոլորի միտքը: Շփվելով ուսանողության հետ՝ ավելի ենք համոզվում, որ անհատի պաշտամունքի մասին փակ նամակը ոչ միայն պետք է կարդալ փակ ժողովներում, այլ նաև պետք է կարդալ բոլորի համար՝ փոքրից մինչև մեծերը, քանի որ նամակի բովանդակությունը աղավաղված է հասնում մարդկանց: Ներկայացնելով այդ ամենը՝ նա առաջարկել է «հանել նրա բոլոր նկարները, մոնումենտը, որովհետև այդ մոնումենտից կաթում են արյան կաթիլներ»[75]:

Ելույթ ունեցողներից Լ. Սարգսյանը, խոսելով անհատի պաշտամունքի մասին և շարունակելով նախորդ ընկերների միտքը, նշել է, որ իրենց համար ոչ այնքան վտանգավոր են Ստալինի նկարները, արձանները, դիակը, որքան Ստալինի գործունեության սկզբունքները, մեթոդները, որոնցից այսօր պետք է ազատվել[76]:

Հետաքրքիր է նաև Համո Հարությունյանի ելույթը, որը նախ առաջարկում էր համաշխարհային դեսպոտի արձանը չկանգնեցնել մեր մայրաքաղաքի գլխին, այնուհետև բացատրում էր, որ գուցե դա նրա համար են արել, որ միշտ սարսափի մեջ ապրենք: Նա նաև ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ չպետք է բոլոր հանցանքները բարդել մեկ անհատի վրա, այլ պետք է խոսել այն մարդկանց մասին, որոնք կարիերիստական ձգտումների հետևանքով աշխատել են ազնիվ մարդկանց արատավորել: Նա առաջարկել է այդպիսիներին ենթարկել հասարակական պարսավանքի: Հ. Հարությունյանը նաև խոսել է հայագիտական առարկաների՝ հայոց պատմության, հնագիտության, գրաբարի, հայ մանկավարժության դասավանդման, դրանց նկատմամբ ավելի ուշադիր լինելու մասին, որոնց նկատմամբ կան ճնշումներ՝ դիտելով դրանք որպես նացիոնալիզմի դրսևորում[77]:

---

[75] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 58, թ. 82-83:
[76] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 58, թ. 85:
[77] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 58, թ. 90-95:

Ըստ Բ. Վերդյանի՝ երկար ժամանակ շշուկով էին խոսում այն հարցերի մասին, որոնց վերաբերյալ այսօր արդեն հեղինակավոր ամբիոններից ազատորեն խոսում են[78]: Նույնպիսի հետաքրքիր հարցերի է անդրադարձել նաև Լ. Գասպարյանը: Վերջինս բարձրացրել է այնպիսի հարցեր, որոնք առնչվում էին դատախազության, զինվորական տրիբունալների, ՆԳՆ-ի, ՊԱԿ-ի կողմից իրականացված բազմաթիվ անօրինականություններին, բռնություններին, որոնց պատճառով այդ մարմինները ժողովրդի աչքում կորցրին իրենց հեղինակությունը, որի գլխավոր հեղինակը Ստալինն էր, որին զոհ գնացին շատ ազնիվ մարդիկ:

Ընդհանրացնելով Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կուսակցական կազմակերպության դռնփակ ժողովի որոշումները՝ պետք է ասել, որ ժողովը լիակատար հավանություն է տվել և միացել համագումարի ընդունած որոշումներին՝ դրանք ընդունելով որպես գործունեության ծրագիր: Ժողովը նշել է, որ անհատի պաշտամունքը նվազեցնում էր կուսակցության և ժողովրդական զանգվածների դերը, թուլացնում նրանց ստեղծագործական ակտիվությունը, դեռևս ինստիտուտի ոչ բոլոր ամբիոններն էին քննարկել և մշակել կոնկրետ միջոցառումների ծրագրեր, վերանայել դասախոսությունները, որոնցում դեռևս կային անհատի պաշտամունքի դրսևորումներ: Ուստի խնդիր էր դրվում կարճ ժամանակամիջոցում աշխատանքները վերակառուցելու կուսակցության 20-րդ համագումարի ոգով[79]:

Հետաքրքիր ընթացք է ունեցել նաև ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի 1956 թ. ապրիլի 2-ի կուսակցական կազմակերպության դռնփակ ժողովը, որը ևս քննարկել է անհատի պաշտամունքի վերաբերյալ հարցը: Ելույթ ունեցողներից Ոսկանյանը, դատապարտելով անհատի պաշտամունքը, ասել է, որ անհատի պաշտամունքին տուրք տալու հարցում բոլորն էլ ունեն իրենց մեղքը՝ նկատի ունենալով, որ այդ երևույթը տեղի է ունեցել ժո-

[78] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 58, թ. 104-106:
[79] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 58, թ.107-110:

ղովրդի թույլտվությամբ: Նա նաև ճիշտ է նկատել, որ անհատի պաշտամունքը չպետք է շփոթել պատմության մեջ անհատի դերի հետ, քանի որ անհատը չի գործում հասարակությունից մեկուսացված, այլ գործում է կոնկրետ պատմական ժամանակաշրջանում մյուս դասերին, դասակարգերին զուգահեռ: Ուստի նա նաև ընդգծել է, որ անհրաժեշտ է այդ համատեքստում ճիշտ գնահատել յուրաքանչյուրի տեղն ու դերը: Խոսելով ազգային հարցի մասին՝ ասել է, որ անհրաժեշտ է լրջորեն զբաղվել այդ հարցով, քանի որ ազգային հարցում մի շարք դոգմաների պատճառով թույլ են տրվել բազմաթիվ սխալներ:

Բաբկեն Առաքելյանը խոսել է կուսակցական մարմիններում տասնամյակներ շարունակ հաստատված ընտրական կարգի մասին՝ նշելով, որ այն բացառում է թեկնածուների ազատ ընտրելու հնարավորությունը և առաջարկել է փոխել այն:

Ինստիտուտի գիտաշխատողներից Խաչեյանն իր ելույթում բարձրացրել է Հայրենական մեծ պատերազմին մասնակցած պարտիզանների, հատկապես 1944 թ. Ֆրանսիայում դիմադրության շարժման ժամանակ կազմակերպված հայկական գնդի զինվորների նկատմամբ իշխանությունների կողմից ունեցած վերաբերմունքի հարցը: Արժանանալով ֆրանսիական կառավարության և Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության բարձր գնահատականին, կառավարական պարգևների՝ գունդը վերադարձել է Խորհրդային Հայաստան, որտեղ, 600 մարտիկների անհիմն մեղադրելով դավաճանության մեջ, ձերբակալել են և դատապարտել 25 տարվա ազատազրկման: Ցավալին այն է, որ այդ ելույթի համար Խաչեյանին տարել են Հայաստանի կոմկուսի կենտկոմ՝ քարտուղար Զավեն Գրիգորյանի մոտ, այնուհետև՝ Կենտկոմի բյուրոյում քննարկել նրա հարցը՝ հայտարարելով խիստ նկատողություն[80]:

Նման փաստերը վկայում են, որ որքան էլ խրուշչովյան «ձնհալը» նպաստել էր վեր հանելու երկրում եղած թերությունները, սխալները՝ աշխատելով ուղղել դրանք, միևնույն է, տարբեր կարգի ղեկա-

[80] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 72, թ. 60-61:

վար մարմիններում, առավել ևս կուսակցական օղակներում այդքան էլ բարյացակամությամբ չէին ընդունում իրենց հասցեին արված քննադատական խոսքը: Անկախ այդ ամենից՝ ժամանակն ամենազոր էր և իր կնիքն էր դնում մարդկանց նոր մտածողության վրա. որքան էլ վերադաս մարմինները դժկամությամբ էին ընդունում իրենց հասցեին արված քննադատությունը, միևնույն է, շատ բան սկսել էր փոխվել: Այդ հանգամանքը, ինչպես տեսանք, դրսևորվում էր նաև կուսակցության վերադաս մարմիններին հղած հաշվետվություններում, զեկուցագրերում, որոնք ուղարկվում էին հանրապետության տարբեր կոլեկտիվներից: Այդպես էին անցնում Հայաստանի կոմկուսի տարբեր օղակներում, կուսակցական շրջկոմներում և այլ կազմակերպություններում անհատի պաշտամունքի հարցի քննարկմանը նվիրված ժողովները, որտեղ ելույթ ունեցողները, դատապարտելով այդ արատավոր երևույթը, ներկայացնում էին նաև իրենց մտահոգությունները: Օրինակ՝ 1956 թ. մայիսին Երևան քաղաքի Կիրովյան շրջանի (Կենտրոն համայնք) կուսակցական ակտիվի ժողովում քննարկվել են կուսակցության 20-րդ համագումարի արդյունքները: Ելույթ է ունեցել Երևանի պետական համալսարանի դասախոս Հենրի Գաբրիելյանը: Բարձր գնահատելով համագումարի որոշումները՝ նա նշել է, որ կուսակցական աշխատանքի լենինյան նորմերը խախտվել էին կյանքի բոլոր բնագավառներում: Նա հայտնել է այն կարծիքը, որ անհատը չէ, որ իրեն պաշտամունքի առարկա է դարձնում, այլ անհատին պաշտամունքի առարկա էն դարձնում մարդիկ, որոնք մեղսակից են դրանում: Նա խոսել է նաև խոսքի և գործի միասնության մասին՝ ասելով, որ ինքը չգիտի մի մարդ, որի մոտ խոսքը և գործը այնպիսի հակասության մեջ լինեին, ինչպես Ստալինի մոտ: Նրա համոզմամբ 1937-1939 թթ. ջարդվեցին Խորհրդային Հայաստանի շատ կադրեր, որոնց շուտափույթ փոխարինեցին նորերը, որոնցից շատերը կոնյակի շշերով դարձան դոկտորներ:

Նմանօրինակ ելույթ է ունեցել նաև մեկ այլ համալսարանական՝ Ռաֆիկ Մովսիսյանը, որը, խոսելով Ստալինի կողմից կուսակցական կադրերի ջարդի, լենինյան տեսության աղավաղման, միջազգային

կոմունիստական շարժման նկատմամբ նրա հասցրած վնասների, հազարավոր մարդկանց աքսորի և այլնի մասին, ճիշտ է նկատել, որ դրանց վերացումը երկարատև ու համառ պայքար պահանջող աշխատանք է[81]: Նա քննադատական խոսք է ասել նաև Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Շմավոն Առուշանյանի մասին, որին մեղադրել է 1938 թ.՝ կուսակցության վերստուգիչ հանձնաժողովում (պարտկանտրոլ) աշխատելու ժամանակ, հազարավոր կոմունիստների կուսակցությունից վտարելու համար: Ելույթ ունենալով Հայաստանի կոմկուսի 18-րդ համագումարում (1956 թ. հունվար)՝ Շ. Առուշանյանն իր ելույթի 15 րոպեն նվիրել է Սուրեն Թովմասյանի գովաբանությանը: Առաջին անգամ չէր, որ նա նման կարգի ելույթ էր ունենում: Ռաֆիկ Մովսիսյանը ճիշտ է նկատել, որ նման վարքագիծը չի նպաստում կուսակցության լենինյան նորմերի վերականգնմանը, և դրանք վերացնելու համար ամեն ինչ պետք է սկսել ներքևից[82]:

Հետաքրքիր փաստերով հարուստ էր նաև հին բոլշևիկ Արմենակ Անանյանի ելույթը: Վերջինս նշում էր, որ եթե հնարավորություն ունենային ստուգելու, թե Հայաստանի խորհրդայնացումից մինչև 1937 թվականը Հայաստանի կոմկուսի կենտկոմի պլենումի անդամներից քանիսն են մնացել, ապա պետք է ասել, որ ոչ մեկը չկա, բոլորը գնդակահարվել են: Նա նաև ավելացնում էր, որ այն ժամանակվա նախարարներից ոչ մեկը չկար, Հայստանի կոմկուսի կենտկոմի քարտուղարներից, բացի Աշոտ Հովհաննիսյանից, որը պատահականությամբ էր կենդանի մնացել, նույնպես ոչ մեկը չկար: Նույնը կատարվել էր կենտգործկոմում, ժողկոմխորհում, որոնց նախագահներից ևս ոչ ոք ողջ չէր: Եվ այդ բոլորը իրագործվել էր մեկ խաբեբա մարդու ձեռքով: Եվ որպես այդ ամենի ապացույց՝ նա մի շարք փաստեր էր բերում անհատի պաշտամունքի տարիներին Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած դեպքերի մասին, որոնք առնչվում էին հանրապետության ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի

[81] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 57, թ. 97, 100:
[82] Տե՛ս նույն տեղում, թ. 101-102:

անվանը: Վերջինիս պատուհանից գցեցին՝ փոխանակ լուրջ ստուգում կատարելու, թե որոնք էին պատճառները, և իրականում ո՞րն էր ճշմարտությունը: Անանյանն իր ելույթում նշում էր, որ այդ կապակցությամբ Ստալինից ստացվել էր մի նամակ, որտեղ ասվում էր, որ ինքը անձամբ գիտեր վախկոտ և հաշվենկատ Սահակ Տեր-Գաբրելյանին, գիտեր նրա բնույթը, կերպարը և չէր հավատում, որ նա իրեն պատուհանից գցել է, այլ, որ իրեն գցել են, որպեսզի նա չմատնի հայ ազգայնականներին: Որպես հարցի լուծում՝ Ստալինն առաջարկում էր ձերբակալել Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ա. Գուլոյանին, իսկ ՀԿԿ կենտկոմից պատասխանատվությունը չհանել[83]: Տեղին է նշել, որ Ստալինն իր կերպարի մեջ էր և եթե անգամ ցանկանար այլ կերպ վարվել, միևնույն է, չէր կարող, ինչն էլ ոչ միայն Ստալինի, այլ նաև խորհրդային համակարգի ողբերգություններից մեկն էր: Բայց այս հարցում, այնուամենայնիվ, հուսալին այն էր, որ մարդիկ, ձերբազատվելով նախկին կապանքներից, կարող էին շատ հարցերի մասին ազատորեն խոսել և արտահայտվել, որի վկայությունը, ինչպես տեսանք, անհատի պաշտամունքի մասին տարբեր կարգի քննարկումներն ու առաջարկներն էին: Եվ դա է պատճառը, որ հանրապետության տարբեր շրջաններում արտադրական, աշխատավորական կոլեկտիվներում անցկացվող ժողովները, հանրահավաքները անցնում էին բարձր մակարդակով և ստանձնում նորանոր պարտավորություններ՝ կենսագործելու համագումարի որոշումները:

Քննարկումների մյուս գլխավոր նպատակը համագումարի փակ նիստում Ն. Ս. Խրուշչովի զեկուցման՝ անհատի պաշտամունքի դատապարտման հարցն էր, որի ժամանակ բարձրացվում էին բազմաթիվ հարցեր, ներկայացվում էին անհատի պաշտամունքի վերաբերյալ տարբեր տեսակետներ, մեջբերվում Խորհրդային Հայաստանում նման երևույթի դրսևորման օրինակներ:

Ընդհանարացնելով կուսակցության 20-րդ համագումարի՝ խրուշչովյան «ձնհալի» մասին ներկայացրած փաստերը և ուսում-

[83] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 57, թ. 103-105:

նասիրությունները՝ պետք է ասել, որ անհատի պաշտամունքի դատապարտումը մեծ նշանակություն ունեցող երևույթ էր խորհրդային պատմության մեջ: Մարդիկ ազատվեցին կապանքներից, քարացած սկզբունքներից, որոնք արգելակում և կաշկանդում էին նրանց մտածողությունը: Անհատի պաշտամունքի դատապարտումը հնարավորություն տվեց մարդկանց ազատորեն մտածելու, բարձրաձայնելու այն հարցերի մասին, որոնք երկար տասնամյակներ փակի տակ էին: Այդ հանգամանքը փոխեց երկրի, Խորհրդային Միության քաղաքական մթնոլորտը, և սկսվեց, ինչպես տեսանք, պատմությանը հայտնի խրուշչովյան «ձնհալը», որն էլ իր կնիքը թողեց երկրի հոգևոր, մշակութային, կրթական, գիտական, տնտեսական, քաղաքական կյանքի բոլոր ոլորտների վրա: Սակայն խրուշչովյան «ձնհալը» չբացահայտեց երկրի կառավարման համակարգի բոլոր արատները, չշոշափեց սոցիալիստական համակարգի թերությունները: Այդ հարցում Ն. Ս. Խրուշչովը բավական զգույշ էր և համագումարում ունեցած իր ելույթում, ինչպես տեսանք, ամեն ինչ վերագրեց անհատին՝ Ստալինին, որքան էլ որ այդ ամենը կատարվել էր նաև իրենց, այդ թվում՝ Խրուշչովի, քաղբյուրոյի մյուս անդամների վկայությամբ և մասնակցությամբ: Այդ հանգամանքն էլ երևի խրուշչովյան «ձնհալի» հակասություններից մեկն էր, որի համար էլ նա, իրոք, չգնաց մինչև վերջ, կասկածի տակ չդրեց սոցիալիզմի սկզբունքները և չդիպավ նրա հիմքերին: Եվ հավանաբար այլ կերպ էլ չէր կարող լինել. չէ՞ որ հակառակ դեպքում նրանք բոլորը և առաջին հերթին քաղբյուրոյի անդամները, այդ թվում՝ Խրուշչովը, պետք է պատասխան տային իրենց, այսպես կոչված, «անգործության» համար: Պատահական չէ, որ կուսակցության 20-րդ համագումարի որոշումների քննարկման ժամանակ աշխատավորական կոլեկտիվների կողմից մարդիկ պատասխան էին պահանջում: Բայց անկախ այդ ամենից՝ Ն. Ս. Խրուշչովի կատարածի արժեքը, որքան էլ որ նա նաև սխալներ է գործել, բավական մեծ է: Միայն այն փաստը, որ նրա կառավարման տարիներին

մոտ 20 միլիոն մարդ արդարացվեց, նրանցից շատերը՝ հետմահու[84], խոսում է այն մասին, որ Խրուշչովը շատ բան փոխեց երկրում, նոր շունչ հաղորդեց մարդկանց մտածողությանը, բացեց շատ փականներ, որոնք նախկինում արգելված էին, փակի տակ էին և այլն: Այդ իմաստով անկախ այն հակասական կերպարին, որ Խրուշչովն ուներ՝ ոչ հավասարակշռված, իր արարքներում հաճախ անկանխատեսելի, նրա դերը և կատարած քայլերը, այնուամենայնիվ, երկրում իրականացվող բարեփոխումների, առավել ևս անհատի պաշտամունքի դատապարտման, նախկին կաշկանդվածության հաղթահարման գործում, անշուշտ, գնահատելի են, որոնք էլ իրենց հերթին նպաստեցին երկրում քաղաքական մթնոլորտի փոփոխմանն ու ազատ մտքի զարգացմանը: Եվ վերջապես խրուշչովյան «ձնհալը» և անհատի պաշտամունքի դատապարտումն ունեցան նաև այն նշանակությունը, որ ինչպես Խորհրդային Միությունում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում սկսվեց ձևավորվել մի նոր երևույթ, որը հայտնի է որպես այլախոհական շարժում, երբ երկրում կազմակերպվում էին ընդհատակյա կազմակերպություններ, կուսակցություններ, շարժումներ, իսկ գրաքննությունից խուսափելու համար գաղտնի հրատարակում էին տարբեր գրքեր, գրում ձեռագիր աշխատանքներ՝ սամիզդատ (самиздат), և տարածում իրենց համախոհների շրջանում: Դա արդեն մեծ երևույթ էր:

Խորհրդային Հայաստանում այդ երևույթն ուներ իր առանձնահատկությունը: Հանրապետությունում սկսեցին ձևավորվել ընդհատակյա շարժումներ, կուսակցություններ, որոնց խնդիրը մարդկանց մեջ ազգային ոգու, գիտակցության արթնացումն էր, ազգային գաղափարախոսության, արժեքների քարոզումը, և, ի վերջո, ազգային անկախության վերականգնումը, հայրենիքի կորսված տարածքների վերադարձն ու Լեռնային Ղարաբաղի և բազմաթիվ այլ խնդիրների լուծումը:

---

[84] Տե՛ս **Медведев Р.,** Хрущев: политическая биография, էջ 203, մեջբերումը՝ ըստ ամերիկացի պատմաբան Уильям Таубман-ի «Хрущев» (Москва, 2008) գրքի, էջ 697:

1.2. Այլախոհական շարժումը Խորհրդային Հայաստանում. Ոչ ֆորմալ կազմակերպությունների գործունեությունը 1960-1980-ական թվականներին

Որքան էլ խորհրդային իշխանությունները բոլոր մեթոդներով արգելում և պատժում էին երկրի պաշտոնական գաղափարախոսությանը հակադիր որևէ շարժում, միևնույն է, մարդիկ միշտ էլ ձգտում էին ազատության, ասել ճշմարտությունը՝ անկախ նրանից, որ նրանց նկատմամբ կիրառվում էին պատժի տարբեր մեթոդներ:

Այլախոհական շարժումը իշխանությունների դեմ պայքարի ձևերից մեկն է: Եվ որքան էլ որ խրուշչովյան «ձնհալը» քիչ թե շատ հնարավորություն էր տվել մարդկանց բարձրաձայնելու նախկինում արգելված թեմաների մասին, այնուամենայնիվ երկրում հաստատված գրաքննությունը շարունակում էր խոչընդոտ ստեղծել ամեն մի ազատ մտքի նկատմամբ: Նույնը առավելապես վերաբերում էր տարբեր կարգի շարժումների, այլընտրանքային կուսակցությունների, կազմակերպությունների ստեղծման փորձերին, հանրահավաքների, ցույցերի, շքերթների կազմակերպմանը և այլն: Նաև նշենք, որ այլախոհության ամենատարածված և գրաքննությունը շրջանցելու և քիչ թե շատ պակաս վտանգավոր մեթոդներից մեկը գաղտնի «самиздат» հրատարակություններն էին: «ԽՍՀՄ-ում 1960-1980-ական թթ. գլխավոր ընդդիմադիր ուժը «գաղափարական այլախոհությունն էր»[85],– գրում է Ն. Վ. Ելիսեևան իր «История перестройки в СССР 1985-1991 гг.» գրքում: Դա նշանակում էր, որ առանձին ստեղծագործողներ, մտավորականներ ստիպված էին լքել իրենց երկիրը, դիմել արտագաղթի, քանի որ զրկված էին ազատ խոսքից, հայրենիքի սահմաններից դուրս պիտի հրատարակեին իրենց ստեղծագործությունները: Այդ երևույթը դիտվում էր որպես քաղաքական արտագաղթ, որի արդյունքում արտասահմանյան տարբեր երկրներում ստեղծում էին հրատարակչություններ, թերթեր, ամսագրեր, որոնցում

[85] **Елисеева Н. В.,** История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016, с. 138.

հրապարակում էին խորհրդային իրականության մասին տարբեր նյութեր, աշխատություններ: Դա ևս մի միջոց էր աշխարհին իրական դիրքերից ներկայացնելու խորհրդային հասարակությունը: Այդ երևույթը շատ ավելի տարածում գտավ բրեժնևյան կառավարման տարիներին (1964-1982 թթ.), երբ ավելի ակտիվորեն սկսեցին հետապնդել այլախոհներին՝ կազմակերպելով տարբեր կարգի արգելքներ, ձերբակալություններ, աքսոր, երկրից վտարում և այլն: Հենց այդ նույն տարիներին էլ՝ 1960-1970-ական թթ. սկզբներին, Խորհրդային Միությունում ձևավորվեց, այսպես կոչված, հոգևոր ընդդիմությունը, որը նշանակում էր, որ ԽՍՀՄ-ում ընդգծված կերպով միմյանցից տարբերակվում, տարանջատվում էին պաշտոնական մշակույթը, գաղափարախոսությունը և ընդհատակյա մշակույթը: Նման պայմաններում երկրի մտավորականության մի մասը ստիպված էր թողնել Խորհրդային Միությունը և մեկնել արտասահման: Նրանց շարքում էին այնպիսի ստեղծագործողներ, գրականության, մշակույթի ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Ա. Տարկովսկին, Ա. Գալիչը, Յ. Լյուբիմովը, Է. Նեիզվեստնին, Մ. Ռոստրոպովիչը, Վ. Նեկրասովը և ուրիշներ, որոնք էլ արտասահմանում ձևավորեցին հոգևոր ընդդիմություն: Երբ 1968 թ. խորհրդային զորքերը մտան Չեխոսլովակիա և սկսեցին բռնություններ գործադրել խաղաղ բնակչության նկատմամբ, Խորհրդային Միությունում բրեժնևյան կառավարման դեմ ուղղված այլախոհական շարժումն ավելի մեծացավ, որին էլ հետևեցին ձերբակալություններ, աքսոր և այլն:

Բավական է ասել, որ քաղբանտարկյալների թիվն այդ շրջանում (1960-1970-ական թթ.) կազմում էր ավելի քանի 600 հոգի, որոնց շարքում այնպիսի անհատներ էին, ինչպիսիք՝ Ա. Սախարովը, Վ. Բուկովսկին, Ա. Մարչենկոն, Վ. Կրասինը, Ժ. Մեդվեդևը, Լ. Ուբոժկոն և ուրիշներ[86]:

Ի դեպ, նշենք, որ այդ տարիների պաշտոնական մամուլը այլախոհներին անվանում էր «մերժվածներ, հերձվածներ, զրպարտիչներ,

[86] Տե՛ս Новейшая история России 1914-2008. Под ред. М. В. Ходякова, 3-е издание, Москва, 2008, с. 419:

պորտաբույծներ, անբաններ, ձրիակերներ, մատնիչներ, դավաճաններ» և այլն, որոնք իրականացնում էին հակախորհրդային քարոզչություն[87]:

Այն հարցին, թե ինչպիսին էր խորհրդային շարքային մարդկանց առօրյա մտածողությունը, պետք է ասել, որ նրանք ընդհանուր առմամբ, գրեթե մեծ մասամբ ընդունում էին երկրի իրադարձությունների պաշտոնական քարոզչությունը կամ էլ երբեմն այդ ամենի նկատմամբ դրսևորում էին անտարբերություն: Չնայած խորհրդային իշխանությունները նրանց նկատմամբ կիրառում էին տարբեր կարգի պատժամիջոցներ, մարդիկ տեսնում էին երկրում առկա արատները և պայքարի տարբեր ձևերով փորձում ուղղել դրանք: Նման երևույթներ տեղի էին ունենում նաև Խորհրդային Հայաստանում, երբ ամեն քայլափոխի, անգամ խրուշչովյան «ձնհալի» պայմաններում իշխանությունների կողմից դժկամությամբ էր ընդունվում իրենց հասցեին ուղղված ամեն մի ընդդիմադիր խոսք, որին էլ հետևում էին հետապնդումներ, ձերբակալություններ և այլն: Մյուս խնդիրն այն էր, որ Խորհրդային Միության կառավարման համակարգն այնպիսին էր, որ Միության մեջ մտնող ժողովուրդները, միութենական հանրապետությունները ինքնուրույն չէին կարող տնօրինել իրենց ճակատագիրը, առանց կենտրոնական իշխանությունների թույլտվության լուծել հանրապետություններում ծառացած բազմաթիվ խնդիրներ, որոնք տարիների ընթացքում գնալով կուտակվում էին և առաջացնում ներքին դժգոհություններ, միութենական իշխանություններին հակադրվելու, նույնիսկ նրանից անջատվելու ձգտումներ, որոնց մասին հնարավոր չէր այդ պայմաններում բարձրաձայնել: Կառավարման նման համակարգը գնահատվում և որակվում էր որպես ամբողջատիրական հասարակարգ, որի ժամանակ հաճախ անտեսվում էին նաև մարդ-անհատի իրավունքները:

Չնայած 1950-ական թթ. կեսերին, պայմանավորված խրուշչովյան «ձնհալով», անհատի պաշտամունքի դատապարտմամբ,

---

[87] Տե՛ս Политические партии России в контексте её истории, Ростов-на-Дону, 1998, с. 350, 352:

երկրի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցան որոշ փոփոխություններ, աշխուժացում և այլն, այնուամենայնիվ դրանք կիսատ-պռատ, հաճախ ոչ հետևողական միջոցառումներ էին և ունեցան կարճ կյանք: Այդ ամենն ավարտվեց 1960-ական թթ. կեսերին, երբ իշխանության եկած նոր ուժերը՝ Լ. Ի. Բրեժնևը և նրա շրջապատը, սկսեցին հետապնդել այն մարդկանց և անհատներին, որոնք հաճախ կարող էին հակադրվել կուսակցության պաշտոնական գաղափարախոսությանը՝ հայտնելով իրենց կարծիքը: Նման մարդկանց սկսեցին հետապնդել՝ նրանց որակելով որպես այլախոհներ: Կառավարման այդ փուլը՝ 1960-ական թթ. կեսերից մինչև 1980-ական թթ. կեսերը, հայտնի է նաև որպես լճացման, նորից ամբողջատիրական համակարգի վերականգնման ժամանակաշրջան: Կառավարման նման համակարգը ապագա չուներ և կաշկանդում էր երկրի զարգացմանը: Եվ դա է պատճառը, որ 1980-ական թթ. կեսերին Խորհրդային Միությունում սկսեց իրականացվել պատմությանը հայտնի գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականությունը, որով երկիրը մուտք գործեց պատմական մի նոր ժամանակաշրջան, որն էլ դարձավ շրջադարձային ոչ միայն խորհրդային ժողովուրդների համար, այլև շրջադարձային ողջ մարդկության և համաշխարհային հանրության համար:

Ի տարբերություն Խորհրդային Միության նախորդ ղեկավարների (Ն. Ս. Խրուշչով, Լ. Ի. Բրեժնև, Յ. Վ. Անդրոպով, Կ. Ու. Չերնենկո)՝ Մ. Ս. Գորբաչովը համեմատաբար երիտասարդ սերնդի ներկայացուցիչներից էր՝ 54 տարեկան, և քաջ գիտակցում էր, որ այդպես շարունակել կառավարել երկիրը այլևս հնարավոր չէր: Նա փորձեց շտկել երկրում եղած թերությունները, արատները, փոխել հասարակական-քաղաքական կյանքը և, ինչպես ինքն էր ասում, նոր շունչ, նոր մտածողություն հաղորդել սոցիալիզմին և ողջ մարդկությանը: Սակայն վերակառուցման առաջին քայլերը ցույց տվեցին, որ քանի դեռ վերակառուցումը համարվում էր երկրի կառավարող վերնախավի գործը, քանի դեռ միլիոնավոր մարդիկ ակտիվորեն չէին ներգրավվել երկրի վերակառուցման գործին, դրանք ցանկալի արդյունքներ

չէին կարող տալ: Անհրաժեշտ էր առաջ գնալ և իրականացնել այնպիսի քայլեր, որոնք կշոշափեին երկրի ոչ միայն տնտեսական, այլ նաև հասարակական-քաղաքական ողջ կյանքը, երկրի կառավարման ողջ համակարգն իր բոլոր կողմերով: Եվ այդ իմաստով երկրում սկսված, արդեն օր-օրի ավելի լայն շրջանակներ ընդգրկող իրադարձությունների առանձնահատկություններից մեկն այն էր, որ կարճ ժամանակում ժողովրդական զանգվածներն իրենց քայլերով, նախաձեռնություններով սկսեցին առաջ անցնել այն գործընթացներից, որոնք իրականացվում և ուղղորդվում էին կենտրոնի կողմից: Դա նշանակում էր, որ «Վերակառուցման» հեղինակները՝ Մ. Ս. Գորբաչովը և իր համախոհները, իրենց մտածողությամբ և գործողություններով սկսեցին հետ մնալ իրենց իսկ հռչակած կարգախոսներով ոգևորված ժողովրդական զանգվածների նախաձեռնություններից, որոնք դուրս էին եկել կենտրոնի վերահսկողությունից և արդեն հակադրվում էին կենտրոնին՝ կոտրելով հին կարծրատիպերը, պահանջելով իրականացնել ավելի վճռորոշ քայլեր, ավելի շոշափելի գործողություններ: Եվ ինչպես պատկերավոր կասեր Մ. Ս. Գորբաչովը, «процесс пошел», ասել է թե՝ գործընթացը սկսված էր, ինչն էլ նշանակում էր, որ կանգնեցնել միլիոնավոր զանգվածներին հնարավոր չէր: Միաժամանակ պարզ էր, որ գորբաչովյան «վերակառուցումը», նրա առաջ քաշած կարգախոսները զգալիորեն նպաստեցին երկրում, միութենական բոլոր հանրապետություններում Միությունից անջատվելու անկախացման գործընթացների արագացմանը: Ստեղծված պայմաններում Խորհրդային Միության ղեկավարությունը առաջ քաշեց մի շարք կարգախոսներ, որոնց շարքում հատկապես կարևորվում էին արագացման կուրսը, կառավարման տնտեսական նոր մեթոդների կիրառումը, աշխատավորների շրջանում, մասնավորապես սոցիալական ոլորտում բարեփոխումների անցկացումը, հրապարակայնությունը, ժողովրդավարությունը, անցյալի, հատկապես ազգային հարցում թույլ տրված սխալներից հրաժարվելը, երկրի զարգացման համար նոր կուրս մշակելը և այլն: Հասկանալի է, որ այդ ամենը մեծապես նպաստեց միութենական հանրապետություններում հասարա-

կական-քաղաքական կյանքի ակտիվացմանը: Այդ հարցում ճշմարտությունը նաև այն է, որ երկրում քիչ թե շատ իրականացվող դեմոկրատացման պայմաններում թե՛ կենտրոնում և թե՛ միութենական հանրապետություններում ավելի վաղ սկսել էին գործել տարբեր կարգի ընդհատակյա կազմակերպություններ, այսպես կոչված, ոչ ֆորմալ կազմակերպություններ, շարժումներ: Նման կարգի կազմակերպություններ առաջացել էին նաև Խորհրդային Հայաստանում դեռևս 1960-ական թթ. կեսերին, երբ առաջին անգամ պաշտոնապես նշվում էր 1915 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյակը:

1965 թ. ապրիլի 24-ին Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, որտեղ հանրապետության ղեկավարությունը՝ ՀԿԿ կենտկոմը, ՀԽՍՀ կառավարությունը և պաշտոնատար այլ անձինք բարձրաձայնեցին 1915 թ. Օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության մասին, որին զոհ գնաց 1.5 մլն հայ: Այդ նիստի նույն օրը Երևանում տեղի ունեցավ ժողովրդական զանգվածների նախաձեռնած 100 հազարանոց սգո երթ, որի որոշ մասնակիցներ «Վերադարձրե՛ք մեր հողերը», «Արդարացի լուծե՛ք Հայկական հարցը» պաստառներով ներխուժեցին օպերայի դահլիճ՝ պահանջելով հանդիսավոր նիստի մասնակիցներից ընդունել և միանալ իրենց: Նրանք մեծ մասամբ տարբեր բուհերի (ԵՊՀ, Երևանի պոլիտեխնիկական, Բժշկական, Անասնաբուժական-անասնաբուծական, Գյուղատնտեսական, Մանկավարժական ինստիտուտներ) ուսանողներն էին, որոնք կազմակերպված ձևով շարժվեցին դեպի Լենինի հրապարակ՝ կոչ անելով բոլորին միանալ իրենց[88]: Ի պատասխան այդ կոչին՝ հանրապետության համապատասխան մարմինները ցրեցին ցույցը, իսկ որոշ մասնակիցների նկատմամբ կիրառեցին ձերբակալություններ, հետապնդումներ: Սակայն իշխանությունների կողմից իրականացվող նման քայլերը ի վիճակի չէին կանխել այն նոր մթնոլորտը, նոր մտածողության ձևավո-

[88] Տե՛ս **Алексеева Л.,** История инакомыслия в СССР, Москва, 1983 с. 5-6:

րումը, որն օր օրի ավելի էր հասունանում՝ իր կողմը գրավելով նորանոր մարդկանց: Ի դեպ, տողերիս հեղինակը 1965 թ. ապրիլին մասնակցել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Յ. Զարուբյանի հետ հանրապետության կոմերիտմիության շրջկոմների առաջին քարտուղարների ընդունելությանը, որը կազմակերպել էր հանրապետության կոմերիտմիության Կենտկոմի առաջին քարտուղար Ստեփան Պողոսյանը, որտեղ նա մեզ բոլորիս ներկայացրեց ցեղասպանությունը հաստատող բազմաթիվ փաստաթղթեր, նկարներ, որոնք նա ներկայացրել էր ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևին, Կենտկոմի քարտուղար Մ. Ա. Սուսլովին՝ հիմնավորելու Եղեռնի հուշարձանի կառուցման անհրաժեշտությունը, որն էլ, անկախ տարբեր կարգի խոչընդոտներից, դժվարություններից, այնուամենայնիվ թույլատրվել էր: Նաև ասենք, որ որոշ ժամանակ էր անհրաժեշտ, որ մարդկանց միջից հանվեին հին կարծրատիպերը, քարացած մտածելակերպը և այլն: Բայց մի բան փաստ էր. հնարավոր չէր կանգնեցնել երկրում սկսված նոր գործընթացները: Դրա վկայությունը հետագա տասնմյակներն էին, Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթողի կառուցումը, աշխարհի ողջ հայության կողմից ամեն տարի ապրիլի 24-ին պաշտոնապես իրականացվող սգո հանդիսությունների կազմակերպումը: Դա, փաստորեն, մարդկանց ինքնազարթոնքի շրջան էր, ինչն էլ պետք է նպաստեր հանրապետությունում ընդհատակյա պայմաններում կուսակցությունների, խմբակների ձևավորմանը:

Առաջին ընդհատակյա կազմակերպությունը ձևավորվել է Երևանում 1963 թ. և կոչվում էր «Հայ երիտասարդական միություն», որը գոյություն ունեցավ մինչև 1966 թվականը: 1966 թ. ձևավորվեց «Ազգային միացյալ կուսակցությունը» (ԱՄԿ), որի հիմնադիրը նկարիչ Հայկազ Խաչատրյանն էր: Իսկ կուսակցության ձևավորումը առնչվում է հետևյալ փաստին. 1966 թ. ապրիլի 24-ին Երևանի տարբեր վայրերում մի խումբ երիտասարդներ Եղեռնի օրվա առիթով կազմակերպել են ցույցեր, որը համապատասխան մարմինների կողմից դիտվել է որպես հասարակական կարգի խախտում, որի պատ-

ճառով էլ նրանցից ոմանց ձերբակալվել են: Ձերբակալվածները Երևանի թիվ N1 բանտում հիմք են դրել «Ազգային միացյալ կուսակցությանը», որի ղեկավարությունը ստանձնել է Հայկազ Խաչատրյանը: Վերջինիս խմբագրությամբ էլ 1967 թ. կազմվեցին ԱՄԿ ծրագիրը, կանոնադրությունը, իսկ երդման հեղինակը Ստեփան Զատիկյանն էր: Կարճ ժամանակամիջոցում ԱՄԿ-ի հետ միավորվեցին հայրենասիրական այլ խմբեր: 1967 թ. կուսակցությունը ի լուր համայն հայության «Փարոս» թերթի միջոցով ազդարարեց մայր հայրենիքում ազգային ոգու վերածննդի մասին[89]:

Հետաքրքիր է նաև նշել, որ Հայկազ Խաչատրյանը Հայրենական մեծ պատերազմի մասնակից էր, պարգևատրվել էր «Փառքի» երրորդ աստիճանի շքանշանով, Ստեփան Զատիկյանը՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի, իսկ Շահեն Հարությունյանը Երևանի մանկավարժական տեխնիկումի ուսանողներ էին: Նրանք «Փարոս» թերթում տպագրում էին «Ապրիլի 24», «Հայ ժողովրդին» վերնագրերով հոդվածներ: 1967 թ. ապրիլի 24-ին նրանք պատրաստեցին «Փարոս» անունով 200 օրինակ թռուցիկ և տարածեցին Երևանում:

«Ազգային միացյալ կուսակցության» ակտիվ անդամներից էին նաև Աշոտ Նավասարդյանը, Ազատ Արշակյանը, Ռազմիկ Զոհրաբյանը, Անդրանիկ Մարգարյանը և ուրիշներ, որոնք իրենց գործունեության համար ստացել էին 7 տարվա կալանք և 3 տարվա աքսոր[90]: Ինչ վերաբերում է կուսակցության ծրագրային դրույթներին, ապա պետք է ասել, որ «Ազգային միացյալ կուսակցությունը» բնութագրվում էր որպես քաղաքական, դեմոկրատական, հասարակական կազմակերպություն, որի անդամը պետք է լիներ ամբողջ հայության գիտակից տարրը: Կարևորում էր նաև այն գաղափարը, որ ԱՄԿ-ին խորթ էին միլիտարիզմը, գերիշխանության ձգտումը (դիկտատուրան), ռասայական խտրականությունը, միջազգային օրենք-

---

[89] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 8:

[90] Տե՛ս **Հայրիկյան Պ.,** Անկախության ճանապարհին երեք վավերագրեր, Երևան, 1997, էջ 13-14:

ների խախտումը և այլն: Կուսակցության գլխավոր խնդիրներից էին ազգը օտարի լծից ազատագրելն ու Հայաստանը ազատ, անկախ երկիր դարձնելը [91]: ԱՄԿ-ն երկար տարիներ՝ մինչև 1987 թվականը, գործել է ընդհատակում: Իսկ արդեն 1987 թ., վերանվանվելով «Ազգային ինքնորոշում միավորում» (ԱԻՄ), Պարույր Հայրիկյանի, Մովսես Գորգիսյանի, Ռազմիկ Մարկոսյանի, Սուսաննա Ավագյանի, Շահեն Հարությունյանի, Մեխակ Գաբրիելյանի ղեկավարությամբ սկսեց որդեգրել այնպիսի արժեքների իրականացման համար գործունեություն, ինչպիսիք են անկախությունը և պետականության հիմնադրումը, ազգերի ինքնորոշումը, իշխանությունների տարանջատումը, ազգային բանակի ստեղծումը և այլն[92]: Կուսակցության գլխավոր ծրագրային նպատակը 1915-1923 թթ. ցեղասպանության հետևանքների վերացման և Հայկական հարցի համապարփակ լուծումն էր:

«Ազգային միացյալ կուսակցությունն» իր ծրագրային փաստաթղթերում նաև նշում էր, որ ԱՄԿ-ն (ԱԻՄ) կոմունիստական ամբողջատիրության տարիներին բացահայտորեն պայքարի ասպարեզ իջավ որպես միակ կենսունակ ժողովրդավարական կուսակցություն: Հարյուրամյակներ բռնազավթված Հայաստանին ամենից առաջ պակասում էր պետականությունը, որպեսզի հայ ժողովրդին վերադառնար Աստծո կողմից շնորհված երկրային դրախտում արժանավայել ապրելու իրավունքը: Հայ ժողովրդի այս դարավոր իղձը առաջնային նպատակ համարելով՝ ԱՄԿ-ն (ԱԻՄ) դարձավ ազգային պետականության վերականգնման առաջամարտիկը: Այդ նպատակը իրականացնելու համար ԱԻՄ-ը դիմեց բազմաթիվ գործողությունների և քաղաքական նախաձեռնությունների՝ հենվելով հայ ժողովրդի ազգային պատմական կենսափորձի վրա, գերագույն իշխանությունը համարելով ժողովրդինը: ԱԻՄ-ը կարևոր էր համարում նաև հայու-

---

[91] Տե՛ս **Մանուկյան Ա.,** Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ., Երևան, 2005, էջ 44-45:

[92] Տվյալները վերցված են ՀՀ արդարադատության նախարարության կուսակցությունների, լրատվական միջոցների, հասարակական կազմակերպությունների գրանցման վարչությունից, կուսակցությունների մասին ըստ տարիների տված հաշվետվություններից, Գործ 10, Աղյուսակ 1:

թյան համախմբումը մայր հայրենիքում, Հայաստանի տարածքային վերամիավորումը, հայ ժողովրդի հոգևոր վերածնունդը, քաղաքացիների բարձրակենցաղ ընկերային կյանքի ապահովումը և այլն:

Կարևոր էր նաև այն, որ իր նպատակին հասնելու համար ԱՄԿ-ն (ԱԻՄ) համագործակցում էր բոլոր այն անհատների և կազմակերպությունների հետ, որոնք պայքարում էին ազատ, անկախ և արդար Հայաստանի համար:

«Ազգային միացյալ կուսակցությունը» նաև կարևորում էր ազգային պետականության հիմնադրումը, ազգերի ինքնորոշման իրավունքը, անկախության հանրաքվեի անցկացումը, մայիսի 28-ը ազգային տոն հռչակելը, եռագույնը որպես պետական դրոշ ընդունելը և այլն[93]:

Նույն ժամանակահատվածում հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցություն ուներ նաև «Ազգային վերածննդի կուսակցությունը», որը 1965 թվականից գործել է ընդհատակում՝ «Հայ դատ» անվանմամբ: 1968 թ. «Հայ դատը» ընդհատակում հրատարակել է «Հանուն հայրենիքի» ամսագիրը, սակայն ՊԱԿ-ի կողմից (КГБ) հայտնաբերվել է, իսկ ղեկավարները՝ Հովիկ Վասիլյանը, Ասատուր Բաբայանը, Սարգիս Թորոսյանը և ուրիշներ, դատապարտվել են ազատազրկման: Բայց դա չխանգարեց, որ ազատազրկումից վերադառնալուց հետո՝ 1987 թ., անցներ հասարակական-քաղաքական ակտիվ պայքարի՝ որդեգրելով Գարեգին Նժդեհի ցեղակրոնության գաղափարը:

1988 թ. «Հայ դատը» քաղաքական մյուս ուժերի հետ միասին սկսեց ակտիվորեն մասնակցել Արցախի վերամիավորման գործընթացին՝ հատկապես ստանձնելով Բերդաձորի ենթաշրջանի հայաբնակ գյուղերի պաշտպանությունը: 1991 թ. «Հայ դատը» վերանվան-

[93] Տվյալները վերցված են ՀՀ արդարադատության նախարարության կուսակցությունների, լրատվական միջոցների, հասարակական կազմակերպությունների գրանցման վարչությունից, կուսակցությունների մասին ըստ տարիների տված հաշվետվություններից, Գործ 10, Աղյուսակ 1:

վեց «Ազգային վերածննդի կուսակցություն», որի առաջին համագումարում կուսակցության նախագահ ընտրվեց Հովիկ Վասիլյանը[94]:

1989 թ. ապրիլի 6-ին Երևանում տեղի է ունեցել «Հայաստանի սահմանադրական իրավունքի միության» (ՍԻՄ) հիմնադիր համագումարը (նախագահ՝ Հրանտ Խաչատրյան), որն էլ ընդունել է կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը: ՍԻՄ-ի գլխավոր նպատակը ազատ, անկախ և միացյալ, իրավական, ժողովրդավարական հայոց պետության ստեղծումն էր, որի իրականացմանը ակտիվ մասնակցություն պետք է ցուցաբերեին լայն զանգվածները:

ՍԻՄ-ը նպատակներն իրականացնելու համար կարևոր էր համարում նաև պատգամավորության համար արժանի թեկնածուների առաջադրումը հանրապետության օրենսդիր մարմնում՝ Գերագույն խորհրդում, չարդարացրած պատգամավորներին ետ կանչելու սահմանադրական կարգի հաստատումը, հայ ժողովրդի ազգային խնդիրների սահմանադրական լուծման համար պայքարը և այլն[95]: Նաև նշենք, որ այլախոհական շարժումը, ինչպես Խորհրդային միությունում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում վերելք ապրեց 1970-ական թթ. սկզբներին և շարունակվեց մինչև 1980-ական թթ. կեսերը: Խնդիրն այն էր, որ 1970-ական թթ. սկզբներին ԽՍՀՄ-ում մարդու իրավունքների պաշտպանության նպատակով ստեղծվեցին առաջին իրավապաշտպան կազմակերպությունները:

1970 թ. Մոսկվայում հիմնադրվեց ԽՍՀՄ-ում Մարդու իրավունքների կոմիտեն, որի կազմում էին այնպիսի անհատներ, ինչպիսիք՝ Ա. Սախարովը, Ա. Տվերդոխլեբովը, Ի. Շաֆարևիչը, Ա. Սոլժենիցինը, Ա. Գալիչը և ուրիշներ: Այն հիմնվեց որպես հեղինակների ասոցիացիա, որը, ըստ խորհրդային օրենքների, ձևականորեն չէր պահանջում իշխանությունների թույլտվությունն ու արտոնագրումը: Դա ԽՍՀՄ-ում ձևավորված առաջին անկախ հասարակական ասոցիա-

---

[94] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն. Կուսակցություններ, Երևան, 2002, էջ 48:

[95] Տվյալները վերցված են ՀՀ արդարադատության նախարարության կուսակցությունների, լրատվական միջոցների, հասարակական կազմակերպությունների գրանցման վարչությունից, կուսակցությունների մասին ըստ տարիների տված հաշվետվություններից, Գործ 12:

ցիան էր, որը մտնում էր Մարդու իրավունքների միջազգային լիգայի մեջ, որոշակի երաշխիքներ էր տալիս, որ նրա անդամները չեն ազատազրկվի, որքան էլ որ Խորհրդային Միությունը միշտ չէ, որ հետևում էր այդ սկզբունքներին: Բայց այն փաստը, որ Խորհրդային Միությունը ևս տասնյակ այլ պետությունների հետ 1975 թ. ստորագրել էր Եվրոպայում անվտանգության և համագործակցության մասին Հելսինկյան խորհրդակցության ամփոփիչ ակտը՝ «Հռչակագիրը», որի սկզբունքներից մեկը մարդու իրավունքների պաշտպանությունն էր, խոսում էր այն մասին, որ մարդիկ, ըստ իրենց նախասիրությունների, կարող էին ստեղծել տարբեր կարգի կազմակերպություններ, խմբեր և պայքարել մարդու իրավունքների պաշտպանության համար: Նման խումբ 1976 թ. մայիսին Մոսկվայում ստեղծեց հայտնի ֆիզիկոս Յուրի Օրլովը, որը կոչվում էր «ԽՍՀՄ-ում Հելսինկյան համաձայնագրի կատարմանը նպաստող հասարակական խումբ»: Խմբում ընդգրկվեցին Ե. Բոները, Պ. Գրիգորենկոն, Ա. Շչերանսկին և ուրիշներ: Նրանց նախաձեռնությունը ունեցավ այն նշանակությունը, որ «Հելսինկյան խմբեր» ձևավորվեցին Խորհրդային Միության մի շարք հանրապետություններում՝ Ուկրաինայում, Լիտվայում, Վրաստանում, Հայաստանում և այլ հանրապետություններում, որոնք պայքարում էին մարդու իրավունքների պաշտպանության համար:

Հայկական «Հելսինկյան խումբը» ձևավորվել է 1977 թ. ապրիլի 1-ին: Խմբում ընդգրկված էին խմբի ղեկավար Էդուարդ Հարությունյանը, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողներ Սամվել Օսյան և Ռոբերտ Նազարյանը: Հետագայում հայկական «Հելսինկյան խմբի» մեջ մտան ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանը և Համբարձում Խլղաթյանը: Խումբը հրատարակեց իր հռչակագիրը, որը, հավանություն տալով «Հելսինկյան հռչակագրի» սկզբունքներին, նաև ավելացնում էր, որ «Միավորված ազգերի կազմակերպությունը» (ՄԱԿ) պետք է ձգտի, որ Խորհրդային Հայաստանն ընդգրկվի ՄԱԿ-ի կազմում, որպեսզի լուծվի ամբողջ աշխարհով մեկ սփռված հայության համազգային խնդիրը՝ հասնելով նրան,

որ Խորհրդային Աղրբեջանի կազմում գտնվող Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը միացվեն մայր հայրենիքին[96]:

Հատկապես նշանավոր է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը և Էջմիածնի հոգևոր ճեմարանն ավարտած Ռոբերտ Նազարյանի օրինակը, որը 1976-1977 թթ. ընթացքում ծավալել է հակասովետական քարոզչություն: Նա համապատասխան գրականություն էր տրամադրել Երևանի պետական համալսարանի դասախոս Էդմոն Ավետյանին, Ռաֆայել Պապայանին և ուրիշների: Հասկանալի է, որ իշխանությունները վերոհիշյալ անձանց նկատմամբ իրականացրին հետապնդումներ, ձերբակալություններ և այլ կարգի դատավարություններ: Ռաֆայել Պապայանը ազատազրկվել է 4 տարի ժամկետով և 2 տարի աքսորով, իսկ Էդմոն Ավետյանի նկատմամբ դատավարություն չի կայացվել, այլ ընդունվել է որոշում՝ ուղարկելու պարտադիր բուժման[97]:

Ինչպես տեսնում ենք, խորհրդային իշխանությունները, անկախ մարդու իրավունքների վերաբերյալ ընդունած որոշումներից, հռչակագրերից, միևնույն է, շատ աչալուրջ էին և ամեն կերպ բացահայտում էին այն բոլոր ուժերին, կազմակերպություններին, որոնք ծավալում էին այլախոհական դրսևորումներ և պայքարում մարդու իրավունքների պաշտպանության համար: Մինչդեռ, անկախ այդ հետապնդումներից, նրանք, վտանգելով իրենց կյանքը, պայքարում էին իրենց գաղափարները տարածելու համար: Այդ երևույթը ևս բնական էր և կանգնեցնել հնարավոր չէր: Դրա վկայությունը մարդկանց շրջանում բացահայտ, թե գաղտնի պայմաններում այլախոհական շարժման և քարոզչության ծավալումն էր, որը 1980-ական թթ. ավարտին սկսեց կրել ավելի բացահայտ բնույթ: Այն լայնորեն տարածվեց հատկապես 1980-1990-ական թթ. գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականության տարիներին, երբ ինչպես կենտրոնում, այնպես էլ միութենական հանրապետություններում սկսեցին ձևավորվել քաղաքական նոր ուժեր, որոնք էլ սկսեցին գլխավորել

---

[96] Տե՛ս **Алексеева Л.,** История инакомыслия в СССР, 3-е изд., Москва, 2012, с. 81:
[97] Տե՛ս նույն տեղում, էջ 82:

երկրում սկսված քաղաքական գործընթացները: Դրանց շարքում հատկապես առանձնանում են Ղարաբաղյան շարժման հենքի վրա ձևավորված «Միացում», «Կռունկ» կազմակերպությունները, «Ղարաբաղ» կոմիտեն, որն էլ հետո սկսեց գլխավորել և ընդգրկել հանրապետությունում սկսած ազատագրական շարժումը: Այն կոչվեց «Հայոց համազգային շարժում» (ՀՀՇ), որի ուսումնասիրմանն էլ նվիրված են մեր աշխատության հաջորդ գլուխները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԳՈՐԲԱՉՈՎՅԱՆ «ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ» ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

2.1. «Վերակառուցման» քաղաքականության էությունը և նրա զարգացման փուլերը

1985 թ. մարտին հրավիրված Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի պլենումը շրջադարձային երևույթ դարձավ Խորհրդային Միության պատմության մեջ: Արմատապես փոխվեց երկրի կուսակցական, պետական իշխանության ղեկավար կազմը: ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Ա. Ա. Գրոմիկոն, Մինիստրների խորհուրդի նախագահ մինչև 1985 թ. աշունը մնաց Ն. Ա. Տիխոնովը, որին փոխարինեց Ն. Ի. Ռիժկովը: Երկրի նոր ղեկավարությունը 1985 թ. ԽՄԿԿ կենտկոմի ապրիլյան պլենումում, իսկ հետո նաև կուսակցության 27-րդ համագումարում՝ 1986 թ. փետրվարին, երկրի ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում մշակեց նոր կուրս: Այն հայտնի է նաև որպես արագացման կուրս, որը նշանակում էր երկրի տնտեսական ոլորտի աճ, պետք է իրագործվեր՝ մարդկանց, ժողովրդի էներգիան ներդնելով կուսակցության և կառավարության առաջադրած խնդիրները լուծելու համար: Անհրաժեշտ էր նաև վերականգնել և ամրապնդել կուսակցության և պետական իշխանության հեղինակությունը:

Կուսակցությունը նաև կարևորում էր երկրի տնտեսության վերափոխումը գիտատեխնիկական առաջընթացի հիման վրա: Այդ նպատակով կարևորվում էին երկրի կառավարման արդյունավետության և աշխատանքի շահագրգռվածության բարձրացման հարցերը: Դժվար չէ տեսնել, որ երկրի նոր ղեկավարությունը բավական մեծ և

բարդ խնդիրներ էր դնում ինչպես երկրի, այնպես էլ ողջ հասարակության առջև, որը նաև պահանջում էր փոխել կուսակցական աշխատանքի մեթոդները, էլ ավելի խորացնել սոցիալիստական դեմոկրատիայի սկզբունքները և այլն: Կուսակցության արագացման կուրսը նաև ենթադրում էր երկրի կյանքի բոլոր ոլորտներում իրականացնել արմատական վերափոխումներ, որոնք ոչ թե սոսկ մերկապարանոցային կարգախոսներ, թռուցիկներ էին, այլ բավական լուրջ և երկարատև աշխատանք՝ երկիրը վերափոխելու և զարգացնելու համար: Ցավոք, ժամանակը ցույց տվեց, որ արագացման կուրսը, որն ավելի շատ հենվում էր զանգվածների և հատկապես երիտասարդ սերնդի, հայրենասիրական պոռթկման, զարթոնքի և ոգևորության վրա, չէր կարող տևական լինել և ցանկալի արդյունքներ տալ, եթե չընդգրկեր երկրի կյանքի բոլոր ոլորտները և չգնար ավելի արմատական փոփոխությունների: Անհրաժեշտ էր փոխել շեշտադրումները և ընդունել հասարակության զարգացման հեռանկար խոստացող տարբերակ, որն էլ հայտնի է որպես գորբաչովյան ‹‹վերակառուցում›› անվանմամբ: Եվ եթե արագացումը համարվում էր երկրի կուսակցության նպատակը, ապա վերակառուցումը պետք է դառնար միջոց՝ այդ նպատակն իրականացնելու համար:

1987-1988 թթ. վերակառուցումը գլխավորապես դարձավ երկրի համար արմատական տնտեսական ռեֆորմի իրականացման կարևոր լծակ, որին ավելացվեցին նաև քաղաքական ռեֆորմը, երկրի գաղափարախոսության նորացումը, հրապարակայնությունը, հասարակության դեմոկրատացումը և այլն:

Պատասխանելով այն հարցին, թե ինչու է անհրաժեշտ վերակառուցումը, Մ. Ս. Գորբաչովն ասում էր, որ դա ճանապարհ է՝ իրականացնելու համար կուսակցության արագացման կուրսը: Ամեն ինչ պետք է անել, որ վերակառուցումը կրի անվերադարձ բնույթ և շարժման մեջ ներքաշի հսկայական ուժեր: Նա նաև ավելացնում էր, որ վերակառուցումը միայն մեկ պահի ակտ չէ, այլ պատմական որոշակի ժամանակաշրջանի գործընթաց, որն ընդգրկում է երկրի կառավարման համակարգը, տնտեսավարման մեթոդները և այլն: Ըստ

Գորբաչովի՝ վերակառուցումը ենթադրում էր լայն հրապարակայնություն, հասարակության դեմոկրատացում, երբ մարդ-անհատը իրեն կզգար երկրի տեր, որի վրա մեծ պատասխանատվություն է դրված և այլն[98]:

Հասարակության դեմոկրատացումը նաև ենթադրում էր ավելի օպտիմալ օգտագործել հասարակության հոգևոր ներուժը, հաստատել սոցիալական արդարություն և լուծել երկրի ազգամիջյան հարաբերություններում առկա խնդիրները:

1989 թ. հուլիսի 18-ին՝ ԽՄԿԿ կենտկոմում հրավիրված խորհրդակցության ժամանակ խոսելով վերակառուցման՝ որպես օրվա արմատական խնդրի մասին՝ Մ. Գորբաչովը նշում էր, որ իրականում երկիրն ապրում է վերակառուցման քննական ժամանակաշրջան, որը, մյուս բնագավառներից զատ, վերաբերում է նաև կուսակցության աշխատանքի վերակառուցմանը, քանի որ այն երկար ժամանակ կառուցված էր կառավարման վարչահրամայական համակարգի սկզբունքների վրա և ապրում էր նրա օրենքներով, որոնք էլ պետք է փոխվեին: Կուսակցությունը պետք է հրաժարվեր իր դարն ապրած կառավարման մեթոդներից և վերադառնար աշխատանքի ժողովրդավարացման, ազատական մեթոդներին: Խնդիր էր դրվում կուսակցությունը հանելու, այսպես կոչված, շրջափակման վիճակից և դնելու շարժման մեջ[99]:

«Սոցիալիստական գաղափարը և հեղափոխական վերակառուցումը» հոդվածում Գորբաչովը, կրկին խոսելով վերակառուցման մասին, նշում է. «Վերակառուցումը ամբողջական հեղափոխական գործընթաց է, որն իրականացվում է դեմոկրատական մեթոդներով ժողովրդի կողմից ու ժողովրդի համար, որի նկատմամբ կուսակցությունը հանդես է գալիս որպես նրա քաղաքական ավանգարդ: Իսկ կուսակցության կողմից դրսևորվող ակտիվությունն ու պատմական նա-

---

[98] Տե՛ս Ускорение социально-экономическое развития страны-задача всей партии, всего народа. Документы и материалы, Москва, 1986, с. 437-458:

[99] Տե՛ս Демократизация советского общества: Истоки. Проблемы. Решения, Москва, 1989, с. 7, 11:

խաձեռնությունները նրա ավանգարդային դերի բնական արտահայտությունն են: Եվ կուսակցությունը որոշման իրավունքը չի դարձնում իր մենաշնորհը: Ամեն մի օգտակար նախաձեռնություն, որտեղից էլ որ այն ելնելիս լինի, հարկավոր է վերակառուցմանը, քանզի նրա կենսական տոնուսը քաղաքական իմաստով կախված է դեմոկրատիայի զարգացումից, որի գործառույթը մասնավորապես ժողովրդական նախաձեռնության խթանումն է»[100]:

Որքան էլ նշված հարցադրումները հատկապես մեր օրերում գնահատելու տեսանկյունից դեկլարատիվ բնույթ էին կրում, բայց տվյալ ժամանակաշրջանում առանց լուրջ, արմատական վերափոխումների, խորհրդային հասարակությունը չէր կարող առաջընթաց ապրել: Իսկ դա նշանակում էր, որ նոր պայմաններում հասարակության մեջ կուսակցության դերն արմատապես փոխվում էր, որի գլխավոր գործառույթներից մեկը մշտական զարգացումն էր, հասարակական մտքի հարստացումը, հասարակության համար ժողովրդավարական զարգացման օրինակ լինելը և այլն: Պետք է պայմաններ ստեղծվեին՝ անցավագին կերպով հասարակության մեջ տարբեր կարծիքներ իրար հակադրելու և հարցերի լուծման համար այլընտրանքային լուծումներ առաջ քաշելու համար՝ պահպանելով կուսակցության միասնությունը հատկապես սկզբունքային, ռազմավարական նշանակություն ունեցող հարցերում:

Մ. Գորբաչովը կարևորում էր կուսակցության սերտ կապերը, փոխհարաբերությունները տարբեր հասարակական կազմակերպությունների և շարժումների հետ: Նման դեպքերում, ըստ նրա, կուսակցությունն ավելի կամրապնդեր դիրքերը, որն էլ հնարավորություն կտար ներառելու հասարակության ողջ ինտելեկտուալ, կենսառատ ուժերը՝ մշակելու համար ընդհանուր քաղաքականությունն ու գործողությունների ծրագիրը[101]:

Ոչ պակաս չափով վերակառուցման շրջանում կարևոր նշանակություն էր ստանում նաև ոչ ֆորմալ կազմակերպությունների գոր-

---

[100] «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի, 1989:

[101] Տե՛ս Демократизация советского общества: Истоки. Проблемы. Решения, с. 12-13:

ծունեությունը, որոնք պայքարում էին այն արատավոր երևույթների դեմ, որոնք տասնամյակների ընթացքում հաստատվել էին երկրում և դարձել խոչընդոտների, առաջավորի զարգացման համար: Այդ իմաստով կարևոր էր նաև այն հարցադրումը, թե ինչպիսին պետք է լիներ իրականում վերակառուցման ընթացքում Կոմունիստական կուսակցությունը, ինչպիսին էր նրա քաղաքական կերպարը: Պատասխանելով այդ հարցին՝ Մ. Ս. Գորբաչովն ասում էր, որ կուսակցությունը ողջ հասարակության համար պետք է լինի հասարակության դեմոկրատական զարգացման համար օրինակ և առանց վախենալու ստեղծի պայմաններ հակադիր կարծիքների, այլընտրական հարցադրումների, տարբեր մոտեցումների ազատ դրսևորման համար[102]: Նա նաև ընդգծում էր, որ վերակառուցման ուղղությամբ աշխատանքը պետք է սկսի յուրաքանչյուրն ինքն իրենից՝ որոշելով իր քաղաքացիական դիրքորոշումը, սկսելով քաղաքական, աշխատանքային գործունեության ակտիվացումից, հանձնարարված գործի նկատմամբ պատասխանատվությունից հանուն վերջնական արդյունքների և այլն[103]:

Թվարկված խնդիրները, հարցադրումները արտաքնապես որքան էլ կարևոր են, սակայն դրանք սոսկ խոսքեր էին, քանի որ Խորհրդային Միության մեջ մտնող միութենական հանրապետություններում, առավել ևս տարբեր կարգի ինքնավար կազմավորումներում մարդիկ ադեկվատ, նույնանման չէին արձագանքում և ընկալում կուսակցության վերադասի կողմից հնչած կարգախոսները: Նրանցից շատերը անթաքույց բարձրաձայնում էին Խորհրդային Միությունից դուրս գալու, անկախություն ձեռք բերելու մասին և վերակառուցումն ընկալում ու մեկնաբանում էին այլ դիրքերից, մանավանդ որ նրանք ամեն օր բախվում էին գորբաչովյան «վերակառուցման» հռչակած կարգախոսներին՝ հակառակ իրականությանը, ինչն

---

[102] Տե՛ս Демократизация советского общества: Истоки. Проблемы. Решения, с. 12-13:

[103] Տե՛ս **Горбачев М. С.,** Перестройка неотложеная задача, она касается всех и по всем. Сборник материалов о поездке М. С. Горбачова на Дальный Восток, 25-31 июля, 1986, Москва, 1986, с. 38:

էլ հաճախ մարդկանց մեջ ծնում էր անտարբերություն, դեռ ավելին վերակառուցման սկզբունքներին հակառակ դիրքորոշում: Եվ եթե ժողովրդական զանգվածների մի մասն այլ դիրքորոշում և մոտեցում ուներ գորբաչովյան «վերակառուցման» նկատմամբ և այն ավելի շատ օգտագործում էր՝ ազգային որոշ հարցեր բարձրացնելու համար և այլն, ապա Հայաստանի կոմկուսը, հատկապես Կենտկոմը ընդունում էր որոշումներ, որոնք բխում էին ԽՄԿԿ կենտկոմի սկզբունքներից:

1988 թ. մայիսի 13-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկել է նույն թվականի ապրիլի 5-ին «Правда»-ում հրապարկված «Վերակառուցման սկզբունքները, հեղափոխական մտածողությունը և գործողությունները» հոդվածը՝ արձանագրելով, որ ՀԿԿ կենտկոմի բյուրոն լիովին պաշտպանում է «Правда»-ում հրապարկված վերոհիշյալ հոդվածը, որտեղ տրված է խոր վերլուծություն Խորհրդային Միությունում ԽՄԿԿ կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումից և ԽՄԿԿ 27-րդ համագումարից (1986թ.) հետո կատարված աշխատանքի մասին: Հոդվածում նաև խոսվում է այն մասին, որ անհրաժեշտ է խորհրդային հասարակության տնտեսական, սոցիալական, հոգևոր ոլորտներում իրականացնել արմատական վերափոխումներ: Նրանում նաև նշվում էր, որ երբ բոլորը նախապատրաստվում էին Համամիութենական կուսակցական 19-րդ կոնֆերանսին, էլ ավելի էր պահանջվում մեծ պատասխանատվություն երկրի ճակատագրի համար: Նաև կարևորվում էր քաղաքական նոր մտածողության ձևավորման հարցը՝ պատմությունից օբյեկտիվ և օգտակար դասեր քաղելու ունակությունը, սոցիալիստական դեմոկրատիայի ներուժի ամբողջովին օգտագործումը, մարդկային գործոնի ակտիվացումը և այլն: Հոդվածում ընդգծվում էր, որ վերակառուցումը՝ որպես մտքի և գործողությունների ձև, ավելի ամուր է տիրապետում մարդկային զանգվածներին և այլն: Ներկայացնելով այդ մտքերը՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն նաև նշում է, որ Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը խոր բավականությամբ է ընդունել «Правда»-ում հրապարակված այդ հոդվածը, նրանում առաջ քաշված դրույթները,

եզրակացությունները և այլն: Հասկանալի է, որ Կենտկոմի բյուրոն հանձնարարել է համապատասխան մարմիններին՝ կուսակցական քաղկոմներ, շրջկոմներ, մամուլ, ռադիո, հեռուստատեսություն և այլն, քննարկել և անել անհրաժեշտ առաջարկներ, մոտեցումներ և այլն: Կենտկոմի բյուրոն նշում էր նաև որոշ թերությունների, բացթողումների մասին, որոնք խանգարում էին վերակառուցման գործընթացին: Հատկապես կարևոր էր ոչ թե խոսքով, այլ գործով պայքար ծավալել կուսակցական, խորհրդային, գերատեսչական համակարգի բյուրոկրատական մոտեցումների, սկզբունքների դեմ: Նաև հանձնարարվում էր համապատասխան մարմիններին հրապարակել վերլուծական, ինչու չէ նաև քննադատական հոդվածներ՝ նվիրված վերակառուցմանն և երկրում կատարվող մյուս գործընթացներին[104]:

Դժվար չէ տեսնել, որ Հայաստանի կոմկուսը իր որոշումներում լիովին պաշտպանում էր ԽՄԿԿ կենտկոմի գիծը, քաղաքականությունը, որը որքան էլ պահանջում էր մարդկանցից նոր մտածողություն, հեղափոխական մտածողություն, բայց պատրաստ չէր փոխելու այն համակարգը, որն արդեն չուներ ներքին մղում՝ գործող համակարգը զարգացնելու համար: Այդ հանգամանքն էլ պետք է դառնար այն խոչընդոտը, որն օր օրի էլ ավելի էր մեծանում և ծնում հենց վերակառուցումից բխող նոր մոտեցումներ, նոր հարցադրումներ, որոնց շարքում գլխավորն աստիճանաբար դառնում էր կենտրոնից անջատվելու և սեփական ճակատագիրը ինքնուրույն որոշելու ձգտումը, ինչն էլ պետք է դառնար Խորհրդային Միության փլուզման գլխավոր պատճառներից մեկը, որի իրականացումը ստանձնեցին Խորհրդային Միության գրեթե բոլոր հանրապետությունները, այդ թվում՝ նաև Խորհրդային Հայաստանում ձևավորված ընդհատակյա այլախոհական շարժումը, ոչ ֆորմալ կազմակերպությունները, տարբեր խմբերը և այլն: Եվ որքան էլ որ ամեն օր շարժումը իշխանությունների կողմից ենթարկվում էր տարբեր կարգի հետապնդումների, ձերբակալությունների, այնուամենայնիվ չվիատվեց, շարունակեց պայքարել՝

[104] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 23, թ. 160-162:

ստանալով ժողովրդական զանգվածների համընդհանուր աջակցությունը: Այդ հանգամանքն էլ դարձավ այն գլխավոր հիմքերից մեկը, որի շնորհիվ նաև վերակառուցման ծնունդ Արցախյան շարժումը օր օրի դարձավ համաժողովրդական՝ ստանալով լայն զանգվածների աջակցությունն ու պաշտպանությունը:

2.2 Արցախյան շարժումը՝ որպես վերակառուցման ծնունդ. «Ղարաբաղ» կոմիտեն և «Հայոց համազգային շարժումը»

Արցախյան շարժումը խորը արմատներ ունի: Սակայն մեր ուսումնասիրման ժամանակաշրջանը արմատապես տարբերվում է նախորդ բոլոր ժամանակներից: Այն առնչվում է Խորհրդային Միության պատմության վերջին՝ փլուզման ժամանակաշրջանին: Միաժամանակ Արցախյան շարժումը մի մասն է այն համընդհանուր պայքարի, որը ծավալվեց գորբաչովյան «վերակառուցման» տարիներին ինչպես կենտրոնում (նկատի ունենք հատկապես Մոսկվան), այնպես էլ միութենական մյուս հանրապետություններում, ազգային ինքնավարություններում (Արցախ, Աբխազիա, Հարավային Օսիա, Աջարիա, Չեչնիա, Մոլդովա և այլն), որոնք, շատ լավ հասկանալով գորբաչովյան «վերակառուցման» թերի, հաճախ ձևական, պոպուլիստական կողմերը, իրենց գործողություններով ավելի առաջ անցան «վերակառուցման» հեղինակներից և դարձան իրենց ճակատագրի կերտողները՝ գլխավորելով գրեթե ամենուրեք սկսված համաժողովրդական պայքարը: Դրանց շարքում հատկապես առանձնանում է Արցախյան շարժումը, երբ Լեռնային Ղարաբաղի ողջ հանրությունը, սկսած շարքային մարդկանցից մինչև իշխանությունները, անկախ քաղաքական որոշ կողմնորոշումներից, մեկ հարցում միասնական էին՝ պայքարել Լեռնային Ղարաբաղի անկախության, պատմական ճշմարտության վերականգնման և մայր հայրենիքին միանալու նամար: Այդ հարցը դարձավ իշխանության տարբեր մակարդակների (սկսած ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյից մինչև Հայաստանի, Ադրբե-

ջանի կոմունիստական կուսակցությունների, բազմաթիվ այլ հասարակական հոսանքների, շարժումների, լրատվական տարբեր միջոցների՝ ռադիո, հեռուստատեսություն, մամուլ և այլն) ամենօրյա քննարկման առարկա:

Հայ ժողովուրդն իր բոլոր հատվածներով ապրում էր դրանով, արձագանքում Արցախյան շարժման ամեն մի մանրուքին: Այն դարձավ հայ ժողովրդի մեր օրերի ազատագրական պայքարի նշանավոր փառավոր էջերից մեկը, որի ուսումնասիրումը բազմաթիվ այլ հարցերի հետ դարձել է ներկա ժամանակաշրջանի հայ պատմագիտության կարևոր հարցերից մեկը: Ի դեպ, այդ կարգի բոլոր քննարկումներում ընդհանուր կարծիքն այն էր, որ այդ հարցի լուծումը մյուս նմանատիպ հարցերի նման դարձել էր ողջ երկրի, խորհրդային ժողովրդի, իշխանության բոլոր մակարդակների հասունության չափանիշ՝ ցույց տալով, թե որքանով էր երկիրը պատրաստ գնալու իրական վերափոխումների, հրաժարվելու հատկապես ազգային հարցում նախկին իշխանությունների թույլ տված սխալներից: Ընդ որում, շարժումը հատկապես սկզբնական փուլում չուներ հակախորհրդային բնույթ, ԽՍՀՄ-ը փլուզելու նպատակ՝ կարծելով, որ երկրում սկսված վերակառուցումը նաև ազգային հարցում կվերանայեր շատ սկզբունքներ, սխալներ, որոնք թույլ էին տրվել նախկինում խորհրդային իշխանությունների, հատկապես Ստալինի կողմից: Պատահական չէր, որ այդ նպատակով 1989 թ. սեպտեմբերի 19-ին ԽՄԿԿ կենտկոմի պլենումը քննարկել էր «Ժամանակակից պայմաններում կուսակցության ազգային քաղաքականության մասին» հարցը, որտեղ խոսելով ազգային հարցում խորհրդային իշխանությունների ձեռք բերած հաջողությունների մասին՝ Մ. Ս. Գորբաչովը շեշտել էր վերակառուցման՝ նոր քաղաքականություն մշակելու պահանջը, ինչը կնպաստեր ոլորտում հասունացած խնդիրների լուծմանը[105]: Իսկ ավելի վաղ գնահատելով և անդրադառնալով Լեռնային Ղարաբաղում սկսած հանրահավաքներին, նրանցում բարձրացված հարցերին՝ Մ. Ս. Գորբաչովը,

[105] Տե՛ս **Горбачев М. С.,** О национальной политике партии в современных условиях, Москва, 1989, с. 22-23:

դեռևս 1988 թ. մարտին պաշտոնական այցով գտնվելով Հարավսլավիայում, լրագրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ ասել էր, որ նրանցից ոչ ոք (նկատի ուներ ցուցարարներին – Հ. Ա.) չէր դրել ո՛չ խորհրդային իշխանությունների հարցը, ո՛չ խորհրդային պետությունից դուրս գալու հարցը և ո՛չ էլ սոցիալիզմի հարցը: Կային մշակույթի էթնիկական բնույթի հարցեր, որոնք վերջին ժամանակներս մնացել էին ուշադրությունից դուրս, և կուտակվել էին խնդիրներ և այլն[106]: Այստեղ տեղին է ասել, որ Գորբաչովը բավական լավատեսորեն էր նայում իր իսկ բարձրացրած հարցերին, հավատում դրանց արդյունավետ լուծմանը: Այդ իմաստով առանց չափազանցության կարելի է փաստել, որ վերակառուցումը, երկրում բարձրացված հարցերի, հատկապես ազգային հարցի լուծումը կարծես դարձել էր իշխանությունների, երկրի, ողջ ժողովրդի հասունության, արիության, քաջության լուրջ քննության հարց: Այդպես էին դատում, գնահատում երկրում սկսված վերակառուցումը աշխատավորական տարբեր կոլեկտիվներ, գիտական, ուսումնական, բուհական բազմաթիվ հաստատություններ՝ հավատալով, որ գործող իշխանությունները վճռական էին սկսած վերակառուցումը իրականացնելու մինչև վերջ: Դա հատկապես վերաբերում էր ազգային հարցին, որտեղ շատ էին սխալները, քաղաքական նկատառումներով ընդունած կամայական որոշումները և այլն: Մյուս կողմից, որքան էլ շարժումը համաժողովրդական էր, այն պետք է կազմակերպվեր որոշակի ուժերի, կազմակերպությունների կողմից, առանց որի անկառավարելի կդառնար: Մյուս խնդիրը պատմական հիշողության հարցն էր, որը մարդկային զանգվածները ստեպ-ստեպ հիշեցնում էին տարբեր մակարդակի իշխանություններին: Այդ ամենը ավելի շոշափելի դարձավ դեռևս խրուշչովյան «ձնհալի» ժամանակ՝ 1950-1960-ական թթ., երբ մարդիկ քիչ թե շատ հնարավորություն ստացան խոսելու ստալինյան «Ժառանգության», հատկապես ազգային հարցում թույլ տրված սխալների մասին, որոնց շարքում հատկապես առանձնանում էր

[106] Տե՛ս «Правда», 17 марта, 1989.

Լեռնային Ղարաբաղի հարցը, որի վերաբերյալ ՌԿԲԿ կովկասյան բյուրոն դեռևս 1921 թ. հուլիսի 5-ի որոշմամբ, նաև Ստալինի կամայական միջամտությամբ տրվեց Ադրբեջանին, որքան էլ որ մեկ օր առաջ՝ հուլիսի 4-ին, նույն ՌԿԲԿ կովկասյան բյուրոյի որոշմամբ (ի դեպ՝ քվեարկությամբ) Լեռնային Ղարաբաղը թողնվել էր Խորհրդային Հայաստանի կազմում[107]:

Խրուշչովյան «ձնհալի» շնորհիվ 1965 թ. Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը 50 հազար ստորագրությամբ նամակ ուղարկեց Մոսկվա՝ ԽՄԿԿ կենտկոմ՝ խնդրելով փոխել ստալինյան ժամանակներից մնացած ժառանգությունը: Ի դեպ, 1965 թվականին լրանում էր նաև Հայոց ցեղասպանության 50-ամյակը: Կարծում ենք՝ այդ հանգամանքը ևս իր դերն էր խաղացել Լեռնային Ղարաբաղում նման ակտիվություն դրսևորելու համար: Սակայն այդ ամենին խոչընդոտելու համար գործին արագորեն միջամտեցին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Հեյդար Ալիևը և, ինչպես Գ. Ե. Տրապեզնիկովն է նշում, այդ հարցում նրա մշտական խորհրդական, Ուզբեկստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Շ. Ռաշիդովը, որոնք հանդես եկան Լեռնային Ղարաբաղի աշխատավորների այդ նախաձեռնության դեմ և ձեռնարկեցին դրան հակառակ քայլ՝ նույնպես կազմակերպելով, բայց արդեն հակառակ դիրքերից, հանրահավաքներ, որտեղ հասկանալի է, որ ընդունվում էին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի շահերին հակառակ այլ որոշումներ, հատկապես նշվում էր, որ «Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի անբաժանելի մասն է»[108]: Իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավորությունը շարունակում էր համառորեն Մոսկվային հիշեցնել այդ հարցի մասին, ուստի կենտրոնական իշխանությունները ընդառաջեցին Լեռնային Ղարաբաղի աշխատավորության պահանջներին: Խորհրդային Միության մինիստրների խորհրդի նախագահությունը 1977 թ. նոյեմբերի 29-ին (արձ. N61) կազմեց և հրատարակեց արցախցիների՝ Մոսկվա ուղարկած նամակների ժողովածուն, որը կոչ-

[107] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4515, ց. 10, գ. 43, թ. 8:
[108] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4515, ց. 10, գ. 43, թ. 13:

վում էր «Աշխատավորների նկատառումները և դիտողությունները», որում մասնավորապես ասվում էր. «Պատմական մի շարք հանգամանքների պատճառով մի քանի տասնամյակ առաջ Լեռնային Ղարաբաղը արհեստականորեն միացվել է Ադրբեջանին: Ընդ որում, հաշվի չեն առնվել պատմական անցյալը, ճշմարտությունը, նրա ազգային կազմը, տնտեսական շահերը, ժողովրդի ցանկությունը: Անցել են տասնամյակներ, բայց Ղարաբաղի հարցը շարունակել է մնալ չլուծված, որը առաջացնում է անհանգստություն և ոչ բարյացակամություն երկու հարևան ժողովուրդների միջև»[109]: Ժողովածուն կազմողները հետևություն արեցին, որ անհրաժեշտ է Ղարաբաղը (Արցախ) միացնել Խորհրդային Հայաստանին: Այդ դեպքում ամեն ինչ կգար իր օրինական տեղը: Անկախ այդ ամենից՝ Ադրբեջանի իշխանությունները շարունակում էին իրենց հակահայ քաղաքականությունը: Նրանց նպատակն էր քայլ առ քայլ ամեն ինչ անել՝ ունենալու Լեռնային Ղարաբաղն առանց հայերի, ինչպես գրում է Հրանտ Աբրահամյանը, այն վերածել արոտավայրի[110]: Նման պայմաններում արցախցու ապագան միայն մայր հայրենիքի հետ միավորումն էր, որն էլ ավելի մեծ թափ ստացավ 1980-ական թթ. երկրորդ կեսին՝ գորբաչովյան «վերակառուցման» տարիներին: Եվ եթե ազգերի ինքնորոշման հարցը համարվում էր կուսակցության ազգային քաղաքականության մի մասը, ապա դժվար չէ համոզվել, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության ձգտումը մեծ հաշվով ուներ մեկ նպատակ՝ միանալ մայր հայրենիքին, որը և՛ բնական էր, և՛ հասկանալի, և՛ օրինական:

Դեռևս 1987 թ. ընթացքում Լեռնային Ղարաբաղի գրեթե բոլոր աշխատավորական կոլեկտիվներում, հիմնարկ-ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, սովխոզներում տեղի էին ունեցել կոլեկտիվների ժողովներ, որոնք ընդունել էին որոշումներ (հաստատված ստորագրություններով, կնիքներով) Հայկական ԽՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին: Այդ որոշումը հա-

---

[109] ՀԱԱ, ֆ. 4515, ց. 10, գ. 43, թ. 14:
[110] Տե՛ս **Աբրահամյան Հ.,** «Կռունկ», Ստեփանակերտ, 2013, էջ 5:

տուկ պատվիրակության միջոցով ուղարկվել էր Մոսկվա՝ ԽՄԿԿ կենտկոմի ազգային հարաբերությունների բաժին՝ անձամբ Մ. Ս. Գորբաչովին հանձնելու համար: Ի դեպ, ստորագրողների թիվը հասնում էր 80 հազարի, որը գործնականում կազմում էր Լեռնային Ղարաբաղի հասուն տարիքի գրեթե ողջ բնակչությունը՝ բացառությամբ ադրբեջանցիների[111]: Իսկ արդեն 1988 թ. փետրվարի 20-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի աշխատավորների պատգամավորների արտահերթ նստաշրջանը, որը, լսելով և քննարկելով ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների ելույթները, ընդունեց պատմական կարևոր որոշում՝ դուրս գալ Խորհրդային Ադրբեջանի կազմից և միանալ Խորհրդային Հայաստանին, դիմել Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Ադրբեջանի Գերագույն խորհուրդներին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին իր օրինական որոշումը վավերացնելու խնդրանքով: Փետրվարի 21-ին մարզային խորհրդի որոշումը հրապարակվեց «Խորհրդային Ղարաբաղ» թերթում հայերեն և ռուսերեն: Հետաքրքիր է ասել, որ Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի նստաշրջանի աշխատանքներին մասնակցել էր Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Մ. Բագիրովը, որի՝ նման որոշման ընդունումը կանխելու ջանքերը չհաջողվեցին: Նույնպիսի որոշում ընդունել էր Լեռնային Ղարաբաղի կուսակցության մարզային կոմիտեի պլենումը 1988 թ. մարտի 17-ին: Որոշման մեջ ասվում էր, որ Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի պլենումը, արտահայտելով ինքնավար մարզի բնակչության, կոմունիստների մեծ մասի կամքը, խնդրում էր ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյին քննարկել և դրական լուծել այդ հարցը՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը միավորելու Հայկական ԽՍՀ-ի հետ, դրանով ուղղել Լեռնային Ղարաբաղի տարածքի որոշման վերաբերյալ 1920-ական թթ. սկզբում թույլ տված

[111] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 10, գ. 45, թ. 1, նաև «Հայաստանի Հանրապետություն», 13 փետրվարի, 2015:

պատմական սխալը: Վերոհիշյալ որոշումը հաջորդ օրը՝ մարտի 18-ին, հրապարակվեց «Խորհրդային Ղարաբաղ» թերթում[112]:

Փաստորեն՝ այդ քայլով Լեռնային Ղարաբաղի աշխատավորությունը երկրի իշխանությունների առաջ հարց էր դնում փոխելու ԽՍՀՄ Սահմանադրությամբ որոշված իր կարգավիճակը՝ հիմնվելով ազգերի ինքնորոշման իրավունքի վրա, առանց խախտելու սահմանադրական որևէ դրույթ: Նման կարծիք է ներկայացրել ճանաչված պատմաբան, երկար տարիներ «Սովետական Հայաստան» հանրագիտարանի գլխավոր խմբագիր Կոստանդին Խուդավերդյանն իր «Լեռնային Ղարաբաղը և նրա շուրջը ստեղծված իրադարձությունների մասին» մեքենագիր աշխատանքում, որը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվի համապատասխան ֆոնդում[113]: Ներկայացնելով Արցախյան շարժման նորագույն շրջանի պատմությունը՝ վերջինս գրել է, որ վերոհիշյալ որոշումից հետո Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը, որը երբեք անտարբեր չի եղել Լեռնային Ղարաբաղի հայության ճակատագրի նկատմամբ, միահամուռ պաշտպանեց նրա արդարացի որոշումը: Այդ աջակցությունը դրսևորվեց աշխատավորական կոլեկտիվների ժողովներում, հանրահավաքներում, որոնք տեղի էին ունենում Երևանում և հանրապետության տարբեր քաղաքներում՝ սկսած 1988 թ. փետրվարի 21-ից: Հանրահավաքների, ցույցերի մասնակիցների թիվը օր օրի մեծանում էր՝ հասնելով հարյուր հազարավորների: Հանրահավաքները անցնում էին երկրում սկսված վերակառուցման քաղաքականության պաշտպանությամբ, Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի դրոշներով, Վ. Ի. Լենինի և Մ. Ս. Գորբաչովի նկարներով, թռուցիկներով, «Լենին, կուսակցություն, Գորբաչով», «Հանուն վերակառուցման, ժողովրդավարության և հրապարակայնության» պաստառներով և այլն:

Հանրահավաքներում ելույթ էին ունենում հանրապետության գիտության, մշակույթի նշանավոր գործիչներ, բանվորներ, ուսանող-

---

[112] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4516, ց. 1, գ.15, թ. 3-4, 8:
[113] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 10, գ. 45, թ. 1-25:

ներ, ստեղծագործական տարբեր միությունների ներկայացուցիչներ: Նրանց շարքում էին հանրապետության ԳԱ նախագահ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վիկտոր Համբարձումյանը, գրող, սոցիալիստական աշխատանքի հերոս, Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր Սերո Խանզադյանը, բանաստեղծներ Սիլվա Կապուտիկյանը, Ռազմիկ Դավոյանը և ուրիշներ: Հանրահավաքներում ելույթ էին ունենում նաև պատերազմի և աշխատանքի վետերաններ, Աֆղանստանի պատերազմի մասնակիցներ, տարբեր ազգերի ներկայացուցիչներ, ռուսներ, քրդեր, ասորիներ: Բոլոր ելույթ ունեցողները պաշտպանում էին Լեռնային Ղարաբաղի աշխատավորների արդարացի պահանջը, հրապարակում տարբեր կոլեկտիվների ժողովների որոշումները, ԽՄԿԿ կենտկոմ, խորհրդային կառավարություն, անձամբ Մ. Ս. Գորբաչովին հղած հեռագրերը, նամակները և այլն[114]:

Խորհրդային Հայաստանի և Միության համապատասխան մարմինները, լրատվական միջոցները Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում սկսված իրադարձությունները, ցավոք, սկսեցին գնահատել ոչ օբյեկտիվ դիրքերից և Լեռնային Ղարաբաղի աշխատավորների սահմանադրական պահանջները ներկայացրին որպես դրսից հրահրված ծայրահեղական և ազգայնական շարժում: Նման ծայրահեղական, ոչ օբյեկտիվ գնահատականներ ամեն օր հնչում էին միութենական տեղեկատվական տարբեր աղբյուրներից, որոնց շարքում հատկապես առանձնանում էր Մոսկվայից ամեն օր եթեր հաղորդող «Ժամանակ» ծրագիրը: Հասկանալի է, որ «Ժամանակ» ծրագիրը ինքնուրույն չէր կարող այլ գնահատական տալ, եթե չլիներ Կենտկոմի, Քաղբյուրոյի թույլտվությունը, քանի որ հենց ինքը՝ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն էր նման գնահատականի ձևակերպման հեղինակը: Պատահական չէր, որ հենց ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն նույն 1988թ. փետրվարի 21-ին հրավիրել է նիստ, որտեղ էլ, քննարկելով այդ հարցը, այն գնահատել է որպես ծայրահեղական,

[114] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 10, գ. 45, թ.1-3:

դրսից հրահրված և այլն: Նույն օրն էլ՝ փետրվարի 21-ին, Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն ևս քննարկեց ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի որոշումը, որը կոչվում էր «ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին»: Որոշման մեջ ասվում էր, որ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն, համակողմանիորեն քննարկելով Ադրբեջանական ԽՍՀ-ի Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի իրադարձությունների մասին հարցը, այն գնահատում էր որպես ծայրահեղ լարված վիճակ: ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն միաժամանակ նշում էր, որ տարածաշրջանում սկսված գործողություններն ու պահանջները՝ վերանայելու գործող ազգային-տարածքային կառուցվածքը, հակասում էր Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորների շահերին՝ մեծ վնաս հասցնելով ազգամիջյան հարաբերություններին: Եվ եթե չձեռնարկվեին պատասխանատու քայլեր, դա կարող էր հանգեցնել անկանխատեսելի կամ նույնիսկ դժվար ուղղելի հետևանքների:

Քաղբյուրոն միաժամանակ նշում էր, որ այդ ամենը հնարավոր էր դարձնել առանձին ծայրահեղորեն և անպատասխանատու տրամադրված անձնավորությունների կոչերի, ինչպես նաև նշված հանրապետությունների կուսակցական և խորհրդային մարմինների սպասողական դիրքորոշման սցենարով, որոնց ղեկավարությունը թերագնահատում էր ազգայնական բնույթի տրամադրվածության քաղաքական վտանգավորությունը և մակերեսորեն էր մոտենում ստեղծված իրավիճակի գնահատականին:

ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն միաժամանակ իրավիճակի նորմալացման ամբողջ պատասխանատվությունը դնում էր Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմների բյուրոների և առաջին հերթին անձամբ Կենտկոմի առաջին քարտուղարների՝ Կ. Դեմիրճյանի և Կ. Բագիրովի վրա: Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն, արձանագրելով այդ ամենը, ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի վերոհիշյալ որոշումն ընդունեց որպես անշեղ իրագործման և ղեկավարման սկզբունք: Եվ քանի որ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն հանձնարարել էր Հայաստանի կոմկուսին և Ադրբեջանի կոմկուսին համակարգել

իրենց աշխատանքը՝ իրավիճակը առողջացնելու համար, իր հերթին ևս համապատասխան հանձնարարականներ էր տալիս հանրապետության համապատասխան մարմիններին, կարևորում այդ հարցի քննարկումը հանրապետության կուսակցական ակտիվի ժողովում: Իսկ կառավարությանը հանձնարարում էր մշակել և Կենտկոմ ներկայացնել Լեռնային Ղարաբաղում սոցիալ-տնտեսական բնույթի բարեփոխումների առաջարկներ: Բյուրոն նաև հանձնարարեց հանրապետության Մինիստրների խորհրդին անհրաժեշտության դեպքում առաջարկներ ներկայացնել ԽՍՀՄ մինիստրների խորհրդին:

ՀԿԿ կենտկոմի բյուրոն նույնպիսի առաջարկներ և հանձնարարականներ էր տալիս հանրապետության համապատասխան կուսակցական օղակներին՝ քաղկոմներին, շրջկոմներին, անձամբ կուսշրջկոմների առաջին քարտուղարներին, որպեսզի Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի մասին համապատասխան բացատրական աշխատանքներ տանեին աշխատավորների շրջանում, որպեսզի վճռականորեն կանխվեր անպատասխանատու ցանկացած գործողություն, որը անասելի վնաս կհասցներ Հայաստանի և Ադրբեջանի եղբայրական ժողովուրդներին: Այդ աշխատանքների մեջ, ըստ ՀԿԿ կենտկոմի բյուրոյի որոշման, պետք է ընդգրկեին խորհրդային, կոմերիտական, գաղափարական ակտիվին և այլն[115]: Հետաքրքիր է ասել, որ նման բացառիկ իրադարձությունների մասին այդ օրերի կենտրոնական մամուլը՝ «Правда»-ն, «Известия»-ն, նույնիսկ մի քանի օր Խորհրդային Միության ողջ բնակչությանը որևէ հաղորդագրություն, որևէ լուր չեն հաղորդել: Կրկին վերընթերցելով այդ օրերի վերոհիշյալ թերթերի տարբեր հաղորդագրությունները՝ համոզվում ենք, որ երկրի իշխանությունները ժողովրդից թաքցնում էին այդ բացառիկ փաստը և շարունակում տպագրել գորբաչովյան «վերակառուցումից» բխող հոդվածներ, նյութեր և այլն: Օրինակ՝ 1988 թ. փետրվարի 21-ի «Правда» թերթի առաջնորդողը կոչվում էր «Նորացման գաղափարախոսությունը. ԽՄԿԿ կենտկոմի պլենումի որոշումները ակտիվ

[115] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 88, թ. 64-65:

գործողությունների կոչ են անում»: Նույն ձևով փետրվարի 22-ին թե՛ «Правда»-ում և թե՛ «Известия»-ում ոչինչ չկար Լեռնային Ղարաբաղի մասին, իսկ փետրվարի 23-ին կարմիր բանակի 70-ամյակի առթիվ պաշտպանության նախարար Դ. Յազովի հոդվածն էր: Փետրվարի 24-ին ևս թե՛ «Правда»- ն և թե՛ «Известия»-ն չեն անդրադարձել այդ կարևոր իրադարձությանը: Այդ օրվա «Правда»-ի առաջնորդողը կոչվում է «Վերակառուցումը և դպրոցը»: Նույնը նաև փետրվարի 25-ին է վերաբերում, իսկ արդեն փետրվարի 26-ին վերջապես «Правда»-ն առաջին անգամ, գրեթե մեկշաբաթյա լռությունից հետո, այլ հոդվածներից զատ, շրջանառության մեջ է դրել աշխարհին հայտնի «Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջը» հաղորդագրությունը՝ նշելով, որ մեկ օր առաջ՝ փետրվարի 25-ին, տեղի է ունեցել Ադրբեջանի կոմունիստական կուսակցության ակտիվի ժողովը, որը քննարկել է Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջը ձևավորված իրադարձությունների մասին հարցը և տվել այն նույն գնահատականները և ձևակերպումները, որոնք տրվել էին ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի կողմից հայտնի փետրվարի 21-ի որոշմամբ՝ դիտելով այն որպես Լեռնային Ղարաբաղի ծայրահեղորեն և անպատասխանատու ձևով տրամադրված բնակչության մի մասի տրամադրությունների պահանջ: Մնացած բոլոր ձևակերպումները ևս կրկնում էին ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի կողմից տրված գնահատականները: Նույնը նաև, ինչպես տարբեր առիթներով նշել ենք, կրկնում էր նաև Հայաստանի կոմկուսի կենտկոմը: Մինչդեռ այդ ամենին միանգամայն այլ գնահատական էին տալիս աշխատավորական կոլեկտիվները, շարքային մարդիկ, որոնք, հակառակ թե՛ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի, թե՛ Հայաստանի կոմկուսի կենտկոմի տված ոչ օբյեկտիվ գնահատականներին, պաշտպանում էին Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի, կուսակցական մարզային կոմիտեի որոշումները, որի պատճառով էլ, ի նշան բողոքի, սկսում էին կազմակերպել ցույցեր, հանրահավաքներ և այլ կարգի ակցիաներ:

1988 թ. փետրվարի 20-ից սկսած՝ ամեն օր, գիշեր թե ցերեկ Լեռնային Ղարաբաղում, նրա կենտրոն Ստեփանակերտում բնակչու-

թյան բոլոր խավերի, ընդհուպ ծերերի ու երեխաների մասնակցությամբ անընդհատ տեղի էին ունենում ցույցեր, հանրահավաքներ: Հավաքի մասնակիցների թիվը Ստեփանակերտի կուսակցական մարզկոմի շենքի առաջ հասնում էր 15-20 հազարի: Եվ հենց այդ ցույցի օրերին էլ Ստեփանակերտում ձևավորվեց շարժմանն աջակցող ոչ ֆորմալ հասարակական կոմիտե: Կոմիտեի կազմում էին Լեռնային Ղարաբաղի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարները, ԽՄԿԿ անդամներ, մարզխորհրդի և քաղխորհրդի պատգամավորներ և այլն: Իսկ դա նշանակում էր, որ Արցախյան շարժումը կանգնեցնել այլևս հնարավոր չէր: Այն օր օրի էլ ավելի մեծ ծավալներ էր ընդունում՝ առաջ բերելով անհրաժեշտություն՝ շարժմանն ավելի կազմակերպված բնույթ տալու համար, որն էլ դարձավ «Ղարաբաղ» կոմիտեն: Դրա վկայությունը Երևանում, ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղում սկսված շարժման, Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի հրապարակում իրականացվող ամենօրյա հանրահավաքներն էին, որոնց մասնակցում էին տասնյակ հազարավոր մարդիկ: Փետրվարի 23-ին Թատերական հրապարակում հրավիրված հանրահավաքը նվիրված էր հանրապետությունում ստեղծված իրավիճակին: Հանրահավաքը վարող Համբարձում Գալստյանը, ներկաներին ներկայացնելով հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը, նշել է, որ Երևան են ժամանել ԽՄԿԿ կոնտկոմի քաղբյուրոյի անդամներ, անդամության թեկնածուներ, ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ Դոլգիխը, Լուկյանովը և ուրիշներ, որոնց հետ հանդիպումներն էլ հնարավորություն կտային քննարկելու Լեռնային Ղարաբաղին առնչվող շատ հարցեր: Օր օրի Թատերական հրապարակում հավաքվածների թիվն ավելանում էր՝ հասնելով հարյուր հազարների: Փետրվարի 24-ին կրկին Թատերական հրապարակում խոսելով Լեռնային Ղարաբաղի հարցի մասին՝ Վանո Սիրադեղյանը, Համբարձում Գալստյանը նշում էին, որ ժողովրդի կողմից երաշխավորված մտավորականության ներկայացուցիչները հանդիպումներ էին ունենալու ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ Դոլգիխի և Լուկյանովի հետ, խոսելու էին

Լեռնային Ղարաբաղի մասին, հարց էին բարձրացնելու նրանց առջև, որ ամեն ինչ պետք է արվեր՝ բնակչության անվտանգությունն ապահովելու համար: Հավաքի մասնակիցներից ելույթ են ունեցել Իգոր Մուրադյանը, Վաչե Սարուխանյանը, Վանո Սիրադեղյանը, որոնք հանրահավաքի մասնակիցների անունից առաջարկել են ստեղծել կազմկոմիտե և նրա պատվավոր նախագահ ընտրել Սիլվա Կապուտիկյանին, որը որևէ մեկի կողմից չէր կարող հետապնդվել: Իսկ Կոմիտեում առաջարկել են ընտրել Վիկտոր Համբարձումյանին, ԽՍՀՄ ժողովրդական դերասան Հովհաննես Չեքիջյանին, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանին[116]:

Ելույթ ունեցողները հավաքի մասնակիցներին նաև կոչ են արել լինել համախմբված, միասնական և գիտակցել, ինչպես նշել է ելույթ ունեցողներից Վազգեն Մանուկյանը, որ Ղարաբաղը Հայաստանին միացնելու պայքարը, գործընթացը լինելու է շատ երկար, որի համար էլ առաջարկել են բոլոր գործարաններում, ձեռնարկություններում ստեղծել համապատասխան կոմիտեներ, որոնք ևս իրենց հերթին կբարձրացնեին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ տարբեր հարցեր, պահանջներ: Պայքարի ձևերից էին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներին ետ կանչելը, Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելը, գործադուլներ հայտարարելը և այլն: Պայքարի բոլոր այդ ձևերը ընդունելի էին Կոմիտեի կողմից: Առաջարկվում էր, որ ձեռնարկությունները, կոլեկտիվները իրենց որոշումների, առաջարկությունների մասին տեղյակ պահեն և ներկայացնեն կազմկոմիտե: Հանրահավաքում ելույթ են ունեցել նաև ճանաչված լրագրող Արմեն Հովհաննիսյանը, պատմաբան Ալեքսան Հակոբյանը և ուրիշներ: Ալեքսան Հակոբյանը հանրահավաքի մասնակիցներին հիմնավորել է Լեռնային Ղարաբաղը պատմական հայկական տարածք լինելու փաստը: Ելույթ ունեցողներից Իգոր Մուրադյանը խոսել է Անդրկովկասում ստեղծված լարված վիճակի մասին, Ադրբեջանում գոյություն ունեցող մոտ կես միլիոն հայերի, այլազգիների՝ ռուսների,

[116] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 1-16:

ուկրաինացիների և ուրիշների վտանգի մասին՝ ասելով, որ բախումը կարող է ունենալ անկանխատեսելի հետևանքներ, ուստի անհրաժեշտ է ցուցաբերել անչափ մեծ կազմակերպվածություն: Նա խոսում էր այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի ողջ մարզում հայտարարված էր գործադուլ, որ Մարզկոմի մոտ հավաքված էին մեծ թվով մարդիկ: Նա լավատեսորեն ասում էր, որ Ղարաբաղյան շարժումը չի մարել, որ այն կա, այն շարունակվում է, և որ իրենք պայքարելու են մինչև վերջ: Եթե հարկ լինի իրենք կդիմեն ժողովրդի օգնությանը: Իր ելույթի մյուս մասը Իգոր Մուրադյանը նվիրել է այն հարցին, որ Ղարաբաղյան շարժումը սկսվել է Ղարաբաղում և ոչ թե այստեղ՝ նկատի ունենալով Երևանը: Բայց նաև կարևոր էր, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունները, կառավարությունը տասնամյակներ շարունակ լռությունից հետո կրկին բարձրացրին Լեռնային Ղարաբաղի հարցը: Այնուհետև Ղարաբաղյան շարժման հարյուրավոր ակտիվիստների անունից Ի. Մուրադյանը հայտարարել է, որ չի կարելի բաց թողնել նման փաստը, նման իրողությունը, և սկսված շարժումը հանգիստ չէր թողնի հանրապետության կառավարությանը, մինչև որ չլուծվեր Ղարաբաղի հարցը: Ուստի «Ղարաբաղ» կոմիտեի աշխատանքը կախված էր Խորհրդային Հայաստանի կառավարությունից: Այնուհետև նա ներկայացրել է Ղարաբաղյան շարժման ծրագիրը, որից առաջինը նախ, ինչպես նշվեց, բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, կոլեկտիվներում, բուհերում «Ղարաբաղ» կոմիտեների ստեղծումն էր, բոլոր կուսակցական կազմակերպությունների ժողովներում Խորհրդային Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի միավորման մասին բանաձևեր ընդունելը և դրանք ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղարին ուղարկելը: Նա նաև առաջարկում էր շաբաթվա մեկ օրը հայտարարել Լեռնային Ղարաբաղի օր, որպեսզի այդ օրը անցկացվեն հանրահավաքներ, ժողովներ, որոնցում տեղեկություններ կտրվեն Լեռնային Ղարաբաղի իրավիճակի մասին, որն էլ կարող էր լինել աշխատանքային շաբաթվա վերջին՝ ուրբաթ օրը:

Մյուս առաջարկը վերաբերում էր Հայաստանի կոմկուսի կենտկոմին, որը հանրապետության կուսակցական ակտիվի ժողովում

խնդրել էր ԽՄԿԿ կենտկոմին, որ ԽՄԿԿ կենտկոմի՝ ազգային հարցին նվիրված առաջիկա պլենումում քննարկվի նաև Լեռնային Ղարաբաղի հարցը: Հանրահավաքում բարձրացված բազմաթիվ այլ հարցերից զատ՝ կարևորվում էր նաև Ղարաբաղյան շարժման մասին օբյեկտիվ տեղեկատվության հարցը: Խոսքը վերաբերում էր տեղեկատվական տարբեր միջոցներին՝ ռադիո, հեռուստատեսություն, մամուլի տարբեր միջոցներ և այլն: Հանրահավաքի մասնակիցներին նաև հաղորդվում էր այն մասին, որ արդեն ավելի քան ամիս ու կես է, ինչ ԽՄԿԿ կենտկոմ դիմում և համապատասխան փաստաթղթեր, նյութեր են ուղարկվել, որոնցում ցույց էին տրված աղրբեջանական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ կատարած հանցագործությունները, ցեղասպանության քաղաքականությունը, հայկական տարածքների բռնազավթման փաստը և այլն, որոնց վերաբերյալ որևէ պատասխան դեռևս չէր տրվել: Հանրահավաքի մասնակիցները պահանջում էին ԽՄԿԿ կենտկոմից ուշադիր ուսումնասիրել այդ ամենը և անել անհրաժեշտ հետևություններ:

Հավաքի մասնակիցները Հայաստանի կոմկուսի կենտկոմից և կառավարությունից պահանջում էին ներկայացնել իրենց դիրքորոշումը Ղարաբաղյան շարժման առնչությամբ, մինչդեռ «Հայաստանի կոմկուսի կենտկոմն ու կառավարությունը չէին կիսում ժողովրդի հուզումները, նրա բարձրացրած հարցերը և այլն»[117]: Անշուշտ, դա բավական լուրջ հարց էր, և կարծել, որ հանրապետության ղեկավար մարմինները իսկույն պատրաստակամություն կդրսևորեին ամեն կերպ պաշտպանելու Ղարաբաղյան շարժումը և նրա պահանջներն այն ձևով, ինչպիսին ներկայացնում էին շարժման ղեկավարները, ասել է թե՝ Լեռնային Ղարաբաղը միավորել Խորհրդային Հայաստանին, իրատեսական չէր, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը: Այդ հանգամանքն էլ պետք է դառնար այն գլխավոր պատճառներից մեկը, որն առաջացրեց ճեղքում Ղարաբաղյան շարժման, նրա կազմակերպիչների, առաջին հերթին՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի,

[117] ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 1-24:

նրա առաջին դեմքերի միջև: Բայց անկախ այդ ամենից՝ սկսված շարժումը կանգնեցնել և տանել երկրի կուսակցական ղեկավարության նախանշած ուղիով, հատկապես ազգային հարցում գրեթե ամեն ինչ թողնել նույնը, հնարավոր չէր: Այդ հանգամանքն էլ պետք է ստեղծեր ճեղքում և հակասություններ ինչպես Միության, այնպես էլ հանրապետության կուսակցական, խորհրդային ղեկավարության և Ղարաբաղյան շարժման միջև: Մինչդեռ շարժման կազմակերպիչները, ստանալով ժողովրդական զանգվածների աջակցությունը, վճռական էին պայքարելու մինչև վերջ: Շարժումն ավելի կազմակերպված և որոշակի ծրագրով իրականացնելու համար հանրահավաքի մասնակիցները իշխանություններից պահանջում էին իրենց տրամադրել որոշակի տարածք, տեղ, որտեղ նրանք պետք է հրավիրեին իրենց ամենօրյա նիստերը և որոշեին անելիքները: Ավելի նպատակահարմար էր համարվում Գրողների միության շենքը, որն էլ, ի դեպ, հետագայում դարձավ «Ղարաբաղ» կոմիտեի շտաբ-կայանը: Համաժողովրդական շարժումը «Ղարաբաղ» կոմիտեի նախատեսվող ուղով տանելու համար Հայաստանի կոմկուսը և կառավարությունը Լեռնային Ղարաբաղի հարցում համակարծիք չէին ժողովրդական զանգվածների պահանջներին, և միայն ժողովրդական զանգվածների շնորհիվ է, որ տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միավորելու պատմական որոշումը[118]:

Հետագա հանրահավաքները ընթանում էին՝ շարժումը պահելով կազմակերպիչների նախատեսած շրջանակներում, այդ նպատակի համար դիմելով տարբեր միջոցների՝ հանրահավաքների կազմակերպում, հիմնարկ-ձեռնարկություններում «Ղարաբաղ» կոմիտեների ստեղծում, հանրապետության և Միության ղեկավարությանը, հատկապես ԽՄԿԿ կենտկոմին, քաղբյուրոյին ուղղված տարբեր կարգի գրությունների ուղարկում, Լեռնային Ղարաբաղի հարցում ճշմարտությունը, պատմական փաստերը ներկայացնելը և այլն: Իսկ ժողովրդական զանգվածները ամեն օր սպասում էին նոր լուրերի, նոր

[118] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 31:

հաղորդումների, նոր հարցադրումների՝ պահպանելով ընդհանուր տրամադրությունը՝ պայքարել մինչև վերջ՝ Լեռնային Ղարաբաղը մայր հայրենիքին միավորելու համար:

Ընդհանրացնելով պայքարի առաջին ամիսների անցած ճանապարհը՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Աշոտ Մանուչարյանը 1988 թ. մայիսի 17-ին հրավիրված հանրահավաքում խոսել է այն մասին, որ երբ սկսվեց շարժումը, և Թատերական հրապարակում առաջին անգամ կազմակերպվեց հանրահավաք, քչերն էին կարող պատկերացնել, թե ինչպիսի ուժեր էին ներքաշվել շարժման մեջ: Մի կողմից հայ ժողովուրդն էր, որն ուզում էր ուղղել պատմական անարդարությունը՝ օգտվելով այն հնարավորություններից, որը երկրին տվել էր դեմոկրատիան: Մյուս կողմից էլ այն մութ ուժերն էին, որոնք ցանկանում էին օգտագործել այդ առիթը՝ իրականացնելու այլ նպատակներ՝ հատկապես միութենական մամուլում հրատարակելով սադրիչ, մարդկանց զգացումները հրահրող հոդվածներ, որոնք հանգեցնում էին ազգամիջյան ընդհարումների՝ հասցնելով մինչև ազգամիջյան պատերազմի: Այնուհետև Աշոտ Մանուչարյանը անդրադարձել է Սումգայիթյան ողբերգությանը, ցեղասպանությանը՝ հայտարարելով, որ իրենք ունեն տվյալներ, որ Սումգայիթի ջարդերը նախօրոք էին մշակվել: Այդ միտքը Աշոտ Մանուչարյանը հաստատում էր այն փաստով, որ մինչ սումգայիթյան ջարդերը հեռախոսային հաղորդում էր հղվել Մոսկվա՝ անվտանգության մարմիններին, Ներքին գործերի նախարարությանը, Ադրբեջանի կոմկուսին՝ տեղյակ պահելով, որ կան տվյալներ, որ փետրվարի 26-27-ին ինչ-որ սարսափելի բան է նախապատրաստվում, որին այդ օղակներից պատասխանել էին, որ ամեն ինչ գիտեն, և ձեռք են առնվում համապատասխան միջոցներ, որ ոչինչ չի լինելու և այլն[119]: Բայց իրականում եղավ այն, ինչը շատերը զգում, կանխատեսում էին, ինչը չխանգարեց Մ. Գորբաչովին հետագայում՝ այդ դեպքերից հետո, անդրադառնալով սումգայիթյան ջարդերին, ուղղակի հայտարարել, որ զորքերն ընդամենը մի քանի

[119] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 2, թ. 3-4:

ժամով են ուշացել: Այդպես դատել տասնյակ զոհերի, հարյուրավոր խոշտանգվածների, վիրավորների կյանքի մասին, ուղղակի ոչ բարոյական էր, անմարդկային: Բայց երևի Գորբաչովին այլ բան էր հետաքրքրում. ամեն ինչ անել՝ իր առաջ քաշած վերակառուցման ծրագիրը աշխարհին ներկայացնելու համար, որ այն իրականացվում է, որ մարդիկ ներգրավվեն վերակառուցման գործին մեծ նվիրումով, մինչդեռ ճշմարտությունն այն էր, որ նման դատողությունը բավական հեռու էր իրականությունից: Եվ դա է պատճառը, որ Երևանում, հանրապետության մյուս քաղաքներում տեղի ունեցող հանրահավաքներում մարդիկ արդարացիորեն քննադատում էին իշխանություններին իրենց գրված դիրքորոշման համար, որոնք անվերապահորեն միայն պաշտպանում էին ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի որոշումները և հետագայում բոլոր նրանց, ովքեր քննադատում էին թե՛ հանրապետության և թե՛ Միության ղեկավարությանը, հատկապես այդ ամենի մեղավոր ԽՄԿԿ կենտկոմին, քաղբյուրոյին, որին մտահոգում էր մեկ հարց՝ ամեն ինչ անել, որ խորհրդային մարդիկ միայն հավանություն տան գորբաչովյան «վերակառուցմանը»: Մինչդեռ հակառակ դրան՝ վերակառուցմամբ ծնված հրապարակախոսության, ժողովրդավարության կարգախոսները ունեցան այն դրական նշանակությունը, որ մարդիկ դարձան էլ ավելի համարձակ, և իշխանությունների առջև բարձրացրին իրենց հուզող հարցերը: Մեր պայմաններում թերևս ամենագլխավոր հարցը Լեռնային Ղարաբաղի հարցն էր, որն օր օրի ավելի մեծ հնչեղություն և համաժողովրդականություն էր ստանում՝ դառնալով տարբեր մակարդակներում ամենօրյա քննարկման հարց: Եվ հենց 1988 թ. մայիսի 17-ի հանրահավաքում Վանո Սիրադեղյանը, Մատենադարանի մոտ ելույթ ունենալով, հնչեցրեց այն դառը ճշմարտությունը, որ Մոսկվային այնքան էլ չի հետաքրքրում հարցի լուծումը, և որ ինքը, վերջերս մի քանի շաբաթով լինելով Մոսկվայում և շփվելով տարբեր մարդկանց հետ, էլ ավելի է համոզվել դրանում: Մոսկվայի համար մեզ հետաքրքրող հարցերը գոյություն չունեն, և դա դառը ճշմարտություն է: Իհարկե, հնարավոր է, որ որոշ ժողովուրդներ, որոնք ևս ժամանակին տուժել են, այլ կերպ

են մտածում, բայց ժողովրդի, մտավորականության լավագույն ներկայացուցիչները պետք է ավելի շատ մտահոգված լինեն համամարդկային հոգսերով, կրեն համամարդկային արդարության գաղափարները և ոչ թե սոսկ մտածեն միայն հանգստի, մի կտոր հացի, մի շիշ օղու, բայց ոչ թե ինչ-որ մի ժողովրդի, ընդ որում, բավական փոքր ժողովրդի մասին: Անելով նման դատողություն՝ Վանո Սիրադեղյանը նկատի ուներ մեր ժողովրդին, որի վերաբերյալ ամենօրյա ձևախեղված քարոզչությունն իր հերթին խանգարում էր մարդկանց իմանալու ճշմարտությունը: Խորհրդային համակարգն այնպիսին էր, որ նրա համար կարևոր չէր՝ դու մուսուլման ես, թե քրիստոնյա, քանի որ դա բխում էր երկրում գործող ռեժիմի (համակարգի – Հ. Ա.) տրամաբանությունից[120]:

Նմանօրինակ ոգեշունչ ելույթ է ունեցել նաև «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանը, որն ամփոփել և գնահատել է Արցախյան շարժման առաջին երեքամսյա պայքարի արդյունքները, և նշել, որ իրենց պայքարը, պահանջները արդարացի են, և համապատասխանում են երկրի սահմանադրության ոգուն, իսկ Լեռնային Ղարաբաղի միացումը Խորհրդային Հայաստանին պահանջը ողջ հայ ժողովրդի սրբազան գործն է:

Վերհիշեցնելով Լեռնային Ղարաբաղի աշխատավորության պահանջը Մարզային խորհրդի, կուսակցական մարզային կոմիտեի որոշումները՝ Լեռնային Ղարաբաղը մայր հայրենիքին միավորման մասին, որը ներկայացվել էր երկրի ամենաբարձր կուսակցական մարմիններին, Լևոն Տեր-Պետրոսյանը նշել է նաև այն մասին, որ ցավոք, առ այսօր Ղարաբաղը մերը չէ, և կան նաև տասնյակ զոհեր Սումգայիթում և այլուր: Եվ եթե Բաքուն հայ ժողովրդի արդարացի պահանջներին պատասխանեց Սումգայիթի կացնով, իսկ Մոսկվան Երևանի երկնքում՝ ուղղաթիռներով, ապա հայ ժողովրդին մնում է միայն մեկ բան՝ ետ չկանգնել իր պահանջներից և պայքարել մինչև վերջ[121]:

---

[120] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 2, թ. 9:
[121] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 2, թ. 16:

Հասկանալի է, որ նման ելույթը պետք է առաջացներ Աղրբեջանի նկատմամբ հանրահավաքի հարյուր հազարավոր մասնակիցների օրինական զայրույթը և նաև այն ոգևորությունը, որ Արցախի հարցի լուծման միակ ճանապարհը մինչև վերջ պայքարելն էր: Իսկ որ ամենօրյա հանրահավաքները, նրանցում հնչած ելույթները, տարբեր կարգի կոչերը էլեկտրականացնում էին զանգվածներին, հաճախ ոգևորում, շատ հմտորեն օգտագործում էին հանրահավաքների կազմակերպիչները, էլ ավելի բարձրացնում իրենց հեղինակությունը, դառնում ժողովրդի համար սիրելիներ, հերոսական կերպարներ: Նրանց հետ հանդիպումները նրանց լսելը դառնում էր ամենօրյա պահանջ:

Քանի որ հանրապետությունում ստեղծված, ըստ կենտրոնի, պայթյունավտանգ վիճակն օր օրի էլ ավելի էր շիկանում, 1988 թ. մայիսի 20-ին Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի որոշմամբ նրա առաջին քարտուղար Կարեն Սերոբի Դեմիրճյանը ազատվեց Կենտկոմի առաջին քարտուղարի և բյուրոյի անդամի պարտականություններից՝ իհարկե, հիմնավորելով, որ իբր դա արվում էր նրա առողջական վիճակի պատճառով: Իրականում դա քայլ էր հանրապետությունում ստեղծված լարված վիճակը մի փոքր լիցքաթափելու համար: Գնահատելով Կարեն Դեմիրճյանի դիրքորոշումը Արցախյան շարժման, «Ղարաբաղ» կոմիտեի նկատմամբ՝ կոմիտեի անդամներ Ռաֆայել Ղազարյանը, Համբարձում Գալստյանը նշում են, որ Կարեն Դեմիրճյանը պատմության մեջ կմտնի որպես «Կարեն ոչինչ»՝ ավելացնելով, որ «Ղարաբաղ» կոմիտեն, Ղարաբաղյան շարժումը ուրիշ ոչինչ չունեն ասելու նրա մասին, քանի որ Կարեն Դեմիրճյանը կոմիտեի համար քաղաքական դիակ է[122]: Նույն օրը Կենտկոմի բյուրոն նրա առաջին քարտուղար է ընտրել Սուրեն Հարությունյանին[123], որը նախկինում երկար տարիներ հանրապետությունում կոմերիտմիության Կենտկոմում առաջին քարտուղար էր աշխատել, իսկ հետո զբաղեցրել բարձր դիրք ԽՄԿԿ կենտկոմում:

---

[122] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 3, թ. 48-49:
[123] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 24, թ. 2:

Սուրեն Հարությունյանը, իհարկե, քայլեր ձեռնարկեց ժողովրդի շրջանում վստահություն շահելու համար՝ փորձելով մասսաներին համոզել, որ թե՛ հանրապետության Կոմկուսը և թե՛ ԽՄԿԿ կենտկոմը մտահոգ են այդ հարցով, և ԽՄԿԿ կենտկոմի առաջիկա պլենումում այլ հարցերի շարքերում քննարկվելու է նաև Լեռնային Ղարաբաղի հարցը: Ժողովրդական զանգվածներին հանգստացնելու և որոշակի հույսեր ներշնչելու, շարժումն էլ այլ հունով տանելու նպատակով ՀԿԿ կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը հունիսի 13-ին ելույթ է ունեցել Թատերական հրապարակում «Ղարաբաղ» կոմիտեի կողմից կազմակերպված բազմահազարանոց հանրահավաքում՝ վստահորեն ասելով, որ Ղարաբաղյան հարցը փակված չէ. այն հիմնավորապես ուսումնասիրվում է ԽՄԿԿ կենտկոմում, որ շատ կարևոր է, ինքը մի քանի օր առաջ այդ հարցով եղել էր Մոսկվայում և հանդիպել Մ. Գորբաչովի հետ: Այնուհետև ընթերցել է որոշման այն նախագիծը, որը պետք է քննարկվեր և ընդունվեր Հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանում հունիսի 15-ին, որը պետք է հեռարձակվեր հեռուստատեսությամբ:

Սուրեն Հարությունյանն իր ելույթում շատ նրբորեն անդրադարձել է նաև Սումգայիթյան հարցին և հսկայական զանգվածներին ասել, որ որքան էլ այդ հարցը բարձրացված է և Սումգայիթի մասին դեռ կարծիքներ կլինեն և այլն ,այնուամենայնիվ երևի նպատակահարմար չէ Լեռնային Ղարաբաղի՝ այդքան կարևոր պատմական նշանակություն ունեցող հարցի հետ բարձրացնել նաև նշված հարցը: Իհարկե, քննարկելու են այդ հարցը: Բացի դրանից՝ ստեղծվել է հատուկ հանձնաժողով և այլն: Կարելի է չհամաձայնել Սուրեն Հարությունյանի այդ կարծիքին, քանի որ հենց այդ փաստը կարելի էր օգտագործել Ադրբեջանին, նրա իշխանություններին մեղադրելու ընդհանրապես հակահայկական քաղաքականություն իրականացնելու մեջ: Բայց շարունակելով իր խոսքը՝ Սուրեն Հարությունյանը հանրահավաքի մասնակիցներին հայտնել է հետևյալը. «Մենք ստվեր կգցենք այդ որոշման վրա (նկատի ունի Լեռնային Ղարաբաղի հարցը – ընդգծումը մերն է՝ Հ. Ա.), եթե այն տեղի ունենա հանրապետու-

թյունում շարունակվող գործադուլների, նստացույցերի պայմաններում, քանի որ այն կարող է ունենալ ոչ այնքան լավ արձագանքներ»: Ելնելով դրանից նա կոչ է արել հանրահավաքի մասնակիցներին դադարեցնել այն՝ իհարկե, թողնելով, որ դա նրանք որոշեն և այլն: Եվ քանի որ Սուրեն Հարությունյանը բավական լավ և վստահ էր տրամադրված, նույն ոգով էլ նա կոչ էր անում ժողովրդին, որ վերջինս ևս վստահ լինի ու չկասկածի հարցի արդյունքների մեջ[124]:

Դժվար չէ համոզվել, որ հանրապետության նոր ղեկավարը՝ Սուրեն Հարությունյանը, այնքան էլ լավ և խորությամբ չէր պատկերացնում շարժման թափը, ժողովրդի տրամադրությունները և երևի հույսը դնում էր իր պաշտոնի՝ Կենտկոմի առաջին քարտուղարի հեղինակության վրա:

Այդ նույն հանրահավաքում ելույթ է ունեցել նաև Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուկտետի դասախոս, ամբիոնի վարիչ Վլադիմիր Նազարյանը, որը պաշտպանել է Սուրեն Հարությունյանի ելույթը և հիմնավորել, որ Սումգայիթում հայերի նկատմամբ տեղի ունեցածը ցեղասպանություն է, և հունիսի 15-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկումը արդեն դրական լուծում է և այլն[125]:

Իհարկե, հասկանալի է, որ նման ելույթները չէին կարող բավարարել ժողովրդական զանգվածներին, քանի որ նրանք հանրապետության իշխանություններից, հատկապես Հայաստանի կոմկուսից, նրա առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանից ավելին էին պահանջում: Եվ երբ հաջորդ օրը՝ հունիսի 14-ին, Թատերական հրապարակում անցկացվող հերթական հանրահավաքում ելույթ է ունեցել Լևոն Տեր-Պետրոսյանը և հանրահավաքի մասնակիցներին ծանոթացրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմանը՝ կապված Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու վերաբերյալ, նշել է, որ Հայաստանի Գերագույն խորհուրդը մերժել է արցախցիների պահանջը՝ հիմնավորելով այն հանգամանքով, որ

[124] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 3, թ. 17:
[125] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 3, թ. 19:

իբր դրա իրականացումը հակասում է հայ և ադրբեջանական ժողովուրդների շահերին: Հանրահավաքի մասնակիցներին ներկայացնելով այդ որոշումը՝ Լևոն Տեր-Պետրոսյանը արել է ճիշտ դատողություն և ասել՝ մի թե Սումգայիթում կատարվածը չի վնասում հայ և Ադրբեջանի ժողովուրդների շահերին, նրանց բարեկամությանը[126]:

Դժվար չէ համոզվել, որ Խորհրդային Հայաստանի կոմկուսը, հանրապետության ղեկավարությունը կարծես ոչ մի քայլ առաջ չէին արել իրենց մտածողության մեջ և կրկին մնացել էին 1921 թ. հայտնի որոշման շրջանակներում, որն էլ նշանակում էր, որ պատմությունը նրանց ոչինչ չէր սովորեցրել: Գնահատելով հանրապետության ղեկավարության դիրքորոշումը, ինչպես Արցախյան շարժման, այնպես էլ Սումգայիթյան դեպքերի առթիվ՝ պետք է ասել, որ հանրապետության ղեկավարությունը պետք է քաջություն ունենար և հաղթահարեր հին մտածելակերպը և կանգներ ժողովրդի կողքին, գնար շարժման առջևից և ոչ թե հետևից: Եվ հենց դա էլ դարձավ այն գլխավոր պատճառը, որ հանրապետության ղեկավարությունը զրկվեց ժողովրդի աջակցությունից, նրա աչքում հեղինակազրկվեց և ասպարեզը տվեց նոր մարդկանց, նոր ուժերին, որոնք էլ գլխավորեցին համաժողովրդական շարժումը և տվեցին նրան այն ուղղությունը, որը, ըստ նրանց, ավելի ճիշտ էր, ավելի ազգապահպան և հայրենասիրական:

Իշխանությունը դատապարտող ելույթներ են ունեցել նաև Աշոտ Մանուչարյանը, Ռաֆայել Ղազարյանը և շատ ուրիշներ: Խոսելով այդ հարցերի մասին՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Ռաֆայել Ղազարյանն ասել է. «Մեր խնդիրն է հակադրվել կենտրոնին, վերևներին»: Նկատի ուներ Մոսկվային, կենտրոնական իշխանություններին, որոնք ամեն ինչ անում էին, որ այդ հարցը (նկատի ուներ Սումգայիթյան ջարդերը – Հ. Ա.) ընթացք չստանար, կոծկվեր, պատկերավոր ասած՝ մարեր: «Մինչդեռ մեր խնդիրն է,– նշում է Ռաֆայել Ղազարյանը,– այդ հարցը բոլոր մակարդակներում քննարկվի, պահանջելով, որ Հանրապետության Գերագույն խորհուրդը այդ մասին ըն-

[126] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 3, թ. 29:

դունի որոշում»[127]: Նույնպիսի ելույթներ են ունենում նաև Աշոտ Մանուչարյանը, Վանո Սիրադեղյանը, Համբարձում Գալստյանը և ուրիշներ:

Վանո Սիրադեղյանը հավաքի մասնակիցներին ներկայացրել է Մոսկվայում հրատարակված «Ժողովրդական կրթություն» N1 ամսագրում Միության կրթության նախարարության հրամանը, որով Սումգայիթ քաղաքը գաղափարաքաղաքական դաստիարակության ոլորտում սոցիալիստական մրցույթում ճանաչվել էր հաղթող և պարգևատրվել «Պատվո շքանշան»-ով՝ ավելացնելով, որ դա հենց Մոսկվայի վերաբերմունքն է, երբ սումգայիթցիները իրականացրել են սպանություններ, իսկ Մոսկվան նրանց սոցմրցույթում հաղթող է ճանաչում և այլն[128]:

Հետագա հանրահավաքներում ընդհանրացնելով Արցախյան շարժման անցած ավելի քան չորսամյա պայքարի արդյունքները՝ 1988 թ. հունիսի 21-ին Լևոն Տեր-Պետրոսյանը ճիշտ է նկատել, որ հայ ժողովուրդը պայքարում էր երկու ճակատով. առաջինը՝ ընդդեմ սեփական կառավարության, որը ժողովրդի կամքին համարժեք ձևով չպատասխանեց, հակադրվեց, և երկրորդ ճակատով՝ ընդդեմ Մոսկվայի և Բաքվի, որոնք հանդես էին գալիս միասնական ճակատով[129]:

Թատերական հրապարակում անցկացվող ամենօրյա հանրահավաքները սկսեցին շատ ավելի սուր բնույթ կրել, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ընդունեց հերթական ոչ հայանպաստ որոշումը:

1988 թ. հուլիսի 18-ին Կրեմլում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախաձեռնությամբ (նախագահ՝ Ա. Ա. Գրոմիկո) հրավիրվեց Գերագույն խորհրդի նախագահության նիստ, որը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի մասին Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին» հարցը:

---

[127] ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 3, թ. 40-49:
[128] Տե՛ս նույն տեղում, թ. 45:
[129] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 3, թ. 51:

Նիստը բացեց ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի անդամ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա. Ա. Գրոմիկոն: Նա հրապարակեց, որ օրակարգում կա մեկ հարց՝ «Լեռնային Ղարաբաղի առթիվ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին»:

Նիստում հաղորդումներով հանդես եկան Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Մ. Ոսկանյանը, Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ս. Բ. Թաթլիևը և Ադրբեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հ. Ա. Պողոսյանը:

Նախագահության նիստին ներկա էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մի խումբ պատգամավորներ Ադրբեջանական ԽՍՀ-ից և Հայկական ԽՍՀ-ից: Նիստի նյութերը և տվյալ հարցի մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած որոշումը հրապարակվել է մամուլում:

Բացելով նիստը՝ Ա. Ա. Գրոմիկոն նշել է, որ այդ հարցը իրենց համար նոր չէ: Այն ավելի վաղ՝ 1988 թ. մարտի 23-ին, քննարկվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստում, որտեղ նշվել են խորհրդային սահմանադրության և խորհրդային օրենսդրության պահանջների պահպանման պայմաններում ծավալվող այն միջոցառումների շարքը, որոնք կնպաստեն բնակչության շրջանում ազգային քաղաքականության լենինյան սկզբունքների ոգով իրականացվող աշխատանքի բարելավմանը: Նաև նշվել է, որ ԽՄԿԿ կենտկոմը և կառավարությունը մշակել և իրականացնում են Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տնտեսական և սոցիալ-մշակութային զարգացման հասունացած հարցերի արմատական լուծման միջոցառումներ:

Ինչպես տեսնում ենք, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը հարցին մոտենում էր տասնամյակներ շարունակ երկրում հաստատված քարացած սկզբունքներով՝ չփորձելով խորանալ նրա բուն էության մեջ: Ուստի շարունակելով իր միտքը՝ Ա. Ա. Գրոմիկոն նշում է, որ այդ բոլորից հետո Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադրությունը շարունակվում է շիկանալ, որի վկայությունը այդ հանրապետությունների իշ-

խանության բարձրագույն մարմինների վերջին շրջանում կատարած նստաշրջաններն են: Ա. Ա. Գրոմիկոն նկատի ուներ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թ. հունիսի 15-ի և Ադրբեջանի Գերագույն խորհրդի հունիսի 17-ի ընդունած իրար հակադիր որոշումները: Ա. Ա. Գրոմիկոն նաև այն միտքն է արտահայտել, որ ճիշտ որոշման որոնումը պետք է կատարվի ԽՍՀՄ սահմանադրության, սոցիալիստական արժեքների, ժողովուրդներից յուրաքանչյուրի կարծիքի, ավանդույթների, ազգային արժանապատվության փոխադարձ հարգման շրջանակներում:

Դժվար չէր համոզվել, որ աշխատանքի հին մեթոդները մեծ ուժով դեռ շարունակվում էին՝ էլ ավելի խորացնելով հատկապես ազգամիջյան առկա հակասությունները: Բայց ի պատիվ Խորհրդային Հայաստանի պատվիրակության ղեկավար, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Մ. Ոսկանյանի ելույթի՝ դահլիճում հնչեցին քննարկվող հարցի վերաբերյալ ճշմարիտ խոսքեր: Նա նշեց, որ իրենք մեծ պատասխանատվությամբ են վերաբերվում քննարկվող հարցին, որը շոշափում է ոչ միայն հայ և ադրբեջանական, այլև բոլոր խորհրդային ժողովուրդների շահերը: ԼՂԻՄ-ի խնդրի կապակցությամբ տարածաշրջանում ստեղծված տագնապալի ու լարված իրավիճակը ստիպում էր խորապես և բազմակողմանիորեն ըմբռնել խնդրի ծագման ակունքները, որոնել արդարացի լուծման ուղիներ՝ ելնելով ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքից:

Ներկայացնելով Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ պատմական ճշմարտությունը՝ Հ. Ոսկանյանը նշել է՝ սխալ որոշման հետևանքով վաղնջական հայկական մարզը՝ Լեռնային Ղարաբաղը, որի բնակչության 95 տոկոսը հայեր են, մեխանիկորեն պոկվեց Հայաստանից և մտցվեց Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ, որի հետ չհաշտվեց ո՛չ մարզի և ո՛չ էլ Հայկական ԽՍՀ-ի բնակչությունը:

Նման կարգի ելույթներ են ունեցել նաև Վիկտոր Համբարձումյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Սերգեյ Համբարձումյանը, գրող Վարդգես Պետրոսյանը և ուրիշներ[130]:

Անկախ այդ ամենից՝ Խորհրդային Միության Գերագույն խորհուրդը, երկրի ղեկավարությունը պատրաստ չէին խորանալ հարցի ճշմարտության մեջ, փոխել իրենց մոտեցումները՝ ընդունելով արդարացի լուծում: Դրա լավագույն վկայությունը Գերագույն խորհրդի նիստում Մ. Գորբաչովի ելույթն էր, որտեղ շատ լավ երևում էր, որ որքան էլ գորբաչովյան «վերակառուցումը» ենթադրում էր շատ հարցերի նկատմամբ, առավել ևս ազգային հարցի նկատմամբ ցուցաբերել նոր մոտեցումներ, նոր դիրքորոշումներ և այլն, միևնույն է, իներցիայի ուժով երկրի ղեկավարությունը շարունակում էր գործել հին մեթոդներով:

Խոսելով նշված հարցերի մասին՝ Մ. Գորբաչովն ասել է, որ պետք է չափազանց ուշադիր և պատասխանատու լինեն Գերագույն խորհրդի նախագահության նիստում քննարկման ներկայացված հարցի նկատմամբ: Դա համամիութենական մասշտաբի պրոբլեմ է, քանի որ այն ամենը, ինչ տեղի է ունենում պետության տարբեր մասերում, վերաբերում է ամենքին: Բոլորը կենսականորեն շահագրգռված են, որ ամենամեծ ու բարդ հարցերը լուծվեն հանգիստ, հիմնավորապես, ընդհանուր շահերին համապատասխան: Դրան պետք է ավելացնել այն, որ իրենք գործ ունենք մի պրոբլեմի հետ, որն իր արմատներով գնում է հեռավոր անցյալը[131]:

Ի վերջո լսելով բազմաթիվ այլ ելույթներ՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը քննարկվող հարցի վերաբերյալ ընդունեց համապատասխան որոշում, որում նշվում էր, որ Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ-ներում ստեղծված իրավիճակը վնաս է հասցնում այդ հանրապետությունների ժողովուրդներին ու ամբողջությամբ վերցրած ԽՍՀՄ-ի՝ որպես միասնական միութենական

---

[130] Տե՛ս «Սովետական Հայաստան», 24 մարտի, 1988, 19 հուլիսի, 1988:
[131] Տե՛ս «Սովետական Հայաստան», 19 հուլիսի, 1988:

բազմազգ պետության ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդմանը:

Գերագույն խորհուրդը նաև անթույլատրելի է համարում, երբ ազգային-տերիտորիալ բարդ հարցերը փորձում են լուծել պետական իշխանության մարմինների վրա ճնշում գործադրելու միջոցով, հույզերի ու կրքերի բորբոքման, ամեն կարգի ինքնագլուխ կազմակերպությունների ստեղծման մթնոլորտում, որոնք հանդես են գալիս ԽՍՀՄ Սահմանադրության մեջ վավերացված ազգային-պետական և ազգային-վարչական սահմանների վերաձևավորման օգտին, *ինչը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների* (ընդգծումը մերն է – Հ. Ա.):

Նույն բանը շատ ավելի ընդգծված և խտացված գույներով է ներկայացրել Մ. Գորբաչովը, երբ 1989 թ. սեպտեմբերին ԽՄԿԿ կենտկոմի պլենումը քննարկում էր «Ժամանակակից պայմաններում կուսակցության ազգային քաղաքականության մասին» հարցը, որտեղ նա նշում է, որ Հայաստանում և Ադրբեջանում, կապված Լեռնային Ղարաբաղի հետ, առաջացած հակամարտությունը կրում է ձգձվող և անչափ սուր բնույթ: Նա նաև նշում էր, որ Խորհրդային Միությունը, կուսակցությունը հակամարտության հենց սկզբից ձգտել են կարգավորել հարցը քաղաքական միջոցներով, որպեսզի Լեռնային Ղարաբաղում և երկու հանրապետություններում չստեղծվի բավական բարդ վիճակ: Նա նաև նշում էր, որ Խորհրդային Միությունը Լեռնային Ղարաբաղում իրականացնում է մասշտաբային խնդիրներ՝ ուղղված մարզի սոցիալական խնդիրների լուծմանը: Նույնիսկ այդ կապակցությամբ, նշում է Մ. Գորբաչովը ԼՂԻՄ-ում ստեղծվել է կառավարման Հատուկ կոմիտե: Բայց անկախ այդ ամենից, ըստ Մ. Գորբաչովի, բոլոր այդ միջոցառումները ցանկալի արդյունքներ չտվեցին: Ազգային երկպառակությունը, թշնամանքը այն

աստիճանի էին բորբոքվել, որ դեպքերի հետագա զարգացումը կարող էր հանգեցնել անկանխատեսելի հետևանքների[132]:

Դժվար չէ համոզվել, որ Խորհրդային Միության ղեկավարությունը նման կարգի հացերում, այսինքն՝ հատկապես ազգային, ազգամիջյան հարաբերությունների հարցում աշխարհին ուզում էր ներկայանալ որպես ազգերի, ժողովուրդների բարեկամությունն ամեն կերպ պաշտպանող, դրանք անչափ թանկ գնահատող երկիր, որի լավ օրինակը հենց բազմազգ Խորհրդային (ավելի քան 100 ազգեր, ազգություններ) Միությունն էր: Մինչդեռ կյանքը բավական փոխվել էր հենց գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականության շնորհիվ, երբ մարդիկ չէին հաշտվում առավել ևս այդ հարցում նախկինում թույլ տված սխալների հետ և ավելի համարձակ կերպով բարձրաձայնում էին այդ մասին: Ուստի հասկանալի է, որ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նման որոշումը այլ կարգի արձագանքներ կարող էր առաջացնել Խորհրդային Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում և ողջ հայության շրջանում: Հանրապետության, Երևան քաղաքի բազմաթիվ ձեռնարկություններին, գիտարտադրական միավորումները, ինստիտուտներն արագորեն արձագանքեցին այդ որոշմանը և դատապարտեցին այն: Դրանց շարքում հատկապես առանձնանում են այնպիսի ձեռնարկություններ, ինչպիսիք են «Տրանզիստիր», «Էլեկտրոն», «Սապֆիր» գիտարտադրական միավորումները, «Ռադիոկապ», «Մեխանիկայի» և գիտահետազոտական այլ ինստիտուտները, Հայկական ատոմակայանը, «Հայգազարտը», «Ալմազ» արտադրական միավորումը, «Էլեկտրաշարժիչների», «Հայէլեկտրամեքենաշինական» գործարանները, «Էրեբունի» թանգարանը, Երևանի պետական համալսարանը, նրա գրեթե բոլոր ֆակուլտետները, բազմաթիվ այլ կազմակերպություններ և այլն[133], որոնք բոլորն էլ դատապարտում էին ԽՍՀՄ Գերագույն

---

[132] Տե՛ս **Горбачев М. С.,** О национальной политике партии в современных условиях, доклад и заключительное слово на Пленуме ЦК КПСС 19, 20 сентября 1989 года, М., 1989, с. 29.

[133] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 22, թ. 161:

խորհրդի նախագահության նման որոշումը և կոչ անում ավելի միավորվել և պայքարել մինչև վերջ:

Տողերիս հեղինակը այդ տարիներին լինելով Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեի անդամ և արևելագիտության ֆակուլտետի կուսակցական կազմակերպության առաջին քարտուղար՝ հրավիրեց ֆակուլտետի կուսակցական ժողով, քննարկեց այդ հարցը և ընդունեց որոշում՝ դիմելու ԽՄԿԿ կենտկոմին, Միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդներին ասելու ճշմարտությունը Արցախյան շարժման մասին, քանզի հակառակ ճշմարտության Միութենական ռադիոկայանները, հեռուստահաղորդումները, հատկապես Միության «Ժամանակ» ծրագիրը խորհրդային ողջ ժողովրդին, ողջ աշխարհին ներկայացնում էին ճշմարտությունից հեռու, կեղծ հաղորդումներ, հոդվածներ, երկրով մեկ ստեղծում հակահայ տրամադրություններ:

1988 թ. նոյեմբերի 15-16 և 18-ին տեղի է ունեցել ԵՊՀ կուսակցական կազմակերպության 13-րդ կոնֆերանսը, որտեղ բազմաթիվ ելույթների շարքում ելույթ է ունեցել նաև տողերիս հեղինակը և նշել, որ հանրապետությունում ստեղծվել էր անառողջ բարոյաքաղաքական մթնոլորտ, որի պատճառը, այլ խնդիրներից զատ, գլխավորապես Հայաստանի կոմկուսն էր, նրա ղեկավարությունը, Կենտկոմը, որը Արցախյան շարժման օրերին չփորձեց ունկնդրել մասսաներին, չգնաց դեպի ժողովրդական զանգվածները, ինչն էլ առաջացրեց անդունդ, անվստահություն ժողովրդական զանգվածների և երկրի կուսակցական, պետական ղեկավարության միջև, որի պատճառով էլ կուսակցական շաբլոն կարգախոսները առավելապես ուղղված էին խանգարելու, խոչընդոտելու, որ մարդիկ դրսևորեն հետաքրքրություն, քանի որ երկար տարիներ կուսակցությունը մարդկանց նայում էր որպես ամբոխի, որը չուներ իր կարծիքը, իր տեսակետը, իսկ եթե անգամ ուներ, ապա դա սխալ էր. խելոք չէր, և խելոքը միայն իրենք էին՝ Կոմկուսը, նրա ղեկավարությունը և այլն: Եվ որքան էլ հայ ժողովուրդը, հատկապես նրա շարքային մասը Արցախյան շարժման ավելի քան ինը ամիսների ընթացքում ալեկոծվել էր, դուրս եկել ափե-

րից, դուրս եկել Ղարաբաղի համար պայքարի և այլն, ապա նույնպիսի ձևով այդ շարժմանը չարձագանքեցին հանրապետության կուսակցական, պետական, խորհրդային ղեկավարները, պաշտոնյա այրերը, քանզի նրանք չկարողացան հաղթահարել քարացած, իր դարն ապրած մտածողությունը և ասել, որ այդ շարժումը արդարացի է, որ այն ներառում է խորհրդային երկրի գրեթե 70-ամյա անարդարության դեմ պայքարը, ազգային հարցում թույլ տրված ձևախեղումների դեմ պայքարը և այլն: Ելույթում բարձրացվեցին նաև այլ հարցեր: Դիմեցինք կոնֆերանսի մասնակից ՀԿԿ կենտկոմի քարտուղար Գ. Գալոյանին՝ նշելով, որ Հայաստանի կոմկուսի կենտկոմի նման պասիվ դիրքորոշումը արդարացիորեն առաջացնում էր հայ ժողովրդի բոլոր խավերի արդարացի դժգոհությունը:

Կոնֆերանսում նման ոգով ելույթ ունեցան նաև բազմաթիվ այլ համալսարանականներ՝ Լենդրուշ Խուրշուդյանը, Բաբկեն Հարությունյանը, Գառնիկ Տոնոյանը և շատ ու շատ ուրիշներ, որոնք քննադատեցին Հայաստանի կոմկուսի նման վեհերոտ, պասիվ դիրքորոշումը՝ պահանջելով Միության ղեկավարության առջև բարձրացնել Լեռնային Ղարաբաղի մասին ճշմարտությունը և հայ ժողովրդին չմեղադրել «ծայրահեղության» («էքստրեմիզմի») մեջ և դատապարտել Սումգայիթյան ոճրագործությունը՝ դիտելով այն որպես ցեղասպանություն և կենտրոնի թողտվությամբ իրականացված քայլ և այլն[134]: Եվ դա է պատճառը, որ ամենօրյա հանրահավաքներում ժողովրդական զանգվածները դրսևորում էին իրենց դժգոհությունը Հայաստանի կոմկուսի կենտկոմի նկատմամբ՝ պահանջելով փոխել իր դիրքորոշումը, մոտեցումները՝ դիտելով դրանք որպես, մեղմ ասած, ոչ հայանպաստ: Իսկ դա նշանակում էր, որ «Ղարաբաղ» կոմիտեն հետևողականորեն շարունակում էր ճնշում գործադրել հանրապետության իշխանությունների վրա՝ պահանջելով կանգնել ժողովրդի կողքին, փոխել իր դիրքորոշումը, պաշտպանել «Ղարաբաղ» կոմիտեի, Արցախի ժողովրդի արդարացի պահանջները, ամեն ինչ անել

[134] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 11, թ. 44-45:

Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միավորելու համար և այլն: Սակայն հանուն ճշմարտության պետք է ասել, որ նման պահանջը հեռու էր իրականությունից: Հայաստանի կոմկուսը, ցավոք, մինչև վերջ մնաց ԽՄԿԿ կենտկոնի քաղբյուրոյի ընդունած հայտնի որոշման շրջանակներում՝ Ղարաբաղյան շարժումը դիտելով որպես բնակչության մի փոքր մասի՝ ծայրահեղականորեն տրամադրված մասի պահանջ, ինչն էլ ավելի էր մեծացնում ժողովուրդ-իշխանություն անդունդը, այդ հարցում ունեցած մոտեցումները:

Ելնելով այդ տրամաբանությունից՝ «Ղարաբաղ» կոմիտեն շարունակում էր իր պայքարը, տալիս գնահատականներ երկրում, հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի մասին, որոշում իր անելիքները: Գնահատելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության վերոհիշյալ որոշումը՝ «Ղարաբաղ» կոմիտեն նշում էր, որ հանրապետության բնակչության մեծամասնությունը մերժում և դատապարտում էր այն, որը ոչ միայն հակասում էր ազգերի ինքնորոշման հումանիստական սկզբունքներին, այլ նաև էլ ավելի էր սրում ազգամիջյան հարաբերությունները հատկապես Անդրկովկասում: «Ղարաբաղ» կոմիտեն նաև դատապարտում էր Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի դիրքորոշումը և շտապողականությունն այն բանի համար, որ վերջինս, հավանություն տալով Միության Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի որոշմանը, հանձնարարում և թելադրում էր հանրապետության բոլոր սկզբնական կուսակցական կազմակերպություններին ևս հավանություն տալ դրան՝ դրանով դրսևորելով հլու-հնազանդություն և շողոքորթություն վերադասի ընդունած որոշումների նկատմամբ:

Միաժամանակ գնահատելով Խորհրդային Հայաստանում ստեղծված իրավիճակը՝ «Ղարաբաղ» կոմիտեն գտնում էր, որ հանրապետության ղեկավարության ոչ հեռատես քաղաքականությունը հղի էր բավական լուրջ քաղաքական հետևանքներով: Հանրապետությունում սկիզբ առած ժողովրդավարական, համաժողովրդական շարժումը լրջորեն վերլուծելու փոխարեն հանրապետության ղեկա-

վարությունը տարբեր կարգի սպառնալիքներ էր հղում շարժման մասնակիցների և ղեկավարների նկատմամբ[135]:

Ցավալի էր նաև այն փաստը, որ ինչպես Միության, այնպես հանրապետության մամուլը, հեռուստատեսությունը ավելի շատ լի էին կեղծ, հակահայկական հոդվածներով, հաղորդումներով և այլ կարգի լուրերով, որ իբր հանրապետությունում սկսված շարժումը հրահրվել էր կաշառակերների և վերակառուցման հակառակորդների կողմից: Մինչդեռ իրադարձությունների համակողմանի և հետևողական վերլուծությունը, 1988 թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի հայտնի որոշումից սկսած, ցույց էր տալիս, որ նրա հիմքում առավել ևս այսուհետ պետք է դրված լիներ ազգային հարցի որոշման գաղափարը, և ԼՂԻՄ-ի միավորումը Հայաստանին համարվում էր համահայկական հարց, որի լուծմանը շահագրգիռ էր ողջ հայությունը: Այդ իմաստով Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի 1988թ. հունիսի 15-ի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միավորելու մասին, ազգային գաղափարների միասնության լավագույն մարմնավորումն էր: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետության քաղաքական ղեկավարությունը մուտք էր գործում երկրի դեմոկրատացման և ազգային ոգու բարձրացման ուղին, ուստի իրավունք չուներ լինելու Մոսկվայի կամքի հլու և լռակյաց կամակատարը: Նման հարցադրումներով «Ղարաբաղ» կոմիտեն ցանկանում էր, որ հանրապետության ղեկավարությունը միանա շարժմանը և ղեկավարի այն: Եվ երբ հանրապետության ղեկավարությունը դրսևորեր պատրաստակամություն՝ պայքարելու Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու ուղղությամբ, ապա իրենք պատրաստ էին ժողովրդի կողմից իրենց տված մանդատը վերադարձնել և դառնալ ժողովրդական շարժման շարքային անդամ և այլն[136]:

Նման ենթադրությունները բավական հեռու էին ռեալ իրականությունից, ուստի «Ղարաբաղ» կոմիտեն շարունակում էր իր ամե-

---

[135] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4516, ց. 1, գ. 15, թ. 13:
[136] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4516, ց. 1, գ. 15, թ. 14:

նօրյա գործունեությունը՝ կազմակերպելով տարբեր կարգի միջոցառումներ, որոնց շարքում ամենափորձված և ժողովրդի ոգին բարձր պահելու ձևերից մեկը ամենօրյա հանրահավաքներն էին, ընդ որում, ոչ միայն Երևանում՝ Ազատության հրապարակում, այլ նաև հանրապետության տարբեր քաղաքներում, շրջաններում, հատկապես Լենինականում, Կիրովականում, Հրազդանում, Աբովյանում, Ղափանում և այլուր: Հանրահավաքների կազմակերպմանը մեծապես օգնում էին նաև գրեթե բոլոր խոշոր գործարաններում, ձեռնարկություններում, բուհերում, գիտահետազոտական ինստիտուտներում ստեղծված «Ղարաբաղ» կոմիտեները, որոնք տեղերում ևս կազմակերպում էին տարբեր կարգի միջոցառումներ, կոչ անում իրենց հիմնարկների աշխատավորներին ակտիվորեն մասնակցել հանրահավաքներին, կազմակերպել գործադուլներ, դասադուլներ, որոնք շատ մեծ կռվան էին իշխանությունների վրա ազդելու և շարժումը միշտ արթուն պահելու համար:

«Ղարաբաղ» կոմիտեի աշխատանքի ավելի կազմակերպված ընթացքի և ընդլայնման համար որոշվեց «Ղարաբաղ» կոմիտեն պահպանել և դրան զուգահեռ, ընդհուպ մինչև Արցախը Խորհրդային Հայաստանին միավորելը, ստեղծել նաև «Հայոց համազգային շարժում» (ՀՀՇ) կազմակերպությունը[137]: Այդ նպատակով կազմվեց «Հայոց համազգային շարժման» ծրագրային փաստաթուղթը, որտեղ նշվում էին այն խնդիրները, ծրագրային, գաղափարական, կազմակերպչական այն դրույթները, որոնք անհրաժեշտ էին Արցախյան շարժումը կազմակերպելու և Արցախը մայր հայրենիքին միավորելու համար:

Նշված փաստաթղթում ներկայացված են Արցախյան շարժման ակունքները, նրա նախապատմությունը և նոր ձևավորվող «Հայոց համազգային շարժման» գաղափարական սկզբունքները: Նրանում հատկապես կարևորվում էր այն գաղափարը, որ Արցախյան շարժումը ներառել և ընդգրկում էր այն բոլոր հարցերը, որոնք կապված էին

[137] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4516, ց. 1, գ. 15, թ. 14:

հայ ժողովրդի ճակատագրի հետ, առանց չափազանցության՝ նրա գոյության հետ: Սկսելով 1988 թ. փետրվարյան դեպքերից՝ շարժումն օր օրի ընդգրկում էր նոր սահմաններ:

Արցախի միավորումը համարելով գլխավորը՝ այն իրականում վեր էր ածվում համազգային շարժման, ինչպես մասնակիցների թվով, այնպես էլ բարձրացրած գաղափարների բազմազանությամբ: Եվ քանի որ այն նորանոր մարդիկ էր ընդգրկում, ուստի «Ղարաբաղ» կոմիտեն որոշեց ձեռնամուխ լինել ստեղծելու «Հայոց համազգային շարժում» կազմակերպությունը, զուգահեռաբար, ինչպես ասվեց, պահպանելով նաև «Ղարաբաղ» կոմիտեն, Ղարաբաղյան շարժումը ընդհուպ մինչև Լեռնային Ղարաբաղը մայր հայրենիքի հետ միավորելը[138]:

Կարևորելով «Հայոց համազգային շարժման» գաղափարական սկզբունքները՝ ծրագրում նշվում էր, որ որպեսզի ամեն մի ազգ հնարավորություն ունենա դրսևորելու իր ունակությունները և իր ներդրումն ունենա համաշխարհային քաղաքականության մեջ, պետք է ինքնուրույն որոշի իր քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի բոլոր հարցերը, որի պայմաններում է հնարավոր ապահովել նաև յուրաքանչյուր անհատի իրավունքներն ու ազատությունը: Միաժամանակ կարևորվում էր այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը, իրականացնելով իր ազգային քաղաքականությունը, պետք է հենվի միայն իր ուժերի վրա և հույսը չկապի որևէ մեկի ողորմածության, հովանավորության հետ[139]:

Կարևոր էր այն հարցադրումը, որ Արցախյան շարժումն ուղղված չէր որևէ այլ ժողովրդի դեմ, քանզի հայ ժողովրդի կարևոր սկզբունքներից մեկն էր ապրել բոլոր ժողովուրդների հետ խաղաղության և համերաշխության մթնոլորտում: Ելնելով դրանից՝ «Հայոց համազգային շարժումն» իր գլխավոր նպատակներից մեկը համարում էր Արցախը մայր հայրենիքի հետ միավորումը: Կարևորվում էր նաև Խորհրդային Հայաստանի սուվերենության ընդլայնումը, տնտե-

---

[138] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4516, ց. 1, գ. 15, թ. 18:
[139] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 15, թ. 18-19:

սական ինքնուրույնության մեծացումը, ազգային ռազմական կազմավորումների ձևավորումը, դիվանագիտական կապերի ամրապնդումը հատկապես այն երկրների հետ, որտեղ առկա են առավել մեծ հայկական գաղթօջախներ, համայնքներ և այլն[140]:

Կարևոր էին համարվում նաև հանրապետությունում դեմոկրատացման գործընթացների զարգացումն ու ամրապնդումը, քանզի առանց դրա, ինչպես նշվում էր ՀՀԾ-ի ծրագրային փաստաթղթերում հնարավոր չէր իրականացնել մյուս խնդիրները: Այդ նպատակով խնդիր էր դրվում սահմանադրական եղանակով պայքարելու հանրապետությունում ընտրությունների դեմոկրատացման համար, հասնելու նրան, որ այդ ընտրություններն արտահայտեն ժողովրդի կամքը, իսկ չարտահայտելու դեպքում կարողանան ետ կանչել իրենց չարդարացրած պատգամավորներին, որ կարողանան ազատորեն անցկացնել հանրահավաքներ, կազմակերպել երթեր, հարկ եղած դեպքում գործադուլներ և այլն: Նաև նախատեսվում էր երկրում գործող սահմանադրությունից հանել այն հոդվածները, որոնք սահմանափակում էին մարդու իրավունքները, ազատությունը և այլն:

Միաժամանակ նոր ձևավորվող ՀՀԾ-ն իր ծրագրային փաստաթղթում նշում էր, որ պատրաստ էր համագործակցել Միության մյուս ժողովուրդների այն կազմակերպությունների հետ, որոնց գործողությունները, քաղաքական սկզբունքները և նպատակները չէին հակասում իրենց նպատակներին: Նույն ձևով ՀՀԾ-ն պատրաստ էր համագործակցել հանրապետության իշխանությունների հետ բոլոր այն դեպքերում, երբ նրանց գործունեությունը համապատասխանում էր հայ ժողովրդի շահերին:

Բնութագրելով նաև ՀՀԾ-ի կազմակերպական սկզբունքները՝ ՀՀԾ-ի ծրագրում նշվում էր, որ այն իր կառուցվածքով կենդանի օրգանիզմ է, որը կարող էր զարգանալ, ձևափոխվել իր գործունեության ընթացքում, ինչն էլ հնարավորություն կտար նրա յուրաքանչյուր մասնակցին, անհատին դրսևորելու նախաձեռնություն և հնարա-

[140] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 15, թ. 19-20:

մտություն: Միաժամանակ նշվում էր, որ յուրաքանչյուր ոք, ընդունելով ՀՀԾ-ի սկզբունքները, նպատակները, գործունեության ձևերը և դառնալով ՀՀԾ-ի անդամ, ինքն էր որոշում շարժմանը մասնակցելու ձևերը և աստիճանը[141]:

1988 թ. սեպտեմբերի 19-ին «Ղարաբաղ» կոմիտեն ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներին ուղերձ, հրահանգ էր ուղղել, որով առաջարկում էր մինչև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջան հրավիրելը հրավիրել հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջան և չեղյալ հայտարարել 1921 թ. հուլիսի 5-ի Կովկասյան բյուրոյի ոչ սահմանադրական որոշումը, որի հիման վրա էլ Լեռնային Ղարաբաղը, փաստորեն, ենթարկվեց անեքսիայի և բռնի ճանապարհով մտցվեց Ադրբեջանի կազմի մեջ:

ՀՀԾ-ի մյուս հարցադրումը վերաբերում էր 1988 թ. հուլիսի 18-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հանրահայտ հակահայկական որոշմանը, որը ՀՀԾ-ի կողմից նույնպես որակվում էր որպես հակադեմոկրատական և հակասահմանադրական, որը ոտնահարում էր ազգերի ինքնորոշման սկզբունքը:

ՀՀԾ-ն նաև պահանջում էր ստեղծել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտակարգ հանձնաժողով՝ նպատակ ունենալով ուսումնասիրելու հայ ժողովրդի եղեռնը, որը կազմակերպվել էր Սումգայիթում, զանգվածային թունավորումները Մասիսում, զինվորական ստորաբաժանումների բռնությունները «Զվարթնոց» օդանավակայանում, 1920-1988 թթ. հայերի նկատմամբ Ադրբեջանում, հատկապես Նախիջևանում իրականացված բռնությունները, խտրականությունը և այլն:

Բնական է, որ նման գնահատականներ տալով թե՛ Միության, թե՛ հանրապետության ղեկավար մարմինների գործունեությանը, ՀՀԾ-ն անհրաժեշտ էր համարում վերընտրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, որը հաշվի չէր նստել իրենց ընտրողների կարծիքի հետ և իրեն ժողովրդից ավելի բարձր էր դասել[142]:

---

[141] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 15, թ. 20-21:
[142] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 15, թ. 21-22:

Հայ ժողովրդի հետագա աջակցությունը ստանալու համար արցախցիները և Ստեփանակերտի թվով 17 ձեռնարկությունների, գործարանների տնօրեններ 1988 թ. սեպտեմբերի 12-ին և 25-ին հատուկ ուղերձներ են հղել հայ ժողովրդին՝ պահանջելով աջակցություն և, իհարկե, իրենց հերթին դատապարտելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հայտնի՝ 1988 թ. հուլիսի 18-ի որոշումը: Հայ ժողովրդին ուղղված կոչերում Արցախի հայությունը, ներկայացնելով Լեռնային Ղարաբաղում ստեղծված ծայրահեղ տագնապը, պայթյունավտանգ մթնոլորտը, նաև դատապարտում էր Լեռնային Ղարաբաղում հաստատված հատուկ դրությունը և պարետային ժամը՝ գտնելով, որ ժողովրդական շարժումը հնարավոր չէ ճնշել, կանգնեցնել մահակներով և զրահամեքենաներով: Ուստի ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը Լեռնային Ղարաբաղի անհապաղ դուրսբերումն էր Ադրբեջանի կազմից: Ներկայացնելով այդ ամենը՝ արցախցիները կոչ էին անում հայ ժողովրդին պաշտպանելու իրենց արդարացի պայքարը՝ գտնելով, որ միայն համատեղ պայքարով կարող էին հասնել Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծմանը[143]:

Բնական է, որ այդ հարցում Հայաստանի «Ղարաբաղ» կոմիտեն և նրա շարունակություն «Հայոց համազգային շարժում» (ՀՀՇ) կազմակերպությունը վճռական էին իրենց որդեգրած քաղաքականության և գործողությունների մեջ: ՀՀՇ-ն ամեն ինչ անում էր, որ ամեն օր Երևանում և թե հանրապետության տարբեր քաղաքներում ու շրջաններում կազմակերպվող հանրահավաքներում առիթ չտրվի ստեղծելու անկարգություններ, կանխամտածված խժդժություններ, պրովակացիաներ և այլն, որոնք հատկապես առիթ կարող էին տալ համապատասխան մարմիններին, օգտվելով նաև այն հանգամանքից, որ հանրապետությունում հաստատվել էր արտակարգ իրավիճակ, դիմելու ավելի խիստ միջոցների, ձերբակալությունների, տարբեր կարգի սահմանափակումների և այլն: Հանրահավաքների ամենօրյա կազմակերպիչները, որպեսզի շարժումը դուրս չգար ափերից

[143] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 15, թ. 22-24:

և չդառնար անկառավարելի, գրեթե ամեն օր վերլուծում էին Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը և փորձում ցույց տալ այն ուղիները, որոնք կանգնած էին հայ ժողովրդի առաջ՝ լուծելու Լեռնային Ղարաբաղի հարցը: Հանրահավաքներում ելույթ ունեցողները, հատկապես Լևոն Տեր-Պետրոսյանը, Վազգեն Մանուկյանը, Վանո Սիրադեղյանը, Աշոտ Մանուչարյանը, Համբարձում Գալստյանը, Ալեքսան Հակոբյանը և շատ ուրիշներ նշում էին Արցախյան շարժման լուծման երեք ուղի, երեք ճանապարհ: Այդ ուղիները ավելի համակարգված ձևով 1988 թ. սեպտեմբերի 25-ին ներկայացրեց Աշոտ Մանուչարյանը:

Առաջինը բավական հին, ավելի քան 70 տարի լավ տրորված ճանապարհ էր՝ լացակումած նամակներ, դիմումներ, ժողովրդական կոչեր, ուղերձներ, խնդրանքներ, աղաչանքներ ուղղելը, որոնցով ընթացել է նաև Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը՝ հավատալով, որ այդ ճանապարհով կարող է հարցը լուծվել: Մինչդեռ այդ ճանապարհը ժողովրդի աչքում վաղուց արժեզրկվել էր:

Երկրորդ ուղին «Ղարաբաղ» կոմիտեի առաջարկած ուղին էր, որը պաշտպանվում էր նաև ողջ հայ ժողովրդի կողմից: Դա օրենքի շրջանակներում պայքարի սահմանադրական ուղին էր, որն ընդունում էր հասարակական ելույթների, հասարակական գործունեության սահմանադրական բոլոր ձևերը: Դրանք դրսևորվում են հանրահավաքների, շքերթների, դիսպուտների, երկխոսության, կենդանի վեճերի, կարծիքների համադրման, մտքերի փոխանակության և որպես ծայրահեղություն՝ համաժողովրդական գործադուլների միջոցով:

Եվ վերջապես պայքարի երրորդ ուղին, ըստ Աշոտ Մանուչարյանի, այն էր, որ երբ երկու ուղին որևէ արդյունք չէին տալիս, ստիպված պետք էր դիմել զինված պայքարի:

Ներկայացնելով այդ ամենը՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները նաև գտնում էին, որ պայքարի երրորդ ձևը հանցագործություն է[144]:

---

[144] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 15, թ. 25-26:

Ինչպես տեսնում ենք, «Ղարաբաղ» կոմիտեն անչափ շահագրգիռ էր, որ համաժողովրդական շարժումը դուրս չգար ափերից և միայն ընթանար սահմանադրական եղանակով: Իսկ դա բավական ձեռնտու էր «Հայոց համազգային շարժմանը», որպեսզի այն իշխանությունների հետ խոսեր սահմանադրական դիրքերից՝ ստանալով նաև բարոյական աջակցություն Խորհրդային Միության հատկապես այն ժողովուրդների, ազգերի կողմից, որոնք ևս ունեին նման խնդիրներ: Խոսքը հատկապես վերաբերում էր Մերձբալթյան ժողովուրդներին, հանրապետություններին, որոնք Միության ղեկավարությունից, ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյից պահանջում էին վերանայել և նոր գնահատական տալ 1939 թ. օգոստոսի 23-ի պատմությանը հայտնի Ռիբբենտրոպ-Մոլոտով պակտին, որը գաղտնի գործարք էր Ստալինի և Հիտլերի միջև, մյուս հարցերից զատ՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան դարձնել Խորհրդային Միության ազդեցության գոտի, որն էլ իրականացրեց Ստալինը՝ 1940 թ. Մերձբալթիկան միացնելով Խորհրդային Միությանը, ինչի հետ մերձբալթյան ժողովուրդները այդպես էլ չհաշտվեցին: Եվ այժմ, երբ արցախահայությունը ելել էր արդար պայքարի, մերձբալթյան ժողովուրդները տարբեր առիթներով իրենց համակրանքն էին հայտնում հայ ժողովրդին, արցախցիներին, ընդունում համապատասխան որոշումներ, հաճախ պատվիրակություններ ուղարկում Երևան, մասնակցում Ազատության հրապարակում կազմակերպված բազմահազարանոց հանրաքվեներին, հրապարակում իրենց որոշումները Արցախյան շարժման նկատմամբ և այլն:

1988 թ. հոկտեմբերի 1-2-ին հրավիրվել է Էստոնիայի ժողովրդական ճակատի կոնգրեսը և միաձայն ընդունել դիմում՝ ուղղված Էստոնիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությանը «Լեռնային Ղարաբաղի և Հայկական ԽՍՀ-ի իրադարձությունների մասին», որտեղ լուրջ անհանգստություն էր հայտնում Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988 թ. հուլիսի 18-ի այդ առթիվ ընդունած որոշման կապակցությամբ: Որոշման մեջ հատկա-

պես նշվում էր, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը, ցավոք սրտի, չփարատեց մարդկանց մեջ այն հավատը, որոնք շահագրգիռ էին, որ այդ խնդրի վերջնական լուծումը բխեր վերակառուցման, խորհրդային երկրի բոլոր ժողովուրդների շահերից: Կոնգրեսը նաև ճիշտ էր նշում, որ ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների որոշման անտեսումը չի համապատասխանում կուսակցության հռչակած գլխավոր գծին:

Ժողովրդական ճակատի կոնգրեսը ճիշտ էր նկատում, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը ոչ օբյեկտիվ և միակողմանի գնահատական է տվել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի արդարացի պայքարին՝ որակելով այն որպես կոռումպացված, քրեական էլեմենտների և սադրիչների կողմից հրահրված շարժում, որը մտահոգիչ է, առավել ևս, երբ մարդիկ պայքարում են արդարության և հրապարակայնության համար: Կոնգրեսը նաև իրավացիորեն բարձրացնում էր այն հարցը, որ երկրի իշխանությունների կողմից քաղաքական և բարոյական հստակ գնահատական չէր տրվել Սումգայիթում իրականացված անմարդկային ջարդերին: Կոնգրեսը նաև նկատում էր՝ պատմական փորձը ցույց է տալիս, որ Լեռնային Ղարաբաղի նման խնդիրները ուժով չեն լուծվում՝ կոչ անելով բանական, հավասարակշռված մոտեցում, ելնելով ժողովուրդների, ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքից: Եվ անչափ ճիշտ է կոնգրեսի այն որոշումը, առաջարկը, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ճակատագրի որոշումը պատկանում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդին և ոչ թե Մոսկվային: Եվ որպես համերաշխություն Էստոնիայի ազգային ճակատի կոնգրեսի նման որոշման՝ «Հայոց համազգային շարժումը» ողջույնի հեռագիր ուղարկեց Էստոնիայի ազգային ճակատին, շնորհավորեց նրանց ժողովրդական ճակատի համագումարի հրավիրման համար՝ որակելով նման ներկայացուցչական ժողովի՝ ֆորումի հրավիրումը որպես մեծ հաղթանակ, որը հաս-

տատում է ժողովրդի կամքը՝ գնալու իրական ժողովրավարության և ժողովրդաիշխանության ուղիով[145]:

1988 թ. հոկտեմբերի 14-ին, Երևանի Թատերական հրապարակում հրավիրված հանրահավաքում խոսելով Արցախյան շարժման արձագանքների մասին, կոմիտեի անդամները՝ Լևոն Տեր-Պետրոսյանը, Աշոտ Մանուչարյանը, Վազգեն Մանուկյանը, Վանո Սիրադեղյանը, Համբարձում Գալստյանը և շատ ուրիշներ, նշեցին, որ նման կարգի որոշումներ ընդունել են Մերձբալթյան մյուս հանրապետությունները, ինչպես նաև այլ հանրապետություններ: Անդրադառնալով այդ հարցերին՝ Համբարձում Գալստյանը ընդգծեց, որ հուլիսի 9-ին Լիտվայում հրավիրված Ազգային ճակատի կոնգրեսին հրավիրվել էին նաև «Ղարաբաղ» կոմիտեի անդամները[146]:

Իսկ այդ օրերին հրավիրված համաժողովրդական հանրահավաքում, որը նվիրված էր նաև ԽՄԿԿ 19-րդ կոնֆերանսի պատգամավորների հետ հանդիպմանը, մտահոգություն էր հայտնվել նաև Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների առթիվ, և հեռագիր էր հղվել ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին՝ առաջարկելով այդ խնդիրը լուծել Խորհրդային Միության բոլոր հանրապետությունների և միջազգային դիտորդների մասնակցությամբ, Լեռնային Ղարաբաղի ողջ ժողովրդի կամարտահայտության միջոցով:

Հասկանալի է, որ նման որոշումները բխում էին հայ ժողովրդի և արցախահայության շահերից, որի համար էլ բոլոր կարգի հանրահավաքներում, ընդ որում՝ թե՛ Լեռնային Ղարաբաղում, թե՛ Խորհրդային Հայաստանում և հատկապես՝ Երևանում, հնչում էին նման կարգի ելույթներ, կոչեր՝ ուղղված ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդին և այլ ատյաններին՝ պաշտպանելու Լեռնային Ղարաբաղի և ողջ հայ ժողովրդի արդարացի պահանջը:

---

[145] Տե՛ս ՀԱԱ , ֆ. 1678, ց. 1, գ. 15, թ. 29-30:
[146] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց. 87, գ. 24, թ. 60-61:

Խոսելով այդ հարցերի մասին՝ Լեռնային Ղարաբաղի Հաղրութի թանգարանի տնօրեն Արթուր Մկրտչյանը 1988 թ. սեպտեմբերի 9-ին Թատերական հրապարակում ունեցած իր ելույթում քննադատել է 1988 թ. հուլիսի 18-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անարդարացի որոշումը՝ նշելով, որ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը համաձայն չէ այդ որոշմանը և պայքարելու է մինչև հաղթական ավարտը, մինչև Հայաստանի հետ վերամիավորվելը: Նա նաև ընդգծել է, որ Լեռնային Ղարաբաղում միավորվել են բանվորը և մտավորականը, կուսակցական և խորհրդային աշխատողը, և 1988 թ. օգոստոսի 24-ին Մարզային խորհուրդը, 4-րդ անգամ արտահայտելով ժողովրդի կամքը և կարծիքը միավորվելու Հայաստանի հետ, ընդունել է համապատասխան որոշում, որքան էլ մամուլը թաքցրել է այդ որոշումը: Նա նաև նշում էր, որ այդ որոշումը ժողովրդի մղած պայքարի պատմության մեջ կմտնի որպես նոր էջ, և Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը վճռականորեն դեմ է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի որոշմանը, որն էլ մեծ ուժով արտահայտվում էր այդ օրվա համաժողովրդական հանրահավաքում, երբ մարդիկ իրենց ելույթներում անչափ մեծ դժկամություն էին հայտնում այդ որոշման կապակցությամբ: Նման որոշումներ էին ընդունել նաև այդ օրվա հանրահավաքին մասնակից բազմաթիվ ու բազմաթիվ կոլեկտիվներ, որոնց ներկայացուցիչները դրանք ներկայացնում էին և հրապարակում հարյուր հազարավոր մարդկանց, դրանով նպաստում ողջ ժողովրդի էլ ավելի համախմբմանը «Ղարաբաղ» կոմիտեի շուրջ:

Եվ քանի որ ժողովրդի շրջանում կասկածելի լուրեր էին տարածվում, որ իբր Երևանում ժողովուրդը չի պաշտպանում Արցախյան շարժումը, Արթուր Մկրտչյանն իր ելույթում փարատում էր այդ կասկածելի լուրերը և համոզմունքով նշում, որ հենց Թատերական հրապարակում հավաքված վիթխարի ամբոխը արցախցիների կողմն է: Նա նաև խրախուսող մտքեր էր արտահայտում՝ նշելով, որ ինքը հավատում է, որ այդ լուրերը կեղծ են՝ կոչ անելով, որ յուրաքանչյուր հայի պարտքն է պայքարել Արցախի համար, որն էլ պետք է դառնա

մեր առաջին քայլը մեր հետագա նվաճումների համար: Նա նաև հայտարարում էր, որ խորհրդային կառավարությունը ոչնչի չի հասնի՝ փակելով մեր բերանները, և ԼՂԻՄ-ը ապագա չունի Ադրբեջանի կազմում: Եվ եթե խորհրդային կառավարությունը շահագրգիռ էր հայերի ճակատագրով, ապա ինչո՞ւ չէր նկատում Ադրբեջանի բազմաթիվ տարածքներում հայերի նկատմամբ իրականացվող հալածանքներն ու ճնշումները՝ թվարկելով շատ շրջաններ: Ադրբեջանը շարունակում էր հայության նկատմամբ մուսաֆաթիստական Ադրբեջանի և Օսմանյան Թուրքիայի ավանդույթները:

Արթուր Մկրտչյանը արդարացիորեն քննադատում էր նաև հայ մամուլի դիրքորոշումը, որը լռել էր և այլևս չէր գրում այն մասին, որ Արցախը պետք է վերամիավորվի Հայաստանի հետ՝ կոչ անելով հայ ժողովրդին, որ նա պահանջի իր կառավարությունից կանգնել ժողովրդի կողքին: Նա նաև նշում էր, որ Խորհրդային Հայաստանը, ինչ խոսք, ուներ շատ խնդիրներ, բայց չպետք էր խուսափել գլխավոր խնդրից, և առաջին հերթին պետք էր լուծել Արցախի հարցը՝ կոչ անելով սերտ քաղաքական կապեր հաստատել Լեռնային Ղարաբաղի հետ:

Անդրադառնալով Սումգայիթի և Ադրբեջանի հայաբնակ մյուս քաղաքներում իրականացվող ջարդերին՝ Արթուր Մկրտչյանը բարձրացնում էր այն հարցը, որ անհրաժեշտ էր ապացուցել, որ դա գենոցիդ է, և Ադրբեջանը 68 տարի անընդհատ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ վարվել է որպես գաղութի: Նա նաև հարց էր բարձրացնում, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ճանաչեր 1915 թ. ցեղասպանությունը:

Ա. Մկրտչյանն իր ելույթում իրավացիորեն զուգահեռներ է անցկացրել Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի կուսակցական, պետական ղեկավարության և ժողովրդի փախհարաբերությունների վերաբերյալ և հարց բարձրացրել այն մասին, թե ինչու Վեզիրովի գլխավորությամբ Ադրբեջանի ղեկավարության և ժողովրդի միջև կա միասնություն, և Ադրբեջանում ժողովրդական հանրահավաքները անցկացվում են Ադրբեջանի կոմունիստական կու-

սակցության կենտկոմի շենքի առաջ, իսկ Խորհրդայի Հայաստանի կոմկուսն արգելում է, որ Երևանում հանրահավաքներ իրականացվեն Թատերական հրապարակում:

Նույնպիսի ոգով ելույթ է ունենում նաև «Կռունկ» կազմակերպության անդամ Արաքսյա Հայրապետյանը, որը ցավում է այն բանի համար, որ հայ ժողովուրդը իր արդարացի պահվածքի, պահանջի համար վճարում է՝ տալով զոհեր, արժանանում ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի ոչ արդարացի, ոչ օբյեկտիվ գնահատականին, իսկ Հայաստանի ղեկավարությունն իր աչքերը փակում է այդ ամենի վրա: Միաժամանակ նա պաշտպանում էր այն մարդկանց, այն անհատներին ու ղեկավարներին, որոնք թե՛ Լեռնային Ղարաբաղում, թե՛ Խորհրդային Հայաստանում պաշտպանում էին Արցախյան շարժումը: Եվ որպես օրինակ նշում էր Ստեփանակերտի հրատարակչության տնօրենին, որը պաշտպանում էր Արցախյան շարժումը և հայտարարում, որ, եթե նման մարդիկ ենթարկվեն հետապնդումների, ապա ձեռնարկությունը կհայտարարի գործադուլ: Արցախը պատկանում է Հայաստանին, ու անհրաժեշտ է պայքարել մինչև վերջ և այն[147]:

Քանի որ մարդկանց ամենից շատ այդ օրերին հուզում էր 1988 թ. հուլիսի 18-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անարդարացի որոշումը, ուստի հանրահավաքներում և ամենուր մարդիկ իրենց արդարացի վրդովմունքն էին արտահայտում այդ առթիվ և կոչ անում ժողովրդին չվհատվել և պայքարել մինչև վերջ:

Իրենց նպատակին հասնելու համար «Ղարաբաղ» կոմիտեի անդամները հանդիպումներ էին ունենում նաև հանրապետության ղեկավար շրջանների հետ և արդյունքների մասին հայտնում ամենօրյա հանրահավաքներում: Սեպտեմբերի 26-ի (1988 թ. – Հ. Ա.) հանրահավաքում Վանո Սիրադեղյանը հայտնում է այն մասին, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Վազգեն Մանուկյանը, Դավիթ Վարդանյանը հանդիպել են ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագա-

[147] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 23, թ. 15-16, 31-32:

հության նախագահ Հրանտ Ոսկանյանի հետ և հայտնել իրենց անհանգստությունը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հուլիսի 18-ի անարդարացի որոշման վերաբերյալ, բայց նաև նշել, որ բանակցություններում հաղթում է ոչ թե նա, ով ավելի ճկուն է կամ դիվանագետ, այլ նա, ով իր թիկունքում ունի հզոր ուժ՝ նկատի ունենալով հայ ժողովրդին, որի ոգին չէր մարել և շարունակում էր պայքարել:

Այդ նույն հանրահավաքում ելույթ է ունեցել նաև ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Նազիկ Ներսիսյանը, որը նշում էր, որ ինքը հանրահավաքի է եկել իր կոլեկտիվի անդամների և իր ընտրողների խնդրանքով, և ինքը նախաձեռնել է և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առջև հանդես է եկել պահանջով՝ հրավիրել Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան, որը, ցավոք, մերժվել է, որով էլ, ինչպես ինքն է ասում, ոտնահարվել են իր պատգամավորական իրավունքները:

Նույն ոգով է ելույթ ունեցել նաև Հայկական ատոմակայանի աշխատակից Հրաչ Շիրվանյանը՝ նշելով, որ ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանը եղել է իրենց ատոմակայանում, որի առաջ կրկին հարց է բարձրացվել՝ հրավիրելու հանրապետության Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան, որին, ցավոք, Ֆադեյ Սարգսյանը պատասխանել է, որ դա անարդյունավետ է, քանի որ Աղրբեջանը և մյուս խորհրդային հանրապետությունները հանդես կգան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշման դեմ, որն էլ կդառնա անարդյունավետ: Ի նշան Ֆադեյ Սարգսյանի նման անդեմ ելույթի՝ Հայկական ատոմակայանի կոլեկտիվը հայտարարել է գործադուլ: Իսկ Երևանի պետական համալսարանի հայկական բանասիրական ֆակուլտետի ուսանող Վարդան Պետրոսյանն իր ելույթում ներկայացրել է ֆակուլտետի կոլեկտիվի ժողովի որոշումը, ըստ որի՝ պահանջվում էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունից բավարարել պատգամավորների մեծ մասի պահանջը և անհապաղ հրավիրել արտահերթ նստաշրջան: Ժողովը նաև իր անհամաձայնությունն էր հայտնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի որոշման առթիվ՝ նշելով, որ Լեռնային Ղարաբաղում ըն-

թացող իրադարձությունները ցույց են տալիս, որ ԼՂԻՄ-ը չի կարող մնալ Ադրբեջանի վարչական ենթակայության տակ, ուստի անհապաղ այն պետք է դուրս հանվի Ադրբեջանի կազմից և միավորվի Խորհրդային Հայաստանին: Ժողովը նաև անիմաստ էր համարում Երևանում զորքի առկայությունը և պահանջում այն հանել Երևանից:

Խնդիր էր դրվում նաև ԼՂԻՄ-ի մասին իրականացնելու միայն արդարացի հաղորդումներ, լուսաբանումներ թե՛ Միության և թե՛ Խորհրդային Հայաստանի մասշտաբով, որոնք, ցավոք, հաճախ կեղծվում էին, որի համար էլ առաջարկում էր անվստահություն հայտնել ԽՍՀՄ կառավարությանը, ինչպես նաև կոչ էր արվում մինչև խորհրդարանի հրավիրումը բոյկոտելու բոլոր պարապմունքները:

Նույնպիսի ոգով ելույթ է ունեցել նաև ԵՊՀ պատմության ֆակուլտետի ներկայացուցիչը (չի նշվում անուն-ազգանուն, անհայտ է – Հ. Ա.), որը հանրահավաքի մասնակիցներին ներկայացրել է պատմության ֆակուլտետի ընդհանուր ժողովի որոշումը, ըստ որի՝ ֆակուլտետը որոշել էր հայտարարել մեկշաբաթյա դասադուլ՝ սկսած հենց սեպտեմբերի 26-ից, և որոշումն ուղարկել էր ԵՊՀ ռեկտորատ, կուսակցական, կոմերիտմիության և արհմիության կոմիտեներ:

Նման որոշում ընդունել էր նաև Երևան քաղաքի N 183-րդ դպրոցի կոլեկտիվը, որտեղ աշխատում էր նաև «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Աշոտ Մանուչարյանը: Ժողովի որոշման մեջ նշվում էր, որ ազգամիջյան ընդհարումները ԼՂԻՄ-ում, մարդկային զոհերի առկայությունը, զորքերի կողմից իրականացվող պատժիչ միջոցները, զանգվածային միջոցների կողմից հաղորդվող հակահայ քարոզչությունը մարդկանց հանել էին սովորական հունից: Իսկ զանգվածային հացադուլները, զորքերի անօրինական առկայությունը Երևանում և այլուր հանգեցրել էին պայթունավտանգ իրավիճակի, որի համար դպրոցի կոլեկտիվը ևս հայտարարում էր ժամանակավոր դասադուլ, մինչև խորհրդարանի արտահերթ նստաշրջանի հրավիրումը և մայրաքաղաքից զորքերի դուրսբերումը: Դպրոցի կոլեկտիվը նաև կոչ էր անում բոլոր դպրոցներում դադարեցնել «Խորհրդային պետության

հիմունքներ և իրավունք», «Ռազմական պատրաստություն», «ԽՍՀՄ պատմություն» առարկաների դասավանդումը: Ժողովը նաև ընդունել էր որոշում՝ N 183 դպրոցի կոլեկտիվը համարելու որպես հայկական միջազգային շարժման անդամ: Որոշման մեջ նաև ասվում էր, որ հանրապետությունում ստեղծված անկանխատեսելի հետևանքների և իրավիճակի ամբողջ պատասխանատվությունն ընկնում էր Գերագույն խորհրդի վրա: Միաժամանակ նաև ասվում էր, որ դպրոցի բոլոր աշակերտները, նրանց ծնողները, բոլոր ուսուցիչները ըմբռնումով կմոտենան ուսուցիչների այդ որոշմանը և կպաշտպանեն այն[148]:

Նույն կարգի որոշում էր ընդունել նաև Վ. Բրյուսովի անվան լեզվի ինստիտուտի գերմանաֆրանսիական ֆակուլտետի ուսանողադասախոսական կոլեկտիվը՝ պահանջելով դադարեցնել Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու համար պայքարող ակտիվիստների նկատմամբ ճնշումները:

Նույն հանրահավաքում հանրապետության տարբեր բուհերում սովորող սփյուռքահայ ուսանողների անունից հետաքրքիր ելույթ է ունեցել Վանը՝ ասելով, որ սփյուռքահայ ուսանողները, հաշվի առնելով Խորհրդային Հայաստանում ստեղծված իրավիճակը, հրավիրել են ընդհանուր ժողով (26.09.1988 թ.) և ընդունել են որոշում՝ անվերապահորեն պաշտպանելու հայ ժողովրդի բոլոր օրինական և սահմանադրական պահանջները: Որոշման մեջ խստորեն դատապարտվում էր կենտրոնական և ադրբեջանական իշխանությունների կողմից իրականացվող հակահայկական քաղաքականությունը, ինչպես նաև զանգվածային միջոցների կողմից իրականացվող, իրականությունը ապակողմնորոշող քարոզչությունը: Ժողովը հատկապես դատապարտում էր Արցախի նկատմամբ իրականացվող ադրբեջանական իշխանությունների հակասահմանադրական քաղաքականությունը, որը Արցախյան շարժումը ներկայացնում էր որպես ծայրահեղականների ձեռքի և նրանց կողմից հրահրվող գործ:

---

[148] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 23, թ. 209-213:

Ժողովականները Սփյուռքի հայության անունից իրենց դժգոհությունն ու անբավարարությունն էին հայտնում հայ մամուլի ապակողմնորոշող տեղեկատվության առթիվ, քննադատում նաև Սփյուռքի հետ մշակութային կապերի կոմիտեին, որը կոչված էր ողջ Սփյուռքի հայությանը տեղեկացնելու Խորհրդային Հայաստանում և Արցախում ստեղծված վիճակի մասին ողջ ճշմարտությունը:

Ժողովը նաև կոչով դիմում էր Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը՝ դրսևորելու արժանապատիվ վարքագիծ և կանգնելու Արցախի պաշտպանության դիրքերում, ինչպես դա կատարեցին 1988 թ. հունիսի 15-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի նիստում՝ կանգնելով Արցախի պաշտպանության և Արցախը մայր հայրենիքի հետ վերամիավորելու դիրքերում:

Ժողովի վերջում բոլոր ժողովականները հանդես են գալիս որպես Երևանի տարբեր բուհերում սովորող սփյուռքահայ ուսանողներ՝ ավարտելով իրենց որոշումը «Պայքարը շարունակվում է» կոչով[149]: Իսկ ինչ վերաբերում է 1988 թ. հունիսի 15-ի և հուլիսի 18-ի Գերագույն խորհրդի նիստերի որոշումների մասին ժողովում բարձրացված հարցին, ապա պետք է ասել, որ սփյուռքահայ ուսանողները նկատի ունեին հատկապես ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի նիստը, որը, ի դեպ, հեռարձակվում էր ողջ երկրով մեկ, որտեղ հայ պատվիրակները, հատկապես Վիկտոր Համբարձումյանը, Սերգեյ Համբարձումյանը, Վարդգես Պետրոսյանը և Լեռնային Ղարաբաղի կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանը, անչափ համարձակ ելույթներ էին ունեցել և ճակատ առ ճակատ պայքարել էին Մ. Ս. Գորբաչովի, Ա. Ա. Գրոմիկոյի և մյուսների դեմ՝ դատապարտելով ո՛չ միայն ադրբեջանական իշխանությունների բացահայտ հակահայ քաղաքականությունը, Սումգայիթյան եղեռնը և այլն, այլ նաև Միության իշխանությունների՝ Գերագույն խորհրդի, Քաղբյուրոյի անչափ պատեհապաշտ, կողմնակալ

[149] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 23, թ. 214:

քաղաքականությունը և որոշումները, որոնք իրերը չկոչեցին իրենց անուններով՝ առաջացնելով ողջ հայության օրինական զայրույթը և դժգոհությունը:

Ընդհանրացնելով հանրահավաքի արդյունքները՝ Լևոն Տեր-Պետրոսյանը բարձր է գնահատել հանրահավաքում հնչեցված ելույթները, կոմիտեի կատարած անցած ավելի քան 7 ամսվա աշխատանքները և նշել, որ «Ղարաբաղ» կոմիտեն աշխատում է Գրողների միության շենքում, որի հարևանությամբ, 150 մետր հեռավորության վրա գիշեր ու ցերեկ Բաղրամյան փողոցի վրա կանգնած էր աշխարհի հզոր երկրի հզոր բանակը, իսկ նրա կողքին նույնպես գիշեր ու ցերեկ կանգնած էին 18-20 տարեկան երիտասարդները, որոնք անդրդվելի կերպով ողջ հայ ժողովրդի հետ կանգնեցին խորհրդային պետության առաջ: Եվ եթե Մ. Ս. Գորբաչովը, Քաղբյուրոն և մյուսները ազնիվ են քաղաքականության, ժողովրդավարության և վերակառուցման հարցում, որը նրանք հռչակել են, Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նստաշրջանում կարող են աշխարհին համոզել, որ Խորհրդային Միությունը մտադիր է դառնալ իրավական պետություն, քանի որ արձագանքում է ժողովրդի կոչին և նրա կամքով հրավիրում է Գերագույն խորհրդի նստաշրջան և դրանով էլ բարձրացնում իր հեղինակությունը ողջ աշխարհում: Նա նաև ճիշտ է ասում, որ հրավիրելով Գերագույն խորհրդի նստաշրջան՝ դրանով կկանխվի պայթունավտանգ իրավիճակը, որը ձևավորվել էր Հայաստանում: Իսկ եթե չհրավիրվի նստաշրջան, ապա հայ ժողովուրդը լիովին կհիասթափվի օրինականության, սահմանադրության նկատմամբ, և երաշխիքներ չեն լինի, որ թե՛ Խորհրդային Հայաստանում և թե՛ Լեռնային Ղարաբաղում դեպքերը կընթանան, կզարգանան սահմանադրական եղանակով: Նա նաև նշում էր, որ եթե հրավիրվի Գերագույն խորհրդի նստաշրջան, ապա կդադարեն նաև «Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստների նկատմամբ հետապնդումները, ինչպես նաև հանրապետությունից դուրս, այդ թվում՝ նաև Ադրբեջանում ապրող հայերի նկատմամբ վտանգը: Նա նաև լավատեսորեն այն միտքն է հայտնել, որ ինքը վստահ է, որ Մ. Ս. Գորբաչովը համոզվել է, որ 1988 թ.

հուլիսի 15-ի որոշման հարցում ինքը սխալվել է, և այդ որոշումը բավական վտանգավոր է: Ի վերջո այդ որոշումն է հանգեցրել հայ-ադրբեջանական ազգամիջյան պատերազմին և այլն: Եվ միակ զենքը, որ կարող էր այս ամենին հակադրել հայ ժողովուրդը և Լեռնային Ղարաբաղը, դա գործադուլն էր, ամենօրյա ցույցերն էին, հանրահավաքները և այլն:

Ցավոք, ՀԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդները անհրաժեշտ հետևություններ չարենցին և իրավիճակը թե՛ Լեռնային Ղարաբաղում և թե՛ հանրապետությունում էլ ավելի սրեցին՝ հանգեցնելով հետապնդումների, ձերբակալությունների և այլն[150]: Այս տեսանկյունից անչափ սուր հարցադրումներով հանրահավաք է անցկացվել հաջորդ օրը՝ սեպտեմբերի 27-ին, երբ Թատերական հրապարակում բազմամարդ ամբոխի առաջ հանդես է եկել Վանո Սիրադեղյանը, որը, բացելով հանրահավաքը և թվարկելով այդ օրը քննարկվող հարցերը, ձայնը տվել է Լևոն Տեր-Պետրոսյանին: Վերջինս հայտնել է, որ ինքը մի շարք զրույցներ է ունեցել Երևանում գտնվող պարետային ժամի շատ ու շատ զինվորականների հետ, որոնք չեն կարողանում հասկանալ, թե ինչու քրիստոնյաները և մուսուլմանները Ադրբեջանում, Լեռնային Ղարաբաղում չեն կարողանում միասին իրար հետ ապրել: Նա նաև նշել է, որ հայ ժողովուրդը շատ լավ գիտի, թե որքան հայեր են Բաքվում, Շուշիում, Սումգայիթում ենթարկվել գենոցիդի, որքան երեխաներ են դարձել որբեր, և որ հենց այս շարժումը նրա համար է, որ այլևս չկրկնվի նման երևույթ[151]:

Նման կարգի ելույթներ, հանրահավաքներ, գործադուլներ, դասադուլներ անցկացնելը կարծես արդեն դարձել էր հայ ժողովրդի ամենօրյա կյանքի անբաժանելի մասերից մեկը: Եվ քանի որ 1988 թ. սեպտեմբերի 30-ին հրավիրվել էր ԽՄԿԿ կենտկոմի պլենում, ուստի հոկտեմբերի 1-ին Երևանում հրավիրված հերթական հանրահավաքում խոսվում էր այն մասին, որ ԽՄԿԿ կենտկոմի պլենումի որոշումով նախատեսում էր որոշակի փոփոխություններ, և Ազգությունների

---

[150] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 23, թ. 216-218:
[151] Տե՛ս նույն տեղում, թ. 227:

խորհրդում ստեղծվել էր հատուկ հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր Լեռնային Ղարաբաղի վարչական ենթակայության հարցը՝ նախատեսելով փոխել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը և այն դարձնել ինքնավար հանրապետություն՝ թողնելով Ադրբեջանի կազմում: Ուսումնասիրելով այդ հարցը՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները գտնում էին, որ ինչպիսի փոփոխություններ էլ, որ լինեն, միևնույնն է, Լեռնային Ղարաբաղը չի կարող լինել Ադրբեջանի կազմում, քանի որ դա այլևս հնարավոր չէր[152]: Նման ոգով են անցել հոկտեմբերին անցկացրած բոլոր հանրահավաքները:

Հոկտեմբերի 3-ի հանրահավաքում բազմաթիվ ելույթ ունեցողների շարքում հատկապես ցանկանում ենք նշել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանող Նաիրի Հունանյանին (1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում կազմակերպած ողբերգության հեղինակը), որն իր ելույթում նշում էր, որ Խորհրդային Հայաստանը կարող էր լինել ազատ և անկախ Խորհրդային Միության կազմում, եթե սկսեր գործել սահմանադրությունը, որը, ըստ նրա, կախված էր մեզանից: Նաև նշում էր, որ անկախության ինքնորոշման համար մղած պայքարում չպետք է մոռանալ, որ ապրում ենք մի երկրում, որը ոտնահարել է մեր անկախությունը, ինքնուրույնությունը դեռևս 1920 թ. նոյեմբերի 29-ին, որն էլ մենք պետք է միշտ հիշենք: Նշված ելույթը միտումնավոր մեջբերեցինք, որպեսզի նաև ասենք, որ դժվար է հավատալ, որ ապագա ոճիրի հեղինակը կարող էր նման ելույթ ունենալ:

Այդ նույն հանրահավաքում ելույթ է ունեցել նաև ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ուսանող Տիգրան Հայրապետյանը, որը հռետորական հարց է բարձրացրել իր հասակակիցներին՝ ինչպես են նախապատրաստում ապրել առաջիկայում: Կոչ է արել պայքարել, հասնել իրենց առաջադրած խնդիրների լուծմանը: Այնուհետև նա թվարկել է այն պահանջները, որոնք անհրաժեշտ էր կատարել՝ հրավիրել Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան, հայտարարել դասադուլ, գործադուլ և այդ բոլոր պահանջները ներկայացնել ՀԿԿ

[152] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 24, թ. 1:

կենտրոնական կոմիտե և այլն[153]: Հաջորդ խնդիրը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության 71-րդ տարեդարձի առթիվ կազմակերպվող շքերթին մասնակցության հարցն էր: Այսինքն՝ խոսքն այն մասին էր, թե ինչպիսի դիրք էր գրավել այդ հարցի նկատմամբ «Հայոց համազգային շարժումը»: Այդ հարցերն էլ քննարկվում են նոյեմբերի 6-ի համաժողովրդական հերթական հանրահավաքում:

Ելույթ ունենալով նշված հանրահավաքում՝ կոմիտեի անդամ Աշոտ Մանուչարյանը հայտարարել է, որ հաջորդ օրը՝ նոյեմբերի 7-ին, «Ղարաբաղ» կոմիտեն ժողովրդի հետ միասին պետք է մասնակցի համաժողովրդական հանրահավաքին՝ Արցախի ժողովրդի հետ համերաշխության կոչով, սումգայիթյան կարգախոսներով, ազգային երգերով, դրոշներով և այլն:

1988 թ. նոյեմբերի 7-ին հանրապետությունում և Երևանում անցկացված հանրահավաքը, որը իշխանությունների կողմից գլխավորապես նվիրված էր Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հերթական 71-րդ տարեդարձին, առավելապես անցավ կոմիտեի նախանշած ծրագրով, որքան էլ մոտեցումները տարբեր էին. իշխանությունները, ՀԿԿ կենտկոմը ամեն ինչ անում էին, որ շքերթն անցնի իրենց նախանշած սցենարով, կազմակերպված և այլն, իսկ ժողովուրդը, «Ղարաբաղ» կոմիտեն ցանկանում էին այն տանել այլ ուղղությամբ, այսինքն՝ կազմակերպել այնպիսի հանրահավաք, շքերթ, որը բխեր «Ղարաբաղ» կոմիտեի և ողջ ժողովրդի շահերից, որպեսզի կոչ արվեր լուծելու Լեռնային Ղարաբաղի հարցը: Հանրահավաքի մասնակիցները առավոտյան ժամը 8:30-ից աստիճանաբար հավաքվել են Թատերական հրապարակում: Նրանց թիվը սկսեց ավելանալ 9:30-ից սկսած, երբ արդեն հազարավոր մարդիկ էին հավաքվում՝ իրենց հետ բերելով թռուցիկներ, եռագույն դրոշներ, Սումգայիթում զոհվածների նկարներ, պաստառներ, որոնց վրա գրված էին՝ «Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մասն է», «Սումգայիթյան գենոցիդին անհրաժեշտ է տալ քաղաքական գնա-

[153] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 24, թ. 11-16:

հատական», «Սումգայիթի գենոցիդի կազմակերպիչներին ենթարկել պատասխանատվության», «Գորբաչովը, Ալիևը, Լիգաչովը հայ ժողովրդի թշնամիներն են», «Սումգայիթ, հուլիսի 18, Խոջալու», «Ո՛չ պատմության սպիտակ էջերին», «Կեցցե՛ Արցախի ժողովրդի հերոսական պայքարը», «Պահանջում ենք ճանաչել 1915 թ. և Սումգայիթի ցեղասպանությունը», «Արցախ, Հայաստան», «Պայքար, պայքար մինչև վերջ» և այլն:

Հանրապետության իշխանությունների, Հայաստանի կոմկուսի կազմակերպած Հոկտեմբերյան հեղափոխության տասնյակ տարիներով փորձված շքերթն այդ օրը այլ ընթացք ստացավ: Եվ երբ մայրաքաղաքի տարբեր աշխատավորական կոլեկտիվների, Երևան քաղաքի տարբեր շրջանների բուհերի, տարբեր կազմակերպությունների շարասյուները շարժվեցին Լենինի պողոտայով (Մաշտոցի պողոտա) դեպի Լենինի (Հանրապետության) հրապարակ, որտեղ Լենինի արձանի պատվանդանի վրա կուսակցական, պետական բարձրաստիճան դեմքեր էին, որոնք ինչպես, ըստ ավանդույթի, ընդունում էին շքերթի մասնակիցներին, ամեն ինչ խախտվեց, տեղի ունեցավ անսպասելին, երբ ժողովրդի հոծ բազմությունը Լենինի հրապարակում էր, երթը կանգնեց, հսկայական ամբոխը կուտակվեց հրապարակում և չէր ենթարկում կազմակերպիչների հրահանգներին:

«Ղարաբաղ» կոմիտեի անդամները կազմակերպել էին բողոքի հանրահավաք, բողոքի շքերթ՝ բաղկացած 6000 պատերազմի վետերաններից և ուսանողներից, որոնք շարժվում էին միայն «Ղարաբաղ» կոմիտեի հրահանգներով, ինչն էլ դիտվում էր որպես հաղթանակ: Բողոքի ցույցին ելույթներ են ունեցել Լևոն Տեր-Պետրոսյանը, Վազգեն Մանուկյանը, Ռաֆայել Ղազարյանը, Սամվել Գևորգյանը, Վանո Սիրադեղյան, Աշոտ Մանուչարյանը, որոնք իրենց ելույթներում նշում էին, որ բողոք-շքերթը, բողոքի ցույցը արդեն հաղթանակ են, որ Արցախյան շարժման 9 ամիսները հաստատեցին, որ ժողովուրդը անպարտելի է, որ անկախ իշխանությունների ձեռնարկած բոլոր քայլերից, անկախ Մոսկվայի և տեղական իշխանությունների բոլոր ջանքերից՝ կանխելու շարժումը և այն տանելու իրենց նախան-

շած ուղիով, միևնույնն է, ոչինչ հնարավոր չէր, քանզի ժողովուրդը վճռական և հաստատակամ էր իր մտադրություններում և պատրաստ էր պայքարել մինչև վերջ, մինչև հաղթանակ[154]:

Հետաքրքիր է ասել, որ հանրահավաքի և տոնական շքերթի մասնակիցները, երբ արդեն մոտենում էին Լենինի հրապարակին, մոտ 7000 մարդ, հանկարծ միախառնվեցին շքերթի մասնակիցների շարքերին, դեն նետեցին պլակատները, դիմանկարները, կարգախոսները և բացեցին նոր, ինքնաշեն, այդ թվում՝ դաշնակցական Հայաստանի դրոշները, և, փաստորեն, տոնական թռուցիկների կողքին հայտնվեցին եռագույն դրոշներ, Լեռնային Ղարաբաղի, Սումգայիթի վերաբերյալ կարգախոսներ և այլն: Եվ չնայած Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի ելույթին (երկու անգամ), որը կոչ էր անում բոլորին հանգստություն և կազմակերպվածություն, շքերթավորները շարունակում էին կանգնած մնալ տրիբունաների առաջ: Հետաքրքիր է, որ նույնիսկ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների կոչերը, այդ ամենը կարգավորելու փորձերը անարդյունավետ էին, ինչն էլ նշանակում է, որ ինչ որ պահ ժողովուրդը դարձել էր անկառավարելի: Իհարկե, հետո ամեն ինչ կարգավորվեց և Լենինի հրապարակում ելույթ ունեցան «Ղարաբաղ» կոմիտեի անդամները: Ելույթ ունեցավ Վազգեն Մանուկյանը, որը, ընդհանրացնելով Արցախյան շարժման անցած ուղին, նշում էր, որ արցախյան իննամսյա պայքարը ունեցել է և՛ հաղթանակներ, և՛ պարտություններ, բայց հավատով, որ վերջնական հաղթանակը իրենցն է լինելու, անհրաժեշտ է ժողովրդի միասնություն, ընդ որում՝ անհրաժեշտ է նշել, որ միասնությունը պետք է ժողովրդի և կառավարության միջև, ինչն էլ նշանակում է, որ կառավարությունը պետք է միանա ժողովրդին: Միայն այդ ժամանակ է հնարավոր հաղթել: Նա նաև կարևոր էր համարում անմիջականորեն վերացնել Լեռնային Ղարաբաղում հաստատված պարետային ժամը: Այնտեղ գտնվող զորքը վնասում էր ժողովրդին, քանի որ հայերը շրջապատված էին զորքի կող-

[154] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 24, թ. 125-131:

մից, ադրբեջանցիները օգտվում էին դրանից, ծավալում շինարարություն՝ իրենց թիվը Լեռնային Ղարաբաղում ավելացնելու համար: Միակ ճանապարհը Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի որոշումն էր՝ ամեն ինչ անել Լեռնային Ղարաբաղը վերամիավորելու Խորհրդային Հայաստանին:

Ելույթ է ունեցել նաև Լևոն Տեր-Պետրոսյանը՝ նշելով, որ առաջին անգամ բողոքի շքերթը հասել է Լենինի հրապարակ Խորհրդային Հայաստանի ղեկավարների ներկայությամբ: Նա նաև կոչ է արել, որ շարժումը պաշտպանող շքերթի մասնակիցները և շարժման կողմն անցածները շարժվեն Թատերական հրապարակ, որտեղ կշարունակեն հանրահավաքը և կապացուցեն Մոսկվային, որ Մոսկվան չունի այլ ուղի, քան Արցախը վերամիավորելու Հայաստանին: Նա նաև խոսում էր Խորհրդային Հայաստանի ղեկավարության մասին՝ ասելով, որ նա պետք է կանգնի ժողովրդի կողքին, լինի նրա առաջին շարքերում, որպեսզի պայքարը հասնի հաղթական ավարտին: Այդ նպատակով նաև Հայաստանի ղեկավարությունը պիտի համոզի Մոսկվային, պետք է պայքարի Արցախի համար, հակառակ դեպքում նա պետք է թողնի իր դիրքերը և տա հրաժարական: Ի նշան համաձայնության՝ հանրահավաքի մասնակիցները ևս իշխանավորներից պահանջում են հրաժարական:

Դժվար չէ համոզվել, որ եթե ժողովրդական զանգվածները էլեկտրականացված են, երբ հարյուր հազարավորներների մեջ իշխում են հուզական զգացումները, նրանց ավելի հեշտ է ուղղել այս կամ այն խնդրի կատարմանը, որն էլ շատ հմտորեն օգտագործում էին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները և օր օրի իրենց կողմը գրավում նորանոր զանգվածներ, դրանով էլ ավելի բարձրացնում իրենց հեղինակությունը ժողովրդի աչքում:

Լևոն Տեր-Պետրոսյանը, օգտագործելով այն հնարավորությունը, որ Լենինի հրապարակում կային ռուս գեներալներ, իր խոսքն ուղղել է նրանց՝ ասելով, որ Հայաստանը լցրել են մեծ թվով զինվորներով, մինչդեռ սա Աֆղանստանը չէ: Նրանք զորք են մտցրել հայ ժողովրդի դեմ, և իրենք ամեն ինչ կանենք, որ ժողովրդի նկատմամբ

զենք չօգտագործվի: Պայքարի անցած 9 ամիսները ապացուցեցին, որ հայ ժողովուրդը եղել է արդարացի, պայքարել է սամանադրական եղանակով, և եթե Մոսկվան հռչակել է պայքարի նոր ուղի, վերակառուցման ուղի, ապա դա նշանակում է, որ, եթե իշխանությունները իրականացնում են ժողովրդի կամքը, ապա դա բխում է հենց վերակառուցման էությունից, նրա ոգուց: 1988 թ. փետրվարից սկսած՝ հայ ժողովրդի պայքարի ամենաբարձր կետը 1988 թ. նոյեմբերի 7-ն է, որի արձագանքները կհասնեն Մոսկվա, և նրանք կհասկանան, որ հայ ժողովուրդը շարունակելու է պայքարը մինչև այն ժամանակ, երբ Լեռնային Ղարաբաղը կմիավորի Հայաստանի հետ:

Նման կարգի ելույթներ են ունեցել նաև կոմիտեի անդամներ Ռաֆայել Ղազարյանը, Աշոտ Մանուչարյանը, Վանո Սիրադեղյանը, որոնք կոչ են արել պայքարել մինչև վերջ, մինչև Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորվելը: Ռաֆայել Ղազարյանը, իր հերթին ևս ընդհանրացնելով Արցախյան շարժման անցած ամիսների պայքարի արդյունքները, նշել է, որ Մոսկվան պետք է հասկանա, որ անհրաժեշտ է հարցի արմատական լուծում, և Մոսկվան իր քաղաքականությամբ իրավիճակը հասցրել է նրան, որ ունենք «Մոսկվա+Բաքու=Սումգայիթ» կարգախոսը, և դա Մոսկվայի մեղքն է, որն էլ պետք է հասկանա մեր հանրապետության ղեկավարությունը: Նա նաև պետք է հասկանա, որ եթե մենք կորցնենք Ղարաբաղը, մենք կկորցնենք մեր ապագան, որին ժողովուրդը միահամուռ վանկարկում է՝ «Արցախ, Արցախ»:

Նույն ոգով ելույթ է ունեցել նաև Վանո Սիրադեղյանը՝ ասելով, որ նրանք, ովքեր կարծում են, որ հայ ժողովուրդը հոգեպես կընկճվի, որ մեզ կմասնատեն փոքրիկ խմբերի և միասնական ժողովուրդը կվերածվի ամբոխի, մենք ապացուցեցինք հակառակը: Մեր ժողովուրդը համբերատար է, բայց ամենավճռական պահին կարող է կանգնել բանակի դեմ, այն մարդկանց դեմ, որոնք կանգնած են ժողովրդի դեմ: Նա նաև նշել է, որ մեր ազգային դրոշը, նկատի ունենալով եռագույնը, այսօր դարձել է պաշտոնական և բարձրացվել Երևանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքի վրա «Գերա-

գույն իշխանությունը ժողովրդի իշխանությունն է» կարգախոսի, թռուցիկի հետ միասին:

Աշոտ Մանուչարյանը, գնահատելով Արցախյան շարժման անցած իննամսյա ճանապարհը, նշել է, որ մեր ժողովուրդը այդ պայքարում մեկ քայլ առաջ է կատարել և ապացուցել, որ նա քաղաքականապես հասուն ժողովուրդ է, և այն փաստը, որ այսօր՝ նոյեմբերի 7-ին, մենք խոսում ենք Լենինի հրապարակում մեր ղեկավարության և մոսկովյան ներկայացուցիչների առաջ, որոնք մեզ լսել են, խոսում է այն մասին, որ իրոք շարժումը դարձել է անկասելի, և ղեկավարությունը այլևս չի ասի, որ իրենք ոչինչ չեն տեսել և ոչինչ չեն լսել, ինչն էլ նշանակում է, որ դա արդեն հաղթանակ է, որի համար «մենք պետք է միմյանց շնորհավորենք և ասենք, որ այսօր իրոք տոնական օր է»[155]:

Անկասկած, նման գնահատականները հաստատվում էին ամենօրյա այն հանրահավաքներով, որոնք անցկացնում էին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները՝ ստանալով ժողովրդական զանգվածների ամենօրյա պաշտպանությունը: Ի դեպ, ամենօրյա հանրահավաքները նաև մարդկանց քաղաքական հասունության դպրոց էին, երբ ժողովուրդն ամեն օր կարծես առնչվում էր իր պատմությանը, անում հետևություններ, քաղում դասեր: Պատահական չէ, որ խոսելով այդ հանրահավաքների մասին՝ հայտնի էթնոհոգեբան Գալինա Ստարովոյտովան (ի դեպ հետագայում Ստարովոյտովան դարձավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավոր Խորհրդային Հայաստանից – Հ. Ա.) ասել է. «Կյանքում ամեն մեկին չէ, որ տրված է վկա լինելու այն բանին, թե ինչպես է ժողովուրդը երես առ երես կանգնում իր պատմության հանդեպ: Ինչ ընթացք էլ, որ ունենան դեպքերը առաջիկայում, դրանք արդեն կայացան, ինչպիսին էր դրանից առաջ»[156]:

Անկախ այն ամենից, որ «Ղարաբաղ» կոմիտեի և նրա հիման վրա 1989 թ. նոյեմբերին ստեղծված «Հայոց համազգային շարժման» (ՀՀՇ) հետագա գործունեությունը կապված էր շատ ու շատ

---

[155] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 24, թ. 126-130:
[156] ՀԱԱ, «Արցախյան շարժում» թղթապանակ, ֆ. 1159 ց. 1, գ. 23, թ. 17:

դժվարությունների, Մոսկվայի և Հայաստանի կոմկուսի կենտկոմի համապատասխան մարմինների կողմից հետապնդումների, արգելքների և այլնի հետ ընդհուպ մինչև 1988 թ. դեկտեմբերի 7-ի համահայկական աղետը՝ երկրաշարժը, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր հայրենակիցներ, ավերվեցին հազարավոր տներ, շինություններ, բնակավայրեր և այլն, իսկ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները Մոսկվայի պահանջով ձերբակալվեցին՝ մեղադրվելով ծայրահեղ ազգայնականության մեջ և ավելի քան կես տարի՝ 1988 թ. դեկտեմբերից 1989 թ. մայիսը փակվեցին Մոսկվայի Բուտիրկայի բանտում, միևնույնն է, շարժումը չմարեց, չվերացավ, քանի որ անկախության համար պայքարի ոգին մնում էր, իսկ առանձին գործիչներ, «Ղարաբաղ» կոմիտեի գաղափարակիցներ, առանձին կոլեկտիվներում ստեղծված «Ղարաբաղ» կոմիտեներ ընդհատակյա պայմաններում շարունակեցին գործել:

Շարժմանը մոտ կանգնած երիտասարդ սերունդը՝ Ավետիք Իշխանյանը, Դավիթ Շահնազարյանը, Արշակ Սադոյանը, Երջանիկ Աբգարյանը, Ալբերտ Բաղդասարյանը, Սմբատ Հակոբյանը և ուրիշներ, շարունակեցին պայքարը, և, որ կարևոր է, 1989 թ. սկսեցին կազմակերպել ցույցեր, հանրահավաքներ՝ նաև պահանջելով ազատ արձակել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին և այլն[157]: Այդ նույն ժամանակ նման պայքար էին մղում նաև ավելի վաղ ընդհատակում ձևավորված և գործող, ինչպես նշեցինք, մի շարք կուսակցություններ՝ «Ազգային միացյալ կուսակցությունը» (1966 թ.՝ հիմնադիր՝ նկարիչ Հայկազ Խաչատրյան, 1968 թ.՝ Պարույր Հայրիկյան, 1987 թվականից՝ «Ազգային ինքնորոշում միավորում»), «Ազգային վերածննդի կուսակցությունը» (1965 թ.) և «Հայ դատ» կազմակերպությունը (1987 թ.՝ Հովիկ Վասիլյան), «Ազգային միասնություն ուխտ» կուսակցությունը (1989 թ.՝ Ռաֆիկ Համբարձումյան)[158] և ուրիշներ, որոնք հնա-

---

[157] Տե՛ս Ազդակ, անկախութեան տասնամեակ, 1991-2001, Ուրբաթ. 21 սեպտեմբեր, 2001, Սուրիա, էջ 6-7:

[158] Տե՛ս ՀԱԱ, Պարույր Հայրիկյանի անձնական ֆոնդ, ֆ. 1450, ց. 1, գ. 1, թ. 20-22, գ. 4, թ. 20, գ. 6, թ. 19-22, **Հայրիկյան Պ.**, Անկախության երեք վավերագրեր, Երևան, 1997, էջ 13, նաև՝ ՀԱԱ, ֆ. 4514, ց. 2, գ. 1, թ. 11-13, ֆ. 4531, ց. 1, գ. 1, թ. 5-9, ֆ. 4514, ց.

բավոր բոլոր միջոցներն օգտագործում էին շարժումն ակտիվ պահելու համար: Երբ արդեն 1989 թ. մայիսին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները ազատ արձակվեցին և վերադարձան Երևան, Արցախյան շարժումը ստացավ նոր, ավելի ակտիվ, ամենօրյա բնույթ: «Ղարաբաղ» կոմիտեն ողջ նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը, նրա հեղինակությունը, ժողովրդայնությունը էլ ավելի բարձրացավ:

Խոսելով այդ հարցերի մասին՝ ռուս հեղինակներից Վ. Գ. Միտյաևը իր «Ներկուսակցական գործընթացները Հայաստանում» աշխատանքում գրում է. «Ղարաբաղ» կոմիտեն, գլխավորելով ԼՂԻՄ-ը Հայաստանին միավորելու զանգվածային շարժումը և ակտիվ կերպով բորբոքելով մարդկանց տրամադրությունները, դարձավ հայ ժողովրդի և բնակչության գերազանցող մեծամասնության ազգային զգացումների արտահայտողը»: Հենց այդ ժամանակ էլ՝ 1988-1990 թթ., «Ղարաբաղ» կոմիտեի հիմքի վրա ձևավորված «Հայոց համազգային շարժումը» (ՀՀՇ) հայ քաղաքագետների արտահայտությամբ ստացավ «վստահության անսահմանափակ վարկանիշ», որը հնարավորություն տվեց նրան գործող սահմանադրական օրենքների հիման վրա գալու իշխանության[159]: Բնական է, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները, օգտագործելով ժողովրդի անսահման վստահությունը, ավելի եռանդով սկսեցին աշխատել և պայքարել՝ իրենց նպատակներին հասնելու համար: Փաստորեն՝ շարժման առաջնորդների մեկուսացումը ոչ միայն ի վիճակի չեղավ կանգնեցնել համաժողովրդական բողոքի ալիքը, այլ էլ ավելի միասնականացրեց ժողովրդին, և բանտից ազատվելուց հետո «Ղարաբաղ» կոմիտեի առաջնորդների առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ արդեն հրավիրել «Հայոց համազգային շարժման» համագումարը, որն էլ անցկացվեց 1989 թ. նոյեմբերի 4-7-ը: Այն ամփոփեց նախորդ շրջանի կատարած աշխատանքը, ընդունեց կարևոր բանաձևեր այնպիսի

7, գ. 3, թ. 78-79, գ. 13, թ. 28-36: **Հայրիկյան Պ.,** Ազգային միացյալ կուսակցություն. Ծրագիր, Կանոնադրություն և պայքար, Երևան-91, էջ 3-10:

[159] Տե՛ս **Митяев В. Г.,** Внутриполитические процессы в независимой Армении, в книге: Армения: проблемы независимого развития, Российский институт стратегических исследований, Москва, 1998, с. 76:

հարցերի մասին, ինչպիսիք են՝ «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ», «Աղետի գոտու վերաբերյալ», «Սումգայիթի եղեռնի վերաբերյալ» և այլն: Համագումարը հավատարիմ մնաց «Ղարաբաղ» կոմիտեի որդեգրած քաղաքականությանը և նույնիսկ դիմեց միջազգային հանրությանը և ՄԱԿ-ին՝ առաջարկելով ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը և նրա ժողովրդի ինքնորոշման փաստը: Միաժամանակ այն միտքն է արտահայտվում, որ Հայաստանը չի կարող հրաժարվել բռնությամբ անջատված և իր իսկ տարածքում բանտված հայրենակիցների ինքնորոշմանը սատար կանգնելուց[160]: Սակայն գլխավոր հետևությունն այն էր, որ «Ղարաբաղ» կոմիտեն, Արցախի ժողովուրդը և հայ ժողովուրդը, օգտվելով գորբաչովյան «վերակառուցման» հնարավորություններից, ճիշտ կարողացան մարդկանց ուղղորդել իրենց նպատակներին հասնելու համար, նպատակներ, որոնք համահայկական էին և կոչված էին համատեղ լուծելու երկրի առջև ծառացած բազմաթիվ խնդիրները: Այն փաստը, որ համագումարի ընտրած նոր վարչության կազմում ընդգրկվեցին մարդիկ, որոնք «Ղարաբաղ» կոմիտեի անդամ չէին, խոսում էր այն մասին, որ ՀՀՇ-ն փորձում էր իր մեջ միավորել նոր մարդիկ, նոր ուժեր: Համագումարի ընտրած ՀՀՇ վարչության 36 անդամների շարքում, «Ղարաբաղ» կոմիտեի հայտնի անդամներից զատ, կային նաև ոչ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ՝ Ռոբերտ Քոչարյան, Հրանտ Բագրատյան, Վիտյա Այվազյան, Հենրիկ Հովհաննիսյան, Կամո Վարդանյան և ուրիշներ: Դա ևս մի քայլ էր՝ միավորելու բոլոր այն ուժերին, որոնք կարող էին ակտիվ դեր խաղալ երկրում սկսած նոր գործընթացներին: Իսկ թե որքանով «Ղարաբաղ» կոմիտեն կամ «Հայոց համազգային շարժումը», հետագայում գալով իշխանության հավատարիմ մնաց իր որդեգրած սկզբունքներին, ապա պետք է ասել, որ ՀՀՇ-ն այնքան էլ հավատարիմ չէր իր հռչակած սկզբունքներին: Մյուս կողմից էլ որքան էլ «Ղարաբաղ» կոմիտեն, ձևավորե-

[160] Տե՛ս Հանուն երրորդ հանրապետության, Ժողովածու համագումարի պատվիրակների համար, «Հայոց համազգային շարժման» 12-րդ համագումար, 22-23 դեկտեմբեր, 2000, էջ 4-5:

լով արդեն որպես «Հայոց Համազգային շարժում» (ՀՀՇ), միևնույն է, չէր կարող իր մեջ միավորել հանրապետությունում և Սփյուռքում, աշխարհի տարբեր երկրներում ապրող միլիոնավոր հայությանը, պատկերավոր ասած՝ անընդգրկելին դարձնել ընդգրկելի: Եվ հենց այդ երևույթների մասին է գրել ՀԽՍՀ անվտանգության կոմիտեի նախագահ Վ. Գ. Բաղամյանցը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությանին, որ Երևանում հրավիրված ՀՀՇ համագումարը, որքան էլ գնահատվում է որպես դրական երևույթ, միևնույնն է, հարցականի տակ է, թե արդյոք ՀՀՇ-ն իրոք կարող է դառնալ աշխարհի ողջ հայության շահերի արտահայտիչը, խոսքը վերաբերում էր նաև հայկական բոլոր քաղաքական կուսակցություններին և կազմակերպություններին, մասնավորապես «Հայ հեղափոխական դաշնակցությանը»[161]:

Ժամանակը ցույց տվեց, որ ՀՀՇ-ի նկատմամբ հետագայում ձևավորվեց մեծ ընդդիմություն, որն էլ վաղ թե ուշ նրան պետք է հեռացներ իշխանությունից: Այդ իմաստով էլ մի բան պարզ է, որը նաև հաստատված է պատմությամբ, որ միշտ չէ, որ քաղաքական ուժերը, գալով իշխանության, հավատարիմ են մնում իրենց որդեգրած սկզբունքներին, կարգախոսներին և ծրագրային դրույթներին, նույն եռանդով պայքարում դրանք կենսագործելու համար, այլ ավելի շատ գործում են պահի, հանգամանքների թելադրանքով, շեղվում իրենց խոստումներից և հաճախ արժանանում նույն մասաների անվստահությանը:

«Ղարաբաղ» կոմիտեն, «Հայոց համազգային շարժումը» բացառություն չէր, որի հետագա գործունեությունը ներկայացված է առանձին գլխով:

---

[161] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 35, թ. 126-127:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ «ՂԱՐԱԲԱՂ» ԿՈՄԻՏԵԻ ԵՎ «ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ» ՆԿԱՏՄԱՄԲ

3.1. Հայաստանի կոմկուսի կենտկոմի որոշումները «Ղարաբաղ» կոմիտեի, ՀՀՇ-ի գործունեության արգելման ուղղությամբ

Արցախյան շարժման առաջին իսկ օրերից Հայաստանի կոմկուսը, հատկապես նրա առաջին դեմքերը՝ Կարեն Դեմիրճյանը, Սուրեն Հարությունյանը, Ռոբերտ Արզումանյանը, Լևոն Սահակյանը, Ֆաղեյ Սարգսյանը, Հրանտ Ոսկանյանը և մյուսները, ամեն կերպ դատապարտում էին Արցախյան շարժման կազմակերպիչներին, որոնք իրենց դիրքորոշմամբ մինչև վերջ հավատարիմ մնացին շարժման նկատմամբ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի տված «ծայրահեղորեն տրամադրված», «առանձին անձանց գործողություն» գնահատականին՝ չկարողանալով ազատվել կուսակցական քարացած մտածողության կարծրատիպերից, ինչն էլ հանրապետությունում ստեղծեց լարված հարաբերություններ ու պառակտում հասարակության և կուսակցության միջև: Այդ հանգամանքը շատ ավելի բացահայտորեն դրսևորվեց Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի հանրահայտ որոշումից հետո, որը վերաբերում էր Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս բերելուն և մայր հայրենիքի հետ վերամիավորելուն:

Բնական է, որ երկրում հաստատված կանոններով աննախադեպ համարվող այդ քայլը պետք է դատապարտվեր Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության, երկրի ողջ ղեկավարության կողմից: Եվ պատահական չէր, որ 1988 թ. փետրվարի 21-ին ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն, անմիջապես քննարկելով Լեռնային «Ղարաբաղի իրադարձությունների մասին» հարցը, գնահատում էր, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի Լեռնային Ղարաբաղի ինքնավար մար-

զում ձևավորված քաղաքական իրավիճակը բավական լուրջ է: Քաղբյուրոն նաև նշում էր, որ այն գործողություններն ու պահանջները, որոնք ուղղված են վերանայելու այդ տարածաշրջանում գոյություն ունեցող և հաստատված ազգային տարածքային կառուցվածքը, հակասում են Հայաստանի և Ադրբեջանի ԽՍՀ-ների աշխատավորների շահերին, որոնք կհանգեցնեն ազգամիջյան հարաբերություններին բավական մեծ վնաս, և եթե այժմ չձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ, կարող են հանգեցնել անկանխատեսելի և նույնիսկ անուղղելի հետևանքների:

Միաժամանակ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն գտնում էր, որ այդ ամենը հնարավոր էր դարձել ծայրահեղականորեն տրամադրված առանձին անպատասխանատու անձանց կողմից, ինչպես նաև կուսակցական և խորհրդային ղեկավար մարմինների սպասողական, պասիվ դիրքորոշման շնորհիվ, որոնք թերագնահատում էին ազգայնականորեն տրամադրված անձանց գործողությունների քաղաքական վտանգավորությունը և մակերեսորեն էին մոտենում ու գնահատում ձևավորված իրադրությունը: Քաղբյուրոն իրադրության նորմալացման ողջ պատասխանատվությունը դնում էր Ադրբեջանի և Հայաստանի կոմունիստների, Կենտկոմի բյուրոների և անձամբ առաջին քարտուղարներ Կ. Մ. Բագիրովի և Կ. Ս. Դեմիրճյանի վրա: Նույն օրը Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն, քննարկելով ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի վերոհիշյալ որոշումը, ամբողջովին հավանություն է տվել «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների շուրջ» քաղբյուրոյի ընդունած որոշմանը: ՀԿԿ կենտկոմի բյուրոն, միաժամանակ ելնելով ԽՄԿԿ կենտկոմի հանձնարարականներից, կարևոր էր համարում Ադրբեջանի կոմկուսի հետ միասին համակարգել աշխատանքները իրադրության առողջացման ուղղությամբ: Նաև կարևորվում էր այն հանգամանքը, որ ազգային հարցը պահանջում է մշտական ուշադրություն՝ հաշվի առնելով, որ այն ունի իր առանձնահատկությունները:

ՀԿԿ կենտկոմի բյուրոն նաև անհրաժեշտ էր համարում այդ հարցը քննարկել հանրապետության կուսակցական ակտիվի ժողո-

վում, Կենտկոմի պլենումում և այլն: Միաժամանակ հանձնարարում էր հանրապետության կառավարությանը մշակել Լեռնային Ղարաբաղում սոցիալ-տնտեսական բնույթի միջոցառումների պլան, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առաջարկներ ներկայացնել ԽՍՀՄ մինիստրների խորհրդի առջև: Բյուրոն նաև հանձնարարում էր կուսքաղկոմներին, շրջկոմներին, անձամբ առաջին քարտուղարներին գլխավորել աշխատավորների շրջանում Լեռնային Ղարաբաղի շուրջը ստեղծված իրավիճակի վերաբերյալ համապատասխան բացատրական աշխատանքները, ինչպես նաև կանխել անպատասխանատու քայլերը, որոնք կարող էին վնաս հասցնել ժողովուրդների բարեկամությանը, Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորների շահերին[162]:

Դժվար չէ տեսնել, որ Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի վերոհիշյալ որոշումը կուսակցական կառավարման սկզբունքներից բխող, բնորոշ որոշում էր, և գալիս էր նրա գործունեության, աշխատանքի քարացած ոճից: Դժվար չէ տեսնել նաև, որ Հայաստանի կոմկուսը Արցախյան շարժման առաջին իսկ օրերից չկարողացավ հաղթահարել տասնամյակներ շարունակ հաստատված աշխատաոճը և ունենալ այլ դիրքորոշում, այլ մոտեցում՝ փորձելով հակադրվել ԽՄԿԿ կենտկոմին, քաղբյուրոյին: Ի դեպ այդ դիրքորոշումը ցավոք շարունակվեց նաև հետագայում՝ Արցախյան շարժման ողջ ընթացքում, որն էլ հենց առաջին իսկ օրերից ճեղքում առաջացրեց Հայաստանի կոմկուսի և հատկապես Կենտկոմի բյուրոյի ու ժողովրդի միջև: Մյուս կողմից էլ կառավարման այդ համակարգի պայմաններում թերևս դժվար էր Հայաստանի կոմկուսին, նրա ղեկավարությանը արագորեն որդեգրել այլ մոտեցում, հակադրվել ԽՄԿԿ Կենտկոմին, Քաղբյուրոյին, քանի որ դա հակադիր էր կուսակցական կյանքի նորմերին, քանզի կուսակցության յուրաքանչյուր անդամ պարտավոր էր հավատարիմ լինել կուսակցության գծին, նրա վարած ներքին և արտաքին քաղաքականությանը: Նման քայլը, բնական է, որ խստորեն

[162] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 88, թ. 64-65:

կպատժվեր ԽՄԿԿ կենտկոմի կողմից իր բոլոր հետևանքներով: Վերջին հաշվով միութենական հանրապետությունների կոմունիստական կուսակցությունները համարվում էին ԽՄԿԿ-ի անբաժանելի մասը և նաև կանոնադրությամբ ենթարկվում էին ԽՄԿԿ կենտկոմին, քաղբյուրոյին, նրա ընդունած որոշումներին՝ դրանք համարելով ուղեցույց: Այնպես որ Հայաստանի կոմկուսը, ևս լինելով ԽՄԿԿ-ի հանրապետական ջոկատներից մեկը, իր յուրաքանչյուր քայլի համար հաշվետու և պատասխանատու էր ԽՄԿԿ-ին, նրա բարձրագույն մարմնին՝ Քաղբյուրոյին: Եվ պատահական չէր, որ ժողովուրդը վրդովված էր ինչպես ԽՄԿԿ կենտկոմից, քաղբյուրոյից, այնպես էլ հանրապետության կուսակցական ղեկավարությունից, երես թեքեց նրանցից և սկսեց գնալ այն ուժերի ետևից, որոնք պաշտպանում էին Լեռնային Ղարաբաղի աշխատավորների, ողջ ժողովրդի արդարացի պահանջները: Իսկ այդ հանգամանքը դրսևորվում էր օր օրի համաժողովրդական դարձող հանրահավաքներով, բողոքի ցույցերով, տարբեր կարգի ակցիաներով և այլն:

Հայաստանի կոմկուսի կենտկոմի բոլոր ջանքերը՝ ժողովրդական շարժումը տանելու իր ցանկացած հունով, հնարավոր չէր: Դրա վկայությունը հենց այդ օրերին Երևանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի հրապարակում (որն էլ հետո պետք է կոչվեր Ազատության հրապարակ) ամենօրյա ցույցերի, հանրահավաքների անցկացումն էր: Այդ քայլով հայ ժողովրդի պատմության մեջ սկսվեց համաժողովրդական շարժման, պայքարի աննախադեպ մի շրջան, Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միավորելու պայքարի շրջան: Ընդ որում, դա չէր վերաբերում միայն մայրաքաղաքին՝ Երևանին, այլ արդեն օր օրի ընդգրկում էր հանրապետության մյուս շրջաններն ու քաղաքները, որոնցից կազմված ժողովրդական զանգվածները շտապում էին Երևան՝ անմիջապես մոտիկից մասնակից լինելու պատմական իրադարձություններին, որպեսզի դրանով անմասն չմնային այն ոգևորությունից, որը համակել էր բոլորին: Իսկ ժողովրդական զանգվածների ոգևորության հիմքը հավատն էր իրենց բարձրացրած հարցի արդարության նկատմամբ.

նրանք, անկախ բոլոր խոչընդոտներից, պատրաստ էին պայքարել մինչև վերջ: Եվ հենց այս ոգևորությունը, այս ուժը հաշվի առնելով է, որ շարժումը ղեկավարող ուժերը՝ «Ղարաբաղ» կոմիտեն, «Հայոց համազգային շարժումը», ստանալով ժողովրդական զանգվածների աջակցությունը, սկսեցին գլխավորել հայ ժողովրդի պատմության մեջ սկսված նոր՝ Արցախյան շարժումը, որը կոչված էր պայքարելու Արցախը մայր հայրենիքի հետ միավորելու համար: Դրան հակառակ՝ Հայաստանի կոմկուսը հավատարիմ մնաց կուսակցական կառավարման տասնամյակներով հաստատված կանոններին, կուսակցության քարացած դոգմաներին և մեկը մյուսի ետևից ընդունում էր ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի պահանջներից բխող նման որոշումներ: Հանրապետությունում ստեղծվեց մի յուրօրինակ իրավիճակ. ժողովուրդն ամեն օր հավաքվում էր Թատերական հրապարակում, իսկ Հայաստանի կոմկուսի կենտկոմը շարունակում էր ընդունել կենտրոնի պահանջներից բխող որոշումներ:

Նման պայմաններում մեծ կարևորություն էր ստանում այն հարցը, թե որն է ելքը, ինչպես պետք է պայքարել ի վերջո Արցախի հարցը լուծելու համար: Հարցի բարդությունն այն էր, որ Հայաստանի կոմկուսը փորձում էր ժողովրդական զանգվածներին համոզել, որ ԽՄԿԿ կենտկոմը առաջիկայում կուսակցության պլենումներից մեկում քննարկելու է ազգամիջյան հարաբերություններին վերաբերող հարց, ուստի պետք է դադարեցնել հանրահավաքները և սպասել հարցի քննարկմանը:

Միաժամանակ ճշմարտություն է նաև այն, որ ժողովրդական զանգվածների մի զգալի մասը պայքարի առաջին օրերին հավատում էր, որ ԽՄԿԿ կենտկոմն ու քաղբյուրոն, անձամբ Մ. Ս. Գորբաչովը առաջիկայում Արցախյան հարցին արդարացի լուծում կտային, քանզի դա բխում էր վերակառուցման քաղաքականության սկզբունքներից, մանավանդ որ Մ. Ս. Գորբաչովը վերակառուցման հարցադրումներում ընդունում էր, որ Խորհրդային Միությունը նախկինում հատկապես ազգային հարցում թույլ էր տվել սխալներ, և կուսակցությունը առաջիկա պլենումներից մեկում կքննարկեր նշված հարցը,

որը վերաբերում էր Խորհրդային Միության շատ ժողովուրդներին: Խոսքը վերաբերում էր ստալինյան բռնություններին, շատ ժողովուրդների նկատմամբ թույլ տված տեղահանումներին, ձերբակալություններին, աքսորին, անտեղի դատապարտվածներին, մահապատժի ենթարկվածներին և այլն:

Ի դեպ, հանրապետությունում հանրահավաքները սկզբնական շրջանում դեռ մինչև համաժողովրդական դառնալը կրում էին բնապահպանական բնույթ և նույնիսկ ավելի վաղ, քան մինչև ԼՂԻՄ-ի 1988 թ. փետրվարի 20-ի հայտնի որոշումը: Եվ իրոք, դեռևս 1987 թ. հոկտեմբերի 17-ին Երևանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի հրապարակում մի խումբ ակտիվիստներ՝ Ռաֆայել Համբարձումյանը, Սամվել Գևորգյանը, Սամվել Սեդրակյանը և ուրիշներ, կազմակերպեցին էկոլոգիական ցույց, որը, ինչպես գրում էին ցույցի մասնակիցները, Խորհրդային Միությունում առաջին էկոլոգիական-քաղաքական ցույց-հանրահավաքն էր, որին մասնակցում էին արդեն հազարավոր մարդիկ[163]: Իսկ արդեն Քաղբյուրոյի հայտնի որոշումից հետո՝ 1988 թ. փետրվարի 23-ին, Երևանի Թատերական հրապարակում «Ղարաբաղ» կոմիտեի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ավելի մեծ հանրահավաք՝ նվիրված հանրապետությունում ստեղծված իրավիճակին: Հանրահավաքի կազմակերպիչները (Իգոր Մուրադյան, Վաչե Սարուխանյան և ուրիշներ), արտահայտելով հավաքվածների պահանջը, հարց էին բարձրացնում հանրապետության ղեկավարության առաջ՝ հրավիրելու Գերագույն խորհրդի նստաշրջան և քննարկելու Լեռնային Ղարաբաղի հարցը[164]:

Ելույթ ունեցողները՝ Համբարձում Գալստյանը, Վանո Սիրադեղյանը, Վազգեն Մանուկյանը, Սամսոն Ղազարյանը և ուրիշները, պաշտպանելով Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի փետրվարի 20-ի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը մայր հայրենիքին միավորելու մասին, առաջարկում էին Բաղրամյան փողոցով շարժվել դեպի Հայաստանի կոմկուսի կենտկոմի և Գերագույն խորհրդի շեն-

[163] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4516, ց. 7, գ. 13, թ. 28:
[164] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 1:

քերը և հանրահավաքը շարունակել այնտեղ, որտեղ էլ ելույթ ունեցավ նաև Սիլվա Կապուտիկյանը, իսկ Կարեն Դեմիրճյանի անունից՝ Վլադիմիր Գևորգյանը, որը ցուցարարներին հանգստացրեց՝ Կարեն Դեմիճյանի անունից հայտարարելով, որ վերջինս հաջորդ օրը՝ փետրվարի 24-ին, կընդունի հավաքի ղեկավարությանը, մանավանդ որ նախօրեին Երևան էին ժամանել ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի անդամ, քարտուղար Վ. Ի. Դոլգիխը և ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Ա. Ի. Լուկյանովը: Սակայն այդ ամենը չէր կարող կասեցնել Թատերական հրապարակում ամենօրյա հանրահավաքները, որոնց մասնակիցների գլխավոր պահանջը հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջան հրավիրելը և Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի հայտնի որոշումն ընդունելն էր:

Ի դեպ, հանրահավաքները առաջին օրերին ընթանում էին երկրում սկսած հեղափոխական վերակառուցման, լենինյան ազգային քաղաքականության կուրսը պաշտպանելու կարգախոսներով: Պատահական չէ, որ ցուցարարները իրենց հետ կրում էին Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի պետական դրոշները, Վ. Ի. Լենինի, Մ. Ս. Գորբաչովի նկարները՝ վանկարկելով «Լենին, պարտիա, Գորբաչով» կարգախոսները և այլն: Իսկ հանրահավաքներում ելույթ էին ունենում հանրապետության ճանաչված դեմքեր, գիտության, արվեստի նշանավոր գործիչներ Վ. Հ. Համբարձումյանը, Սերո Խանզադյանը, Սոս Սարգսյանը, Սիլվա Կապուտիկյանը և ուրիշներ: Ելույթ էին ունենում նաև Աֆղանստանում պատերազմած զինվոր-ինտերնացիոնալիստները, պատերազմի, աշխատանքի վետերանները, հանրապետությունում ապրող այլազգի՝ ռուս, քուրդ, ասորի ներկայացուցիչները: Բայց երբ միութենական «Ժամանակ» ծրագրով Երևանում, Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները, Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի սահմանադրական պահանջը սկսեցին ներկայացնել «ծայրահեղական», «ազգայնական» և այլ որակումներով, ապա դժվար չէր պատկերացնել, որ այդ ամենը ունեցավ այն հետևանքը, որ հանրահավաքների մասնակիցների թիվը օրեցօր սկսեց ավելանալ: Նրանք սկսեցին ավելի հետևո-

ղական և վճռական քայլերի դիմել՝ պահանջելով սեսիայի հրավիրում, Լեռնային Ղարաբաղի աշխատավորների արդարացի պահանջի բավարարում և այլն:

Տարածաշրջանում լարված մթնոլորտը հանգստացնելու նպատակով Մ. Ս. Գորբաչովը 1988 թ. փետրվարի 26-ին հանդես եկավ հայտարարությամբ, «կոչով»՝ ուղղված Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին: Նա կոչ արեց դրսևորել քաղաքացիական հասունություն, զսպվածություն և վերադառնալ նորմալ կյանքի, աշխատանքի, հետևել հասարակական կարգ ու կանոնին, երևույթներին չտալ սրություն ու դրամատիզմ, իսկ սոցիալիստական ինտերնացիոնալիզմը դիտել որպես մեր երկրի վիթխարի ուժի աղբյուր[165]:

Դժվար չէ տեսնել, որ Մ. Ս. Գորբաչովի ուղերձը հայ և ադրբեջանցի ժողովուրդներին իր մեջ այնքան էլ կոնկրետություն չէր պարունակում: Եվ հենց նույն օրն էլ՝ փետրվարի 26-ին, հրավիրվեց Հայաստանի կոմկուսի կենտկոմի պլենում, որը քննարկեց Մ. Ս. Գորբաչովի վերոհիշյալ ուղերձը: Այն ներկայացրեց Վ. Ի. Դոլգիխը, որից հետո ելույթ ունեցավ Կարեն Դեմիրճյանը: Հասկանալի է, որ այդ ելույթը լի էր նաև հուզականությամբ, որը նա չէր թաքցնում պլենումի անդամներից՝ հասկանալով որպես հանրապետության ղեկավարի իր առաքելությունը, պատասխանատվությունը ժողովրդի ճակատագրի առջև՝ որպես ժողովրդի զավակ, որը սիրում է իր ժողովրդին, որին պարտական էր ամեն ինչով:

Կարեն Դեմիրճյանը միաժամանակ իր ելույթում լիովին պաշտպանում էր ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի ուղերձը, որը ներծծված էր մեր ժողովրդի, նրա ճակատագրի նկատմամբ հոգատարությամբ: Նա նաև նշում էր, որ այդ ուղերձը հաշվի էր առնում ստեղծված ծանր իրավիճակը ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ՝ Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում: Բայց իրողություն էր նաև այն, որ Երևանում և ողջ հանրապետությունում իրադրությունը բավական բարդ էր, և անկախ նրանից՝ կու-

[165] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1678, ց.1, գ. 1, թ. 1-6:

սակցական կազմակերպությունները, խորհրդային մարմինները ձեռնարկում էին կոնկրետ քայլեր, այնուամենայնիվ, իրադրությունը չէր բարելավվում: Իսկ առանձին տեղերում արդեն տեղի էին ունենում հանրային կարգի խախտումներ: Շարունակելով իր ելույթը՝ Կարեն Դեմիրճյանը նշել է, որ օգտվելով առիթից՝ ահաբեկիչները կարող են այնպիսի իրավիճակ ստեղծել, որը կարող է ողբերգական հետևանքներ ունենալ, ուստի խնդիր էր դրվում՝ ամեն ինչ անելու իրավիճակի առողջացման ուղղությամբ, որպեսզի երկրում կյանքը մտներ նորմալ հունի մեջ:

Դժվար չէ տեսնել, որ Կարեն Դեմիրճյանի ոճը, ելույթը ոչնչով չէին տարբերվում Մ. Ս. Գորբաչովի հղած ուղերձից, փետրվարի 21-ի Քաղբյուրոյի տված գնահատականից: Ըստ Կ. Դեմիրճյանի՝ պետք էր ամեն ինչ անել, որ Մ. Ս. Գորբաչովի ելույթի կարևորությունը հասցվի յուրաքանչյուրին, և ժողովրդի ճակատագրին վերաբերող հարցերը չպետք է հանձնվեն հույզերի ու տարերայնության ճակատագրին:

Խոսելով Լեռնային Ղարաբաղի հարցի մասին՝ նա նշում էր, որ դա լրջագույն և բարդ հարց է, որի լուծումը պահանջում է բացառապես հանգիստ վիճակ՝ ցուցաբերելով համակողմանի մոտեցում: Նա նաև ավելացնում էր, որ Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է ուսումնասիրվի և քննարկվի մյուս հարցերի հետ միասին ԽՄԿԿ կենտկոմի պլենումում:

Կրկին հիշեցնելով Մ. Ս. Գորբաչովի այն միտքը, որ Խորհրդային Միությունը բազմազգ է, որ նաև մեր հանրապետությունը նույնպես բազմազգ է, որտեղ իրար կողքի ապրում են հայերն ու ադրբեջանցիները, ռուսները, հույները և այլ ազգեր, ուստի պետք է գնահատել այդ հանգամանքը, գնահատել այդ բարեկամությունը և եղբայրությունը: Ելնելով այդ ամենից՝ Կարեն Դեմիրճյանը հանրապետության կուսակցական կազմակերպությունների կարևորագույն խնդիրներից մեկը համարում էր այդ բարեկամության ամրապնդումն ու պահպանումը:

Մեր օրերի բարձունքից գնահատելով Կարեն Դեմիրճյանի ելույթը՝ պետք է ասել, որ որքան էլ կարելի է չհամաձայնել նրա ելույթի առանձին հարցադրումներին, բայց պետք է ասել, որ ի տարբերություն մյուսների՝ նա պատասխանատու էր հանրապետության ու ժողովրդի համար և երևի չէր կարող մտածել նույն ձևով, ունենալ այն դիրքորոշումը, որը դրսևորվում էր ամենօրյա հանրահավաքների ժամանակ: Հաղթահարել այդ արգելքը կարող էին նրանք, ովքեր կաշկանդված չէին որևէ բանով: Պատահական չէ, որ հենց այդ մարդիկ էլ դարձան հանրապետությունում սկսված շարժման գլխավոր կազմակերպիչները:

Նույն պլենումում ելույթ ունենալով՝ Յու. Պ. Կոչետկովը (Հայաստանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար)՝ բերեց փաստեր՝ ցույց տալու համար, որ արդեն տասնյակ հազարավոր մարդիկ միանգամայն նոր պահանջներ են դնում հանրապետության կուսակցական, պետական մարմինների առջև:

Գնահատելով հանրապետությունում ստեղծված իրավիճակը՝ ՀԿԿ կենտկոմի երկրորդ քարտուղար Յու. Պ. Կոչետկովը այն բնորոշեց կրիտիկական՝ վկայակոչելով բազմաթիվ փաստեր: Հինգերորդ օրն էր՝ Երևանում շարունակվում էին հանրահավաքները: Փետրվարի 25-ի երեկոյան ՀԿԿ կենտկոմի շենքի մոտ հավաքվել էին ավելի քան 40 հազար մարդ, իսկ ավելի ուշ արդեն Թատերական հրապարակում և նրան հարակից տարածքում՝ 250 հազար մարդ: Նա միաժամանակ նշում էր, որ արդյունաբերական ձեռնարկություններից 40 հազար բանվորներ մասնակցում էին հանրահավաքին, իսկ 60 գործարանների աշխատանքը, փաստորեն, կանգ էր առել: Իսկ դա խոսում էր այն մասին, որ Հայաստանի կոմկուսն ու կենտկոմը անզոր էին վերահսկելու հանրապետությունում ստեղծված իրավիճակը: Կենտկոմի անզորության մասին էր խոսում այն փաստը, որ նրա ջանքերը՝ փորձելու դադարեցնել Երևանում և մյուս քաղաքներում շարունակվող հանրահավաքները, հնարավոր չէր կանխել: Եվ որպես դրա ապացույց՝ Յու. Պ. Կոչետկովը բերում է հետաքրքիր օրինակ՝ կապված Երևանի մետաքսի կոմբինատի կոլեկտիվի հետ:

Կոմբինատի կոլեկտիվը, քննարկելով Մ. Ս. Գորբաչովի հանրահայտ ուղերձը՝ ուղղված հայ և ադրբեջանցի ժողովուրդներին, հավանություն է տվել դրանում առաջ քաշած հարցադրումներին, հանձնարարականներին, Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների մասին որոշմանը, բայց նաև անմիջապես ժողովից հետո ամբողջ կազմով շարժվել է դեպի Թատերական հրապարակ[166]: Երևանցիներին միացել են կիրովականցիները Աբովյանի, Հրազդանի, Մասիսի, Նաիրիի, Էջմիածնի, Արարատի, Աշտարակի և մի շարք այլ քաղաքների, շրջանների բնակիչները: Հուզումներ են սկսվել նաև Ազիզբեկովում, Իջևանում և այլուր: Բացի դրանից՝ արդեն սկսվել էին հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորների նկատմամբ գործադրվել ճնշումներ՝ պահանջելով հրավիրել արտահերթ նստաշրջան:

Բերելով վերոհիշալ փաստերը՝ Յու. Պ. Կոչետկովը անում է եզրակացություն, որ իրադարձությունը հանրապետությունում դարձել է անկառավարելի: Ելնելով այդ ամենից՝ նա այն կարծիքն է արտահայտում, որ եթե Հայաստանի կոմկուսը, ՀԿԿ կենտկոմը չկարողանան իրավիճակը փոխել և վերահսկել հանրապետությունում ստեղծված դրությունը, ապա դա կարող է դառնալ վերջին հնարավորությունը. նրանք կկորցնեն կոմունիստների և աշխատավորների վստահությունը: Եվ ի վերջո համակողմանիորեն քննարկումներից հետո ՀԿԿ կենտկոմի պլենումը խոր երախտագիտության զգացումով ընդունեց ԽՄԿԿ կենտկոմի քլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի ուղերձը՝ ուղղված Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին, որը կուսակցության անսահման ուշադրության դրսևորումներից մեկն էր, ինչպես նաև անհանգստությունը Խորհրդային Միության յուրաքանչյուր ժողովրդի և սոցիալիզմի նկատմամբ:

Պլենումը նաև լիովին և ամբողջովին պաշտպանում է այն գնահատականներն ու եզրակացությունները, որոնք տրվել էին ընկեր Մ. Ս. Գորբաչովի ուղերձում, ինչպես նաև կոչ անում հանրապետու-

[166] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 88, թ. 14:

թյան բոլոր աշխատավորներին, բոլորին վերադառնալ աշխատանքի և նորմալ ուսուցման: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հարցին, պլենումը գտնում էր, որ այդ հարցը մյուս համալիր հարցերի հետ կդառնար ԽՄԿԿ կենտկոմի պլենումում քննարկման հարց՝ այդ նպատակով ստեղծելով համապատասխան հանձնաժողով[167]:

Դժվար չէ տեսնել, որ ՀԿԿ կենտկոմի այդ որոշումը նման էր կուսակցության շատ այլ որոշումների և երբեք լուծում չէր ստանա: Ուստի դրանով պետք էր բացատրել այն հանգամանքը, որ հանրապետության աշխատավորները հույսները կապում էին հանրահավաքների հետ, իսկ շարքային շատ ու շատ կոմունիստներն էլ զանգվածաբար դուրս էին գալիս կոմունիստական կուսակցության շարքերից և ստեղծում նոր տիպի, հաճախ իրար կրկնող, իրար նման կուսակցություններ, կազմակերպում շարժումներ և այլն: Իսկ դա նաև նշանակում էր, որ անհրաժեշտ էին նոր ուժեր, նոր մարդիկ, որոնք կարող էին իրենց ետևից տանել ժողովրդական զանգվածներին և գլխավորել ժողովրդական շարժումը: Բայց անգամ նման պայմաններում Հայաստանի կոմկուսը, նրա ղեկավարությունը շարունակում էր ընդունել նոր որոշումներ, որոնք բխում էին Մ. Ս. Գորբաչովի՝ 1988 թ. փետրվարի 26-ի հանրահայտ ուղերձից:

1988 թ. մարտի 7-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկել է «Մի շարք ձեռնարկությունների կուսակցական կազմակերպություններում և կոլեկտիվներում իրադրության առողջացման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին՝ կապված Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ» հարցի հետ: Այդ նպատակով Կենտկոմի բյուրոն քննարկել է «Հայէլեկտրամեքենա», «Հրազդանմեքենա», «Բազալտ» և Չարենցավանի հաստոցաշինական գործարանի կուսակցական կազմակերպությունների քարտուղարների և տնօրենների հաշվետվությունները՝ կոլեկտիվներում իրավիճակի բարելավման ուղղությամբ, և արձանագրել, որ ընդհանուր առմամբ վերոհիշյալ կոլեկտիվներում իրավիճակը բարելավվում է: Միջոցառումներ են ձեռ-

[167] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 1, թ. 15-16, 68-70:

նարկվել պետական պլանների թերակատարման շտկման ուղղությամբ: Կենտկոմի բյուրոն նաև նշել է, որ Մ. Ս. Գորբաչովի ուղերձի հիման վրա տարվում են կազմակերպչական և կուսակցական մեծ աշխատանքներ: Կենտկոմի բյուրոն նաև հանձնարարել է վերոհիշյալ կոլեկտիվների ղեկավարությանը անձամբ ղեկավարել այդ ուղղությամբ տարվող աշխատանքները և կոլեկտիվի յուրաքանչյուր անդամին հասցնել Մ. Ս. Գորբաչովի ուղերձի սկզբունքային կարևորություն և նշանակություն ունեցող հարցերը: Նաև խնդիր էր դրվում հասնելու նրան, որ կոլեկտիվի յուրաքանչյուր անդամ խորությամբ գիտակցի, որ ազգամիջյան բարդ հարցերը կարելի է լուծել միայն դեմոկրատական գործընթացների և օրինականության շրջանակներում՝ թույլ չտալով խորհրդային ժողովուրդների ինտերնացիոնալ համախմբվածությանը հասցնել անգամ մի փոքր վնաս: Նաև նշում էր, որ ժողովուրդների ճակատագրի լրջագույն հարցերը չպետք է տրվեն մարդկանց հույզերին և տարերայնությանը: Իսկ իրադրության սրումը կարող էր հայ և ադրբեջանցի և նաև խորհրդային ժողովուրդների մեծ բարեկամության նվաճումները ետ մղել, որը ձեռք էր բերվել խորհրդային իշխանության տարիներին[168]:

Անկասկած, նման որոշման մեջ արծարծված հարցերը, որոշման տոնայնությունը, միակողմանիությունը, որը բավական հեռու էր հատկապես այն իրականությունից, հակահայկական տրամադրություններ ստեղծող այն հաղորդումներից, հոգեբանական այն գրոհից, որն ամեն օր տարբեր ձևերով ուղղվում էր հայ ժողովրդի նկատմամբ՝ սկսած Սումգայիթից մինչև Ադրբեջանի մյուս քաղաքներն ու բնակավայրերը, խոսում էին այն մասին, որ երկրի կուսակցական, պետական մարմիններն ավելի շատ բավարարվում էին ձևական, շաբլոն որոշումներ ընդունելով՝ չփորձելով խորանալ հարցի էության, նրա բուն պատճառների մեջ:

Որքան էլ տարօրինակ է, նաև ապացույց վերևում ասված մտքին՝ փետրվարի 28-ին՝ Սումգայիթյան ջարդերի օրերին, ՀԿԿ

---

[168] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց. 82, գ. 38, թ. 4-5:

կենտկոմի բյուրոն մյուս հարցերի հետ և նրանց շարքում քննարկեց «Հանրապետության սահմաններից ադրբեջանցի ազգության ներկայացուցիչների դուրս գալու փաստի մասին» հարցը՝ կապված Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ խնդրի հետ: Նշվում էր, որ պտտվում էին լուրեր Ազիզբեկովի, Գուգարքի, Ղափանի, Հրազդանի և մի շարք այլ շրջաններից ադրբեջանցի մի շարք ընտանիքների անձնավորությունների դուրս գալու մասին: Կային նաև ահազանգեր ադրբեջանցիների կարիքների, խնդիրների նկատմամբ ոչ ուշադիր վերաբերմունքի մասին: Եվ նման փաստը ՀԿԿ կենտկոմի բյուրոն համարում էր անթույլատրելի, որը իբր վկայում էր, որ առանձին աշխատողների կողմից կար քաղաքական տհաստություն և իրադրության չընկալում: Ելնելով դրանից՝ ՀԿԿ կենտկոմի բյուրոն հանձնարարել է կուսակցական շրջկոմներին, քաղկոմներին, խորհրդային գործադիր մարմինների ղեկավարներին և մյուսներին տանել անհրաժեշտ բացատրական աշխատանք՝ կասեցնելու նման փաստերը: Բյուրոն կարևոր էր համարում նաև անել ամեն ինչ, որ յուրաքանչյուր բնակավայրում, ձեռնարկությունում հայ-ադրբեջանական հարաբերություններում հաստատվեր բարեկամության, եղբայրության մթնոլորտ[169]: Ինչպես ասում են՝ չափից ավելի է: Եվ այս որոշումը կրկին վկայությունն էր այն փաստի, որ Հայաստանի կոմկուսը, նրա ղեկավարությունը, բյուրոն շարունակում էին գործել կուսակցական աշխատանքի այն կարծրատիպով, որոնք արդեն վաղուց իրենց սպառել էին և չէին տեղավորվում նոր մտածողության շրջանակներում՝ չտեսնելու տալով նոր իրականությունը: Սակայն անկախ այդ ամենից, շարունակելով նույն քաղաքականությունը՝ փետրվարի 29-ին՝ Սումգայիթի ջարդերի օրը, ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկեց «Երևան քաղաքում հասարակական կարգ ու կանոնի հաստատման անխուսափելի միջոցառումների մասին» հարցը: Բյուրոն անհանգստություն էր հայտնում այն փաստի առթիվ, որ հանրապետության ադրբեջանցի բնակչության մի մասը անհանգիստ էր իր կյանքի անվտանգության համար:

[169] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց. 82, գ. 38, թ. 5-7:

Կենտկոմի բյուրոն հանձնարարեց համապատասխան մարմիններին, կուսակցական կազմակերպություններին, կամավորական դրուժինաներին իրականացնել անհապաղ միջոցառումներ բոլոր աշխատավորական կոլեկտիվներում իրավիճակի կարգավորման, կայունության ամրապնդման ուղղությամբ[170]:

Մերօրյա դիրքերից գնահատելով Հայաստանի կոմկուսի կենտկոմի, բյուրոյի նման որոշումները, դիրքորոշումը՝ պետք է ասել, որ անչափ տարօրինակ է, որ ոչինչ չէր ասվում հենց այդ օրերին՝ 27-29-ին Սումգայիթում և Ադրբեջանում տեղի ունեցած հայկական ջարդերի, մարդկային բոլոր սահմաններն անցած, սահմռկեցուցիչ իրադարձությունների, փաստերի մասին, որոնք արդեն ձեռք էին բերել միջազգային հնչեղություն: Այդ իմաստով գնահատելով ՀԿԿ կենտկոմի բյուրոյի նման դիրքորոշումը՝ պետք է ասել, որ այն ոչ մի արդարացում և բացատրություն չուներ, որքան էլ նույն բյուրոյում (փետրվարի 29) քննարկվել էր նաև «Ադրբեջանական ԽՍՀ-ն թողած հայ ազգաբնակչության ներկայացուցիչների շրջանում աշխատանք տանելու հանձնաժողով ստեղծելու մասին» հարցը:

Բյուրոն նշում էր, որ աԱդրբեջանական ԽՍՀ-ի հայ բնակչությունը ևս անհանգստություն էր դրսևորում իր անվտանգության համար՝ կապված Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների հետ, որի համար էլ Ադրբեջանից եկող հայերի հարցով զբաղվելու, ընդունելու և տեղավորելու, նրանց շրջանում բացատրական աշխատանք տանելու համար ստեղծվում էր հանձնաժողով՝ ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Վլադիմիր Մովսիսյանի գլխավորությամբ, որը պետք է հոգար այդ երևույթին առնչվող բոլոր խնդիրները[171]:

Արդեն 1988 թ. մարտի 3-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկեց «Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ» խնդրին առնչվող «Հանրապետությունում իրավիճակի կայունության հաստատման ուժեղացման մասին» հարցը, որտեղ նշվում էր, որ հանրապետությունում իրավի-

[170] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց. 82, գ. 38, թ. 7-8:
[171] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 38, թ. 8:

ճակը կարգավորվում էր, սակայն այդ հարցում չպետք էր թույլ տալ ինքնագոհություն: Ամենագլխավորը պետք էր հասնել ստեղծված վիճակի կայունության հաստատմանը, ապահովել կյանքի և աշխատանքի համար նորմալ ռիթմ: Բյուրոն բոլոր կուսքաղկոմների, շրջկոմների, գործադիր կոմիտեների, հասարակական կազմակերպությունների առջև միաժամանակ խնդիր է դնում աշխատանքի ծանրությունը տեղափոխելու դեպի աշխատանքային կոլեկտիվներ և հենվելու ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի՝ նաև հայ ժողովրդին ուղղված ուղերձի և 1988 թ. փետրվարի 26-ի ՀԿԿ կենտկոմի պլենումի որոշումների վրա: Նաև կարևոր էր համարվում թույլ չտալ, որ հանրապետության որևէ կոլեկտիվում ձևավորվեր Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի միացման խումբ, քանի որ, ըստ ՀԿԿ կենտկոմի պլենումի, նման փաստերը կունենային կործանարար նշանակություն Լեռնային Ղարաբաղում իրավիճակի նորմալացման ուղղությամբ: Եվ վերջապես այդ ամենի իրականացման անձնական պատասխանատվությունը ՀԿԿ կենտկոմը դնում էր ձեռնարկությունների ղեկավարների, կուսակցական կազմակերպությունների քարտուղարների վրա, որոնք այդ ամենի մեջ պետք է ներգրավեին բոլորին՝ նաև հանձնարարելով, որ դրանք պետք է կատարել դեմոկրատիայի և օրինականության շրջանակներում[172]: Այդ ամենը նշանակում էր, որ ՀԿԿ կենտկոմը ամեն ինչ անում էր՝ ԽՄԿԿ կենտկոմի որոշումները իրականացնելու համար, հավատարիմ էր նրա սկզբունքներին, որով էլ իրականում Լեռնային Ղարաբաղի հարցը կանգնեցնում էր փակուղու առաջ: Այնպես որ ժողովրդին ուրիշ ոչինչ չէր մնում անել, քան գնալ այն ուժերի ետևից, որոնք վճռական էին պայքարել մինչև վերջ՝ հասնելով Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու նպատակին: Սակայն Հայաստանի կոմկուսի կենտկոմը, լինելով ԽՄԿԿ-ի մի մասը, ղեկավարվելով նրա կողմից, շարունակում էր հավատարիմ մնալ նաև Լեռնային Ղարաբաղի հարցում նրա որդեգրած քաղաքականությանը:

[172] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 38, թ. 9-10:

1988 թ. մարտի 9-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկեց «Երազ», «Չափորոշիչ», Չարենցավանի «Գործիքաշինական արտադրական միավորման» կոլեկտիվների հաշվետվությունները աշխատանքային կոլեկտիվներում իրադրության առողջացման ուղղությամբ» հարցը՝ նշելով, որ այդ ուղղությամբ նրանց աշխատանքներում նկատվում էր պասիվություն, սպասողականություն, ստեղծված իրավիճակի մակերեսային գնահատական և այլն: Ելնելով դրանից՝ Կենտկոմի բյուրոն վերոհիշյալ գործարանների տնօրեններին, կուսկազմակերպությունների քարտուղարներին նախազգուշացնում էր, որ նրանք անձամբ պատասխանատու են Կենտկոմի առաջ աշխատանքային կոլեկտիվներում իրավիճակի բարելավման ուղղությամբ: Միաժամանակ նշվում էր, որ ստեղծված վիճակը պահանջում է հավասարակշռված և սթափ մոտեցում: Բյուրոն նաև հանձնարարում էր համապատասխան շրջկոմներին չիջեցնել պահանջկոտությունը բարձրացրած հարցերի լուծման ուղղությամբ[173]: Իսկ արդեն մարտի 10-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն կրկին ընդունեց նման կարգի մի որոշում: Այդ հանգամանքը պայմանավորված էր այն փաստով, որ մարտի 9-ին ԽՄԿԿ կենտկոմը քննարկել էր «Լեռնային Ղարաբաղի հարցի հետ կապված՝ Հայաստանում և Ադրբեջանում ստեղծված իրավիճակի մասին» հարցը, որտեղ էլ, բնականաբար, ելույթ էր ունեցել Մ. Ս. Գորբաչովը: Հայաստանի կոմկուսի բյուրոն ևս իր հերթին լիովին և ամբողջովին պաշտպանում էր խորհրդակցությունում Մ. Ս. Գորբաչովի առաջ քաշած դրույթները և դրանք ընդունում որպես ղեկավարման ուղեցույց: Իսկ հարցադրումները վերաբերում էին Հայաստանում և Ադրբեջանում իրավիճակի բարելավմանը՝ հանձնարարելով օգտագործել կուսակցական աշխատանքի բոլոր մեթոդները՝ գաղափարախոսական, կուսակցական, քաղաքական և այլն՝ հաղթահարելու եղած դժվարությունները և լուծելու Լեռնային Ղարաբաղում կուտակված խնդիրները[174]: Իսկ իրականությունն այն էր, որ հանրապետությունում մթնոլորտը օրավուր շիկանում էր, և Հայաստանի կոմկուսը

[173] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 35:
[174] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 35-36:

կորցնում էր հանրապետությունում տեղի ունեցող իրադարձությունների վրա որևէ ազդեցություն ունենալու հնարավորությունը, բայց իր պարտքն էր համարում հրավիրել Կենտկոմի բյուրո, ակտիվի ժողով, խորհրդակցություն և ընդունել իրավիճակից բխող որոշումներ: Դրանց շարքին է պատկանում 1988 թ. մարտի 20-ին հրավիրված Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի նիստը, որը քննարկել էր «Հանրապետությունում իրավիճակի նորմալացման անհետաձգելի միջոցառումների մասին» հարցը, որում նշվում էր, չնայած հանրապետության կուսակցական քաղկոմների, շրջկոմների սկզբնական կուսակցական կազմակերպությունների կատարած աշխատանքներին՝ իրականացնելու Մ. Ս. Գորբաչովի՝ Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին ուղղված ուղերձում բարձրացված հարցերը, Հայաստանի կոմկուսի կենտկոմի պլենումի որոշումները՝ իրադրությունը հանրապետությունում շարունակում էր մնալ լարված, պայթյունավտանգ: Նաև նշվում է, որ «Ղարաբաղ» կոմիտեն ընդլայնում էր իր գործունեությունը՝ դիմելով ահաբեկչական քայլերի, կուսակցական, խորհրդային մարմինների հասցեին հարձակումներ գործելով, անցնելով օրինականության սահմանները և այլն: Նրա նկատմամբ տարվող գաղափարական մեկուսացման աշխատանքները անհրաժեշտ արդյունքներ չէին տալիս:

Իրադրությունը մեծ մասամբ բարդանում էր՝ պայմանավորված Սումգայիթում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններով: Ներկա ժամանակաշրջանում հաշվառված են 595 ընտանիքներ՝ 2364 անդամներով, որոնք ժամանել էին Հայաստան Սումգայիթից և Ադրբեջանի այլ բնակավայրերից: Տարածված լուրերի համաձայն՝ Հայաստանից ևս կային ադրբեջանցիներ, որոնք մեկնում էին Ադրբեջան:

ՀԿԿ կենտկոմի բյուրոն նշում էր, որ համապատասխան մարմինների կողմից տարվող աշխատանքները լիովին չէին ապահովել՝ իրականացնելու հայ ժողովրդին ուղղված, Մ. Ս. Գորբաչովի ուղերձից բխող որոշումները, հանձնարարականները: Ելնելով ստեղծված վիճակից՝ ՀՀ Կենտկոմի բյուրոն հանձնարարում էր համապատաս-

խան մարմիններին ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ կանխելու 1988 թ. մարտի 26-ին նշանակված հանրահավաքը: Խնդիր էր դրվում բացատրական և կազմակերպչական անհրաժեշտ աշխատանքներ տանելու բոլոր ոլորտներում՝ ընկալելու համար ստեղծված իրավիճակի հետևանքները: Խնդիր էր դրվում իրականացնելու ռադիոյի, հեռուստատեսության միջոցով անվանի, ճանաչված մարդկանց ելույթները, մամուլում հրապարակել համապատասխան հոդվածներ և այլն: Կարևոր էր համարվում նաև աշխատանքներ տանել «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը չեզոքացնելու ուղղությամբ, և ներկա շրջանում «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը կրում էր քաղաքական վտանգավոր բնույթ և հակասում էր ժողովրդի շահերին[175]:

Ինչ խոսք, դժվար է համաձայնել ՀԿԿ կենտկոմի բյուրոյի նման գնահատականին, քանզի ճշմարտությունն այն էր, որ «Ղարաբաղ» կոմիտեն արդեն դարձել էր համաժողովրդական շարժումը գլխավորող ուժ, և ժողովուրդը նրա հետ էր կապում Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը: Իսկ ժողովուրդն ավելի իմաստուն էր, նրա հավաքական միտքը, կողմնորոշումը հուշում էր, որ միայն երկարատև և համառ պայքարով էր հնարավոր լուծել այդ հարցը, որը Հայաստանի կոմկուսի կողմից ընդունելի տարբերակ չէր: Եվ այդ իմաստով իրականությունն այն էր, որ ամենօրյա հանրահավաքները, Արցախյան հարցի լուծման հարցադրումներն արդեն ընկալելի և հոգեհարազատ էին ժողովրդական լայն զանգվածների համար: Իսկ դա նշանակում էր, որ Հայաստանի կոմկուսի գործադրած ջանքերը՝ մարդկանց ետ պահելու ամենօրյա հանրահավաքներին մասնակցելու ցանկությունից, անօգուտ էին: Հայաստանի կոմկուսի հետագա քայլերը ուղղված էին արգելափակելու «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը, ամենօրյա հանրահավաքները, ցույցերը և այլն:

1988 թ. մարտի 23-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկել է «Անօրինական «Ղարաբաղ» կոմիտեի ճանաչման մասին» հարցը և արձանագրել, որ, այսպես կոչված, «Ղարաբաղ» կոմիտեի գործու-

[175] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 42-43:

նեությունը չի համապատասխանում Հայկական ԽՍՀ Սահմանադրությանը և գործող օրենսդրությանը: Այն ձեռք է բերել քաղաքական վտանգավոր բնույթ և հակասում է ժողովրդի շահերին: Ելնելով դրանից ՀԿԿ կենտկոմի բյուրոն որոշել է.

1. Այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեն ճանաչել անօրինական և դադարեցնել նրա գործունեությունը:

2. Հավանություն տալ տվյալ հարցի վերաբերյալ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշման նախագծին[176]:

Նախագիծը ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը 1988 թ. մարտի 24-ին հրապարակեց որպես որոշում, որով էլ դադարեցվեց «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը, որի մասին ՀԿԿ կենտկոմի երկրորդ քարտուղար Յու. Կոչետկովը որոշ ժամանակ անց՝ 1988թ. հունիսի 4-ին, համապատասխան գրություն ուղարկեց ԽՄԿԿ կենտկոմ՝ ցույց տալու համար այն աշխատանքները, որոնք իրականացվում էին Հայաստանի կոմկուսի կողմից հանրապետությունում իրավիճակի բարելավման ուղղությամբ[177]:

Կենտկոմի վերոհիշյալ որոշմանը կցվում էր նաև ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը՝ «Հանրապետության քաղաքներում և շրջաններում քաղաքացիների նախաձեռնությամբ ժողովներ, այլ զանգվածային միջոցառումներ անցկացնելու ժամանակավոր կանոնների մասին», որում նշվում էր, որ նման կարգի միջոցառումներ իրականացվում են ԽՍՀՄ և ՀԽՍՀ Սահմանադրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան, որոնք ուղղված են ապահովելու քաղաքացիների օրինական շահերը, ապահովելու պետական և հասարակական կարգն ու կանոնը, հետևելու սոցիալիստական ապրելակերպի բարոյական նորմերին և այլն: Միաժամանակ նշվում էր, որ այդ կանոնները տարածվում էին նաև քաղաքացիների ինքնաստեղծագործությունների, նախաձեռնությունների վրա: Եվ եթե չկան, բացակայում են նման միջոցառումներ անցկացնելու պայման-

---

[176] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 47:
[177] Տե՛ս նույն տեղում, թ. 42-43:

ները, կանոնները, հանրահավաքներ, ցույցեր անցկացնելն արգելվում էր և այլն[178]:

Դժվար չէ համոզվել, որ բերելով նման փաստեր՝ Հայաստանի կոմկուսը և կենտկոմն ամեն ինչ անում էին՝ ստեղծելու արգելքներ ինքնաբուխ կազմակերպված հասարակական կազմակերպությունների, նոր շարժումների համար, որոնք իրենց քայլերով, գործունեությամբ հակադրվում էին երկրում գործող կարգուկանոնին, գոյություն ունեցող չափորոշիչներին և այլն: Մինչդեռ դրան հակառակ նախաձեռնությունները, որոնք ուղղորդվում էին Հայաստանի կոմկուսի կողմից, խորհրդային մարմինների կողմից, խրախուսվում էին: Հենց այդ նպատակով էլ 1988 թ. մարտի 25-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկել է «Հայաստանի աշխատավորական կոլեկտիվների և արտադրության առաջամարտիկների նախաձեռնությունը Համամիութենական XIX կուսակցական կոնֆերանսը արժանի ձևով դիմավորելու մասին» հարցը՝ նշելով, որ մեծացել է հանրապետության աշխատավորների աշխատանքային և քաղաքական ակտիվությունը, ձգտումը՝ մեծ ներդրում կատարելու վերակառուցման գործում: Նշվում էր, որ Մեծ հոկտեմբերի 70-ամյակին նվիրված սոցիալիստական մրցույթին մասնակցում էին հանրապետության ավելի քան 1500 տարբեր կազմակերպություններ, աշխատանքային կոլեկտիվներ, բրիգադներ, արտադրամասեր, կոլտնտեսություններ և այլն: Այնուհետև բերվում էին տասնյակ ձեռնարկությունների, առաջավորների անուններ, որոնք ծավալել էին սոցիալիստական մրցություն՝ համամիութենական XIX կոնֆերանսը աշխատանքային հաջողություններով դիմավորելու համար և այլն:

Հետաքրքիր է ասել, որ Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն, բերելով նման փաստեր, օրինակներ, նշում էր, որ այդ ամենը արժանի է պաշտպանության նաև որպես վկայություն այն մարդկանց քաղաքական գիտակցության, որոնք ստեղծագործական մասնակցություն են ցուցաբերում վերակառուցման և կուսակցության սո-

[178] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 57-59:

ցիալ-տնտեսական քաղաքականության իրականացմանը: Կենտկոմի բյուրոն, գնահատելով այդ ամենը, նաև հանձնարարում էր համապատասխան մարմիններին, օղակներին այդ ամենը քարոզել, տարբեր միջոցներով լուսաբանել, խրախուսել, նյութապես շահագրգռել և այլն[179]:

Կրկին դժվար չէ համոզվել, որ Հայաստանի կոմկուսը մի դեպքում շատ դժգույն, մտահոգ, անհանգիստ դիրքերից էր գնահատում հանրապետությունում տիրող իրավիճակը, դժգոհում, անհանգստանում, որ շատ աշխատանքային կոլեկտիվներ այլևս չէին գնում կուսակցության նախանշած ուղիով, հանրահավաքներ էին անում հակառակ վերադասի ցանկությունների և այլն, մյուս կողմից էլ կենտրոնին հանգստացնելու համար ցանկալին ներկայացնում էր իրականություն և բերում ուռճացած թվեր, փաստեր աշխատավորական կոլեկտիվների նման կարգի նախաձեռնությունների մասին, որոնք բավական հեռու էին իրականությունից: Դա, փաստորեն, նման էր ինքնախաբեության, նաև արվում էր Մոսկվային հանգստացնելու, ցույց տալու համար, որ Հայաստանի կոմկուսը վերահսկում է ամեն ինչ:

Նախորդ որոշումից մի քանի օր հետո՝ 1988 թ. մարտի 30-ին, ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկել է «Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադարձությունների վերլուծությունից բխող՝ հանրապետությունում իրավիճակի բարելավման և կուսակցական կազմակերպությունների խնդիրների մասին» հարցը և հանձնարարել Կենտկոմի քարտուղարներ, բյուրոյի անդամներ Յու. Կոչետկովին, Ռ. Արզումանյանին, Խ. Մանդալյանին, հաշվի առնելով տեղի ունեցած մտքերի փոխանակությունը, նախապատրաստել և Կենտկոմի բյուրոյի քննարկմանը ներկայացնել տվյալ հարցի վերաբերյալ կոնկրետ միջոցառումների և որոշման նախագիծ[180]: Այնուհետև նույն բյուրոյում քննարկել է «Վ. Ի. Լենինի 118-ամյակին նվիրված կոմունիստական շաբաթօրյակ անցկացնելու մասին» հարց, որտեղ իրականությունից բավական հեռու տողեր է գրում այն մասին, որ իբր հանրապետության աշ-

[179] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 57-59:
[180] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 43, թ.2:

խատավորները, արձագանքելով Մոսկվայի հայրենասիրական նախաձեռնությանը, 1988 թ. ապրիլի 16-ին որոշել էին անցկացնել կոմունիստական շաբաթօրյակ՝ նվիրված Վ.Ի. Լենինի ծննդյան 118-ամյակին, ցանկություն էին հայտնել մասնակցել կոմունիստական շաբաթօրյակին: Բերվում են փաստեր, թվեր, աշխատանքային կոլեկտիվների անուններ («Հայէլեկտրոմեքենա», «Անդրկովկասկաբել», Լենինականի նասկիների արտադրական միավորում, Լուկաշինի անվան մանվածքային ֆաբրիկա, Երևանի լոկոմոտիվների դեպո և այլն), որոնք հանդես են եկել լենինյան շաբաթօրյակի օրը ամենաբարձր արտադրողականությամբ աշխատելու կոչով հիմնականում խնայված նյութական և էներգետիկ ռեսուրսների հաշվին: Այնուհետև Կենտկոմի բյուրոն արտադրության առաջավորների այդ նախաձեռնությունը համարում է հանրապետության աշխատավորների կողմից կուսակցության ռազմավարական կուրսի պաշտպանություն՝ ուղղված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացմանը, մասշտաբային խնդիրների կատարմանը և այլն: Ելնելով այդ ամենից՝ Կենտկոմի բյուրոն հավանություն է տվել թվարկած ձեռնարկությունների հայրենասիրական նախաձեռնությանը՝ 1988 թ. ապրիլի 16-ին իրականացնելու կոմունիստական շաբաթօրյակ՝ նվիրված Վ. Ի. Լենինի ծննդյան 118-րդ տարեդարձին, հանձնարարել է համապատասխան օղակներին ամեն ինչ անել՝ այդ օրը բարձր մակարդակով անցկացնելու համար[181]:

Ոչ մի կասկած, որ այդ որոշումը գրվել էր Հայաստանի կոմկուսի կենտկոմի գրասենյակային մի շարք աշխատողների կողմից, որը համապատասխանում էր տասնամյակներով հաստատված չափորոշիչներին և ոչնչով չէր համապատասխանում հանրապետությունում ստեղծված իրավիճակին, նրա իրական կյանքին, քանզի ողջ հանրապետությունը, հայ ժողովրդի գերակշիռ մասին չէին կարող հետաքրքրել նման շաբաթօրյակներ, նման հարցեր՝ բացի այդ օրերի համար գլխավոր դարձած Արցախի հարցից:

[181] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց. 82, գ. 43, թ. 2-3:

Վերոհիշյալ օրինակը հաստատում է այն իրողությունը, որ Հայաստանի կոմկուսը, նրա ղեկավարությունը այլևս չէր կարող իր ետևից մասսաներ տանել: Իրականում նա կտրված էր ժողովրդից և, փաստորեն, միայն նոմինալ էր շարունակում մնալ երկրի ղեկավար, մինչդեռ իրադարձությունները հանրապետությունում ընթանում էին միանգամայն այլ սցենարով: Հանրապետության աշխատավորները արդեն հիասթափվել էին Հայաստանի կոմկուսից, հատկապես նրա առաջին դեմքերից, որոնք ամեն ինչ անում էին՝ կենտրոնին դուր գալու, նրա հրահանգները կատարելու համար: Նրանք մեկը-մյուսի ետևից ընդունում էին նման կարգի որոշումներ, գրեթե ամեն տողում պաշտպանում ԽՄԿԿ կենտկոմին, նրան ներկայացնում նախաձեռնություններ, որոնք արդեն չէին կարող ժողովրդականություն վայելել: Հարցն այն էր, որ «վերակառուցումը» փոխել էր մարդկանց մտածողությունը, որոնք դուրս էին եկել նախկին կաղապարված մտածողությունից և ցանկանում էին նոր կյանք կառուցել, վերականգնել պատմական ճշմարտությունը և լուծել Արցախի հարցը: Եվ կարծել, որ այդ խնդիրը կարող էր լուծել Հայաստանի կոմկուսը և գլխավորել հայ ժողովրդի ազատագրական պայքարը, առնվազն միամտություն է և հեռու իրականությունից: Առանց չափազանցության դա համաժողովրդական պայքարի շրջան էր, երբ մարդիկ ապրում, շնչում էին դրանով և իրենց ապագան տեսնում Արցախի համար պայքարի մեջ: Որքան էլ որ «Ղարաբաղ» կոմիտեն օրեցօր ավելի մեծ ժողովրդականություն էր վայելում, իշխանությունները, այնուամենայնիվ, մնում էին անդրդվելի և համառորեն մերժում նրանց գործունեությունը, ընդունում տարբեր կարգի որոշումներ՝ որակելով այն վտանգավոր և այլն, ուստի « Ղարաբաղ» կոմիտեն իր հերթին քայլեր էր ձեռնարկում և դիմում իշխանություններին՝ օրինականացնելու իր գործունեությունը: Այդ նպատակով 1988 թ. մարտի վերջերին «Ղարաբաղ» կոմիտեն մի գրություն ուղարկեց ՀԿԿ կենտկոմ՝ անձամբ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանին, որտեղ նշում էր, որ արդեն շուրջ մեկ ամիս է՝ «Ղարաբաղ» կոմիտեն գործում է խորհրդային օրենքներին համապատասխան, պաշտպա-

նում է վերակառուցման քաղաքականությունը, հանդես գալիս ԼՂԻՄ-ի հարցը դեմոկրատական լենինյան սկզբունքներով լուծելու օգտին և այլն, սակայն չի ստանում պաշտոնական ճանաչում, որքան էլ որ հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Վ. Մովսիսյանը ՀԿԿ կենտկոմի և կառավարության անունից հրապարակայնորեն խոստացել էր, որ այն կճանաչվի[182]: Գրության մեջ նաև ճիշտ է նշվում, որ հարցի ձգձգումը հակասում էր երկրի գործող սահմանադրության սկզբունքներին, ինչպես նաև հեղինակազրկում հանրապետության իշխանություններին, նրա ղեկավարներին, որոնք իրենց ձախողումների համար մեղավորներ, քավության նոխազ էին փնտրում և տարբեր կարգի մեղադրանքներ ներկայացնում շարժման ակտիվիստներին, հատկապես հանրահավաքներից հետո կանչում Պետական անվտանգության կոմիտե, դատախազություն, փորձում նրանց «վերամշակել» բացատրություններ վերցնել և այլն: Բայց անկախ այդ ամենից՝ Հայաստանի կոմկուսը այդ ամենին արձագանքում էր ոչ համարժեք ձևով և իրար հետևից կրկին ընդունում շարժումը մերժող որոշումներ: Դրանց շարքում հատկապես հետաքրքիր է ներկայացնել մի շարք ոչ ֆորմալ կազմակերպությունների և դրանց գործունեության դատապարտմանը վերաբերող որոշումը, դրանից բխող հետևանքները և այլն:

1988 թ. ապրիլի 8-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկել է նույն թվականի հունվարի 8-ին ԽՄԿԿ կենտկոմի կողմից ընդունած «Մի շարք ոչ ֆորմալ կազմակերպությունների նեգատիվ միտումների հաղթահարման մասին» որոշումը, հավանություն տվել նրա սկզբունքներին, ինչպես նաև ընդունել միջոցառումների մի ամբողջ ծրագիր՝ իրականացնելու համար ԽՄԿԿ կենտկոմի վերոհիշյալ որոշումը:

ՀԿԿ կենտկոմի բյուրոն նշում էր, որ հանրապետությունում ներկա ժամանակաշրջանում գործում էին 1640 ոչ ֆորմալ տարբեր կարգի սիրողական կազմակերպություններ, ակումբներ, որոնց գործողու-

[182] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 12, թ. 155:

թյուններն ուղղված էին բավարարելու բնակչության հոգևոր պահանջները և իրականացնելու նրանց ստեղծագործական ներուժը: Բյուրոն նաև արձանագրում էր, որ ոչ ֆորմալ կազմակերպությունների գործունեության վրա որոշակի ազդեցություն են ունենում կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները, որպեսզի այնտեղ չներթափանցեն հակահասարակական էլեմենտներ:

Կենտկոմի բյուրոն միաժամանակ նշում էր, որ 1988 թ. փետրվարին, «Լեռնային Ղարաբաղի և նրա խնդրի շուրջ» հարցով պայմանավորված, ձևավորվել էր «Ղարաբաղ» ոչ ֆորմալ կազմակերպությունը, որը բարձրացրեց Խորհրդային Հայաստանին Լեռնային Ղարաբաղի միացման հարցը, որից օգտվեցին որոշ հակահասարակական տարրեր, որոնք ներթափանցել էին «Ղարաբաղ» կոմիտեի մեջ՝ ձգտելով ապակողմնորոշել ժողովրդական զանգվածներին: Հասկանալի է, որ նման գնահատականը հիմք է տալիս, որ ՀԿԿ կենտկոմը թույլ չտար, որ «Ղարաբաղ» կոմիտեն ազատորեն գործեր, որքան էլ, որ, ինչպես տեսանք, «Ղարաբաղ» կոմիտեն փորձում էր իր գործունեությունը իրականացնել:

Ելնելով վերոհիշյալից՝ ՀԿԿ կենտկոմի բյուրոն մշակեց միջոցառումների մի ամբողջ ծրագիր, որն ուներ մեկ նպատակ՝ արգելել ոչ ֆորնալ կազմակերպությունների գործունեությունը և նրանց հետ տանել բացատրական աշխատանք: Այդ ամենը նախատեսվում էր իրականացնել կուսակցական, կոմերիտական, արհմիութենական, խորհրդային կազմակերոպությունների միջոցով՝ կիրառելով գաղափարական, քաղաքական աշխատանքի տարբեր մեթոդներ[183]:

Հասկանալի է, որ ՀԿԿ կենտկոմի նման որոշումը հետապնդում էր մեկ նպատակ՝ ամեն ինչ անել՝ արգելելու «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը: Բայց այդ ամենին զուգահեռ ՀԿԿ կենտկոմը շարունակում էր աշխատել իրեն բնորոշ աշխատանքային գրաֆիկով: Եվ քանի որ մոտենում էր, ինչպես ամեն տարի աշխատավորների

[183] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 22, թ. 2-3, 33-37:

համերաշխության միջազգային տոնը՝ Մայիսի 1-ը, Կենտկոմը տոնի նախօրյակին պետք է ընդուներ համապատասխան որոշում և հանձնարարեր բոլորին նախապատրաստվել այդ տոնին՝ արժանի ձևով նշելու համար: Նաև հասկանալի է, որ մայիսմեկյան տոնը Խորհրդային Հայաստանում, ի տարբերություն մյուս հանրապետությունների, ուներ մեկ կարևոր առանձնահատկություն, դա Արցախյան շարժումը և «Ղարաբաղ» կոմիտեն էր, որին զուգահեռ հարևան Ադրբեջանում մոլեգնում էր հակահայկական հիստերիան, երբ ամեն օր Հայաստանն ընդունում էր նորանոր փախստականների և այլն:

Եվ հենց այդ մթնոլորտում էլ ՀԿԿ կենտկոմի բյուրոն 1988 թ. ապրիլի 29-ին ընդունեց որոշում՝ «Աշխատավորների համերաշխության միջազգային տոնի՝ Մայիսի 1-ի տոնակատարության և դրա հետ կապված մյուս միջոցառումների մասին»[184]:

Ծանոթանալով ՀԿԿ կենտկոմի բյուրոյի այդ նյութերին՝ ավելի ես համոզվում, որ Հայաստանի կոմկուսին ավելի շատ մտահոգում էին ԽՄԿԿ կենտկոմի որոշումները, դրանցում Մ. Ս. Գորբաչովի ելույթները, կուսակցության XIX կոնֆերանսին նախապատրաստման աշխատանքները, բարձր ցուցանիշներով դիմավորելը, վերակառուցման առաջամարտիկների փորձը տարածելու մտահոգությունները, խորհրդային հասարակարգի դեմոկրատացման, նորացման ուղղությամբ տարվող աշխատանքները և այլն[185]:

Ինչպես նկատելի է, վերոհիշյալ որոշումը, նրանում արծարծված հարցերը բավական հեռու էին իրականությունից, քանի որ երկիրը ընդհանուր առմամբ մեծ հեղափոխական վերափոխումների շրջան էր ապրում, իսկ հանրապետության ղեկավարությունը, հատկապես Հայաստանի կոմկուսը օր օրի հեղինակազրկվում էր հազարավոր մարդկանց աչքի առաջ, առավել ևս նրա առաջին դեմքերը անզոր էին որևէ բան անել, փոխել: Եվ նման պայմաններում շարունակել ամեն օր նման կարգի որոշումներ ընդունել նշանակում էր գործել,

[184] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց. 82, գ. 22, թ. 2-3:
[185] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց. 82, գ. 22, թ. 96, 126-130:

ապրել նախկին իներցիայով, ինքնախաբեությամբ, չտեսնել, թե ինչ է կատարվում շուրջդ, չնկատել օր օրի փոխվող մարդկանց և կառչած մնալ հնին: Իսկ հանրապետությունում այդ օրերին արագորեն փոխվում էր մարդկանց մտածողությունը, որոնք տարված էին մեկ գաղափարով՝ պայքարել անկախության և Արցախի ազատագրման համար:

Ընդ որում, կուսակցության որոշումների դեմ միայն մեր հանրապետությունում չէ, որ պայքար էր ծավալվում: Դա արդեն ընդհանուր երևույթ էր, մանավանդ երբ վերանայվեց ԽՍՀՄ Սահմանադրության 6-րդ հոդվածը՝ կուսակցության ղեկավար և ուղղություն տվող ուժի մասին հանրահայտ դրույթը, երբ Միության մասշտաբով տարբեր հանրապետություններում ևս սկսվեցին նոր շարժումների, կուսակցությունների ձևավորում, Կոմկուսից զանգվածային դուրս գալու գործընթացներ և այլն: Բայց միևնույն է Հայաստանի կոմկուսը շարունակում էր ապրել, աշխատել, գործել իր կյանքով, իսկ ժողովուրդը՝ իր: Դրա վկայությունը Հայաստանի կոմկուսի հերթական որոշումն էր:

1988 թ. մայիսի 10-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկել է 1988 թ. ապրիլի 5-ին «Պրավդա» թերթում հրապարակված «Վերակառուցման սկզբունքները. հեղափոխական մտածողություն և գործողություններ» հոդվածը: Կենտկոմի բյուրոն լիովին պաշտպանում էր հոդվածում առաջ քաշած սկզբունքները և եզրակացությունները, որոնք վերաբերում էին 1985 թ. ապրիլյան պլենումից և կուսակցության XXVII համագումարից հետո Խորհրդային Միությունում տեղի ունեցած գործընթացներին, որոնք ուղղված էին խորհրդային հասարակության վերակառուցման ուղղությամբ տարվող աշխատանքներին, երկրի սոցիալ-տնտեսական, հոգևոր կյանքի արմատական վերափոխումներին և այլն:

Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն նաև նշում էր, որ հանրապետության ողջ աշխատավորությունը խորը բավականությամբ է ընդունել «Պրավդա» թերթում հրապարակված հոդվածը և լիովին համակարծիք էր նրանում արված ընդհանրացումներին ու եզրակա-

ցություններին՝ կապված խորհրդային մարդկանց հեղափոխական մտածողության և գործողությունների հետ: Բյուրոն նաև նշում էր, որ հանրապետության Կոմկուսի կենտկոմը, քաղկոմները, շրջկոմները, թերթերի, ամսագրերի խմբագրությունները, հեռուստատեսությունը, ռադիոն ստանում էին հարյուրավոր նամակներ, արձագանքներ, որոնց հեղինակները ջերմորեն պաշտպանում և արձագանքում էին «Պրավդա» թերթում հրապարակված հոդվածում առաջ քաշած գաղափարները: Իսկ մի շարք աշխատանքային կոլեկտիվներում, կուսակցական կոմիտեներում, մամուլում և այլուր տեղի էին ունենում հոդվածի քննարկումներ, պաշտպանում երկրում իրականացվող հեղափոխական վերափոխումների քաղաքականությունը, վստահորեն նշում, որ վերակառուցման քաղաքականությունը անդառնալի իրողություն էր:

Ինչ խոսք, ՀԿԿ կենտկոմի բյուրոն նաև նշում էր վերակառուցման ընթացքում եղած դժվարությունների, բացթողումների, թերությունների մասին և հանձնարարում համապատասխան մարմիններին, աշխատանքային օղակներին ամեն ինչ անել դրանք հաղթահարելու և վերացնելու համար: Ոչ մի կասկած, որ այդ ամենն ավելի շատ ձևական բնույթ էր կրում:

Կուսակցական աշխատանքի ձևականության մասին էր խոսում նաև այն փաստը, որ 1988 թ. մայիսի 16-ին Հայաստանի կոմկուսը Ադրբեջանի կոմկուսի հետ ընդունեց համապատասխան որոշում, որը կոչվում էր «Հայաստանի ԽՍՀ-ի և Ադրբեջանի ԽՍՀ-ի աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության բարելավման ուղղությամբ Հայաստանի կոմկուսի և Ադրբեջանի կոմկուսի կոմպլեքս միջոցառումների պլանի մասին» որոշում, որում նշվում էր, որ Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսը, պայմանավորված Լեռնային Ղարաբաղի իրադարձություններով, պետք է տաներ հետևողական աշխատանք՝ իրականացնելու ազգային քաղաքականության մեջ լենինյան սկզբունքները և ամրապնդելու հայ ու ադրբեջանցի ժողովուրդների, Խորհրդային Անդրկովկասի և ամբողջ երկրի ժողովուրդների միջև բարեկամությունը: Ելնելով ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի որոշու-

մից՝ Հայաստանի և Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունները մշակել են աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության վերաբերյալ միջոցառումների բավական ծավալուն, կոմպլեքս պլան՝ բաղկացած մոտ 20 էջից[186]: Ծանոթանալով այդ պլանին, միջոցառումների բովանդակությանը, իրականացման ժամկետներին և այլն՝ կրկին համոզվում ես, թե այդ ամենը որքան ձևական, ոչինչ չասող բնույթ էր կրում, երբ իրականում Ադրբեջանում, Սումգայիթում, Բաքվում և այլուր ամիսներ շարունակ իրականացնում էին հայկական ջարդեր, միջնադարյան վայրագություններ հիշեցնող բռնություններ, խոշտանգումներ, անօրինականություններ, որոնց նկատմամբ կենտրոնը՝ Մոսկվան, ԽՄԿԿ կենտկոմը, խորհրդային իշխանությունները, երկրի անվտանգությունը ապահովող մարմինները ոչինչ չէին անում, չէին դատապարտում, քաղաքական գնահատական չէին տալիս և այլն, իսկ երկու հանրապետությունների ղեկավարները նման պլան էին կազմում:

Անկախ այդ ամենից՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի գործունեությունը չէր բավարարում կենտրոնին, իսկ հանրապետությունում ընթացող գործընթացներն արդեն չէին ընթանում Մոսկվայի նախանշած ուղիով: Իրականությունն այն էր, որ Կարեն Դեմիրճյանը, անկախ գործադրած ջանքերին, այլևս չէր կարող վերահսկել հանրապետությունում ընթացող գործընթացները, ուստի նրա մնալը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում այլևս հնարավոր չէր: Մոսկվան փոխելով Կարեն Դեմիրճյանին, որը երկար ժամանակ նաև մեծ ժողովրդականություն էր վայելում հանրապետությունում, դրանով փորձում էր ժամանակ շահել և նաև Հայաստանի Հանրապետությունում փոխել իրավիճակը, քաղաքական մթնոլորտը, դրանով էլ փորձել ազդել Հայաստանի Հանրապետությունում ընթացող գործընթացների վրա: Այնպես որ նման դեպքում, ինչպես ասում են, հասունացել էր Կարեն Դեմիրճյանին մեկ այլ անձով փոխարինելու ժամանակը: Հենց այդ նպատակով էլ 1988 թ. մայիսի 20-ին հանրա-

[186] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 24, թ. 3-19:

պետության Կոմկուսի կենտկոմի բյուրոն որոշեց մայիսի 21-ին հրավիրել Կոմկուսի կենտկոմի պլենում (9-րդ) և քննարկել կազմակերպչական հարց՝ 1. Կարեն Սերոբի Դեմիրճյանին ազատել Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի և բյուրոյի անդամի պարտականություններից առողջական վիճակի և թոշակի անցնելու կապակցությամբ և 2. Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար երաշխավորել Սուրեն Գուրգենի Հարությունյանին և հարցը ներկայացնել ՀԿԿ կենտկոմի պլենումի քննարկմանը[187]: Սակայն իրականությունը նաև այն էր, որ Կարեն Դեմիրճյանն իր դիմումում նշել էր ոչ միայն առողջության վատթարացման, այլ նաև հանրապետությունում ստեղծված իրավիճակի մասին[188]: Այնպես որ Կարեն Դեմիրճյանը շատ լավ հասկանում էր, որ նա այլևս նախկին հեղինակությունը չունի և նա իրեն թույլ չէր տա ձևականորեն մնալ որպես Կենտկոմի առաջին քարտուղար:

1988 թ. մայիսի 21-ին հրավիրվեց ՀԿԿ կենտկոմի 9-րդ պլենումը, որին մասնակցում էին նաև ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի անդամ, ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ Ա. Ն. Յակովլևը և Վ. Ի. Դոլգիխը: Ա. Ն. Յակովլևը, ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյին ներկայացնելով Կ. Ս. Դեմիրճյանի դիմումը՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի պարտականություններից ազատելու վերաբերյալ, հարցը դրեց քվեարկության, և պլենումը միաձայն որոշեց Կարեն Դեմիրճյանին ազատել Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի պարտականություններից:

Ա. Ն. Յակովլևը այնուհետև ներկայացրել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի նոր առաջին քարտուղարի՝ Սուրեն Գուրգենի Հարությունյանի թեկնածությունը, որը հավանության էր արժանացել նաև նաև ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի կողմից և միաձայն անցել:

Պլենումում ելույթ է ունեցել նաև Կարեն Դեմիրճյանը, որը շնորհակալություն է հայտնել բոլորին երկար տասնամյակներ համատեղ աշխատանքի համար, ինչպես նաև շնորհավորել է ՀԿԿ կենտկոմի

---

[187] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 24, թ. 2:
[188] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 3, թ. 1:

նոր առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանին՝ նրան մաղթելով հաջողություններ: Նույնպիսի ձևով Սուրեն Հարությունյանը շնորհակալություն է հայտնել՝ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում ընտրվելու համար, նա գիտակցում էր, որ իր վրա դրված են բարդ և մեծ պարտավորություններ, պատասխանատվություն, և ինքը ամեն ինչ կաներ արդարացնելու այդ բարձր վստահությունը: Միաժամանակ Սուրեն Հարությունյանը հայտնում էր այն մասին, որ երկու օր առաջ Մոսկվայում տեղի է ունեցել ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի հետ հանդիպում և հիմնարար զրույց, որի ընթացքում երկուստեք քննարկել են Հայաստանի Հանրապետությունում տիրող իրավիճակի, Լեռնային Ղարաբաղի խնդիրների, ազգամիջյան հարաբերությունների կարգավորմանը վերաբերող բազմաթիվ այլ հարցեր: Նա նաև հույս էր հայտնում, որ համատեղ աշխատանքով կարող են հաղթահարել շատ դժվարություններ և լուծել վերակառուցմամբ առաջադրված բազմաթիվ խնդիրներ[189]: Իսկ դրանք շատ էին, բարդ, և որոնց լուծմանն էլ ձեռնամուխ եղավ Հայաստանի կոմկուսի կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանն իր գործընկերների հետ: Առաջին քայլերից մեկը 1988 թ. Կենտկոմի նոր պլենում հրավիրելն էր, որն էլ ընտրեց Համամիութենական XIX կուսակցական կոնֆերանսի պատգամավորներ: Պլենումում ընդարձակ ճառով ելույթ ունեցավ Սուրեն Հարությունյանը, որը ներկայացրեց հանրապետության առջև ծառացած բազմաթիվ խնդիրները՝ նշելով այն թերությունները, բացթողումները, որոնք առկա էին հանրապետությունում, թերություններ, որոնք կուտակվել էին տարիների ընթացքում տնտեսության, սոցիալական, գաղափարաբարոյական ոլորտներում՝ բնակչության շրջանում առաջացնելով մեծ դժգոհություն իշխանությունների, Կոմկուսի նկատմամբ: Զեկուցողը նաև ճիշտ էր նկատում, որ ցույց տալ, որ ամեն ինչ կարգին է, ուղղակի ինքնախաբեություն էր: Այդ «ալիքի» վրա հեռու գնալ հնարավոր չէր, դա ուղղակի չէր կարելի և այլն[190]:

---

[189] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 3, թ. 3-5, 23-24:
[190] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 4, թ. 3, 11, 12-21:

Թվում է՝ ամեն ինչ ասված էր, և Սուրեն Հարությունյանի՝ որպես Կենտկոմի առաջին քարտուղարի քննադատական տոնը կարծես սթափեցնող էր թե՛ ՀԿԿ կենտկոմի անդամների և թե՛ շատերի համար: Բայց պակասում էր մեկ կարևոր հարցի պատասխան. ինչպե՞ս էր հանրապետության Կոմկուսի կենտկոմի նոր առաջին քարտուղարը տեսնում Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը: Ինչ խոսք, դժվար է ենթադրել և կարծել, որ Սուրեն Հարությունյանը կարող էր միանալ ժողովրդի կողմից ամենօրյա ցույցերին, հանրահավաքներում հնչող «միացում», «այժմ կամ երբեք», «Ղարաբաղը մերն է» կարգախոսներին: Անկախ նրա ներքին զգացումներից՝ դա նրան չէր կարող թույլ տալ իր նոր կարգավիճակը, և ոչ մի կասկած, որ նա ևս ամեն ինչ պետք է աներ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծել ԽՄԿԿ-ի, Քաղբյուրոյի նախանշած ուղիով: Այդ մասին Սուրեն Հարությունյանն իր ելույթում ՀԿԿ կենտկոմի պլենումում ասել է հետևյալը, որ հանրապետությունում ամեն օր տեղի ունեցող հանրահավաքներում ակտիվորեն պաշտպանվում է կուսակցության վերակառուցման, դեմոկրատական քաղաքականությունը, մտահոգությունը Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը տեղի ունեցող իրադարձությունների առթիվ: Սուրեն Հարությունյանը այդ առիթով պլենումի անդամներին հիշեցրել է, որ ինքը օրեր առաջ հանդիպել է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ի. Վեզիրովի հետ և սկզբունքային խոսակցություն ծավալել մի շարք համալիր հարցերի, խնդիրների մասին: Հասկանալի է, որ դրանք վերաբերում էին Լեռնային Ղարաբաղին, Սումգայիթի ջարդերին, ինչպես ասում են՝ Ադրբեջանում ապրող մոտ կես միլիոն հայերին, ընդհանրապես ազգամիջյան հարաբերություններին: Իսկ այդ ամենի վերջնական արդյունքը, եզրակացությունը և երկուստեք համաձայնությունն այն էին, որ ամեն ինչ պետք է ընթանար և տարածաշրջանում իրադրությունը նորմալանար վերակառուցման, Մ. Ս. Գորբաչովի՝ Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին ուղղված ուղերձի, կոչի լույսի ներքո:

Դժվար չէր համոզվել, որ հանրապետության Կոմկուսի կենտկոմի առաջին նոր քարտուղար Ս. Գ. Հարությունյանը ինքնուրույն,

կենտրոնին՝ ԽՄԿԿ կենտկոմին, քաղբյուրոյին հակադիր որևէ քայլ չէր կարող անել, որի համար էլ վաղ թե ուշ նա պետք է արժանանար Կարեն Դեմիրճյանի ճակատագրին: Բայց բոլոր դեպքերում անհրաժեշտ է ներկայացնել Սուրեն Հարությունյանի գործունեության որոշ մանրամասներ՝ ավելի լավ պատկերացում կազմելու նրա՝ որպես Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի գործունեության վերաբերյալ:

1990 թ. մարտի 9-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկել է «Խորհրդային Հայաստանի հանրապետության տնտեսական ինքնուրույնության հայեցակարգի մասին» հարցը, որի մասին զեկուցել է Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը: Ինչ խոսք, կարևոր հարց էր, քանի որ խնդիր էր դրվում 1991 թ. հասնելու տնտեսական ինքնուրույնության, ինքնաֆինանսավորման և այլն: Եվ որքան էլ որ նրանում խոսվում էր տնտեսվարման նոր մոտեցումների, սեփականության, նախաձեռնությունների, պլանավորման և կարգավորման, գնագոյացման, ինովացիոն գործունեության, ինվեստիցիաների ներդրման քաղաքականության, հարկային, բյուջետային, սոցիալական քաղաքականության, տնտեսական ինքնուրույնության և այլնի մասին, այնուամենայնիվ գլխավորը հանրապետությունում ստեղծված իրավիճակի վերլուծությունն ու գնահատումն էին, որն էլ փորձում էր կատարել Սուրեն Հարությունյանը:

Այդ ժամանակ Խորհրդային Հայաստանի տնտեսությունը գտնվում էր ճգնաժամային վիճակում: Հանրապետությունում խորացել էր սոցիալական անհավասարությունը, մեծացել էին ստվերային տնտեսությունը, կոռուպցիան, չէր ապահովվում բնակչության զգալի մասի սպառողական զամբյուղի, սննդի մինիմումը և այլն: 1988-1989 թթ., Արցախյան խնդրով պայմանավորված, էլ ավելի լարված վիճակ ստեղծվեց հանրապետությունում՝ փախստականներ, երկրաշարժ և այլն: Հասկանալի է, որ շարունակել տնտեսվարման հին կառուցվածքով երկիրը կառավարել հնարավոր չէր: Անհրաժեշտ էին նոր լուծումներ, նոր մոտեցումներ, տնտեսվարման նոր մեթոդներ, որոնք ենթադրում էին հասնել հանրապետության տնտեսական ինքնուրույ-

նությանը: Ներկայացնելով հանրապետության վիճակը և զարգացման հեռանկարները, դրանց իրականացման մեխանիզմը՝ հասկանալի է, որ Սուրեն Հարությունյանը այդ ամենը տեսնում էր վերակառուցման հեղափոխական գործընթացների մեջ՝ հրապարակայնություն, դեմոկրատիա, կառավարման ապակենտրոնացում և այլն: Ներկայացնելով այդ ամենը Սուրեն Հարությունյանը նշում էր, թե ինչպիսին պետք է լինի այդ վերափոխումներում Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, և որ այն պետք է մնա բանվոր դասակարգի և ողջ աշխատավորության կուսակցությունը՝ հավատարիմ մատերիալիստական աշխարհայեցողությանը և դիալեկտիկական մեթոդաբանությանը: Իսկ նրա գլխավոր նպատակը Հայաստանում հումանիստական, խաղաղասիրական և լիակատար դեմոկրատական սոցիալիզմի կառուցումն էր, ինչպես նաև հայ ժողովրդի միավորումը՝ պայքարելու ազգային հարցի և այլ խնդիրների լուծման համար և այլն: Սուրեն Հարությունյանը կարևոր էր համարում նաև մեծացնել Հայաստանի կոմունիստական կուսակցության ինքնուրույնությունը ԽՄԿԿ շրջանակներում: Այս հարցերում նորն այն էր, որ խնդիր էր դրվում՝ Հայաստանի կոմկուսը ակտիվ հարաբերություններ, համագործակցություն կարող էր ծավալել հանրապետությունում գործող հասարակական-քաղաքական ուժերի հետ: Իհարկե, դա արդեն նոր մոտեցում էր, մանավանդ որ Սուրեն Հարությունյանը նույնիսկ առաջ էր քաշում գաղափար այն մասին, որ իբր Հայաստանի կոմկուսն արդեն չէր հավակնում պետական իշխանական մենաշնորհի, այլ ձգտում էր հասարակության մեջ ունենալ իր առաջատար քաղաքական հեղինակությունը սահմանադրական ճանապարհով: Եվ դրա հետ կապված՝ նա առաջարկում էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանում հարց մտցնել՝ վերանայել ՀԽՍՀ Սահմանադրության 6-րդ կետը՝ կոմունիստական կուսակցության ղեկավար դերի մասի, այսինքն՝ սահմանադրությունից հանել, ինչպես նաև հրաժարվել դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքից և այլն: Նա այն միտքն էր անցկացնում, որ Հայաստանի կոմկուսը՝ որպես դեռ կառավարող կուսակցություն, ձգտելու էր պահպանել իշխանությունը

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջիկա ընտրություններում[191]: Անկախ այդ ամենից՝ որքան էլ որ Հայաստանի կոմկուսը փորձում էր նորանալ, հրաժարվել աշխատաոճի նախկին սկզբունքներից և այլն, միևնույն է, ինչը և ցույց տվեցին կյանքը, հետագա զարգացումները, Գերագույն խորհրդի ընտրությունները և այլն, այնքան էլ հեշտ չէր այդ ամենը մի կողմ դնել և ամեն ինչ սկսել նոր էջից:

Չվերլուծելով Սուրեն Հարությունյանի՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում մոտ երկու տարի կատարած աշխատանքը (1988 թ. մայիսի 21-1990 թ. ապրիլի 6)՝ պետք է ասել, որ 1990 թ. ապրիլի 6-ին ՀԿԿ կենտկոմի հերթական պլենումում փորձում էր հիմնավորել իր հրաժարականի պատճառները՝ ներկայացնելով նաև այդ կարճ ժամանակամիջոցում կատարած աշխատանքները: Ինչ խոսք, մարդկային է նաև նրա այն միտքը, որ ինքը առաջին անգամ մեծ հուզմունքով էր մոտեցել ամբիոնին, որը նաև հասկանալի է, քանի որ նա խնդրում էր ՀԿԿ կենտկոմի պլենումին իրեն ազատել Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից: Նա նաև նշում էր, որ իր որոշումը համակողմանի մտածված և հավասարակշռված քայլ է, և ընդունել է՝ հաշվի առնելով հանրապետությունում ստեղծված իրավիճակը, զգալով նաև մեծ պատասխանատվություն հանրապետության, հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ:

Իսկ այն հարցին, թե արդյոք ինքը չափից ավելի կարճ ժամանակ չաշխատեց առաջին քարտուղարի պաշտոնում, գտնում էր, որ ոչ, քանի որ դա հավասար էր նախկին տասնամյակներին և խտացված էին ծանր ու չտեսնված փորձություններով, ժողովրդի հասարակական գիտակցության մեջ արմատական տեղաշարժերով: Թվարկելով դրանք՝ նա նշում էր՝ բազմաթիվ ցույցեր, հանրահավաքներ, հացադուլներ, դասադուլներ, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի դժվար լուծելի խնդիրներ, ազգամիջյան հակամարտություններ, շրաջափակում, փախստականներ, ավերիչ երկրաշարժ և այլն,

[191] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 98, թ. 3-7, 68-72:

որոնք, պատկերավոր ասած, հանրապետության հասարակական կյանքը վեր էին ածել եռացող կաթսայի[192]: Նման մթնոլորտում աշխատելը, ինչ խոսք, բավական դժվար էր: Իսկ դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ժողովրդական զանգվածները, որոնք տասնամյակներ շարունակ հեշտությամբ կառավարելի էին, այժմ նոր պայմաններում հատկապես կուսակցության համար դարձել էին անկառավարելի, որքան էլ որ Սուրեն Հարությունյանից հետո հանրապետության Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Վլադիմիր Միհրանի Մովսիսյանը, որը հարուստ աշխատանքային փորձ ուներ, անցել էր հանրապետության ժողովրդատնտեսական կյանքի գրեթե բոլոր օղակներով և տվյալ պահին աշխատում էր հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, Ագրոարդյունաբերական կոմիտեի նախագահ և այլն: Բայց ժամանակի առանձնահատկությունն այն էր, որ դրանք արդեն ժողովրդի համար հեղինակություն չէին, որն արդեն դուրս էր եկել նախկին կաշկանդվածությունից և այժմ դավանում էր այլ արժեքներ: Այո՛, նրա մտածողությունը փոխվել էր, բայց ոչ գորբաչովյան սխեմայով՝ սոցիալիզմին նոր շունչ տալու սպասումներով: Հայ ժողովրդի գերակշիռ մասն արդեն տարված էր Արցախյան շարժումով, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու մտահոգությամբ: Նա արդեն նոր ուժ էր, անճանաչելի և պատրաստ՝ պայքարելու մինչև վերջ, և անկախ նրանից, թե ով կդառնար հանրապետության Կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարը, շատ բան կախված էր նրանից, թե նա ինչպիսի մոտեցում կունենար Լեռնային Ղարաբաղի լուծման նկատմամբ, որը կարծես դարձել էր չափանիշ, քննության պես մի բան: Բայց բոլոր դեպքերում Վլադիմիր Մովսիսյանը, որի թեկնածությունը պլենումում ներկայացվել էր ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու, ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Գ.Պ. Ռազումովսկու կողմից, դառնալով Կենտկոմի առաջին քարտուղար, շատ լավ հասկանում էր, որ իր վրա դրվում է ան-

[192] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 23, թ. 3-5:

չափ դժվար, մեծ պատասխանատվություն: Պատահական չէ, որ նրա ընտրության ժամանակ եղան նաև շատ սկզբունքային ելույթներ ոչ այնքան Վլադիմիր Մովսիսյանի դեմ, այլ այն մթնոլորտի, այն վիճակի դեմ, որում հայտնվել էր հատկապես մեր հանրապետությունը, գլխավորապես Կենտկոմի վարած ոչ հեռատես, տենդենցիոզ քաղաքականության շնորհիվ: Եվ հենց այդ հարցերի մասին էլ ՀԿԿ կենտկոմի պլենումում ելույթ է ունեցել ՀԿԿ կենտկոմի անդամ, Հայկական ԽՍՀ կանանց հանրապետական խորհրդի նախագահ Նորա Հակոբյանը: Նա իրավացիորեն ինչ-որ չափով հռետորական հարց է բարձրացրել՝ ասելով, որ կանցնի ևս երկու տարի, և իրենք նորից կհավաքվեն այս նույն դահլիճում, և նորից կարող է ստեղծվել նույն իրավիճակը: Ուստի մինչև քարտուղար ընտրելը նախ պետք էր վերլուծել հանրապետությունում ստեղծված ընթացիկ վիճակը, որը, ըստ նրա, հանգում էր նրան, որ հայ ժողովուրդը այդպես էլ չէր հասկանում, թե ինչու այսպես կոչված «մեծ տունը»՝ Մոսկվան, հաշվի չի նստում իր շահերի հետ, թե ինչու հայ ժողովուրդը չի կարողանում համախմբվել իր առաջին քարտուղարի շուրջը և այլն: Բայց այդ բոլորը նա բացատրում էր նաև նրանով, որ անբարոյական սկզբունքներն են ղեկավարում երկիրը: Ելնելով այդ ամենից՝ նա այն պահանջն էր առաջ քաշում, որ և՛ Լիտվայում, և՛ Հայաստանում, և՛ Ադրբեջանում, և՛ Տաշքենդում լինեն բարոյական միևնույն սկզբունքները: Նորա Հակոբյանը նաև պահանջում էր, որ նույնպիսի կրքոտությամբ, ինչպիսին արվում էր Լիտվայում ռուսախոս բնակչության շահերի պաշտպանության ուղղությամբ, նույն ձևով Ադրբեջանում պաշտպանվեն հայախոս բնակչության շահերը և այլն[193]: Անշուշտ, հետաքրքիր ելույթ էր, բայց, ցավոք, նիստը վարող Գ. Պ. Ռազումովսկուն ավելի շատ հետաքրքրում էր նոր քարտուղար ընտրելու գործընթացը, ինչն էլ նա իրականացնում էր: Իհարկե, ընտրվելուց առաջ, ինչպես ընդունված է, Վլադիմիր Մովսիսյանը ելույթ ունեցավ՝ շատ լավ հասկանալով այն հսկայական դժվարությունները, որոնք

[193] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց. 84, գ. 23, թ. 5-13:

ծառացած էին իր առաջ: Չանդրադառնալով Վլադիմիր Մովսիսյանի ելույթի բոլոր մանրամասներին՝ կարծում ենք՝ հատկապես կարևոր է ներկայացնել նրա մոտեցումները և տեսակետը Լեռնային Ղարաբաղի հարցի նկատմամբ: Նա շատ ճիշտ էր նկատում, որ Արցախի խնդիրը շարունակում էր մնալ կարևոր, բայց որը, փաստորեն, հայտնվել է փակուղու մեջ, որի պատճառով էլ հարաբերությունները երկու պետությունների միջև ծայրահեղ սրվել էին: Նա նաև ավելացնում էր, որ մեր հանրապետությունը պաշտպանել և պաշտպանելու էր Արցախի ազգային ինքնորոշման իրավունքը: Ըստ Վլադիմիր Մովսիսյանի՝ Արցախի խնդիրը պետք է լուծվեր սահմանադրական ճանապարհով, քաղաքակիրթ ձևով, մարդու իրավունքների միջազգային նորմերի հարգման ճանապարհով: Իսկ երկրում ստեղծված իրավիճակը պահանջում էր ազգային միասնության և համաձայնության նոր բովանդակություն[194]:

Իհարկե, Վլադիմիր Մովսիսյանի հարցադրումները բավական լավն էին, ճիշտ, բայց ամբողջ հարցն այն էր, որ դրանք սոսկ լավ ցանկություններ էին, իսկ աշխատանքի այդ ձևը կոնկրետ այդ ժամանակ բավական հեռու էր իրականություն դառնալուց: Սակայն անկախ այդ ամենից՝ Վլադիմիր Մովսիսյանը ևս իր գործունեության առաջին քայլերից մեկը համարում էր նախ հրավիրել կուսակցության Կենտկոմի նոր պլենում և այնտեղ քննարկել հանրապետությունում ստեղծված վիճակը և որոշել հետագա անելիքները: Անշուշտ, ոչ ոք չէր կասկածում, որ նա հարյուր հազարների նման ևս ցանկանում էր Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծում, նրա ինքնորոշում և այլն, բայց այդ մասին այլ ձևով խոսելը, կուսակցական կառավարման համակարգի կանոններից դուրս գալը երևի արդեն այլ ոլորտի հարց և քննարկում էր, ուստի նա գործող համակարգի շրջանակներում փորձում էր ինչ-որ օգտակար գործ անել: Եվ քանի որ առջևում 1990 թ. մայիսի 20-ի հանրապետության Գերագույն խորհրդի ընտրություններն էին, որոնց առաջին անգամ պետք է մասնակցեր

[194] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 23, թ. 13-17, 26:

նաև «Հայոց համազգային շարժումը» (ՀՀՇ), ինչն էլ կարող էր դիտվել որպես երկկուսակցական համակարգի պայմաններում ընտրություններ, բնական է, որ որոշակի մտահոգությունների առիթ էր տալիս: Չէ՞ որ դա նոր, եզակի երևույթ էր Խորհրդային Միության պատմության մեջ: Դա է պատճառը, որ Հայաստանի կոմկուսը 1990 թ. մայիսի 18-ին հրավիրեց ՀԿԿ կենտկոմի բյուրոյի նիստ և քննարկեց «Հայաստանի ԽՍՀ բոլոր աշխատավորներին, քաղաքացիներին ուղղված կոչը», որում նշվում էր, որ կիրակի՝ մայիսի 20-ին, տեղի կունենային հանրապետության ժողովրդական պատգամավորների ընտրություններ, որոնց արդյունքում կձևավորվեր Խորհրդային Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինը՝ Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդը, որն էլ կորոշեր հանրապետության հետագա ճակատագիրը:

Նախընտրական պայքարը, ինչպես նշված էր կոչում, ընթանալու էր նոր քաղաքական իրադրության և հանրապետությունում ծավալվող նոր կազմակերպությունների, միավորումների պայմաններում, որոնցից յուրաքանչյուրը հանդես էր գալու իր պլատֆորմով՝ ծրագրով: Կոչում նաև նշվում էր, որ հանրապետության վիճակի բարդությունը կապված էր նաև Լեռնային Ղարաբաղի հարցի անորոշության, լուծված չլինելու հետ:

Ժողովրդին ուղղված ուղերձում ՀԿԿ կենտկոմը նաև նշում էր, որ հանրապետության ապագա խորհրդարանն իր ուսերին մեծ պատասխանատվություն և բեռ էր կրելու՝ կոչված լուծելու անչափ բարդ, բաց թողնված խնդիրներ, որոնք վերաբերում էին երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը, երկրաշարժի հետևանքով ավերված քաղաքների, գյուղերի, բնակավայրերի վերականգնմանը, ազգամիջյան սրված հարաբերությունների լուծմանը, փախստականների տեղավորման, ապաստան տալու հարցերի կարգավորմանը և այլն:

Ուղերձով դիմելով հանրապետության աշխատավորներին՝ Հայաստանի կոմկուսը դեռևս հույսեր էր փայփայում, որ անկախ այն սխալներից, բացթողումներից, որոնք թույլ էին տվել Հայաստանի կոմկուսը, հանրապետության կառավարությունը, կուսակցական,

խորհրդային, պետական բոլոր մարմինները, այնուամենայնիվ ընտրողները իրենց ձայները կտային Հայաստանի կոմկուսի ներկայացուցիչներին[195]: Բայց քանի որ ընտրություններում Հայաստանի կոմկուսը պարտություն կրեց, որը դեռևս գործող խորհրդային կարգերի պայմաններում աննախադեպ երևույթ էր, ուստի այդ նպատակով էլ 1990 թ. օգոստոսի 18-ին հրավիրվեց ՀԿԿ կենտկոմի պլենում, որտեղ էլ քննարկվեց «Հանրապետությունում ստեղծված հասարակական-քաղաքական իրավիճակի և կուսակցական կազմակերպությունների խնդիրների մասին» հարցը:

Վերլուծելով հանրապետությունում ստեղծված իրավիճակը՝ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Մովսիսյանը նշում էր, որ Հայաստանի կոմկուսը երևի իր պատմության ողջ ընթացքում երբեք չէր հայտնվել նման բարդ և ծայրահեղ վիճակում: Ամենուրեք թուլացել էր պետական և աշխատանքային կարգապահությունը, իշխանության բոլոր օղակներում ընկել էր իշխանությունների հեղինակությունը: Իսկ ինչ վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի հարցին, նրա լուծմանը, Վլադիմիր Մովսիսյանը նշում էր, որ կենտրոնի կողմից հարցի չհիմնավորված ձգձգումը, Ադրբեջանում բնակվող հայ բնակչության ջարդերին քաղաքական և իրավական գնահատական չտալը, հազարավոր հայ փախստականների, վտարանդիների ներթափանցումը Հայաստանի Հանրապետություն հանրապետությունը ներքաշեցին ծանր ճգնաժամի մեջ, որով էլ հայ ժողովրդին մատնեցին, պատկերավոր ասած, անպաշտպանվածության գիրկը: Զեկուցողը նաև ճիշտ էր նկատում, որ թե՛ հանրապետության և թե՛ կենտրոնի կողմից թույլ տված սխալները հանգեցրին հանրապետության Կոմկուսի հեղինակության անկմանը: Եվ որպես ապացույց նա նշում էր այն փաստը, որ 1990 թ. մայիսին տեղի ունեցած ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում Երևանի 85 ընտրական տեղամասերում համարյա ոչ մի թեկնածու առաջադրված խորհրդային, կուսակցական մարմինների կողմից չստացավ պատգամավորի ման-

[195] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 67, թ. 5-7:

դատ: Այս ամենը խոսում էր այն մասին, որ Հայաստանի կոմկուսը հայտնվել էր խորը ճգնաժամի մեջ: Վլադիմիր Մովսիսյանը հատկապես կարևորում էր գաղափարական ճգնաժամը, հանրապետության տնտեսության ծանր վիճակը, իսկ Գերագույն խորհրդի ընտրություններում և քաղաքական պայքարում պարտությունը նշանակում էր, որ Հայաստանի կոմկուսը դրանով առաջին անգամ հայտնվել էր քաղաքական իշխանությունից դուրս, և հանրապետությունում տեղի էին ունենում քաղաքական ուժերի նոր վերադասավորումներ: Այդ լուրջ պայքարում, ըստ նրա, շատերը կրեցին անդառնալի պարտություն, որն էլ կուսակցության մեջ ստեղծեց ողբերգական մի իրավիճակ, երբ պարտվողական տրամադրությունը համակել էր բոլորին:

Ներկայացնելով այդ ամենը՝ Վլադիմիր Մովսիսյանը այնուհետև փորձել է վերլուծել և փնտրել Կոմկուսի պարտության պատճառները, խորը ճգնաժամի մեջ հայտնվելու նրա հետևանքները և այլն: Նա հատկապես կարևորել է գաղափարական ճգնաժամը: Նա ճիշտ է նկատել, որ կոմունիստական հասարակարգի կառուցման կոնցեպտուալ սխեման հասարակության մեջ ներդնելու պրակտիկան է հանգեցրել ամբողջատիրության, դիկտատուրայի և լճացման հաստատմանը, որն էլ աշխատավորական զանգվածների շրջանում արժեզրկեց կոմունիստական գաղափարները, այդ թվում՝ և կուսակցության անդամների շրջանում: Իսկ երկրի վիճակն ավելի վատթարացավ տնտեսության ոլորտում, երբ բարձր կուսակցական մարմինների կողմից թույլ տրվեցին լուրջ սխալներ, որոնք էլ հանգեցրին մարդկանց կողմից կուսակցական մարմինների նկատմամբ անվստահության ձևավորմանը, այն գաղափարներին, որ նրանք կարող են այդ ամենն ուղղել գործող համակարգի պայմաններում: Մարդկանց վրա հատկապես բացասական ազդեցություն ունեցավ հենց կուսակցության մեջ սկսված վերակառուցման գործում հետ մնալը: Իսկ դա հանգեցրեց մարդկանց մեջ այն գաղափարի, համոզմունքի ձևավորմանը, որ Կոմկուսը պահպանողական, արգելակող ուժ է: Երկրի վիճակը փոխվեց նաև ԽՄԿԿ XXVIII համագումարից հետո՝ 1990 թ. հուլիսի 2-13-ին, մանավանդ որ նրա արդյունքները չէին բավարա-

ռում հենց կոմունիստներին, այդ թվում՝ և Հայաստանի կոմկուսի անդամներին, քանի որ բացի թվարկած պատճառներից՝ Հայաստանի կոմկուսի համար կային առանձնահատուկ խնդիրներ: Խորհրդային Հայաստանում վերջին տարիներին, վերակառուցումից սկսած, սոցիալական էներգիայի պոռթկումը ամենևին պայմանավորված չէր միայն Լեռնային Ղարաբաղի խնդրով: Երկրի դեմոկրատացման և հրապարակայնության պայմաններում Ղարաբաղը դարձավ սոցիալական ընդվզման, բողոքարկման մերկացված ներվ՝ ընդդեմ կարծրացած նոմենկլատուրայի կառույցներին, ամբողջատիրական հասարակարգի քաղաքական և բարոյական դոգմաներին, պրոտեկցիային, կոռուպցիային, որոնք անտեսում էին սոցիալական արդարության սկզբունքները և այլն:

Խոսելով այդ պայմաններում Հայաստանի կոմկուսի գործունեության, դիրքորոշումների մասին՝ Վլադիմիր Մովսիսյանը նշել է, որ Հայաստանի կոմկուսը բավական երկար ժամանակ սահմանափակվում էր կիսաճշմարտության, կիսաանկեղծության, խուսանավելու շրջանակների մեջ: Իսկ շատ որոշումներ էլ Հայաստանի կոմկուսի կողմից ընդունվում էին՝ չկարողանալով կանխատեսել իրադարձությունների զարգացման հեռանկարները, դրսևորել անհրաժեշտ քաղաքական կամք, վճռականություն, որոնք էլ հանգեցրին նրան, որ կարևոր որոշումներն ընդունվում էին ժողովրդական զանգվածների ճնշման տակ[196]: Դրա հետ կապված՝ անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանի կոմկուսն ունակ չեղավ առանց կենտրոնին նայելու դրսևորելու վճռականություն, իրեն սպառած կուսակցական կառույցներից, աշխատանքի մեթոդներից, ձևերից հրաժարվելու ունակություն: Հայաստանի կոմկուսը չկարողացավ գտնել, փնտրել աշխատանքի նոր մեթոդներ, որոնք կհամապատասխանեին ձևավորված նոր բացառիկ պայմաններին: Նա նաև ճիշտ է նկատել, որ Հայաստանի կոմկուսի կողմից ժամանակին չմշակվեցին հանրապետության սուվերենության հայեցակարգը, ազգամիջյան հարաբերությունների ռազմավա-

[196] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 27, թ. 4-6:

թությունը, տնտեսական և հոգևոր ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունները: Իսկ դա նշանակում էր, որ Հայաստանի կոմկուսը մշտապես քաղաքական նախաձեռնությունը զիջում էր այլ հասարակական ուժերին: Հայաստանի կոմկուսը չկարողացավ իմաստավորել վերակառուցման և ժողովրդավարացման գաղափարները և դրանք վերածել քաղաքական և սոցիալական կոնկրետ ծրագրերի: Ինչ խոսք, այդ ամենի վրա մեծ ազդեցություն ունեցան նաև հանրապետությունում ստեղծված քաղաքական քաոսը, վախը, հոգեբանական հոգնածությունը, նախկին արժեքների և հարցադրումների արժեզրկումը, սոցիալիստական գաղափարների նկատմամբ հիասթափությունը, ոչ ֆորմալ կազմակերպությունների նկատմամբ կուսակցական կազմակերպությունների մերժողական վերաբերմունքը, երբ իրականում նրանք փաստացորեն կային և գործում էին և այլն[197]:

Ինչ խոսք, անկեղծ ինքնախոստովանություն էր, բայց հնարավոր չէր կանգնեցնել նոր գործընթացները: Գնահատելով թեկուզև անչափ կարճ ժամանակում (1990 թ. ապրիլ-1991թ. օգոստոս) իր կատարած աշխատանքը՝ Վլադիմիր Մովսիսյանը ճիշտ է գնահատել, որ իրեն չի հաջողվել Հայաստանի կոմկուսի գործունեության մեջ իրականացնել արմատական փոփոխություններ և հասնել հանրապետությունում կայուն վիճակի: Եվ դա հասկանալի էր, քանի որ Հայաստանի կոմկուսն արդեն չուներ նախկին լծակները, դիրքը, երբ ամեն ինչ երկրում, հանրապետությունում լուծվում էր Կոմկուսի միջոցով և նրա որոշումներով: Իսկ այժմ արդեն նոր, կոմունիստների համար անսովոր պայմաններում, առավել ևս Գերագույն խորհրդի ընտրություններում պարտվելուց հետո (չնայած խորհրդարանում քանակական տեսանկյունից կար 160 կոմունիստ[198]) Հայաստանի կոմկուսի գոյությունը դառնում էր ձևական, որը և ինքը՝ Վլադիմիր Մովսիսյանը, ներքուստ զգում էր, բայց չէր բարձրաձայնում՝ միգուցե հույ-

---

[197] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 27, թ. 7-8:

[198] 1990 թ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում պատգամավորների ընդհանուր թիվը կազմում էր 271 հոգի, որից կոմունիստներ՝ 160: Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ 1990-1995, Երևան, 1995:

սեր փայփայելով, որ ինչ-որ բան կարող է փոխվել: Այդ հույսերը նա կապում էր նոր հրավիրվող Հայաստանի կոմկուսի XXIX համագումարի հետ, որն էլ տեղի է ունեցել 1990 թ. սեպտեմբերի 25-27-ը: Բայց իրականությունն այն էր, որ 1990 թ. մայիսից հետո իրավիճակը Հայաստանում փոխվել էր. տասնամյակներ շարունակ երկիրը կառավարող ուժը՝ Հայաստանի կոմկուսը, Գերագույն խորհրդի ընտրություններում պարտվել էր: Փաստորեն հանրապետությունում տեղի էր ունեցել իշխանափոխություն: Իշխանության էր եկել նոր ուժ՝ «Հայոց համազգային շարժումը»: Նման պայմաններում Հայաստանի կոմունիստական կուսակցությունը փորձեր արեց ավելի շատ վերածվելու պառլամենտական կուսակցության: Վլադիմիր Մովսիսյանը՝ որպես Կենտկոմի առաջին քարտուղար, հանդես եկավ կուսակցության գործունեության մասին քաղաքական հաշվետվությամբ և բազմաթիվ մեկնաբանություններից, ընդհանրացումներից զատ՝ այն միտքը առաջ քաշեց, որ Հայաստանի կոմկուսը պետք է ղեկավարեն ավելի երիտասարդ, ունակ, ժողովրդի գործին նվիրված, ուզած կարգի բարդույթներից ազատ երիտասարդ անհատներ:

1990 թ. նոյեմբերի 28-30-ին ՀԿԿ կենտկոմի XXIX համագումարը, որին մասնակցում էր նաև ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Օ. Ս. Շենինը, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց Ստեփան Կարապետի Պողոսյանին[199], որին վիճակված էր աշխատել ավելի բարդ և դժվարին պայմաններում: Խնդիրն այն էր, որ հանրապետությունում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո նոր իշխանությունները նախագիծ էին ներկայացրել խորհրդարան և ընդունել Կոմկուսի ողջ ունեցվածքը բռնագրավելու, նրան դատի տալու որոշում նախկինում կատարած հանցանքների համար: Այդ հարցերն էլ քննարկվել են ՀԿԿ կենտկոմի և Երևանի քաղկոմի համատեղ պլենումում 1991 թ. ապրիլի 19-ին: Որոշումը կոչվում էր «Հայաստանի կոմունիստական կուսակցությունում ստեղծված իրավիճակի մասին՝ կապված Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի

[199] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 82, ց. 84, գ. 2, թ. 1, ֆ. 1, ց. 84, գ. 84, թ. 6:

1991 թ. ապրիլի 17-ի Հայաստանի կոմկուսի և նախկին կոմունիստական երիտասարդական միության ունեցվածքի սեփականաշնորհման մասին» (զեկ.՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ստեփան Կարապետի Պողոսյան): Ներկայացնելով Հայաստանի կոմկուսում ստեղծված իրավիճակը՝ Ս. Պողոսյանը նշել է, որ այդ օրերին ինքը եղել է Մոսկվայում և հասկացել, որ Մոսկվան չի հասկանում, ընկալում Հայաստանի խնդիրները, և որ Հայաստանի կոմկուսը հայտնվել էր նման վիճակում կենտրոնի վարած քաղաքականության մեղքով: Նա բերում է նաև հետաքրքիր փաստ այն մասին, որ այդ նույն օրերին հանրապետությունում Գերագույն խորհրդի նստաշրջանի նախօրյակին Մոսկվայում էին նաև ՀՀԾ-ի ղեկավարները, որոնց էլ ընդունել էր Մ. Ս. Գորբաչովը և ողջունել Հայաստանի Հանրապետությունում իշխանության եկած նոր դեմոկրատական ուժերին: Բայց անկախ այդ մանրամասներից՝ Ստեփան Պողոսյանը արդարացիորեն նշում էր, որ այդ ամենում մեծ էր նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության մեղքը, որը հայտնվել էր ոչ նախանձելի վիճակում և այդպես էլ չկարողացավ կամ ի վիճակի չեղավ իրավիճակը գնահատել:

Նորից անդրադառնալով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի վերոհիշյալ որոշմանը՝ Կոմկուսի ունեցվածքը սեփականաշնորհելու հարցին՝ Ս. Պողոսյանն այն միտքն էր արտահայտում, որ Հայաստանի նոր իշխանավորները չէին գնա նման քայլի՝ առանց Մ.Ս.Գորբաչովի համաձայնության: Եվ որքան էլ որ ՀԿԿ կենտկոմի և Երևանի քաղաքային կոմիտեի համատեղ պլենումում բոլոր ելույթ ունեցողները դատապարտում էին ՀԽՍՀ նոր Գերագույն խորհրդի որոշումը, միևնույն է, իշխանության եկած նոր ուժը՝ ՀՀԾ-ն, իրականացնում էր իր որոշումը: Նման պայմաններում Ստեփան Պողոսյանին ոչինչ չէր մնում անել, քան, ինչպես նախորդները, հրաժարական տալ: Սակայն մինչ այդ որոշման մասին խոսելը անչափ կարևոր ենք համարում ներկայացնել Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ստեփան Պողոսյանի մոտեցումները Հայաստանի անկախության մասին: Այդ հարցերի մասին նա ավելի հստակ խոսել և իր

կարծիքն է հայտնել Հայաստանի կոմկուսի XXIX համագումարում (1991 թ. ապրիլի 27-ին՝ 3-րդ փուլ)՝ նշելով, որ Հայաստանի կոմկուսը իր պարտքն է համարում այս բարդ և պատասխանատու պատմական պահին մեկ անգամ ևս ամենայն որոշակիությամբ ներկայացնել կուսակցության և իր դիրքորոշումը հայ ժողովրդի կյանքի և ապագայի կարևորագույն հարցերի մասին: Իսկ այդ հարցերից առաջինը, նշում էր նա, Հայաստանի անկախության հարցն էր, որի մասին շատ էր խոսվում: Հարցը բազմիցս քննարկվել էր խորհրդարանում: Այդ խնդրի կշռադատված մոտեցումների հետ միասին կային նաև անհեռատես առաջարկություններ՝ անհապաղ անկախության հռչակման մասին, որոնք առավելապես նպատակաուղղված էին էժան ժողովրդականության ձեռքբերմանը: Ըստ Ս. Պողոսյանի՝ իրենք դեմ չեն հանրապետության անկախության գաղափարին, ինչպես այդ փորձում էին ներկայացնել առանձին քաղաքական ուժեր: Սակայն կար վեհ գաղափար, և կային պատմություն ու ռեալ իրականություն: Եվ անուղղելի սխալ էր հաշվի չառնել դրանց դասերն ու պահանջները: Լոկ խոսքեր չէին աշխարհագրական դիրքի մասին փաստարկները: Մենք չենք կարող կուրորեն հետևել Մերձբալթյան և այլ երկրների օրինակին: Մենք պետք է գնանք մեր ուրույն ուղիով: Ամենակարևորներից նա նշում էր տնտեսական գործոնը և նոր կողմնորոշումները: Դուրս գալով Միության կազմից՝ մենք անմիջապես կընկնեինք ոչ թե անկախության ու ազատության արքայություն, ինչպես հավատացնում էին, այլ կհայտնվեինք թշվառության պայմաններում և այլն: Այդ բոլորից հետո Ս. Պողոսյանն արտահայտել է Հայաստանի կոմկուսի կարծիքը, որը հանգում էր ինքնիշխան պետությունների ֆեդերացիայի ստեղծմանը, ինչն էլ նշանակում էր, որ Հայաստանը պետք է մասնակցեր նոր միութենական դաշնագրի կնքմանը և մտներ նորացվող Միության կազմի մեջ[200]:

Իհարկե, կարելի է և չհամաձայնել Ս. Պողոսյանի տեսակետին, մանավանդ որ Խորհրդային Միությունը գնալով փլուզվում էր, որքան

[200] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 95, գ. 1, թ. 88-92:

էլ որ նա, ցավոք, չէր ուզում տեսնել դա: Բայց նաև պետք է ընդունենք, որ Ստեփան Պողոսյանը այլ կերպ երևի չէր կարող մտածել: Միաժամանակ նա խոսում էր այնպիսի հարցերի մասին, որոնց չէր կարելի չհամաձայնել: Դա նախևառաջ վերաբերում էր Հայաստանի կոմկուսը ինքնուրույն կուսակցություն հռչակելու, ազգային ծրագիր մշակելու գաղափարին, նախկին դոգմաներից հրաժարվելուն և այլն:

Ս. Պողոսյանը անդրադարձել է նաև «Հայ դատին»՝ ասելով, որ Հայաստանի կոմկուսը հավատում էր իր նվիրվածությանը «Հայ դատին», պահանջատիրության խնդիրներին, 1915 թ. ցեղասպանության իրավական ճանաչմանը և այլն[201]: Այս ամենը հող նախապատրաստեց իր հրաժարականի համար, որն էլ տեղի ունեցավ 1991 թ. մայիսի 7-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոյում: Բյուրոն, քննարկելով Ս. Պողոսյանի դիմումը՝ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պարտականություններից ազատելու մասին, որոշեց այդ հարցը դնել ՀԿԿ կենտկոմի արտահերթ պլենումի քննարկմանը, որն էլ տեղի ունեցավ նույն՝ 1991 թ. մայիսի 14-ին[202]: Նույն պլենումը ընդունեց որոշում Արամ Գասպարի Սարգսյանին երաշխավորելու Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար ընտրելու մասին:

Հունիսի 1-ին ՀԿԿ կենտկոմի պլենումը որոշեց Արամ Գասպարի Սարգսյանին երաշխավորել Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար: Նշված պաշտոնին հավակնում էին մի քանի թեկնածուներ՝ Արամ Սարգսյանը, Ռաֆիկ Մխիթարյանը, Վլադիմիր Դարբինյանը, Վլադիմիր Պետրոսյանը: Վերջինս, ի դեպ, «0» ձայն էր ստացել: Հիմնական թեկնածուները ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնի համար երկուսն էին՝ Ռաֆիկ Մխիթարյանն ու Արամ Գասպարի Սարգսյանը: Նրանց պայքարը ավարտվեց, ինչպես ասում են, երկրորդ փուլով. Արամ Սարգսյանը ստացավ 43 կողմ, 39 դեմ, իսկ Ռաֆիկ Մխիթարյանը՝ 35 կողմ, 45 դեմ ձայն: Ըստ այդմ՝ Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար ընտրվեց Արամ

---

[201] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 95, գ. 1, թ. 93-95:
[202] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 95, գ. 15, թ. 115:

Սարգսյանը[203]: Կոմկուսի գործունեության վերջին օրերն էին, և նա պետք է փորձ աներ վերլուծելու ու գնահատելու քաղաքական այն անմխիթար վիճակը, որում հայտնվել էր Խորհրդային Հայաստանի ավելի քան 70-ամյա պատմության քաղաքական ղեկի մոտ կանգնած Հայաստանի կոմունիստական կուսակցությունը: Դա էլ տեղի ունեցավ 1991 թ. հուլիսի 17-ին ՀԿԿ կենտկոմի 7-րդ պլենումում: Հանգամանքների բերումով տողերիս հեղինակը, լինելով ՀԿԿ և XXIX համագումարի պատգամավոր, լսել է թե՛ Վլադիմիր Մովսիսյանի, թե՛ Ստեփան Պողոսյանի և թե՛ Արամ Սարգսյանի զեկուցումները, որոնք չնայած տարբերվում էին, բայց բոլորն էլ արտացոլում էին մեծ մտահոգություն այն վիճակի համար, որում հայտնվել էր թե՛ հանրապետությունը և թե՛ Հայաստանի կոմկուսը: Վերլուծելով այդ ամենը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Արամ Սարգսյանը այն կարծիքը հայտեց, որ տարբեր պատճառներով Հայաստանի կոմկուսը հայտնվել էր քաղաքական, տնտեսական և սոցիալական բարդ ու հակասական վիճակում: Քաղաքական կազմակերպությունից նա վեր էր ածվել տնտեսական խնդիրներին սերտաճած պետական կառավարման մարմնի: Իսկ ՀԿԿ ղեկավար դիրքերում գտնվող գործիչները քաղաքական բարդ պայքարում չկարողացան դրսևորել հեռատեսություն և ճկունություն, որոնց արդյունքում էլ Հայաստանի կոմկուսը պարտություն կրեց: Իշխանության եկան նոր ուժեր՝ հռչակելով ժողովրդավարության հաստատման, իրավական պետության կառուցման, Հայ դատին և Արցախին սատար կանգնելու կարգախոսներ:

Գնահատելով ներկա իշխանությունների կողմից (ՀՀՇ – Հ. Ա.) ժողովրդի մեջ ազգային պետականության, անկախության գաղափարի հետևողական հաստատման ուղղությամբ տարվող աշխատանքը, ընդգծելով, որ այդ ամենը դրված են նաև Հայկոմկուսի քաղաքական գործունեության հիմքում՝ ՀԿԿ կենտկոմի պլենումը նաև նշում էր, որ նոր իշխանությունները, փաստորեն, նահանջել էին

[203] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 85, գ. 9, թ. 1-6:

իրենց իսկ հռչակած կարգախոսների սկզբունքներից: Նրանց կողմից չէր առաջարկվում հանրապետության զարգացման քաղաքական իրավիճակի կայունացման քիչ թե շատ հիմնավորված ծրագիր: Արդյունավետ չէր գործում կառավարման համակարգը և այլն: Ձեկուցողը բերեց բազմաթիվ հիմնավորումներ. նվազել էին արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, աշխատանքի արտադրողականությունը, ահագնացող տեմպերով էր ընթանում բնակչության հիմնական զանգվածների աղքատացումը, աճում էր գործազուրկների թիվը: Գնալով ավելի էր սրվում բնակարանային խնդիրը: Հանրապետությունում շուրջ 800 հազար մարդ անօթևան էր: Լուծված չէին աղետի գոտու բնակիչների և հազարավոր փախստականների սոցիալ-կենցաղային հարցերը և այլն[204]: Նման գնահատականը, քննադատական տոնը հասկանալի էին, քանի որ Հայաստանի կոմկուսը կորցրել էր իշխանությունը, և ինչ-որ առումով խոսում էին կարոտախտի հուշն ու կորցրածի քաղցրությունը: Այն, որ հանրապետությունում շատ էին խնդիրները, դա էլ հասկանալի էր. Խորհրդային Միությունը ճիգեր էր անում այն տարբեր մեթոդներով լուծելու, նորացնելու ուղղությամբ, իսկ 1990 թ. մայիսից հանրապետությունում իշխանության եկած ուժերն էլ ամեն ինչ անում էին հնից ազատվելու և իրենց դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: Իհարկե, չի կարելի չհամաձայնել ՀՀԾ-ին տված նման գնահատականին: Չէ՞ որ ՀՀԾ-ն իշխանության գալու ճանապարհին խտրականություն չէր դնում նպատակին հասնելու մեթոդների մեջ՝ ընդունելի համարելով պայքարի բոլոր ձևերը՝ ամենօրյա ցույցերը, գործադուլները, դասադուլները, հացադուլները, գործարաններ, ձեռնարկություններ փակելու բոլոր հնարքները, շատ-շատերին աղքատության եզրին կանգնեցնելը և այլն, որոնց մենք տարբեր առիթներով անդրադարձել ենք: Հայաստանի կոմկուսն էլ, իր հերթին ընդունելով պարտությունը, քայլեր էր ձեռնարկում նոր պայմաններում շարունակելու աշխատանքը, իր տեսակետները ներկայացնելու իշխանության եկած նոր ուժերի

[204] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 85, գ. 13, թ. 1-2:

պայմաններում: Իսկ դրանք սկզբունքային հարցերում բավական տարբեր էին: Հայաստանի կոմկուսը դեռ հույսեր էր փայփայում, որ նորացված Խորհրդային Միությունը կմնա, ուստի կողմնակից էր մասնակցելու այդ քվեարկությանը, որի վերաբերյալ որոշում ընդունվեց ՀԿԿ կենտկոմի 7-րդ պլենումում (1991 թ. հուլիսի 17)՝ նշելով, որ առաջնահերթ խնդիր էր 1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրապետական հանրաքվեին նախապատրաստվելը, հանրապետության կողմից միութենական պայմանագրի ստորագրման, նորացված խորհրդային ֆեդերացիայի մեջ մտնելու անհրաժեշտության պարզաբանմանն ուղղված քաղաքական աշխատանքի ծավալումը, որի համար էլ 1991 թ. հուլիսի 19-ին «Голос Армении» թերթում հրապարակվեց ՀԿԿ կենտկոմի, նրա ընդլայնված պլենումի հայտարարությունը, որում նշվում էր, որ միութենական պայմանագրի նոր տարբերակը էապես տարբերվում էր նախորդներից, և Հայաստանի կոմկուսի ընդլայնված պլենումը գտնում էր, որ Հայաստանը պետք է մասնակցեր այդ նախագծի քննարկմանը որպես նորացված ֆեդերացիայի մեջ սուվերեն պետություն, ինչն էլ երաշխիք կլիներ Հայաստանի հետագա զարգացման համար[205]:

Ոչ մի կասկած չկար, որ Հայաստանի կոմկուսի նման դիրքորոշումը չէր կարող ընդունելի լինել այն քաղաքականությանը և հասարակության այն տրամադրություններին, որոնք իշխում էին հանրապետությունում, մանավանդ որ արդեն 1990 թվականից իշխանության եկած նոր ուժերը՝ «Հայոց համազգային շարժումը», 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունել էր «Անկախության հռչակագիրը», իսկ Միությունն էլ փլուզվում էր: Նման մթնոլորտում այնքան էլ լուրջ և հեռանկարային չէր շարունակել հույսեր փայփայել ԽՍՀՄ-ի պահպանման, նրա մեջ նոր տիպի սուվերենություն ձեռք բերելու ցանկությամբ: Ուստի Հայաստանի կոմկուսի հետագա գոյությունը որևէ դեր չէր կարող խաղալ պետության կյանքում. այն վաղուց արդեն ձևական բնույթ էր կրում: Պատահական չէ, որ նրանցից ոմանք հետա-

[205] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 85, գ. 13, թ. 6-8, «Голос Армении», 19 июля, 1991:

գայում ցանկացան և նախաձեռնեցին ստեղծել եվրոպական սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքներին մոտ նոր կուսակցություն՝ Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, որի նախաձեռնող խմբի, ծրագրի, կանոնադրության ստեղծմանն ու մշակմանը մասնակցել է նաև տողերիս հեղինակը: Եվ հենց այդ իրադարձությունների հենքի վրա էլ 1991 թ. աշնանը ձևավորվեց Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, որն էլ գործում է առ այսօր՝ փորձելով իր մասնակցությունը բերել հանրապետության հասարակական և քաղաքական կյանքին:

Ընդհանրապես գնահատելով Արցախյան և «Հայոց համազգային շարժման» նկատմամբ Հայաստանի կոմկուսի դիրքորոշումը՝ պետք է ասել, որ այն, ընդհանուր առմամբ լինելով նույնը, այնուամենայնիվ, ունեցել է իր առանձնահատկությունները: Կարեն Դեմիրճյանը շատ ավելի կոշտ, մերժողական դիրքորոշում ուներ և նույնիսկ հանձնարարում էր բոլոր կարգի կազմակերպություններին չընդունել, չճանաչել «Ղարաբաղ» կոմիտեն: Գրեթե որոշակի առանձնահատկություններով նույնպիսի դիրքորոշում ուներ Սուրեն Հարությունյանը: Նրա հանդիպումները, խորհրդակցությունները Մ. Ս. Գորբաչովի, Վեզիրովի հետ, կենտրոնի հետ համագործակցությունը և այլն ևս համընկնում էին «Ղարաբաղ» կոմիտեն չճանաչելու, չհամագործակցելու նրա դիրքորոշմանը: Ինչ վերաբերում է Վլադիմիր Մովսիսյանին, ապա պետք է ասել, որ որքան էլ նա չէր ընդունում «Ղարաբաղ» կոմիտեն, բայց Արցախի հարցի լուծումը տեսնում էր սահմանադրական ճանապարհով՝ հայտարարելով, որ մեր հանրապետությունը պաշտպանել և պաշտպանելու է Արցախի ազգային ինքնորոշման իրավունքը: 1990 թ. մայիսյան ընտրություններում Հայաստանի կոմկուսի պարտությունը Վլադիմիր Մովսիսյանը՝ որպես մարդ-անհատ, բավական ծանր, բայց նաև արժանապատվորեն ընդունեց՝ խնդիր դնելով նաև աշխատելու նոր պայմաններում: Թերևս աննախանձելի վիճակում էր Ստեփան Պողոսյանը, երբ իշխանության եկած նոր ուժերը Հայաստանի կոմկուսին զրկեցին շարժական և անշարժ գույ-

քից, երբ կուսակցության շարքերը օր օրի նոսրացան, և այն՝ որպես քաղաքական կուսակցություն, իր վերջին օրերն էր ապրում:

Ներկայացնելով Լեռնային Ղարաբաղի հանրապետության անկախության հարցի վերաբերյալ Ստեփան Պողոսյանի դիրքորոշումը՝ պետք է ասել, որ այն բավական տարբերվում էր մյուսներից: Վերջինիս կարծիքով, Հայաստանի անկախության հարցի մասին կշռադատված առաջարկներից զատ, կային նաև անհեռատես առաջարկներ: Ավելի ճիշտ կլիներ, եթե Հայաստանը ինքնիշխան ֆեդերացիայի կազմում մնար, ուստի Հայաստանը պետք է մասնակցեր Միության նոր դաշնագրի կնքմանը և մնար նորացվող Խորհրդային Միության կազմում: Դժվար չէր տեսնել, որ Ստեփան Պողոսյանի նման մտածելակերպը այլևս չէր համապատասխանում այն նոր գործընթացներին, որոնք կատարվում էին թե՛ Խորհրդային Միությունում և թե՛ հանրապետությունում: Դրանք անմիջականորեն առնչվում էին Հայաստանի Հանրապետության անկախության ձեռքբերմանն ու դրան հետևած նոր գործընթացներին:

Կրկին հիշենք Վլադիմիր Մովսիսյանի այն հարցադրումը, որ ժամանակները փոխվում էին, և պետք է հրապարակ գային նոր, որոշակի բարդույթներից ազատ, ավելի երիտասարդ, ունակ անհատներ: Եվ անկախ նրանից, թե ինչպիսի սխալներ է գործել Հայաստանի կոմկուսն իր գործունեության ավելի քան 70-ամյա պատմության ընթացքում, դա մեր ժողովրդի պատմությունն է, նրա անբաժանելի մասը, որը պետք է իմանալ, վերլուծել, նաև դասեր քաղել:

ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Արամ Սարգսյանը, ի տարբերություն նախկին քարտուղարների, ավելի ազատ էր իր դատողություններում, քանի որ արդեն հանրապետությունում այլ իրավիճակ էր: Հանրապետության նոր իշխանությունները հասցրել էին հանրապետության Գերագույն խորհրդում և կառավարությունում, երկրի քաղաքական-տնտեսական կյանքում որոշակի փոփոխություններ կատարել և բազմակուսակցության մասին որոշում ընդունել: Արամ Սարգսյանն առավելապես փորձում էր գնահատել այդ բոլոր գործընթացների արդյունքները, իսկ դրանք ավելի շատ քննա-

դատական էին թե՛ Հայաստանի կոմկուսի և թե՛ իշխանության եկած նոր ուժերի՝ «Հայոց համազգային շարժման» նկատմամբ: Նա որոշակի հույսեր էր կապում 1991 թ. Խորհրդային Միության նորացման գորբաչովյան նոր տարբերակի հետ՝ մտածելով, որ Հայաստանի մասնակցությունը նոր ֆեդերացիային որպես սուվերեն պետություն լավ երաշխիք էր Հայաստանի հետագա զարգացման համար:

Մերօրյա բարձունքից նման առաջարկ, տեսակետ ներկայացնելը, անշուշտ, անիմաստ է, երևի նաև անհասկանալի, մանավանդ որ շատ հարցեր դեռևս անորոշ էին և ընթացքի մեջ, իսկ երևույթները, փոփոխություններն էլ բավական արագ էին տեղի ունենում՝ իրենց հերթին ծնելով նոր առաջարկներ, նոր տարբերակներ: Բայց խնդիրն այն էր, որ դրանք նույնպիսի արագությամբ էլ մերժվում էին, քանի որ պատմությունն արդեն այլ ընթացքով էր տեղի ունենում, ինչն էլ անհրաժեշտ էր տեսնել, ընդունել և հաշտվել պատմական այն նոր գործընթացներին, որոնք տեղի էին ունենում նաև նորանկախ Հայաստանի Հանրապետությունում: Գլխավոր խնդիր էր դառնում ամեն ինչ անել ձեռք բերած անկախությունը պահպանելու և ամրապնդելու ուղղությամբ: Դա պետք է դառնար յուրաքանչյուր հայի կյանքի հավատամքը:

3.2. Աշխատավորական կոլեկտիվների պայքարը հանրապետության քաղաքական կյանքի ժողովրդավարացման համար

Արցախյան շարժման ամենակարևոր սկզբունքներից և հետևանքներից մեկը համաժողովրդական շարժման ակտիվացումը և իշխանությունների վրա օր օրի ճնշումների ուժեղացումն էին: Եվ դա հասկանալի է, քանի որ ժողովրդական զանգվածները վերակառուցման շնորհիվ հնարավորություն ստացան բարձրաձայնելու և խոսելու այնպիսի հարցերի մասին, որոնք երկար ժամանակ արգելվում էին: Հայ իրականության մեջ այդ հանգամանքը պայմանավորված

էր Լեռնային Ղարաբաղի հարցով: Մյուս կողմից էլ առանց ժողովրդական զանգվածների ակտիվացման, պաշտպանության «Ղարաբաղ» կոմիտեն չէր կարող նման ակտիվություն դրսևորել և ընդլայնել շարժման ծավալները: Մյուս խնդիրն այն էր, որ զանգվածների համաժողովրդական պայքարը նպաստում էր հասարակական կարծիքի ձևավորմանը՝ ստիպելով իշխանություններին հաշվի նստել համաժողովրդական պահանջների հետ: Եվ դա է պատճառը, որ «Ղարաբաղ» կոմիտեն աշխատում էր ոչ միայն բավարարվել ամենօրյա հանրահավաքներով, դա իր հերթին, այլ նաև աշխատում էր հանրահավաքներն օգտագործել՝ հանրապետության բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, աշխատավորական կոլեկտիվներում, գիտահետազոտական ինստիտուտներում, միավորումներում, բուհերում ստեղծելու «Ղարաբաղ» կոմիտեներ և ընդունելու իրենց պահանջներից բխող որոշումներ: Իսկ այդ որոշումներն ուղղված էին հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի դեմոկրատացմանը, արտահերթ խորհրդարանական նստաշրջանի հրավիրմանը, պատգամավորներին ետ կանչելու ինստիտուտի ձևավորմանը, նոր, պրոֆեսիոնալ պատգամավորներով խորհրդարանը համալրելու ավանդույթների ձևավորմանը և այլն:

Հանրահավաքների հենց առաջին իսկ օրերից ժողովրդական զանգվածները ակտիվորեն արձագանքում էին «Ղարաբաղ» կոմիտեի բարձրացրած հարցերին և ստիպում իրենց կոլեկտիվների ղեկավարությանը ընդունել որոշումներ՝ ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի հայտնի որոշմանը: Հանրահավաքի կազմակերպիչները՝ «Ղարաբաղ» կոմիտեն, նրա ղեկավարները, կոլեկտիվներին տալիս էին որոշակի հրահանգներ, խորհուրդներ և այլ կարգի հանձնարարականներ, որպեսզի այդ նախաձեռնությունները նպաստեին հասարակական շարժման ակտիվացմանը և կազմակերպված ձևով հարցերի բարձրացմանը:

1988 թ. փետրվարի 23-ին Թատերական հրապարակի հանրահավաքում ելույթ ունեցավ նաև շարժման ակտիվիստներից Վազգեն

Մանուկյանը՝ ընդգծելով, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու գործընթացը լինելու է շատ երկար, որի համար էլ առաջարկում էր բոլոր գործարաններում, կոլեկտիվներում ստեղծել համապատասխան կոմիտեներ, որոնք տարբեր կարգի պահանջներ կներկայացնեին հանրապետության ղեկավարությանը:

Վազգեն Մանուկյանը ներկայացրել է դրանցից մի քանիսը: Առաջինը տարբեր կոլեկտիվների, ձեռնարկությունների պահանջները «Ղարաբաղ» կոմիտե ներկայացնելն էր, երկրորդ տարբերակը՝ հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորներին ետ կանչելն ու նրանցից պահանջելը, որ հարց բարձրացնեն հրավիրելու հանրապետության Գերագույն Խորհրդի արտահերթ նստաշրջան: Պայքարի երրորդ ձևը գործադուլներ անցկացնելն էր:

Ելույթ ունեցողը նաև նշում էր, որ պայքարի այդ ձևերը ընդունելի են, որոնք էլ «Ղարաբաղ» կոմիտեի կողմից կիրառվելու են իրենց գործունեության պայքարի ընթացքում: Ի դեպ, արձագանքները բավական մեծ էին, քանզի հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկություններում իրար ետևից նախ ստեղծվում էին «Ղարաբաղ» կոմիտեներ, իսկ հետո ընդունվում էին որոշումներ, որոնք բխում էին հանրահավաքներում բարձրացված հարցերից[206]:

Հետագայում այլ առիթով անդրադառնալով նշված հարցին՝ Լևոն Տեր-Պետրոսյանը, «Հայք» թերթին (խմբագիր՝ Վասակ Դարբինյան) տված հարցազրույցում խոսելով Արցախյան շարժման մասին, ասել է, որ Արցախի հարցը 1988 թ. փետրվարին պատահականորեն չծնվեց: Նույն երևույթը տեղի է ունեցել 1960-ական թվականներին, երբ հայ ժողովուրդը առաջինը փորձեց օգտվել խրուշչովյան հարաբերական ազատություններից՝ նկատի ունենալով 1965 թ. ապրիլի 24-ի ցույցը, որը Խորհրդային Միության պատմության մեջ առաջին տարերային և զանգվածային ելույթն էր:

1988 թ. վերսկսված շարժումը, ըստ Լևոն Տեր-Պետրոսյանի, ապացուցեց, որ հայ ժողովուրդը դարձյալ պատրաստ է օգտագործել

---

[206] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 11, 16:

ցանկացած հնարավորություն՝ իր ազգային նպատակներին հասնելու համար: Շարժումը սկսվեց ամենքին հայտնի կարգախոսներով, որոնք հետո, պայմանավորված որոշ հանգամանքներով, կարող էին փոխվել: Լ. Տեր-Պետրոսյանը ճիշտ նկատեց, որ վաղ թե ուշ Երևանում կազմակերպվող ամենօրյա ցույցերը պետք է ավարտվեն, և դժվար էր պատկերացնել, թե հետո ինչպես պիտի շարժումը պահպանվեր, ուստի անհրաժեշտություն էր զգացվում կազմակերպչական ձև տալու շարժմանը, որից էլ ծնվեց հիմնարկ-ձեռնարկություններում «Ղարաբաղ» կոմիտեներ ստեղծելու գաղափարը: Այդ մասին հայտարարվեց, ինչպես վերևում նշվեց, փետրվարյան հանրահավաքների առաջին իսկ օրերին Վազգեն Մանուկյանի կողմից: Եթե «Ղարաբաղ» կոմիտեները չստեղծվեին, շարժումը իսկապես կարող էր մարել[207]: Հարկ է նկատել, որ այս ամենը բավական անկեղծ խոստովանություն էր, քանի որ առանց «Ղարաբաղ» կոմիտեների շարժումն աստիճանաբար կմարեր, մարդիկ կհոգնեին ամեն օր նույն մարդկանց նույնաբնույթ ելույթները լսել: Փաստորեն՝ պայքարի այդ ձևը փոխեց նաև «Ղարաբաղ» կոմիտեի մարտավարությունը՝ պահպանելով լարված վիճակը, պայքարը ապագա իշխանության համար տեղափոխվեց նաև հիմնարկ-ձեռնարկություններ, բուհեր և այլ կոլեկտիվներ, որտեղ նախաձեռնությունն անցնում էր «կոմիտեականների» ձեռքը, որոնք էլ անցկացնում էին կոլեկտիվների ժողովներ, ընդունում հաճախ իրար նման, մեկ կենտրոնից թելադրված որոշումներ, վերադասի առաջ դնում նույն կարգի պահանջներ և այլն:

1988 թ. փետրվարի 28-ին Հայաստանի գրողների միության տանը տեղի է ունեցել Ղարաբաղի պաշտպանության կոմիտեի նիստը: Ժողովին մասնակցում էին 300 ներկայացուցիչներ, որոնք ընտրվել էին Երևանի և տարբեր շրջանների տարբեր ձեռնարկություններից, կոլեկտիվներից, կազմակերպություններից, որոնք կոչվում էին «ենթակոմիտեներ», ամեն ինչ անում էին, որպեսզի պայքարը դառնար էլ ավելի համաժողովրդական: Ժողովում ելույթ է ունեցել «Ղարաբաղ»

[207] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 49, թ. 1-2:

կոմիտեի անդամ Իգոր Մուրադյանը, որը ներկայացրել է «Ղարաբաղ» կոմիտեի նիստի մասին՝ հատկապես նշելով, որ ընտրվել է «Ղարաբաղ» կոմիտեի նոր կազմ՝ բաղկացած 9 անդամներից: Կոմիտեի կազմում կրկին ընտրվել էին Իգոր Մուրադյանը և նրա համախոհներ Մ. Սարգսյանը, Գ. Սաֆարյանը և 6 ուրիշ անդամներ, որոնք Լեռնային Ղարաբաղի բնակիչներ էին: Դրա համար էլ նրանց անունները անվտանգության նկատառումով չեն հրապարակվել:

«Ղարաբաղ» կոմիտեն ընդունել է նաև որոշում, ըստ որի՝ Վաչե Սարուխանյանը և Զորի Բալայանը չէին ընդգրկվելու «Ղարաբաղ» կոմիտեի կազմի մեջ, սակայն նրանք շարունակելու էին օժանդակել կոմիտեին:

Կոմիտեն ընդունել է որոշում բոլոր ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում, բուհերում ամեն ուրբաթ՝ ժամը 18:00-ին, չվնասելով արտադրությանը և ուսումնական գործընթացին, անցկացնելու Ղարաբաղյան հարցի վերաբերյալ կոլեկտիվների ընդհանուր ժողովներ: Միաժամանակ առաջարկ է արվել կուսակցական ժողովներում ընդունելու որոշումներ՝ Հայկական ԽՍՀ-ն ԼՂԻՄ-ին միավորելու մասին՝ դրանց կրկնօրինակներն ուղարկելով ԽՄԿԿ կենտկոմ և «Ղարաբաղ» կոմիտե: Հավաքը միաժամանակ որոշել է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հետ համերաշխության օրը մարտի 23-ից տեղափոխել շաբաթ օրը՝ մարտի 26-ը, որպեսզի արդյունաբերական ձեռնարկությունները կարողանան աշխատել: Հավաքում տեղեկություն է տրվել այն մասին, որ ԽՄԿԿ կենտկոմի հանձնարարությամբ առաջիկա օրերին Մոսկվայից հայազգի գիտնականներից, մտավորականներից կազմված մի պատվիրակություն (թվով 9 հոգի)՝ ԽՄԿԿ կենտկոմի բաժնի վարիչի տեղակալ Կ. Ն. Բրուտենցի գլխավորությամբ, պետք է ժամաներ Լեռնային Ղարաբաղ: Ի դեպ, այդ պատվիրակությունը, ժամանելով Ստեփանակերտ, ականատեսի աչքերով ավելի մոտիկից է տեսել Լեռնային Ղարաբաղում ստեղծված վիճակը, իսկ հետո լինելով նաև Բաքվում, Երևանում՝ կազմել է բավական հիմնավորված, փաստարկված մի

տեղեկանք, որտեղ մանրամասնորեն ներկայացվել են Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող գործընթացները:

Պատվիրակության կազմում էին այնպիսի ճանաչված հայ գիտնականներ, ինչպիսիք էին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Մոսկվայի պետական համալսարանի ամբիոնի վարիչ Թ. Ս. Խաչատուրովը, ակադեմիկոս, ԽՍՀՄ գիտությունների սինթետիկ պոլիմերների ինստիտուտի տնօրեն Ն. Ս. Ենիկոլոպովը, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, Մոսկվայի պետական համալսարանի ամբիոնի վարիչ Իգիթ Աթաբեկովը, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, ակադեմիայի հաշվիչ մաթեմատիկական ինստիտուտի լաբորատորիայի վարիչ Ա. Ս. Սարգսյանը, Մոսկվայի կառավարման ինստիտուտի պրոֆեսոր Մ. Լ. Սարգիսովը, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ինժեներական կենտրոնի տնօրեն Ռ. Ա. Սրապենյանցը, որոնք ԽՄԿԿ կենտկոմ էին ներկայացրել ընդարձակ մի հաշվետվություն, տեղեկանք՝ Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի մասին:

Ծանոթանալով նշված նյութերին՝ ավելի մեծ չափով ենք համոզվում, թե որքան անտանելի, անմխիթար վիճակում էին հայտնվել Ադրբեջանի հայաբնակ տարբեր քաղաքներում, Լեռնային Ղարաբաղում ապրող հայերը: Իսկ 1988 թ. փետրվարի 20-ի հայտնի որոշումից հետո մինչև մարտի 1-ը ամեն օր տեղի էին ունենում զանգվածային հանրահավաքներ ԼՂԻՄ-ում՝ մարզկոմի շենքի առաջ, որտեղ մասնակիցների թիվը տատանվում էր 15000-50000: Ի դեպ, հանրահավաքները բացառապես կրում էին խաղաղ բնույթ: Կարևոր է նաև շեշտել, որ հանրահավաքները չունեին ո՛չ հակասոցիալիստական և ո՛չ էլ ազգայնական ուղղվածություն: Հանրահավաքների մասնակիցները կրում էին երկրի, ԽՄԿԿ առաջնորդների դիմանկարները, միութենական հանրապետությունների դրոշները, Վ. Ի. Լենինի, Ստեփան Շահումյանի, Մ. Ս. Գորբաչովի դիմանկարները, վերակառուցմանը վերաբերող կարգախոսներ, թռուցիկներ և այլն[208]:

[208] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 18, թ. 128-130:

Հետաքրքիր է նշել, որ հանրահավաքների այդ օրերին էլ Ստեփանակերտում ձևավորվում էր ոչ ֆորմալ հասարակական կոմիտե, որի կազմում էին ԼՂԻՄ-ի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարներ, ԽՄԿԿ անդամներ, այդ թվում՝ նաև քաղխորհրդի մարզկոմի պատգամավորներ: Պատվիրակության անդամները իրենց հաշվետվություններում նաև նշում էին, որ իրենց հանդիպումները այդ ներկայացուցիչների հետ ցույց տվեցին, որ հասարակական կոմիտեն ամենևին ոչ թե հակադրվում էր ԼՂԻՄ-ի կուսակցական ղեկավարությանը, այլ համագործակցում և իր գործողությունները համաձայնեցնում էր մարզկոմի հետ: Ներկայացնելով այդ ամենը՝ պատվիրակության անդամները նաև նշում էին, որ հասարակական կոմիտեն վայելում էր Լեռնային Ղարաբաղի բնակչության վստահությունը:

Գնահատելով Սումգայիթյան իրադարձությունները՝ պատվիրակության անդամները նշում էին, որ Սումգայիթում և Ադրբեջանի հայաբնակ այլ բնակավայրերում երկար տարիներ հայերի նկատմամբ կիրառվել են ֆիզիկական բռնության բազմաթիվ օրինակներ, իսկ Ադրբեջանի ղեկավարությունը չէր ձեռնարկել որևէ քայլ՝ այդ անօրինությունները կանխելու համար և այլն:

Զեկուցագրում ներկայացնելով իրենց տպավորությունները, պատկերացումները Լեռնային Ղարաբաղում, Երևանում, Բաքվում ստեղծված իրավիճակի մասին՝ ԽՄԿԿ կենտկոմի հանձնարարությամբ ուսումնասիրող խումբը կատարում էր մի շարք առաջարկներ, որոնցից գլխավորը լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանի մի շարք հայաբնակ շրջաններում ստեղծված լուրջ իրավիճակն էր, որը պահանջում էր իրականացնել վճռական միջոցներ՝ հաղթահարելու եղած դժվարությունները: Ուսումնասիրող խմբի կարծիքով խնդրի լուծման հիմնական տարբերակը մարզի միավորումն էր Հայկական ԽՍՀ-ին, որը կազմում էր Ադրբեջանի ընդհանուր տարածքի 5, իսկ բնակչության 2.6 %-ը: Միաժամանակ նշվում էր, որ անհրաժեշտ է հաշվի առնել նաև Լեռնային Ղարաբաղի բնակչության կամարտահայտությունը: Խումբը նաև գտնում էր, որ հարցը պետք է լուծվեր՝

լիովին պաշտպանելով նաև մարզի ադրբեջանցի բնակչության իրավունքները:

Խնդրի լուծումն ուսումնասիրող խմբի մյուս տարբերակը ԼՂԻՄ-ը ՌԽՖՍՀ-ի մեջ ընդգրկելն էր՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը ռուս ժողովրդի նկատմամբ միշտ բարի զգացումներ է դրսևորել՝ նպատակ ունենալով ազատագրվել մուսուլմանական տիրապետությունից: Ինչ խոսք, այս առաջարկի մեջ ավելի շատ գերիշխում էր զգացմունքային կողմը: Ուսումնասիրող խումբը զեկուցագրում նաև բերում էր Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի իշխանությունների կողմից երկար տասնամյակներ իրականացված հակահայ քաղաքականության փաստեր: Չխորանալով հանձնաժողովի ներկայացրած բազմաթիվ հանրահայտ փաստերի վերլուծության մեջ՝ միայն նշենք մի քանիսը ,որոնք վերաբերում են հատկապես հոգևոր, մշակութային և պատմական աղավաղումներին՝ սկսած Լեռնային Ղարաբաղի հայերին ալբանացիներ, հայկական պատմական հարստությունները, եկեղեցիները ոչ հայկական, կրկին ալբանական անվանելուց: Միայն այն փաստը, որ ԼՂԻՄ-ի տարածքում գտնվող 1700 ճարտարապետական, հնագիտական արժեքավոր հուշարձանները գտնվում էին անմխիթար, կիսաքանդված, ավերակների վերածված վիճակում, խոսում էր այն մասին, որ Ադրբեջանի իշխանությունները նման անտարբերությամբ իրականացնում էին մի քաղաքականություն, որի նպատակը Լեռնային Ղարաբաղում հայկական տարրի վերացումն էր, Ադրբեջանի տարածաշրջանից աստիճանաբար հեռացնելը: Նույն բանը կատարվում էր հայոց լեզվի նկատմամբ. այն աստիճանաբար դուրս էր մղվում գործածությունից: Իսկ ինչ վերաբերում էր կոնկրետ 1988 թ. փետրվարին և նրան հաջորդած դեպքերին, խմբի անդամները ևս հանգամանորեն դրանք ներկայացնում էին՝ ցույց տալով, որ այդ ամենը կատարվում էր Միության գործող Սահմանադրության շրջանակներում՝ սկսած հասարակական, ոչ ֆորմալ կազմակերպությունների ձևավորումից մինչև 1988 թ. փետրվարյան իրադարձությունները և նույնիսկ մինչև դրան նախորդող շրջանում անցկացված խաղաղ ցույցերը: Հանրահավաք-

ների կազմակերպիչները իրենց գործողությունները համաձայնեցնում էին մարզային ղեկավար մարմինների հետ, իսկ հանրահավաքների մասնակիցների կրած կարգախոսները, թռուցիկները ոչ մի հակախորհրդային, ազգայնամոլական, ծայրահեղական բովանդակություն չունեին: Նրանք իրենց հետ տանում էին երկրի ղեկավարների դիմանկարները, ինչպես և անում էին Երևանում: Ի պատասխան այդ խաղաղ ցույցերի՝ Ադրբեջանը կազմակերպել էր Սումգայիթյան ջարդը, որը տարբեր ձևերով շարունակվեց նաև հայաբնակ քաղաքներում, բնակավայրերում:

Չնայած խմբի զեկուցագրում կային նաև ուշադրության արժանի բազմաթիվ այլ մտքեր, փաստեր և այլն, բայց հատկապես կարևոր էր զեկուցագրում անցկացված այն միտքը, որ ԼՂԻՄ-ում սկսված հանրահավաքների ցույցերի կազմակերպիչների և մարզի ղեկավարության միջև, իհարկե, բացառությամբ Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի քարտուղար Կևորկովի, ի տարբերություն Խորհրդային Հայաստանի կուսակցական, պետական ղեկավարության, հակասություններ չկային: Իսկ դա արդեն մեծ առավելություն էր, քանզի Լեռնային Ղարաբաղի բարձրացրած հարցը ողջ ժողովրդի պահանջն էր:

Հարցի մյուս առանձնահատկությունն այն էր, որ Լեռնային Ղարաբաղի շարժման օրերին Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Բագիրովը այցելել էր նախ Աղդամ: Նրան հետևել էր Աղդամից Ստեփանակերտ շարժվող, ագրեսիվորեն տրամադրված ամբոխը, որին մի կերպ կանխել էին զորքերը, իսկ հետո՝ Սումգայիթ: Դրանից հետո վայրագորեն տրամադրված ադրբեջանական ամբոխը սկսեց Սումգայիթում իրականացնել հայերի զանգվածային ջարդեր, կոտորածներ, թալան, դիակապտություն և այլն: Իսկ զորքի մտցնելը, որը նաև մի քանի օր ուշացումով տեղի ունեցավ, իրավիճակն առանձնապես ոչնչով չփոխեց: Այստեղից էլ մյուս հետևությունը, որը կատարում են ուսումնասիրող խմբի անդամները, հանգում էր նրան, որ նման քաղաքականության շարունակությունը Բաքուն, Կիրովաբադը և այլ հայաբնակ քաղաքներն ու գյուղերն էին:

Նշված բոլոր փաստերը ներկայացնելուց հետո խումբը, զեկուցագրի վերջում ընդհանրացնելով կատարած ուսումնասիրության արդյունքները, արեց մի քանի հետևություններ, որ Լեռնային Ղարաբաղում ստեղծվել էր շիկացած, ողբերգական մթնոլորտ, և եթե մարդկանց հույսերը չարդարանային, վիճակը կարող էր էլ ավելի վատթարանալ: Ուստի առաջարկվում էր, ինչպես ասվեց, Լեռնային Ղարաբաղը կա՛մ միացնել Խորհրդային Հայաստանին, կա՛մ ՌԽՖՍՀ-ին: Մյուս առաջարկները վերաբերում էին Լեռնային Ղարաբաղում սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացմանը և այլն[209]: Ինչ խոսք, հանձնաժողովի ներկայացրած զեկուցագիրը գրված էր ցավի զգացումով, վիճակի իրական նկարագրմամբ: Սակայն անկախ նրանից, թե հանձնաժողովը ԽՄԿԿ կենտկոմ ներկայացրած զեկուցագրում ինչ էր գրել, վիճակը առանձնապես չփոխվեց, որը թույլ չէր տալիս գործող համակարգը: Եվ որքան էլ որ այդ որոշումները գրեթե նույն բովանդակությունն ու պահանջներն ունեին, երբեմն էլ իրագործվում էին «Ղարաբաղ» կոմիտեի կողմից կազմված կամ թելադրված սխեմայով, այնուամենայնիվ կային նաև կոլեկտիվներ, որոնք շատ ավելի հասուն, հիմնավորված պահանջներ էին դնում հանրապետության կուսակցական, պետական, օրենսդիր մարմինների առաջ, որոնք վերջին հաշվով վերաբերում էին թե՛ Լեռնային Ղարաբաղին, թե՛ հանրապետությունում իրականացվող վերափոխումներին:

Հայաստանի ազգային արխիվում պահվող այդ նյութերը մի շարք հատորներ են (թվով 6), որոնք վերնագրված են «Աշխատավորական կոլեկտիվներից ստացված որոշումներ, նամակներ և հեռագրեր՝ հանրապետությունում քաղաքական կյանքի հետագա դեմոկրատացման անհրաժեշտության և ազգային հրատապ խնդիրների շուտափույթ լուծման մասին»:

Չնայած հարցադրումների բազմազանությանը՝ առկա էր մեկ կարևոր խնդիր՝ վերակառուցել հասարակությունը և այն կառուցել

[209] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 18, թ. 128-133:

դեմոկրատական սկզբունքների վրա: Նոր պահանջներին համապատասխանելու նկատառումով «Ղարաբաղ» կոմիտեն հրատարակեց մի նախագիծ, որի հանդես գալը կապված էր հետևյալ նախաձեռնության հետ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատներ Լևոն Տեր-Պետրոսյանը, Սամվել Մուրադյանը, Խաչիկ Ստամբոլցյանը, Ռաֆայել Ղազարյանը և ուրիշներ (թվով 12 հոգի) դիմել էին «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությանը՝ խնդրելով հրապարակել Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումներ անցկացնելու համար ՀՀԾ հռչակագրի մասին նախագիծը՝ հասարակական լայն քննարկում անցկացնելու նպատակով: Այն կոչվում էր «Հռչակագիր Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումներ անցկացնելու մասին»[210]: Հռչակագրում մասնավորապես ասվում էր. «Նկատի ունենալով, որ երկրում ընթացող պրոցեսները՝ մի կողմից խորհրդային կարգերի դեմոկրատացմանն ուղղված միջոցառումները, մյուս կողմից՝ վարչահրամայական մեթոդներին հավատարիմ ուժերի ձեռնարկած հետադիմական քայլերի դեմ պայքարը, Լեռնային Ղարաբաղում առավել ևս ստեղծվել էր մի այնպիսի բարդ իրավիճակ, որը հղի էր լայնամասշտաբ բռնությունների սանձազերծման վտանգով»:

Վերջին երկու տարիների ընթացքում հայ ժողովուրդը կենտրոնական իշխանությունների թողտվությամբ բազմիցս ենթարկվել էր ադրբեջանական իշխանությունների և խորհրդային բանակի կողմից ձեռնարկված ահաբեկչական գործողությունների, որոնց նպատակն էր բռնի ուժով ոտնահարել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման իրավունքը: Համոզվելով, որ հայ ժողովրդի բնական զարգացումն ու նրա ազգային իղձերի իրականացումն ապահովելու համար պահանջվում էին կայուն երաշխիքներ, որոնց առկայության դեպքում նրա բախտն այլևս կախված չէր լինի քաղաքական անցողիկ հանգամանքներից ու հակամարտ ուժերի տեղաբաշխումից, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ՀՀԾ ներկայացուցիչները Գերագույն

[210] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 17, թ. 7:

խորհրդի քննարկմանն են ներկայացրել օրենքի մի նախագիծ, որը վերաբերում էր Խորհրդային Հայաստանում դեմոկրատական վերափոխումներին: Նրանում ասվում էր. «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը հաստատում է հանրապետությունում համամարդկային արժեքների, ազգերի ինքնորոշման, մարդու իրավունքների և սոցիալական արդարության սկզբունքների վրա հիմնված արմատական դեմոկրատական վերափոխումների անցկացման անհրաժեշտությունը՝ այդ ուղղությունը որպես առաջին քայլ հռչակելով հետևյալ կարևորագույն միջոցառումների իրականացման համար.

1. Սահմանադրությունից հանվում է կոմունիստական կուսակցության ղեկավար դերին վերաբերող 6-րդ կետը: Հայաստանում թույլատրվում է տարբեր հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ նաև քաղաքական կուսակցությունների ազատ գործունեությունը:

2. Հայաստանում հաստատվում է խոսքի, մամուլի, խղճի լիակատար ազատություն, արվեստի, գրականության և հասարակական գիտությունների բնագավառում վերացվում է գրաքննադատությունը:

3. Քաղաքական նկատառումներով հալածված բոլոր անձինք արդարացվում են՝ ստանալով վնասի հատուցում:

4. Նախատեսված է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահի և ժողովրդական դեպուտատների տեղական խորհուրդների նախագահների ուղղակի ժողովրդական ընտրություն, բացառվում է այդ և պետական կուսակցական պաշտոնների համատեղումը:

5. Հայկական ԽՍՀ տարածքում չեն գործում ԽՍՀՄ այն օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, որոնք խախտում են հանրապետության սուվերեն իրավունքները:

6. Հայկական ԽՍՀՄ-ում վերացվում է կենտրոնից պաշտոնյաներ նշանակելու արատավոր պրակտիկան[211]:

Սա, փաստորեն, ՀՀՇ-ի այն հռչակագրի նախագիծն էր, որ իշխանության գալուց հետո նրանք պետք է իրականացնեին, չնայած

[211] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 17, թ. 7:

պետք է ասել, որ «Ղարաբաղ» կոմիտեի, ՀՀԾ առաջնորդներն իշխանության գալուց հետո, ոչ այնքան հավատարիմ մնացին իրենց որդեգրած սկզբունքներին, ինչպես հաճախ լինում է: Բայց դա այլ հարց է, քանի որ կոնկրետ այդ ժամանակ մարդիկ հավատում էին «Ղարաբաղ» կոմիտեին, որն էլ դարձավ կարևոր կռվան ՀՀԾ-ի համար՝ իր ամենօրյա քարոզչությունում ավելի ժողովրդավար, ժողովրդին ավելի մոտ լինելու համար:

Քանի որ գործընթացը սկսված էր, ուստի բազմաթիվ կոլեկտիվներ, գիտական հիմնարկներ, բուհեր հրավիրում էին իրենց կոլեկտիվների ժողովներ, հավաքներ և ընդունում հռչակագրից բխող որոշումներ՝ պահանջելով գործող իշխանություններից անհապաղ ընդունել նման կարգի որոշումներ և այլն: Դեռ ավելին, կային կոլեկտիվներ, որոնք ավելի վաղ, նույնիսկ մինչև Արցախյան շարժման սկիզբը, վերակառուցման սկզբունքներից բխող պահանջներ էին դնում Միության ղեկավարության առջև՝ վերանայելու շատ հարցեր, այդ թվում՝ նաև Լեռնային Ղարաբաղի հարցը:

1987 թ. հունիսի 2-ին Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի կուսակցական կազմակերպությունը (կուսբյուրոյի քարտուղար՝ Ա. Գ. Դարբինյան) դիմում է ուղղել ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին՝ բարձրացնելով այնպիսի հարցեր, ինչպիսիք Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հարցերն են: Ժամանակին պատմական ճշմարտության անտեսմամբ, անարդարացիորեն և քաղաքական այլ նկատառումներով դրանք տրվել էին Խորհրդային Ադրբեջանին:

Կոլեկտիվը հույս էր հայտնում, որ երկրում սկսված վերակառուցումը, այլ խնդիրներից զատ, կոչված էր ուղղելու նաև անցյալ իշխանությունների կողմից թույլ տված սխալները, վերականգնելու պատմական ճշմարտությունը՝ վերադարձնելով բնիկ, հայկական վաղնջական տարածքները՝ Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը, իր տերերին՝ հայ ժողովրդին[212]:

---

[212] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմության 90-ամյա ֆակուլտետը, Երևան, 2009, էջ 483-487:

Նմանօրինակ ընդարձակ որոշում է հրապարակել նաև Հայաստանի նկարիչների միությունը, որը 1988 թ. մարտի 11-ին «Ղարաբաղ» ենթակոմիտեի նախաձեռնությամբ ընդունեց «Ուղերձ՝ ուղղված Խորհրդային Միության և միութենական հանրապետությունների նկարիչների միության կոլեկտիվներին»՝ ողջ երկրով մեկ բարձրաձայնելով Լեռնային Ղարաբաղի մասին ճշմարտությունը: Բավական հանգամանորեն ներկայացնելով Լեռնային Ղարաբաղում ստեղծված պայթյունավտանգ վիճակը, արդարացիորեն նշելով, որ «Ղարաբաղը վերակառուցման քննություն է», հանրապետության նկարիչների միության կոլեկտիվը ևս լավատեսորեն հավատում էր, որ բանականության ուժն ու արդարությունը կհաղթանակեն, և Լեռնային Ղարաբաղը կվերադառնա մայր հայրենիքի գիրկը: Դիմումուղերձը ստորագրել են հանրապետության վաստակաշատ նկարիչներ Արա Շիրազը, Ս. Պետրոսյանը, Է. Արծրունյանը, Հ. Աբրահամյանը և ուրիշներ[213]:

1989 թ. դեկտեմբերի 4-ին տեղի է ունեցել Երևանի էլեկտրատեխնիկական գործարանի աշխատավորության միտինգը, որտեղ, քննարկելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 11-րդ գումարման արտահերթ 11-րդ նստաշրջանի հրավիրման հարցը, որոշել են դադարեցնել աշխատանքը, մինչև կվերանայվեին ՀԽՍՀ Սահմանադրության 75-րդ և 6-րդ հոդվածները: 75-րդ հոդվածը վերաբերում էր ԽՍՀՄ օրենքների գերակայությանը՝ առաջարկելով այն փոխարինել նրանով, որ ԽՍՀՄ օրենքները ուժ են ստանում ՀԽՍՀ տարածքում միայն այն ժամանակ, եթե դրանք վավերացվում են ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից: Իսկ 6-րդ հոդվածը վերաբերում էր Կոմունիստական կուսակցության ղեկավար և ուղղություն ցույց տվող ուժին, որը, ըստ ՀՀԾ պատգամավորների կազմած նախագծի, հայ ժողովուրդն ու նրա ընտրած մարմիններն էին: Կոլեկտիվի հանրահավաքը ելնում էր վերոհիշյալից և նաև 1989 թ. մայիսի 22-ի և 29-ի ընդունած գործադուլային իրավիճակի պայմանների մասին որոշումից: Միաժամանակ

[213] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 12, թ. 111-116:

հանրահավաքը ընդունել է որոշում, որ ՀԽՍՀ Սահմանադրության 75-րդ և 6-րդ հոդվածները ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից դեկտեմբերի 4-ի նստաշրջանում չվերանայելու դեպքում աշխատանքների դադարեցման հետևանքով գործարանի կրած ուղղակի և անուղղակի վնասների հատուցումը դրվում էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության վրա:

Կոլեկտիվը նաև պահանջում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրաժարականը՝ հայ ժողովրդի առաջ ծառացած հարցերի հանդեպ անվճռականություն ցուցաբերելու համար: Հետաքրքիր էր նաև, որ ի վերջո հանրահավաքի որոշման տակ Երևանի էլեկտրատեխնիկական գործարանի աշխատավորության անունից ստորագրեց ՀՀԾ խորհրդի նախագահ Հ. Գ. Չախոյանը[214]: Դժվար չէր նկատել, որ արդեն որոշ կոլեկտիվներում ստեղծված «Ղարաբաղ» կոմիտեներն էին ընթացք տալիս կոլեկտիվների ընդունած որոշումների վրա:

Որքան էլ բոլոր կոլեկտիվներում կայացած ժողովներում պահանջները նույնանման էին, այնուամենայնիվ կային երբեմն հետաքրքիր, ինչպես ասում են, ձևաչափով տարբերվող նաև այլ կարգի որոշումներ: Օրինակ՝ ՀԽՍՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի արհմիության ժողովի (06.12.1989 թ.) որոշումը հետաքրքիր էր նրանով, որ կոլեկտիվը, մտահոգված լինելով հանրապետության քաղաքական իրավիճակով, դատապարտում էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության որդեգրած արատավոր և ոչ դեմոկրատական այն վարքագիծը, ըստ որի՝ վերջինս չէր ցանկանում Գերագույն խորհրդի նստաշրջանի նիստերը վարել արդյունավետ և ընդունել մեր ժողովրդի համար այնքան անհրաժեշտ քաղաքական լիարժեք որոշումներ, որոնք կիրականացնեին Լեռնային Ղարաբաղի փաստական միացումը և կբերեին հանրապետության կյանքի արմատական դեմոկրատացմանը, ինչը, ցավոք, համառորեն անտեսվում էր: Ինչ խոսք, որքան էլ ողջունելի է նման լավատեսությունը, ազ-

[214] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 17, թ. 8:

գային ոգու զարթոնքը, բայց մի բան պարզ է, որ կոլեկտիվները ավելի ազատ էին նման լավատեսական կարծիքներ արտահայտելու և նման առաջարկներ անելու համար: Մինչդեռ պետական համապատասխան մարմինները այդ հարցում շատ ավելի զգուշավոր էին, և շարունակում էին, ցավոք, գործել, մտածել որոշակի կարծրատիպերով:

Ժողովը ընդունելի էր համարում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից ներկայացված հռչակագիրը, որը նպատակաուղղված էր և նպաստելու էր հասարակության դեմոկրատացմանը, առանց որի Լեռնային Ղարաբաղի հարցի վերջնական և արդարացի լուծումը միշտ էլ հանդիպելու էր ոչ դեմոկրատական ճնշման[215]: Անկախ նրանից՝ որքանով էր հնարավոր այդ ամենն իրականացնել, բայց նման որոշումները, նրանց հրապարակումը անչափ կարևոր էին հանրապետությունում հասարակական-քաղաքական նոր մթնոլորտ ստեղծելու գործում, իսկ դրանք բավական շատ էին: Օրինակ՝ 1989 թ. դեկտեմբերի 5-ին «Էլեկտրոն ստանդարտ» համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Արտաշատի դիագնոստիկայի շրջանային կենտրոնի կոլեկտիվի ընդհանուր ժողովը ևս որոշել էր հավանություն տալ դեկտեմբերի 4-ին կայացած ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում հրապարակված հռչակագրի այն կետերին, որոնք վերաբերում էին հանրապետության անվանափոխությանը (նկատի ունի խորհրդային, սոցիալիստական անվանումները հանելը – Հ. Ա.), ՀԽՍՀ Սահմանադրության 6-րդ և 75-րդ կետերի վերախմբագրմանը: Ժողովը նաև որոշել էր դիմել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանին, որպեսզի այն կոչ անի Հայկական ԽՍՀ-ից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներին չմասնակցելու ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 2-րդ համագումարին:

«Անի» գիտարտադրական միավորման աշխատավորական կոլեկտիվը դեկտեմբերի 5-ին ևս ընդունել է նմանօրինակ որոշում, որում

[215] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1. գ. 17, թ. 9:

նշվում էր, որ կոլեկտիվը պաշտպանում է ՀՀԾ վարչության ներկայացրած հռչակագրի հիմնական դրույթները՝ որպես գործողությունների կարևոր ծրագիր, և որի իրականացումը կնպաստի հանրապետության դեմոկրատացմանը, արդարության հաղթանակին: Կոլեկտիվի հանրահավաքը միաժամանակ դատապարտել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության բռնած դիրքորոշումը, որի համար էլ անվստահություն է հայտնել հանրապետության ղեկավարությանը և պահանջել նրա հրաժարականը[216]:

Նման որոշումները խոսում են այն մասին, որ ժողովուրդն արդեն օր օրի փոխվում էր, հավատում իր հավաքական ուժին, հավատում էր, որ միասնական պայքարը, որը արդարացի էր, կհաղթանակեր: Իսկ դա նշանակում էր, որ համաժողովրդական պայքարի ոգին համակել էր բոլորին՝ ստիպելով իշխանություններին գնալու զիջումների:

1989 թ. դեկտեմբերի 8-ին Երևանի «Երազ» ավտոգործարանի կոլեկտիվի ժողովն ընդունել է որոշում՝ նկատի ունենալով, որ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը մեկ անգամ ևս ապացուցել է, որ հաշվի չի նստում ժողովրդի կարծիքի հետ, չի ցանկանում երկխոսության նստել ժողովրդի հետ, որի ապացույցը ՀՀԾ-ի կողմից առաջադրված հռչակագիրը ժողովրդական քննարկման դնելուն դեմ լինելն էր: Գործարանի կոլեկտիվի կարծիքով՝ նման հարցը որոշում էր ոչ թե Ս. Հարությունյան, Հ. Ոսկանյան, Վ. Մարգարյան, Օ. Լոբով վարչարարական համակարգը, այլ ողջ հայ ազգը: Ժողովը նաև պահանջում էր մինչև 1989 թ. դեկտեմբերի 11-ը առաջադրված հռչակագիրը դնել համաժողովրդական քննարկման[217]:

Ոչ պակաս չափով հետաքրքիր է նաև «Հայէներգանորոգում» արտադրական ձեռնարկության կոլեկտիվի հանրահավաքի ընդունած որոշումը՝ քննարկվող հարցի վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը չէր արտահայտում հայ ժողովրդի շահերը, և 1989 թ. դեկտեմբերի 4-ին սկսած Գերա-

---

[216] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 17, թ. 10-11:
[217] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 17, թ. 12:

գույն խորհրդի XI գումարման XI նստաշրջանի աշխատանքների ընթացքում մեկ ամբողջ օր ԳԽ նախագահության և կուսակցական ապարատի ճնշման հետևանքով չկայացվեց ոչ մի որոշում, որի պատճառով չընդունվեց հայ ժողովրդի շահերը արտահայտող որոշում, և Գերագույն խորհուրդն ընդհատեց աշխատանքները, կոլեկտիվը դեկտեմբերի 6-ից հայտարարեց նախազգուշական գործադուլ մինչև նստաշրջանի ավարտը՝ պահանջելով քննարկել հայ ժողովրդի շահերից բխող, ՀՀԾ հռչակագրին համապատասխան որոշումները.

ա. Հայաստանում դադարեցնել կոմունիստական կուսակցության միահեծան իշխանությունը և հասնել բազմակուսակցական համակարգի, իսկ հանրապետության սահմանադրությունից հանել կոմունիստական կուսակցության ղեկավար դերի վերաբերյալ 6-րդ հոդվածը:

բ. Հանրապետության տարածքում դադարեցնել իշխանության կենտրոնական մարմինների ընդունած այն որոշումներն ու հրամանները, որոնք հակասում են ժողովրդավարության սկզբունքներին, հայ ժողովրդի ազգային շահերին և այլն:

Որոշման վերջում կրկին ձեռնարկության անունից որոշման տակ ստորագրել է ՀՀԾ խորհրդի նախագահ Ռ. Ղուշչյանը[218]: Վերոհիշյալ փաստերը վկայությունն են այն նոր գործընթացների մասին, որ հանրապետությունում հասարակական-քաղաքական մթնոլորտը աստիճանաբար փոխվում էր հօգուտ նոր ուժերի, որոնք սկսում էին արդեն նշանակություն տալ հանրապետությունում տեղի ունեցող նոր գործընթացներին:

Շատ ավելի հետաքրքիր են ԳԱ ֆիզիկայի, մաթեմատիկական մեքենաների, փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտների որոշումները և այլն: Օրինակ՝ 1988 թ. մարտի 16-ին հանրապետության ՊԱԿ-ի նախագահ Մ. Ա. Յուզբաշյանի ստորագրությամբ բավական ընդարձակ մի զեկուցագիր է ներկայացվել ՀԿԿ կենտկոմ՝ առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանին: Զեկուցագիրը վերաբերում էր Գի-

[218] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 17, թ. 14-15:

տությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի, այսպես կոչված, «Ղարաբաղ» կոմիտեի նախաձեռնած, ընդունած կոչի հրապարակմանը՝ ուղղված ԽՄԿԿ կենտկոմին, որում ասվում էր, որ 1988 թ. մարտի 11-ին Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի «Ղարաբաղ» կոմիտեի նախաձեռնությամբ տեղի է ունեցել կոլեկտիվի ժողովը, որն էլ ընդունել է «Դիմում»՝ ուղղված ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին, որտեղ նախ ԽՄԿԿ կենտկոմին վստահություն էին հայտնում, որ ԽՄԿԿ կենտկոմի նախաձեռնվող պլենումում ազգային հարցի քննարկման ժամանակ խորհրդային բոլոր մարդկանց կասվեր ղարաբաղյան իրողությունների մասին ճշմարտությունը և հետո պատասխանատվության կենթարկվեին Սումգայիթում իրականացված անկարգությունների գաղափարախոսները և կազմակերպիչները: Կոլեկտիվի հայտարարության մեջ քննադատական գնահատական էր տրված Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ Միության հեռագրական գործակալության հաղորդումներին:

Կոլեկտիվը նախ ճիշտ է գնահատել Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ ձևավորված 1988 թ. փետրվարյան իրադարձությունները, որոնք դարձան հայ ժողովրդի համար քաղաքացիական հասունության փորձություն և պատրաստակամություն՝ ապրելու ժողովրդավարության, հրապարակայնության, վերակառուցման պայմաններում: Միաժամանակ կոլեկտիվը իրավացիորեն նշում էր, որ Միության զանգվածային տեղեկատվության միջոցները վերակառուցման և հրապարակայնության հակառակորդների պատճառով փետրվարյան իրադարձությունների նկատմամբ ոչ միայն չտվեցին օբյեկտիվ տեղեկատվություն, այլ նաև խեղաթյուրված ձևով ներկայացրին խնդրի էությունը: Եվ քանի որ ԽՄԿԿ կենտկոմի առաջիկա պլենումը պետք է քննարկեր ազգամիջյան հարաբերություններին վերաբերող հարց, ուստի անհրաժեշտ էր այդ հարցին մոտենալ պատասխանատվության մեծ զգացումով: Ուստի անհրաժեշտ էր այդ ոլորտի խնդրի համար մշակել այնպիսի պրակտիկ քաղաքականություն, որը ներկա ժամանակներում երաշխավորեր բոլոր ժողովուրդների և ազ-

գությունների բնական զարգացման իրավունքը՝ հատկապես կարևորելով ժողովրդագրական գործոնը: Այս հարցում կոլեկտիվի շատ ավելի կարևոր եզրակացությունն այն էր, որ Միության բոլոր ժողովուրդները պետք է ապահովված լինեին այլ ժողովուրդների կողմից ժողովրդագրական ոտնձգությունից, և, այսպես կոչված, «Փակ» թեմայի մասին պետք էր ավելի բաց խոսել՝ ասելով, որ եթե աշխարհն այսօր ազատ է բռնություններից, պետք է ազատ լինի նաև ժողովրդագրական բռնությունից[219]:

Հասկանալի է, որ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը, նման տեսական հարցադրումներից զատ, պետք է վերլուծեր և գնահատական տար Արցախյան խնդրին: Ղարաբաղի հիմնախնդիրը իրավացիորեն դիտվում էր որպես իմաստության, արիության, պատասխանատվության առաջին լուրջ քննությունը: Հասկանալի է, որ նման կոլեկտիվը, քննարկվող խնդրի վերաբերյալ պատմական էքսկուրսից զատ, պետք է ավելի մանրամասնորեն վերլուծեր այն իրադարձությունները, այն պատճառները, որոնք հայտնի էին որպես Լեռնային Ղարաբաղի հարց: Կրկին հիշեցնելով ԼՂԻՄ-ի հայտնի որոշումը՝ կոլեկտիվի ժողովը նաև արձանագրում էր, որ Մարզային խորհրդի նստաշրջանը աշխատանքային, արարողակարգային տեսանկյունից անցել էր անթերի, ինչն էլ առաջացրել էր Ադրբեջանի ղեկավարության, այդ թվում՝ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Բագիրովի վրդովմունքը, որն էլ լքել էր նիստերի դահլիճը, իսկ հետո կապվել Մոսկվայի հետ և միանգամայն կեղծված ձևով ներկայացրել տեղի ունեցածը՝ ղարաբաղյան իրադարձությունները: Եվ բագիրովյան կեղծիքը ղարաբաղցիների, հայ ժողովրդի մասին՝ որպես էքստրեմիստների և ազգայնականների, դարձավ ԽՄԿԿ-ի համար պաշտոնական գնահատական: Իսկ այդ գնահատականը, լինելով անչափ վիրավորական, ոտքի հանեց ողջ երևանցիներին, արցախցիներին, ողջ ժողովրդին, որոնք պաշտպանեցին արցախցիների արդարացի որոշումը[220]: Ներկայացնելով այդ ամենը՝ կոլեկտիվի ժո-

[219] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 87, գ. 12, թ. 138:
[220] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 87, ց. 1, գ. 12, թ. 139-141:

ղովը նաև արձանագրեց, որ և՛ Լեռնային Ղարաբաղում, և՛ Երևանում հանրահավաքներն անցնում են օրենքի և իրավապահպանության շրջանակներում: Ներկայացնելով Ադրբեջանում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները՝ կոլեկտիվի ժողովն արեց ճիշտ հետևություն. Սումգայիթը ցույց տվեց, թե ինչպիսի պայմաններում էին ապրում հայերն Ադրբեջանում, թե ինչու տասնամյակներ շարունակ հարյուր հազարավոր մարդիկ լքում էին իրենց հայրենի օջախները՝ վախենալով վերադառնալ իրենց տուն: Մյուս կարևոր հետևությունն այն էր, որ Սումգայիթը ցույց տվեց, թե ինչպիսի ճակատագրական անարդարություն էր թույլ տրվել 1920-ական թվականներին: Եվ Սումգայիթը ցույց տվեց, որ ոչ մի հայկական գյուղ չի կարելի թողնել Ադրբեջանի ԽՍՀ-ի կազմում, ինչպես ժամանակին պնդում էին Ս. Կիրովը, Ս. Օրջոնիկիդզեն և մյուս լենինյանները: Գնահատելով Լեռնային Ղարաբաղում և հանրապետությունում ստեղծված վիճակը՝ կոլեկտիվի ժողովը նաև նշում էր, որ հանրապետության գիտական հանրությունը, մտավորականությունը և ողջ հայ ժողովուրդը հավատում են ԽՄԿԿ կենտկոմի իմաստությանը, հուսով են, որ ի վերջո կվերականգնվի պատմական ճշմարտությունը՝ հանուն լենինյան ազգային քաղաքականության հետևողական իրականացման[221]: Հասկանալի է, որ նման լավատեսությունը բավականին հեռու էր այն իրականությունից, որն արդեն տասնամյակներ շարունակ իշխում էր Խորհրդային Միությունում՝ դառնալով երկրի ղեկավար ուժի՝ ԽՄԿԿ-ի համար գործողության ուղեցույց:

Ներկայացնելով վերոնշյալը՝ մեր նպատակն է ընթերցողին փոխանցել նաև այն մթնոլորտը, հասարակական-քաղաքական կյանքի ակտիվացման այն քայլերը, որոնք կատարվում էին ինչպես Խորհրդային Միությունում, այնպես էլ նաև Խորհրդային Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում, երբ մարդիկ վճռական էին իրենց համոզմունքներում և աստիճանաբար ազատվում էին այն կապանքներից, որոնք երկար տասնամյակներ ուղեկցում էին նրանց: Չէ՞ որ

[221] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 17, թ. 141-142:

երկրում, անկախ բազմաթիվ խոչընդոտներից, նոր ժամանակներ էին, որն էլ փորձել ենք ներկայացնել հատկապես շարքային մարդկանց, հասարակության մեծ մասի ամենօրյա գործողությունների օրինակով, որոնք վճռական էին իրենց համոզմունքներում և պայքարում էին դրանք իրականացնելու համար:

Ոչ պակաս չափով հետաքրքիր էին անցնում Երևանի մաթեմատիկական հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի կոլեկտիվի այդ օրերին գրեթե ամեն օր անցկացվող ժողովները: 1989 թ. նոյեմբերի 23-ին տեղի է ունեցել ինստիտուտի կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովը: Ժողովը արձանագրել է, որ ինստիտուտի կուսակցական կազմակերպության դիրքորոշումը հանրապետությունում տեղի ունեցող տնտեսական, սոցիալական և քաղաքական վերակառուցման, հրապարակայնության և ժողովրդավարության իրականացման և անցյալի սխալներից սահմանազատման ուղղությամբ նպաստեց ժողովրդի ակտիվացմանը, բարոյաքաղաքական վերելքին և հասարակության բոլոր խավերի շրջանում որոշակի հույսեր ներշնչեց: Իսկ այդ հույսերը կապված էին նաև ոչ միայն ազգային խնդիրների լուծման, այլև հանրապետությունում տեղ գտած լճացման և կաշառակերության վերացման, կուսակցական և վարչական մարմինների նորոգման և վերակառուցման, հին մտածողությունից հրաժարվելու ակնկալիքների հետ: Սակայն կոլեկտիվի սպասելիքները, ինչպես նշել է կոլեկտիվի ժողովը, չարդարացան, քանի որ դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ վարչակուսակցական համակարգը փորձում էր վերակառուցման դրոշի տակ պահպանել իր արտոնությունները՝ իր իշխանությունը և անցյալի դատապարտված մտայնությունը: Ժողովը ճիշտ է նկատում, որ առանձնապես վրդովեցուցիչ էր երկրի կենտրոնական մարմինների սխալ դիրքորոշումը ԼՂԻՄ-ում կատարվող իրադարձությունների, Սումգայիթի ցեղասպանության, հանրապետության շրջափակման քաղաքական գնահատականի բացակայության և լրատվական միջոցների կողմից տարվող հակահայ քաղաքականության հանդեպ:

Ժողովը նաև նշում էր, որ վարչահրամայական համակարգի կամայականության, հայկական հանրապետության սուվերեն իրավունքի կոպիտ ոտնահարման մի նոր արտահայտություն էր նոյեմբերի 19-ի (1989 թ. – Հ. Ա.) ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության բողոքը ԱՄՆ Սենատի կողմից ԼՂԻՄ-ի հարցի շուրջ ընդունած բանաձևի առթիվ: Ինստիտուտի կոմունիստները գտնում էին, որ նման իրադրությունն այլևս չէր կարելի հանդուրժել: Պետք է վերանայվեին մի շարք դիրքորոշումներ, որոնք կոլեկտիվի կարծիքով հանգեցրել էին տվյալ իրավիճակի ստեղծմանը: Դրանք էին սահմանադրության 6-րդ կետի առկայությունը և բազմակուսակցականության մերժումը, դեմոկրատական ցենտրալիզմի գաղափարը, ինչպես նաև ներկուսակցական կյանքի և նրա ղեկավար մարմինների ձևավորման մի շարք հնացած դրույթներ: Ժողովականները նաև համոզված էին, որ առանց կուսակցության վերանորոգման չէր կարող լինել տնտեսական և քաղաքաիրավական վերակառուցում: Պետք է ստեղծվեին երաշխիքներ, որպեսզի լրատվական միջոցներն արտահայտեին տարբեր կարծիքներ, որ սահմանադրության շրջանակներում գործող ամեն մի հասարակական հոսանք իրավունք ունենար առանց խոչընդոտների արտահայտելու իր տեսակետը, որպեսզի անվերապահորեն կատարվեին այն միջազգային պայմանագրերը, որոնք կազմում են քաղաքակիրթ աշխարհի հիմքը[222]:

Ժողովը ցավով էր արձանագրում, որ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը չգտնվեց իր բարձրության վրա: Եվ քանի որ ժամանակի շունչը իր դերն էր կատարում, և պետք էր ենթադրել, որ ժողովում իշխում էր նաև հուզական, ոգևորիչ մթնոլորտ, ուստի ժողովը նաև արձանագրում էր, որ եկել է պահը, և գործով պետք է ցույց տալ, որ կոմունիստներն ի վիճակի են ընդունել անցյալի սխալները, նաև հրաժարվել այդ սկզբունքներից, որոնք ունեցան նման հետևանքներ: Միայն այդպես կարելի էր վերականգնել վստահությունը և այլն: Ընդհանրացնելով այդ ամենը՝ ժողովն առաջարկում էր

[222] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 16, թ. 10-11:

1989 թ. դեկտեմբերին հրավիրել Հայաստանի կոմկուսի արտահերթ համագումար՝ քննարկելու այդ հարցերը, հակառակ դեպքում ԵրՄՄ ԳՀ ինստիտուտի կուսակցական կազմակերպությունը կարող էր հրավիրել ընդհանուր ժողով և ընդունել նույնիսկ ծայրահեղ բնույթի որոշումներ, ընդհուպ մինչև կուսակցությունից դուրս գալը[223]: Նման պահանջներ դնելը դարձել էր շատ ու շատ կուսակցական կազմակերպությունների համար սովորական վարքագիծ, քանի որ Հայաստանի կոմկուսն արդեն ի վիճակի չէր վերահսկելու հանրապետությունում տեղի ունեցող իրադարձությունները, այն օր օրի թուլանում էր, հաճախ դառնում ձևական: Ուստի նմանատիպ որոշումների ընդունումը տարբեր կազմակերպությունների կողմից սովորական էր:

1989 թ. նոյեմբերի 10-ին տեղի է ունեցել «Երևաննախագիծ» ինստիտուտի արհմիութենական կոնֆերանսը, որը, նույնպես քննարկելով հանրապետությունում կատարվող փոփոխությունների մասին հայտնի հռչակագիրը, որոշել է դիմել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի օրենսդրական հանձնաժողովին՝ առաջարկելով, որ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը լինի մշտական գործող խորհուրդ, որ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահը (պրեզիդենտը) ընտրվի ժողովրդի կողմից, ուղիղ ընտրությունների միջոցով, որ ընտրությունները պետք է կազմակերպել այնպես, որ Գերագույն խորհրդի և տեղական խորհուրդների ընտրությունները չլինեն միաժամանակ և այլն:

Ոչ պակաս չափով հետաքրքիր են Երևանի ժամացույցի գործարանի կոլեկտիվի 1989 թ. նոյեմբերի 30-ի հանրահավաքում բարձրացված հարցերը, ընդունած կոչը՝ ուղղված ԽՍՀՄ և ՀԽՍՀ Գերագույն խորհրդների պատգամավորներին, որպեսզի նրանք չմասնակցեն ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 2-րդ համագումարին, քանի որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընդունած որոշումը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ արհամարհանք էր մեր ընտրած պատգամավորների նկատմամբ և այլն[224]:

---

[223] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 16, թ. 12-13:
[224] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 16, թ. 9:

Ի դեպ բազմաթիվ էին նման կարգի որոշումները: 1989 թ. նոյեմբերին Երևանի թիվ 126 միջնակարգ դպրոցի կոլեկտիվի ժողովը, նույնպես քննարկելով ՀԽՍՀ սահմանադրության փոփոխություններին և լրացումների մասին հարցը, գտնում էր, որ այն պարունակում է էական թերություններ, չի ապահովում իշխանության բարձրագույն ներկայացուցչական մարմնի լիիշխանությունը, գործունեության արդյունավետությունը, ընտրությունների անցկացման ժողովրդավարական սկզբունքները, Գերագույն խորհրդի պատգամավորների ազատ և արդյունավետ գործունեության երաշխիքները, հանրապետության ինքնուրույնությունը և այլն: Ժողովը ևս շատ այլ կոլեկտիվների նման որոշման մեջ այն կարծիքն էր հայտնում, որ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը պետք է լինի մշտապես գործող, իսկ Գերագույն խորհրդի պատգամավորները պետք է ազատվեն իրենց արտադրական կամ ծառայողական պարտականություններից: Որոշման մյուս կետերը վերաբերում էին հանրահայտ պահանջներին. Պետք է ընդլայնվեր ինքնուրույնությունը, հանրապետության պաշտոնատար բարձրագույն անձը և տեղական խորհուրդների նախագահները պետք է ընտրվեին ժողովրդի կողմից, ընդ որում՝ այդ ընտրությունները չպետք է անցկացվեին միաժամանակ[225]: Գրեթե նույն պահանջներն ու բովանդակությունն ունեին Երևանի «Շինանյութ» կոոպերատիվի դեկտեմբերի 23-ի 380 հոգանոց կոլեկտիվի ՀՀՇ-ի ժողովը, Երևանի թիվ 21 երաժշտական դպրոցի կոլեկտիվի նույնպես 1989 թ. նոյեմբերի 21-ի ժողովը, «Հայէներգացանց նախագիծ» կոլեկտիվի 1989 թ. նոյեմբերի 20-ի ժողովը, Երևանի «Էլեկտրոն» արտադրական միավորման հատուկ նախագծային բյուրոյի նոյեմբերի 13-ի ժողովը, որի որոշումն ուղղված էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Նրանում ասվում էր, որ խորհրդային կարգերի 70-ամյա փորձը ցույց է տալիս, որ պետության ղեկավարի ընտրման բազմաստիճան ձևը հնարավորություն է տվել բյուրոկրատական այդ պաշտոնը դարձնելու զուտ ձևական, ընդ որում՝ այդ պաշտոնում ոչ թե ընտրվել են, այլ նշանակվել,

[225] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 16, թ. 20-21:

իսկ ընտրությունները կատարվել են ձևականորեն: Ելնելով դրանից՝ կոլեկտիվի ժողովն առաջարկում էր ընտրությունների բազմաստիճան ձևը վերացնել: Նաև առաջարկվում էր փոխել գերագույն և տեղական խորհուրդների ընտրության ձևը, քանի որ ընտրությունները նույն օրը նշանակելը հնարավորություն չէր տալիս ընտրողներին կողմնորոշվելու թեկնածուներին գնահատելու հարցում, ինչն էլ ստեղծում էր սողանցքներ՝ իշխանությունների մեջ թափանցելու ոչ ազնիվ և ոչ սկզբունքային մարդկանց, ինչպես եղել էր մինչ այդ և այլն[226]: Նույն խնդիրներն էին արծարծվում Երևանի փորձնական լուսատեխնիկական գործարանի (1989 թ. նոյեմբերի 21), Երևանի կաշվի արտադրական միավորման կոլեկտիվի նոյեմբերին կայացած ժողովներում և այլն:

Շատ ավելի բազմամարդ էր 1989 թ. նոյեմբերի 20-ին հրավիրված Երևանի «Երարդշին» տրեստի շինարարական իրերի կոմբինատի ՀՀՇ կազմակերպության 179 անդամներից 150-ի մասնակցությամբ կայացած ժողովը, որը, քննարկելով նույն հարցը, պայմանավորված հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձություններով, նշում էր, որ հանրապետության ներկա Գերագույն խորհուրդը չէր արտահայտում իշխանության բարձրագույն ներկայացուցչական մարմնի լիարժեք իշխանությունը և այլն: Նույն ձևով էլ նոյեմբերի 24-ին նման մի որոշում էր ընդունել Մասիսի շրջկենտրոնի հիվանդանոցի կոլեկտիվը, որը ևս նշում էր, որ այդ որոշումը պարունակում է էական թերություններ, չի ապահովում իշխանության բարձրագույն ներկայացուցչության մարմնի լիիշխանության և գործունեության արդյունավետությունը, ընտրությունների անցկացման ժողովրդավարական սկզբունքները, Գերագույն խորհրդի պատգամավորների ազատ և արդյունավետ գործունեության ինքնուրույնությունը և այլն: Նույն կարգի որոշումներ են ընդունել նոյեմբերի 21-ին Երևանի փորձնական Լուսատեխնիկական գործարանի, Երևանի կարի արտադրական միավորման, նոյեմբերի 24-

[226] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 16, թ. 22-25, 27-31, 41-42:

ին՝ Մասիսի շրջկենտրոնական հիվանդանոցի կոլեկտիվները, որոնք նույնպես նշում էին, որ այն պարունակում էր էական թերություններ, չէր ապահովում իշխանության բարձրագույն ներկայացուցչության մարմնի լիիշխանությունը: Նույն ձևով նոյեմբերի 28-ին Երևանի կերամիկական իրերի, Երևանի նուրբ բրդյա գործվածքների կոմբինատների աշխատանքային կոլեկտիվները, «Հայգունմետ» գիտարտադրական միավորումը, Երևանի Մաշտոցի շրջանի թիվ 189 միջնակարգ դպրոցը, դեկտեմբերի 13-ին Գորիսի շրջանի «Միկրոշարժիչ» գործարանի կոլեկտիվը հավանություն էին տվել ՀՀԾ վարչության կողմից ՀԽՍՀ գերագույն խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 4-ին նստաշրջանին ներկայացված «Հռչակագրին»: Նույնը նաև վերաբերում էր «ԱՍՏՐՈ» գիտաարտադրական միավորմանը[227]:

Աշխատավորական կոլեկտիվների մի մասի արձագանքներն առնչվում էին Միության հեռուստատեսության, հատկապես «Ժամանակ» և այլ ծրագրերի, մասնավորապես՝ Արցախի, ԼՂՀ-ի մասին հրապարակած խեղաթյուրված հաղորդումներին: Կոլեկտիվներն այդ մասին ահազանգում էին և կրկին ընդունում որոշումներ՝ ուղարկելով հանրապետության Ռադիոհեռուստատեսային պետական կոմիտեին և պահանջելով արձագանքել այդ ամենին, ցույց տալ համապատասխան մոտեցում և այլն:

1989 թ. դեկտեմբերի 12-ին «Հայջրպետնախագիծ» ինստիտուտի կոլեկտիվը, հաշվի առնելով, որ Միության կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» տեղեկատվական ծրագիրը վարում էր հայատյաց քաղաքականություն, և Հայաստանին, Արցախին վերաբերող հաղորդումներում մեծ մասամբ նպատակասլաց ձևով խեղաթյուրվում էին իրողություններն ու փաստերը, դատապարտեց նման դիրքորոշումը և այլն:

1989 թ. դեկտեմբերի 15-ի ՀԽՍՀ ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեին նմանօրինակ որոշում էր ուղարկել նաև Երևանի տեխնիկական գեղագիտության համամիութենական ինս-

[227] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 16, թ. 40-46:

տիտուտի հայկական մասնաճյուղի կոլեկտիվը, որում ասվում էր. «Հաշվի առնելով «Ժամանակ» տեղեկատվական ծրագրի հակադեմոկրատական և ակնառու հակահայկական ուղղվածությունը, հետևողական և միտումնավոր խեղաթյուրումը, որը ստեղծում է լարված իրավիճակ և բացասաբար է անդրադառնում ազգի հոգեվիճակի վրա, կոլեկտիվի ժողովը պահանջում է հայկական հեռուստատեսությամբ չցուցադրել «Ժամանակ» տեղեկատվական ծրագիրը և դրա փոխարեն ընդլայնել «Լրաբեր» տեղեկատվական ծրագիրը և նրանում ավելի շատ ընդգրկել հաղորդումներ աղետի գոտու, Արցախի, ներքին և արտաքին սփյուռքի մասին, կազմակերպել Արցախի հեռուստատեսային ծրագրի հաղորդում, հնարավորություն տալ ՀՀՇ կազմակերպությանը և ոչ ֆորմալ կազմակերպությունների կողմից կազմակերպել նոր հաղորդաշար»: Խնդիր էր դրվում լուսաբանելու Նժդեհի, Արամ Մանուկյանի և նման առաջնորդ-անհատների կյանքն ու գործունեությունը, որը կնպաստեր ազգային ոգու բարձրացմանը, ինչպես նաև ստեղծել ուսանողական հաղորդաշար՝ կրոնաբարոյախոսական թեմաների վերաբերյալ: Ինստիտուտի կոլեկտիվը նաև դատապարտում էր Բակուր Կարապետյանի նման անձնազոհ մարդկանց՝ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ նկարահանած տեսաժապավենների հեռուստացուցադրման խոչընդոտումը և այլն[228]:

Բավականին հետաքրքիր է նաև Երևանի ֆիզիկայի ինստիտուտի կոլեկտիվի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի և ՀՀՇ-ի ներկայացրած «Հռչակագրի» նախագծի քննարկման նկատմամբ: Ինստիտուտի աշխատավորական կոլեկտիվը 1989 թ. դեկտեմբերի 18-ին հրավիրված կոնֆերանսում ընդունել էր որոշում՝ դիմելու ՀԽՍՀ Գերագույն խորհրդին, ՀՀՇ վարչությանը, ՀԽՍՀ պատգամավորներին, «Երեկոյան Երևան» թերթի խմբագրությանը՝ քննարկելու համար հանրապետությունում արմատական դեմոկրատական վերափոխումների մասին ՀՀՇ վարչության կողմից առաջարկված հռչակա-

[228] Տե՛ս ՀԱԱ , ֆ. 1678, ց. 1, գ. 18, թ. 37:

գիրը համաժողովրդական քննարկման դնելու մասին: Կոլեկտիվը, ելնելով դրանից, որոշել է.

1. Դատապարտել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի մերժողական որոշումը ՀՀՇ վարչության կողմից առաջարկած հռչակագիրը՝ համաժողովրդական քննարկման դնելու վերաբերյալ հարցը: Ինստիտուտի կոնֆերանսը նաև գտնում էր, որ նման բացասական որոշումը ընդունվել է ՀԿԿ կենտկոմի բյուրոյի կողմից ՀԽՍՀ Գերագույն խորհրդի վրա կատարվող բացահայտ ճնշման պայմաններում: Կոնֆերանսը նշում էր, որ ՀԿԿ կենտկոմի բյուրոն իր հակաժողովրդական վարքագիծը քողարկում էր ուլտրադեմոկրատական արտահայտություններով, իբր թե առաջարկվող հռչակագիրը բավարար չէր դեմոկրատական արմատական վերափոխումներ անցկացնելու համար: ՀԿԿ կենտկոմը վերջին հինգ տարում դեմոկրատական վերափոխումների ոչ մի ծրագիր չէր առաջարկել, իսկ նրա կադրային քաղաքականությունը ուղղակիորեն հակասում էր ժողովրդավարության տարրական նորմերին:

2. Կոնֆերանսը հռչակագիրը գնահատում է որպես արմատական դեմոկրատական վերափոխումների անհրաժեշտ նախապայման:

3. Հավանություն տալ ՀԽՍՀ և Արցախի միավորմանը, որն արդեն տեղի է ունեցել 1989 թ. դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի համատեղ որոշմամբ:

4. Համաժողովը հանրապետության սուվերենությունը իրական դարձնելու համար ՀԽՍՀ Սահմանադրության 75-րդ հոդվածում փոփոխություն մտցնելուց բացի՝ անհրաժեշտ էր համարում հնարավորություն տալ բոլոր այլընտրական առաջարկ անողներին, մասնավորապես ՀՀՇ սահմանադրական խմբի ներկայացուցիչներին ունենալ ելույթներ:

5. Ստեղծել Գերագույն խորհրդի հանձնաժողով, որը կիրականացնի հռչակագրերի բաժանումը անհատ մարդկանց:

6. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջիկա նիստում հանձնարարել ՀԽՍՀ կառավարությանը 1-2 ամսվա ընթացքում բանակցել Վրաստանի և Իրանի կառավարությունների հետ՝ ճանապարհների և երկաթուղու ստեղծման շուրջ պայմանավորվածության հասնելու համար:

7. Ազգային բանակի ստեղծման համար ընդունել համապատասխան որոշում:

Կոնֆերանսը նույն նիստում անդրադարձել է նաև Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղը շրջափակելու հարցին՝ նշելով, որ նման իրողություն կարող էր տեղի ունենալ միայն Մոսկվայի թողտվության պայմաններում: Կոնֆերանսը նաև դիմել է Երևանի քաղխորհրդին, քաղաքապետ Ա. Գեղամյանին՝ Ազիզբեկովի հրապարակը վերանվանելու մեծ մարդասեր, հայ ժողովրդի բարեկամ Անդրեյ Դմիտրիի Սախարովի անունով[229]:

Կոնֆերանսը նաև դիմել է ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ Վ. Ս. Մարգարյանին՝ կապված Ֆիզիկայի ինստիտուտի կոնֆերանսին չմասնակցելու հարցի հետ՝ նշելով, որ ինստիտուտի կոնֆերանսը կրկին հրավիրում է վերջինիս՝ մասնակցելու կոնֆերանսին և հանդիպելու աշխատավորների ներկայացուցիչների հետ, որը յուրաքանչյուր պատգամավորի պատգամավորական պարտավորություններից մեկն է: Նաև նշվում էր, որ երկրորդ անգամ հրավիրելուց հետո չմասնակցելու դեպքում ինստիտուտի կոլեկտիվը ստիպված կլիներ սկսել նրա պատգամավորական պարտականություններից ետ կանչելու գործընթացը: Կոնֆերանսը նաև հանդես է եկել հետաքրքիր առաջարկներով, այն է՝ Գերագույն խորհրդի ապագա բոլոր նիստերը անցկացնել Արցախի ազգային խորհրդի հետ համատեղ և քննարկել միացյալ հայկական հանրապետություններին վերաբերող օրենքներ, ինչպես նաև կատարել ՀԽՍՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ: Առաջարկվում էր նաև հասնել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախա-

[229] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 18, թ. 38-47:

գահության վերընտրությանը, նորից քննարկել ՀՀԾ վարչության կողմից առաջարկված արմատական դեմոկրատական վերափոխումների մասին նոր առաջարկներով համալրված հռչակագիրը և ընդունել այն որպես փաստացի տեղի ունեցած համաժողովրդական քննարկման արդյունք: Կոնֆերանսի նախագահն էր Է. Եգորյանը, քարտուղարը՝ Ս. Հարությունյանը[230]:

Ինստիտուտի կոլեկտիվը նաև դիմել էր հայկական հեռուստատեսության «15 օր» հաղորդաշարին, որի շրջանակներում հայկական հեռուստատեսության առաջին ծրագրով հեռարձակված հաղորդման ժամանակ, որին մասնակցում էր Գերագույն խորհրդի երկու պատգամավոր, համաժողովրդական քննարկման չդրված «Հռչակագրի» քննարկումն ավելի շատ կրել էր միակողմանի և ձևական բնույթ՝ նպատակ ունենալով ապակողմնորոշել միլիոնավոր հեռուստադիտողների: Իսկ այն փաստը, որ անգամ այդ ձևական հաղորդման ժամանակ չէր հրավիրվել «Հռչակագրի» հեղինակներից որևէ մեկը, այլ հրավիրվել էին Գերագույն խորհրդի այն պատգամավորները, որոնք խորհրդարանում դեմ էին քվեարկել «Հռչակագիրը» համաժողովրդական քննարկման դնելու ՀՀԾ-ի առաջարկին, խոսում էր այն մասին, որ իշխանությունները ամեն ինչ անում էին խոչընդոտելու նշված քննարկումը: Ինստիտուտի կոնֆերանսը, հաշվի առնելով այդ ամենը, առաջարկում էր «15 օր» հեռուստահաղորդաշարի հեղինակներին առաջիկա քննարկումների ժամանակ հրավիրել նաև «Հռչակագրի» հեղինակներին, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ Լևոն Տեր-Պետրոսյանին և Աշոտ Մանուչարյանին[231]:

Դեկտեմբերի 19-ին նույն կարգի որոշում է ընդունել նաև «Երմետրոշին» N41 թունելային ջոկատի աշխատավորական կոլեկտիվը՝ ուղղված հանրապետության Գերագույն խորհրդին, որը, նույնպես քննարկելով ՀԽՍՀ Գերագույն խորհուրդ քննարկման ներկայացված «Հռչակագիրը», պահանջում էր առաջիկա նստաշրջանում այն ընդունել՝ քննադատելով Գերագույն խորհրդի նախագահության դիր-

[230] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 18, թ. 38-47:
[231] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 18, թ. 45:

քորոշումը, որն առավելապես ուղղված էր ամեն ինչ անելու, որ «Հռչակագիրը» չքննարկվեր: Այդ փաստը կոլեկտիվը գնահատում էր որպես անվստահության դրսևորում սեփական ժողովրդի նկատմամբ և պահանջում էր Գերագույն խորհրդի նախագահության հրաժարականը[232]:

Դեկտեմբերի 20-ին «Հռչակագրի» հարցը քննարկվել է «Երարդշին» տրեստի շինարարական իրերի կոմբինատի կոլեկտիվի և ՀՀՇ կազմակերպության համատեղ նիստում: Ժողովին մասնակցում էր կոլեկտիվի 180 անդամներից 140-ը: Ժողովն արձանագրել է, որ Հայաստանում արմատական ժողովրդավարական վերոփոխումներ անցկացնելու գործընթացն ընթանում էր հակասություններով, քանի որ վարչահրամայական մեթոդներին հավատարիմ ուժերի ձեռնարկած հետադիմական քայլերը ստեղծում էին բարդ իրավիճակ, որը հղի է լայնածավալ բռնությունների սանձազերծման վտանգով: Ելնելով այն հանգամանքից, որ վերջին երկու տարվա ընթացքում (1988-1989 թթ.) հայ ժողովուրդը կենտրոնական իշխանությունների թողտվությամբ բազմիցս ենթարկվել էր ադրբեջանական իշխանությունների և խորհրդային բանակի կողմից ձեռնարկած ահաբեկչական գործողությունների, որոնց նպատակն էր բռնի ուժով ոտնահարել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման իրավունքը, և համոզվելով, որ հայ ժողովրդի բնական զարգացումն ու նրա ազգային իղձերի իրականացումն ապահովելու համար պահանջվում էին կայուն երաշխիքներ, որոնց առկայության դեպքում նրա ճակատագիրն այլևս կախված չէր լինի քաղաքական անցողիկ հանգամանքներից և հակամարտ ուժերի տեղաբաշխումից, կոլեկտիվի ժողովը գտնում էր, որ «Հռչակագրում» առաջ քաշված հանրապետության ժողովրդավարացման գործընթացները իրականացնելու համար անհրաժեշտ է.

---

[232] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 18, թ. 53:

1. Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը պետք է սահմանադրության փոփոխության հիման վրա վերանվանել Հայաստանի Հանրապետություն:

2. Սահմանադրությունից հանել կոմունիստական կուսակցության ղեկավար դերի վերաբերյալ 6-րդ հոդվածը: Հայաստանում թույլատրվում է տարբեր հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ նաև քաղաքական կուսակցությունների ազատ գործունեությունը:

3. Հանրապետությունում հաստատվում է խոսքի, մամուլի, խղճի լիակատար ազատություն, արվեստի, գրականության և հասարակական գիտությունների բնագավառում վերացվում է գրաքննությունը:

4. Բոլոր նախկին քաղբանտարկյալներին և քաղաքական նկատառումներով հալածված անձանց շնորհվում է լիակատար արդարացում՝ հատուցելով նրանց կրած վնասները:

5. Հանրապետության ընտրական օրենքում նախատեսվում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի և շրջանային ու քաղաքային խորհուրդների նախագահների ուղղակի համաժողովրդական ընտրությունը: Բացառվում է այդ և պետական կուսակցական այլ պաշտոնների համատեղումը:

6. ՀԽՍՀ տարածքում գործում են ԽՍՀՄ այն օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, որոնք վավերացվում են ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից:

7. Անվստահություն ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը և նրա հրաժարականը[233]:

Դժվար չէ տեսնել, որ վերոնշյալ որոշումը ևս գրեթե առանց փոփոխության կրկնում էր ՀՀՇ-ի կողմից կազմած և հանրապետության բոլոր աշխատավորական կոլեկտիվներին ուղարկված տարբերակը, որոնք, իրար կրկնելով, նույնանման որոշումներ էին ընդունում, և ուղարկում ինչպես հանրապետության Գերագույն խորհուրդ, այնպես

[233] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 18, թ. 1-3:

էլ ՀՀԾ նախագահություն՝ ցույց տալու համար, որ իրենք ևս միացել են ՀՀԾ-ի մղած պայքարին՝ հասնելու հանրապետության ղեկավարության հրաժարականին: Իսկ դա նշանակում էր, որ ՀՀԾ-ն ևս սկսում էր որդեգրել այն աշխատաոճը, որը բնորոշ էր Հայաստանի կոմկուսին, նրա ղեկավարությանը: Ինչպես ասում են, պատմությունը կրկնվում էր: Բայց բոլոր դեպքերում, անկախ նրանից, որ գրեթե բոլոր կոլեկտիվների, մանավանդ աշխատավորական, բանվորական, արդյունաբերական, գյուղական կոլեկտիվների որոշումները հաճախ իրար կրկնում էին, իրար նման էին և այլն, այնուամենայնիվ դրանք վկայում են, որ հանրապետությունում իշխող հասարակական կարծիքը ընթանում էր ՀՀԾ-ի նախանշած ուղիով, մանավանդ, որ գրեթե ամենուրեք ստեղծվել և գործում էին ՀՀԾ կազմակերպություններ, այսպես կոչված, «Ղարաբաղ» ենթակոմիտեները: Ապացույցը հանրապետության մի շարք գյուղերի կոլտնտեսությունների նման կարգի որոշումների ընդունումն էր: Օրինակ՝ 1989 թ. դեկտեմբերի 20-ին տեղի է ունեցել Աբովյանի շրջանի Գեղաշեն գյուղի ՀՀԾ մասնաճյուղի հիմնադիր ժողովը, որին ներկա էր 400 մարդ: Ժողովի օրակարգի առաջին հարցը ՀՀԾ Աբովյանի շրջանի Գեղաշենի մասնաճյուղի ստեղծումն էր, իսկ երկրորդը՝ ՀՀԾ ծրագրի և կանոնադրության ընդունումը: Զեկուցողը (Ս. Ս. Հովհաննիսյան), ներկայացնելով հանրապետությունում ստեղծված իրավիճակը, այն գնահատեց որպես տագնապալից, քանի որ հայ ժողովրդի պայքարը Արցախի վերամիավորման համար բխում էր նաև ողջ հայության պայքարի ոգուց և դեմ էր առել թուրք խաժամուժի ոտնձգություններին՝ խեղաթյուրված ձևով ներկայացնելով հայ ժողովրդի արդար պահանջը, որն էլ, ինչպես ժողովականներն էին նշում, ստիպեց հայ ժողովրդին դուրս գալ արդար պայքարի:

Ժողովը նաև արձանագրում էր, որ հանրապետությունում կային բազմաթիվ կազմակերպություններ, որոնք որքան էլ որ հարցի լուծման յուրովի ծրագրեր ունեին, բայց նպատակը նույնն էր՝ Արցախը տեսնել Հայաստանի հետ միավորված: Ժողովականները նաև գտում էին, որ պայքարի ավելի ճիշտ ծրագիր ուներ «Հայոց համազգային

շարժումը», որն էլ իրենք պատրաստ էին ընդունել որպես ուղեցույց: Այնուհետև ժողովը ստեղծեց նաև Գեղաշենի «Հայոց համազգային շարժման» կոմիտեն, որին էլ հանձնարարվեց կազմել կազմակերպության գործունեության ծրագիրը: Ժողովի մասնակիցները ևս կարևոր էին համարում հարց բարձրացնել հայկական հեռուստատեսության առաջ՝ փակելու «Ժամանակ» ծրագիրը, քանի որ այն հարցերը ներկայացնում էր խեղաթյուրված ձևով: Ժողովը նաև որոշեց հավանություն տալ համաժողովրդական քննարկման դրված, ՀՀԾ-ի առաջարկած «Հռչակագրի» նախագիծը, որի բոլոր կետերին կոլեկտիվը տվեց իր համաձայնությունը և դատապարտեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից դեկտեմբերի 4-ին մերժման մասին ընդունած որոշումը: Ժողովը պահանջեց, որ հանրապետության Գերագույն խորհուրդն իր առաջիկա նիստում կրկին այն քննարկի և ընդունի: Ելնելով այդ ամենից՝ կոլեկտիվի ժողովը նաև ընդունեց որոշում՝ պահանջելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրաժարականը, արգելելով նրա աշխատանքներին նոմենկլատուրային ոչ պատգամավոր ներկայացուցիչների մասնակցությունը և այլն[234]: Գեղաշեն գյուղի կոլեկտիվի որոշումը ևս կրկնում էր այն պահանջները, որոնք հրապարակվել էին մամուլում և դրվել քննարկման ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների կողմից:

Դեկտեմբերի 20-ին նույնանման որոշում է ընդունել նաև Գորիսի շրջանի Կոռնիձոր գյուղի կոլեկտիվը, որը կրկին դատապարտել է հանրապետության Գերագույն խորհրդի կողմից քննարկման դրված և մերժված ՀՀԾ «Հռչակագրի» նախագիծը՝ այն դիտելով որպես հայ ժողովրդի ազգային շահերն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսում էր իրականացնել հայ ժողովրդի ազգային շահերը և Արցախը վերամիավորել մայր հայրենիքի հետ: Որոշման մյուս կետերը ևս կրկնում էին ներկայացված փաստաթղթի մյուս պահանջները՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հրաժարական, արգելել Գերագույն խորհրդի աշխատանքներին նոմենկլատուրային ոչ պատգամավոր

[234] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 19, թ. 4-6:

աշխատողների մասնակցությունը և այլն: Նույնը նաև վերաբերում էր Գորիսի շրջանի Տաթև գյուղի կոլեկտիվին, Ապարանի շրջանի Չինար գյուղի 8-ամյա դպրոցին և այլն[235]:

Ինչպես տեսնում ենք բավական շատ են նման կարգի որոշումները, քանի որ «Ղարաբաղ» կոմիտեի կողմից համաժողովրդական քննարկման դրված նախաձեռնությունը հազարավոր մարդկանց համար ընդունելի էր, որն էլ, չնայած իշխանությունների կողմից ձեռնարկվող խոչընդոտներին, միևնույն է, կոնկրետ դեպքում վեր էր ածվում գործողությունների, տարբեր կարգի նախաձեռնությունների՝ դրանով Արցախյան շարժումը դարձնելով էլ ավելի համաժողովրդական: Կանգնեցնել այն հնարավոր չէր, ինչն էլ հաստատվեց հանրապետությունում ընթացող հետագա գործողությունների ընթացքում:

[235] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 19, թ. 8-10:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Արցախյան շարժումը, բնականաբար, չէր կարող անտարբեր թողնել նաև սփյուռքահայությանը, որն անմիջականորեն արձագանքեց և ամեն ինչ արեց՝ բոլոր միջոցներով, պայքարի բոլոր ձևերով պաշտպանելու Արցախյան շարժումը, սատար կանգնելու նրա բոլոր քայլերին, տարբեր երկրներում նույնպես կազմակերպելով հանրահավաքներ, ցույցեր, ինչպես նաև դիմելով աշխարհի բազմաթիվ երկրներին, միջազգային կազմակերպություններին, ՄԱԿ-ին, Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը՝ պահանջելով պաշտպանել արցախցիների արդարացի պահանջը, վերականգնել պատմական ճշմարտությունը և, ի վերջո, Լեռնային Ղարաբաղը վերամիավորել մայր հայրենիքի հետ: Ընդ որում՝ սփյուռքահայերի արձագանքները բավական լայն էին և ընդգրկում էին աշխարհի տարբեր երկրները՝ սկսած Մերձավոր Արևելքից՝ Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, ինչպես նաև Խորհրդային Հայաստանին հարևան Իրանից մինչև Եվրոպա, մինչև Լատինական Ամերիկայի երկրներն ու ԱՄՆ-ն, Կանադան և այլն: Հետաքրքիր է նաև ասել, որ այդ բոլոր նյութերը պահվում են Հայաստանի Հանրապետության ազգային արխիվում հատուկ գաղտնի թղթապանակներում, որոնք այսօր վաղուց արդեն բաց են յուրաքանչյուր ուսումնասիրողի, հետազոտողի համար, ինչն էլ հնարավորություն է տալիս դրանք ուսումնասիրելու, ծանոթանալու հայագիտական այդ նյութերին և կրկին համոզվելու, որ հայ ժողովրդի համար անչափ կարևոր, բախտորոշ պահին մեր ժողովուրդը դրսևորեց էլ ավելի մեծ միասնություն և պաշտպանեց արցախցիների արդարացի պահանջը:

Սփյուռքահայության արձագանքներին վերաբերող նյութեր կային նաև հանրապետության անվտանգության մարմինների և ներքին գործերի նախարարության կողմից ամեն օր ՀԿԿ կենտկոմ ուղարկվող զեկուցագրերում, որոնցում երկրի ղեկավարությանը

տեղյակ էր պահվում, թե հայ քաղաքական կուսակցությունները՝ հնչակյանները, ռամկավարները, Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչները ինչպես են արձագանքում այդ կարևոր իրադարձությանը, ինչպես են գնահատում ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի, հատկապես նրա գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի և մյուսների դիրքորոշումները Լեռնային Ղարաբաղի աշխատավորության, մարզխորհրդի և կուսակցության մարզային կոմիտեի ընդունած որոշումների նկատմամբ: Չէ՞ որ վերջին հաշվով դա բացառիկ երևույթ էր, որքան էլ տրամաբանորեն բխում էր աշխարհին հայտնի «Վերակառուցման» քաղաքականությունից:

Հետաքրքիր է ասել, որ արդեն 1988 թ. փետրվարի 26-ին ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար Անատոլի Մկրտչյանը բավական ընդարձակ զեկուցագիր է ներկայացրել հանրապետության Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանին Արցախյան շարժման նկատմամբ արտասահմանյան պետությունների և հայկական համայնքների հայ քաղաքական կուսակցությունների արձագանքների վերաբերյալ: Զեկուցագրում մասնավորապես ասվում էր, որ ինչպես միջազգային մամուլում, այնպես էլ արտասահմանյան հայկական թերթերում և բազմաթիվ հաղորդագրություններում, որոնք ուղարկվում էին հանրապետության արտաքին գործերի նախարարություն, լայնորեն քննարկվում էին Լեռնային Ղարաբաղին և Նախիջևանին վերաբերող խնդիրները՝ դրանք դիտելով որպես տարածքային ներքին խնդիրներ: Հարկ է նաև ասել, որ նշված հարցերը լայն արձագանքներ էին գտել խորհրդային դիվանագիտական հաստատություններում, դեսպանություններում, որոնք տարբեր միջոցներով ևս արձագանքում էին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձություններին: Դա հատկապես վերաբերում էր ԱՄՆ-ին և Ֆրանսիային:

ԱՄՆ-ում հատկապես լայն տարածում էին ստացել Խորհրդային Միության ղեկավարությանն ուղղված տարբեր կարգի կոչերը, գրությունները: Հատկապես ուշադրություն էր գրավում Կալիֆոռնիայում ձևավորված «Հայկական մտավորականության խոր-

հուրդը», որը նպատակ ուներ բարձրացնելու Խորհրդային Հայաստանի տարածքային ամբողջականության, հատկապես Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հարցը: Ի դեպ, այդ հարցի բարձրացումը զգալիորեն նպաստել էր սփյուռքում գործող հայ տարբեր հասարակական կազմակերպությունների, քաղաքական ուժերի, այն է՝ Հայ հեղափոխական դաշնակցության, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան և Ռամկավար կուսակցությունների ավելի համախմբմանը, միասնական կերպով հանդես գալուն: Այդ տեսանկյունից հետաքրքիր էր Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության ուղերձը ԽՍԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին, որը մյուս կուսակցությունների հետ միասին հարց էր բարձրացնում վերանայելու այդ տարածքների, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի վարչական-տարածքային պատկանելիության հարցերը: Միաժամանակ արտասահմանյան հայկական մամուլում պարբերաբար հրատարակվում էին տարբեր կարգի հոդվածներ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի պատմության, այդ տարածքները Ադրբեջանին միավորելու և այլնի մասին, որոնք նպաստում էին ձևավորելու հասարակական կարծիք: Հաճախ նաև հրատարակվում էին տարբեր կարգի փաստաթղթեր, լուսանկարների պատճեններ, պայմանագրերի տեքստեր, որոնք վերաբերում էին 1920-ական թվականներին, ինչպես նաև հրապարակում էին գիտնականների, հրապարակախոսների, գրողների, հասարակական գործիչների հոդվածները, որոնք վերաբերում էին այն ժամանակաշրջանին, երբ տարածքային այդ վիճելի հարցերը լուծվել էին Ադրբեջանի օգտին:

Սփյուռքում հրատարակվող թերթերում հաղորդվում էր նաև Երևանում անցկացվող հանրաքվեների մասին, որոնցում Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը Հայաստանին միավորելու հարց էին բարձրացնում: Միաժամանակ ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարությունը իր զեկուցագրերում նշում էր, որ սփյուռքահայ մամուլն այդ հարցերում պահպանում էր, այսպես կոչված, հավասարակշռված քաղաքականություն:

Արցախյան շարժման այդ օրերին հետաքրքիր է նաև սփյուռքահայերի նախաձեռնությունը՝ ստեղծելու սփյուռքահայ մտավորականների խորհուրդ: Այդ նպատակով 1987 թ. ստեղծվեց «Սփյուռքի հայ մտավորականների խորհուրդը», որը շահագրգիռ էր վերականգնելու հայկական տարածքների ամբողջականությունը, ինչպես նաև պաշտպանելու հայերին Խորհրդային Հայաստանում պանթյուրքական վտանգից: Հայ մտավորականության խորհուրդը միաժամանակ հայտարարում էր իր պատրաստակամությունը՝ միավորելու ողջ աշխարհի հայ մտավորականությանը, որի մտահոգություններից մեկը Խորհրդային Հայաստանի անվտանգության ապահովումն էր: Այդ նպատակով «Սփյուռքի հայ մտավորականների խորհուրդը» նախատեսում էր մի շարք խնդիրների լուծում՝ նախ աշխատանք տանել Նախիջևանը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու ուղղությամբ, այնուհետև պաշտպանել բնակչության պահանջը՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու համար: Խորհուրդն այդ նպատակները իրականացնելու համար ձևավորեց «գործադիր կոմիտե»՝ բաղկացած 15 հոգուց, նախագահ ընտրվեց Կարպիս Տեր-Եղիյանը, նախագահի տեղակալ՝ Էդուարդ Հակոբյանը:

Խորհրդի կազմում էին նաև դոկտոր Միհրան Սիմոնյանը, խորհրդի քարտուղար Ասատուր Դևլեթյանը, անդամներն էին Արա Ահարոնյանը, Ասպետ Ամալյանը, դոկտոր Հրայր Դոքմեջյանը, Լևոն Երկաթը և ուրիշներ: Փաստաթուղթը ստորագրվել է 1987 թ. նոյեմբերի 25-ին Կալիֆոռնիայի նահանգի Գլենդել քաղաքում:

Խորհուրդը հայտարարում էր, որ ամերիկյան «Հայկական հաղորդումներ», «Հայկական մեկնաբանություններ» թերթերում տպագրվում են հետաքրքիր նյութեր, Մ. Ս. Գորբաչովին ուղղված հեռագրեր և առաջարկում ընթերցողներին դրանք ստորագրել և ուղարկել Վաշինգտոն՝ խորհրդային դեսպանատուն և այլն[236]:

[236] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 8-9:

Ինչ վերաբերում է 1988 թ. փետրվարյան դեպքերին, ապա պետք է ասել, որ արևմտյան մամուլը բավական ակտիվորեն էր արձագանքում Խորհրդային Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում և դրանց շուրջ տեղի ունեցող իրադարձություններին: ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար Անատոլի Մկրտչյանի փետրվարի 26-ին ներկայացված զեկուցագրում ասվում էր, որ արևմտյան մամուլը, ռադիոհաղորդումները լուսաբանում էին Երևանում տեղի ունեցող շքերթները, որոնք կապված էին Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների հետ, նշվում էր նաև, որ շքերթի մասնակիցները Խորհրդային Միության ղեկավարության նկատմամբ դրսևորում էին լոյալ մոտեցում:

Զեկուցագրում նաև նշվում էր, որ «Ամերիկայի ձայն» ռադիոհաղորդման ժամանակ ասվել էր այն մասին, որ իբր Հայաստանում ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը գործնականում հեռացվել էր պաշտոնից և նրան փոխարինել էին Մոսկվայից եկած ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Դոլգիխը և Լուկյանովը: Նաև հաղորդվում էր անընդհատ ավելացող ցուցարարների մասին՝ ավելացնելով, որ Երևան են ժամանել բավական թվով հայեր Վրաստանից, Կրասնոդարի երկրամասից, Ռոստովի մարզից և այլ տեղերից: Փետրվարի 25-ին ցուցարարների թիվը հասնում էր 500-700 հազարի: Զեկուցագրում նաև նշվում էր, որ արևմտյան աղբյուրներից մեկում և ռադիոհաղորդումներում հայտնվում էր այն մասին, որ «Ազգային ինքնորոշում միության» նախագահ Պարույր Հայրիկյանը հանդես էր եկել հայտարարությամբ՝ ասելով, որ իրենց միությունը մասնակից չէ Երևանում կազմակերպված հանրահավաքներին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի իրադարձություններին: Միաժամանակ հիմք ընդունելով այդ նույն ռադիոհաղորդումները՝ նշվում էր, որ հանրահավաքի մասնակիցները դիմել էին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, Եվրոպառլամենտին, աշխարհի բոլոր պառլամենտներին՝ խնդրելով ձեռք առնել բոլոր միջոցները՝ պաշտպանելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի սահմանադրական պահանջները: Իսկ «Ազատություն» ռադիոկայանը հաղորդել էր Փարիզում տեղի ունեցած հարյուր հա-

զարանոց հանրահավաքի մասին, որը ևս պաշտպանում էր Լեռնային Ղարաբաղի աշխատավորության պահանջները:

Ընդհանուր առմամբ Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը տեղի ունեցող իրադարձությունները շարունակում էին մնալ արտասահմանյան ռադիոհաղորդումների ուշադրության կենտրոնում: 1988 թ. մարտի 2-ին տեղի ունեցած ռադիոհաղորդումների հիմնական թեման վերաբերում էր Սումգայիթում և Ադրբեջանի մյուս հայաշատ քաղաքներում ստեղծված լարված իրավիճակին և օտարերկրյա մամուլի ու սփյուռքի հայկական համայնքների արձագանքներին:

«Ամերիկայի ձայն», «Բի-Բի-Սի» ռադիոկայանները հաղորդում էին այն անկարգությունների մասին, որոնք տիրում էին Ադրբեջանում: Հաղորդվում էր այն մասին, որ Սումգայիթում մինչև փետրվարի 29-ը սպանվել էր 17 հոգի, վիրավորվել՝ 70-ը՝ նշելով, որ դրանք իրականացրել են խուլիգանական տարրերը, որոնք զինված էին եղել սուր զենքով, դանակներով և այլն:

Հարկ է նշել, որ հիմնական տեղեկությունները, որոնք հաղորդում էին ռադիոյի միջոցով, իբր ստացվում էին այլախոհների և չհաստատված աղբյուրների միջոցով: Այսպես, օրինակ, ամերիկյան «Բի-Բի-Սի» ռադիոկայանը հաղորդում էր, որ Սումգայիթի խողովակագործարանի բանվոր Արամյանին իր ընտանիքի անդամների հետ սպանված վիճակում գտել էին իրենց տանը, որի պատճառը եղել է այն, որ վերջինս հրաժարվել էր ասել, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության պահանջը անօրինական և հակասահմանադրական է: Նաև հաղորդվում էր, որ Սումգայիթում իրավիճակը վերահսկում էին ռազմականացված միլիցիան, զինվորական որոշ զորամասեր և զրահապատ մեքենաներ: Ռադիոկայանը նաև հաղորդում էր, որ Սումգայիթի քաղաքային իշխանությունները նախազգուշացրել էին բոլորին, որ իբր քաղաքում կեսօրին բոլոր գործադուլները և հանրահավաքները պետք է դադարեցվեին, հակառակ դեպքում անկարգություններին վերջ կտրվեր զինվորականների կողմից: Ամերիկյան ռադիոկայանները իրենց հաղորդումներում խոսում էին նաև Լեռնային Ղարաբաղի կենտրոն Ստեփանակերտում տիրող իրավիճակի մա-

սին՝ նշելով, որ Ստեփանակերտում բավական լարված վիճակ է: Ինչպես հաղորդում էր «Ամերիկայի ձայնը», Ստեփանակերտի կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանը հայտարարել էր, որ 1988 թ. մարտի 3-ից Ստեփանակերտում բոլոր հանրահավաքները, շքերթները պետք է արգելվեին: Նաև հաղորդվում էր, որ քաղաքի խանութներում չկային սննդամթերք, մթերքների պաշարներ և այլն:

Արտասահմանյան ռադիոհաղորդումներում ասվում էր այն մասին, որ Կանադայի Տորոնտո, Վանկուվեր, Մոնրեալ և այլ քաղաքներում հայ բնակչության կողմից կազմակերպվել էին հանրահավաքներ և շքերթներ: Այնուհետև նաև նշվում էր, որ Խորհրդային Միության Մոնրեալի գլխավոր կոնսուլին հանձնվել էր հանրահավաքի մասնակիցների կողմից բողոքի նոտա, որում շարադրված էին ժողովրդի՝ Լեռնային Ղարաբաղի հարցը արդարացիորեն լուծելու պահանջները:

Մեծ ակտիվությամբ հանրահավաքներ էին կազմակերպվում նաև Սան-Ֆրանցիսկոյում, որտեղ հանրահավաքի մասնակիցները հանդիպել են այդ քաղաքի Խորհրդային Միության գլխավոր կոնսուլի հետ: Ըստ «Ամերիկայի ձայնի»՝ կոնսուլի և հանրահավաքի մասնակիցներից կազմված պատգամավորների միջև տեղի է ունեցել «կեսժամյա ջերմ» հանդիպում: Հանդիպման վերջում ԽՍՀՄ գլխավոր կոնսուլին հանձնվել է ուղերձ-հոդված՝ ուղղված ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին՝ հայտնելով ԱՄՆ հայկական համայնքի համերաշխությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հետ:

Արևմտյան ռադիոկայանները ընդհանրապես մեծ ուշադրություն էին դարձնում ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ եվրոպական երկրներում, այդ թվում՝ նաև սոցիալիստական երկրներում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ եղած հաղորդումներին:

1988 թ. մարտի 4-ին հանրապետության արտաքին գործերի նախարարությունը կրկին հանրապետության ղեկավարությանն է ներկայացրել հերթական հաղորդագրությունը Լեռնային Ղարաբաղի

վերաբերյալ՝ նշելով, որ արտասահմանյան լրատվամիջոցները, ռադիոհաղորդումները ավելի շատ ցանկանում են իրավիճակը Լեռնային Ղարաբաղում ներկայացնել չափից ավելի լարված, դրամատիկ ձևով: Նաև հաղորդվում էր այն մասին, որ այդ օրերին տեղի է ունեցել ԱՄՆ-ում Խորհրդային Միության դեսպան Յ. Վ. Դոբրինինի և ԱՄՆ-ում հայ համայնքի ներկայացուցիչների, «ԱՄՆ-ում հայկական ազգային միավորման» միջև հանդիպում, որտեղ հարց է բարձրացվել՝ օգնելու Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի հայ բնակչությանը: Նաև հայտնվում էր, որ այդ հանդիպմանը մասնակցել է Հայկական ԽՍՀ-ի «Արտասահմանյան հայերի հետ մշակութային կապերի վարչության» պետ Կառլեն Դալլաքյանը: Նշվում էր, որ մարտի 5-ին արտասահմանյան բոլոր ռադիոկայանները հաղորդել էին Խորհրդային Միության հեռագրական գործակալության (TACC) հաղորդագրությունները սումգայիթյան իրադարձությունների մասին: Եվ, իրոք, արևմտյան լրատվամիջոցները ուշադրության կենտրոնում էին պահում Լեռնային Ղարաբաղի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները, ուստի հանրապետության արտաքին գործերի նախարարությունը ևս ուշադիր հետևում էր այդ ամենին և համապատասխան մարմիններին, առաջին հերթին Հայաստանի կոմկուսի կենտկոմին, նրա առաջին քարտուղարին տեղյակ պահում այդ ամենին: Եվ եթե շարժման առաջին մի քանի օրերին այդ հաղորդումներն ավելին շատ կրում էին սոսկ տեղեկատվական բնույթ՝ հաղորդելով միայն թվեր, փաստեր և այլն, ապա հետագա օրերին դրանք կրում էին ավելի շատ խորը, լայնածավալ և վերլուծական բնույթ՝ փորձ անելով պատասխանել այն հարցին, թե որոնք են պատճառները, որոնք 1980-ական թթ. ավարտին ավելի բացահայտորեն ծավալվեցին պատմությանը հայտնի Արցախյան շարժման միջոցով: Եվ քանի որ շարժման ակունքները առնչվում էին 1920-ական թթ. սկզբին, ուստի արտասահմանյան լրատվամիջոցները ևս իրենց տարբեր կարգի հաղորդումներում անդրադառնում էին նաև հարցի արմատներին, որպեսզի համապատասխան լսարանին տեղյակ պահեին խնդրի ակունքների մասին: Իսկ գլխավոր պատճառն այն էր, որ 1920-ական

թթ. սկզբներին խորհրդային իշխանությունները հայկական պատմական տարածքների՝ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հարցը, առանց հայ ժողովրդի կարծիքը հաշվի առնելու, կամայականորեն և քաղաքական հայտնի նպատակներով լուծեցին Խորհրդային Ադրբեջանի օգտին:

1988 թ. մարտի 5-ին «Ամերիկայի ձայն» ռադիոհաղորդման ժամանակ մեջբերումներ են կատարվել ամերիկահայ պատմաբան Ռոնալդ Սյունու հոդվածից, որն իր հոդվածը նվիրել էր այդ հարցի պատմության լուսաբանմանը՝ ցույց տալով, որ խորհրդային իշխանությունները 1920-ական թթ. Լեռնային Ղարաբաղի հարցի լուծմանը մոտեցել են վարչարարական դիրքերից: Նաև նշվում էր, որ այդ հաղորդումներում կեղծ լուրեր էին տարածվում Ադրբեջանից այն մասին, որ իբր «Խորհրդային Ղարաբաղ» թերթը, որը հրատարակվում էր հայերեն և ռուսերեն, Ստեփանակերտից տեղափոխվել էր Բաքու[237]:

Ռադիոհաղորդումներում և մամուլում հրապարակվող նյութերում այլ հարցերին զուգահեռ կարևորում էին նաև ազգամիջյան հարաբերությունների մասին ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ միջազգային կազմակերպությունների արտասահմանյան երկրների տարբեր դիրքերից մոտեցումները, գնահատականներն ու կարծիքները, որոնք, հասկանալի է, որ բավական տարբեր և իրարամերժ էին: Ճշմարտությունից հեռու և չափազանցված էին նաև արտասահմանյան երկրներում Արցախյան շարժման վերաբերյալ տարածվող լուրերը: Ռադիոհաղորդումներում, օրինակ, խոսվում էր այն մասին, որ Ադրբեջանի Սումգայիթ, Կիրովաբաղ և Աղդամ քաղաքներում զոհերի թիվը հասնում էր մոտ 300-ի, իսկ վիրավորվածների թիվը ավելի քան 1000-ի: Միաժամանակ արտասահմանյան ռադիոհաղորդումներում («Ամերիկայի ձայն», «Ազատություն», «Բի-Բի-Սի»և այլն) մեծ ուշադրություն էր դարձվում հարցի այն կողմի վրա, որ այդ բախումների արմատները պայմանավորված էին կրոնական, «աֆղանական

[237] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 108-109, 111-112:

պատերազմի», Իրանի իսլամական հեղափոխության և այլ գործոններով, որոնք մեծ չափով Ադրբեջանի և միջինասիական խորհրդային հանրապետությունների բնակչության շրջանում սրել էին իսլամական տրամադրությունները: Հատկապես «Ամերիկայի ձայնը» հաղորդում էր, որ Ադրբեջանում տարածված է մուսուլմանական ֆունդամենտալիզմի գաղափարախոսությունը, որն էլ իր հերթին հանգեցնում էր Ադրբեջանի տարածքում ապրող բազմահազար քրիստոնյա հայերի բնաջնջմանը, հարձակումներին և այլն:

Զեկուցագրում վերլուծվում էին նաև ֆրանսիական մամուլում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հրապարակվող նյութերը, որոնցում հատկապես նշվում էր, որ Ադրբեջանի տարբեր քաղաքներում իրականացվում էին հայերի կոտորածներ: ԽՍՀՄ-ում կրոնական հակամարտությունը չափից ավելի էր սրվել: Հենց այդ հիմքի վրա Մոսկվայի մերձակայքում ռուսների և ուզբեկների միջև դանակահարության դեպքեր են եղել: Նաև նշվում էր, որ ԳՖՀ հռենոսյան տարածաշրջանի թերթերից մեկում՝ «Рейнише меркур»-ում, տեղեկություն էր տրվում, որ ՌԽՖՍՀ-ում, Ուկրաինայում, Բելառուսիայում, Մերձբալթյան հանրապետություններում, Ղազախստանում, Կիրգիզիայում սրվել էին ազգամիջյան հարաբերությունները, կրոնական հակամարտությունները, և 1988 թ. մարտի 6-ին և 7-ին Մոսկվայում անցկացվել էր հարյուր հազարավոր հայերի հանրահավաք, որի մասնակիցները ուղերձ էին հղել ԽՄԿԿ կենտկոմին, որի բովանդակության մասին հաղորդել էին արտասահմանյան տարբեր լրատվամիջոցներ: Նաև նշվում էր, որ ֆրանսիական խոշորագույն թերթերից մեկը՝ «Մոնդը», պարբերաբար հրապարակում էր տարբեր կարգի նյութեր, հոդվածներ՝ ևս նվիրված Լեռնային Ղարաբաղի իրադարձություններին, որոնց մասին պարբերաբար արձագանքում էին «Ամերիկայի ձայնը», և ամերիկյան այլ թերթեր: «Մոնդը» գրում էր, որ եթե Լեռնային Ղարաբաղի մասին Ֆրանսիայում գիտեին միայն համապատասխան մասնագետները, ապա ֆրանսիացիները ոչ միայն գիտեին Լեռնային Ղարաբաղի պատմությունը, այլ նաև նրա աշխարհագրական դիրքը, քանի որ թերթերը համար առ համար

տպագրում էին Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի աշխարհագրական քարտեզը, ինչպես նաև հիմնարար կերպով վերլուծում էին վերոնշյալ տարածաշրջաններում տեղի ունեցող իրադարձությունները: Օրինակ՝ Երևանում տեղի ունեցող հանրահավաքների մասին Մոսկվայից հայտնվող թղթակցություններում հաղորդվում էր, որ հանրահավաքի մասնակիցները «հանգիստ էին և ուրախ և դատելով ամեն ինչից՝ ոչ մեկից չէին վախենում»[238]: Ճիշտ է ասված, քանի որ ժողովուրդը մի քանի օրվա հրապարակային պայքարում իր միջից հանել էր տասնամյակներ շարունակ կուտակված վախը, կարծրատիպերը և դարձել համարձակ, վճռական ու պատրաստ պայքարելու մինչև վերջ: Դրան հակառակ՝ «Մոնդ» թերթը նաև ճիշտ էր նկատում՝ գրելով, որ խորհրդային ղեկավարության համար ստեղծվել էին դժվարություններ, քանի որ հայերը ողջ աշխարհում ունեին մեծ և ազդեցիկ սփյուռք, որը մեծ ուշադրությամբ և կարեկցանքով հետևում էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին՝ ստիպելով ամերիկյան և արևմտյան երկրների ղեկավարներին ունկնդրել նաև իր կարծիքը: Միաժամանակ «Բի-Բի-Սի»-ն և արևմտյան մամուլը հաստատում էին այն միտքը, որ բավական դժվար էր մերժել հայերին իրենց պահանջների հարցում՝ ելնելով շարժման ծավալներից և նաև նրանից, որ շարժումը պաշտպանում էին մի շարք կուսակցությունների ղեկավարներ և այլն: Իհարկե, կային նաև թերթեր, որոնք իրավիճակը շատ ավելի պայթունավտանգ էին ներկայացնում: Օրինակ՝ ֆրանսիական «Ֆիգարո» թերթը, իր մեկնաբանություններում ներկայացնելով Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը, այն անվանում էր պայթյունավտանգ, նաև նշում էր, որ իշխանությունների մի փոքր անգամ սխալը կարող էր հանգեցնել ծանր հետևանքների: Որոշ թերթեր, փորձելով տեսնել հարցի հնարավոր լուծումները, նույնպես, ինչպես տարիներով ընդունված էր Խորհրդային Միությունում, առաջարկում էին ստեղծել համապատասխան հանձնաժողովներ: Կոնկրետ այս դեպ-

[238] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 112-116:

քում առաջարկվում էր ստեղծել հանձնաժողով՝ քննարկելու Լեռնային Ղարաբաղի հարցը, որը, ըստ «Մոնդ» թերթի կարծիքի, հնարավորություն կտար մեղմելու հայերի նկատմամբ վարվող քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ ոլորտների ճնշումները: Սակայն հետաքրքիր է նաև ասել, որ արևմտյան որոշ թերթեր, մասնավորապես ֆրանսիական «Գարդիան» թերթը, թերահավատորեն էր նայում այդ առաջարկներին՝ գտնելով, որ նման կիսատ-պռատ միջոցառումները չէին կարող բավարարել թե՛ Խորհրդային Հայաստանի հայերին և թե՛ արտասահմանում ապրող նրա բազմահազար հայրենակիցներին[239]: Սակայն պետք է ասել, որ որքան էլ, ըստ էության, ճիշտ էր նման մտահոգությունը, անկախ դրանից՝ հայ ժողովուրդը, ղարաբաղցին վճռական էին իրենց պայքարում և ամենօրյա հանրահավաքների, գործադուլների և այլ միջոցներով ստիպում էին իշխանություններին հասկանալ հարցի լրջությունը և գնալ զիջումների:

Կրկին անդրադառնալով սփյուռքի հայության կատարած աշխատանքներին՝ հատկապես հետաքրքիր է ԱՄՆ հայության այն նախաձեռնությունը, որը առնչվում էր ԱՄՆ սենատոր Էդվարդ Քենեդու հետ հանդիպմանը: Էդվարդ Քենեդին Վիրջինիայի նահանգի իր վիլլայում Լեռնային Ղարաբաղի հարցով հանդիպում է ունեցել Վաշինգտոնում Խորհրդային Միության դեսպանի հետ: Սենատորի խնդրանքով նրան ներկայացրել են Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) վերաբերյալ համապատասխան նյութեր, որոնք հատկապես վերաբերում էին ԼՂԻՄ-ի ձևավորմանը և Ադրբեջանի հետ նրա միացման պատմությանը: Հանդիպմանը հրավիրված հայ մասնակիցները դիմել են սենատոր Էդվարդ Քենեդուն՝ խնդրելով հանդես գալ որպես միջնորդ և դիմել խորհրդային կառավարությանը, մասնավորապես ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին՝ Լեռնային Ղարաբաղը ՀԽՍՀ-ի հետ միավորելու համար[240]:

---

[239] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 117:
[240] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 118:

1988 թ. մարտի 16-ին Լոս Անջելեսում քաղաքագլխի նստավայրի դիմաց ամերիկահայերը անցկացրել են հանրահավաք, որին մասնակցել են նաև հայ բոլոր քաղաքական կուսակցությունների, հասարակական, կրոնական կազմակերպությունների, քաղաքի մունիցիպալ ժողովի ներկայացուցիչները: Լոս Անջելեսի օրենսդիր ժողովի անդամ Յավորսկին հայտարարել է, որ քաղաքի մունիցիպալ խորհրդի կողմից ընդունվել է բանաձև, որով կոչ էր արվում Լեռնային Ղարաբաղը միավորելու Խորհրդային Հայաստանին, ինչպես նաև պաշտպանելու Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի հայերի իրավունքները: Հանրահավաքը նաև ընդունել էր որոշում և ուղարկել Մ. Ս. Գորբաչովին:

Հանրահավաքում նաև դժգոհություն էր հայտնվել այն առթիվ, որ խորհրդային մամուլը հրատարակում է Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների առթիվ ոչ օբյեկտիվ հոդվածներ: Արևմտյան ռադիոկայանները, այդ թվում՝ նաև «Ամերիկայի ձայնը», «Հռոմ» թերթը տպագրել էին հայ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի հետ անցկացրած հարցազրույցը, որում Սիլվա Կապուտիկյանը մանրամասնորեն ներկայացրել էր Մ. Ս. Գորբաչովի հետ իր հանդիպման տպավորությունները, արդյունքները: Նա նաև նշել էր, որ Մ. Ս. Գորբաչովը շատ լավ հասկանում է Լեռնային Ղարաբաղի խնդիրը, բայց չի կարող խոստանալ, որ Լեռնային Ղարաբաղը կարող է վերադարձնել Խորհրդային Հայաստանին, քանի որ իրավիճակը բավական բարդ է: Բայց երբ նա Մոսկվայից վերադարձել էր Հայաստան և Թատերական հրապարակում տեսել հանրահավաքի մասնակիցներին, որոնք կրում էին Գորբաչովի նկարները, և նրանց հարցրել էր, թե ինչու են հավաքվել այստեղ: Նրանք բոլորը պատասխանել էին, որ ինչ-որ մեկը պետք է թույլ տար բարձրացնել իրենց գլուխները, լինել փողոցներում և ազատորեն արտահայտվել և այլն: Հարցազրույցում Սիլվա Կապուտիկյանը նաև ասել է՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը վերջնականապես լուծված չէ, հավանաբար պետք է գնալ կոմպրոմիսի՝ բավարարվելով մարզի հայ բնակչության մշակութային իրավունքների ընդլայնմամբ: Իտալական «Републик»

թղթակցի այն հարցին, թե ինչ կարծիքի է մարտի 26-ին նախատեսվող հանրահավաքի մասին, բանաստեղծուհին պատասխանել է, որ ինքը դեմ է հանրահավաքների և շքերթների վերականգնմանը, և մեծ աշխատանքներ են տարվում հանրահավաքներն արգելելու ուղղությամբ[241]:

Հետաքրքիր է ասել, որ նույն թերթի խմբագրական մեկնաբանություններում, կապված Սիլվա Կապուտիկյանի հարցազրույցի հետ, բերվում էր չինական մի ասույթ այն մասին, որ «ուզած երկար ճանապարհ սկսվում է առաջին քայլից» նշանակում է՝ Լեռնային Ղարաբաղի հարցում նախ հանձնարարվում էր ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարությանը, իսկ հետո Հայաստանի և Ադրբեջանի կոմունիստական կուսակցություններին «ուսումնասիրել իրավիճակը և մշակել միջոցառումներ՝ լուծելու համար Լեռնային Ղարաբաղի հարցը», որը պետք է քննարկվեր ԽՍՀՄ մասշտաբով առաջիկայում հրավիրվող ԽՄԿԿ կենտկոմի ազգամիջյան հարաբերություններին նվիրված պլենումում:

Խմբագրի մեկնաբանությունում նաև նշվում էր, որ ճանապարհը, որի մասին խոսվում էր չինական իմաստության մեջ, իրոք, խոստանում էր լինել երկար[242]: Իհարկե, այդ հանգամանքը գիտակցում էին նաև Արցախյան շարժման ակունքներում կանգնածները, որոնք տարբեր առիթներով, հատկապես հանրահավաքների ժամանակ լայն հասարակությանը և մասնակիցներին հիշեցնում էին դա՝ մարդկանց նախապատրաստելով երկարատև պայքարի:

Արևմտյան ռադիոկայանները կարևորում էին նաև Խորհրդային Միության գլխավոր դատախազ Ա. Ֆ. Կատուսևի տեղակալի՝ «Бакинский рабочий» թերթում տպագրած հոդվածը Սումգայիթյան ջարդերի, ինչպես նաև այդ իրադարձություններից հետո քաղաքում ստեղծված իրավիճակի մասին, ըստ որի՝ Ադրբեջանի կոմկուսի Սումգայիթի քաղկոմի առաջին քարտուղարը և Սումգայիթի քաղսովետի գործկոմի նախագահը ազատվել էին աշխատանքից: Հասկանալի է,

[241] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 137-139:
[242] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 138-139:

որ Ադրբեջանի իշխանությունները նման քայլերով փորձել էին ինչ-որ չափով իրավիճակը մեղմել, հանդարտեցնել, որն այնքան էլ հեշտ չէր:

Մյուս հարցը վերաբերում էր արտասահմանյան մամուլում և ռադիոհաղորդումներում հրատարակվող և հաղորդվող նյութերին, որոնք վերաբերում էին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Թուրքիայի դիրքորոշմանը: Դժվար չէ ենթադրել, որ Թուրքիան այդ օրերին բացահայտորեն ավելի էր մեծացրել իր հակահայկական քարոզչությունը՝ աղավաղելով պատմական փաստերը: Մասնավորապես թուրքական հեռուստատեսությունը 1988 թ. մարտի 10-ին պատրաստել էր հատուկ հաղորդում թուրքական հանրահավաքի մասին, որը տեղի էր ունեցել Էրզրումի նահանգի Ալաղջի գյուղում՝ «278 թուրք հուշարձանի» մոտ, որ իբր թուրքերը սպանվել են 1918 թ. հայ ավազակների կողմից՝ Անդրանիկի, Ազարևի և Մուրադյանի գլխավորությամբ: Նաև հաղորդվում էր, որ այդ հանրահավաքում ելույթ է ունեցել Թուրքիայի պետնախարար Քիթամլին, որը հայտարարել էր, որ անհրաժեշտ էր ամբողջ աշխարհին հայտնել, հաղորդել, որ հայերը 1918-1920 թթ. թուրքերի նկատմամբ իրականացրել են գազանություններ: Այդ նույն հեռուստահաղորդման ժամանակ հայտարարվել էր, որ Թուրքիայի կրոնի հարցերի գծով նախարարի հրավերով Թուրքիա էր ժամանել Հյուսիսային Կովկասի մուսուլմանների մոֆտին, որը Անկարայում հայտարարել էր, որ իրեն զգում է ինչպես տանը՝ նշելով, որ նույն հավատքի ժողովուրդներին անհրաժեշտ էր իրար մոտ լինել և իրար լավ իմանալ:

Արևմտաեվրոպական և ամերիկյան մամուլը, արտասահմանյան տարբեր երկրների հայ համայնքների թերթերն ընդհանուր առմամբ շարունակում էին հրատարակել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ տարբեր նյութեր, պատմատեղեկատվական և վերլուծական բնույթի հոդվածներ և այլն[243]:

---

[243] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 142-143:

Հանրապետության արտաքին գործերի նախարարության ամենօրյա հաղորդագրություններում, որոնք վերաբերում էին հանրապետության և Լեռնային Ղարաբաղի օպերատիվ վիճակին, հատկապես նշվում էր, որ 1988 թ. մարտի 28-ին արտասամանյան ռադիոկայանները, մամուլը շարունակում էին ամենայն ուշադրությամբ հետևել և հաղորդումներ տալ ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի և Ադրբեջանի վերաբերյալ: Մասնավորապես կարևորվում էին խորհրդային ղեկավար գործիչների, Մինիստրների խորհրդի, Պետպլանի, Դատախազության աշխատողների մամուլի ասուլիսները, որոնք այցելել էին Հայաստան և Ադրբեջան՝ իրավիճակին ավելի մոտիկից ծանոթանալու համար: Բայց նաև պետք է ասել, որ Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը ՀԿԿ կենտկոմ ուղարկած իր զեկուցագրերում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ արտասահմանյան հաղորդումների, հոդվածների նկատմամբ ավելի շատ քննադատական մոտեցումներ ուներ: Օրինակ՝ նշելով այն մասին, որ արևմտյան մամուլը հրատարակում էին վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում, դիտարկելով Լեռնային Ղարաբաղում, Հայաստանում, Ադրբեջանում ընթացող գործընթացները, արվում էին ոչ ճիշտ և կասկածելի ենթադրություններ, իբր դրանք բացասաբար կարող էին ազդել խորհրդային հասարակությունում ընթացող վերակառուցման, հրապարակայնության և ժողովրդավարացման վրա: Արտասահմանյան մամուլը, ռադիոն թվարկում էին նաև այն ուղղությունները, որոնք վերաբերում էին վերակառուցմանը, հրապարակայնությանը՝ նշելով որ դրանք միաժամանակ բացահայտեցին Խորհրդային Միությունում գոյություն ունեցող ազգամիջյան խնդիրները, որին նախկինում խանգարում էին ստալինյան ռեպրեսիաները, ահաբեկչությունները, այդ մասին բարձրաձայն խոսելու արգելքները և այլն:

Արտասահմանյան մամուլը նաև նշում էր, որ Խորհրդային Միությունը այժմ ապրում էր դժվար ժամանակաշրջան, քանի որ, եթե վերանայվեին երկրի ներքին սահմանները, ապա դրանք կարող էին

անկանխատեսելի հետևանքներ ունենալ և այլն[244]: Իհարկե, այս հարցում չի կարելի չհամաձայնել արտասահմանյան հաղորդումներում բարձրացված նման հարցադրումներին և համաձայնել հանրապետության արտաքին գործերի նախարարության նման մեկնաբանությանը, քանի որ դա համապատասխանում էր իրականությանը: Միաժամանակ պետք է ասել, որ արտասահմանյան հաղորդումներում, մամուլում միանգամայն ճշտորեն քննադատում էին խորհրդային տեղեկատվական գրաքննական համակարգը՝ նշելով, որ բավական դժվար է Խորհրդային Միությունում խոսել հրապարակայնության մասին, քանի որ «հրապարակայնության սահմանները» որոշվում էին՝ ելնելով թեմատիկայից: Մասնավորապես նշվում էր, որ բավական դժվար էր ստանալ հանրապետության ծավալով հրատարակություններ, իսկ կենտրոնական մամուլը հրատարակում էր այն, ինչը համարում էր «ճիշտ», բայց նաև նշվում էր, որ ռադիոկայանները հաղորդել են ակադեմիկոս Ա. Սախարովի ուղերձը ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին: Ուղերձում նշվում էր, որ խորհրդային կառավարության ձեռնարկած սոցիալ-տնտեսական միջոցառումները, որոնք նախատեսված էին Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման համար, կիսատ-պռատ էին և չունեին որևէ հեռանկար[245]: Դժվար չէր տեսնել, որ հենց գորբաչովյան «վերակառուցման» տարիներին հնարավոր եղավ խոսել նաև խորհրդային համակարգի արատների մասին և փորձել երկրում հաստատել ժողովրդավարություն և այն: Մինչդեռ այլ բան է, որ այդ ամենը իներցիայի ուժով կարգավորվում էին իշխանությունների, ԽՄԿԿ-ի, նրա բարձրագույն օրգանի՝ քաղբյուրոյի կողմից: Իսկ դա նշանակում էր, որ վերակառուցումը ևս ուներ արատներ, սահմանափակումներ, և ամեն ինչի մասին չէ, որ կարելի էր խոսել: Եվ հենց այդ հարցերն էին, որոնք բարձրացվում և քննարկվում, քննադատվում էին արտասահմանյան երկրներում, սփյուռքի հայ համայնքներում, որոնք նույնպես կազմակերպում էին հանրահավաքներ. ռադիոհաղորդումներ՝ քննա-

[244] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 146-147:
[245] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 147:

դատելով նաև այդ քաղաքականության թերի, ձևական կողմերը: Եթե այդ հարցերի մասին խոսում էին արտասահմանյան երկրներում, սփյուռքի հայ համայնքներում, Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը դժկամությամբ էր ընդունում և ամեն մի դիտողություն դիտում որպես միտումնավոր քայլ՝ վարկաբեկելու վերակառուցումը: Մինչդեռ կարծում ենք, որ անչափ օգտակար է ուսումնասիրել նաև այն նյութերը, աղբյուրները, որոնք անգամ այլ դիրքերից էին մոտենում այդ հարցերին: Դա նաև նշանակում է, որ արտասահմանյան երկրները անտարբեր չէին (հատկապես նկատի ունենք սփյուռքի հայերին) ԽՍՀՄ-ում կատարվող փոփոխությունների, առավել ևս Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: Դա հատկապես վերաբերում էր ԱՄՆ-ին, Կանադային, Լատինական Ամերիկայի երկրներին՝ Արգենտինային, Բրազիլիային և, իհարկե, եվրոպական երկրներին՝ Ֆրանսիա, Հունաստան և այլն, որոնցում ապրող հայկական համայնքները ուշադրությամբ հետևում էին Լեռնային Ղարաբաղում և Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, կազմակերպում հանրահավաքներ, հրատարակում տարբեր կարգի նյութեր, հոդվածներ, որոնք օգնություն էին հանրահավաքի մասնակիցներին՝ ավելի մանրամասնությամբ իմանալու ճշմարտությունը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ:

Ամերիկյան մի շարք ռադիոկայաններ՝ «Բի-Բի-Սին», «Ամերիկայի ձայնը», ֆրանսիական «Франс-интер»-ը, ավելի շատ հաղորդում էին այն հանրահավաքների մասին, որոնք կազմակերպում էին հայերը այլ ազգերի հետ միասին և առանձին Հայաստանից դուրս՝ Թբիլիսիում, Մոսկվայում: Տեղեկություն էր տրվում, որ հանրահավաքների մասնակիցների նկատմամբ հատկապես Թբիլիսիում 1988 թ. մարտի 28-ին իշխանությունները գործադրել էին բավական կոշտ գործողություններ: Բնական է, որ այդ ամենի մասին հասարակությունը իմանում էր ռադիոկայանների և մամուլում հրատարակվող բազմաբնույթ հոդվածների, մեկնաբանությունների միջոցով: 1988 թ. մարտյան հաղորդումների ժամանակ հատկապես կարևոր ուշադրու-

թյուն էր դարձվել ամերիկյան կոնգրեսականներ Չ. Փաշայանի, Թ. Կոեխլոյի և ԱՄՆ նախագահի թեկնածու Ռոբերտ Դուալի՝ Մ. Ս. Գորբաչովին ուղղված ուղերձներին, որոնք վերաբերում էին Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձություններին: Հարկ է նաև նշել, որ «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը 1988 թ. մարտի վերջերին մի քանի օր անընդհատ հայերեն հաղորդումների ժամանակ ներկայացրել էր ամերիկահայ համայնքի անչափ մեծ դժգոհությունը Կալիֆոռնիայի նահանգապետ Ջորջ Դոքմեջյանից՝ ընդգծելով նրա «անգործությունը» Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ, բայց որպես դրական արձագանք՝ այդ հաղորդման մեջ նշվել էր նաև ԱՄՆ արևելյան շրջանի և Կանադայի հայկական եկեղեցու արքեպիսկոպոս Թորգոմ Մանուկյանի զրույցը Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հետ: Զրույցի ընթացքում Վազգեն Առաջինը հորդորել էր ամերիկյան արքեպիսկոպոսին չթույլատրել, որ հայերը հանրահավաքների ժամանակ չկրեն ինչ-որ հակախորհրդային թռուցիկներ և կարգախոսներ[246]:

Հայաստանի ազգային արխիվի ֆ. 1, ց. 87, գ. 9-ի 153 թերթից բաղկացած գաղտնի թղթապանակի վերջին նյութը վերաբերում է 1988 թ. մարտի 29-ին Երևանում և Ստեփանակերտում տեղի ունեցած իրադարձություններին, որտեղ ասվում էր, որ իրավիճակը Երևանում և Ստեփանակերտում հարաբերականորեն հանգիստ է. հանրահավաքներ և շքերթներ չեն եղել, իսկ ձեռնարկությունները, հիմնարկները, բուհերը նորմալ աշխատում են: Նաև նշվում էր, որ արևմտյան ռադիոկայանները փորձում են դա բացատրել նրանով, որ հանրահավաքներ անցկացնող կազմակերպությունները, այսինքն՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները, որոնք նախօրոք՝ մարտի 28-ին, ձերբակալվել էին, ազատ էին արձակվել և կոչ էին արել դադարեցնել հանրահավաքները: Բայց նաև նշվում էր, որ Երևանում ձերբակալվել էր Պարույր Հայրիկյանը՝ նախկինում հակախորհրդային գործունեության համար դատապարտվելով 17 տարվա

[246] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 147-148:

ազատազրկման: Այնուհետև ազատվել էր և կրկին հայտնվել անազատության մեջ:

Նույն ժամանակ ամերիկյան ռադիոկայանները՝ «Ամերիկայի ձայնը» (հայերեն), «Ազատությունը», նաև հաղորդում էին այն մասին, որ բոլոր դեպքերում իրավիճակը հատկապես Ստեփանակերտում շարունակում էր լարված մնալ, քանի որ այնտեղ դեռևս շարունակվում էին համընդհանուր գործադուլները՝ բացառությամբ կենսական նշանակություն ունեցող ձեռնարկությունների, որոնցից հատկապես նշվում էին հացի, կաթնամթերքների գործարանները և ուրիշներ: Նաև հաղորդվում էր, որ կապի միջոցների 70 %-ը ևս չէր աշխատում:

«Ամերիկայի ձայնը» հաղորդում էր, որ արտասահմանյան երկրների թղթակիցները Մոսկվայում հանդիպել էին կուսակցության Մոսկվայի քաղաքային կոմիտեի քարտուղար Լ. Ն. Զայկովի հետ, որը Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջը ստեղծված վիճակի ողջ պատասխանատվությունը դրել էր նախկինում ձերբակալվածների և ընդհանրապես «Ղարաբաղ» կոմիտեի ողջ անդամների վրա[247]:

Նույն ձևով ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարությունը նաև հաշվետվություններ է ներկայացրել Խորհրդային Միության արտաքին գործերի նախարարությանը կատարած աշխատանքների մասին՝ նշելով, որ նախարարությունը սփյուռքի հայ համայնքների նկատմամբ կատարել է որոշակի աշխատանք, սակայն կան նաև թերություններ, բացթողումներ, պասիվություն հատկապես Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների լուսաբանման ուղղությամբ՝ նկատի ունենալով, որ արտասահմանյան մամուլում հրատարակում էին այնպիսի հոդվածներ, որոնք ստեղծում էին հասարակության մեջ ձևախեղված, կեղծված պատկերացումներ՝ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Ուստի անհրաժեշտ էր, որ ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարությունն ավելի շատ և օբյեկտիվորեն լուսաբա-

[247] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 152:

ներ սոցիալ-տնտեսական այն միջոցառումները, որոնք կատարվում էին Խորհրդային Միության կողմից Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների առթիվ: Հատկապես հետաքրքիր է ներկայացնել այն աշխատանքները, որոնք կատարվում էին Լիբանանում հայ համայնքի կողմից, որի մասին զեկուցագրում հաղորդում էր Լիբանանում Խորհրդային Միության դեսպան Վ. Ի. Կոլոտուշան: Այն կոչվում էր «Լիբանանում հայկական համայնքի աշխատանքի մասին»՝ կապված Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների հետ: Զեկուցագիրը կազմվել է 1988 թ. մայիսի 5-ին: Նրանում դեսպանը հայտնում էր, որ Լիբանանում ապրող հայ համայնքի շրջանում դեսպանության կողմից նույնպես կատարվում էր համապատասխան աշխատանք՝ նրանց ներկայացնելու Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների մասին: Հատկապես կարևորվում է այն աշխատանքը, որը տանում էր խորհրդային կառավարությունը՝ իրականացնելու համար Խորհրդային Միության կողմից մշակված Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման ծրագիրը, ինչպես նաև ներկայացնելով ազգամիջյան հարաբերությունների վիճակը, բնույթը ընդհանրապես Խորհրդային Միությունում: Դեսպանը նաև նշում էր, որ Լիբանանի հայկական գաղութում Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ առաջացած հուզական պոռթկումը վերջին ժամանակներս մի փոքր հանդարտվել էր, քանի որ Խորհրդային Միությունը այնտեղ արդյունավետորեն իրականացնում էր միջոցառումների մի ամբողջ շարք: Այդ գործում որոշակի դեր են խաղացել Լիբանանում գործող հայկական «Հնչակ» և «Ռամկավար» (ՌԱԿ) կուսակցությունները, որոնք դեսպանատան գնահատմամբ վարում էին չափավոր առաջադիմական, լիբերալ-ազատական քաղաքականություն՝ կոչ անելով հայերին տուրք չտալ վայրկենական զգացմունքներին և վնաս չհասցնել հայ-ռուսական դարավոր բարեկամությանը, ինչպես նաև չանտեսել հայ ժողովրդի ազգային շահերը:

Դժվար չէ տեսնել, որ նման ձևակերպումները, գնահատականները բխում էին Խորհրդային Միության պաշտոնական գաղափարախոսության կանոններից: Եվ դա հասկանալի էր, քանի որ Խորհրդային Միության դեսպանը, անկախ նրանից որ երկրում է, միևնույն է, նա անշեղորեն կատարում էր ԽՄԿԿ կենտկոմի, նրա գլխավոր շտաբի՝ քաղբյուրոյի ցուցումները, որոնցից մի փոքր անգամ շեղվելը կպատժվեր ամենայն խստությամբ: Ընդ որում՝ դա հստակորեն երևում էր այդ նույն զեկուցագրում, երբ դեսպանը ներկայացնում էր Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության դիրքորոշումը այդ նույն հարցերի նկատմամբ՝ նշելով, որ «ինչ վերաբերում է ՀՅԴ-ին, ապա պետք է ասել, որ, ցավոք, այդ նույն բանը, որն ասվել է «Հնչակ» և «Ռամկավար» կուսակցությունների նկատմամբ, հնարավոր չէ»[248]: Ինչպես տեսնում ենք, դեսպանը, մերժելով, չընդունելով Դաշնակցություն կուսակցության դիրքորոշումը, չի նշել, թե կոնկրետ որն էր այն, և ինչումն էր դրա սխալը: Իրականում աշխատանքի նման ոճը խորհրդային գաղափարախոսության փորձված ձևերից մեկն էր, որին ևս հավատարիմ էր կոնկրետ այս դեպքում Լիբանանում Խորհրդային Միության դեսպանը: Բայց պետք է ասել, որ հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացրած զեկուցագրերում, տարբեր կարգի գրություններում կային նաև օգտակար շատ նյութեր, որոնցում օբյեկտիվորեն ներկայացվում էին Լեռնային Ղարաբաղում և հատկապես Երևանում տեղի ունեցող իրադարձությունները՝ հենվելով արտասահմանյան հաղորդումների վրա: Օրինակ՝ 1988 թ. հուլիսի 27-ին «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը հաղորդել էր, որ 1920-ական թթ., երբ որոշվում էին խորհրդային հանրապետությունների սահմանները, ավելի քան 100 հազար հայեր հայտնվեցին Ադրբեջանի կազմում: Այդ նույն հաղորդման մեջ նաև տեղեկություն էր տրվում, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների խորհուրդը 1988 թ. փետրվարի 20-ին ընդունել էր որոշում՝ դուրս գալու Ադրբեջանի կազմից և վերամիա-

[248] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 10, թ. 117:

վորվելու Խորհրդային Հայաստանի հետ: Նաև հաղորդվում էր, որ ԱՄՆ Սենատը, անդրադառնալով նշված հարցին, իր դիրքորոշումն էր հայտնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի որոշման վերաբերյալ՝ նշելով, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը մերժել է Լեռնային Ղարաբաղի բնակչության պահանջը՝ անընդունելի համարելով սահմանների վերաձևումը: Սենատն իր որոշման մեջ որպես լրացում հավելել էր, որ Խորհրդային Միությունը զորք է մտցրել տարածաշրջան (Լեռնային Ղարաբաղ – Հ. Ա.) և ճնշել խաղաղ ցույցերը՝ նույն բանը կատարելով նաև Խորհրդային Հայաստանում: Սենատն այդ առիթով ընդունել էր որոշում՝ ներկայացնելով հետևյալ պահանջները.

1. խորհրդային կառավարությունը պետք է բավարարի հայ ժողովրդի օրինական պահանջները,

2. խորհրդային կառավարությունը պետք է դադարեցնի հայ ժողովրդի իրավունքների խախտումը,

3. եթե Խորհրդային Միությունը շարունակի հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող դատապարտելի քաղաքականությունը, ապա դա անխուսափելիորեն կազդի ԱՄՆ-ի և Խորհրդային Միության հարաբերությունների վրա:

Ի նշան վերոնշյալ որոշման պաշտպանության՝ Սենատում ելույթով հանդես են եկել սենատորներ՝ Դոուլը, Մաքքեյնը, Ուինստոնը, Հոլլինգը, Չապին և ուրիշներ Ելույթները հանգում էին նրան, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության պահանջը՝ վերամիավորվելու Հայաստանի հետ, ուներ «օրինական հիմքեր և համապատասխանում էր մարդու իրավունքների համընդհանուր նորմերին»[249]: Ընդորում՝ սենատորները նորից ընդգծում էին, որ հարցը չլուծելը անընդունելի էր Խորհրդային Միության ողջ հայության համար, և այն անխուսափելիորեն կազդեր խորհրդա-ամերիկյան հարաբերությունների վրա: Այդ միտքը շատ ավելի ընդգծված կերպով իր ելույթում նշել է սենատոր Դոուլը՝ հավելելով, որ ինքը ԱՄՆ Սենատում այդ հարցով

[249] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 10, թ. 115-116:

երեք անգամ ելույթ է ունեցել, երկու անգամ գրավոր դիմել է Մ. Ս. Գորբաչովին՝ պահանջելով հայ ժողովրդի նկատմամբ իրականացնել հրապարակայնություն: Նա նաև նշում էր, որ Խորհրդային Միությունը շարունակում է խախտել մարդու իրավունքները, և այն ամենը, ինչ տեղի է ունենում, այն պատճառով է, որ Խորհրդային Հայաստանը համարձակվել էր հայտնել, արտահայտել իր քաղաքական պահանջները[250]:

Նման կարգի հաղորդումներ կային նաև Եգիպտոսի Արաբական Հանրապետության հայկական համայնքին վերաբերող նյութերում, որոնց մասին հաղորդում էր ԽՍՀՄ դեսպանատան երկրորդ քարտուղար Էդվարդ Նալբանդյանը (հետագայում՝ ՀՀ արտաքին գործերի նախարար), որն այդ առթիվ կազմել էր համապատասխան զեկուցագիր: Նրանում ասվում էր, որ Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում հաշվվում են մոտ 50 հազար հայեր: Եգիպտոսում գործում էին նաև երեք քաղաքական կուսակցություններ՝ «Ռամկավար ազատական» (լիբերալ), «Սոցիալ-դեմոկրատ հնչակյան» և «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունները, որոնք, հակառակ Եգիպտոսում կուսակցությունների նկատմամբ սահմանափակումներին, պահպանել էին իրենց կառույցները և շարունակում էին գործել որպես մշակութային, լուսավորչական ակումբներ: Այդ կուսակցություններից յուրաքանչյուրը հրատարակում էր իր թերթը. ռամկավարները «Արև», հնչակյանները՝ «Ջահակիր», դաշնակները՝ «Հուսաբեր»: Նրանք բոլորը ներկայացնում էին մայր կուսակցությունների ճյուղերը, որոնք գործում էին աշխարհի տարբեր երկրներում, որտեղ կային հայկական գաղթօջախներ: Նրանց կենտրոնը գտնվում էր Բեյրութում: Իսկ ինչ վերաբերում է Եգիպտոսի հայերին, նրանց սոցիալական կարգավիճակին, ապա պետք է ասել, որ նրանց մի մասը բանվորներ էին, մանր և միջին բուրժուազիայի ներկայացուցիչներ, մտավորականներ և այլն: Եվ չնայած Եգիպտոսի հայերի սոցիալական վիճակի բազմազանությանը, տարբեր կու-

[250] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 10, թ. 116-117:

սակցությունների պատկանելությանը՝ Եգիպտոսում ընդհանուր առմամբ իշխում էին խորհրդամետ տրամադրությունները: Եգիպտահայերը Խորհրդային Հայաստանը դիտում էին որպես իրենց հայրենիք և իրենց մամուլում, այդ թվում՝ նաև դաշնակցական մամուլում, դրական դիրքերից էին լուսաբանում նրա նվաճումները և հաջողությունները: Ուստի բնական է, որ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները ցնցել էին նաև եգիպտահայերին, որոնք անկախ արևմտյան մամուլում հաճախ հրատարակվող հակախորհրդային հոդվածներից՝ չփոխեցին իրենց կարծիքը, իրենց մոտեցումները Խորհրդային Միության նկատմամբ: Նրանք իրենց գործողություններում, գնահատականներում, անգամ Լեռնային Ղարաբաղում ընթացող և նրա շուրջն առաջացած դեպքերից հետո շարունակում էին մնալ իրենց կարծիքին՝ նշելով, որ Խորհրդային Միությունը հայ ժողովրդի վերածննդի պաշտպանն է և հայկական պետականության ամրապնդողը, գիտության, մշակույթի ծաղկման երաշխավորը, ուստի հայ ժողովրդի հետագա ճակատագիրը չի կարելի դիտել Խորհրդային Միությունից դուրս և այլն[251]:

Լեռնային Ղարաբաղի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները մեծ հետաքրքրություն էին առաջացրել կիպրահայերի շրջանում, որոնք հիմնականում լուրերը ստանում էին արևմտյան աղբյուրներից ռադիոյի և մամուլի միջոցով: Կիպրահայերը դրականորեն էին տրամադրված Արցախյան շարժման նկատմամբ և հավանություն էին տալիս ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմանը (1988 թ. հունիսի 15)՝ Լեռնային Ղարաբաղը միավորելու Խորհրդային Հայաստանի հետ: Նման լուրջ լուրը մեծ աշխուժություն էր առաջացրել կիպրահայերի շրջանում: Նրանց կարծիքով դեպքերի նման զարգացումը կնպաստեր նաև խորհրդային հասարակության դեմոկրատացման, վերակառուցման քաղաքականության իրականացմանը: Կիպրահայերը հատկապես շատ սուր և ցավագին ընդունեցին Սումգայիթում տեղի ունեցած հայկական ջարդերը, դատապարտեցին նման հակամարդ-

[251] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 10, թ. 140-142:

կային գործողությունները: Նրանք Սումգայիթում և Բաքվում կազմակերպված հայկական ջարդերը համեմատում էին թուրքերի կողմից Կիպրոսում իրականացրած պանթյուրքական քաղաքականության հետ՝ Ադրբեջանի քայլերը հայերի նկատմամբ համարելով որպես շովինիստական քաղաքականություն:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարության մի շարք հաղորդումներում խոսվում էր նաև հայկական տարբեր համայնքներում կազմակերպված հանրահավաքների, շքերթների մասին, որոնք պաշտպանում էին հայ ժողովրդի պահանջը՝ Լեռնային Ղարաբաղը միավորելու Խորհրդային Հայաստանի հետ, քանի որ դա նշանակում էր նաև ուղղել այն պատմական սխալը, որը թույլ էին տվել խորհրդային իշխանությունները 1920-ական թթ. սկզբներին: Միաժամանակ նշվում էր, որ մեծ մասամբ հանրահավաքները, շքերթները հիմնականում կազմակերպում էին սփյուռքի չեզոք և առաջադեմ ուժերի կողմից՝ հաճախ ղեկավարվելով եկեղեցական կազմակերպությունների կողմից: Այսպես՝ 1988 թ. փետրվարի 27-ին Նյու Յորքի ՄԱԿ-ի խորհրդային ներկայացչության շենքի առաջ հավաքվել էին 400 հոգի, փետրվարի 28-ին՝ մոտ 1500 հոգի: Նման հանրահավաք կազմակերպել էին Կանադայում՝ Մոնրեալի խորհրդային գլխավոր հյուպատոսության շենքի մոտ, իսկ արդեն փետրվարի 29-ին ավելի քան 300 սփյուռքահայեր հանրահավաք էին կազմակերպել Աթենքի խորհրդային դեսպանության շենքի առաջ և այլն:

Հասկանալի է, որ Խորհրդային Միության, նաև Խորհրդային Հայաստանի անվտանգության մարմինները (ՊԱԿ) չէին կարող անտարբեր մնալ սփյուռքում կատարվող նման իրադարձությունների նկատմամբ և պետք է ձեռնարկեին համապատասխան քայլեր: Այդ նպատակով հանրապետության պետական անվտանգության մարմինները (ՊԱԿ) կազմում էին համապատասխան զեկուցագիր և ուղարկում հանրապետության ղեկավարությանը: Զեկուցագրում ասվում էր, որ ՀԽՍՀ ՊԱԿ-ն «անրաժեշտ էր համարում տանել լրացուցիչ աշխատանք արտասահմանյան հայերի շրջանում մշակութային

կապերի կոմիտեի և Էջմիածնի կաթողիկոսության հետ, որպեսզի նրանց ցույց տրվի օգնություն՝ իրականացնելու Խորհրդային Միությանը ձեռնտու քաղաքականություն, այն է՝ մեծացնելու խորհրդային ազդեցությունը սփյուռքահայերի շրջանում: Նախատեսվում էր հրատարակել «Հայրենիքի ձայն» թերթի հատուկ համար՝ լուսաբանելու համար ԽՍԿԿ-ի և անձամբ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի կողմից իրականացվող այն քայլերը, որոնք ուղղված էին առողջացնելու Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ ստեղծված մթնոլորտը: Հատկապես կարևորվում էր փետրվարի 26-ի Մ. Ս. Գորբաչովի՝ Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին և ժողովուրդներին ուղղված հայտնի ուղերձը:

Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանին հասցեագրված վերոհիշյալ գրությունը (01.03.1988 թ.) ստորագրել էր ՀԽՍՀ ՊԱԿ-ի նախագահ Մ. Ա. Յուզբաշյանը, որը կոչվում է «Իրավիճակը սփյուռքում՝ կապված Լեռնային Ղարաբաղի հարցի հետ»[252]: Նման գործերը, զեկուցագրերը պահվում են Հայաստանի ազգային արխիվի հատուկ գաղտնի թղթապանակներում, որոնք կոչվում են «ՀԽՍՀ ՊԱԿ-ի հատուկ հաղորդագրությունները հանրապետության հասարակական և արտասահմանի հայ համայնքներում քաղաքական իրավիճակի մասին՝ կապված Ղարաբաղյան շարժման, բնապահպանական պրոբլեմների հետ» և բաղկացած են ութ հատորից: Այդ իմաստով հետաքրքիր է ներկայացնել Մ. Ա. Յուզբաշյանի՝ ՀԿԿ կենտկոմ ուղարկված մեկ այլ զեկուցագիր, որը կոչվում էր «Արևմուտքի արձագանքները Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին»՝ նույնպես ստորագրված 1988 թ. մարտի 1-ին: Նրանում ասվում էր, որ ստացված տվյալների համաձայն՝ հակառակորդը, առաջին հերթին ԱՄՆ վարչական համակարգը և հատուկ ծառայությունները փնտրում էին Խորհրդային Միության դեմ գաղափարական աշխատանքի նոր մեթոդներ և ձևեր, որոնք ԱՄՆ ընդհանուր հակախորհրդային ռազմավարության ծրա-

[252] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 12, թ. 90:

գրի սոսկ մի մասն էին և կոչված էին արժեզրկելու լենինյան ազգային քաղաքականությունը և քանդելու Խորհրդային Միությունը ներսից:

Ամերիկյան փորձագետները, վերլուծելով Մ. Ս. Գորբաչովի հայտնի ուղերձը՝ կապված Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների հետ և ուղղված Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին ու ժողովուրդներին, նշում էին, որ ԽՄԿԿ-ն և խորհրդային իշխանությունները լրջորեն մտահոգված էին ԽՍՀՄ-ում ազգայնական միտումների ուժեղացմամբ: Այդ առթիվ արևմուտքի հակախորհրդային շրջանները ենթադրում էին, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված մթնոլորտի առողջացումը կհանգեցներ խորհրդային իշխանությունների կողմից ընդհանրապես երկրում ազգային խնդրի լուծմանը, ինչն էլ կզրկեր ամերիկյան հատուկ ծառայություններին իրականացնելու Խորհրդային Միության դեմ հարձակումները և այլն:

Զեկուցագրում միաժամանակ նշվում էր, որ փոփոխվող պայմաններում հակառակորդը կտրուկ ակտիվացրել է հակախորհրդային քայքայիչ քարոզչությունը, ամերիկյան համապատասխան մարմինները հանձնարարել են հատկապես «Ամերիկայի ձայն», «Ազատություն» և «Ազատ Եվրոպա» ռադիոկայաններին ավելացնել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հաղորդումները, ցույց տալ հայ-ադրբեջանական հարաբերությունների լարվածությունը: Միաժամանակ ընդգծվում էր, որ գաղափարական հարձակումների կենտրոնում պետք է լինեն այնպիսի թեմաներ, որոնք վերաբերում էին Երևանում, Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակին, որի համար էլ կապեր պետք է հաստատվեին նաև հայ այլախոհների հետ՝ հատկապես առանձնացնելով Պարույր Հայրիկյանին, որը, ըստ ամերիկյան ռադիոհաղորդումների, այլախոհ էր: Ամերիկյան ռադիոհաղորդումներում նաև նշվում էր այն մասին, որ խորհրդային իշխանությունները նախապատրաստվում էին ռազմական մեթոդներով ճնշել Լեռնային Ղարաբաղում և Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող բողոքի ակցիաները[253]:

[253] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 12, թ. 23-24:

Հանրապետության անվտանգության մարմինների նման գնահատականները բխում էին Արևմուտքի նկատմամբ խորհրդային երկրի ընդհանուր դիրքորոշումից: Վերը նշված օրինակը դրա լավագույն օրինակներից է: Խորհրդային Միությունը Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ նրանց գնահատականներում չէր մեղանչում արդարության առաջ, պետք է ասել, որ ավելի շատ իշխում էր ճշմարտությունը: Այլ բան է, որ հատկապես ԱՄՆ-ն Խորհրդային Միությունում ստեղծված նոր մթնոլորտը, առավել ևս ազգամիջյան հարաբերություններում առաջացած հակասությունները, խնդիրները ցանկանում էր օգտագործել իր քաղաքական շահերի համար և հակախորհրդային քարոզչության ընթացքում ավելի մեծ չափերով էր ցույց տալիս Խորհրդային Միության արատները, նրա բացերն ու թույլ, խոցելի կողմերը, հատկապես մարդու իրավունքների, ազգամիջյան հարաբերությունների և այլ բնագավառներում առկա թերությունները: Իհարկե, կային նաև այլ օրինակներ, որոնց ծանոթանալով՝ ավելի ենք համոզվում, թե որքան աշխատանքներ էին կատարում խորհրդային, այդ թվում նաև Խորհրդային Հայաստանի անվտանգության մարմինները արտասահմանում ապրող հայերի շրջանում, որ նրանք Արցախյան շարժման խնդիրներին նվիրված իրենց հանրահավաքները, շքերթներն անցկացնեն այնպիսի բովանդակությամբ, որ պաշտպանվի Խորհրդային Միություն կոմունիստական կուսակցության վարած քաղաքականությունը, և նույնիսկ պաշտպանվի ԽՍԿԿ քաղբյուրոյի 1988 թ. փետրվարի 21-ի հայտնի որոշումը: Դրա լավագույն օրինակը Ֆեդերատիվ Գերմանիայում ապրող հայ համայնքի 1988 թ. մարտին ընդունած որոշումն էր:

1988 թ. մարտի 5-ին Հանրապետության անվտանգության մարմինների կոմիտեի նախագահ Մ. Յուզբաշյանը ՀԿԿ կենտկոմ ուղարկած հերթական զեկուցագրում գրում է ԳՖՀ-ում գործող հայ համայնքի կողմից կազմակերպված հանրահավաքի մասին: ԳՖՀ-ում հայկական գաղութի բոլոր ուժերը մերժել են ֆրանսահայերի՝ հանրահավաքներով հանդես գալու կոչերը՝ պաշտպանելով Լեռնային

Ղարաբաղը Հայաստանին միավորելու պահանջը: Նման պահանջը նրանք համարում էին անընդունելի: Դրա համար էլ դեռևս 1988 թ. փետրվարի 26-ին Քյոլնում տեղի էր ունեցել հայկական եկեղեցու վարչության ժողովը, որին մասնակցում էին հայ գաղութի բոլոր ուժերը: Ընդունվել էր որոշում ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին ուղարկել նամակ և խնդրել Լեռնային Ղարաբաղի խնդիրը լուծել ազգային քաղաքականության ոգուն հակառակ՝ դա դիտելով որպես ավելի զուսպ ու հավասարակշռված մոտեցում:

Մեկնաբանելով վերոհիշյալ որոշումը՝ Խորհրդային Հայաստանի անվտանգության մարմինները նշում էին, որ այդ փաստը պետք է օգտագործել սփյուռքի հայության շրջանում հոդվածների, հրատարակումների և ռադիոհաղորդումների միջոցով՝ որպես Լեռնային Ղարաբաղի հարցում ԳՖՀ հայ համայնքի զսպվածության և շրջահայացության դրսևորում[254]:

Շարունակելով նույն ոճով աշխատանքը՝ հանրապետության անվտանգության մարմինները նշում էին, որ ԱՄՆ հատուկ մարմինները և ընդհանրապես արտասահմանյան հակախորհրդային գաղափարախոսական կենտրոնները փորձում էին ակտիվացնել ԽՍՀՄ-ի դեմ իրենց քայքայիչ գործունեությունը՝ օգտագործելով Լեռնային Ղարաբաղի հարցը: Նշվում էր, որ որոշակի փուլում հակառակորդը ինչ որ չափով ապակողմնորոշվել էր՝ չունենալով Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հուսալի տեղեկատվություն, մանավանդ այդ օրերին Հայաստանում չկային արևմտյան թղթակիցներ: Հետաքրքիր է նաև ասել, որ այդ զեկուցագրում հայտնվում էր, որ Դաշնակցությունը և Կիլիկիայի կաթողիկոսությունն այդ հարցում դրսևորել էին չեզոք դիրքորոշում:

Ելնելով վերը շարադրվածից՝ հարկ է ասել, որ հանրապետության անվտանգության մարմինները երբեմն այլ կերպ էին ներկայացնում ԱՄՆ-ի, արտասահմանյան տարբեր երկրների մեկնաբանությունները՝ կապված Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ ծավալ-

[254] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 12, թ. 94:

վող հարցի հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդային Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում և այլուր հանրահավաքները ավելի շատ կրում էին խաղաղ բնույթ:

1988թ. մարտի 9-ին ՀԿԿ կենտկոմ ուղարկած իր զեկուցագրում, որը կոչվում է «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հակառակորդի հակախորհրդային քայքայիչ գործունեության նոր պահերի մասին», ՊԱԿ նախագահ Մ. Յուզբաշյանը նշում էր ՀԽՍՀ-ում, Լեռնային Ղարաբաղում, Մերձբալթիկայում խաղաղ հանրահավաքների ժամանակ հակախորհրդային կարգախոսների բացակայության մասին, ինչը ստիպել էր ԱՄՆ-ի և Արևմուտքի հատուկ ծառայություններին Լեռնային Ղարաբաղի հարցը դիտել որպես Խորհրդային Միության ներքին գործ: Վերջին հաշվով այդ ամենը կապված էր մարդու իրավունքների հետ, ուստի Արևմուտքն ամեն ինչ անում էր, որ Խորհրդային Միությունում սկսված ազգամիջյան շարժումները ներկայացվեն որպես հակախորհրդային՝ դրանով Խորհրդային Միությունում հրահրելով ազգամիջյան հակամարտություններ և ընդհարումներ: Նաև ԱՄՆ-ի «Ազատություն», «Ազատ Եվրոպա» ռադիոկայանները օր օրի ավելացնում էին այնպիսի հակախորհրդային հաղորդումներ, որոնց հետևանքով կարող էին ավելի սրվել հակասությունները քրիստոնյաների և մուսուլմանների միջև՝ օրինակ բերելով քրիստոնեական Հայաստանը և մուսուլմանական Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղը և այնտեղ ապրող քրիստոնյա հայերին ու մուսուլման ադրբեջանցիներին: Այդ լուրերի, հաղորդումների՝ ԱՄՆ-ի համար տպավորիչ լինելու համար համապատասխան մարմինները ձգտում էին հավաքել բավականաչափ և լրացուցիչ տվյալներ: Նաև պետք է ասել, որ Արևմուտքը ընդհանրապես ազգամիջյան հարաբերությունների հարցն ավելի լայն առումով էր քննարկում և այն ներկայացնում որպես Խորհրդային Միություն ամենակարևոր հարցերից մեկը, որի բացահայտմանն էլ ուղղված էին ամերիկյան հայտնի և եվրոպական բազմաթիվ, անգամ որոշ ռադիոկայանների («Ազատություն», «Ազատ Եվրոպա», «Ամերիկայի ձայն», «Բի-Բի-Սի») հաղորդումները: Հակառակորդը գլխավոր շեշտադրումներից մեկը նաև

համարում էր ԽՍՀՄ-ում «հրապարակայնություն բացակայությունը»[255]:

Սփյուռքի հայ համայնքի և ընդհանրապես արտասահմանյան երկրների դիրքորոշումը Արցախյան շարժման նկատմամբ նշանակում է, որ Արևմուտքը անտարբեր չէր Խորհրդային Միությունում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ:

Ներկայացնելով աշխարհի բազմաթիվ երկրների մոտեցումները, արձագանքները Լեռնային Ղարաբաղում և Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին՝ կրկին համոզվում ենք, որ այդ դժվարին պահին հայ ժողովրդի տարբեր հատվածները, տարբեր ուժերը ընդհանուր առմամբ անտարբեր չէին իրենց ճակատագրի հանդեպ և իրենցից կախված ամեն ինչ անում էին՝ պաշտպանելու հայ ժողովրդի, արցախցիների արդար պայքարը՝ կազմակերպելով հանրահավաքներ, կոչ անելով Արցախի հարցը լուծել պատմական ճշմարտության դիրքերից: Հետաքրքիր են նաև արտասահմանյան երկրներում որոշակի դիրքի հասած, հասարակական ճանաչում ստացած հայ անվանի գործիչների նույնքան ակտիվ արձագանքները Լեռնային Ղարաբաղի հարցում: Դրանց շարքում ցանկանում ենք հատկապես նշել աշխարհահռչակ երգիչ, վառ անհատականություն, մեծ հայրենասեր Շառլ Ազնավուրին, հասարակական, պետական գործիչ, ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգապետ Ջորջ Դոքմեջյանին, Քըրք Քրքորյանին, Էռնեկյանին և ուրիշների:

Կալիֆոռնիայի նահանգապետ Ջորջ Դոքմաջյանը 1988 թ. մարտի 25-ին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին հատուկ հեռագիր էր հղել, որում ասվում էր. «Ես կատարում եմ մի անսովոր քայլ՝ ուղղակի Ձեզ գրելով, արտահայտելու այն խորը հիասթափությունը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության և քաղբյուրոյի որոշմամբ, չհետապնդելու անաչառ մի վճիռ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի, հայ ժողովրդի հանդեպ կատարած անարդարությունը վերացնելու հարցում: Այդ որոշումը, կյանքի և աշ-

[255] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 12, թ. 96-97:

խատանքի ավելի լավ պայմաններ զարգացնելու և հնարավորին չափ բարելավված, մշակութային կապեր հաստատելու դրական տարրեր պարունակելով հանդերձ, Ղարաբաղի և հայկական հանրապետության միջև, վերջնական լուծում չէր: Պիտի հուսայի, որ առաջիկա մի քանի շաբաթում գործի էությունը ճանաչելով՝ Դուք կարելի գտնեք լրիվ ուղղել հայերը հայերից արհեստական կերպով բաժանելը: Ղարաբաղի և հայկական հանրապետության քաղաքացիները խաղաղ և օրինավոր ձևով ցույց տվեցին վերամիավորման իրենց բուռն փափագը: Նրանք Սովետական Միության մեջ պաշտպանեցին հրապարակայնության և վերակառուցման Ձեր առաջ քաշած իրավունքները, իսկ համայն աշխարհի հայերը միացան Ձեր կոչին և պայքարեցին արդարության և բարեփոխումների համար: Ադրբեջանական հանրապետության մեջ հայերի ապահովությունը պահպանելու կոչված Ձեր միջոցառումները հազարավոր կյանքեր փրկեցին: Ես ողջունում եմ Ձեր հրահանգը դատական կարգով խիստ հետապնդելու հայերի հանդեպ բռնությունների պատասխանատուներին և վերահաստատելու հանրային կարգ ու կանոնը: Դուք արդեն իսկ այդ հարցում ցուցաբերեցիք Ձեր անձնական վրդովմունքը և շահագրգռվածությունը՝ մի շարք աննախընթաց քայլերի դիմելով:

Ես Ձեզ կոչ եմ անում հետևողական ուշադրություն նվիրել ազգային քաղաքականության զարգացման հարցին, որը գոհացուցիչ կերպով պիտի լուծի այս վաղեմի անարդարությունը:

Անկեղծորեն Ջորջ Դոքմեջյան: Կալիֆոռնիայի նահանգապետ: Պատճենը Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին»[256]:

Թվում է՝ ամեն ինչ ասված է: «Վերակառուցման հեղինակ» Մ. Ս. Գորբաչովին հարգարժան Ջ. Դոքմեջյանը կարծես թե դաս էր տալիս՝ ելնելով նրա իսկ հռչակած վերակառուցման սկզբունքներից, միաժամանակ առաջարկելով ուղղել հայերը հայերից արհեստական կերպով բաժանելը, քանզի Ղարաբաղի և հայկական հանրապետության քաղաքացիները խաղաղ և օրինավոր ձևով ցույց տվեցին վե-

[256] ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 24, թ. 2:

ռամիավորման իրենց փափագը: Նա նաև նշում էր, որ հայ ժողովուրդը պաշտպանեց «Վերակառուցման» քաղաքականությունը, որին միացան համայն աշխարհի հայերը: Իսկ այդ փաստը լավագույն օրինակն է այն հետևության, որ Արցախյան շարժման օրերին սփյուռքահայությունը սատար կանգնեց հայ ժողովրդի արդար պայքարին մինչ Արցախը մայր հայրենիքին միավորելը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
1990 Թ. ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. 1991 Թ. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

1990-1991 թվականները առանձնահատուկ էին հայ ժողովրդի կյանքում: Հայ ժողովրդի երկու հատվածները՝ Խորհրդային Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը, ձեռք բերեցին այնքան երազած և այդքան սպասված անկախությունը: Դա տարիների պայքար էր, որն ավելի ակտիվացավ 1990-1991 թվականներին: Այդ տարիների նախորդած ժամանակաշրջանում՝ 1988-1989 թթ., անկախ խորհրդային իշխանությունների ձեռնարկած քայլերին, Արցախյան շարժումը նոր թափ ստացավ: «Ղարաբաղ» կոմիտեի պայքարը էլ ավելի ակտիվացավ, երբ 1989 թ. մայիսին բանտից ազատվեցին կոմիտեի անդամները: Համաժողովրդական շարժումն ընդլայնվեց, որը նաև նշենք, որ չէր մարել ողջ 1988-1989 թվականներին: Իսկ կոմիտեի անդամների հեղինակությունն ավելի բարձրացավ: Նրանք վայելում էին ժողովրդի վստահությունը, որը պայմանավորված էր այն հանգամանքով, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալության ընթացքում ոչ պակաս չափով ակտիվորեն գործում էին հանրապետության գրեթե բոլոր կոլեկտիվներում ձևավորված «Ղարաբաղ» ենթակոմիտեները, որոնք ժողովրդի քաղաքական ակտիվությունը պահպանում էին անհրաժեշտ բարձրության վրա: Իսկ դա դրսևորվում էր նրանով, որ տարբեր կարգի ճնշումներ էին գործադրվում թե՛ Միության և թե՛ հանրապետության իշխանությունների վրա՝ պահանջելով ոչ միայն ազատել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին, այլ նաև իրենք կազմակերպում էին հանրահավաքներ, կոլեկտիվների ժողովներ, ընդունում «Ղարաբաղ» կոմիտեի սկզբունքներից բխող որոշումներ: Ի դեպ, «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ձերբակալելուց հետո շարժումն իրենց վրա վերցրին շարժման գաղափարներին մոտ կանգնած երիտասարդ սերնդի ներկայացուցիչները՝ Ավետիք Իշխա-

նյանը, Դավիթ Շահնազարյանը, Արշակ Սադոյանը, Երջանիկ Աբգարյանը, Ալբերտ Բաղդասարյանը, Սմբատ Հակոբյանը և ուրիշներ, որոնք էլ, բացի այլ հարցերից, պահանջում էին ազատ արձակել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին[257]: Եվ իրոք պատահական չէր, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ազատ արձակվելուց հետո շարժումը բորբոքվեց նոր ուժով, առավել ևս, երբ տարբեր կոլեկտիվներում հանդիպումներ էին կազմակերպում «Ղարաբաղ» կոմիտեի անդամների հետ: Նման հանդիպում կազմակերպվեց նաև Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում, որը լեփ-լեցուն էր թե՛ ուսանողներով և թե՛ դասախոսներով և շատ ու շատ այլ ներկայացուցիչներով: Դա նորից համաժողովրդական հավաք էր: Առանց չափազանցության կոմիտեի անդամները հերոսացվել էին, դարձել անհատականություններ, մանավանդ, որ նրա բոլոր անդամները համալսարանականներ էին, համալսարանի դասախոսներ կամ շրջանավարտներ՝ Լևոն Տեր Պետրոսյան, Վազգեն Մանուկյան, Ռաֆայել Ղազարյան, Վանո Սիրադեղյան, Աշոտ Մանուչարյան, Համբարձում Գալստյան, Ալեքսան Հակոբյան, Դավիթ Վարդանյան, Բաբկեն Արարքցյան, Սամվել Գևորգյան, Սամսոն Ղազարյան և ուրիշներ: Նրանցից շատերն իրենց ելույթներում նշում էին, որ ձերբակալության ընթացքում չեն վիատվել և շատ լավ գիտակցել ու համոզված են եղել, որ կան իրենց գործի շարունակողներ, և նոր ուժով միասին պետք է պայքարեն անկախության և ազատության համար՝ հիմք ընդունելով շարժման կարգախոսը՝ «Պայքա՛ր, պայքա՛ր մինչև վերջ»[258]: Նոր պայմաններում պայքարի շարունակման համար անհրաժեշտ էր նախ ունենալ ծրագիր, այն դնել համաժողովրդական քննարկման և ավելի գործնական քայլեր անել սահմանադրական ճանապարհով իշխանության գալու համար: Ուստի այդ պահից «Ղարաբաղ» կոմիտեի գլխավոր խնդիրներից մեկը ծրագրի մշա-

[257] Տե՛ս «Ազդակ», Անկախութեան տասնամեակ 1991-2001, Ուրբաթ, 21 սեպտեմբեր, 2001, Սուրիա, էջ 6-7:

[258] Տողերիս հեղինակը նույնպես մասնակցել է այդ հանդիպմանը որպես համալսարանի դասախոս և ականատես եղել այն խանդավառությանը, որը տիրում էր ողջ դահլիճում:

կումն էր, զգայական պայքարը Թատերական հրապարակից կոլեկտիվներ տեղափոխելն էր, որոնք պետք է քննարկեին արդեն «Հայոց համազգային շարժման» (ՀՀՇ) ծրագիրը, անեին իրենց առաջարկները, դիտողությունները՝ այն ավելի բարելավելու և բոլորի համար ընդունելի դարձնելու համար: Ծրագրի համաժողովրդական քննարկումները հետապնդում էր նաև մեկ այլ նպատակ, օր օրի ավելացնել ՀՀՇ-ի շարքերը, ընդ որում՝ առավելապես մտավորականներով, ավելի կիրթ և պատրաստված անձանցով: Իսկ այդ հանգամանքը պայմանավորված էր այն գործոնով, թե ինչպիսի ծրագրով կարող էր նոր ձևավորվող ՀՀՇ-ն իր կողմը գրավել Խորհրդային Հայաստանի աշխատավորներին: Շարժման ընթացքում, եթե ոչ բոլորը, գոնե բավական գերակշռող մասը դուրս էր եկել կոմունիստական գաղափարական սխեմաներից, դոգմաներից և առավել ևս արդեն չէր ենթարկվում ո՛չ ԽՄԿԿ քաղբյուրոյի, ո՛չ ԽՄԿԿ կենտկոմի, ո՛չ էլ Հայաստանի կոմունիստական կուսակցության հրահանգներին, քանզի ազատության շունչը համակել էր գրեթե բոլորին: Անշուշտ, դա վճռական ժամանակաշրջան էր, որը պահանջում էր ուժերի մեծ լարում, մեծ համախմբվածություն և հետևողականություն՝ հասնելու ցանկալի նպատակին, ինչն էլ շատ հմտորեն օգտագործեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները՝ 1989 թ. նոյեմբերի 4-7-ը հրավիրելով ՀՀՇ առաջին համագումարը: Անկախ այն գնահատականներից, որոնք տրվել և տրվում են ՀՀՇ-ին, նրա գործունեությանը և ծրագրին, միևնույն է, «Ղարաբաղ» կոմիտեի անդամները վճռական էին իրենց ընտրած մարտավարությունում և օգտագործելով բազմաթիվ անգամ ասված ժողովրդի վստահությունը՝ շարունակեցին իրենց պայքարը՝ զուգակցելով ամենօրյա հանրահավաքները և ՀԽՍՀ Գերագույն խորհրդում մասնակի ընտրություններում կոմիտեականներ ունենալու փաստը: Նրանց թվում էին Լևոն Տեր-Պետրոսյանը, Աշոտ Մանուչարյանը, Համբարձում Գալստյանը, Խաչիկ Ստամբոլցյանը: Վերջիններս ամբիոնն օգտագործում էին՝ իրենց համակրողների թիվն էլ ավելի ավելացնելու համար: Եվ կարծես ժամանակը նրանց օգտին էր աշխատում: Գնահատելով ՀՀՇ-ի, «Ղարաբաղ» կոմիտեի գործունեության

այդ շրջանը՝ հայ անվանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, որն անտարբեր չէր հանրապետությունում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, խոսելով «Ղարաբաղ» կոմիտեի մասին, ասել է, որ դրանք «երևանյան միտինգների ընթացքում ժողովրդական տարերքի թելադրանքով կյանքի կոչված ու կազմակերպված բջիջներ էին, որոնք էլ իրենց հերթին կազմակերպեցին, հունի մեջ գցեցին այդ տարերքը»: Սկսվեց իրար սնող, իրար վրա ազդող փոխադարձ կապ, որի շնորհիվ բոլոր օրերի ընթացքում, չնայած բազմահազար կուտակմանը, Երևանում չեղավ ոչ մի անկարգ դեպք, չկոտրվեց ոչ մի ծառ, չարտասանվեց ոչ մի գռեհիկ խոսք, չարձանագրվեց հասարակական կարգի որևէ խախտում: Այդ կոմիտեները վերակառուցման ժամանակներում այնքան շատ հոլովվող նոր մտածողության, զանգվածների սոցիալական ակտիվության արտահայտություն էին, ու թեև ժողովրդավարացմանը և հրապարակայնությանը, հակադրվող ուժերը վարկաբեկեցին և պաշտոնապես լուծարքի ենթարկեցին դրանց, միևնույն է, այդ կոմիտեները կհամարվեն ժողովրդավարության նորագույն օրինակներ, կթողնեն իրենց հետքը հասարակության մեջ, կշարունակեն իրենց՝ մարդկանց հոգեբանությունը վերափոխող ներգործությունը և այլն[259]: Այս ամենը նշանակում էր, որ հանրապետության բոլոր ուժերը պետք է միավորվեին: Խոսելով այդ հարցերի մասին՝ «Հայ դատ» կազմակերպության նախագահ Հովիկ Վասիլյանը հանրապետության հասարակական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերը ընդհանուր առմամբ դրական է համարել, քանի որ իրարից անկախ, իրարից անջատ և երբեմն իրարամերժ զանազան խմբավորումների առաջացման և կայացման փուլը, որը կարելի է համարել որպես առաջին փուլ, մոտենում էր ավարտին: Նշմարվում էին երկրորդ փուլի ուրվագծերը և տարատեսակ խմբավորումները մեկ հունի մեջ միավորելու ու մեկ ընդհանուր

[259] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 23, թ. 11-12: «Արցախյան շարժում» թղթապանակ, «Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի բաց նամակը Ա. Ս. Ավերինցևին, Վ. Վ. Իվանովին, Վ. Ա. Կավերինին, Մ. Ա. Ուլյանովին և այլոց՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու հարցի մասին», հայերեն, ռուսերեն, բաղկացած է 48 թերթից:

նպատակի ուղղելու ձգտումը: Առաջին նման ձեռնարկումը մեր մտավորականների ազգային ճակատ ստեղծելու փորձն էր, որը արձագանք չունեցավ: Երկրորդը «Ղարաբաղ» կոմիտեի նախաձեռնությունն էր՝ «Հայկական համազգային շարժում» անվանմամբ: Երրորդը գիտական մտավորականության ձեռնարկած վերակառուցմանը սատարող ժողովրդական ճակատն էր: Երեք թվարկված նախաձեռնություններն էլ՝ թե՛ ազգայինը, թե՛ համազգայինը և թե՛ ժողովրդականը, հավակնում էին արտահայտելու բոլորի կարծիքը և առաջարկում էին պատրաստել ծրագրեր: Ելնելով այդ ամենից՝ Հ. Վասիլյանն առաջարկում էր բոլոր շարժումները միավորել և ընդունել մեկ միասնական շարժման ծրագիր ու կանոնադրություն: Հենց այդպիսի քայլ կատարեց «Հայոց համազգային շարժումը», մանավանդ երբ 1989 թ. հունիսի 25-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունել էր որոշում «Հայոց համազգային շարժումը» ճանաչելու որպես հասարակական կազմակերպություն: Իսկ Հայաստանի կոմկուսի կենտկոմի որոշմամբ թույլատրվել էր ՀՀՇ-ին հրատարակել «Հայք» թերթը (շաբաթական մեկ համար)[260]:

Նախքան ծրագիրը կազմելը և համաժողովրդական քննարկման դնելը կոմիտեի անդամները հանրահավաքներին զուգահեռ տեղական «Ղարաբաղ» կոմիտեների միջոցով ներկայացնում էին նաև կուսակցության ծրագրի դրույթները, ցույց տալիս պայքարի այն ուղին, որն անցել էր «Ղարաբաղ» կոմիտեն՝ անկախ արգելքներից, դժվարություններից վաստակելով լայն հասարակայնության վստահությունը: Նախապատրաստվող փաստաթուղթի ավելի հիմնավորված լինելու համար նրանում ասվում էր այն մասին,, որ հայ ժողովուրդը պատմական տվյալ ժամանակաշրջանում անդամակցել էր ժողովուրդների մի դաշնակցության, որը հռչակվել է որպես սովերեն հանրապետությունների կամավոր միություն՝ հիմնված ազգերի ինքնորոշման իրավունքի և սկզբունքի վրա: Նման դեպքում Միության կենտրոնական իշխանությունը պարտավորված էր իր ներքին և ար-

[260] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 83, գ. 79, թ. 13:

տաքին քաղաքականության մեջ արտահայտելու և պաշտպանելու բազմազգ պետության բոլոր ազգերի և հանրապետությունների իրավունքները:

Բնական է, որ նման հարցադրումից հետո պետք է հիմնավորվեր Ղարաբաղյան շարժման արդարացի լինելը, որի իրավունքները ոտնահարվել էին դեռևս 1921 թվականին: Նշելով այդ ամենը՝ նաև ասվում է, որ 1980-ական թթ. ավարտին սկսվեց Ղարաբաղյան շարժումը՝ նպատակ ունենալով Արցախի և Հայաստանի վերամիավորումը, ներառելով հայ ժողովրդի ճակատագրին առնչվող բոլոր գլխավոր հարցերը, որոնց լուծման համար անհրաժեշտ էր ժողովրդի զարթոնքը, նրա բոլոր ուժերի համախմբումը: Ուստի Արցախի հարցը դարձավ այն գաղափարական հիմքը, որի շուրջ հայ ժողովուրդն էլ ավելի համախմբվեց, իսկ շարժումը դարձավ էլ ավելի համազգային թե՛ մասնակիցների թվով և թե՛ առաջ քաշած խնդիրներով: Նրանում, փաստորեն, բնութագրվում էին շարժման հիմնարար սկզբունքները, մոտակա նպատակները, ծրագրային հիմնադրույթները և այլն: Եվ քանի որ թվարկված խնդիրները անչափ կենսական էին, ուստի այն չէր կարող լուծվել, եթե առկա չէր ժողովրդի զարթոնքը, եթե նրա բոլոր ուժերը չէին համախմբվել, եթե չկար մի գաղափար, որի շուրջ ժողովուրդը կարող էր համախմբվել: Բնական է, որ դա բազմիցս նշված մայր հայրենիքի հետ Արցախի վերամիավորման հարցն էր, որն էլ կարևորվում էր «Հայոց համազգային շարժման» ծրագրային փաստաթղթում: Նաև ճիշտ էր նկատվում, որ զարթոնք ապրող ազգն ավելի սուր ձևով է դնում ազգի միավորման գաղափարն ու պահանջը: Եվ քանի որ շարժման ծավալներն օր օրի ընդլայնվում էին, իսկ մարդկանց եղած խնդիրների լուծմանը մասնակցելու պատրաստակամությունը՝ մեծանում, բնական է, որ անհրաժեշտություն առաջացավ շարժմանը տալու կազմակերպչական ավելի հստակ ձև, որն էլ դարձավ «Հայոց համազգային շարժումը»: Նաև նշվում էր, որ «Հայոց համազգային շարժման» առաջացումը նորույթ էր Հայաստանի քաղաքական կյանքում, քանի որ այն ստեղծվում էր՝ ոչ թե հերթական փրկիչներին Հայաստան հրավիրելու համար կամ որպես հերթական

կուսակցության հայաստանյան բաժանմունք, ինտելեկտուալ ակումբ և ընդհատակյա խմբակ, այլ համազգային վերելքի հիման վրա որպես նոր շարժում: Ներկայացնելով «Հայոց համազգային շարժման» հիմնարար սկզբունքները՝ նշվում էր, որ ժողովուրդների պատմության մեջ արտաքին գործոնները միշտ էլ կարևոր դեր են խաղացել, բայց վտանգավոր է, երբ ժողովուրդն իր հաջողությունների կամ անհաջողությունների պատճառը միայն իրենից դուրս է փնտրում, քանի որ դա կազմալուծում է նրան և տանում ազգային ինքնավերացման: Ուստի ճիշտ էր նշվում, որ ժողովուրդն իր ազգային ծրագրերը իրագործելիս պետք է ապավինի իր ուժերին՝ հույս չդնելով ուրիշ հովանավորության վրա՝ միաժամանակ ընդգծելով, որ հայ ժողովրդի քայլերը պետք է համաչափ լինեն իր ուժերին և հնարավորություններին, որոնց բազմապատկումը «Հայոց համազգային շարժման» գլխավոր նպատակներից մեկն էր:

Ճիշտ էր նաև այն նկատառումը, որ հայ ժողովուրդը, ինչպես նաև նաև ամեն մի ազգ, լավագույն ձևով կարող է դրսևորել իր ունակություններն ու կարողությունները, ինչպես նաև նպաստել համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը, ապրել ազատ ժողովրդավարության պայմաններում, առանց արտաքին ճնշման, երբ ինքն է ինքնուրույն կերպով որոշում իր քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի հիմնահարցերը: Նաև ակնհայտ է, որ միայն այսպիսի պայմաններում է հնարավոր պահպանել յուրաքանչյուր անհատի ի ծնե տրված իրավունքները:

Հետաքրքիր է նաև ասել, որ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, ձեռնարկելով «Հայոց համազգային շարժման» կազմակերպության ստեղծումը, մինչև Հայաստանի և Արցախի վերամիավորում զուգահեռաբար, պահպանում էր նախկին «Ղարաբաղ» կոմիտեի անվանումը:

Խոսելով շարժման գաղափարական խնդիրների մասին՝ հատկապես կարևորվում էին այնպիսի հարցեր, ինչպիսիք են անհատի կյանքի ապահովությունը, անձնական ազատությունը, երջանկության ձգտումը և այլն: Իսկ ազգի գոյատևման կարևորագույն երաշ-

խիքը հայոց լեզուն է, որը, հաղորդակցության կարևոր միջոց լինելուց բացի, մտածելակերպ է, մշակույթ և քաղաքականություն[261]:

Ծրագրում նաև նշվում էր, որ հայ ժողովուրդը միշտ ազգային ծրագրերը իրագործելիս պետք է ապավիներ իր ուժերին, հույսը չդներ ուրիշի հովանավորության վրա: Ամեն մի հակառակ պնդում ժխտվում էր պատմական փորձով և ծառայում մեր ժողովրդին հոգեկան ստրկության մեջ պահելու գործին:

Ծրագրային դրույթներում նաև նշվում էր, որ «Հայոց համազգային շարժումը» ուղղված չէր որևէ ժողովրդի դեմ, քանի որ մեր սկզբունքն է խաղաղ և համերաշխ ապրել հարևան բոլոր ժողովուրդների հետ: Ընդ որում՝ այդ հարաբերությունները պետք է հիմնված լինեին արդարություն վրա և երբեք չպետք է ոտնահարեին ժողովրդի իրավունքները: Նաև կարևորվում էր բոլոր շարժումների հետ համերաշխության խնդիրը, մանավանդ այն շարժումների, որոնք հիմնված էին ինքնորոշման, ժողովրդավարության և սոցիալական արդարության սկզբունքների վրա, ինչն էլ նշանակում էր, որ «Հայոց համազգային շարժումը» մերժում էր ազգային խտրականությունը և ազգայնամոլության բոլոր կարգի դրսևորումները:

Ներկայացնելով «Հայոց համազգային շարժման» մոտակա նպատակները՝ ծրագրում նշվում էր, որ շարժման առաջնահերթ նպատակը եղել և մնում էր Արցախի և Հայաստանի վերամիավորումը: Կարևորելով անկախ պետականության ստեղծման հարցը՝ ծրագրում նշվում էր, որ ազգն ունի ինքնորոշվելու և իր ապագան ազատ տնօրինելու իրավունք, որի քաղաքական ձևը ազգային պետության ստեղծումն է, որը կոչված էր իրականացնելու նաև ժողովրդի հավաքական կամքը և քաղաքացիներին պաշտպանելու ներքին ու արտաքին ճնշումներից: Եվ քանի որ պետությունը նախևառաջ պատասխանատու է իր քաղաքացիների անվտանգության համար, ուստի կարևորվում է երկրի պաշտպանության հարցը, որն իրականացվում է պետության զինված ուժերի, անհրաժեշտության դեպքու՝մ աշխար-

[261] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 13, թ. 1, գ. 51, թ. 4, «Հայոց համազգային շարժման» ծրագիր, ՀՀՇ, Երևան, 1998, էջ 1-2:

հազորի կողմից՝ բացառելով ինքնուրույն զինված խմբերի գործունեությունը: Պետության կարևոր, թերևս գլխավոր ռազմավարական խնդիրը երկրի տնտեսության հզորացումն է: Ներկայացնելով նաև պետության քաղաքական կառույցները, կարևորվում էին այնպիսի հարցեր, ինչպիսիք էին ժողովրդավարությունը, իրավական պետությունը, քաղաքացիական հասարակությունը, շուկայական հարաբերությունները և այլն: Քաղաքացիական հասարակության հարցում հատկապես կարևորվում էին բազմակուսակցական համակարգի ստեղծումը, խոսքի, մամուլի, խղճի և այլ ազատությունները: Ճիշտ էր նաև ընդգծվում, որ ՀՀ տնտեսական համակարգի հիմնաքարը պետք է լիներ շուկայական, սոցիալական տնտեսությունը, որը ենթադրում էր սեփականության բոլոր ձևերի իրավահավասարություն, հավասար պաշտպանվածություն և ազատ մրցակցություն: Միաժամանակ ընդգծվում էր, որ մասնավոր սեփականությունը շուկայական սոցիալական տնտեսության հիմնական հատկանիշն է, քանի որ սեփականություն ունենալը քաղաքացուն ինքնուրույն որոշումներ ընդունելու հնարավորություն է տալիս, որով էլ ապահովում է նրա անձնական ազատությունը: Ուստի բոլոր քաղաքացիները պետք է ունենան սեփականության տարբեր ձևերի տիրապետման հնարավորություն[262]: Իհարկե, ծրագրում չէր կարող ուշադրություն չդարձվել այնպիսի խնդիրների վրա, ինչպիսիք գիտության, կրթության, լեզվի, մշակույթի զարգացման հարցերն էին: Կարևորվում էր նաև սփյուռքի հետ կապերի էլ ավելի ամրապնդումը, սփյուռքահայ կապիտալի հետ համագործակցությունը այլն:

Ներկայացնելով անցման շրջանի օրինաչափությունները, հաշվի առնելով սոցիալիզմից դեպի շուկայական տնտեսություն ընթացող երկրների փորձը՝ մտավախություն էր արտահայտվում այն առումով, որ անհրաժեշտ էր խուսափել երկու վտանգից՝ «նոմենկլատուրային կապիտալիզմից», որտեղ չինովնիկների իշխանությունը սրբագործվում էր պաշտոնական օրենքների հիման վրա գործող

[262] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 13, թ. 1, գ. 51, թ. 5-8, «Հայոց համազգային շարժման» ծրագիր, ՀՀՇ, Երևան 1998, էջ 3-7:

կոնցեռների «մասնավոր» սեփականության ուժով, և «մաֆիական մոնոպոլիզմից», որը ենթադրում էր պետական համակարգին սերտաճած մի քանի մենիշխան ընտանեկան կլանների անսահմանափակ իշխանություն: Կանխատեսելով այդ վտանգը՝ ծրագրում նշվում էր, որ անհրաժեշտ էր հատուկ և նպատակասլաց ջանքեր գործադրել՝ նոր բնականոն շուկայական հարաբերությունների սաղմերի ձևավորմանը նպաստելու և խրախուսելու համար: Այն խրախուսելու համար շուկայական սոցիալական տնտեսությանն անցնելու հիմնական միջոցը համարվում էր զանգվածային սեփականաշնորհումը, որն էլ պետք է ապահովեր ոչ միայն արտադրության միջոցների, այլև կառավարման մեխանիզմների ապամենաշնորհացումն ու մասնավորեցումը[263]: Առաջ անցնելով՝ ասենք, որ, այնուամենայնիվ, ՀՀԾ-ին չհաջողվեց լուծել այդ հարցերը, որոնք էլ, հետագայում այլ հանգամանքներով պայմանավորված, պետք է դառնային նրա շատ ձախողումների պատճառներից մեկը, քննադատության թիրախ և այլն: Բայց բոլոր դեպքերում ՀՀԾ-ն, վերոհիշյալ ծրագրի դրույթները ներկայացնելով հանրության դատին, ամեն ինչ անում էր, որպեսզի 1990 թ. մայիսին նախատեսված ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում հասներ հաղթանակի: Եվ եթե վերը ասածին ավելացնենք այն միտքը, որ եթե ՀՀԾ-ն բաց թողներ պահը, դժվար թե նորից նրա համար կստեղծվեին իշխանության գալու ավելի լավ պայմաններ, քան 1988-1990 թվականներն էին: Նման հնարավորություններն էլ ավելի նպաստեցին ՀՀԾ-ի գործունեության ակտիվացմանը: Ինչպես գրում է այդ օրերի մասին «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Բաբկեն Արարքցյանը, 1989 թ. «Հայոց համազգային շարժումը» խնդիր էր դրել ստեղծելու ազգային պետություն, լուծելու Ղարաբաղյան հիմնահարցը, հաստատելու ժողովրդական արժեքներ[264]:

---

[263] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 51, թ. 8, Հայոց համազգային շարժում (ՀՀԾ), Երևան, 1998, էջ 7:

[264] Տե՛ս **Արարքցյան Բ.,** ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ, Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանը, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ 1990-1995 թթ., Երևան, 1995, էջ 3:

Իշխանության համար պայքարն ավելի սուր դարձավ 1990 թ. մայիսին տեղի ունեցած ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում: Քաղաքական պայքարի թատերաբեմում երկու հիմնական ուժեր էին կանգնած՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և հայ ժողովրդի աջակցությունը վայելող, Արցախյան շարժման օրերին մեծ հեղինակություն ձեռք բերած «Ղարաբաղ» կոմիտեն և արդեն նրա վրա հիմնված «Հայոց համազգային շարժումը» (ՀՀՇ), որը նորություն էր խորհրդային հասարակության պատմության մեջ՝ ծնված գորբաչովյան «վերակառուցման» տարիներին: Այդ իմաստով հետաքրքիր էր Ռ. Անանիկյանի՝ 1990 թ. սկզբներին Մոսկվայում ռազմական հրատարակչությամբ 100 հազար տպաքանակով լույս տեսած «Խորհրդային Հայաստան» աշխատանքը, որում ասվում էր, որ նոր ձևավորվող կազմակերպությունների շարքում ամենազանգվածայինը «Հայոց համազգային շարժումն» էր (ՀՀՇ): Նրա խնդիրն էր, գործելով ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ սահմանադրությունների շրջանակներում, ղեկավարվելով ժողովրդավարության և սոցիալական արդարության սկզբունքներով, օժանդակել՝ իրականացնելու հայ ժողովրդի առջև կանգնած ազգային, սոցիալ-տնտեսական և հոգևոր խնդիրները, ինչպես նաև բավարարել հանրապետությունում ապրող այլ ազգերի և ազգությունների շահերը[265]: Մինչդեռ Հայաստանի կոմկուսը «Ղարաբաղ» կոմիտեի, ՀՀՇ-ի նկատմամբ ողջ գործունեության ընթացքում իրականացվող բազմաթիվ մերժողական, հետապնդող և արգելակող քայլերին զուգընթաց փորձում էր հակադրվել ազգային ուժերի հեղինակության աճին՝ իրականացնելով մի շարք ժողովրդահաճո միջոցառումներ, ընդունելով որոշումներ և այլն: Այդ նպատակով դեռևս 1988 թ. նոյեմբերին Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդը ընդունել էր Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրա-

---

[265] Տե՛ս **Ананикян Р.,** Советская Армения. Серия: Моя Родина-СССР, Москва, Военная издательство, 1990, с. 58: Քաղվածքը՝ «Армения: проблемы независимого развития» գրքի В. Г. Митяев-ի «Внутриполитические процессы в независимой Армении» (Москва, 1998, с. 73-74) հոդվածից:

կանացված ցեղասպանությունը դատապարտող օրենք և ապրիլի 24-ը համարել Եղեռնի զոհերի հիշատակի օր, իսկ մայիսի 28-ը՝ Հայաստանի Հանրապետության անկախ պետականության վերականգնման օր: Նույն ձևով Հայաստանի կոմկուսը ընդունել էր մայրենի՝ հայոց լեզվի բարելավման համակողմանի օգտագործման մասին օրենքի նախագիծ և դրել համաժողովրդական քննարկման, որտեղ նշվում էր, որ անհրաժեշտ է ընդունել օրենք, որը կապահովի հայոց լեզվի պարտադիր կիրառումը հանրապետության պետական և կուսակցական մարմիններում, հիմնարկ-ձեռնարկություններում, ինչպես նաև նպաստել նրա համակողմանի զարգացմանն ու լայն օգտագործմանը կյանքի բոլոր ոլորտներում: Այդ նույն որոշմամբ ռուսաց լեզուն առաջարկվում էր գործածել որպես ազգամիջյան հաղորդակցման լեզու, ինչպես նաև Հայաստանի սահմաններից դուրս պաշտոնական հիմնարկների և կազմակերպությունների հետ կապի միջոց: Սակայն, ինչպես գրում է Վ. Ի. Միտյաևը, հանրապետության կուսակցական ղեկավարության իշխանությունը իրենց ձեռքում պահպանելու բոլոր փորձերը արդյունավետ չէին: Բնակչությունը ավելի շատ օժանդակություն էր ցույց տալիս ազգային քաղաքական նոր ուժերին, առաջին հերթին՝ «Հայոց համազգային շարժմանը», քան Կոմունիստական կուսակցությանը:

Իսկ եթե հանրապետության իշխանությունների նկատմամբ բոլոր ընդդիմադիր ուժերին հավաքական կերպով ներկայացնենք որպես «Ազգային ընդդիմություն», ապա պետք է ասենք, որ ընդդիմադիրներ բոլոր ուժերն էլ իշխանություններին մեղադրում էին բյուրոկրատիզմի, բնակչության շահերի անտեսման, իրենց համար նյութական առավելությունների ստեղծման, կաշառակերության, անձնական հարստացման և այլնի մեջ: Կաշառակերության մեջ հատկապես մեղադրում էին հանրապետության Կոմկուսի ղեկավար Կարեն Դեմիրճյանին[266]: Իհարկե, դա մեծ մեղադրանք էր վերջինիս հասցեին և հաճախ հնչում էր հանրահավաքների ժամանակ, ընդ որում՝ ոչ

[266] Տե՛ս **Митяев В. Г.,** նշվ. հոդ., էջ 74:

միայն Կարեն Դեմիրճյանի, այլ նաև շատ ու շատ այլ ղեկավարների հասցեին առանց կոնկրետ փաստեր բերելու, որը երևի հնարավոր և անհրաժեշտ էլ չէր, երբ առավել ևս հարյուր հազարավորների առաջ ելույթ ունեցողների մոտ գերիշխում էին հույզերը, մանավանդ որ այդ երևույթը՝ կաշառակերությունը, ընդհանուր առմամբ դարձել էր ողջ երկրի, համակարգի անբաժանելի մասերից մեկը:

Հանրապետության ղեկավարությունը խոցելի կողմեր, բացթողումներ ուներ նաև բնապահպանության բնագավառում, որտեղ թերությունները բավական շատ էին: Պատահական չէր, որ հանրապետությունում հանրահավաքների, երթերի սկիզբը առնչվում էր բնապահպանական հարցերին: Եվ քանի որ Խորհրդային Հայաստանը համարվում էր նաև քիմիայի հանրապետություն, ուստի բնապահպանական, շրջակա միջավայրի մաքրության հարցերը բավական շատ էին, ինչն էլ օգտագործվում էր ընդդիմադիր ուժերի կողմից՝ ժողովրդին տրամադրելով իշխանությունների դեմ, պահանջելով փակել մի շարք գործարաններ: Հատկապես դա վերաբերում էր Խորհրդային Միությունում հայտնի «Նաիրիտ» գիտարտադրական միավորմանը, Կիրովականի քիմիական գործարանին, Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատին, Մեծամորի ատոմակայանին, Հրազդանի քիմիական կոմբինատին և բազմաթիվ այլ ձեռնարկություններին: Իսկ այն փաստը, որ «Մեծամորի» ատոմակայանը տալիս էր հանրապետության էլեկտրաէներգիայի 40 %-ը, խոսում էր այն մասին, որ այդ քայլով բավական տնտեսական վնաս կարող էր հասցվել հանրապետությանը, եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ Ադրբեջանը դադարեցրել էր գազի մատակարարումը Հայաստան, ստեղծել շրջափակում և այլ կարգի դժվարություններ: Սակայն պայքարի այդ պահին ՀՀՇ-ականներին այդ հարցերը չէին հուզում, որքան էլ որ հանրապետությունում օր օրի կազմալուծվում էին տնտեսությունը, փակվում գործարաններ՝ ավելացնելով գործազուրկների թիվը, որոնց զբաղմունքը ամենօրյա հանրահավաքներին կա՛մ հետևելն էր, կա՛մ որոշակի սպասումներով մասնակցելը:

Թվարկված և հանրապետությունում առկա այլ կարգի թերությունների, խնդիրների մասին հրապարակավ խոսելը մեծ դեր էր խաղում ժողովրդական զանգվածներին իշխանությունների դեմ տրամադրելու գործում, ինչն էլ զգալիորեն նպաստեց 1990 թ. մայիսին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում ՀՀԾ-ին հասնելու հաջողության, մանավանդ որ ընտրությունները ընթանում էին ՀՀԾ-ի և ժողովրդի աչքում արդեն բավական հեղինակազրկված Հայաստանի կոմունիստական կուսակցության միջև, որի շարքերը, ի դեպ, սկսել էին նոսրանալ, երբ անգամ հանրահավաքներում բավական շատ էին դառնում այն օրինակները, երբ շարքային շատ կոմունիստներ հրաժարվում էին կուսակցական տոմսերից, պատռում այն և անդամագրվում ՀՀԾ-ին: Ճիշտ է՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը դեռևս ուներ մեծ ռեզերվներ՝ ՀԿԿ կենտկոմ, կուսակցության քաղկոմներ, շրջկոմներ, պետական, վարչական համակարգ, տարբեր կարգի գերատեսչություններ, նախարարություններ, կառավարություն և այլն, որոնց միջոցով կարող էր ապահովել ընտրություններում ձայների մեծամասնությունը, չնայած մինչ ընտրությունները ժողովրդի ձայնը շահելու համար ընդունվել էին ազգապաստ որոշումներ և ձեռնարկվել որոշ քայլեր: 1990 թ. հունվարի 11-ին ընդունվել էր օրենք՝ կատարելու ՀԽՍՀ սահմանադրության 75-րդ հոդվածում փոփոխություններ, ըստ որի՝ ԽՍՀՄ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, որոնք վերաբերում էին Խորհրդային Հայաստանի շահերին, կարող էին գործել միայն ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հաստատումից հետո: Նույն ձևով 1990 թ. փետրվարի 13-ին ընդունվել էին «Հայկական ԽՍՀ-ի ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին» օրենք[267] և այլ կարգի որոշումներ, որոնք քայլեր էին՝ հակադրվելու կենտրոնին, ցույց տալու, որ արդեն Խորհրդային Հայաստանը մեխանիկորեն չէր ենթարկվում Մոսկվայի որոշումներին: Բայց այդ և նման կարգի այլ որոշումները որոշակի դեր չխաղացին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների արդ-

[267] Տե՛ս Армения: Проблемы независимости развития, Москва, 1998, с. 11:

յունքների վրա: Նման պայմաններում էլ 1990 թ. մայիսի 20-ին և հունիսի 3-ին տեղի ունեցան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները: Ավելի մեծ թվով կոմունիստներ դարձան պատգամավորներ, բայց դա չէր նշանակում, որ մեխանիկական այդ առավելությունը կապահովի կոմունիստների թեկնածու, Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Մովսիսյանին ընտրվելու ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ: Այստեղ մեծ դեր խաղացին նաև այն համաժողովրդական տրամադրությունները, որոնք իշխում էին հանրապետության Գերագույն խորհրդի պատերից դուրս: Դա առանց չափազանցության ինչ-որ վախի զգացում էր առաջացրել նրանց մեջ, որ կոմունիստների թեկնածուի անցնելու դեպքում հանրապետությունում կարող էին սկսվել անկարգություններ, ընդհարումներ և տեղի ունենալ հասարակության բևեռացում: Եվ ահա թե ինչ էր գրում Գերագույն խորհրդում ստեղծված լարված մթնոլորտի մասին «Խորհրդային Հայաստան» թերթը «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում» հոդվածում: Թերթը հռետորական հարց էր բարձրացնում՝ գրելով. «Ո՞վ կլինի հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմնի՝ Գերագույն խորհրդի նախագահը»: Նշված հարցը ժողովրդին սկսել էր մտահոգել ավելի շուտ՝ դեռևս նոր գումարման Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքներից շատ առաջ: Դա, իրավամբ, պայմանավորված էր քաղաքական նոր ուժերով ու շարժումներով, որոնք պետական իշխանության ղեկը ստանձնելու, հանրապետությունը ստեղծված ճգնաժամից դուրս բերելու լուրջ հայտ էին ներկայացրել: Հենց այդ շարժումների ներկայացուցիչներով էլ կոմունիստների հետ միասին կազմավորվեց Գերագույն խորհուրդը: Ուստի և միանգամայն օրինաչափ էր այն գերլարված մթնոլորտը, որի պայմաններում տեղի էր ունենում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունը[268]: Նման պայմաններում կոմունիստների թեկնածու Վլադիմիր Մովսիսյանը շատ լավ հասկանում էր, որ ժամանակը չի աշխատում իր օգ-

[268] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 7 օգոստոսի, 1990:

տին, որի ապացույցը ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահի ընտրության համար անցկացված ընտրությունների ընթացքն էր: Ընտրության համար առաջադրվել էին երկու թեկնածու՝ Վլադիմիր Մովսիսյանը և Լևոն Տեր-Պետրոսյանը, որոնցից ոչ մեկը, ինչպես այդ մասին գրում էր «Խորհրդային Հայաստան» թերթը, չստացավ անհրաժեշտ ձայն: Վլադիմիր Մովսիսյանի օգտին տրվել էր 93, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանի օգտին՝ 110 ձայն: Հետաքրքիր է, որ կրկնակի քվեարկությունը ևս թվերի հարաբերակցության մեջ փոփոխություն մտցրեց, բայց ոչ վերջնական: Վ. Մովսիսյանի օգտին տրվեց 83 ձայն, Լ. Տեր-Պետրոսյանի օգտին՝ 122 ձայն: Նույնիսկ կեսգիշերին Գերագույն խորհուրդը չդադարեցրեց իր աշխատանքը: Հարկ եղավ կազմել Գերագույն խորհրդի նախագահի թեկնածուների ևս մեկ ցուցակ, որը գրեթե նախորդի կրկնությունն էր: Դարձյալ թեկնածուներ առաջադրվեցին Լ. Տեր-Պետրոսյանը, Հ. Սիմոնյանը, Վ. Մանուկյանը, Վ. Մովսիսյանը, Ռ. Ղազարյանը, Պ. Հայրիկյանը: Հաջորդ օրվա՝ օգոստոսի 4-ի գիշերվա ժամը 3-ի մոտ պատգամավորները դժվարությամբ թողեցին նիստերի դահլիճը: Մի քանի ժամվա ընդմիջումից հետո՝ շաբաթ օրը՝ ժամը 14:00-ին, Գերագույն խորհուրդը նորից հավաքվեց նիստի՝ շարունակելու թեկնածուների քննարկումը: Նախագահողը հրապարակեց երեք թեկնածուների՝ Հրաչիկ Սիմոնյանի, Վազգեն Մանուկյանի և Ռաֆայել Ղազարյանի համատեղ հայտարարությունը ինքնաբացարկի մասին: Այսպիսով ցուցակում մնացին երեք թեկնածուներ՝ Լ. Տեր-Պետրոսյանը, Վ. Մովսիսյանը, Պ. Հայրիկյանը: Այդ կապակցությամբ արտահայտվեցին պատգամավորներ Վ. Սիրադեղյանը, Ռ. Հակոբյանը, Ջ. Անանյանը, Ա. Բլեյանը և ուրիշներ: Երբ ամփոփվեցին Գերագույն խորհրդի նահագահի պաշտոնի համար ընտրությունների արդյունքները, պարզվեց, որ փակ, գաղտնի քվեարկության արդյունքում երեք թեկնածուներից ոչ մեկը չէր ստացել անհրաժեշտ քանակի ձայն. Պ. Հայրիկյանի օգտին քվեարկել էր 8 մարդ, Վ. Մովսիսյանին ձայն էր տվել 81, իսկ Լ. Պետրոսյանին՝ 123 պատգամավոր:

Ըստ ընդունված կարգի՝ որոշվեց առավել շատ ձայներ ստացած երկու թեկնածուների՝ Վ. Մովսիսյանի և Լ. Տեր-Պետրոսյանի անունները մտցնել փակ գաղտնի քվեարկության ցուցակներում: Ստեղծված փակուղային իրավիճակը թելադրեց պատգամավորներին ավելի իրատեսորեն մոտենալ խորհրդարանում ուժերի հարաբերակցությանը, որը արտացոլում էր հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում տեղ գտած նոր երևույթները, ժողովրդավարական շարժումները: Նշվեց, որ «Հայոց համազգային շարժումը» դարձել էր ռեալ քաղաքական ուժ, որին ժողովուրդը վստահում էր, և նշված իրողության հետ Գերագույն խորհուրդը չէր կարող հաշվի չնստել: Եվ դա այդպես էր. «Հայոց համազգային շարժման» ղեկավարի օգտին տրվել էր ձայների մեծ մասը: Այդ մասին իրենց ելույթներում խոսեցին պատգամավորներ Վիգեն Խաչատրյանը, Ազատ Արշակյանը և ուրիշներ: Նոր փակ գաղտնի քվեարկությունը վճռեց ելքը: Ընդմիջումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Յ. Հարությունյանը հրապարակեց ընտրությունների արդյունքները: Վ. Մովսիսյանն ստացել էր 76, Լ. Տեր-Պետրոսյանը՝ 140 ձայն: Հաստատելով հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը՝ Գերագույն խորհուրդն ընդունեց որոշում՝ Լևոն Տեր-Պետրոսյանին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրելու մասին: Պատգամավորները, նրանց հետ նաև նիստերի դահլիճի մոտ հավաքված հոծ բազմությունը ջերմ ծափահարություններով և խանդավառությամբ ընդունեցին այդ իրողությունը՝ երգելով «Մեր հայրենիքը»:

Իր ելույթում Լևոն Տեր-Պետրոսյանը շնորհակալություն հայտնեց մեծ վստահության համար: Իսկ ելույթ ունեցողները՝ Ս. Մուրադյանը, Ի. Մուրադյանը, Վ. Սիրադեղյանը, Հ. Հասանյանը, Մ. Տեր-Գուլանյանը, Ա. Նահատակյանը, Կ. Յուզբաշյանը, Ա. Մանուկյանը, Վ. Մովսիսյանը և ուրիշներ, նոր նախագահի ընտրությունը բնութագրելով որպես իսկական ժողովրդավարության հաղթանակ, Լ. Տեր-Պետրոսյանին մաղթեցին բեղմնավոր, ազգօգուտ, հայրենանվեր աշխատանք հանրապետության պետական իշխանության բարձրա-

գույն իշխանության ղեկավարի պաշտոնում[269]: Այսպիսով՝ այդ օրերին համաժողովրդական շարժման ոգևորությունը հասել էր գագաթնակետին:

Շարժման ակտիվ մասնակիցներից «Ղարաբաղ» կոմիտեի անդամ, Լևոն Տեր-Պետրոսյանի հետ ճանապարհ անցած Բաբկեն Արարքցյանն այդ օրերի մասին ասում է. «Ազգային վերելքի պայմաններում տեղի ունեցած ընտրություններում, չնայած կոմունիստական վերնախավի ջանքերին և ամեն տեսակ հնչյուններին, քաղաքական իրադարձությունների հորձանուտում հայտնված Հայաստանի քաղաքացիները բազմաթիվ ընտրատարածքներում իրենց ձայնը տվեցին ժողովրդավարական ուժերի ներկայացուցիչներին: Ընտրությունների արդյունքում ստեղծվեց հասարակության մեջ իշխող տրամադրություններն արտացոլող, իր կազմով սկզբունքորեն նոր խորհրդարան, թեև շատ կողմերով դեռևս խորհրդային, որքանով Հայաստանը շարունակում էր մնալ ԽՍՀՄ կազմում, և գործում էր խորհրդային օրենսդրությունը»[270]:

Այսպիսով՝ սկսեց աշխատել նոր պայմաններում ընտրված Խորհրդային Հայաստանի առաջին գումարման Գերագույն խորհուրդը՝ բաղկացած 260 պատգամավորից: Ընտրությունները տեղի էին ունեցել մեծամասնական ընտրակարգով, ինչպես ասվեց, երկու փուլով՝ մայիսի 20-ին և հունիսի 3-ին: Նոր խորհրդարանը սկսեց գործել հուլիսի 28-ից, որտեղ ներկայացված էին երկու քաղաքական ուժեր՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և «Հայոց համազգային շարժումը»: Իսկ ընդհանուր առմամբ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցողների թիվը կազմում էր 2163967 մարդ, որոնցից քվեարկությանը մասնակցել էր 2056758 հոգի, որը կազմում էր քվեարկության իրավունք ունեցողների 95,05 տոկոսը: Քվեարկությանը «այո» էր ասել 2042627 հոգի կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը, որը կազմում

---

[269] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 7 օգոստոսի, 1990:

[270] **Արարքցյան Բ.,** Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանը, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1990-1995 թթ., Երևան, 1995, էջ 3-4:

էր քվեարկության մասնակիցների 99,31 տոկոսը, իսկ «ոչ» քվեարկածների թիվը կազմել էր 10002 հոգի կամ քվեարկության մասնակցողների 0,46 տոկոսը: Անվավեր էին ճանաչվել 4129 քվեաթերթիկներ կամ քվեարկման դրված թերթիկների 0,19 տոկոսը[271]:

Այսպիսով՝ հանրապետության նորընտիր Գերագույն խորհուրդը բաղկացած էր երկու քաղաքական ուժից՝ «Հայոց համազգային շարժումից» և Հայաստանի կոմունիստական կուսակցությունից և 6 պատգամավորական խմբերից՝ «Հանրապետություն», որը գործել է մինչև ՀՀՇ խմբակցության կազմավորվելը (1992 թ. փետրվար», «Արցախի կանչ» (1992 թվականից՝ «Արցախ»), «Ազգային ժողովրդավարներ», «ՀՅԴ», «Լիբերալ-դեմոկրատներ», «Ազգային առաջադիմություն»:

ՀԽՍՀ նորընտիր Գերագույն խորհրդում գործում էին նաև մի շարք մշտական հանձնաժողովներ (Մանդատային և էթիկայի հարցերի, Անկախ պետականության և ազգային քաղաքականության, Տեղական ինքնակառավարման, Իրավական, Մարդու իրավունքների և ազատությունների, Արտաքին հարաբերությունների, Առողջապահության և սոցիալական, Տնտեսական ինքնուրույնության և տնտեսության զարգացման, Ֆինանսավարկային և բյուջետային, Ագրարային և գյուղի զարգացման, Բնության պահպանության և բնական պաշարների, Պաշտպանության և ներքին գործերի, Կրթության և գիտության, Լեզվի և մշակույթի, Լրատվության, Աղետի գոտու և բռնագաղթվածների հարցերի հանձնաժողովներ) և Արցախի հարցերի հատուկ հանձնաժողովի: Բնական է, որ թվարկած հանձնաժողովների շարքում մյուսների հետ միասին անչափ կարևոր է համարվում «Արցախի հարցերի հատուկ հանձնաժողովը», քանի որ նորաստեղծ խորհրդարանը միշտ իր առաջնահերթ պարտքն էր համարում սա-

[271] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ, Երևան, 1995, էջ 18, 125:

տար կանգնել Լեռնային Ղարաբաղի արդար պայքարին[272], որը շարունակվում է նաև առ այսօր:

1990 թ. օգոստոսի 4-ին Լևոն Տեր-Պետրոսյանը ընտրվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ, Վազգեն Մանուկյանը նշանակվեց վարչապետ, որն էլ նշանակում էր, որ 70-ամյա կոմունիստների և խորհրդային իշխանությունը իր տեղը զիջեց ազգային շարժման ուժերին՝ ՀՀՇ-ին:

Գնահատելով այդ արմատական փոփոխությունները՝ ՀՀՇ-ն իր անցած ուղու քրոնիկոնում նշում է. «Ինչպիսի գնահատականներ էլ որ տրվեն, որոնք, ի դեպ, տարբեր էին, 1990 թ. մայիսին ընտրված, դեռևս Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի ամենամեծ ձեռքբերումներից մեկը 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունած Հայաստանի Հանրապետության «Անկախության հռչակագիրն» էր, որում մասնավորապես ասվում էր, որ արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում, ելնելով մարդու իրավունքների և միջազգային իրավունքների համընդհանուր հռչակագրերի սկզբունքներից, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թ. դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի ազգային խորհրդի համատեղ որոշման» վրա, զարգացնելով 1918 թ. մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը՝ հռչակեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը[273]: Սակայն

---

[272] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1990-1995 թթ., Երևան 1995, էջ 6, 118-122, 125, Ազգային ժողով, ինտերնետային կայք, www.parliament.am:

[273] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 25:

ճշմարտությունն այն է, որ 12 կետից բաղկացած «Անկախության հռչակագրի» ընդունմանը նախորդել էր բավականին մեծ նախապատրաստական աշխատանք, ստեղծվել էր հանձնաժողով, որն էլ պետք է մշակեր «Անկախության հռչակագրի» նախագիծը՝ այն դնելով Գերագույն խորհրդում քննարկման: Այդ նպատակով նորընտիր Գերագույն խորհրդի պատգամավորներից դեռևս օգոստոսի 4-ին ստեղծվել էր 15 հոգուց բաղկացած հանձնաժողով[274], որն էլ ձեռնամուխ էր եղել այդ կարևոր փաստաթղթի ստեղծմանը: Եվ քանի որ հետաքրքրությունը բավական մեծ էր, ուստի քաղաքական տարբեր ուժերի կողմից նախագիծ մշակող հանձնաժողովին ներկայացվել էին հռչակագրի մի շարք տարբերակներ՝ թվով 5: Բնական էր, որ նման փաստաթղթի նախապատրաստմանը պետք է ընդգրկվեին օրենսգրքերի համապատասխան մասնագետներ, գիտնականներ, իրավաբաններ, պատմաբաններ, փիլիսոփաներ, քաղաքագետներ, որոնք էլ պետք է քննարկեին իրենց ներկայացված տարբերակները, ի մի բերեին այդ ամենը և վերջնական տեսքով ներկայացնեին Գերագույն խորհրդի քննարկմանը: Հասկանալի է նաև, որ ՀՀՇ-ի կազմած տարբերակի կողքին պետք է անպայման ներկայացված լիներ նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմած նախագիծ-տարբերակը: Նրանում, տարբեր հարցադրումներից զատ, Հայաստանը Խորհրդային Միության կազմում մնալու պահանջն էր, որը հիմնավորվում էր Խորհրդային Հայաստանում առկա բազմաթիվ խնդիրներով՝ տնտեսական, քաղաքական, հոգևոր, մշակութային, ռազմական և այլն: Այդ նպատակով 1990 թ. օգոստոսի 15-ին հրավիրվել էր Հայաստանի կոմկուսի կենտկոմի հերթական պլենում, որտեղ նշվում էր, որ, այնուամենայնիվ, ընդունելով անկախության գաղափարը, Խորհրդային Հայաստանի կոմունիստները կարծում էին, որ անկախ և ինքնուրույն Հայաստանը՝ տեսանելի ապագայում որպես ինքնիշխան պետություն, կամավոր հիմունքներով պետք է գտնվի Խորհրդային Միության նորացված համակարգում: Կենտկո-

[274] Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 1990, էջ 11-12:

մի պլենումը դա հիմնավորում էր այն հանգամանքով, որ այն թելադրված է հայ ժողովրդի անվտանգության ապահովման հրամայական անհրաժեշտությամբ, հանրապետության տնտեսության նորմալ զարգացման շահերով և այլն[275]:

Ինչ վերաբերում է «Հայոց համազգային շարժմանը», բնական է, որ այն Հայաստանի լիակատար անկախության պաշտպանն ու կողմնակիցն էր, որի համար պայքարել էր ավելի քան երկու տարի, և Մոսկվայի բոլոր փորձերին՝ պահպանելու Խորհրդային Միությունը, լիովին դեմ էր: Պատահական չէ, որ Լևոն Տեր-Պետրոսյանը, ընտրվելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ, օգոստոսի սկզբներին լինելով Մոսկվայում, հանդիպելով Խորհրդային Միության բարձրաստիճան ղեկավարության հետ (Ն. Ռիժկով, Վ. Բակատին, Վ. Կրյուչկով), այդ հարցում խիստ արմատական ու անզիջում էր: Նա հայտարարել էր, որ Հայաստանը միութենական որևէ պայմանագրի անհրաժեշտություն չի տեսնում, իսկ եթե դա նույնիսկ լինի, ապա պետք է լինի ինչ-որ համակարգող փաստաթուղթ, իսկ միութենական սահմանադրություն և ընդհանուր միութենական օրենքներ բնավ չեն պահանջվում[276]: Այնպես որ կենտրոնի ջանքերը՝ Խորհրդային Հայաստանին ամեն կերպ պահելու Միության կազմում, հնարավոր չէր, երբ արդեն նրա ղեկին կանգնած էին նոր ուժեր, ուստի Հայաստանի կոմկուսը այլևս չէր ներկայացնում որևէ ռեալ, իրական ուժ: Նման պայմաններում 1990 թ. օգոստոսի 7-ին Անկախության հռչակագիրը կազմող հանձնաժողովը Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացրեց հռչակագրի 3 տարբերակ, որի հիման վրա ի վերջո օգոստոսի 20-ին կազմվեց և քննարկման ներկայացրեց վերջնական տարբերակը, որը ներառել էր նախորդ բոլոր տարբերակների կարևոր գաղափարները, հարցադրումները[277]: Իսկ արդեն քննարկման ժամանակ վեճը, տարաձայնությունները գնում էին այն հարցի շուրջ՝ Խորհրդային Հայաստանը հռչակվում էր անկախ պե-

[275] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 9, 16, 21-22:
[276] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 11:
[277] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 9-11, 22:

տություն, թե մնում էր ինքնիշխանություն նորացված ֆեդերացիայի կազմում: Այդ հարցի հետազոտողներից Էդուարդ Պողոսյանն իր «Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում 1990-2001 թթ.» մեծածավալ աշխատությունում Անկախության հռչակագրի հարցի վերաբերյալ գրել է, որ տառացիորեն մինչև հռչակագրի վերջնական քննարկման օրը այդպես էլ չէր որոշակիացվել նրա պաշտոնական անվանումը, և նույնիսկ մինչև Գերագույն խորհրդի 1990 թ. օգոստոսի 23-ի նիստը, երբ ընդամենը հաշված ժամեր էին մնացել հռչակագրի պաշտոնական ընդունման, օրենսդիր մարմնում դեռևս սուր բանավեճեր էին ընթանում Գերագույն խորհրդում փաստաթղթի վերջնական անվան հարցի շուրջ[278]:

Ժիրայր Լիպարիտյանն իր «Պետականության մարտահրավերները. հայ քաղաքական միտքը անկախությունից հետո»[279] աշխատությունում գրում է, որ ի լրումն Ղարաբաղի հիմնախնդրի, որը հիմնականում դեռևս գտնվում էր նախառազմական փուլում, 1990 թ. ՀՀՇ-ի առջև երեք մեծ խնդիր կար ծառացած. Հայաստանը պե՞տք է դառնա անկախ պետություն, թե՞ մնա իբրև ԽՍՀՄ-ի մաս: Հայաստանը պե՞տք է ընտրի բազմակուսակցական ժողովրդավարություն, թե՞ մնա միակուսակցական վարչակարգ: Հայաստանը պե՞տք է պահի կենտրոնի կողմից ծրագրվող սոցիալիստական, տնտեսական համակարգը, թե՞ պետք է որդեգրի ազատ շուկայական տնտեսության քաղաքականություն:

Ներկայացնելով իր այդ տեսակետը՝ Ժիրայր Լիպարիտյանը ճիշտ է նկատում, որ 1991 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ փլուզումը խթանեց Հայաստանի, ինչպես նաև բոլոր մյուս հանրապետությունների անկախության ճանաչումը, ներառյալ նաև այն հանրապետություններինը, որոնք չէին ձգտել ու քայլեր չէին ձեռնարկել այդ ուղղությամբ: Իսկ այդ օրերի մամուլը, անդրադառնալով նշված հարցին, գրում էր,

---

[278] Տե՛ս **Պողոսյան Է.,** Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Երևան, 2013, էջ 36-37:

[279] Տե՛ս **Լիպարիտյան Ժ.,** Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երևան, 1999, էջ 38:

որ մինչև վերջին օրը ծրագրի վերաբերյալ շրջանառության մեջ էր դրվել 5 տարբերակ՝ «Հռչակագիր Հայաստանի անկախ պետականության մասին», «Հայաստանի քաղաքական կարգավիճակի մասին հռչակագիր», «Հայաստանի անկախության մասին հռչակագիր», «Հռչակագիր Հայաստանի պետական անկախության մասին», և «Հայաստանի քաղաքական անկախության մասին հռչակագիր», որոնք դրվեցին քվեարկության, և ի վերջո բացարձակ մեծամասնությամբ (159 կողմ) հայ ժողովրդի համար կարևոր այդ փաստաթուղթը անվանվեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»[280]: Փաստորեն՝ դրանով սկիզբ դրվեց Խորհրդային Միությունից դուրս գալու և անկախ պետականության հաստատման գործընթացին, որն էլ հիմք հանդիսացավ հետագայում ընդունելու դրանից բխող օրենսդրական նոր որոշումներ, Սահմանադրության մշակման, ընդունման համար նոր պայմաններ և այլն: Իսկ ինչ վերաբերում էր հռչակագրի բուն բովանդակությանը, այստեղ ևս կային խնդիրներ, որոնք վերաբերում էին հռչակագրի առանձին կետերի ձևակերպումներին և այլն:

Հռչակագրի նախաբանում նշվում էր, որ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը 1918 թ. մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթների շարունակողն է: Այս փաստը խոսում էր այն մասին, որ ՀՀԾ-ն, գալով իշխանության, փաստորեն, մերժում էր ավելի քան 70-ամյա Խորհրդային Հայաստանի երկրորդ հանրապետությունը, պատմական մի ժամանակաշրջան, որը, անկախ մյուս հանգամանքներից, նախևառաջ նշանակում էր պատմականության ժխտում, որը նաև, մեղմ ասած, գիտական չէ: Այլ բան է, որ նորանկախ Հայաստանը, լինելով 1918-1920 թթ. Առաջին հանրապետության ժողովրդավարական ավանդույթների շարունակողը, չընդունեց Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի շատ արժեքներ ու նորմեր և կառուցեց նոր երկիր՝ իր նոր կանոններով և արժեքներով: Սակայն, ի

[280] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 24:

դեպ, Լևոն Տեր-Պետրոսյանը, մեկ այլ առիթով կրկին անդրադառնալով Խորհրդային Հայաստանի 70 տարիների գնահատմանը, քննադատությունից զատ, նշել է, որ չի կարելի բացարձակ ժխտողական վերաբերմունք ցուցաբերել անցյալի նկատմամբ՝ անտեսելով խորհրդային իշխանության տարիներին իրականացած նաև դրական տեղաշարժերը մշակույթի, տնտեսության, կրթության, շինարարության և այլ բնագավառներում, նաև ավելացնելով, որ տրված հնարավորությունները լիովին չեն օգտագործվել[281]: Բայց նաև միայն Խորհրդային Հայաստանը չէր, որ ընձեռված նոր պայմաններում հայտարարում էր այն արժեքների, կարգերի մերժման մասին, որոնք էլ ի վերջո հանգեցրին ԽՍՀՄ-ի փլուզմանը: Հատկապես նկատի ունենք մերձբալթյան երեք հանրապետություններին՝ Լատվիային, Լիտվային և Էստոնիային: Նման մոտեցումը խիստ սուբյեկտիվ էր և ավելի շատ տվյալ հաջողություններով արբեցած հույզերի դրսևորում էր, հեռու իրական պատմությունից: Եվ որքան էլ որ ՀՀՇ-ն, նրա առաջնորդներ Լևոն Տեր-Պետրոսյանը և մյուսները մերժում էին խորհրդային կարգերը, նրա դավանած արժեքները և այլն, այնուամենայնիվ իրավունք չունեին շրջանցելու հայ ժողովրդի պատմության այդ ժամանակաշրջանը, որը նաև շատ հարցերում, բնագավառներում հայ ժողովրդի համար առանց չափազանցության արգասաբեր էր, լի հաջողություններով և անվտանգ: Եվ անկախ ՀՀՇ-ի առաջնորդների՝ Լևոն Տեր-Պետրոսյանի և մյուսների ցանկությունից՝ նորաստեղծ Հայաստանի երրորդ հանրապետությունը նաև Խորհրդային Հայաստանի ծնունդն էր, բայց արդեն միանգամայն նոր պայմաններում և նոր որակով նրան հաջորդողը:

Վերադառնալով Անկախության հռչակագրի քննարկմանը՝ նշենք, որ բավական թեժ էին տարածայնությունները հատկապես Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ: Հարց էր առաջանում՝ նշելո՞ւ այն հռչակագրում, թե՞ ոչ: Այդ հարցում տեսակետները տարբեր էին: «Հայոց համազգային շարժումը» ներկայացնող պատգա-

[281] Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.,** Ընտրանի, ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Երևան, 2006, էջ 181:

մավորները դեմ էին հռչակագրում ցեղասպանության հարցը որևէ ձևով արծարծելուն: Նման հարցադրումը բխում էր ՀՀԾ-ի, Լևոն Տեր-Պետրոսյանի այն հարցադրումից, այն մոտեցումից, որ քանի դեռ մենք հզոր չենք, հարևան երկրների, այդ թվում նաև Թուրքիայի և Ադրբեջանի հետ պետք է վարենք բնականոն դրացիական հարաբերություններ[282]:

Մինչդեռ պատգամավորների մի մասը՝ Աշոտ Նավասարդյանը, Իգոր Մուրադյանը, Հայկ Բաբուխանյանը, Ռաֆիկ Համբարձումյանը և ուրիշներ, Հրաչիկ Սիմոնյանի ղեկավարությամբ, լինելով հռչակագրի կազմման հանձնաժողովում, դեռևս մինչև նրա ընդունումը, այսինքն՝ քննարկման ընթացքում պաշտպանում էին իրենց տեսակետը՝ պահանջելով բացառիկ պատմական նշանակություն ունեցող այդ փաստաթղթում անպայման արձանագրել ցեղասպանության փաստը: Իսկ արդեն Գերագույն խորհրդի օգոստոսի 23-ի նիստում ձայների մեծամասնությամբ, ի լրումն հռչակագրի, արդեն խորհրդարանի կողմից հավանության արժանացած դրույթներին ավելացվեց նաև 11-րդ կետը, որում արձանագրված էր. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին[283]:

Հանրապետությունում այդ օրերին լույս տեսնող մամուլում և առաջին հերթին «Խորհրդային Հայաստանում քննարկելով Գերագույն խորհրդում տեղի ունեցող իրադարձությունները՝ հնչում էին նաև բացասական կարծիքներ: Օրինակ՝ Ազգային միասնության ուխտ կազմակերպության նախագահ Ռաֆայել Համբարձումյանը, գնահատելով ՀՀ անկախության հռչակագիրը, նշում էր, որ այն թեև

---

[282] Տե՛ս Հանուն երրորդ հանրապետության (ՀՀԾ), «Հայոց համազգային շարժման» XII համագումար, 22-23 դեկտեմբեր, 2000, Ժողովածու համագումարի պատգամավորների համար, կազմ.՝ Տիգրան Հակոբյանը, Երևան, դեկտեմբեր, 2000, էջ 18:

[283] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 21, 24 օգոստոսի, 1990, **Պողոսյան Է.,** Անկախ պետության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001թթ), Երևան, 2013, էջ 37-38, **Մինասյան Է.,** Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2014, էջ 115:

կոչվում է «Անկախության մասին», բայց ինքը անկախ չէ, այսինքն՝ ինքնուրույն, ազգային չէ: Այն Մոսկվայում գրված մայր օրինակի հայկական տարբերակն է, ինչպես ԽՍՀՄ սահմանադրությունն ու քրեական օրենսգիրքը: Միակ կետը, որ այդ փաստաթղթին ազգային կնիք է տալիս, Հայ դատին վերաբերող հոդվածն է, որը հռչակագիր մտավ ընդդիմադիր ուժերի համառ ջանքերով, ինչը նշանակում էր՝ հանրապետությունում իշխանությունը դեռ նոր ստանձնած «Հայոց համազգային շարժման» ուժերի դեմ բարձրագույն իշխանության մարմնում՝ Գերագույն խորհրդում, լուրջ ընդդիմություն էր դրսևորվում[284]:

Վերջապես շուրջ երեք շաբաթ տևած տքնաջան աշխատանքը պսակվեց բացառիկ հաջողությամբ և արդեն ամբողջական տեսքով 1990 թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի հերթական նիստում դրվեց քվեարկության: Հռչակագրի օգտին քվեարկեց 183 ժողովրդական պատգամավոր (դեմ՝ 2, ձեռնպահ՝ 2):

Արձանագրելով բացառիկ կարևոր այդ փաստը՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագրում նշվում է, որ 1990 թ. օգոստոսի 23-ին Երևանի ժամանակով ժամը 12 անց 3 րոպեին Գերագույն խորհուրդը իրականացրեց պատմական կարևոր քայլ՝ ազգային պետականության կորստից 70 արի անց հռչակելով Հայաստանի անկախությունը[285]:

Գնահատելով փաստաթղթի կարևորությունը՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի քարտուղար ընտրված Արա Սահակյանը նշել է, որ «ՀՀ անկախության հռչակագիրը» պատմական, քաղաքական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ է: Եվ որքան էլ տարբեր կողմերից մեր ընդդիմախոսները կոչ էին անում լարված իրադրության պայմաններում դադարեցնել նստաշրջանի աշխատանքը, զբաղվել կոնկրետ գործելով, պատգամավորները, գիտակցելով իրենց պատմական առաքելությունը, այս

---

[284] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 26 օգոստոսի, 1990:

[285] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N16(972), 31 օգոստոսի, 1990, էջ 4-6:

ծայրագույն սուր բանավեճերի պայմաններում կարողացան ընդունել այսպիսի լուրջ մի փաստաթուղթ: Իսկ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Գագիկ Հարությունյանի կարծիքով հռչակագիրը մեր ժողովրդի երազանքն էր, մեր պետական անկախության սկիզբը, և հռչակագրի հիման վրա գործընթացը մեթոդաբար և հետևողական պիտի իրականացվեր:

Հետաքրքիր է նաև հռչակագրի վերաբերյալ մեր հայրենակիցների՝ սփյուռքահայերի արձագանքը: Նյու Յորքից Լուսիկ Դանիելյանը (քաղաքական տեղեկատվության պրոֆեսոր) ասել է. «Մենք սպասեցինք 70 տարի, որ այս օրը գա, և ուրախ ենք ու կհուսանք, որ պետք է պայքարենք ավելի շատ մինչ անկախ, ուժեղ պետականություն՝ մեր իղձերի իրականացում: Ես հավատում եմ, որ այս հռչակագիրը հնարավորություն կընձեռի համախմբվելու հայրենիքի ժողովրդին և սփյուռքի ժողովրդին, և կկերտենք մի նոր, երջանիկ Հայաստան: Եվ ես էլ կհուսամ, որ շուտով այդտեղ կգամ և մշտական բնակություն կհաստատեմ: Ես հավատացած եմ, որ սփյուռքն այսուհետև կարող է էլ ավելի օգտակար լինել և կլինի: Վստահ եմ, որ այսուհետև մեր իշխանություններն էլ ավելի ժողովրդական ուղի բռնեն»[286]:

Ինչպես տեսնում ենք, արձագանքները բավականին ակտիվ էին, քանզի ՀՀ անկախության հռչակագիրը անչափ կարևոր փաստաթուղթ էր, որում տեղ գտած 12 դրույթները ունեին համամարդկային նշանակություն: Դրանք վերաբերում են մարդու իրավունքներին, նրա ազատությանը, պաշտպանությանը և այլն: Հետաքրքիր է նաև ասել, որ մեկ օրական անկախություն հռչակած Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի օգոստոսի 24-ի նիստում հռչակագիրը մշակող հանձնաժողովը նախօրոք կատարած վերջնական շտկումների և մասնակի խմբագրական վերափոխումների պատճառով այն կրկին դրեց քվեարկության, որն այս անգամ ընդունվեց 192 ձայնով (2 ձեռնպահ): Եվ հենց այդ նիս-

[286] «Խորհրդային Հայաստան», 24 օգոստոսի, 1990:

տում է, որ Հայաստանի անկախության մասին վերջնական տեքստը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներին և ողջ հայությանը ներկայացրեց Գերագույն խորհրդի պատգամավոր Արամ Մանուկյանը՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրի անվանակիցը[287]:

Գնահատելով պատմական այդ կարևոր փաստաթղթի ընդունումը՝ հարկ է ասել, որ այն ուղենշային կարևոր նշանակություն ունեցող փաստաթուղթ էր, որը հիմք պետք է ծառայեր հայոց պետականության հետագա զարգացման համար: Եվ չնայած նորանկախ Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) գտնվում էր Խորհրդային Միության կազմում, բայց հասկանալի է, որ դա ժամանակի խնդիր էր, և վաղ թե ուշ սկսվելու էր միութենական հանրապետությունների անկախության շքերթը, երբ մեկը մյուսի ետևից Խորհրդային Միության հանրապետությունները թե համաժողովրդական քվեարկությամբ, հանրաքվեներով, թե՛ տարբեր կարգի ակտերով, որոշումներով հռչակելու էին իրենց անկախությունը՝ իրավունք վերապահելով հաստատելու հորիզոնական կապեր միութենական հանրապետությունների հետ՝ այդպես դառնալով ինքնիշխան պետություններ: Այդ իմաստով կրկին գնահատելով և վերլուծելով ՀՀ անկախության հռչակագիրը՝ պետք է ասել, որ այն բավական լավ մշակված փաստաթուղթ էր, ուներ ծրագրային նշանակություն և նույնիսկ կարող էր ծառայել որպես Սահմանադրություն, կյանքի հիմնական օրենք մինչև նրա մշակումն ու ընդունումը: Ինչպես Է. Մինասյանն է իր «Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն» ստվարածավալ աշխատությունում նշում, «թեև Խորհրդային Հայաստանը դեռևս ԽՍՀՄ կազմում էր և չէր օգտվում իրական պետական անկախությունից, բայց այդ շրջանում ձեռք բերված հաջողությունների հիմքի վրա էր, որ հնարավոր եղավ կյանքի կոչել Երրորդ հանրապետությունը»[288]: Եվ դա է պատճառը, որ Հռչակագրում ծրագրային

[287] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 26 օգոստոսի, 1990:

[288] Տե՛ս **Մինասյան Է.**, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2014, էջ 117:

դրույթներ կային, որոնք դարձան հիմք նրա իրավական, իրական և վերջնական անկախության համար:

Եվ այն փաստը, որ հռչակագրի հատուկ կետով ազդարարվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ, և որ նրա ամբողջ տարածքում գործում են միայն ՀՀ Սահմանադրությունը և օրենքները[289], վկայում է այն մասին, որ հայ ժողովրդի կյանքում, նրա անբաժանելի մաս սփյուռքի հայության շրջանում սկսվում էր մի նոր շրջան՝ մայր հայրենիքում նորանկախ պետության ստեղծման շրջան: Պատահական չէր, որ հատուկ կերպով նշվում էր, որ արտասահմանյան երկրներում ապրող հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի: Նման որոշումը սփյուռքի, ողջ աշխարհի հայությանը համախմբելու կարևոր և անհրաժեշտ քայլ էր:

Հռչակագրում կարևորվում էր նաև այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները գտնվում են նրա պաշտպանության և աջակցության ներքո, և որ Հայաստանն ապահովում էր իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից: Դա ևս հայ ժողովրդի, նրա պատմության, նրա էության անբաժանելի մասերից մեկն էր՝ համերաշխ և կողք կողքի ապրել այլ ժողովուրդների հետ:

Ինչպես յուրաքանչյուր պետության համար, նորանկախ հայոց պետության համար ևս կարևոր էր պետական խորհրդանիշների հարցը, որի համար էլ հռչակագրում հատուկ նշվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը: Իսկ այն, որ ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում էր բացառապես ՀՀ Գերագույն խորհրդին, կրկին խոսում էր հայ ժողովրդի վճռականության մասին՝ կառուցել նոր երկիր՝ նոր սկզբունքներով և նոր մոտեցումներով: Եվ որպեսզի այն լիներ ամուր և ապա-

---

[289] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ 1990-1995, Երևան, 1995, էջ 14:

հով, հռչակագրում կարևորվում էր երկրի անվտանգության հարցը, որին հատկացված բաժնում ասվում էր. «Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ, որոնց համար էլ արվում էր ճիշտ հարցադրում, որ Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը, և ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը և այլն»:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում այլ երկրների ռազմական ուժերի առկայությանը և այլն, ապա այդ մասին ասվում էր, որ այլ երկրների զորամիավորումները, նրանց ռազմական բազաները և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ: Նման հարցադրումը անչափ կարևոր էր երկրի անվտանգության և պաշտպանության համար:

Նորանկախ պետությունը, բնականաբար, պետք է կարևորեր իր հարաբերություններն աշխարհի և հարևան երկրների հետ, որի մասին արձանագրվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը: Դրանք կարևոր և հեռանկարային խնդիրներ էին, որոնք հատուկ են ընդհանրապես բոլոր պետություններին: Այս կարևոր հարցը ևս չէր վրիպել հռչակագիրը կազմող հանձնախմբերի կողմից:

Բնական է, որ հռչակագրում կանոր տեղ պետք է գրավեին երկրի համար ներքին բնույթի հարցեր, որոնք վերաբերում էին տնտեսությանը, սեփականության ձևերին, երկրի ընդերքին, ներքին քաղաքական խնդիրներին և այլն: Հատուկ շեշտվում էր, որ Հայաստանի հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային

տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները նրա ժողովրդի սեփականությունն է, որոնց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում էր ՀՀ օրենքներով:

Անչափ կարևոր էր սեփականության ձևերի հարցը, որին ևս հատկացված էր առանձին կետ: Նշվում էր, որ Հայաստանի Հանրապետությունում հաստատվում է սեփականության բազմաձևություն, որի հիման վրա էլ որոշվում են երկրի տնտեսվարման սկզբունքները և կարգը: Հանրապետությունը հիմնում է նաև սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ և մաքսային ծառայություններ:

Ինչ վերաբերում էր Հանրապետության քաղաքական խնդիրներին, ապա դրանք բավական շատ էին, որոնք վերաբերում էին հատկապես խոսքի, մամուլի, խղճի ազատությանը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատմանը, բազմակուսակցության հաստատմանը, կուսակցությունների իրավահավասարությունը, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացմանը և այլն:

Ինչպես տեսնում ենք, այս հարցում ևս Հայաստանի Հանրապետությունը անկախության հռչակման առաջին իսկ օրերից որդեգրել էր մարդու ազատությունն ապահովող, դրան նպաստող համամարդկային շատ արժեքներ:

Հռչակագրում չէր կարող տեղ չգտնել այնպիսի հարցերի պատասխանը, որոնք վերաբերում էին լեզվին, կրթությանը, մշակույթին և այլ բնագավառներին: Այդ կապակցությամբ հռչակագրում ասվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի՝ որպես պետական լեզվի գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակույթի սեփական համակարգ: Դրանք կարևոր ոլորտներ էին, որոնք կոչված էին ապահովելու հայ ժողովրդի դարավոր մշակույթի, լեզվի, կրթության, գիտության զարգացումը, դրանով շարունակելու իր ներդրումը համաշխարհային մշակույթի, քաղաքակրթության զարգացման գոր-

ծում: Եվ որպես վերջաբան ՀՀ անկախության հռչակագրում ընդգծվում էր այն կարևոր միտքը, որ սույն հռչակագիրը հիմք է ծառայում ՀՀ Սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար: Դա դեպի ապագան նայող փաստաթուղթ էր ժողովրդին հուսադրող, նրա մեջ դեպի վաղվա օրը տրամադրող փաստաթուղթ: Այլ բան է, թե ինչը ստացվեց, ինչը՝ ոչ, և ինչո՞ւ : Դա արդեն այլ հարց է, որին կփորձենք անդրադառնալ մեր աշխատության վերջում: Այնուամենայնիվ, գնահատելով ՀՀ անկախության հռչակագիրը՝ պետք է ասել, որ այն բավական բազմակողմանի մշակված, մտածված, ժողովրդի ոգին ներկայացնող և հեռուն նայող ու գնացող փաստաթուղթ էր, որին հավատարիմ լինելը և նրանում նախանշած խնդիրներն իրականացնելը դառնում էր ողջ ժողովրդի ամենօրյա կարևոր գործը, որն ի վերջո պետք է հանգեցներ անկախության հաստատմանը: Ինչ խոսք, այդ ճանապարհին սպասվում էին նոր դժվարություններ, նոր փորձություններ, որոնց գումարվում էր նաև Լեռնային Ղարաբաղի հարցը, որն օրօրի ներքաշվում էր պատերազմի մեջ: Իսկ միութենական հանրապետություններում տեղի ունեցող կենտրոնից անջատվելու փորձերի կողքին ստեղծվում էին ամեն կարգի դժվարություններ, տարբեր կարգի խոչընդոտներ: Մյուս կողմից Մ. Ս. Գորբաչովը քայլեր էր կատարում մեծացնելու խորհուրդների, տեղական ինքնակառավարման մարմինների դերն ի հաշիվ կոմունիստական կուսակցության՝ դա դիտելով որպես քայլ՝ բարձրացնելու ժողովրդական զանգվածների հասարակական-քաղաքական ակտիվությունը, նրանց ներգրավելու ինչպես տնտեսական կառավարման տարբեր օղակներում, այնպես էլ տեղական խորհուրդների, Գերագույն խորհուրդների աշխատանքներում և այլն: Այդ նպատակով Մ. Ս. Գորբաչովը դեռևս 1988 թ. հունիսի 28-ից հուլիսի 1-ը հրավիրված կուսակցության 19-րդ կոնֆերանսում՝ իր զեկուցման մեջ, քննարկման էր դրել ԽՍՀՄ քաղաքական համակարգի ռեֆորմների հարցը, որի նպատակը կուսակցական մարմինների

իրավունքների սահմանափակումն էր՝ ի հաշիվ սովետների դերի բարձրացման: Ի դեպ, հարկ է նկատել, որ կոնֆերանսի նախօրյակին քննարկվող հարցի թեզերը նախապատրաստել էին Գ. Շահնազարովը և Ի. Ֆրոլովը, որը դեռևս մայիսի 19-ին քննարկվել էր ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի նիստում և ստացել բավական բարձր գնահատական: Բայց ամբողջ կոնֆերանսի գլխավոր արդյունքն այն էր, որ ընդունվեց որոշում համատեղելու կուսակցական և խորհրդային բարձրագույն՝ Կենտկոմի գլխավոր քարտուղարի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնները մեկ անձի՝ Մ. Ս Գորբաչովի մեջ: 1988 թ. հոկտեմբերի 1-ին Մ. Ս. Գորբաչովն ընտրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ: Նոյեմբերի 29-ին հրավիրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը: «Խորհուրդների իրավասությունների և իրավական սոցիալիստական պետության ստեղծման մասին» զեկուցմամբ հանդես եկավ Մ. Ս. Գորբաչովը, որը կրկին բարձրացրեց երկրի քաղաքական համակարգում, պետական շինարարության ոլորտում ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրություններում իրականացվող փոփոխությունների հարցը և այլն:

1988 թ. դեկտեմբերի 1-ին ընդունվեց օրենք՝ «ԽՍՀՄ Սահմանադրության (հիմնական օրենք) մեջ փոփոխություններ և լրացումներ անելու մասին», ըստ որի՝ 1977 թ. ընդունված ԽՍՀՄ Սահմանադրության մեջ կատարեցին փոփոխություններ և լրացումներ, որով էլ ավելի ամրապնդեցին կառավարման նոր պետական կառուցվածքը: Արդեն պետության գլուխ կանգնած էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահը (նույն ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղարը), որն ընտրվել էր բարձրագույն մարմնի կողմից և միավորում էր իշխանության բոլոր թևերը՝ լինելով իրավասու՝ լուծելու բոլոր հարցերը: Փաստորեն՝ սահմանադրության փոփոխությամբ սահմանվեց նոր բարձրագույն օրենսդրական մարմին՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարը, որը հրավիրվում էր տարին մեկ անգամ:

Հետագայում խոսելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մասին՝ Ն. Ի. Ռիժկովը գրում է, որ 19-րդ կուսակցական կոնֆերանսից հետո ամենազոր ԽՄԿԿ-ին փոխարինելու եկավ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն արդեն այլ իրավասություններով ու գործառույթներով: Տեղի ունեցավ յուրօրինակ մի փոփոխություն, իսկ Մ. Ս. Գորբաչովը վերածվեց սոսկ մի խոսնակի, որը նախագահում էր նստաշրջաններում, իսկ իրական իշխանությունը (օրենսդրական և գործադիր) գտնվում էր Գերագույն խորհրդի ձեռքում: Նա հասկացավ իր անօգնականությունը, իր իսկ հնարածի կառավարման ոչ ունակությունը, որի համար էլ ծնվեց նախագահության գաղափարը, որն էլ արագորեն իրականացվեց: Փաստորեն՝ Մ. Ս.Գորբաչովը դարձավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ և ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար[290]: Դա ևս քայլ էր Խորհրդային Միությունը պահպանելու համար: Բայց ինչպես պատկերավոր կերպով կասեր Մ. Ս. Գորբաչովը, գործընթացը սկսված էր, որի հեղինակն էլ հենց ինքը՝ Մ. Ս. Գորբաչովը, պետք է դառնար նրա գերին և զոհը:

1990 թ. ապրիլի 3-ին Մ. Ս. Գորբաչովը՝ արդեն որպես ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ, ստորագրեց «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը[291], որքան էլ որ ԽՍՀՄ Սահմանադրության 72-րդ հոդվածով նախատեսվում էր Միութենական հանրապետությունների ԽՍՀՄ-ից դուրս գալու իրավունքը: Ուղղակի գորբաչովյան վերոհիշյալ օրենքի առանձնահատկությունն այն էր, որ Միությունից դուրս գալու մեխանիզմները, կարգը բավական բարդ էին, խճճված և ձգձգվող: Օրինակ՝ նախատեսվում էր անկախացման հարցով հանրաքվեի մասին որոշումն ընդունելուց ոչ շուտ քան վեց ամիս հետո իրականացնել հանրաքվեն, որի ընթացքը գտնվելու էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի վերահսկողության տակ: Ըստ օրենքի 9-րդ հոդվածի՝ ԽՍՀՄ-ից անջատվող հանրապետությունը կարող էր

---

[290] Տե՛ս **Елисеева Н. В.,** История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016, էջ 246, 249-250:

[291] Տե՛ս «Известия», Орган советов народних депутатов СССР, 7 апреля, 1990:

անկախանալու թույլտվությունը ակնկալել միայն հանրաքվեից 5 տարի անց: Այդ հնգամյա անցման շրջանում պետք է լուծվեին ԽՍՀՄ-ից անկախանալու հանդգնություն ունեցող հանրապետության միությունից դուրս գալու հետ կապված հարցերը: Ավելի ճիշտ կլիներ ասել, որ դա մի տեսական ժամանակահատված էր, երբ անկախության ձգտող կողմը ստիպված էր հաղթահարել կենտրոնի կողմից հարուցած անհամար խոչընդոտները, եթե ընդհանրապես դրանք հնարավոր էր հաղթահարել: Դրանք կապված էին նաև, այդ հարցերից զատ ֆինանսական ամենաբազմազան հաշվարկների, միութենական իշխանությունների զանազան ինստանցիաներում քննարկումների, վերափոխումների երկար ու ձիգ գործընթացի հետ: Ի վերջո, անկախության ձգտող սուբյեկտը՝ հանրապետություն, թե ինքնավար այլ միավոր կարող է միությունից դուրս գալ, եթե ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների ոչ պակաս, քան երկու երրորդը քվեարկել է անկախության օգտին, որի արդյունքները հետո պետք է քննարկվեին նախ հանրապետության Գերագույն խորհրդում, հետո ԽՍՀՄ Գերագույն խորհրդում, ի վերջո՝ վերջնական լուծում ստանալ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարում և այլն[292]: Բայց անկախ այդ հանգամանքից՝ դժվարություններից՝ Հայաստանի Հանրապետությունը առաջիններից մեկն էր, որ պատրաստակամություն հայտնեց հանրապետության անկախացման գործընթացում ղեկավարվելու «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքով[293]: Սակայն այս ամենը չէր խանգարում, որ Հայաստանի նկատմամբ խորհրդային իշխանությունների ձեռնարկած տարբեր կարգի ճնշումները, հատկապես անկախության հռչակագրից հետո, էլ ավելի ուժեղացվեին: Այդ հարցում կենտրոնը որպես կարևոր լծակ օգտագործում էր Արցախի հարցը, իրականացնում

---

[292] Տե՛ս **Պողոսյան Է.,** Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Երևան, 2013, էջ 48-49:

[293] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 5 հուլիսի 1991 թ., **Պողոսյան Է.**, նշվ. աշխ., էջ 51:

պատժիչ, սադրիչ գործողություններ թե՛ Արցախում և թե՛ Հայաստանի սահմանամերձ շրջաններում և անձնագրային ռեժիմի ստուգման անվան տակ՝ օգտագործելով թե՛ զինված ուժեր, թե՛ ադրբեջանական միլիցիայի հատուկ ստորաբաժանումներ, թե՛ ՕՄՕՆ և այլն: Բնական է, որ դա առաջացնում էր հակառակ ռեակցիա և ձգտում հասնել անկախության, ընդունել կենտրոնին հակառակ, ավելի կշռադատված, անկախության հռչակագրի բնույթից բխող որոշումներ: Եվ քանի որ Միությունում գործող սահմանադրությունը հակասում էր ՀՀ անկախության հռչակագրին, ուստի խորհրդարանը, ինչպես նշում է Բաբկեն Արարքցյանը, ստիպված էր անընդհատ կատարել սահմանադրական փոփոխություններ և շտկումներ: Օրենսդրական փակուղուց դուրս գալու նպատակով խորհրդարանը 1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունել է առաջին սահմանադրական օրենքը՝ «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին», որի համաձայն՝ մինչև նոր սահմանադրության ընդունումը դադարեցվեց սահմանադրական այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին: Դեռ ավելին, մինչև վերոհիշյալ օրենքի ընդունումը 1990 թ. նոյեմբերի 11-ին ստեղծվել էր սահմանադրական հանձնաժողով, որը ձեռնամուխ էր եղել նոր Սահմանադրության նախագծի մշակման բավական բարդ և պատասխանատու խնդրի կայացմանը և այլն: Փաստորեն՝ պայքար էր ծավալվում Խորհրդային Միության արդեն իրար հակադիր ղեկավարության և անկախության ուղին ընտրած ուժերի, նրա սուբյեկտների միջև: Դրա լավագույն օրինակներից մեկն այն է, որ հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությունը 1991 թ. հունվարի 31-ին ընդունել էր որոշում՝ կասեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ պաշտպանության և ներքին գործերի նախարարների 1990 թ. դեկտեմբերի 29-ի «Ներքին գործերի մարմինների աշխատակիցների, խորհրդային բանակի ռազմածովային նավատորմի զինծառայողների համատեղ պարեկություն կազմակերպելու մասին» հրամանի գործունեությունը՝ այն որակելով որպես հակասահմանադրական և

ստեղծված իրավիճակում սաղրիչ փաստաթուղթ: Նույն օրը՝ հունվարի 31-ին, ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց մեկ այլ որոշում, որով նույնպես կասեցվում էր Հայաստանի տարածքում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահի 1991 թ. հունվարի 26-ի «Տնտեսական սաբոտաժի և տնտեսության ոլորտի այլ հանցագործությունների դեմ պայքարի ապահովման միջոցառումների մասին» հրամանագիրը՝ հիմնավորելով, որ այդ որոշումները հակասում են մարդու իրավունքների միջազգային նորմերին և ՀՀ գործող օրենսդրությանը, և որ այդ փաստաթղթերի իրագործումը կարող էր էապես ապակայունացնել հանրապետության ներքին կյանքը[294]:

Նման պայմաններում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991 թ. հունվարի 30-ին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, իսկ մարտի 1-ին ընդունեց օրենք, որով մերժում էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1991 թ. հունվարի 16-ի «ԽՍՀՄ-ի պահպանման հարցը ԽՍՀՄ-ում հանրաքվե կազմակերպելու և անցկացումը ապահովող միջոցառումների մասին» որոշումը, որտեղ հստակորեն դրսևորվեց բացասական վերաբերմունք հանրաքվեի նկատմամբ:

ՀՀ Գերագույն խորհուրդը հայտարարեց, որ նախ ԽՍՀՄ-ի պահպանման մասին հանրաքվեն չնախատեսված էր, իսկ անցկացումը՝ անընդունելի, քանի որ նման հանրաքվեն խոչընդոտում է հանրապետությունների, ինքնավար կազմավորումների ինքնորոշման իրավունքի իրագործումը: Եվ քանի որ դա անչափ բախտորոշիչ հարց էր, ուստի այն բավական հանգամանորեն քննարկվել էր նաև Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1991 թ. փետրվարի 28-ի նիստում, որտեղ, բազմաթիվ այլ ելույթներից զատ, ելույթ էր ունեցել նաև ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը՝ ընդգծելով այն գաղափարը, որ ԽՍՀՄ-ը և նրա տիպի ցանկացած նոր միությունը դատապարտված է լինելու ոչնչացման: Ցանկալի և հնարավոր էր, որ Միության քայքայումը կատարվեր

---

[294] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 2 փետրվարի, 1991թ., **Պողոսյան Է.,** նշվ. աշխ., էջ 54-55:

բնական, անարյուն, քաղաքակիրթ ձևով և սա կվերածվեր ժողովուրդների մի համերաշխ համագործակցության, ինչպիսին է, օրինակ, Եվրոպական երկրների համերաշխ համագործակցությունը: Եվ որքան էլ դա ճիշտ էր, ցավոք, անգամ Լևոն Տեր-Պետրոսյանը չէր ուզում տեսնել, որ իր ասած, պատկերացրած եվրոպական երկրների համերաշխ համագործակցությունը ևս կարող էր ճաքեր տալ, և ինչպես ճանաչված աշխարհաքաղաքագետ Սեմուել Հանթինգթոնը կասեր, առաջացնել քաղաքակրթությունների բախում, որի հաղթահարումը և իր երազած ժամանակին հասնելը այնքան էլ մոտ չէր:

Անկասկած, վերը ասածը բավական տարողունակ և այլ քննարկման հարց է, բայց գալով Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթին՝ նշենք, որ նա այդ ամենն ասում էր հիմնավորելու գլխավոր միտքը, որ պետք է մերժել Խորհրդային Միության հետագա գոյությունը և անցկացնել անկախության հանրաքվե: Ընդ որում, այլ բան, ըստ մեզ, երևի չէր կարելի ենթադրել, քանի որ Արցախյան շարժման եթե ոչ առաջին իսկ օրերից, ապա հետագա ամբողջ ժամանակաշրջանը ընթացել է այլ կարգախոսների կողքին, նաև անկախության կոչերով, և իր գագաթնակետին հասավ 1991 թ., երբ արդեն դրանով ապրում էին նաև «9+1»-ին չմիացած մյուս հանրապետությունները: Այնպես, որ նման որոշումը՝ չմասնակցել Խորհրդային Միությունը փրկելու, պահպանելու և նորացնելու գորբաչովյան ծրագրին, ուղիղ տրամաբանական շարունակությունն էր այն քաղաքականության, որը վարում էր «Ղարաբաղ» կոմիտեն, ՀՀՇ-ն պայքարի ելած իր գործունեության ընթացքում: Բայց նաև շատ լավ տեսնելով այդ ամենն իրականացնելու դժվարություններն ու խոչընդոտները, նա նաև նշում էր, որ նախ անհրաժեշտ էր մերժել ԽՍՀՄ-ը պահպանելու անհրաժեշտությունը և Հանրապետության անկախացման համար անցկացնել հանրաքվե: Նա միաժամանակ տեսնում էր, որ չի բացառվում, որ անգամ անկախության հանրաքվեից հետո կենտրոնի հարկադրանքի դեպքում ստիպված կարող է լինել կնքել միութենական պայմա-

նագիր, որքան էլ այն ստրկական լինի[295]: Ելնելով դրանից՝ Հայաստանի հանրապետության Գերագույն խորհուրդը որոշեց.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում չանցկացնել ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեն:

2. Համարել, որ ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեի արդյունքները Հայաստանի Հանրապետության համար իրավական ուժ չունեն[296]:

Իսկ արդեն վերոհիշյալ որոշմանը 1991 թ. մարտի 1-ին հետևեց դրանից բխող մեկ այլ որոշում՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին», որում ասվում էր. «Ելնելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի դրույթներից ու նպատակներից և հիմնվելով Հայաստանի Հանրապետության սահմանադրության 98-րդ հոդվածի 5-րդ կետի վրա՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ՝ քվեարկության դնելով հետևյալ հարցը. «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ կազմից» դուրս:

2. Հանրաքվեն անցկացնել 1991 թ. սեպտեմբերի 21-ին:

3. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությանը իրավունք տալ իրադրության կտրուկ փոփոխության դեպքում որոշում կայացնել հանրաքվեն ավելի վաղ ժամկետում անցկացնելու մասին:

4. Հանրաքվեի անցկացման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության բյուջեից»[297]:

---

[295] Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.,** Ընտրանի (ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երևան, 2006, էջ 176-177:

[296] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 5(985), 15 մարտի, 1991, էջ 3:

ՀՀ Գերագույն խորհրդի վերոհիշյալ որոշումները հետապնդում էին մեկ կարևոր նպատակ՝ ամեն ինչ անել անկախության հանրաքվեն իրականացնելու համար: Եվ դա է պատճառը, որ 1991 թ. ապրիլի 2-ին Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց «Հանրաքվեի մասին» օրենք, որտեղ նշվում էր, որ, ի թիվս այլ կարևորագույն հարցերի, համաժողովրդական հանրաքվեով պետք է լուծվեին նաև Հայաստանի Հանրապետության կարգավիճակի փոփոխման վերաբերյալ հարցերը և այլն[298]:

Բնական է, որ այդ ամենը նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ էր ստեղծել հանրաքվեն կազմակերպող և անցկացնող հանձնաժողով: Այդ նպատակով 1991 թ. մայիսի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով կազմելու մասին որոշում, իսկ հետո հաստատեց հանձնաժողովի կազմը: Հանձնաժողովի նախագահ ընտրվեց Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բաբկեն Արարքցյանը, որն էլ անցկացրեց հանձնաժողովի առաջին նիստը, որտեղ քննարկվել և ընդունվել են հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ համապատասխան որոշումներ, կազմակերպչական բնույթի հարցեր և այլն: Նիստում նաև հաստատվել էր հանրաքվեի անցկացման քաղաքային, շրջանային և տեղամասային հանձնաժողովների ձևավորման օրացուցային պլանը, որը կազմակերպելու և վերահսկելու նպատակով ստեղծվեց աշխատանքային հատուկ խումբ: Ձևավորվեցին նաև աշխատանքային այլ խմբեր, որոնք պետք է ապահովեին հանրաքվեի օտարերկրյա դիտորդների և լրագրողների ներկայությունը և ապահովեին հանրաքվեի գործընթացի անհրաժեշտ հրապարակայնությունը[299]:

Հասկանալի է, որ հետագա աշխատանքներն ավելի կազմակերպված անցկացնելու նպատակով հանձնաժողովը պարբերաբար

---

[297] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 5(985), 15 մարտի, 1991, էջ 3-4:

[298] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 120:

[299] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 10 (990), 31 մայիսի, 1991, էջ 32-33:

քննարկում էր հանրաքվեին առնչվող բազմաթիվ հարցեր, որը պայմանավորված էր տեխնիկական, ֆինանսական և բազմաթիվ այլ կազմակերպչական հարցերով: Օգոստոսի 16-ի հանձնաժողովի հերթական նիստում որոշվեց հանրաքվեի աշխատանքները համակարգելու նպատակով համապատասխան խմբերի կողմից պարբերաբար կազմակերպել հաշվետվություններ, որոնցում ներկայացնել ընտրությունների կազմակերպման ուղղությամբ կատարած աշխատանքները: Այդ նիստում ընդունվեց նաև սեպտեմբերի 21-ի հանրաքվեի՝ Ռ. Արուտչյանի, Կ. Փաշայանի հեղինակած տարբերակը, ինչպես նաև հաստատվեց քվեաթերթիկների նմուշը[300]: Աշխատանքները կազմակերպելու, հանրաքվեն անցկացնելու համար ՀՀ Գերագույն խորհուրդը ավելի վաղ՝ 1991 թ. հունիսի 24-ի որոշմամբ նախատեսել էր այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացնել 1,8 միլիոն ռուբլի[301]:

Գործընթացների զարգացումը կանխելու, դժվարություններ առաջացնելու նպատակով միութենական իշխանությունները ստեղծում էին տարբեր կարգի խոչընդոտներ հատկապես այն հանրապետությունների նկատմամբ, որոնք անթաքույց և ավելի բարձրաձայն խոսում և գործում էին իրենց անկախության օգտին: Պատահական չէ, որ Մոսկվան ամեն ինչ անում էր կասեցնելու, խոչընդոտելու Հայաստանի Հանրապետության անկախության գործընթացը՝ օգտագործելով ադրբեջանական գործոնը, արհեստականորեն սրելով տարածաշրջանում իրադրությունը, ինչպես նաև ստեղծելով այն թյուր կարծիքը, որ իբր առանց Խորհրդային Միության աջակցության հանրապետությունը (նկատի ունի Հայաստանի Հանրապետությունը) անկարող էր ինքնուրույն գոյատևել՝ նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետությունը ետ պահել անկախության ուղուց և հետամուտ լինելով օրինական իշխանությունների տապալմանը[302]:

---

[300] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N16 (996), 31 օգոստոսի, 1991, էջ 27-28, N 12 (992), 30 հունիսի, 1991, էջ 9:
[301] Տե՛ս նույն տեղում, N 12 (992), 30 հունիսի, 1991, էջ 9:
[302] Տե՛ս նույն տեղում, N 10 (990), 31 մայիսի, 1991, էջ 3:

Ընդհանրապես նման հանրապետությունների շարքում, Հայաստանից զատ, հատկապես առանձնանում էին մերձբալթյան հանրապետությունները, ինչպես նաև Մոլդովան ու Վրաստանը: Կենտրոնի, Մ. Ս. Գորբաչովի գլխավոր մտահոգությունը նման պայմաններում նորացված ֆեդերացիայի, միութենական նոր պայմանագրի և նոր տարբերակների կազմումն էր: Ի դեպ, հետաքրքիր է ասել, որ այդ նպատակով դեռևս 1991 թ. հունիսի 14-ին և 18-ին կազմվել և երկրի հանրությանն էր ներկայացվել դաշնագրի երկու տարբերակ: Որոշակի քննարկումներից հետո կազմվեց 26 կետից բաղկացած միութենական պայմանագրի, դաշնագրի նախագիծ, որը կոչվում էր «Դաշնագիր ինքնիշխան պետությունների միության մասին»[303], որն էլ պետք է դրվեր համաժողովրդական քննարկման:

Ի դեպ, Մ. Ս. Գորբաչովը միութենական նոր դաշնագրի, նախագծի հետ, որի կազմմանը մասնակցել էին միութենական և ինքնավար հանրապետությունների ղեկավարները Նովո Օգարյովում 1991 թ. ամռանը, բավական մեծ հույսեր էր կապում, որքան էլ որ շատ լավ գիտակցում էր, որ այդ փաստաթուղթը կրում էր կոմպրոմիսային բնույթ, մանավանդ որ բավական դժվար էր այս կամ այն հարցում համաձայնության գալ ինչպես հանրապետությունների ղեկավարների, այնպես էլ հատկապես Բ. Ն. Ելցինի հետ[304]: Իսկ ինչպես գրում են հետազոտողներից Ն. Վ. Ելիսեևան և ուրիշներ Նովոօգորյովյան գործընթացը դիտում էին որպես «Մի շարք անսպասելի երևույթների ձգանի արձակում»[305]: Բայց անկախ այդ հարցում եղած տարբեր կարծիքներից՝ Մ. Ս. Գորբաչովը որոշակի հույսեր էր փայփայում, որ կարող է ԽՍՀՄ-ը փրկել փլուզումից, որի համար էլ մերձմոսկովյան Նովո Օգորյովո բնակավայրում 1991 թ. ապրիլ-օգոստոս ամիսներին հաճախ կազմակերպում էր միութենական նոր պայմանագրի տեքստի քննարկումներ: Ապրիլ-մայիս ամիսներին այդ քննարկումներին

---

[303] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 9 հուլիսի, 1991:
[304] Տե՛ս **Елисеева Н. В.,** История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016, с. 435:
[305] Տե՛ս նույն տեղում:

հրավիրվել էր նաև ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, որը, սակայն, չէր մասնակցել: Նա մասնակցել է 1991 թ. հունիսի 23-ի քննարկմանը, որտեղ էլ կազմակերպված մամուլի ասուլիսում հիմնավորել է նման քննարկմանը մասնակցելու իր դրդապատճառները: Թղթակցի այն հարցին, որ Լևոն Պետրոսյանի մասնակցությունը հիմք է տվել Մ. Ս. Գորբաչովին՝ եզրակացնելու, որ Հայաստանը պատրաստ է ստորագրել միութենական պայմանագիրը, Լևոն Տեր-Պետրոսյանը պատասխանել է, որ Հայաստանը ընտրել է անկախության ուղին, որի մասին ավելի վաղ «Լը մոնդ» թերթին տված հարցազրույցում (25 հուլիսի 1991թ.) ասել էր, որ Հայաստանը ցանկանում է նվաճել իր անկախությունը[306]: Իսկ երբ արդեն 1991 թ. օգոստոսի 2-ին Մ. Գորբաչովը ողջ երկրին հեռուստատեսությամբ հայտարարեց, որ միութենական դաշնագիրը բաց է ստորագրության համար, Հայաստանի Հանրապետությունը չմասնակցեց: Իսկ Դաշնագիրը նախատեսում էր ստեղծել խորհրդային ինքնիշխան, սուվերեն հանրապետությունների միություն (СССР)՝ որպես ԽՍՀՄ-ի իրավահաջորդ: Նոր դաշինքի անդամ պետք է դառնային Խորհրդային Միության 15 հանրապետություններից 9-ը՝ Բելառուսիան, Ղազախստանը, ՌԽՖՍՀ-ը, Տաջիկստանը և Ուզբեկիստանը, որոնց նույն թվականի աշնանը պետք է միանային Ադրբեջանը, Կիրգիզիան, Ուկրաինան և Թուրքմենիան: Միության ղեկավարությունը ծրագրել էր դաշնագիրը ստորագրել 1991 թ. օգոստոսի 20-ին: Այդ համաձայնությունը կայացավ մերձմոսկովյան Նովո Օգարյովո բնակավայրում և ստացավ պատմությանը հայտնի «9+1»-ի հայտարարություն, որտեղ հավաքվել էին վերը թվարկած հանրապետությունների ղեկավարները՝ մշակելու Միության դաշնագրի նախագիծը: Այդ գործընթացը որոշիչ դեր խաղաց 1991 թ. օգոստոսյան իրադարձությունների ընթացքի վրա, որն էլ հայտնի է որպես «օգոստոսյան խռովություն»: Դաշնագրի գլխավոր խնդիրը կենտրոնի և հանրապետությունների միջև իրավասությունների հարցն էր: Դաշնագրի տեքս-

[306] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 14 օգոստոսի, 1991:

տում այդ խնդիրը լուծում էր կենտրոնի նկատմամբ հանրապետությունների գերակայությունների օգտին, ինչն էլ նշանակում էր, որ Մ. Ս. Գորբաչովը, որքան էլ որ ինքն էր նրա կազմման նախաձեռնողը, չկարողացավ հակադրվել հանրապետությունների պահանջներին, ընդ որում՝ առաջին հերթին Բ. Ն. Ելցինին: Եվ ինչպես հետազոտողներից Ի. Յ. Ֆրոյանովն է գնահատում, Ինքնիշխան պետությունների համագործակցությունը (ԻՊՀ- ՍՍՀ) կոնֆեդերացիա էր և վեր էր ածվել անկախ հանրապետությունների ակումբի: Ճիշտ է նկատում մեկ ուրիշ հետազոտող Ս. Վ. Չեշկոն, որ այդ նախագիծը չէր կարող լիովին բավարարել ոչ «ֆեդերալիստներին» և ոչ էլ «կոնֆեդերալիստներին»[307]:

Ինչ վերաբերում է Հայաստանի կոմունիստական կուսակցության նման դիրքորոշմանը, ապա պետք է ասել, որ ՀԿԿ-ն կողմնակից էր Մ. Ս. Գորբաչովի նախագծին: Հայաստանի կոմկուսը գտնում էր, որ սթափ մոտեցումը թելադրում է համաձայնություն տալ նոր դաշնագրի (նկատի ունեին 9+1 դաշնագրին) նախագծին և անհապաղ կնքել այդ համաձայնագիրը, քանի որ ըստ կոմունիստների՝ այն որոշակիացնում էր հայ ժողովրդի ապագան, ապահովում նրա կենսագործունեությունը և լիովին համապատասխանում է հայ ժողովրդի ազգային ավանդույթներին ու քաղաքական կողմնորոշմանը: Իսկ ինչ վերաբերում է Հանրապետության ավելի չափավոր քաղաքական ուժերին, ապա պետք է ասել, որ նրանք, չժխտելով Հայաստանի անկախացման հանրաքվեի անրաժեշտությունը, միաժամանակ հաշվի էին առնում միութենական նոր դաշնագրի նախագծի առկայությունը՝ առաջարկելով հանրաքվեի դնել 2, ըստ էության, այլընտրանքային հարցադրում՝ անկախանա՞լ ընդհանրապես, թե՞ մտնել իբր հանրապետության ինքնիշխանությունը հնարավորինս ապահովող «նորոգ» միության մեջ:

Մինչդեռ հակառակ Հայաստանի կոմունիստական կուսակցությանը՝ հանրապետության ազգաբնակչության գերակշռող մասը և

---

[307] Տե՛ս **Елисеева Н. В.,** История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016, с. 435, 436:

արդեն ամենաազդեցիկ քաղաքական ուժերը, հասկանալի է, առաջին հերթին երկրի քաղաքական ղեկին կանգնած ՀՀԾ-ն անվերապահորեն պաշտպանում էր Հայաստանի լիակատար անկախացման գաղափարը[308]:

Վերջին հաշվով հայ ժողովրդի այդ կամքը ամրագրված էր ՀՀ անկախության հռչակագրում, որից շեղվել հնարավոր չէր, մանավանդ որ գորբաչովյան դաշնագրի տարբերակը լի էր անչափ մեծ անորոշություններով, Խորհրդային Միությունը ձևափոխված ձևով պահպանելու հարցադրումներով և այլն, որքան էլ որ կարծիքներն այս հարցում տարբեր էին, երբեմն նույնիսկ իրար հակասող: Օրինակ՝ ուսումնասիրողներից Ռ. Գ. Պիխոյան Միության դաշնագրի կազմման աշխատանքներում անհաջողությունների պատասխանատվությունը վերագրում էր Միության ղեկավարությանը, որը բանակցությունների ընթացքում չէր ցանկանում հոգուտ հանրապետությունների լուծել իշխանական ուժերի իրավունքների հարաբերակցությունը:

Զ. Ա. Ստանկևիչի կարծիքով Նովոօգարյովյան գործընթացի ձախողման ողջ պատասխանատվության գործում «հավասարաչափ» մեղավոր են թե՛ հանրապետական և թե՛ միութենական էլիտան: Այդ հարցում իրար հակադիր կարծիք են հայտել հետազոտողներ Ա. Ս. Բարսենկովը և Ա. Ս. Շոբինը: Ա. Ս. Բարսենկովը դաշնագիրը գնահատել է որպես մի փաստաթուղթ, որը նշանակում էր դադարեցնել Խորհրդային Միության գոյությունը որպես միասնական պետություն, իսկ Ա. Ս. Շոբինը, հակառակ դրան, գտնում էր, որ «Ինքնիշխան պետությունների միություն» (ԻՊՄ-ՍՍԳ) դաշնագրի նախագիծը, որը ներկայացված էր 1991 թ. օգոստոսի 20-ին ստորագրման, վավերացնում էր Խորհրդային Միության վերափոխումը Դաշնային (ֆեդերատիվ) միության և ոչ թե վերպետական կազմավորման, որտեղ նրա անբաժանելի մասերն ունեին լայն ինքնավարություն, պահպանում էին համամիութենական շուկան և քաղաքա-

[308] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 9 հուլիսի, 1991:

ցիների հավասար իրավունքները ԽՍՀՄ ողջ տարածքում: Իսկ այն փաստը, որ միութենական դաշնագիրը չէր դրվելու երկրի բարձրագույն իշխանության՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարում քննարկման, նշանակում էր իրավաբանական նորմերի խախտում[309]:

Եվ երբ, պայմանավորված այդ հարցով, միութենական դաշնագիրը ստորագրող հանրապետությունների ղեկավարները որոշեցին օգոստոսի12-ին հավաքվել Ալմա-Աթայում և քննարկել միութենական դաշնագիրը և դրան առնչվող այլ հարցեր, Մ. Ս. Գորբաչովը, ինչպես նշում է Ն. Վ. Ելիսեևան, այդ մասին իմացավ օգոստոսի 10-ին միանգամայն պատահականորեն, բայց և կարողացավ կանխել դրա հրավիրումը: Այսպիսով՝ նոր Միութենական դաշնագիրը, որը կոչված էր դառնալու ապագա նորացված Խորհրդային Միության Սահմանադրությունը, իրականում դարձավ իրադարձությունների հետագա զարգացման «երկճողության (бифуркация) ելակետը», որն էլ նշանակում էր, որ արդեն այդ ժամանակ Մ. Ս. Գորբաչովը չէր տիրապետում իշխանությանը և օբյեկտիվորեն մեկուսացվել, հեռացել էր որոշումներ ընդունելու իրավունքից: Եվ ինչպես ստեղծված իրավիճակի մասին պատկերավոր ձևով գրում էր Վ. Բոլդինը, Մ. Ս. Գորբաչովը միայն ձիու սանձերն էր ամուր պահում, իսկ նրա կառքի ձիերն արդեն ճգում էին ուրիշի կառք և այն էլ ուրիշ ուղղությամբ:

Նման պայմաններում կենտրոնի անջատողական ուժերն էլ ավելի ակտիվացան, որի համար Վ. Լ. Շեյնիսի գնահատմամբ «9+1» փաստաթուղթը դիտվեց որպես փոքր շրջադարձային կետ օգոստոսյան խռովությանը նախորդած արտակարգ իրավիճակի հաստատման վազքում:

Հետաքրքիր է նաև ասել, որ երկրում արտակարգ իրավիճակ մտցնելու գաղափարը առաջին անգամ առաջացել էր դեռևս 1991 թ. մարտին, որի համար էլ Մ. Ս. Գորբաչովը ստեղծել էր հանձնաժողով՝ Գ. Ի. Յանաևի գլխավորությամբ, որի մեջ մտնում էին ապագա

---

[309] Տե՛ս **Елисеева Н. В.,** История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016, с. 436:

«ԳԿՊԿ»-ի բոլոր անդամները՝ բացի Տիզյակովից և Ստարոդուբցովից: Իսկ եթե դրան ավելացնենք, որ 1991 թ. մայիսին հրատարակվել էր երկրի տարբեր տարածքներում և ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտներում արտակարգ իրավիճակ հաստատելու մասին Մ. Ս. Գորբաչովի որոշումը, որը համաձայնեցվել էր Ելցինի, Պուգոյի (ԽՍՀՄ ներքին գործերի նախարար) և Յազովի (ԽՍՀՄ պաշտպանության նախարար) հետ, որոնք համաձայն էին միայն հարցը սահմանադրական եղանակով որոշելու դեպքում, այն է՝ պրեզիդենտի հավանությամբ և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ[310] և այլն, խոսում է այն մասին, որ Միությունում ընթացող գործողությունները դարձել էին անկառավարելի: Մինչդեռ անհրաժեշտ է ասել, որ ԽՍՀՄ 1977 թ. սահմանադրությամբ երկրում հատուկ կառավարման միայն մեկ ձև էր նախատեսում՝ «ռազմական դրություն», որի համար էլ դեռևս 1988 թ. դեկտեմբերին Խորհրդային Միության Գերագույն խորհուրդը Միության մի շարք շրջաններում հասարակական-քաղաքական իրավիճակի կայունության հաստատման համար ԽՍՀՄ գործող սահմանադրությունում կատարեց փոփոխություն՝ մտցնելով նաև «արտակարգ իրավիճակ» ձևակերպումը: Փաստորեն՝ ռազմական դրության հետ միասին 1988 թ. նախատեսվում էր նաև մեկ միջոցառում ևս՝ արտակարգ իրավիճակի հաստատում: Բայց նաև այս հարցում տեղին է հիշեցնել, որ մինչև վերը թվարկված լրացումների մասին որոշումներ ընդունելը նման փորձ օգտագործվեց, կիրառվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում (1988 թ. սեպտեմբեր)՝ մտցնելով արտակարգ դրություն և պարետային ժամ, իսկ 1989 թ. հունվարից՝ «կառավարման հատուկ ձև»: Նույնը նաև այդ ժամանակ կիրառվեց Խորհրդային Հայաստանի նկատմամբ՝ մտցնելով արտակարգ իրավիճակ և պարետային ժամ:

Ընդհանուր առմամբ 1990 թվականից սկսած միութենական և հանրապետական համապատասխան մարմինների կողմից նման

---

[310] Տե՛ս **Елисеева Н. В.,** История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016, с. 437:

որոշումներ ընդունվել են մոտ 25 անգամ[311]: Իսկ այն փաստը, որ գորբաչովյան «վերակառուցման» ողջ ընթացքում աշխատանքի նման ձևը լայնորեն կիրառվում էր աշխատանքի տարբեր ոլորտներում, հատկապես ռադիո և հեռուստակոմունիկացիոն, տեղեկատվական, լրատվական, հրատարակչական ոլորտներում և այլն, վկայում է այն մասին, որ իշխանությունները, միութենական կոմունիստական կուսակցությունը վտանգված էին տեսնում երկրի ապագան և ամեն ինչ անում էին՝ այն փրկելու համար:

Փաստորեն՝ 1991 թ. օգոստոսին հայտնի խռովության նախօրյակին, ըստ Վ. Լ. Շեյնիսի, ԽՍՀՄ-ում քաղաքական ուժերի հարաբերակցությունն ուներ հետևյալ պատկերը.

1. Ցանկացած պայմաններում միութենական դաշնագիրը ստորագրողների կողմնակիցներ (Մ. Ս. Գորբաչովը և նրա կողմնակիցները):

2. Միութենական դաշնագիրը ստորագրողների հակառակորդներ և Խորհրդային Միության միասնությանը սպառնացողներ (կուսակցական և պետական բյուրոկրատիան, մտավորականության մի մասի ներկայացուցիչներ, զինված ուժեր, հատուկ ծառայությունների ուժեր):

3. Այլ ուժեր, որոնք տարբեր վերաբերմունք, մոտեցումներ ունեին միութենական դաշնագրի նկատմամբ. ա) համաձայն են ստորագրել պայմանագիրը, բայց այն օգտագործել իրենց ինքնորոշումը ուժեղացնելու նպատակով (Ռուսաստան, միջինասիական հանրապետություններ), բ) Միութենական դաշնագիրը ստորագրելուց հրաժարվողներ (մերձբալթյան հանրապետություններ)[312]:

Տարօրինակ է, որ Վ. Լ. Շեյնիսը չէր նշում անդրկովկասյան հանրապետություններին՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, որոնք ևս, հատկապես Հայաստանը և Վրաստանը բացահայտորեն կողմ էին անկախությանը: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, դա

---

[311] Տե՛ս **Елисеева Н. В.,** История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016, с. 438-439:

[312] Տե՛ս նշվ. աշխ., էջ 438-439:

առանձին հարց է, մանավանդ որ նա ուներ Լեռնային Ղարաբաղի և դրա նման բազմաթիվ այլ հարցեր: Ավելի կոնկրետ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի համար դարձել էր ադրբեջանական ազգային նախագծի կենտրոնական հարցը: Եվ ազգային շարժումը Ադրբեջանում ուներ ուղղակի մեկ նպատակ՝ ամեն ինչ անել կանխելու Հայաստանին միանալու Լեռնային Ղարաբաղի բոլոր փորձերը: Իսկ ինչ վերաբերում է Վ. Լ. Շեյնինի կարծիքին, ապա պետք է ասել, որ դա մենք ներկայացրել ենք՝ ցույց տալու համար, որ միութենական ծավալի ուսումնասիրություններում առանձին հետազոտողներ չէին կարող հաղթահարել իրենց նեղ, երբեմն սահմանափակ, կողմնակալ մոտեցումները և պատմական այդ կարևոր, վճռական, առանց չափազանցության, թերևս, բախտորոշիչ ժամանակաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները ներկայացնել այնպես, ինչպես կա, այն է՝ օբյեկտիվ, իրատեսական և ոչ կողմնակալ դիրքերից, ինչն էլ կնշանակի լինել պատասխանատու պատմության, ժամանակի և ինչու չէ նաև քո առաջ:

Ի դեպ, նույն երևույթը, ինչպես տեսանք միանգամայն այլ դիրքերց էին ներկայացնում հայ պատմաբանները, քաղաքագետները, տնտեսագետները և բոլոր կարգի ուսումնասիրողները: Ընդ որում՝ դա ավելի օբյեկտիվ էր և բխում էր հենց գորբաչովյան «վերակառուցման» ոգուց, որքան էլ որ դրանցում (վերակառուցման սկզբունքները) Միությունը փլուզելու հարցադրում չկար, իսկ նրա հեղինակը (Մ. Ս. Գորբաչովը) չէր էլ կարող նման բան երևակայել: Մինչդեռ երևույթների զարգացումներն այլ ընթացք ունեցան: Եվ երբ Մ. Ս. Գորբաչովը մեկուսացված էր և փակված Ղրիմում՝ իր հանգստավայր Փարոսում, 1991 թ. օգոստոսի 19-ին՝ առավոտյան ժամը 4-ին, Խորհրդային Միության հեռագրական գործակալությունը հաղորդեց, որ ԽՍՀՄ-ի մի շարք շրջաններում մտցված է արտակարգ իրավիճակ:

Գորբաչովի բացակայության պայմաններում երկրի ղեկը իր վրա էր վերցրել վիցեպրեզիդենտ Գ. Ի. Յանաևը: Հաղորդագրության մեջ ասվում էր, որ Խորհրդային Միությունում հաստատվել է արտա-

կարգ իրավիճակ, և ստեղծվել է Արտակարգ դրության պետական կոմիտե (ԱԴՊԿ- ԳԿՊ), որին էլ անցել էր երկրի ողջ իշխանությունը: Կոմիտեի կազմում ընդգրկված էին ութ անդամներ՝ Գ. Ի. Յանաևը՝ ԽՍՀՄ փոխնախագահ, Վ. Ս. Պավլովը՝ ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ, Դ. Տ. Յազովը՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարար, Բ. Կ. Պուգոն՝ ԽՍՀՄ ներքին գործերի նախարար, Վ. Ա. Կրյուչկովը՝ ԽՍՀՄ անվտանգության պետական կոմիտեի նախագահ, Օ. Դ. Բակլանովը՝ Պաշտպանության խորհրդի նախագահի տեղակալ, Վ. Ա. Ստարոդուբցովը՝ ԽՍՀՄ գյուղացիական միության նախագահ, Ա. Ի. Տիզյակովը՝ Պետական ձեռնարկությունների միության նախագահ:

Բացի պաշտոնապես հայտարարված (ԱԴՊԿ- ԳԿՊ) անդամներից՝ կային նաև կոմիտեի կողմնակիցներ («շրջապատ»): Դրանց շարքում հատկապես առանձնանում էին ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար, քաղբյուրոյի անդամ Օ.Ս. Շեյնինը, կուսակցական շինարարության և կադրային աշխատանքների հարցերը սպասարկող Յու. Ա. Պրոկոֆևը:

Արտակարգ դրության անունից նույն օրը Խորհրդային Միության հեռագրական, լրատվական բոլոր միջոցներով, ողջ երկրով մեկ հրապարակվեց «Խորհրդային ժողովրդի ուղերձը» և մի շարք այլ որոշումներ, որոնցում շարադրված էին Արտակարգ դրության պետական կոմիտեի գործողությունների ծրագիրը, որտեղ կոշտ և հստակորեն ձևավորված, ախտորոշված էր, որ վերակառուցումը ապրեց ճգնաժամ և կրեց պարտություն, որի ձախողումը հանգեցրեց երկրի անկառավարելիությանը՝ իր մեջ կլանելով, խժռելով նոր ծնվող դեմոկրատիայի սաղմերը: Իսկ նոր ծնվող էքստրեմիստական ուժերը ընտրել էին ուզած գնով Խորհրդային Միությունը փլուզելու, վերացնելու և իշխանությունը զավթելու կուրս:

Փաստորեն՝ ոտնահարվեցին Խորհրդային Միության միասնության համազգային հանրաքվեի արդյունքները, իսկ ԱԴՊԿ-ԳԿՊ-ն հայտարարեց ԽՍՀՄ Սահմանադրությանը չհամապատասխանող իշխանական կառույցների արգելման մասին: Արգելվեցին նաև ընդ-

դիմադիր կուսակցությունների գործունեությունը, հանրահավաքներ, երթեր անցկացնելն ու իրավունքները, տնտեսական ռեֆորմների իրականացնելու հնարավորությունները և այլն: Մոսկվա, Լենինգրադ և մի շարք այլ քաղաքներ մտցվեցին զորքեր: Պաշտպանության նախարար Դ. Յազովը հրաման արձակեց ԽՍՀՄ զինված ուժերը դնել ռազմական պատրաստության մեջ: Բայց նաև հարկ է ընդգծել, որ ԱԴՊԿ-ԳԿՊ գործունեությունը դրանով ավարտվեց[313]: Այդ հանգամանքը բացատրվում էր նրանով, որ ԱԴՊԿ-ԳԿՊ-ն աջակցություն չստացավ ինչպես ողջ հասարակության, այնպես էլ համապատասխան կազմակերպությունների կողմից: Բավական է ասել, որ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն անմիջապես արտահայտեց իր կարծիքը, իր դիրքորոշումը: Արտակարգ իրավիճակի երկրորդ օրը՝ օգոստոսի 20-ին, ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն ուղերձ հղեց տարածաշրջանային կուսակցական կոմիտեներին՝ նշելով, որ ԽՍՀՄ-ում արտակարգ իրավիճակ մտցնելը ոչ ցանկալի է, բայց նաև պետական ղեկավարության կողմից հարկադիր քայլ՝ ի պատասխան երկրում ստեղծված ճգնաժամային իրավիճակի: Ուղերձում նաև նշվում էր, որ Քաղբյուրոն իր վերաբերմունքը կառուցելու է իրական գործողությունների հիմքով, ժողովրդի շահերի համապատասխան:

Հետաքրքիր է ասել, որ մի շարք հանրապետությունների, մարզերի, ինքնավար հանրապետությունների կուսակցական կազմակերպություններ պաշտպանեցին ԱԴՊԿ-ԳԿՊ-ի քայլը, որոնց շարքում հատկապես հարկ է նշել Կիրգիզիայի, Ուկրաինայի, Հյուսիսսեթական Ինքնավար Հանրապետության, Լատվիայի, Լիտվայի և այլ շրջանների կուսակցական կազմակերպությունները, դրանց առանձին գործիչները և այլն: Դրանց շարքում հատկապես առանձնանում էր Լատվիայի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ռուբիկսը, որը ԱԴՊԿ- ԳԿՊ-ին կոչ էր անում ծավալել ակտիվ գործողություններ: Կային նաև կուսակցական գործիչներ, որոնք գրավել էին խուսափողական դիրք: Օրինակ՝ Թուրքմենիայի կոմկուսի կենտկո-

[313] Տե՛ս **Елисеева Н. В.,** История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016, с. 440-441:

մի առաջին քարտուղար Ս. Նիյազովը, իսկ Էստոնիայի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Է. Սիլլարին և Ղազախստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ն. Նազարբաևը կտրուկ դատապարտեցին ԱԴՊԿ-ԳԿՊ-ի գործողությունները:

Ինչ վերաբերում է ՌԽՖՍՀ-ին, որի դերակատարությունը խռովությունը ճնշելու գործում բավական մեծ էր, ապա պետք է ասել հետևյալը: Օգոստոսի 19-ին խռովության հենց առաջին օրը ՌԽՖՍՀ նախագահ Բ. Ն. Ելցինը և կառավարությունը հանդես եկան ԱԴՊԿ-ԳԿՊ-ի գնահատմամբ՝ նշելով, որ իրավական դիրքերից գնահատելու դեպքում այն դիտվում է որպես ռեակցիոն, հակասահմանադրական հեղաշրջում:

Փաստորեն՝ այդ քայլով խռովությունը ճնշելու նախաձեռնությունը անցնում էր ռուսական իշխանություններին և հենց Բ. Ն. Ելցինին, որի շուրջն էլ սկսեցին համախմբվել, հավաքվել ԱԴՊԿ-ԳԿՊ-ի դեմ պայքարող հիմնական ուժերը: Միանգամայն պարզ էր, որ վայելելով ժողովրդական առաջնորդի խարիզմը՝ Ելցինը ապրում էր իր հաղթողի «աստեղային ժամը»: Իսկ Մոսկվայում և Լենինգրադում խռովության հենց առաջին իսկ պահին սկսվեցին ԱԴՊԿ-ԳԿՊ-ի դեմ բողոքի զանգվածային ցույցեր: Իսկ խռովարարները բոլոր մակարդակներում դրսևորեցին իրենց անգործությունը, անհուսալիությունը և անկարողությունը իրականացնելու իրենց մտադրությունները: Այդ իմաստով ԱԴՊԿ-ԳԿՊ խռովությունը կարծես թե հնարավորություն տվեց Բ. Ելցինին Մոսկվայում իշխանությունը վերցնելու իր ձեռքը և բացահայտորեն սկսելու ԽՄԿԿ-ն ջարդելու իր գործողությունները: Խռովարարները ձերբակալվեցին: Օգոստոսի 21-ին ՌԽՖՍՀ Գերագույն խորհուրդը դատապարտեց ԱԴՊԿ-ԳԿՊ-ն:

ՌԽՖՍՀ փոխնախագահ Ա. Ռուցկոյը և Մինիստրների խորհրդի նախագահ Ի. Սիլաևը ինքնաթիռով թռան Փարոս՝ Մ. Ս. Գորբաչովի մոտ: Այլ ինքնաթիռով Փարոս մեկնեցին ԱԴՊԿ-ԳԿՊ որոշ անդամներ՝ բանակցելու Գորբաչովի հետ, որը նրանց չընդունեց: Իսկ արդեն այդ ամենից հետո՝ 1 ժամ անց, ԱԴՊԿ- ԳԿՊ-ն հայտարարեց իր բոլոր գործողությունների դադարեցման մասին: Իսկ արդեն 1 օր

անց՝ օգոստոսի 22-ին, ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարությունը հայտարարեց ԱԴՊԿ-ԳԿՊ-ի գործողությունների անօրինականության մասին[314]:

Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպես էին օգոստոսյան խռովության այդ օրերին իրենց դրսևորում Խորհրդային Միության մոտ 19 միլիոնանոց կոմունիստական կուսակցության շարքային անդամները, ապա պետք է ասել, որ նրանք հիմանականում անտարբեր էին: Եվ վերջապես օգոստոսյան խռովության ավարտը համարվում է օգոստոսի 22-ին զորքերի հանումը տեղադրված տարածքներից և Փարոսից Մ. Ս. Գորբաչովի վերադարձը Մոսկվա:

Ճիշտ է նշում Ն. Վ. Ելիսեևան, որ դա պատմական պահ էր: Նա գրում է, որ Մ. Ս. Գորբաչովի ինքնաթիռը մոսկովյան օդանավակայանում վայրէջք կատարեց գիշերը՝ ժամը մոտ 2-ին: Ամբողջ աշխարհը հետևում էր, թե ինչպես է ԽՍՀՄ նախագահի ընտանիքը ինքնաթիռի կցաստիճաններից իջնում: Ոչ բոլորն էին հասկանում, որ դրանով, այդ փոքրիկ, հպանցիկ դիպվածով «վերակառուցումն» ավարտվում էր: Հավանաբար դա երևի չէր հասկանում նաև Մ. Ս, Գորբաչովը: Հետագայում ուսումնասիրողներից Օ. Մ. Պոպցովն իր «Բորիս թագավորի» ժամանակի ժամանակագրություն» աշխատությունում գրում է. «Նախագահը… իր վերադարձի ժամին… դեռ չէր հասկանում, որ ինքը ոչ թե իջնում է ինքնաթիռի կցաստիճաններից, այլ իջնում է Օլիմպիոսի իշխանությունից»[315]:

Չխորանալով ԱԴՊԿ-ԳԿՊ, Գորբաչով-Ելցին հարաբերությունների բազմաթիվ այլ կապերի և մանրամասների մեջ՝ նշենք, որ պատմության մեջ ԱԴՊԿ-ԳԿՊ-ի գործունեությունը դիտարկվում է մի շարք դիրքերից. 1. ԱԴՊԿ-ԳԿՊ-ն վերջնականապես արժեզրկեց խորհրդային էլիտան և ԽՄԿԿ-ին: 2. Վերջ դրեց քաղաքական ուժերի երեք կենտրոնների հակասություններին՝ «պահպանողականներին», «ցենտրիստներին» (Մ. Ս. Գորբաչով) և «դեմոկրատներին»

---

[314] Տե՛ս **Елисеева Н. В.,** История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016, с. 442-443: «Правда», 1991, 23 августа.

[315] Տե՛ս **Попцов О. П.,** Хроника времён «царя Бориса», Москва, 1996, с. 164:

(Բ. Ն. Ելցին)՝ քաղաքականապես ոչնչացնելով առաջիններին, թուլացնելով երկրորդներին, հանձնելով իշխանությունը երրորդներին: Ելցինը նոմինալ նախագահից, նոմինալ սովետեն հանրապետությունից մեկ ժամում վերածվեց գերիզոր նոր ռուսական ցարի լիարժեք տիրակալի[316]: Եվ այդ ամենի արդյունքում 1991 թ. օգոստոսի 25-ին Մ. Ս. Գորբաչովը հրաժարվեց ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղարի պարտականություններից՝ կոչ անելով ԽՄԿԿ-ին ինքնալուծարվել, որին էլ հետևեց, պատկերավոր ասած, շղթայական ռեակցիա. բոլոր միութենական հանրապետություններում տեղի ունեցավ, այսպես կոչված, «ապակուսակցականացում», որն ավարտվեց 1991 թ. սեպտեմբերին, երբ ԽՄԿԿ ողջ ունեցվածքը, շարժական և ոչ շարժական գույքը, ընդհուպ մինչև նրա դրամական, արժեքային հաշիվները դարձան Ռուսաստանի պետական սեփականություն, իսկ 1991 թ. նոյեմբերի 6-ին ԽՄԿԿ և ՌԽՖՍՀ կոմունիստական կուսակցության գործունեությունը Ռուսաստանի տարածքում արգելվեց, որքան էլ Մ. Ս. Գորբաչովը շարունակում էր իր գործունեությունը՝ վերականգնելով, այսպես կոչված, նովոօգարովյան գործընթացը, որն էլ հայտնի է որպես «Նովո-Օգարեվո-2» անունով՝ հրավիրելով խորհրդակցության բոլոր ինը միութենական հանրապետությունների ներկայացուցիչներին՝ Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա, Ադրբեջան, Ուզբեկիստան, Կիրգիզիա, Ղազախստան, Տաջիկստան, Թուրքմենիա[317]: Բայց իրականում դրանք անարդյունավետ, անպտուղ ջանքեր էին, քանի որ Մ. Ս. Գորբաչովը արդեն չէր տիրապետում փաստական իշխանությանը, իսկ Խորհրդային Միությունը ավելի արագացված տեմպերով գնում էր դեպի փլուզման: 1991 թ. օգոստոսից մինչև նոյեմբեր իրենց գործունեությունը դադարեցրին միութենական բոլոր հանրապետությունների կոմունիստական կուսակցությունները, ինչն էլ նշանակում էր, որ ԽՄԿԿ-ն՝ որպես համամիութենական կազմակերպություն, դադարում էր գործելուց, դա էլ

[316] Տե՛ս **Елисеева Н. В.,** История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016, с. 444:
[317] Տե՛ս **Елисеева Н. В.,** նշվ. աշխ., էջ 446:

ավելի արագացրեց ԽՍՀՄ-ի փլուզումը, քանզի կոմունիստական կուսակցությունը կարծես թե ԽՍՀՄ պահող խարիսխն էր: Եվ իրոք, ԽՄԿԿ-ի վերացմամբ 1991 թ. օգոստոսին իրար ետևից իրենց անկախությունը հռչակեցին միութենական հանրապետությունները՝ սկսելով, այսպես կոչված, անկախության շքերթը, որոնց շարքում էին Ադրբեջանը, Բելառուսիան, Կիրգիզիան, Լատվիան, Մոլդովիան, Ուզբեկիստանը, Ուկրաինան և Էստոնիան, սեպտեմբերին՝ Հայաստանը և Տաջիկիստանը, հոկտեմբերին՝ Թուրքմենիան, իսկ ավելի վաղ՝ 1990 թ. մարտի 9-ին՝ Վրաստանը: Ուկրաինան իր անկախությունը հաստատեց 1991 թ. դեկտեմբերի 1-ին համաժողովրդական հանրաքվեով, երբ բնակչության բացարձակ մեծամասնությունը «Այո» ասաց անկախությանը, որն էլ կարծես ավելի մեծ լիազորություններ տվեց նրա պրեզիդենտ Լ. Կրավչուկին Բելովեժում: Այսպիսով՝ 1991 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ կազմից, փաստորեն, դուրս եկան բոլոր միութենական հանրապետությունները՝ բացառությամբ Ռուսաստանի և Ղազախստանի[318]:

Ինչ վերաբերում է Հայաստանի կոմկուսին, ապա այն իր գործունեության դադարեցման մասին հայտարարեց կուսակցության 29-րդ համագումարում՝ 1991 թ. սեպտեմբերի 7-ին, որի մասին ավելի հանգամանորեն ներկայացվել է աշխատության համապատասխան բաժնում[319]: Նման պայմաններում, ինչպես գրում է «Советская Россия» թերթը (16. 12. 2010), 1991 թ. դեկտեմբերի 8-ին Մինսկի մոտակա Բելովեժյան թավուտում Յարոսլավ Իմաստունի «թոռները» ստորագրեցին ԽՍՀՄ փլուզման և «Անկախ Պետությունների Համագործակցության» ստեղծման մասին փաստաթուղթը: Ռուսաստանի անունից ստորագրել են Բ. Ելցինը և Գ. Բուրբուլիսը, Ուկրաինայի անունից՝ Լ. Կրավչուկը, Վ. Ֆոկինը և Բելառուսիայի անունից՝ Ս. Շուշկևիչը և Վ. Կեբիչը: Փաստաթուղթը արձանագրում էր, որ ԽՍՀՄ-ը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն, դադարեցնում է իր գոյությունը: Դրա փոխա-

---

[318] Տե՛ս «Аргументы Недели», 7 декабря, 2012. Советская Россия, 16 декабря, 2010:
[319] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, մ. թ. 68-69, նաև ց. 128, գ. 3, թ. 1:

րեն հռչակվում է ԱՊՀ-ի ստեղծման մասին, որը բաց էր մյուս անկախ պետությունների համար՝ միանալու նրան, որն էլ տեղի ունեցավ 1991 թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա-Աթայում, որտեղ Բելովեժյան համաձայնությանը միացան ևս ութ հանրապետություններ՝ Հայաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Կիրգիզիան, Մոլդովիան, Տաջիկստանը, Թուրքմենիան, Ուզբեկստանը, ընդամենը տասնմեկ հանրապետություններ: Մերձբալթյան հանրապետությունները և Վրաստանը (նախագահ՝ Զ. Գամսախուրդիա) ողջունեցին ԽՍՀՄ-ի փլուզումը և հրաժարվեցին մտնել ԱՊՀ-ի մեջ: Հետագայում՝ 1991թ. դեկտեմբերի վերջերին՝ Վրաստանում տեղի ունեցած հեղաշրջումից և Է. Շևարդնաձեի իշխանության գալուց հետո, Վրաստանը մտավ ԱՊՀ-ի մեջ, սակայն 2008 թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմից հետո (Ա. Սահակաշվիլի) կրկին դուրս եկավ ԱՊՀ-ից: Բոլոր դեպքերում ԱՊՀ նպատակների և սկզբունքների մասին ընդունվել է ևս երկու լրացուցիչ փաստաթուղթ.

1. «Պետությունների ղեկավարների հայտարարությունը» և
2. «Կառավարությունների ղեկավարների հայտարարությունը»:

Նշված փաստաթղթերում խոսվում է այն մասին, որ կենտրոնի անհեռատես քաղաքականությունը հանգեցրեց երկի տնտեսական և քաղաքական ճգնաժամի, արտադրության քայքայման, հասարակության գրեթե բոլոր խավերի կենսամակարդակի իջեցման: Իսկ արդեն 1991 թ. դեկտեմբերի 25-ի երեկոյան Մ. Ս. Գորբաչովը հանդես եկավ Խորհրդային Միության քաղաքացիներին ուղղված հայտարարությամբ այն մասին, որ, պայմանավորված «Անկախ Պետությունների Համագործակցության» (ԱՊՀ) ձևավորման նոր իրադարձությամբ, ինքը դադարեցնում է ԽՍՀՄ նախագահի պարտականությունները[320]: Մինչդեռ այդ ամենին զուգընթաց, հատկապես 1991 թ. օգոստոսյան հայտնի խռովությունից հետո Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն նախապատրաստվում էր անցկացնել անկախության

[320] Տե՛ս «Советская Россия», 16 декабря, 2010, **Աբրահամյան Հ.,** Խորհրդային և հետխորհրդային հասարակություն, Երևան, 2011, էջ 78:

հանրաքվեն, որը նախատեսված էր իրականացնել 1991 թ. սեպտեմբերի 21-ին: Այդ մասին ավելի վաղ՝ հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 27-ի որոշմամբ ստեղծվել էր սեպտեմբերի 21-ի հանրաքվեի պրոպագանդման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ծրագիրը մշակող հանձնախումբ, որի մեջ մտել էին ՀՀ Գերագույն խորհրդի մշտական հանձնաժողովների նախագահները: Միաժամանակ հանրաքվեից առաջ՝ օգոստոսի 29-ին, հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց որոշում հանրաքվեի կապակցությամբ հանդես գալու հատուկ հայտարարությամբ, որում ասվում էր, որ հայ ժողովուրդը վճռականորեն բռնել է անկախության ստեղծման ճանապարհը, կոչ էր անում հանրապետության քաղաքացիներին սեպտեմբերի 21-ին իրենց վճռական «Այո»-ն ասեն ԽՍՀՄ-ից դուրս Հայաստանի անկախ պետականության ստեղծմանը՝ շեշտելով, որ փոփոխված իրադրությունում կայանալիք հանրաքվեն միակ գործընթացն էր, որը կայուն իրավաքաղաքական հիմքեր կստեղծեր անկախ պետականության կայացման համար: ՀՀ Գերագույն խորհուրդը նաև համապատասխան հանձնարարություններ տվեց համապատասխան մարմիններին՝ Գերագույն խորհրդի պատգամավորներին ընտրական տարածքներում տանելու կազմակերպչական, բացատրական, քարոզչական աշխատանք հանրաքվեն՝ կազմակերպված ձևով անցկացնելու համար և այլն[321]: Իսկ արդեն հանրաքվեի նախօրյակին՝ սեպտեմբերի 20-ին, հրապարակվեց Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ուղերձը՝ ուղղված հանրապետության քաղաքացիներին: Ուղերձում ասվում էր. «Սիրելի՛ հայրենակիցներ, մենք կանգնած ենք իսկապես պատմական իրադարձության շեմին: Սեպտեմբերի 21-ին մենք պետք է մեր սեփական ուժերով կերտենք մեր պատմությունը: Եվ բախտը այնպես է տնօրինել, որ դուք եք այդ պատմության կերտողները, և սերունդները ձեզ է, որ երախտապարտ պետք է լինեն:

[321] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 14 (994), 31 հուլիսի, 1991, էջ 18; № 16 (996), 31 օգոստոսի, 1991, էջ 15-16, № 17 (997), 15 սեպտեմբերի, 1991, էջ 16-17:

Մենք կատարում ենք վճռական քայլ, որին անմիջապես պետք է հետևի Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի անկախության հռչակումը: Բայց մենք բոլորս էլ գիտակցում ենք, որ անկախությունը մեզ համար ինքնանպատակ չէ: Անկախությունը ընդամենը միջոց է՝ ազատության հասնելու համար, որովհետև գերագույն նպատակը ազատությունն է: Եվ միայն ազգի անկախ պետականությունն է, որ կարող է ապահովել յուրաքանչյուր անհատի և հավաքական ժողովրդի ազատությունը»[322]:

Բնական է, որ երկրում ստեղծված նոր իրավիճակը դարձնում էր անհրաժեշտություն Հանրապետության Գերագույն խորհրդին հանդես գալ հայտարարությամբ ժողովրդին ներկայացնել այդ ամենը, չշեղվել ընտրած ուղուց, պայքարել անկախության իրականացման համար: Այդ նպատակով 1991 թ. օգոստոսի 29-ին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը հանդես եկավ հայտարարությամբ: Նրանում ասվում էր, որ ԽՍՀՄ-ում պետական հեղաշրջման տապալումից հետո ստեղծվել էր որակապես նոր իրավիճակ: Ժողովրդական ուժերի, հատկապես Ռուսաստանի ղեկավարության, պառլամենտի ու ժողովրդի հաղթանակը էական խթան հանդիսացավ ամբողջատիրության հաղթահարման բռնապետական վարչակարգի վերահաստատման ակնհայտ ու քողարկված մղումները ի չիք դարձնելու գործում: Համատարած ապաքաղաքականացվում էին զինված ուժերը, ՊԱԿ-ը, իրավապահ մարմինները, ազգայնացվում էր Կոմկուսի ունեցվածքը, հստակեցվում էին հանրապետությունների սեփականության շրջանակները, ավելի վճռական քայլեր էին ձեռնարկվում շուկայական էկոնոմիկային անցնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունում այս հարցերը արդեն ստացել էին օրենսդրական լուծում:

Ստեղծված նոր իրավիճակում մի շարք հանրապետություններ, անկախ իրենց տարածքում մարտի 17-ին անցկացված հանրաքվեի արդյունքներից, ազդարարել էին ԽՍՀՄ կազմից դուրս գալու իրենց վճռականությունը: Դա ևս մեկ անգամ հաստատում էր ԽՍՀՄ-ի և

[322] «Հայաստանի Հանրապետություն», 20 սեպտեմբերի, 1991:

միութենական պայմանագրի նկատմամբ Հայաստանի իշխանությունների որդեգրած քաղաքական ուղերձի ճշմարտացիությունը:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը անկախության մասին հռչակագրի ընդունմամբ, Հայաստանի տարածքում մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեի կասեցմամբ, սեպտեմբերի 21-ին անկախության հանրաքվեի նշանակմամբ վճռականորեն բռնել էր անկախության ստեղծման ճանապարհը: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությունը համարում էր, որ փոփոխված իրադրությունում ևս կայանալիք հանրաքվեն ապագա անկախ պետականության հաստատման, ճանաչման և զարգացման համար իրավական ու քաղաքական կայուն հիմք էր ապահովում: Նախագահությունն իր վստահությունն էր հայտնում, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, սեպտեմբերի 21-ին «Այո» պատասխանելով Հայաստանի անկախությանը, իրենց ու սերունդների համար ազատ, արժանապատիվ ապրելու, աշխատելու, բարգավաճելու աննախադեպ հնարավորություններ կնվաճեն: 29 օգոստոսի 1991 թ., քաղ. Երևան[323]:

Եվ վերջապես 1991 թ. սեպտեմբերի 21-ին տեղի ունեցավ այդքան ցանկալի անկախության հանրաքվեն: Հանրաքվեին մասնակցեց քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող 2 միլիոն 56 հազար 758 քաղաքացի կամ 95,05 տոկոսը:

Քվեարկողները պետք է պատասխանեին հետևյալ հարցին՝ «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ կազմից դուրս», որին «Այո» ասաց 2 միլիոն 43 հազար 627-ը կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը: Անկախությանը դեմ էր քվեարկել քվեարկողների մոտ 0,47 տոկոսը, իսկ անվավեր՝ քվեարկողների 0,19 տոկոսը[324]:

---

[323] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 16 (996), էջ 15-16:

[324] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24 սեպտեմբերի, 1991 թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ 1990-1995, Երևան 1995, էջ 7-8:

Հանրաքվեի ընթացքին հետևելու էին եկել աշխարհի տարբեր երկրներից (25) պատվիրակներ, դիտորդներ՝ թվով 117 հոգի: ԱՄՆ-ից ժամանել էին 10 կոնգրեսականներ՝ Վ. Օունեսի ղեկավարությամբ, որոնք միահամուռ այն կարծիքն էին արտահայտում, որ հանրաքվեն անց է կացվել նորմալ մթնոլորտում, և որևէ խախտում, բողոք չի արձանագրվել[325]:

Հետաքրքիր է ասել, որ քվեարկությունից հետո ԱՄՆ կոնգրեսականները ԱՄՆ-ի նախագահին՝ Ջորջ Բուշին (Ավագ – Հ. Ա.) հղած իրենց զեկուցագրում հայտնում էին, որ Հայաստանի ժողովրդին հնարավորություն էր ընձեռվել դրսևորելու իր ազատ ընտրության իրավունքը, և բացարձակ մեծամասնությունը քվեարկեց Խորհրդային Միության կազմից դուրս գալու օգտին: Նրանք նաև իրենց տեղեկագրում միասնաբար պահանջում էին, որ Միացյալ Նահանգները ճանաչի Հայաստանի նոր հանրապետությունը[326]:

ԱՄՆ կոնգրեսականների նման ոգևորությունը հասկանալի էր: Վերջին հաշվով վերանում էր ԱՄՆ-ի հակառակորդ, աշխարհի հզոր երկրներից մեկը՝ Խորհրդային Միությունը, որի առթիվ ամերիկյան հայտնի աշխարհաքաղաքագետ Զբիգնև Բժեզինսկին՝ ժամանակին ԱՄՆ նախագահ Ջիմ Քարտերի օգնականը, իր «Մեծ շախմատային հարթակ. ԱՄՆ-ի տիրապետությունը և նրա աշխարհաքաղաքական գերակայությունը» աշխատությունում մի քանի անգամ նշել է, որ ԽՍՀՄ փլուզման գործում ԱՄՆ-ն ունի առանցքային դեր՝ հատկապես կարևորելով Ուկրաինայում ամերիկյան ստրատեգների դերակատարությունը[327]: Իսկ այն փաստը, որ Բելովեժյան որոշման մասին նրա հեղինակները առաջինը հայտնել են ԱՄՆ պրեզիդենտ Ջորջ Բուշին (Ավագ) և հետո՝ Մ. Ս. Գորբաչովին, խոսում էր շատ բանի մասին:

---

[325] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 17 (997), 15 սեպտեմբերի 1991 թ., հ 25; № 18 (998), 30 սեպտեմբերի, հ 15, 29, «Հայաստանի Հանրապետություն», 21 սեպտեմբերի, 1991 թ.:

[326] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2 հոկտեմբերի, 1991 թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիրը, 18 (998), էջ 15-16:

[327] Տե՛ս «Аргументы Недели», 7 декабря 2012 года:

Պատահական չէր, որ Ջորջ Բուշը նույն օրը՝ դեկտեմբերի 7-ին, հրավիրել է մամուլի ասուլիս և հայտարարել, որ «ԽՍՀՄ-ն այլևս գոյություն չունի, և ԱՄՆ-ն հաղթել է «սառը պատերազմում», իսկ հետո ավելացրել է, որ ԱՄՆ-ն ԽՍՀՄ-ը վերացնելու համար ծախսել է հինգ տրիլիոն դոլլար»[328]:

Վերոհիշյալ փաստերը տեղավորվում են ամերիկյան կոնգրեսականների դիքորոշման մեջ, մանավանդ որ 1991 թ. օգոստոսյան խռովությունը զրոյի էր հասցրել ԽՍՀՄ գոյատևելու հնարավորությունները, որ Հանրապետության հանրաքվեն սոսկ վավերացնում էր կատարվածը: Բայց դա կարևոր էր պատմության համար նաև այն իմաստով, որ հայ ժողովուրդը հանրաքվեի միջոցով ևս դրսևորեց իր կամքը՝ ապրել ազատ և անկախ պետությունում: Եվ պատահական չէր, որ քվեարկության արդյունքները մեծ ոգևորությամբ պատգամավորները և այդ փաստով ոգևորված ժողովուրդը պետք է քննարկեին և հաստատեին ՀՀ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանի հատուկ նիստում՝ 1991 թ. սեպտեմբերի 23-ին: Նիստը վարում էր ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Գագիկ Հարությունյանը: Ի դեպ, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և կառավարության նախագահ Վազգեն Մանուկյանը նիստին չէին մասնակցում, քանի որ մասնակցում էին Ժելեզնավոդսկում Արցախի հարցի կապակցությամբ ընթացող բանակցություններին[329]:

ՀՀ Գերագույն խորհուրդը, հիմնվելով համաժողովրդական հանրաքվեի արդյունքների վրա, ընդունեց Հայաստանը անկախ պետություն հռչակելու մասին պատմական որոշումը, որտեղ ասվում էր. «Հավատարիմ մնալով Հայաստանի անկախության մասին հռչակագրին, հենվելով մարդու իրավունքների և ազգերի ազատ ինքնորոշման միջազգային նորմերի վրա, նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակարգ, հիմք ընդունելով 1991

---

[328] «Советская Россия», 16 декабря 2010 г.

[329] Տե՛ս **Պողոսյան Է.,** Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Երևան 2013, էջ 69, ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 18 (998), 30 սեպտեմբերի, 1991, էջ 21:

թ. սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին անցկացված հանրաքվեի արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակում է Հայաստանի Հանրապետությունը անկախ պետություն»[330]:

Կարևոր է նաև նշել, որ Հայաստանի Հանրապետությունը միութենական մյուս հանրապետություններից միակն էր և առաջինը, որ անկախության հանրաքվեն անցկացրեց Խորհրդային Միության Սահմանադրությանը և «ԽՍՀՄ կողմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքին լիակատար համապատասխանությամբ, այն է՝ հանրաքվե իրականացնելու որոշման ընդունումից 6 ամիս անց և անկախացման մասին որոշումը կայացրեց հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող ազգաբնակչության ոչ պակաս քան երկու երրորդի համաձայնությամբ[331]:

Հանդիսավոր նիստին մեծ շուք հաղորդվեց, երբ նրա ավարտին դահլիճում հնչեցին Հայաստանի Հանրապետության օրհներգը և Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի տերունական օրհնությունը:

Նիստի հաջորդ օրը՝ սեպտեմբերի 24-ին, ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց մի կարևոր որոշում նս. սեպտեմբերի 21-ը հայտարարեց տոնական և ոչ աշխատանքային օր: Այդ կապակցությամբ ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունել է նաև հայ ժողովրդին ուղղված դիմում, որում նշում էր, որ անկախանալով հայ ժողովուրդը վճռական քայլ կատարեց պետությունների միջազգային հանրությունում իր ուրույն տեղը վերագտնելու հարցում և վերադարձը դեպի համայն մարդկության ընտանիք՝ լինելու իր սեփական դրոշի ներքո, ինքնիշխան ազգային պետականությամբ, ազգային սեփական դիմագծով և այլն:

---

[330] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիրը, № 18 (998), 30 սեպտեմբերի 1991 թ., էջ 21:

[331] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2 հոկտեմբերի 1991 թ.:

Նշվում էր նաև, որ անկախ պետականության գոյության գերխնդիրը ազգային նպատակների իրականացնումն էր: Կարևորվում էր նաև ՀՀ միջազգային իրավունքի սուբյեկտ դառնալու փաստը՝ կարգավիճակը, որն էլ պետք է հնարավորություն տար, որ հանրապետությունը իր քաղաքական, տնտեսական անկախությունը զուգակցեր տարբեր երկրների, պետությունների հետ փոխշահավետ համագործակցությամբ:

Մյուս կարևոր խնդիրը ազատ, ժողովրդավարական պետության ստեղծումն էր, որը բոլոր քաղաքացիների համար ստեղծում է քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման հավասար հնարավորություններ՝ անկախ նրանց գաղափարներից, դավանանքից, ազգությունից և այլն: Եվ վերջապես ՀՀ Գերագույն խորհրդի ժողովրդին ուղղված այդ պատմական փաստաթղթում կարևորվում էր այն միտքը, որ հայ ժողովրդին միշտ միավորել է միտքն ու հույզը, որին այսօր պետք է միավորի գործն ու գերակա նպատակը, քանի որ հայ ժողովրդին վիճակված է գրելու հայոց նորագույն պատմության այս փառահեղ էջը, ուստի կոչ էր արվում միասնաբար ձեռնամուխ լինել անկախ Հայաստանի արարման գործին՝ հանուն գալիք սերունդների բարօրության և երջանկության[332]:

Ինչ խոսք, կարևոր էր նաև համաշխարհային հանրության միջազգային կազմակերպությունների, Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցության Հայաստանի լիիրավ անդամ դառնալու գործընթացը և այլն: Այդ նպատակով սեպտեմբերի 25-ին ՀՀ Գերագույն խորհուրդը, ՄԱԿ-ին հասցեագրած հայտարարության մեջ հայտնելով իր հավատարմությունը ՄԱԿ-ի դավանած արժեքներին, միաժամանակ մեծ ցանկություն էր արտահայտում դառնալ Միավորված ազգերի կազմակերպության անդամ (Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ է դարձել 1992 թ. մարտի 2-ին): Նույն օրը ՀՀ Գերագույն խորհուրդը մեկ այլ որոշմամբ դիմել է աշխարհի տարբեր երկրների խորհրդարաններին, կառավարություն-

[332] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 18 (998), 30 սեպտեմբերի 1991 թ., հ 5, 8-9, 21:

ներին՝ հաստատելու նրանց հետ իրավահավասար փոխհարաբերություններ, դիվանագիտական կապեր և այլն: Միաժամանակ պատրաստակամություն էր հայտնում կենտրոնի հետ առկա խնդիրները՝ քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ կարգի, լուծելու բանակցությունների միջոցով[333]:

Կարևոր էր նաև ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած «Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը անկախ պետականության հիմադրույթների մասին» որոշումը, որով Հայաստանի Հանրապետությունը հայտարարվում էր անկախ ժողովրդավարական պետություն, որտեղ ապահովվելու էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը՝ նրանցից յուրաքանչյուրին ապահովելով մյուսներին հավասար ինքնիշխանությամբ: Իսկ հանրապետության ողջ ազգային հարստությունը՝ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները հայտարարվում էին որպես ժողովրդի սեփականություն: Ինչ վերաբերում էր Միության ընդհանուր պաշարներին՝ ոսկի, ալմաստ, վալյուտային ֆոնդեր և այլն, Հայաստանի Հանրապետությունը ևս պետք է ունենար իր մասնաբաժինը ստանալու իրավունք: Կարևորվում էր նաև այն փաստը, որ սեփականության բոլոր ձևերը իրավահավասար են: Խրախուսվում էր նաև ազատ ձեռներեցության համակողմանի զարգացումը: Փաստաթղթում կարևոր տեղ էր տրվում սեփական զինված ուժերի ստեղծմանը:

Ինչ վերաբերում է կրթական, մշակութային հարցերին, ապա պետք է ասել, որ օրենսդրորեն նախ ամրագրվում էր հայերենի՝ որպես պետական լեզվի գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ինչպես նաև կարևորվում էր կրթության, գիտության, մշակույթի, լրատվության զարգացումը և այլն:

Եվ վերջապես հայ ժողովրդին ուղղված այդ կարևոր փաստաթղթում նշվում էր, որ մինչև անկախ Հայաստանի սահմանադրության ընդունումը նախկին ՀԽՍՀ սահմանադրությունն ու օրենքները գոր-

---

[333] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 18 (998), 30 սեպտեմբերի 1991 թ., էջ 15-16:

ծելու էին այնքանով, որքանով դրանք չէին հակասելու անկախ պետականության հիմնադրույթների մասին օրենքին և 1990 թ. օգոստոսի 23-ի անկախության հռչակագրի հիման վրա ընդունված օրենսդրական ակտերին[334]:

Փաստորեն, բավական բարդ, հակասություններով լի տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունը անկախությունը կերտելու իր յուրաքանչյուր քայլը իրականացնում էր հեղափոխական ժամանակներին բնորոշ ոգևորության, չափից ավելի հուզականության, ինչ-որ չափով շտապողականության հետ միասին նաև մտածված, կշռադատված և հաստատակամ գործողություններով: Հենց այն փաստը, որ ԱՊՀ ձևավորումից և Մ. Ս. Գորբաչովի դեկտեմբերի 25-ին հայտնի հրաժարականից հետո՝ դեկտեմբերի 26-ին, Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց «Անկախ պետությունների ընկերակցության ստեղծման համաձայնագրի վավերացնելու մասին» որոշում, խոսում էր այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունն իր հարաբերությունները բոլոր երկրների հետ կառուցում էր միջազգային իրավունքների նորմերին համապատասխան:

Մյուս որոշումների շարքում հատկապես կարևոր էր 1991 թ. հուլիսի 6-ի ՀՀ Գերագույն խորհրդի հայտարարությունը՝ ուղղված ԽՍՀՄ-ին և Ադրբեջանին՝ կապված ազգամիջյան հակամարտությունների սրման հետ, որտեղ շատ պարզ ընդգծվում էր, որ սկսած 1991 թ. ապրիլից՝ հայ ժողովրդի դեմ Խորհրդային Միության և Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվում են լայնամասշտաբ ռազմական գործողություններ, որոնք հետապնդում են քաղաքական հատուկ նպատակներ՝ իրականացնել հայ ժողովրդի նկատմամբ ահաբեկչություն, Հայաստանի Հանրապետության իշխանությունների վրա գործադրել ճնշումներ՝ կապված նրանց քաղաքական կուրսի հետ, որն ուղղված էր կառուցելու անկախ ժողովրդա-

[334] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 18 (998), 30 սեպտեմբերի 1991 թ., էջ 10-12:

կան պետականություն, իսկ Ղարաբաղյան հարցի լուծումն իրականացնել պատմական ճշմարտության դիրքերից:

Կարևոր էին նաև այն որոշումները, որոնք վերաբերում էին հանրապետության տնտեսական կյանքին, այդ բնագավառում իրականացվող արմատական փոփոխություններին, սեփականության ձևերին, շուկայական հարաբերություններին և այլն: 1991 թ. հունվարի 22-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունել է «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը, իսկ հունվարի 29-ին՝ ՀՀ հողային օրենսգիրքը, որոնք վճռական նշանակություն ունեցան գյուղում տնտեսական նոր հարաբերությունների կառուցման և ագրարային բարեփոխումների զարգացման հարցում:

Եվ ինչպես նշում է Բաբկեն Արարքցյանը, այդ օրենքներին համապատասխան՝ հողը՝ որպես սեփականություն, հանձնվեց գյուղացիներին և դրա հետ միաժամանակ հնարավորություն ընձեռվեց գյուղացիներին կամավորության հիման վրա ստեղծելու գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ՝ ի հակադրություն ստիպողական կոլեկտիվացման: Այդ նպատակով 1991 թ. հոկտեմբերի 31-ին Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունեց «Սեփականության մասին» օրենք, որում ամրագրվել են սեփականության բոլոր ձևերի օրինականությունը, հավասարությունը, սեփականության ժառանգման սկզբունքներ և այլն[335]:

Ինչ խոսք, իրենց բնույթով լինելով առաջադիմական՝ այդ որոշումները ինքնին նաև ունեին մեծ արատներ, թերություններ, քանզի հատկապես հողի սեփականության հարցում գյուղացին կանգնեց մեծ դժվարությունների առջև, պատկերավոր ասած՝ գյուղացուն հանձնեցին հողին, և նա հողի հետ մնաց միայնակ, քանզի նրա մշակումը ոչ միայն մեծ ջանքեր էր պահանջում, այլ նաև մեծ միջոցներ, ներդրումներ, որոնք նա չուներ և նաև դրան պատրաստ չէր: Այդ որոշմանը պետք է հետևեին քայլերը, որոնք կնպաստեին և կօգնեին,

[335] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր 1990-1995, Երևան 1995, էջ 7-10, Армения: проблемы независимого развития, Москва, 1998, с. 11-16, 41:

որպեսզի գյուղացին կարողանար ստեղծել բերեկեցիկ և ամուր տնտեսություն:

Անկախության գործընթացի և հանրապետության քաղաքական կյանքի մյուս կարևոր որոշումը հանրապետությունը կառավարման խորհրդարանական համակարգից նախագահական համակարգի անցնումն էր, որի մասին ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. հունիսի 25-ին ընդունել էր որոշում, որում նշվում էր, որ զարգացնելով ՀՀ անկախության հռչակագրից բխող դրույթները, որոնք կապված էին իշխանության թևերի բաժանման հարցի հետ, հանրապետությունում մտցվում էր կառավարման նախագահական համակարգ: Ի դեպ, դա նման էր նախագահական կարգի անցման մի շքերթի, քանզի Խորհրդային Միության նախկին գրեթե բոլոր հանրապետությունները ևս անցնում էին կառավարման այդ համակարգին: Եվ հենց այդ նպատակով էլ հունիսի 25-ի վերը նշված որոշման հիման վրա ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց մի շարք համապատասխան նորմատիվային ակտեր: 1991թ. օգոստոսի 1-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» որոշումը, իսկ օգոստոսի 2-ին՝ «Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին» օրենքը, որի ընտրությունները նշանակվեցին 1991 թ. հոկտեմբերի 16-ին: Ի դեպ, կառավարման համակարգում իրականացվող նման կտրուկ փոփոխությունների նկատմամբ, այսինքն՝ խորհրդարանականից նախագահականի անցման վերաբերյալ մոտեցումները միանշանակ չեն: Ինչ խոսք, նախագահական կառավարման անցնելը ամենամեծ ջատագովը «Հայոց համազգային շարժումն» էր, առաջին հերթին՝ նրա առաջնորդ, Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, որն իր կարծիքը հիմնավորում էր հանրապետության Գերագույն խորհրդում: Նման որոշումը պաշտպանել է նաև հետազոտողներից Ա. Ա. Կուրտովը, որն իր «Հաաստանի Հանրապետության սահմանադրական կառուցվածքը» աշխատանքում գրել է, որ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991 թ. հունիսի 25-ին սահմանում է Հայաստանի Հանրապետության նախա-

գահի պոստ՝ ելնելով ՀՀ անկախության հռչակագրի իշխանության թեերի բաժանման մասին սկզբունքից, որի հիման վրա ընդունվել են նաև մի շարք նորմատիվային ակտեր և այլն: Մինչդեռ դրան հակառակ՝ Հայ հեղափոխական դաշնակցությունն կուսակցությունը կտրուկ դեմ էր նախագահական համակարգին:

Վերլուծելով Հանրապետության տվյալ ժամանակաշրջանի քաղաքական զարգացումները՝ Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության ներկայացուցիչ Վ. Ավագյանը գրել է, որ Հայաստանի քաղաքական իրավիճակը (նկատի ուներ Անկախության հռչակագրից հետո՝ 1990-1991 թթ.) «ապրեցաւ մտահոգիչ զարգացումներ: Երկիրը մէկ կեդրոնէ ղեկավարելու համար Գերագոյն խորհուրդի նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան առաջարկեց հիմնել նախագահութեան պաշտօն, ինչ որ այդ օրերուն ընդհանուր երեւոյթ էր նախկին Խ. Միութեան երկիրներուն մէջ: Տէր-Պետրոսեան համոզուած էր, որ քաղաքական իր հեղինակութիւնը բաւարար է նախագահական ընտրութիւններում յաղթանակ տանելու համար: Նախագահութեան պաշտօն հաստատելու որոշումը 25 Յունիս 1991-ին Հայաստանի մէջ հիմը դրաւ միանձնեայ ղեկավարման համակարգին, ինչ որ աւելի ուշ իր տխուր անդրադարձը ունեցաւ ժողովրդականացման երթին վրայ, եւ բացայայտ խախտում մը եղաւ երկրին օրէնսդիր, գործադիր և դատական իշխանութիւնները տարանջատելու անկախութեան Հռչակագրին ոգիին ու տառին: Նախագահական համակարգի հաստատումով մեծ չափերով վերականգնեցաւ ամբողջատիրական նախորդ վարչակարգին գրեթե բոլոր ախտերը՝ մենատիրութիւնը, գործադիր եւ դատական իշխանութիւններու վերահսկողութիւնը, անձնական հաւատարմութեան վրայ հիմնուած քատրերու ընտրութիւնը և այլն»[336]: Անկասկած, այդ հարցադրումները տեղին էին, բայց ոչ կոնկրետ տվյալ ժամանակաշրջանի համար, քանզի դրանք դրսևորվեցին գոնե ոչ այդ ժամանակ: Բայց անկախ այդ ամենից՝ հանրապետությունում սկսվեց նախագահի թեկնածուների առա-

[336] Տե՛ս **Աւագեան Վ.,** Ազդակ, Անկախութեան տասնամեակ 1991-2001, Բացառիկ, Ուրբաթ, 21 սեպտեմբեր, 2001, Սուրիա, 200.Ս.Ռ., էջ 8-9:

ջաղրման մի փուլ, երբ իրար ետևից սկսեցին առաջադրվել մի շարք թեկնածուներ և, պատկերավոր ասած, նախագահաշքերթը, նախագահացավը դարձավ այդ շրջանի Հանրապետության քաղաքական կյանքի անբաժանելի մասերից մեկը:

1991 թ. օգոստոսի 29-ին տեղի ունեցավ ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողովի հերթական նիստը, որը վարում էր հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Ամիրյանը: Նա նշեց, որ օգոստոսի 29-ի դրությամբ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ՀՀ նախագահի թեկնածուների առաջադրման փուլում, ըստ հերթականության, համաձայնություն է տվել և թույլատրել անցնել թեկնածության պաշտպանության համար 15 000 ստորագրությունների հավաքման փուլ հետևյալ անձանց.

Վազգեն Միքայելի Մանուկյան – Հայաստանի Հանրապետության վարչապետ,

Զորի Հայկի Բալայան – ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, Հայաստանի Հանրապետությունում «Լիտերատուրնայա գազետա» թերթի սեփական թղթակից,

Պարույր Արշավիրի Հայրիկյան – ԱԻՄ կազմակերպության խորհրդի նախագահ,

Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյան – Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ,

Սոս Արշավիրի Սարգսյան – ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, «Հայ ազգային միության» նախագահ,

Մարտունի Կարապետի Հարությունյան – «Հայէլեկտրամեքենա» ԳԱՄ գլխավոր տնօրեն,

Աշոտ Ցոլակի Նավասարդյան – Հայաստանի հանրապետական կուսակցության խորհրդի նախագահ,

Մյասնիկ Ենգիբարի Հակոբյան – Հայաստանի առևտրային բանկերի ասոցիացիայի պրեզիդենտ:

Ի դեպ, հանձնաժողովի նիստին ներկա էին շահագրգիռ հասարակական-քաղաքական կազմակերպությունների և նախաձեռնող խմբերի ներկայացուցիչները[337]:

Հետաքրքիր է նշել, որ հետագայում նախագահի թեկնածու Վազգեն Մանուկյանը հանեց իր թեկնածությունը, որն էլ քննարկվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 1991 թ. հոկտեմբերի 1-ի նիստում: Հանձնաժողովը որոշեց բավարարել Վազգեն Մանուկյանի խնդրանքը Հայաստանի Հանրապետության նախագահի իր թեկնածությունը հանելու մասին[338]: Նման որոշումը միանգամայն տեղավորվում է տվյալ ժամանակ Լևոն Տեր-Պետրոսյանի և Վազգեն Մանուկյանի գրված դիրքից, հավակնություններից և իրենց մասին ունեցած իրենց իսկ կարծիքից: Բացի այն, որ երկուսն էլ նույն«Ղարաբաղ» կոմիտեի, «Հայոց համազգային շարժման» (ՀՀՇ) հիմնադիրներն էին, միաժամանակ նրանցից առաջինը՝ Լևոն Տեր-Պետրոսյանը, զբաղեցնում էր Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնը, իսկ երկրորդը՝ Վազգեն Մանուկյանը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը, որքան էլ, որ մի քանի օր առաջ՝ 1991 թ. սեպտեմբերի 25-ին, ՀՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում նա ներկայացրել էր դիմում վարչապետի պաշտոնից ազատվելու մասին[339], միևնույն է, նրա այդ քայլը վկայում էր մեկ այլ իրողության մասին, որ անկախ տարբեր հարցերում ունեցած տարաձայնություններից՝ նրանց մեջ ավելի շատ իշխում էր առաջինը լինելու ձգտումը, ինչու ոչ, թերևս գլխավորը՝ փառասիրությունը և առաջնորդացավը, որքան էլ, որ նրանք ամեն պահի խոսում էին ազգային և պետական շահի մասին: Դա հարված էր նաև ՀՀՇ-ին, մանավանդ որ Վազգեն Մանուկյանն իր համախոհների հետ՝ Շավարշ Քոչարյան, Արշակ Սադոյան և ուրիշներ, նախաձեռնեցին և ստեղծեցին իրենց քաղաքական կուսակցությունը՝ «Ազգային ժո-

---

[337] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N16(996), 1991, էջ 30-31:

[338] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N19(999), 1991, էջ 29-30:

[339] Տե՛ս Армения: проблемы независимого развития, М., 1998, с. 83:

ղովրդավարական միությունը» (ԱԺՄ), որքան էլ, որ հետագայում այդ կուսակցությունը ևս պառակտվեց, տվեց իր ծիլերը: Շավարշ Քոչարյանը ստեղծեց «Ազգային ժողովրդավարական կուսակցություն» (06.07.2001), Արշակ Սադոյանը՝ «Ազգային ժողովրդավարների դաշինք» (06.06.2001)[340], որոնք որևէ էական դեր չխաղացին և չէին էլ կարող խաղալ հանրապետության քաղաքական կյանքում: Միգուցե այդ քայլը նրանց համար ինքնահաստատման, իրենց մասին խոսելու մի ձև էր, որը ևս փառասիրության, ինչպես վերևում ասվեց, առաջնորդացավի ոլորտից է: Բայց այն, որ Վազգեն Մանուկյանի այդ քայլը պետք է հանգեցներ ՀՀՇ-ի պառակտմանը, հանրահայտ էր, որի մասին բավական պատկերավոր է գրում ռուս հետազոտողներից Վ. Գ. Միտյանը՝ նշելով, որ Լևոն Տեր-Պետրոսյանի և Վազգեն Մանուկյանի միջև վերջնական պառակտումը տեղի էր ունեցել ՀՀ անկախությունից հետո, երբ Վազգեն Մանուկյանը ստեղծեց իր կուսակցությունը՝ ԱԺՄ-ն, որն էլ դարձավ ընդդիմադիր ուժ Լևոն Տեր-Պետրոսյանին: Նա իր շուրջը համախմբեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Դավիթ Վարդանյանին, որը ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամ էր, ինչպես նաև խորհրդարանի Արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Շավարշ Քոչարյանին, որոնց շուրջն էլ համախմբվեցին ընդդիմադիր բոլոր ուժերը[341]: ՀՀ նախագահի ընտրությունների հարցում իր կարծիքն ուներ նաև քաղաքագետ, պատմաբան Ժիրայր Լիպարիտյանը, որը գրում է, որ Վազգեն Մանուկյանը կարծում էր, թե ինքը պետք է լիներ նախագահի պաշտոնն ստանձնողը, սակայն Լևոն Տեր-Պետրոսյանի ժողովրդականությունը ստիպեց հանել իր թեկնածությունը[342], որի հետ չի կարելի չհամաձայնել: Եվ իրոք, այդ բոլոր հաշվարկներում Լևոն Տեր-Պետրոսյանն

---

[340] Տե՛ս **Աբրահամյան Հ.,** Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2009, էջ 89, 92-93:

[341] Տե՛ս **Митяев В. Г.,** Внутриполитические процессы в Армении, в кн. Армения: проблемы независимого развития, М., 1998, с. 83:

[342] Տե՛ս **Լիպարիտյան Ժ.,** Պետականության մարտահրավերները, Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երևան, 1999, էջ 19:

ավելի հաշվենկատ և հեռատես էր ու նաև վստահ, որն էլ հաստատվեց 1991 թ. հոկտեմբերի 16-ի քվեարկության արդյունքներով:

Լևոն Տեր-Պետրոսյանը ընտրվեց նորաստեղծ Հայոց երրորդ հանրապետության նախագահ: Իսկ արդյունքները բավական տպավորիչ էին, որքան էլ նախագահի թեկնածուների ցուցակը բավական շատ էր՝ թվով վեց: Լևոն Տեր-Պետրոսյանը ստացել էր ընտրողների ձայների 83,028 տոկոսը, որը նշանակում էր, որ նրա օգտին քվեարկել էին 1 մլն 260,433 ընտրողներ այն դեպքում, երբ մնացած թեկնածուները՝ թվով 5 հոգի, միասին ստացել էին ընդամենը 209 հազ. 417 ձայն[343]: Հանրապետության փոխնախագահ ընտրվեց դեռևս ՀՀ Գերագույն խորհրդում փոխնախագահ աշխատած Գագիկ Հարությունյանը, որքան էլ, որ նման պաշտոնը մեծ շռայլություն էր, եթե չասենք՝ ավելորդ ոչ այնքան մեծ Հայաստանի Հանրապետության համար: Ի դեպ դա հաստատվեց հետագայում, երբ վերացվեց այդ պաշտոնը:

Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահ ընտրվելուց հետո նրան տված գնահատականների շարքում հատկապես առանձնանում է «Հայ հեղափոխական դաշնակցության» գործիչներից Վ. Ավագեանի տված գնահատականը. «Սեպտեմբերի 21-ի (նկատի ունի 1991 թ.) ժողովրդային հանրաքւէով եւ սեպտեմբեր 23-ի Գերագոյն խորհուրդի կողմէ Հայաստանի Հանրապետութիւնը անկախ պետութիւն հռչակումով վարագոյրը վերջնականապէս իջաւ Խորհրդային Հայաստանի վրայ, եւ ծնունդ առաւ հայկական երկրորդ անկախ հանրապետութիւնը (հեղինակը չի ընդունում Խորհրդային Հայաստանի՝ իրականում երկրորդ հանրապետությունը – Հ. Ա.), որ երեք շաբաթ ետք, 16 Հոկտեմբեր 1991-ին խեղկատակ ընտրություններու բեմադրութեամբ ունեցաւ իր առաջին նախագահը՝ յանձին Լեւոն Տէր-Պետրոսեանի[344]:

---

[343] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 հոկտեմբերի, 1991:

[344] Տե՛ս «Ազդակ», Անկախութեան տասնամեակ 1991-2001, Ուրբաթ, 21 սեպտեմբեր, 2001, էջ 9:

Իհարկե, ինչ խոսք, հեղինակի իրավունքն է հայտնել իր կարծիքը, բայց թե որտեղ է տեղավորում, լավ թե վատ, իր իսկ ասած Խորհրդային Հայաստանը, որն իրականում երկրորդն է, մնում է բաց: Իսկ թե ինչո՞ւ խեղկատակ ընտրություններ, դա ևս հեղինակը չի բացատրում: Մենք համամիտ չենք հեղինակի նման գնահատականին, քանի որ դա չէր արտացոլում կոնկրետ տվյալ ժամանակ հանրապետությունում ստեղծված իրական վիճակը և ժողովրդի տրամադրությունները, որը, տարված հեղափոխական ժամանակների ոգևորությամբ, Լևոն Տեր-Պետրոսյանին այլընտրանք որևէ մեկին չէր տեսնում: Իսկ թե որքանով էր դա ճիշտ և որքան ժամանակ քննություն կբռներ, ժամանակի խնդիր էր, որն էլ մենք տարբեր առիթներով նշել ենք: Բայց կոնկրետ այդ առիթով նորից նշենք, որ Լևոն Տեր-Պետրոսյանը հայոց հասարակական-քաղաքական կյանքի բարձունքին՝ օլիմպիոսին հասավ Ղարաբաղյան շարժման հուժկու ալիքի վրա, երբ հարյուր հազարավոր մարդկանց բռունցքված ձեռքերը պահանջում էին Արցախյան հարցի և բազմաթիվ այլ հարցերի արդարացի լուծում, որոնց իրականացումը իր վրա էր վերցրել «Ղարաբաղ» կոմիտեն, «Հայոց համազգային շարժումը»: Սակայն հանրապետության հասարակական կյանքի զարգացումները հետագայում այլ ընթացք ունեցան՝ ստեղծելով ճեղքում հանրապետության ղեկավարության և ժողովրդի միջև օր օրի ավելի մեծացնելով դժգոհությունն ու անվստահությունը «Հայոց համազգային շարժման» և նրա առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ, որն էլ վաղ թե ուշ պետք է հեռանար իր բարձր դիրքից, որի ուսումնասիրումը, նորից ընդգծենք, որ դուրս է մեր թեմայի շրջանակներից: Բայց անկախ այդ ամենից՝ մենք հարկ եղած չափով տարբեր առիթներով խոսել ենք նաև այդ հարցի մասին և տվել մեր գնահատականը ինչպես Շարժման, այնպես էլ նրա առաջնորդների, այդ թվում՝ նաև Լևոն Տեր-Պետրոսյանի մասին, որին նորից այս համատեքստում կրկին անդրադարձանք: Բոլոր դեպքերում, անկախ տարբեր գնահատականներից, նման անցումը թելադրված էր տվյալ ժամանակի անհրաժեշտությամբ:

Հետաքրքիր է նաև ասել, որ «Հայ հեղափոխական դաշնակցությունը» ևս ՀՀ նախագահի ընտրություններում նույնպես ուներ իր թեկնածուն՝ հանձին ճանաչված և ժողովրդի կողմից սիրված դերասան Սոս Սարգսյանին: Բայց դա բավական չէր, որ ընտրություններում դաշնակները ունենային հաջողություններ: Այստեղ ևս դաշնակների հաշվարկները սխալ էին, ինչն էլ հաստատվեց քվեարկության արդյունքներով, որքան էլ որ Վ. Ավագյանը այն համարեր խեղկատակ:

Ի տարբերություն դաշնակցության տված նման գնահատականին՝ կա նաև ավելի ծայրահեղ գնահատական, որը տվել է պատմաբան, լրագրող Սմբատ Ավագյանն իր «ՀՀԾ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը» աշխատանքում: Դժվար չէ տեսնել, որ աշխատության անգամ վերնագիրը հուշում է, որ հեղինակը ամեն ինչ բացասական դիրքերից պետք է ներկայացներ «Հայոց համազգային շարժման» գործունեությունը: Եվ այն հարցին, թե ՀՀԾ-ի իշխանության համար մղած պայքարը ինչ տվեց հայ ժողովրդին, որոնք էին այդ պայքարի իրական հետևանքները, ինչ ստացավ հայ ժողովուրդը դրանից հարցին, նա պատասխանում է, որ Հանրապետության տնտեսական ու քաղաքական կյանքը դուրս էր եկել բնական հունից: Գրեթե անգործության էին մատնվել ոչ միայն կուսակցական ու տնտեսական, այլև վարչական, օրինապահ օրգանները, գործարանների ու ֆաբրիկաների շատ ղեկավարներ, սերտ համագործակցելով որոշ վերնախավի հետ, կողոպտում էին առանց այն էլ կրճատված արտադրանքը: Այդ կողոպուտին մասնակցում էին արտադրամասի պետերը, մասնագետները, անգամ բանվորների մի մասը: Այդ նույն երևույթները տեղի էին ունենում գյուղական շրջաններում: Իր գոյությունը դեռևս քարշ տվող խորհրդային պետությունը փաստորեն դադարել էր գործելուց: ՀՀԾ-ական բաշիբոզուկները ազատ թրև էին գալիս մայրաքաղաքի փողոցներում, հանրապետության քաղաքներում ու շրջաններում և իրենց կամքը թելադրում հասարակությանը և այլն և այլն[345]:

---

[345] Տե՛ս **Հովսեփյան Ս.,** ՀՀԾ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, Երևան, 2002, էջ 53:

Մենք ներկայացրինք Սմբատ Հովսեփյանի՝ ամեն ինչ ժխտողական դիրքերից ներկայացված 220 էջից բաղկացած աշխատանքից ընդամենը մեկ հատված՝ ցույց տալու համար, որ հասարակության տարբեր շերտերում կային նաև նման, ամեն ինչ ժխտող կարծիքներ, որոնց, ինչ խոսք, դժվար է համաձայնել, քանզի ամեն ինչ ժխտելը ևս ճիշտ չէ: Բայց անկախ այդ ամենից՝ հասարակության մի զգալի հատված, եթե ոչ ամբողջ հասարակությունը, հարյուր հազարավորները ողջունեցին Հայաստանի անկախությունը, որքան էլ, որ նա կանգնած էր ներքին ու արտաքին շատ ու շատ դժվարությունների, մարտահրավերների առաջ, որին պետք է դիմակայեր միայն ու միայն համառ և միասնական պայքարով, միասնական կամքով:

Մյուս հարցը երկրի կառավարման համակարգի ձևավորումն էր: Այդ նպատակով 1991 թ. դեկտեմբերի 4-ին հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանով որոշվեց հանրապետության կառավարության կազմը և կառուցվածքը: Ըստ այդ հրամանի՝ պետության կառավարության կազմի մեջ մտնում էին Հայաստանի Հանրապետության վարչապետը (կառավարության նախագահը), փոխվարչապետը (կառավարության նախագահի տեղակալը), Հայաստանի Հանրապետության պետական նախարարները, պետական վարչությունների և պետական տեսչության պետերը:

Հրամանի երկրորդ կետով որոշվում էր կառավարության կառուցվածքի մեջ մտնող նախարարությունները՝ թվով 22 և վարչությունները, թվով 7 և մեկ տեսչություն[346]:

Նորաստեղծ կառավարությանը վիճակված էր դժվար օրեր և ժամանակներ ապրել, ընթացիկ խնդիրներից զատ շատ ավելի կարևոր խնդիրներ լուծել, որոնք կապված էին հանրապետության թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության բազմաթիվ հարցերի հետ: Առաջին հերթին դա երկրի անվտանգության ապահովումն էր, տնտեսական խնդիրների լուծումը, երկրաշարժի ավերածությունների հետևանքով տասնյակ հազարավոր մարդկանց կյանքի համար

[346] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 158-159:

ամենատարրական պայմանների ստեղծումը, աշխարհի երկրների հետ դիվանագիտական կապերի հաստատումն էր և այլն: Բայց այդ բոլորից զատ՝ ամենակարևորը Արցախյան խնդրի, Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումն էր: Ի դեպ, այդ հարցում մոտեցումները տարբեր էին ոչ միայն «Ղարաբաղ» կոմիտեի, իշխանության եկած ՀՀԾ-ի և հանրապետությունում գործող տարբեր քաղաքական ուժերի միջև՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն», հնչակյաններ, ռամկավարներ, իշխանությունից զրկված և պառակտված, տարբեր թևերի բաժանված կոմունիստներ և այլն, այլ նաև հենց բուն ՀՀԾ-ի միջև: Այդ երևույթին մեծապես նպաստեց այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման նկատմամբ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների միջև, որոնք այդ շարժման առաջին, վերելքի փուլում պայքարում էին Լեռնային Ղարաբաղը մայր հայրենիքի հետ միավորելու համար, հանրահավաքներն ավարտում «միացում, միացում» կարգախոսներով, շարժման ալիքի վրա գալով իշխանության, փոխեցին իրենց մոտեցումները, ինչն էլ հանգեցրեց նրանց շարքերի պառակտմանը: Դրան նպաստել են մի շարք հանգամանքներ: 1990 թ. մայիսին Գերագույն խորհրդի ընտրություններով գալով իշխանության՝ դեռ որոշ ժամանակ, պատկերավոր ասած, իներցիայի ուժով ՀՀԾ-ն վայելում էր ժողովրդի վստահությունը: Հատկապես կարևոր էին հանրապետության քաղաքական կյանքում իրականացվող մի շարք քայլերը, ավելի վաղ հայրենիքից վտարված հայ քաղաքական կուսակցությունների նորից հայրենիք վերադառնալու և ազատ գործելու հնարավորությունները և այլն: Դրան նպաստեցին, ինչպես ասվել է, 1991 թ. փետրվարի 26-ին «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության ընդունած օրենքը, իսկ նույն թվականի ապրիլի 2-ին՝ վերոհիշյալ օրենքը կիրառելու մասին որոշումը[347], որն էլ հնարավորություն տվեց հանրապետությունում իրականում գործող, բայց դեռևս օրենքով չվավերացված բազմակուսակցական համակարգի ձևավորմանը:

[347] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 115-119:

Դրանց շարքում հատկապես առանձնանում են մի շարք կուսակցություններ՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության պահպանողական մեծամասնությունից առանձնացած «Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը» (կուսակցության նախագահ՝ Արամ Գասպարի Սարգսյան) (ի դեպ տողերիս հեղինակը այդ կուսակցության ստեղծման նախաձեռնողների խմբի, ծրագրի մշակման և հետո կուսակցության վարչության անդամ էր), Սփյուռքից հայրենիք վերադարձած «Ռամկավար-ազատական» (ՌԱԿ) (նախագահ Ռուբեն Միրզախանյան), «Սոցիալ-դեմոկրատ հնչակյան» (նախագահ՝ Եղիա Նաջարյան), «Հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ) և շատ ու շատ այլ կուսակցություններ: Իրականում Հանրապետության քաղաքական կյանքում, ՀՀՇ-ից բացի, ակտիվ և ժողովրդականություն վայելող կուսակցություններից էր «Հայ հեղափոխական դաշնակցությունը», որն ուներ նաև անչափ կարևոր պատմական անցյալ և հիշողություն: ՀՅԴ-ն 1918-1920 թթ. գլխավորել է Հայաստանի առաջին հանրապետությունը, բայց հետո վտարվելով երկրից և գործելով Սփյուռքի տարբեր երկրներում՝ արդեն նոր պայմաններում մյուսների հետ միասին վերադարձել էր տուն և ներգրավվել նորանկախ Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքին, որքան էլ, որ շատ հարցերում ուներ ընդդիմադիր դիրք «Հայոց համազգային շարժման» նկատմամբ: Բայց անկախ այդ ամենից՝ «Հայոց համազգային շարժման» նման քայլերը, երկրում բազմակուսակցության հաստատումը, երկրի տնտեսական կյանքում կատարված առանձին փոփոխությունները, տնտեսական ազատության, շուկայական հարաբերություններին անցնելու քաղաքականությունը և այլն, հույսեր էին ներշնչում մարդկանց մեջ, որ իրենց կյանքը քայլ առ քայլ փոխվելու է դեպի լավը: Բայց «Ղարաբաղ» կոմիտեն, որն իշխանության էր եկել Արցախյան շարժման ալիքի, Լեռնային Ղարաբաղը մայր հայրենիքին միավորելու և հայրենասիրական, ազգապահպան այլ կոչերի հենքի վրա և այլն, այժմ կանգնել էր մեծ դժվարությունների և խոչընդոտների առաջ: Արցախի հարցում ՀՀՇ-ն, հավատանք նաև, որ արտաքնապես սկսեց որդեգրել նոր քաղաքականություն, որը ար-

մատապես տարբերվում էր շարժման ընթացքում նրա որդեգրած քաղաքականությունից: Խոսքը հատկապես վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցին:

Ահա, թե ինչ է գրում այդ մասին Վ. Գ. Միտյանն իր «Ներքաղաքական գործընթացները Հայաստանում» ուսումնասիրության մեջ: Նա նշում է, որ հենց ՀՀՇ-ի պառակտման պատճառներից մեկը Լեռնային Ղարաբաղի խնդիրն էր: Պայքարելով Հայաստանում կոմունիստական վարչակարգի դեմ և անկախության համար՝ ՀՀՇ-ն ապահովել էր իրեն զանգվածային պաշտպանությամբ՝ առաջ քաշելով ԼՂԻՄ-ը Հայաստանին միավորելու և ղարաբաղցիներին Ադրբեջանի դեմ պատերազմում ռազմական օգնություն ցույց տալու կարգախոսը: Սակայն գլխավորելով երկիրը՝ Լևոն Տեր-Պետրոսյանը և նրա թիմը շուտով հասկացան, գիտակցեցին, որ իրական կյանքում իրականացնել իրենց խոստումը՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելը, կհանգեցնի ոչ միայն Ադրբեջանի հետ դաժան պատերազմի, այլ նաև Հայաստանի Հանրապետության միջազգային մեկուսացման: Եվ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու պահանջը հանվեց: 1992 թ. փետրվարի 18-ին Հայաստանի Հանրապետությունը հայտարարեց, որ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թ. հունիսի 15-ի որոշումը, Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտցնելու մասին, այլևս չի գործում և, որ Հայաստանը մտադիր է այդ հարցում պահպանել միջազգային իրավունքի նորմերը, կանոնները[348]: Այսպիսի դիքորոշումը, բնական է, որ պետք է հանգեցներ ՀՀՇ-ի ներսում տարաձայնությունների, իսկ հանրապետությունում՝ բողոքի ակցիաների, տարբեր կարգի դժգոհության դրսևորումների:

Կառավարող կուսակցության մեջ լարվածությունը, շարունակում է Վ.Գ. Մատյանը, բացատրվում էր նախ նրանով, որ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը դուրս էր գալիս Ադրբեջանի կազմից և

[348] Տե՛ս **Матяев В. Г.,** նշվ. աշխ., էջ 82:

իրեն հայտարարում որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Իսկ Լևոն Տեր-Պետրոսյանը ընդունեց որոշում՝ ձեռնպահ մնալ նրա պաշտոնական ճանաչումից, որն առ այսօր շարունակվում է: Հայաստանը նաև պաշտոնապես դուրս էր եկել Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև շարունակվող պատերազմից:

Անգլիացի հետազոտողները նշում էին, որ Լևոն Տեր-Պետրոսյանը ձգտում էր հրապարակավ չցուցադրել Լեռնային Ղարաբաղի մարտիկներին ցույց տվող ռազմական աջակցությունը՝ զգուշանալով, որ դա կվնասի Թուրքիայի և Ռուսաստանի հետ ունեցած հարաբերություններին: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչու Հայաստանը չէր ճանաչում Լեռնային Ղարաբաղի անկախությունը, դա բացատրվում էր այն հանգամանքով, որ նման քայլը կարող էր Հայաստանին դնել ԱՊՀ համաձայնության շրջաններից դուրս, որով նախատեսվում էր, որ Խորհրդային Միության փլուզումը չպետք է հանգեցնի, այսպես կոչված, ներքին սահմանների վերանայմանը և այլն[349]:

Ինչպես տեսնում ենք հարցադրումները, իրարից տարբեր մոտեցումները, տարաձայնությունները բավական շատ էին, որոնք էլ վաղ թե ուշ պետք է էլ ավելի խորանային: Մյուս կողմից նման դիրքորոշումը պետք է առաջացներ ոչ միայն ընդդիմադիր ուժերի կողմից այդ տեսակետը չճանաչելուն, այլ նաև հենց բուն ՀՀԾ-ի շարքերում, նրա ղեկավար կազմի շրջանում ևս չընդունելուն: Այդ տարաձայնությունները գնալով ավելի էին խորանում՝ հանգեցնելով ՀՀԾ-ի պառակտմանը, որը ժամանակի խնդիր էր և բնորոշ երևի բոլորին, քանզի անկախություն հռչակած երկրի համար գլխավորը նրա հիմքերն ամրապնդելը և անվտանգությունն ապահովելն էր: Դա էր պատճառը, որ առավել ևս հանրապետության նախագահական կառավարմանն անցնելուն զուգընթաց 1991 թ. նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին ընդունվեցին այնպիսի օրենքներ, որոնք ավելի հստակեցնում էին նախագահական կառավարման սկզբունքները: Դրանց շարքում կա-

[349] Տե՛ս **Митяев В. Г.,** նշվ. աշխ., էջ 83:

ընորվում են «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի», «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» օրենքները, որոնցում սահմանագծվում էին երկրի, իշխանության բարձրագույն մարմինների գործունեության շրջանակները: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին օրենքում նշվում էր, որ Հայաստանի Գերագույն խորուրդը մշտապես գործող մարմին է, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը, ինչպես նաև Հայաստանի Հնարապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ: Սահմանվում էին նաև երկրի օրենսդիր և գործադիր մարմինների իրավասությունները՝ բաղկացած 22 հոդվածից: Դրանցում նույնպես սահմանվում էին Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունների կարգը, Գերագույն խորհրդի նստաշրջանների հրավիրման պարբերականությունը և այլն[350]:

Նորանկախ պետության համար կարևոր էր նաև երկրի զինված ուժերի, կանոնավոր բանակի ձևավորման հարցը: Այդ իմաստով անչափ կարևոր էր ՀՀ Գերագույն խորհրդի 1991թ. դեկտեմբերի 9-ի զինապատրաստության մասին օրենքը, որը բաղկացած էր 11 գլխից և 70 հոդվածից: Այդ օրենքով Հայաստանի Հանրապետությունը ստեղծում էր երկրի անվտանգությունը ապահովող ռազմական ուժ՝ բանակ: Այդ օրենքով սահմանվում էին զինծառայողների իրավունքները, պարտականությունները, զորահավաքի սկզբունքները, ժամկետը, զինվորական ծառայությունից ազատվելու նորմերը, զինվորական կոչում ստանալու կարգը, ժամկետային զինվորական ծառայության կանոնները, տարկետման իրավունքը և այլն[351]:

Նորանկախ պետության կայացման, աշխարհին ներկայանալու համար կարևոր էին նաև պետության խորհրդանիշները՝ օրհներգը, զինանշանը, դրոշը:

---

[350] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995 թ., էջ 189-194:

[351] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995 թ., էջ 196-206:

Ի դեպ, դրոշի մասին: «Ղարաբաղ» կոմիտեն մինչ իշխանության գալը հանրահավաքներում այլ թռուցիկների, պաստառների շարքում օգտագործում էր նաև Առաջին հանրապետության դրոշը՝ եռագույնը, որքան էլ, որ համապատասխան մարմինների կողմից դրանք արգելվում կամ առգրավվում էին: Մինչդեռ իրադարձությունները այլ ձևով ընթացան, երբ 1988 թ. նոյեմբերի 7-ին Երևանում ևս տեղի էր ունենում հանդիսավոր շքերթ՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության հերթական տարեդարձին՝ 71-ամյակին: Աշխատավորական կոլեկտիվները ավանդական տոնական կարգախոսների, երկրի ղեկավարության, առաջնորդների նկարների հետ տանում էին նաև նախօրոք ինքնաշեն ձևով պատրաստված իրենց կարգախոսները՝ «Արցախը Հայաստանի անբաժանելի մասն է», «Հայաստանը և Արցախը մեկ ժողովուրդ, մեկ հանրապետություն են», «Սումգայիթյան դահիճներին՝ միջազգային դատ» և այլն: Դրանց կողքին աշխատավորները տանում էին նաև Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը, որն էլ այդ օրը, երբ հանրահավաքը Լենինի հրապարակից տեղափոխվել էր Թատերական հրապարակ, բարձրացվեց Օպերայի շենքի վրա: Իսկ հանրահավաքում ելույթ ունեցողներից Լևոն Տեր-Պետրոսյանը, Վազգեն Մանուկյանը, Վանո Սիրադեղյանը հայտարարեցին, որ մեր ազգային դրոշն արդեն դարձել է պաշտոնական[352]: Իսկ արդեն իշխանության գալուց հետո՝ 1990 թ. օգոստոսի 24-ին, ՀՀ Գերագույն խորհուրդը, հիմնվելով «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի առաջին հոդվածի վրա, ընդունեց որոշում ՀՀ պետական դրոշի մասին՝ այն համարելով եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն (երեք հավասար շերտերով), ինչպես նաև որոշեց ՀՀ Սահմանադրության մեջ կատարել սույն օրենքից բխող համապատասխան փոփոխություններ: Նույն օրը՝ օգոստոսի 24-ին, ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց նաև Հայաստանի Հանրապետության զինանշանի և հիմնի մասին որոշում: Գերագույն խորհուրդը նաև հանձնարարեց Հանրապետության մի-

[352] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.24, թ.125-131:

նիստերների խորհրդին համապատասխան հանձնաժողովների հետ միասին կազմակերպել զինանշանի և հիմնի ստեղծման մրցույթ[353]:

Նշված հարցերը ավելի մանրամասն քննարկվեցին ՀՀ Գերագույն խորհրդի 1991 թ. հուլիսի 1-ի առաջին գումարման երկրորդ նստաշրջանում: Որոշման նախագծի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Կտրիչ Սարդարյանը: Նա խորհրդարանի քննարկմանը ներկայացրեց օրհներգի երկու տարբերակ՝ «Մեր հայրենիք» երգը և 1944 թ. Ա. Բաբաջանյամի և լ. Հարությունյանի կողմից գրված օրհներգի տարբերակը: Պատգամավորները նախապատվությունը տվեցին «Մեր հայրենիքին»: Որոշվեց որպես Հայաստանի Հանրապետության պետական օրհներգի հիմք ընդունել «Մեր հայրենիք» երգը՝ խոսքը հանձնաժողովում վերջնականապես խմբագրելուց հետո: Իսկ արդեն հուլիսի 2-ին ՀՀ Գերագույն խորհրդի նիստում քննարկվեց հանրապետության պետական զինանշանի մասին օրենքի նախագիծը, որի մասին կրկին զեկուցեց Կտրիչ Սարդարյանը: Նա կառավարական հանձնաժողովի անունից քննարկման ներկայացրեց Մարտիրոս Սարյանի ստեղծած Հայկական ԽՍՀ պետական զինանշանի նորոգված տարբերակները և 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության պետական զինանշանը:

Զինանշանի ստեղծման հանձնաժողովի նախագահ Հրաչիկ Սիմոնյանը հաղորդեց, որ հանձնաժողովը քննարկել է շուրջ 150 տարբերակ, սակայն դրանցից ոչ մեկը չի համապատասխանել ներկայացված պահանջներին և առաջարկություն մտցրեց այդ հարցը հանել օրակարգից, քանի որ այն վերջնականապես պատրաստ չէ: Այդ հարցի վերաբերյալ եղան տասնյակից ավելի ելույթներ, տարբեր առաջարկություններ: Բայց ի վերջո ՀՀ զինանշանի հարցը իր վերջնական լուծումը ստացավ 1992 թ. ապրիլի 19-ին, երբ Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց որոշում 1920 թ. հուլիսին հաս-

---

[353] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №16(972), 31 օգոստոսի 1990 թ., էջ 6-7, № 13 (993), էջ 7, 75-76, 4 հուլիսի, 1991 թ.:

տատված զինանշանը ընդունել որպես Հայաստանի Հանրապետության զինանշան[354]:

Մենք միտումնավոր կերպով այդքան կարևորեցինք և մեծ տեղ տվեցինք հանրապետության դիմագիծը ներկայացնող խորհրդանշանների քննարկմանը, քանի որ դրանք անչափ կարևոր են աշխարհին ներկայանալու համար: Եվ իրոք, դրանք յուրօրինակ անձնագրեր են աշխարհում՝ քո տեղը ունենալու, դիմագիծը չկորցնելու համար: Սակայն դա հարցի մի կողմն էր: Դառնալով համաշխարհային հանրության լիիրավ անդամ, միջազգային իրավունքի սուբյեկտ (1992 թ. մարտի 2)՝ կարևոր էր նաև կառուցել այնպիսի երկիր, որը մեկուսացված չլիներ աշխարհի այլ երկրներից և փորձեր քայլել նրանց հետ՝ պահպանելով ազգային դիմագիծը:

Ձեռնամուխ լինելով նորանկախ պետության կառուցմանը՝ Հանրապետության ղեկավարությունը, ինչպես տեսանք, ընդունում էր երկիրը վերափոխող օրենքներ՝ կարևորելով թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական, թե հոգևոր-մշակութային ոլորտները: Բայց ճշմարտություն է նաև այն, որ «Ղարաբաղ» կոմիտեն, ՀՀՇ-ն, 1990-ական թթ. սկզբներին ստանձնելով ՀՀ ղեկավարման անչափ պատասխանատու գործը, կանգնեց մեծ ու բարդ խնդիրների, ներքին և արտաքին մարտահրավերների առաջ, որոնք հնարավոր էր լուծել՝ բացի բազմաթիվ այլ հանգամանքներից ժողովրդի և իշխանության միասնությունը պահելու պայմաններում, որը, ցավոք, ՀՀՇ-ին այդպես էլ չհաջողվեց՝ դառնալով վաղ թե ուշ իշխանությունից նրա հեռացման գլխավոր պատճառը:

Ի դեպ, դա պատմության բոլոր ժամանակաների գլխավոր օրենքներից մեկն է: Գլխավոր դասն այն է, որ քաղաքակիրթ, ժողովրդավարական երկրներում այդ փոփոխությունը տեղի է ունենում անարյուն, խաղաղ ճանապարհով՝ ապահովելով սերունդների կապը և նրա անցնցում զարգացումը: Զարգացման նման տարբերակը նա-

---

[354] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №13(993), 15 հուլիսի 1991 թ., էջ 75-76, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 343:

խընտրելի էր նաև մեր ժողովրդի համար, որը, ցավոք, պահպանվել և պահպանվում է, բայց որին նա միշտ էլ ձգտել է: Այստեղ պատասխանատվության մեծ բաժինը ընկնում է իշխանության ուսերին և պետք չէ նման դեպքում քավության նոխազ փնտրել և մեղքը գցել ժողովրդի վրա: Դա ևս կարևոր դաս է բոլոր ժամանակների իշխանությունների համար, որը կարող է վայելել ժողովրդի վստահությունը մեկ դեպքում, եթե վարում է ժողովրդի շահերից բխող քաղաքականություն և հետ չի կանգնում իշխանության գալու ճանապարհին ժողովրդին տված խոստումներից: ՀՀԾ-ն այդ հարցում այնքան էլ հավատարիմ չմնաց իր խոստումներին և քայլ առ քայլ կորցրեց իր հեղինակությունը և վաղ թե ուշ պետք է հեռանար իշխանությունից, ինչն էլ տեղի ունեցավ մի փոքր ավելի ուշ՝ 1998 թ., որի ուսումնասիրումը դուրս է մեր աշխատանքի շրջանակներից, որքան էլ որ մենք տարբեր առիթներով անդրադարձել ենք նաև այդ հարցին:

Վերջաբան

Ինչպես տեսանք, աշխատությունը նվիրված է հայ ժողովրդի պատմության նորագույն ժամանակաշրջանի ամենանշանավոր էջերից մեկին՝ Հայոց երրորդ հանրապետության անկախության համար մղած և կայացած պայքարի պատմությանը: Դա պատմական մի ժամանակաշրջան էր, երբ տեղի ունեցան աշխարհը ցնցող իրադարձություններ՝ Խորհրդային Միության փլուզում, նորանկախ պետությունների ձևավորում, աշխարհաքաղաքական նոր գործընթացներ, համաշխարհային ուժերի նոր տեղաշարժեր, այդ ամենից բխող դժվարություններ, խոչընդոտներ, տարբեր մասշտաբի ազգամիջյան բախումներ, պատերազմներ և այլն:

Հայոց նորանկախ պետության համար պայքարը ունեցել է իր նախապատմությունը, այլախոհական շարժումը, ոչ ֆորմալ կազմակերպությունների ձևավորումը և ընդհատակյա գործունեությունը: Այդ երևույթներին նպաստող գործոններից մեկը 1950-1960-ական թթ. խրուշչովյան «ձնհալն» էր, անհատի պաշտամունքի դատապարտումը, քիչ թե շատ ազատ մտքի զարգացումը և այլն: Ի տարբերություն միութենական մյուս հանրապետությունների՝ Խորհրդային Հայաստանում այդ նոր երևույթները դրսևորվեցին ազգային մտքի, ազգային ոգու զարթոնքով: Դրանք ավելի հուժկու կերպով դրսևորվեցին Հայոց ցեղասպանության 50-ամյակին՝ 1965 թ. ապրիլի 24-ին, որն էլ հիմք դարձավ հայ ժողովրդի հետագա սերունդների համար պայքարելու ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար, որն էլ նոր երանգ և նոր բովանդակություն ստացավ 1980-ական թթ. կեսերին՝ պատմությանը հայտնի գորբաչովյան «վերակառուցման» տարիներին:

Օգտվելով այդ հնարավորությունից՝ հայ ժողովուրդը, Լեռնային Ղարաբաղի հայությունը պայքար ծավալեցին մայր հայրենիքի հետ վերամիավորվելու համար, որը մարտահրավեր էր խորհրդային կարգերին, նրա քարացած սկզբունքներին:

Ստեղծվեց մեծ հակասություն Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի կուսակցական, պետական համակարգի և հարյուր հազարավոր շարքային մարդկանց միջև, որոնք ոտքի կանգնեցին Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից անջատելու և Խորհրդային Հայաստանին միավորելու, պատմական ճշմարտությունը վերականգնելու համար: Այդ խնդիրը լուծելու ամենահրապարակային ձևը ամենօրյա հանրահավաքների անցկացումն էր թե՛ Լեռնային Ղարաբաղում և թե՛ Երևանում և Հանրապետության տարբեր շրջաններում, Խորհրդային Հայաստանում, առանց որի պաշտպանության Լեռնային Ղարաբաղում սկսված անկախության համար պայքարը տեղում կխեղդվեր, շնչահեղձ կլիներ, որի փորձերն էլ կատարեցին Խորհրդային Ադրբեջանի, Խորհրդային Միության համապատասխան մարմինները՝ դիմելով տարբեր կարգի վայրի բռնությունների, Սումգայիթյան ջարդերի, որոնք տարածում գտան Բաքվում, Կիրովաբադում և Ադրբեջանի գրեթե բոլոր հայաբնակ քաղաքներում: Այդ երևույթները կանխելու և դրա դեմ պայքարելու համար ձևավորվեց «Ղարաբաղ» կոմիտեն, որն էլ սկսեց գլխավորել հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը:

Հայ ժողովրդի համաժողովրդական պայքարի նկատմամբ բնական է, որ իր դիրքորոշումն ուներ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, նրա ղեկավար մարմինը՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմը, նրա բյուրոն, որը հարցի լուծման նկատմամբ ուներ գրեթե նույն սկզբունքները, որոնք բխում էին ԽՄԿԿ կենտկոմի, նրա գլխավոր շտաբի՝ Քաղբյուրոյի որոշումներից, վերակառուցման գորբաչովյան դիրքորոշումներից, որոնք հանգում էին անել մասնակի սոցիալ-տնտեսական բնույթի վերափոխումներ, սակայն ամեն ինչ թողնել նույնը: Հասկանալի է, որ դա չէր կարող բավարարել արդեն նոր մտածողությամբ տարված հարյուր հազարավոր մարդկանց, որոնք իրենց գործողություններով առաջ էին անցել «վերակառուցման հեղինակներից» և պահանջում էին ավելի իրական ու կոնկրետ քայլեր:

Արցախյան հարցի լուծման և հայ ժողովրդի անկախության համար պայքարը լայն տարածում և արձագանքներ գտավ ինչպես

Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում, այնպես էլ ողջ աշխարհում, հատկապես հայկական սփյուռքում, որն իր աջակցությունն էր հայտնում հայ ժողովրդին, արցախահայությանը, պաշտպանում նրանց արդարացի պահանջը, դիմումներ, հեռագրեր հղում Խորհրդային Միության, Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը, հատկապես Գորբաչովին՝ պահանջելով և հաճախ լավատեսորեն հույս հայտնելով, որ Լեռնային Ղարաբաղի հարցը արդարացի լուծում կստանա:

Նշված բոլոր հարցերը, իրադարձությունները աշխատանքում ներկայացված են համապատասխան պատմական աղբյուրագիտական փաստերի, Հայաստանի ազգային արխիվի նյութերի հիման վրա, որոնք դրվել են գիտական շրջանառության մեջ՝ դարձնելով այն լայն հասարակության սեփականությունը:

Աշխատությունում բարձրացված և քննարկվող հարցերը անչափ բազմազան են և ունեն լայն ընդգրկում՝ խրուշչովյան «ձնհալ», այլախոհական շարժում, ոչ ֆորմալ գաղտնի կազմակերպություններ, ձևավորում, թռուցիկների տարածում, ԽՄԿԿ կենտկոմի, քաղբյուրոյի, Հայաստանի կոմկուսի կենտկոմի, Երևանի քաղկոմի, կուսակցական շրջկոմների արձագանքում, գրեթե ամենուրեք «Ղարաբաղ» ենթակոմիտեների ստեղծում, աշխատավորական կոլեկտիվների ընդգրկում, ամենօրյա բազմահազարանոց հանրահավաքների կազմակերպում, Արցախը մայր հայրենիքի հետ միավորում և այլն:

Աշխատությունում նաև ցույց է տրված, որ հանրապետության նոր ղեկավարությունը, տարվելով գլխապտույտ հաջողություններով, արբեցած նոր իրավիճակում հայտնվելուց, թույլ տվեց նաև տարբեր կարգի սխալներ, խոսքի և գործի միջև հակասություններ, որոնց հետևանքով մարդիկ հայտնվեցին անօգնական, աշխատանքից զուրկ և աղքատիկ վիճակում, որոնք էլ օրինական կերպով առաջացրին լայն զանգվածների դժգոհությունը, իշխանություններից հիասթափությունը:

Թվարկելով այդ ամենը՝ կրկին համոզվում ենք, որ հայոց նորանկախ երրորդ հանրապետության ծնունդը և նրա գործունեության

առաջին քայլերը, անկախ առանձին դեպքերում թույլ տված սխալներից, եղել են հետևողական՝ համառ պայքարով ձեռք բերած անկախությունը պաշտպանելու, ամրապնդելու, Արցախի, Սփյուռքի հայության հետ միասին այն զարգացնելու, նրա ապագան կերտելու և կայուն դարձնելու համար:

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի ավելի քան 30-ամյա պատմությունը դրա լավագույն վկայությունն և գլխավոր դասերից մեկն է:

Резюме

Абрамян Г.М., доктор исторических наук, профессор.
Общественно-политические предпосылки провозглашения независимости Республики Армения и начало её становления (февраль 1956 - сентябрь 1991 гг.)

Работа посвящена одной из важных страниц истории армянского народа – периоду конца XX века, когда развернулась борьба за независимость Армении. В работе освещены такие темы, как богатая общественно-политическая жизнь страны в этот период, общенациональная реакция народа на арцахское движение и горбачёвскую перестройку.

В монографии анализируется и оценивается литература, относящаяся к обсуждаемой теме, указывается значимость научных трудов армянских историков, политологов, политиков, экономистов и литературоведов. Даётся положительная оценка этих исследований, но также отмечаются их недостатки и упущения.

Структура работы достаточно широкая, разнообразная и объёмная. В ней подняты такие темы, как хрущевская «оттепель» и ее последствия, движение инакомыслящих, действующее в СССР и Советской Армении, тайные публикации неформальных организаций, явление «самиздат», которому посвящена отдельная глава. И, что очень важно, в работе показано, что распространение движения инакомыслящих в Советской Армении в значительной степени способствовало изменению политической атмосферы в Республике, формированию нового мышления, активизации национального самосознания, созданию предпосылок арцахского движения.

Отдельная глава посвящена горбачёвской перестройке и новым процессам демократизации советского общества. Оценивается сущность этой перестройки, этапы её развития и, как порождение этого, возникновение арцахского движения и комитета «Карабах». Представлена колоссальная работа, которую развернул комитет «Кара-

бах», организовывая ежедневные демонстрации и шествия, тем самым завоёвывая поддержку, расположение и симпатию народа.

В работе важное место отведено подходу КПСС и Коммунистической Партии Армении к арцахскому движению и вопросу Нагорного Карабаха. Партия охарактеризовала движение как экстремистское, не выражающее желание и волю народов Армении и Нагорного Карабаха и наносящее вред принципам дружбы союзных республик, установленным в Советском Союзе на протяжении десятилетий. Подобная позиция КПСС и Компартии Армении лишила их доверия армянского народа. Особенно отмечено это недоверие к лидерам ЦК Компартии Армении, Карену Демирчяну, Сурену Арутюняну, Владимиру Мовсесяну и Степану Погосяну, которые не смогли, но, наверное, и не имели возможности «проявить геройство» и перейти на сторону народа, поддержать проблемы и вопросы, поднятые комитетом «Карабах».

В работе также представлено, что и руководство Союза, и руководство Армении делали все возможное для запрещения деятельности комитета «Карабах», вплоть до ареста его членов, надеясь тем самым прекратить активность народных масс. Показано, что с этой целью было принято множество решений, запрещающих демонстрации и подавляющих народные волнения.

Особенно отмечены ужасные события резни армян в Сумгаите, Баку и других городах Азербайджана, которые не могли произойти без ведома властей и вышестоящих органов. Показано, что эти события ещё больше способствовали объединению армянского народа и его желанию продолжать борьбу. Арцахское движение становилось всё более популярным и общенародным, его нельзя было уже остановить. Армянские трудовые коллективы создавали подкомитеты «Карабах», организовывали различные акции и призывали руководителей своих предприятий поддерживать эти действия. Движение приобретало всё более всенародный характер. Отмечено, что самыми активными в этом были крупные предприятия, заводы, а также научно-исследовательские институты, вузовские и творческие коллективы.

Отдельная глава работы посвящена активной реакции армян Диаспоры на карабахское движение. Это касается как стран Ближнего Востока, так и европейских, латиноамериканских стран и США. Проживающие там армяне организовывали митинги, демонстрации, выдвигали лозунги, призывы, направленные руководителям ведущих стран мира и международным организациям. Особое внимание уделяется тому факту, что в этих акциях важную роль сыграли армянские политические партии спюрка, такие как Рамкавар-Азатакан, Гнчак и Дашнакцутюн.

Наконец, одной из важнейших глав работы является глава о приобретении независимости Арменией. Здесь представлены события выборов в Верховный Совет Советской Армении, состоявшиеся в мае 1990-го года, в результате которых произошла смена власти. Семидесятилетнее правление коммунистов потерпело поражение, уступив место новым политическим силам, комитету «Карабах» (АОД), провозгласившему Декларацию о независимости Республики Армения, которая подтвердилась позже всенародным референдумом 21-го сентября 1991-го года. Во главе республики встал лидер карабахского движения Левон Тер-Петросян.

Далее также указывается, что пришедшие к власти новые силы, увлечённые своим головокружительным успехом, не до конца остались верны тем лозунгам и обещаниям, которые давали до прихода к власти. Это привело к разногласиям и противоречиям в их рядах, к разладу с народом, к требованию смены власти, что и произошло в 1998 году. Но это уже другой период истории, который находится вне рамок данной работы.

Главный вывод книги, очередной раз подтверждённый историей, – это вывод о том, что только единство и сплочённость народа и власти приводят к успеху. Более чем 25-летняя история Республики Армения и Нагорного Карабаха – лучшее подтверждение этому.

Работа написана на основе огромного количества документальных фактов и архивных материалов.

Summary

Abrahamyan H. M., Doctor of Historical Sciences, Professor.

Social and political prerequisites for the declaration of independence of the Republic of Armenia and the beginning of its formation (February 1956 - September 1991)

The work is devoted to one of the most important events of the history of the Armenian people, at the end of the 20th century, when the struggle for the independence of Armenia began. The work covers such topics as the rich social and political life of the period, the nationwide reaction of the people to the Artsakh movement and Gorbachev's perestroyka.

The monograph analyzes and evaluates the literature related to the topic under discussion, indicates the significance of the scientific works of Armenian historians, political scientists, politicians, economists and literary critics. Not only is a positive assessment given of these studies, but also their shortcomings and omissions are mentioned in the book.

The structure of the work is quite broad, diverse and voluminous. It discusses such topics as Khrushchev's “Thaw” and its consequences, the movement of the dissidents operating in the USSR and Soviet Armenia, the secret publications of informal organizations, the phenomenon of underground publications (samizdat), to which a separate chapter is devoted. And, very importantly, the work shows that the spread of the movement of the dissidents in Soviet Armenia greatly contributed to the change of the political atmosphere in the Republic, to the formation of new thinking, the activation of national self-consciousness and the creation of the prerequisites of the Artsakh movement.

A separate chapter is devoted to Gorbachev's perestroika and new processes of the democratization of the Soviet society. The nature of the perestroyka, the stages of its development and, consequently, the emergence of the Artsakh movement and the Karabakh committee are assessed. The colossal work undertaken by the Karabakh committee has also been presented. This included the organization of daily

demonstrations and marches that helped to win the support, favor and sympathy of the people.

An important place in the work is given to the approach of the CPSU and the Communist Party of Armenia towards the Artsakh movement and the issue of Nagorno-Karabakh. The party characterized the movement as extremistic for they thought it didn't express the desire and will of the peoples of Armenia and Nagorno-Karabakh and harmed the principles of friendship of the Union Republics, that had existed in the Soviet Union for decades. Due to such a position, the Communist Party of Armenia lost the trust of the Armenian people. This distrust was expressed especially towards the leaders of the Central Committee of the Communist Party of Armenia Karen Demirchyan, Suren Harutyunyan, Vladimir Movsesian and Stepan Poghosyan, who could not, or rather were not able to "demonstrate heroism" and take the side of the people or offer their support to the issues raised by the "Karabakh" Committee.

The work also discusses the fact that both the top authorities of the Union and the Republic of Armenia did their best to ban the activities of the Karabakh committee up to the arrest of its members, hoping thereby to put an end to the actions of the masses. It is shown that a number of decisions prohibiting demonstrations and suppressing popular unrest were taken to this end.

The terrible events of the massacre of the Armenians in Sumgayit, Baku and other cities of Azerbaijan, which could not have happened without the knowledge of the government bodies and authorities has been duly illustrated. It is shown that these events further contributed to the unification of the Armenian people and the further enhancement of their desire to continue the struggle.

The Artsakh movement was becoming more and more popular and soon took on a nationwide appeal. It could not be stopped anymore. The Armenian labour groups created sub-committees of "Karabakh", organized various actions and called on the leaders of their organizations to contribute to these actions. The movement became more and more popular. It was noted that large companies, factories, as well as research

institutions, university and art groups were particularly active in these undertakings.

A separate chapter of the work is devoted to the active reaction of the Armenian Diaspora to the Karabakh movement. This applies not only to the countries in the Middle East, but to European, Latin American countries and the United States, as well. The Armenians living there organized demonstrations, put forward slogans, appeals addressed to the heads of the leading countries of the world, and international organizations. It is stated that Armenian political parties of the Diaspora, such as Ramkavar-Azatakan, Hnchak and Dashnaktsutyun played an important role in these actions.

Finally, one of the most important chapters of the work is the one dedicated to the proclamation of independence of Armenia. The chapter highlights the elections of the Supreme Soviet of Soviet Armenia which took place in May, 1990and resulted in a change of power. The seventy years of the rule of the Communists came to an end giving way to a new political force, the Karabakh Committee (ANM), which proclaimed the Declaration of Independence of the Republic of Armenia, later confirmed by a nationwide referendum on September 21, 1991. Levon Ter-Petrosyan, the leader of the Karabakh movement, became the head of the republic.

Further, it is also indicated that the new forces having come to power, were later intoxicated with their breathtaking success and didn't remain true to the slogans and promises they had given before coming to power. This led to controversies and differences inside the party, to a discord with the people and to the demand for a change of power in 1998. But this is another period of history, which is beyond the scope of the current work.

The main conclusion of the book, once again confirmed by history, is that success can be made possible only by solidarity and unity between the people and the authorities. The 25year-old history of the Republic of Armenia and Nagorno-Karabakh is the best proof of the idea stated.

The work is written with reference a huge amount of documentary and archival material.

Հավելված 1
Խորին հարցազրույցի հարցաշար՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների և ՀՀԾ-ՀԱԿ ղեկավար գործիչների հետ
Հայոց նորագույն պատմության՝ Երրորդ հանրապետության ավելի քան քառորդդարյա պատմության դասերը

1. Ինչպե՞ս եք գնահատում ‹‹Ղարաբաղ›› կոմիտեի (ՀՀԾ-ՀԱԿ) անցած ուղին: Որո՞նք են ՀՀԾ-ՀԱԿ ձեռքբերումները, հաջողությունները, սխալներն ու բացթողումները: Ի՞նչ կանեիք կամ կուղղեիք, եթե նորից գայիք իշխանության:

2. Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ)-ի գործունեությունը, նրա դրական և բացասական կողմերը, ի՞նչն է հաջողվել, ի՞նչը՝ ոչ:

3. Համեմատեք և գնահատեք Հայաստանում առկա իրավիճակը 1998 թ. Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականից ցայսօր 2-5 բալանոց համակարգով, որտեղ՝ 2՝ անբավարար, 5՝ գերազանց մակարդակ:

	Ոլորտներ	**1998**	**2018**	**2018-2019**
1.	ՀՀ ներքին քաղաքականության արդյունավետությունը			
2.	ՀՀ արտաքին քաղաքականության արդյունավետությունը			
3.	ՀՀ տնտեսական կայունությունը			
4.	ՀՀ ռազմական պաշտպանվածությունը			
5.	ՀՀ ժողովրդագրական իրավիճակը			
6.	ՀՀ վերնախավի հեղինակությունը			
7.	Արդարադատության մակարդակը ՀՀ-ում			
8.	Մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը ՀՀ-ում			

4. Ինչպե՞ս եք գնահատում Ղարաբաղյան հակամարտության կարգավորվածության արդի իրավիճակը, արդյունքները, բաղթողումները, հեռանկարները:

5. Ձեր կարծիքը Հայաստանի Հանրապետությունը նախագահական կառավարման համակարգից խորհրդարանական կառավարման անցնելու մասին. դրականը և բացասականը:

Հարցաշարը կազմեցին՝

պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Հենրիկ Մուշեղի Աբրահամյանը

քաղ. գիտ. դոկտ., պրոֆ. Արթուր Վրադիմիրի Աթանեսյանը

Հ.Գ. Վերը ներկայացրած «Խորին հարցազրույցի հարցաշարը» կազմելու գաղափարը իմ մեջ առաջացավ մենագրությունը գրելու և Հայաստանի ազգային արխիվում համապատասխան նյութերը ուսումնասիրելու և հավաքելու ժամանակ, որի համար էլ կազմեցի հարցաշարի առաջին տարբերակը: Այն ավելի պրոֆեսիոնալ տեսքի բերելու համար հարցաշարի վերջին տարբերակը կազմեցինք ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, իմ հարգարժան ընկերոջ՝ Արթուր Աթանեսյանի հետ: Հարցաշարը, կարծում եմ, բավական լավ և հետաքրքիր է ստացվել: Այնուհետև դիմեցի «Հայ ազգային կոնգրեսի» (ՀԱԿ) գրասենյակի մամլո խոսնակ, իմ նախկին ուսանող, ապա հայցորդ Արման Մուսինյանին հանդիպելու և հարցաշարը ներկայացնելու համար: Հանդիպմանը մասնակցում էր նաև ԵՊՀ պատմության ֆակուլտետի նախկին ուսանող, պատմական գիտության թեկնածու, ՀԱԿ անդամ Աշոտ Սարգսյանը, որոնց էլ ներկայացրի հարցաշարը:

Ծանոթանալով հարցաշարին և հավանություն տալով բարձրացված հարցերին՝ հարց բարձրացավ նաև այն մասին, որ հարցերը բավական տարողունակ են և դժվար է մի քանի էջերի շրջանակներում տեղավորվել: Այնուամենայնիվ, եկանք համաձայնության և ես թողեցի հարցաշարի մեկ օրինակն ու խնդրեցի ծանոթացնել «Ղարաբաղ» կոմիտեի, ՀՀՇ-ՀԱԿ որոշ անդամներին, որպեսզի պատասխանեն՝ ծավալը թողնելով իրենց հայեցողությանը:

Հետագա հարցումները ցույց տվեցին, որ «Ղարաբաղ» կոմիտեի, ՀՀԾ-ՀԱԿ անդամներից ոչ մեկը չի ցանկանում պատասխանել վերը ներկայացրած սոցհարցումներին՝ պատճառաբանելով, որ բավական դժվար է տեղավորվել պայմանավորված էջերի շրջանակներում:

Ինձ՝ որպես հեղինակի, մնում էր կատարել ընտրություն կամ չներկայացնել սույն հարցաշարը կամ թողնել այն՝ դրանով հնարավորություն տալով ընթերցողներին հայտնելու իրենց կարծիքը, իրենց տեսակետը պատմական այդ անչափ կարևոր և հետաքրքիր ժամանակների մասին կամ էլ թողնել, առանց մեծամտելու, պատկերավոր ասած, սերունդների և պատմության դատին:

ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

1990 թ. օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը, արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում, ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը,

ՀՌՉԱԿՈՒՄ Է

անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

1. Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան: Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը:

2. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը և օրենքները:

3. Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օրենքների հիման վրա: Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը

պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են նրա պաշտպանության և աջակցության ներքո: Հայաստանի Հանրապետությունը ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից:

5. Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ: Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը: Հայաստանի Հանրապետությունն ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը: Այլ երկրների զորամիավորումները, նրանց ռազմական բազաները և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ: Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

6. Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտա-

գործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ ազգային հարստություն, այդ թվում՝ ոսկու պաշարների, ալմաստի և վալյուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք:

8. Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սուբյեկտները և կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ:

9. Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում:

10. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի՝ որպես պետական լեզվի գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակույթի սեփական համակարգ:

11. Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:

12. Սույն Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ
Լ. Տեր-Պետրոսյան.
Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի քարտուղար՝
Ա. Սահակյան
23 օգոստոսի 1990 թ.
Ք. Երևան

Հոչակագիր՝
Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումներ անցկացնելու մասին (նախագիծ)

ՆԱԽԱԳԻԾ

ՀՌՉԱԿԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին

64

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք՝
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿԱԿՈՒՍԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ
ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Пролетарии всех стран, соединяйтесь!
КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ
СОВЕТСКОГО СОЮЗА

ЦЕНТРАЛЬНЫЙ КОМИТЕТ
КП АРМЕНИИ

№ Б.65/I

СЕКРЕТНО

«26» февраля 1988 г.

ПОСТАНОВЛЕНИЕ
БЮРО ЦК КП АРМЕНИИ

от 21 февраля 1988 г. Протокол № 65 § I

Постановление ЦК КПСС "О событиях в Нагорном Карабахе"

Бюро ЦК КП Армении отмечает, что Политбюро ЦК КПСС, всесторонне обсудив информацию о событиях в Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, оценивает сложившуюся обстановку как политически серьезную. Действия и требования, направленные на пересмотр существующего национально-территориального устройства в этом регионе, противоречат интересам трудящихся Азербайджанской и Армянской ССР, наносят вред межнациональным отношениям, могут, если не принять сейчас ответственных мер, привести к непредсказуемым или даже труднопоправимым последствиям.

Все это стало возможным в результате безответственных призывов и действий отдельных экстремистски настроенных лиц, а также пассивной, выжидательной позиции партийных и советских органов указанных республик, руководство которых недооценивает политическую опасность настроений националистического характера, поверхностно подходит к оценке сложившейся ситуации.

Всю полноту ответственности за нормализацию обстановки Политбюро возложило на Бюро ЦК Компартий Азербайджана и Армении и лично первых секретарей ЦК т.т. Багирова К.М. и Демирчяна К.С.

Бюро ЦК КП Армении постановляет:

I. Принять к руководству и неуклонному исполнению постановление ЦК КПСС "О событиях в Нагорном Карабахе". В соответствии с поручением ЦК КПСС принять необходимые скоординированные с

66

бюро ЦК Компартии Азербайджана меры к оздоровлению обстановки, направить все средства политического и идеологического влияния на разъяснение ленинской национальной политики, ее сущности на современном этапе. Во всей работе исходить из того, что национальный вопрос требует пристального и постоянного внимания к национальным особенностям, психологии, учета жизненных интересов трудящихся.

2. Рассмотреть сложившуюся вокруг Нагорного Карабаха обстановку на партийном активе республики.

3. Совету Министров Армянской ССР в 10-дневный срок представить предложения по мерам социально-экономического характера, которые целесообразно предпринять в Нагорном Карабахе. В случае необходимости внести предложения в Совет Министров СССР.

4. Поручить горкомам, райкомам партии, лично первым секретарям возглавить работу по разъяснению среди населения сложившейся обстановки вокруг Нагорного Карабаха, решительно пресекать любые безответственные действия, наносящие вред братским отношениям, интересам трудящихся Азербайджана и Армении. К этой работе привлечь советский, комсомольский, идеологический актив.

5. Утвердить план первоочередных практических мероприятий по реализации данного постановления (прилагается).

СЕКРЕТАРЬ ЦК КП АРМЕНИИ

послано: Всем ГК,РК,ГИК,РИК,министерствам и ведомствам (по списку),отделам ЦК

ха-155

ԱՄՆ հայկական համայնքի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի մասին

258
72
73

сз-3

Секретно

Экз. № 1

ЦК КП Армении

ЦК КП Армении
Вх. № 5748 На 2 листах
14 · 12 1989 г.
Решение возврату в общий отдел

К № I/2436 от IO.I2.89
О положении в армянской колонии США в связи с Постановлением ВС СССР по НКАО

По полученным дополнительным данным, в армянской колонии США усиливается поляризация сил в вопросе об отношении к Постановлению Верховного Совета СССР по НКАО от 28 ноября с.г.

Высказывая своё негативное отношение к Постановлению, представители ряда прогрессивных и нейтральных организаций связывают это решение с фактором "отсутствия Горбачева М.С. в Москве и уступки советского правительства Народному фронту Азербайджана". В то же время, в публикациях большинства армянских организаций США содержатся заявления о том, что "по вине Верховного Совета СССР произошла очередная трагедия в истории армянского народа, раскрывающая банкротство советской национальной политики и подорвавшая веру армян в искренность проводимой М.С.Горбачевым политики перестройки, гласности и демократизации".

Несмотря на проявленный негативизм к Постановлению, представители прогрессивных и нейтральных организаций заявили, что "в этой ситуации они не планируют каких-либо акций протеста, а будут ожидать развития дальнейших событий и соответствующей реакции советских властей".

Определенную "мирную" позицию в отношении Постановления ВС СССР по НКАО занимает "Армянский национальный комитет" США, который, следуя линии "уличной демократии и парламентских форм давления" планирует организовать в ближайшее время в ряде городов США "демонстрации протеста, бойкотировать прибывающие в США различные советские делегации, подготовить и направить в адрес М.С.Горбачева и Верховного Совета СССР петиции с требованием пересмотреть принятое решение".

Крайне экстремистскую позицию начинают проявлять отдельные отряды дашнакской организации США, которые призывают к "активизации действий в Армении и Арцахе с целью их объединения". В

257
23
74

частности, на состоявшемся в начале декабря с.г. в гор. Бостоне (шт. Массачусетс) встрече представителей "Дашнакцутюн" в числе вопросов о перспективах деятельности дашнаков в США, значительное внимание было уделено выработке конкретных действий против СССР, в том числе и на территории нашей страны. Один из функционеров "Дашнакцутюн" в своем выступлении, подводя итоги встречи, заявил: "Каждый член "АРФ" дал в свое время клятву служить до конца делу Армении, а если потребуется, то и пожертвовать своей жизнью для её освобождения. Настала пора вспомнить об этой клятве".

На встрече прозвучали также заявления о необходимости "оказания вооруженной помощи армянам в Арцахе для защиты от нападений со стороны азербайджанцев".

Председатель Комитета госбезопасности
Армянской ССР

В.Г.Баламанц

"15" декабря 1989 года.

Рег. № I/246I

Ազգագրագետ Գալինա Ստարովոյտովոյի նամակը Սիլվա Կապուտիկյանին և Զորի Բալայանին

Приложение
вход. № 356

Сильве Капутикян и Зорису Балояну от
Галины Старовойтовой, Этнопсихолога
(Ленинград)

Друзья (мне хочется так назвать вас), по нам русским, давно стали близки ваша история, письменность, культура вообще, да и сейчас наши дружеские нити. Я решаюсь обратиться к вам только потому, что бурные события последних годов, вероятно, коснулись вас и наполнили все ваше время деятельностью, о которой немного знаем и мы (несмотря на скудную полуправду газет и кокетство телевидения). Хотя может, вам иногда сегодня побыть в тишине, подумать со своими мыслями и впечатлениями. Знайте, что у вас есть неведомые друзья в Москве и Ленинграде, что все наши помыслы в эти дни с вами. То немногое, что зависит от нас, этнографов и историков, мы полным взором на запреты и побуждаем связаны мы с такими группировками.

Мы не теряем надежды на справедливое решение судьбы Карабаха, который имеет не этнографически экспедиционным. Прекрасные лица жителей этих Карабахских сел, их старинные каменные кладки, надгробья древних каждый стоят у нас перед глазами. Честно говоря, не думалось, что эти народные судьбы лягут с их библейской грустью во взгляде сумеют так решительно уже при первых порывах ветра свободы. И, кажется, у них есть не "то вода", а только причины. Это удивительно.

Посмотри на сохранившуюся и сейчас (вместе с надеждой) необходимость что делать, и убеждаешь, есть ещё одна неотложная необходимость. Что необходимость разумения, необходимость фиксации всего происходящего-летопись. Тогда уже завтра нам взгляд откроется, откроется круг предположений, прогнозов, круг возможных альтернатив дальнейшего развития ситуации, тем более-после 30-го ... .

Пока пишешь событиям, обычно кажется, что они незабвенны, но при их огромности, сверхсложности жизни память начинает быстро путаться. Представление о существенном и незначительном меняется с каждым днём. Но и отличия от спонтанного восприятия избирательно фильтрует факты. То нужно не только хроника. Нужен сбор самых разных свидетельств, мнений, впечатлений-мужчин и женщин, старожилов и молодых, интеллигентов и простых. Помнишь как американец Торнер написал по сумме интервью и пр. свою книгу про мировой войны. Кто возьмет на себя благородный труд летописца? Кто друг писатели Армении? Кажется, нужно, чтобы эти дни уже вместе с их очевидцами. Нельзя терять их дни. Но нашему в этом доводится стать свидетелем того, кто перед этим лицом и лицу со своей историей.

Какой бы хор не получился событий только, они уже состоятся, и нам придёт уже не так на такой, как [illegible].

63 2

К сожалению, обстоятельства не позволяют мне сейчас вылететь к друзьям в Ереван, иначе я вела бы дневник, как принято и положено этнографу, работающему в "поле".

Жаль, что не могу быть там. И завидую тем, кто там. Жаль также, что я не писатель, не журналист и не могу написать об этих днях так, как они этого заслуживают. Жаль, что мой народ пока (или уже) не способен к единению.

Хорошо, что другой народ моей страны способен.

Но нам опыт не только ваш. Он имеет универсальное историческое со бытие и потому не может быть утрачен.

Старовойтова Галина Васильевна,
психолог, кандидат исторических наук
(по этнографии), специалист в области этн
ческих процессов.

ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգապետ Ջորջ Դոքմեջյանի հեռագիրը ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին և Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին

ТЕЛЕГРАММА изСакраменто.
Калифорния.США

1

КАТОЛИКОСУ ВАЗГЕНУ I
Эчмиадзин.Армения.СССР
/Копия текста письма, отправленного М.С.Горбачеву/

ЕГО ПРЕВОСХОДИТЕЛЬСТВУ МИХАИЛУ С.ГОРБАЧЕВУ,
ГЕНЕРАЛЬНОМУ СЕКРЕТАРЮ ЦК КПСС, МОСКВА,СССР,25 марта 1988 г.

Дорогой господин Генеральный секретарь!

Я совершаю необычный шаг, обращаясь непосредственно к Вам, чтобы выразить мое глубокое разочарование по поводу Постановления Президиума Верховного Совета и Политбюро, в котором нет справедливого и непредвзятого решения об исправлении исторической несправедливости по отношению к армянскому населению Нагорно-Карабахской автономной области.

Несмотря на положительные элементы, такие, как улучшение условий жизни и труда и, по возможности, укрепление культурных связей между Карабахом и Арменией, это Постановление не является, однако, исправлением серьезной ошибки, допущенной в сталинский период. Я надеюсь, что в предстоящие несколько недель, после изучения Вами сути вопроса, станет возможным полностью ликвидировать искусственное отделение армян от армян. Граждане Карабаха и Армянской республики мирным и законным путем выразили свою непреклонную волю к воссоединению. Армяне всего мира присоединились к этому призыву к справедливости и реформам в Советском Союзе. Проведенные Вами в Азербайджанской республике мероприятия, направленные на обеспечение безопасности армян привели к спасению тысяч жизней. И я приветствую Ваше распоряжение восстановить общественный порядок и в судебном порядке сурово наказать тех, кто несет ответственность за насилие над армянами.

Вы уже показали Вашу личную обеспокоенность и заинтересованность в этом вопросе, совершив несколько беспрецедентных шагов.
Я прошу Вас проявлять постоянное внимание к развитию такой национальной политики, которая удовлетворительным образом разрешила бы эту давнюю несправедливость.

Искренне Ваш
Джордж Токмеджян,
губернатор штата
Калифорния, США

2

Սաքրամենթո, Քալիֆորնիա, ԱՄՆ 25 մարտի 1988թ.

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶՆՑՈՒԹՅՈՒՆ ՄԻԽԱԻԼ ՍԳՈՐԲՈՉՈՎԻՆ

Թանկագին պր. Գլխավոր քարտուղար.

Ես կատարում եմ մի անսովոր քայլ, ուղղակի Ձեզ գրելով՝ արտահայտելու իմ խորին հիասթափությունը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և քաղբյուրոյի որոշմամբ չհետապնդելու անաչառ մի վճիռ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հայ ժողովրդի հանդեպ կատարված անարդարությունը վերացնելու հարցում:

Այդ որոշումը, դրական տարրեր պարունակելով հանդերձ՝ կյանքի և աշխատանքի ավելի լավ պայմաններ զարգացնելու և հնարավորին չափ Քարելավված կուլտուրական կապեր հաստատելու Ղարաբաղի և Հայկական հանրապետության միջև, վերջնական լուծում չէ սակայն ստալինյան ժամանակաշրջանում կատարված լուրջ սխալի Պիտի հուսայի, որ առաջիկա մի քանի շաբաթում, զորձի էությունը ճանաչելով, Դուք, հայերը հայերից արհեստական կերպով Քաժանելը կարելի գտնեք լրիվ ուղղել: Ղարաբեղի և Հայկական հանրապետության քաղաքացիները խաղաղ ու օրինավոր ձևով ցույց տվեցին վերամիավորման իրենց Քուռն փափագը: Նրանք Սովետական Միության մեջ կիրառեցին հրապարակայնության և վերակառուցման Ձեր առաջ քաշած իրավունքները: Համայն աշխարհ հայերը միացան այս կոչին՝ արդարության ու Քարեփոխումների համար Սովետական Միության մեջ:

Ադրբեջանական հանրապետության մեջ հայերի պայմանությունը պահպանելու կոչված Ձեր միջոցառումները հազարավոր կյանքեր փրկեցին: Ես ողջունում եմ Ձեր հրահանգը դատական կարգով խիստ հետապնդելու հայերի հանդեպ Քռնությունների պատասխանատուներին և վերահաստատելու հանրային կարգուկանոնը:

Դուք արդեն իսկ այդ հարցում ցուցաբերեցիք Ձեր անձնական վրդովմունքը և շահագրգռությունը՝ մի շարք աննախընթաց քայլերի դիմելով:

Ես Ձեզ կոչ եմ անում հետևողական ուշադրություն նվիրել ազգային քաղաքականության զարգացման հարցին, որը գոհացուցիչ կերպով պիտի լուծի այս վաղեմի անարդարությունը:

Անկեղծորեն՝ Ջորջ Դոքմեջյան
Քալիֆոռնիայի նահանգապետ
Գատճենը՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին

Աղբյուրների և գրականության ցանկ

(Արխիվային նյութեր)

ֆ.1, ց. 82, գ. 102, թ. 95, 96: ֆ.1, ց. 82, գ. 1, թ. 15, 16, 68, 69, 70: ֆ.1, ց. 82, գ. 3, թ. 1 , 3 , 4 , 5 , 23, 24: ֆ.1, ց. 82, գ. 21, թ. 35, 36, 42, 43, 47, 57, 58, 59: ֆ.1, ց. 82, գ. 22, թ. 2, 3, 33, 34, 35, 36, 37, 96, 126, 127, 128, 129, 130: ֆ.1, ց. 82, գ. 24, թ. 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19: ֆ.1, ց. 82, գ. 25, թ. 62, 63, 64, 65, 66: ֆ.1, ց. 82, գ. 29, թ.138: ֆ.1, ց. 82, գ. 30, թ. 2, 3, 14, 15, 16: ֆ.1, ց. 82, գ. 38, թ. 4, 5, 6, 7, 8, 9, 10: ֆ.1, ց. 82, գ. 43, թ. 2, 3: ֆ.1, ց. 82, գ. 81, թ. 6, 7, 8: ֆ.1, ց. 82, գ. 88, թ. 14, 64, 65: ֆ.1, ց. 82, գ. 106, թ. 7, 8, 9, 26, 27: ֆ.1, ց. 83, գ. 13, թ. 2, 3, 4: ֆ.1, ց. 83, գ. 79, թ. 2, 13: ֆ.1, ց. 84, գ. 23, թ. 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 26: ֆ.1, ց. 84, գ. 27, թ. 4, 5, 6, 7, 8: ֆ.1, ց. 84, գ. 67, թ. 5, 6, 7: ֆ.1, ց. 84, գ. 84, թ. 6: ֆ.1, ց. 84, գ. 98, թ. 3, 4, 5, 6, 7, 68, 69, 70, 71, 72: ֆ.1, ց. 85, գ. 9, թ. 1, 2, 3, 4, 5, 6: ֆ.1, ց. 85, գ. 13, թ. 1, 2, 4, 7, 8: ֆ.1, ց. 87, գ. 4, թ. 3, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21: ֆ.1, ց. 87, գ. 9, թ. 8, 9, 108, 109, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 137, 138, 139, 142, 143, 146, 147, 148, 152: ֆ.1, ց. 87, գ. 10, թ. 115, 116, 117, 140, 141, 142: ֆ.1, ց. 87, գ. 12, թ. 23, 24, 90, 94, 96, 97, 111, 112, 113, 114, 115, 116, 139, 140, 141, 155: ֆ.1, ց. 87, գ. 18, թ. 128, 129, 130, 131, 132, 133: ֆ.1, ց. 87, գ. 19, թ. 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70: ֆ.1, ց. 87, գ. 22, թ. 161, 162, 163, 164, 165, 166, 169, 196, 199, 206, 207, 208, 234, 235, 242, 242 ա, 247: ֆ.1 ց. 87, գ. 22, թ. 1.- 262 (ՀԽՍՀ ՆԳՄ հատուկ հաղորդագրությունները հանրապետությունում Ղարաբաղյան շարժման մասին): ֆ.1, ց. 87, գ. 23, թ. 15, 16, 31, 32, 209, 210, 211, 212, 213, 214, 216, 217, 218, 227: ֆ.1, ց. 87, գ. 24, թ. 1, 11, 12, 13, 14, 15, 16, 60, 61, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 142, 143, 144, 206: ֆ.1,ց.87, գ.27, թ. 1-131: ֆ.1, ց. 87, գ. 28, թ. 14, 15, 30, 31, 32, 33: ֆ.1, ց. 87, գ. 30, թ. 5, 6, 7, 8: ֆ.1, ց. 87, գ. 33, թ. 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108: ֆ.1, ց. 87, գ. 34, թ. 18, 19, 25, 26, 27, 58, 59, 62, 63, 65, 66, 70, 72, 73, 75, 76, 78, 79, 81, 82, 84: ֆ.1, ց. 87, գ. 35, թ. 1, 2, 6, 7, 8, 70, 71, 72, 84, 94, 95, 96, 97, 102, 103, 104, 110, 111,

113, 116, 118, 123, 124, 125: ֆ.1, ց. 87, գ. 39ա, թ. 218, 219, 220, 223, 224, 225, 229, 230, 231, 232, 235, 236, 239, 240, 241: ֆ.1, ց. 87, գ. 40, թ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22: ֆ.1, ց. 87, գ. 41, թ. 46, 47, 52, 53, 54: ֆ.1, ց. 87, գ. 44, թ. 14, 15, 16: ֆ.1, ց. 87, գ. 47, թ. 1-76: ֆ.1, ց. 36, գ. 5, թ. 8, 61: ֆ.1, ց. 87, գ. 46, թ. 1-69: ֆ.1, ց. 87, գ. 49, թ. 1-166: ֆ.1, ց. 36, գ. 47, թ. 2, 6, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 40, 41, 42, 45, 46, 47, 61, 62, 65: ֆ.1, ց. 36, գ. 57, թ. 7, 8, 14, 15, 17, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 97, 100, 101, 102, 103, 104, 105: ֆ.1, ց. 36, գ. 58, թ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 15, 16, 17, 22, 26, 27, 28, 29, 31, 45, 46, 47, 48,49, 50, 51, 52, 53, 54, 61, 62, 63, 64, 69, 70, 71, 72, 73, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 130: ֆ.1, ց. 36, գ. 59, թ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22: ֆ.1, ց. 36, գ. 60, թ. 10, 11, 12, 13, 14, 15: ֆ.1, ց. 36, գ. 72, թ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 29, 30, 31, 36, 37, 38, 54, 55, 56, 57, 58, 60, 61: ֆ.1, ց. 95, գ. 1, թ. 88, 89, 90, 91, 92: ֆ. 326, ց. 9, գ. 41, թ. 7, 8, 9, 10, 11, 12: ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 31: ֆ. 1678, ց. 1, գ. 2, թ. 3, 4, 9, 16: ֆ. 1678, ց. 1, գ. 3, թ. 17, 19, 29, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 51: ֆ. 1678, ց. 1, գ. 4, թ. 1-104: ֆ. 1678, ց. 1, գ. 13, թ. 1: ֆ. 1678, ց. 1, գ. 15, թ. 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 29, 30: ֆ. 1678, ց. 1, գ. 16, թ. 9, 10, 11, 12, 13, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 30, 31, 40, 41, 42, 43, 44, 45, 46: ֆ. 1678, ց. 1, գ. 17, թ. 7, 8, 9, 10, 11, 12, 14, 15, 141, 142: ֆ. 1678, ց. 1, գ. 19, թ. 4, 5, 6, 8, 9, 10: ֆ. 1678, ց. 1, գ. 18, թ. 1, 2, 3, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 53: ֆ. 1678, ց. 1, գ. 21, թ. 46, 47: ֆ. 1678, ց. 1, գ. 49, թ. 2, 11, 16: ֆ. 1678, ց. 1, գ. 51, թ. 5, 6, 7, 8: ֆ. 1678, ց. 10, գ. 45, թ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24,25: ֆ. 1678, ց. 7, գ. 13, թ. 29: ֆ. 1678, ց. 87, գ. 12, թ. 138: ֆ. 1159, ց. 1, գ. 24, թ. 2: ֆ. 1159, ց. 1, գ. 23, թ. 11, 12, 17: ֆ. 1450, ց. 1, գ. 1, թ. 8, 20, 21, 22, 22ա, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 32, 33, 34: ֆ. 1450, ց. 1, գ. 4, թ. 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 12, 13,

20, 21, 22, 23, 24, 43, 44: ֆ. 1450, ց. 1, գ. 6, թ. 19, 20, 21, 22, 23, 24, 25: ֆ. 1450, ց. 1, գ. 20, թ. 7, 8, 9, 10, 11: ֆ. 4514 , ց. 2, գ. 1, թ. 9, թ. 10, 11, 12, 13: ֆ. 4514, ց. 7, գ. 3, թ. 78, 79: ֆ. 4515, ց. 10, գ. 43, թ. 8, 13, 14: ֆ. 4516, ց. 1, գ. 15, թ. 3, 4, 8, 13, 14, 18: ֆ. 4516, ց. 1, գ. 8, թ. 53: ֆ. 4516, ց. 1, գ. 51, թ. 4, 5, 6, 7, 8, 9, 10: ֆ. 4516, ց. 7, գ. 13, թ. 28: ֆ. 4515, ց. 10, գ. 43, թ. 8, 13, 14: ֆ. 4514, ց. 13, գ. 3, թ. 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36: ֆ. 4517, ց. 1, գ. 1, թ. 15, 16, 17: ֆ. 4517, ց. 1, գ. 5, թ. 20: ֆ. 4517, ց. 1, գ. 9, թ. 1: ֆ. 4531, ց. 1, գ. 1, թ. 5, 6, 7, 8, 9: ֆ. 166, ց. 1, գ. 1146, թ. 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55: ֆ. 82, ց. 84, գ. 2, թ.1: ֆ. 4535, ց. 1, գ. 2, թ. 1, 2: ֆ. 4535, ց. 1, գ. 11, թ. 24:
Արխիվային նյութեր՝ վերցված ՀՀ արդարադատության նախարարության կուսակցությունների, լրատվական միջոցների, հասարակական կազմակերպությունների գրանցման վարչությունից, գործ N 1, 2, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13:

Հայերեն գրականության ցանկ

1. Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Երևան 1992:

2. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, Գիրք Գ. 1985-2000, Երևան 2007, «Կռունկ», Ստեփանակերտ, 2013: Արցախի հասարակական-քաղաքական կյանքը և հայոց եկեղեցին (1855-1876 թթ), «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, Երևան 2014:

3. Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2009, Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011 թթ., Երևան, 2011, Անցումը միակուսակցական համակարգից բազմակուսակցության Հայաստանի Հանրապետությունում, որպես Ժողովրդավարության գործոն (1991-2012 թթ.), «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես Ա (գիտական հոդվածների Ժողովածու), ԵՊՀ, Երևան, 2013, էջ 3-10, ԽՍՀՄ փլուզումը և նորանկախ պետությունների առաջացումը որպես աշխարհաքաղաքական նոր իրողություն, «Պատմություն և մշա-

կույթ», Հայագիտական հանդես Բ (գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ, Երևան, 2013, էջ 38-49, Ժողովրդավարությանն ընդառաջ, Երևան, 1998, էջ 92-101, Ժողովրդավարության սկզբունքների դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում, էջ 102-109, Հայաստանի Հանրապետության անկախացումը և հասարակական-քաղաքական կյանքի առաջին փուլերը 1980-1990-ական թվականներին, «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), 2016, էջ 219-229, Բազմակուսակցությունը որպես ժողովրդավարության կարևոր գործոն, Պատմության հարցեր, Տարեգիրք № 2, Երևան, 2013, էջ 258-277, ՀՀ անկախությունը և հասարակական-քաղաքական կյանքի ակտիվացման առաջին քայլերը 1980-1990-ական թվականներին, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, Գիտական զեկուցումների դրույթներ (2016 թ., հուլիսի 15), Երևան, 2016, էջ 43-47:

Ազգամիջյան հարաբերությունները արդի ժամանակաշրջանում (համահեղինակ՝ Լիլիթ Մատինյան), «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2017, N 2, էջ 119-228, Արցախյան շարժումը որպես վերակառուցման ծնունդ (համահեղինակ՝ Մատինյան Լիլիթ), «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2017, էջ 229-236, Գորբաչովյան վերակառուցման էությունը և նրա զարգացման փուլերը (1985-1990թթ.), (համահեղինակ՝ Մատինյան Լիլիթ), «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2018, էջ 15-27, Արդի քաղաքական համակարգի ձևավորումը Ռուսաստանի Դաշնությունում, (համահեղինակ՝ Գրիգորյան Արսեն), «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու N 1 (30), Երևան, 2007, էջ 193-207, Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2006, N 3, էջ 3-20, Ներկայացուցչական դեմոկրատիան և ընտրազանգվածների քաղաքական կուլտուրան, Սահմանադրական դատարան N 2, 1999, էջ 13-18:

4. Արարքցյան Բ., Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանը (Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ 1990-1995, Երևան, 1995):

5. Այվազյան Ա., Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը, Երևան, 1998:

6. Աղայան Ա., Հայաստանի քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Երևան, 2002:

7. Բագրատյան Հ., Հայաստանը դարերի սահմանագծին, Երևան, 2003, Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Երևան, 2000, Հասարակությունը և պետությունը, Երևան, 1999, Տնտեսական աճի պարադիգմ, Երևան, 2003:

8. Բաղդասարյան Ա., Լևոն Տեր-Պետրոսյան. Դիմանկարի փորձ, Երևան, 1996:

9. Բաղդասարյան Ի. Վ., «Օղակ» ռազմական գործողության պետական ահաբեկչական բնույթը, «Լրաբեր» հասարակական գիտությունների, N3, 2013, էջ 83-92:

10. Բլեյան Ա., Արևի նման նայեցեք աշխարհին, «Ո՞րն է մեր ճանապարհը», Երևան, 1990, էջ 3-4:

11. Գալստյան Հ., Չուղարկված նամակներ (էսսեներ, հոդվածներ), Երևան, 1992, Հոդվածներ Հուշագրություններ Հարցազրույցներ, Երևան, 2002, Չուղարկված նամակներ, Նվիրվում է Ղարաբաղյան շարժման 25-ամյակին, Երևան 2013 (կազմել և հրատարակել է Համբարձում Գալստյանի համակուրսեցին, ընկերը՝ Հարություն Մարությանը):

12. Գեղամյան Ա., Հարավային Կովկաս. Ճախմատային մեծ պարտիա, Երևան, 2009:

13. Գևորգյան Ռ., Ձիքարշից մինչև մետրոպոլիտեն, Երևան, 2000, Հավաքական ուժ, Երևան, 2005:

14. Գորբաչով Մ. Ս., Ժողովրդի կենդանի ստեղծագործությունը, Երևան, 1985, Հոկտեմբերը և վերակառուցումը. Հեղափոխությու-

նը շարունակվում է 1917-1987, Երևան, 1987, Перестройка и новое мышление для нашей страны и для всего человечество, М., 1988, О национальной политике партии в современных условиях, М., 1989:

15. Դարբինյան Ա., Լռության րոպե…, Երևան, 2003:

16. Դեմիրճյան Ռ., Հիշատակ, Երևան, 2012:

17. Դալլաքյան Կ., Հուշապատում (դեմքեր, հիշողություններ, մտորումներ), Երևան, 1998:

18. Դավթյան Վ., Տունը հրաբխի վրա, Երևան, 1996:

19. Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, 2008, Հարավային Կովկասը Օգոստոսյան պատերազմից հետո, Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հայ-թուրքական հարաբերություններ, Երևան, 2009:

20. Իշխանյան Ռ., Երրորդ ուժի բացառման օրենքը, Ո՞րն է մեր ճանապարհը, Հոդվածներ, Երևան, 1990, էջ 93-124:

21. Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երևան, 1999:

22. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան 2005; Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 1999:

23. Հարությունյան Ս., Անցյալի և ներկայի մասին, Երևան 2011:

24. Համբարձումյան Ս., Երեք տարի սիրո և մահվան սահմանագծին, Երևան, 1998:

25. Հարությունյան Գ., Կարեն Դեմիրճյան, Հիշատակի խոսք, Երևան, 2005:

26. Հայրիկյան Պ., Անկախության ճանապարհի երեք վավերագրեր, Երևան, 1997, Ազգային միացյալ կուսակցություն. Ծրագիր. կանոնադրություն և պարագայք, Երևան, 1991, Դեպի բացարձակ ժողովրդավարություն, Երևան, 2013:

27. Հովսեփյան Ս., ՀՀՇ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, Երևան, 2002:

28. Ղահրամանյան Կ., Արցախ խեղաթյուրված և անտեսված հարցեր, Երևան, 2013, Հյուսիսային Արցախ, գոյության պայքար, Գիրք Բ, Երևան, 1993:

29. Մանուկյան Ա., Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ., Երևան, 2005, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Երևան, 1999:

30. Մանուկյան Վ., Գնացքից թռչելու ժամանակն է, Չորս հարց Վազգեն Մանուկյանին, Ո՞րն է մեր ճանապարհը, հոդվածներ, Երևան, 1990:

31. Մարության Հ., Հայ ինքնության պատկերագրությունը, Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, 2009:

32. Մանասյան Ա., Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելիում, Երևան, 2003:

33. Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.) Երևան, 2003, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2014:

34. Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, Ելույթներ, Հոդվածներ, Հարցազրույցներ, Երևան, 2006:

35. Պողոսյան Գ., Մխիթարյան Ս., Ժողովուրդ, իշխանություն, առաջնորդներ, Երևան, 1996, Հայ հասարակությունը 21-րդ դարասկզբին, Երևան, 2006:

36. Պեպանյան Ա., Խորհելու ժամանակը կամ ումից է հարկավոր փրկել հայ-հայրենիքը, Երևան, 2003:

37. Սարգսյան Ֆ., Կյանքի դասերը, Երևան, 2013:

38. Սարգսյան Ա., Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը (1988-1998 թթ.), Երևան, 2015:

39. Սարդարյան Կ., Հայաստանի Հանրապետության պատմությունը, «Վերածնված Հայաստան», ամսագրի էջերում, Անկախության վերջին 45 օրը, Ո՞րն է մեր ճանապարհը, Երևան, 1990, էջ 67-85:

40. Ստուպիշին Վ., Իմ առաքելությունը Հայաստանում, Երևան, 2005:

41. Սիմոնյան Հ., Նորից ազգային արժանապատվության մասին, Ո՞րն է մեր ճանապարհը, Երևան 1990, էջ 116-124:

42. Սիրադեղյան Վ., Առաջին և վերջին քայլը ազատության ճանապարհին, Ո՞րն է մեր ճանապարհը, Երևան, 1990, էջ 86-92:

43. Քեռյան Գ., Հայաստանի Երրորդ հանրապետության կուսակցական համակարգը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 1996, Քաղաքական կուսակցություններ, Երևան, 1996, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Երևան, 2002:

44. Քոթանջյան Հ. Ս., Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Երևան, 2008:

45. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, Երևան, 1991:

46. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, Երևան, 1992:

47. Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995:

48. Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար 1988-1989, Երևան, 2014:

49. Հայաստանի Հանրապետության կուսակցություններ, Երևան, 2002:

50. Հայաստանի Հանրապետության կուսակցություններ, տեղեկագիր 2007, Երևան, 2007:

51. Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունները, Երևան, 1996:

52. Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունները, Երևան, 2007:

53. Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան, 2001: Անկախության և անցումային տասը տարիները Հայաստանում:

54. «Ազդակ». Անկախության տասնամեակ 1991-2001, Ուրբաթ, 21 Սեպտեմբեր, 2001:

55. Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998. Պետության դերը:

56. Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան 1995, Երևան, 1995:

57. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ 1990-1995, Երևան, 1995:

58. Հայաստանը փոխակերպվող աշխարհում, Երևան, ՌԱՀԿԿ, 2006:

59. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. Կարգավորման ուղիներ. Խորհրդարանի լսումներ 29-30 մարտի, 2005, Երևան, 2006:

60. Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարի նյութերը, Երևան, 1986:

61. ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը 1987 թ. հունիսի 25-26-ին Երևան, 1987:

Ռուսերեն գրականության ցանկ

62. Армения: проблемы независимого развития. М, 1998.

63. Богданович В. Ю., Манчинский А. Я., Егоров Ю. В., Муха В. А., Бартник А. А., Конфликты и войны после распада СССР, Киев, 2008.

64. Вартанян Р. Г., Российская политика на Кавказе, Ереван, 2005.

65. Волкогонов Д., Семь Вождей. Книга 2. Леонид Брежнев, Юрий Андропов, Константин Черненко, Михаил Горбачев, Москва, 1995.

66. Верт Н., История Советского государства, Москва, 1999.

67. Галикян Р., Мифологизация истории, Азербайджан, Армения, вымысли и факты, Ереван, 2010.

68. Джузеппе Б., от СССР к России, Москва, 1996.

69. Елисеева. История перестройки в СССР 1985-1991 гг., Москва, 2016.

70. Золян С., Нагорный Карабах : проблема и конфликт, Ереван, 2010.

71. Лембо Таннинг, Армянская проблема, 2008, «Times New Roman», E-post: toivot@uninet.ee.

72. Мунгаев Ш. М., Устин В. И., История Советского государства, 2-е издание, Москва, 2008.

73. Оганесян Н., Карабахский конфликт: этапы, подходы, варианты решения, Ереван, 1997.

74. Правда о Нагорном Карабахе: материалы и документы, Ереван, 1989.

75. Подетрочник. Жизнь Лилианы Лунгиной, рассказанная ею в фильме Олега Бормана, Москва, 2015.

76. Примаков Евгений, Мир без России? К чему ведет политеческая близорукость. Москва, 2009.

77. Саркисян Манвел, Нагорный Карабах: война и политика (1990-1993 гг.). Война в Нагорном Карабахе и внутренный конфликт в армянском обществе, Ереван, 2010.

78. Ступишин Владимир, Карабахский конфликт 1992-1996, Москва, 1998.

79. Томас де Ваал, Армения и Азербайджан между миром и войной, Москва, 2014.

80. Таубман У., Хрущев, Жизнь замечательных людей, Москва, 2014.

81. Ускорение. Актуальные проблемы социально-экономического развития, Москва, 1985.

82. Шинкарецкая Г. Г., Содружество независимых государств (правовые основы деятельности), Москва, 2006.

ՀՀ Գերագույն խորհրդի, համապատասխան գերատեսչությունների, մարմինների ընդունած՝ ՀՀ անկախությանը և Արցախյան շարժմանը նվիրված որոշումներ, նյութեր և այլն:

83. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, Երևան, 1991:

84. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, Երևան, 1992:

85. Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), Երևան, 1995:

86. Հայության կոչերն ու դիմումները ԼԴԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար 1988-1989, Երևան, 2014:

87. Հայաստանի Հանրապետության կուսակցություններ, Երևան, 2002:

88. Հայաստանի Հանրապետություն. Կուսակցություններ. Տեղեկագիր 2007, Երևան, 2007:

89. Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունները, Երևան, 1996:

90. Անկախության և անցումային տաս տարիները Հայաստանում, «Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 2001»:

91. «Ազդակ». Անկախութեան տասնամեակ 1991-2001, Ուրբաթ 21, Սեպտեմբեր, 2001:

92. «Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 1998», Պետության դերը:

93. «Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 1995», Երևան, 1995:

94. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ 1990-1995, Երևան, 1995:

95. Հայաստանը փոխակերպվող աշխարհում. Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, ՌԱՀՀԿ, Երևան, 2006:

96. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. Կարգավորման ուղիներ. Խորհրդարանի լսումներ 29-30 մարտի, 2005, Երևան, 2006:

97. Սովետական միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարի նյութերը, Երևան, 1986:

98. ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը 1986 թ. հունիսի 16-ին, Երևան, 1986:

99. ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը 1987 թ. հունիսի 25-26-ին, Երևան, 1986:

100. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, Երևան, 2007:

101. Հանուն երրորդ հանրապետության. ՀՀԾ. «Հայոց համազգային շարժման» XII համագումար. 22-23 դեկտեմբեր 2000, ժողովածու համագումարի պատվիրակների համար. Ժողովածուն կազմեց Տիգրան Հակոբյանը, Երևան 2000:

Մամուլ

102. «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 7:
103. «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 9:
104. «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 10:
105. «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 11:
106. «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 16:
107. «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 21:
108. «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 22:
109. «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 24:
110. «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 25:
111. «Խորհրդային Հայաստան», 1990, օգոստոսի 26:
112. «Հայաստանի Հանրապետություն», 1991, փետրվարի 2:
113. «Հայաստանի Հանրապետություն», 1991, հուլիսի 5:
114. «Հայաստանի Հանրապետություն», 1991, հուլիսի 9:
115. «Հայաստանի Հանրապետություն», 1991, սեպտեմբերի 20:
116. «Հայաստանի Հանրապետություն», 1991, սեպտեմբերի 21:
117. «Հայաստանի Հանրապետություն», 1991, հոկտեմբերի 2:

118. «Հայաստանի Հանրապետություն», 1991, հոկտեմբերի 19:
119. «Հայաստանի Հանրապետություն», 1991, հոկտեմբերի 7:
120. «Հայաստանի Հանրապետություն», 1991, հոկտեմբերի 28:
121. «Հայաստանի Հանրապետություն», 1991, փետրվարի 13:
122. «Հայաստանի Հանրապետություն», 1991, դեկտեմբերի 22:
123. «Правда», 28 февраля, 1988.
124. «Правда», 29 февраля, 1988.
125. «Советская Россия», 16 декабря, 2010.
126. «Аргументы неделии», 7 декабря, 2012.
127. «Голос Армении», 19 июля, 1991.
128. «Известия», 28 февраля, 1988.
129. «Известия», 7 апреля, 1990.
130. «Правда», 13 января, 1988.
131. «Правда», 21 февраля, 1988.
132. «Правда», 22 февраля, 1988.
133. «Правда», 23 февраля, 1988.
134. «Правда», 24 февраля, 1988.
135. «Правда», 25 февраля, 1988.
136. «Правда», 26 февраля, 1988.

Բովանդակություն

Ներածություն.....5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1950-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.....26
1.1. Խրուշչովյան «ձնհալը» և նրա հետևանքները.....26
1.2. Այլախոհական շարժումը Խորհրդային Հայաստանում.
Ոչ ֆորմալ կազմակերպությունների գործունեությունը
1960-1980-ական թվականներին 66
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԳՈՐԲԱՉՈՎՅԱՆ «ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ» ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ.....80
2.1. «Վերակառուցման» քաղաքականության էությունը և նրա
զարգացման փուլերը.....80
2.2 Արցախյան շարժումը՝ որպես վերակառուցման ծնունդ.
«Ղարաբաղ» կոմիտեն և «Հայոց համազգային շարժումը» 87
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ
ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ «ՂԱՐԱԲԱՂ» ԿՈՄԻՏԵԻ
ԵՎ «ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ» ՆԿԱՏՄԱՄԲ.....149
3.1. Հայաստանի կոմկուսի կենտկոմի որոշումները «Ղարաբաղ»
կոմիտեի, ՀՀՇ-ի գործունեության արգելման ուղղությամբ 149
3.2. Աշխատավորական կոլեկտիվների պայքարը
հանրապետության քաղաքական կյանքի ժողովրդավարացման
համար.....202
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ՍՓՅՈՒՌՔՈՒՄ 238

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
1990 Թ. ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. 1991 Թ. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՔՎԵՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ 272
Վերջաբան 357
Резюме 361
Summary 364
Հավելված 1
Խորին հարցազրույցի հարցաշար՝ «Ղարաբաղ» կոմիտեի
անդամների և ՀՀՇ-ՀԱԿ ղեկավար գործիչների հետ
Հայոց նորագույն պատմության՝ Երրորդ հանրապետության ավելի
քան քառորդդարյա պատմության դասերը 367
ՀՀ անկախության հռչակագիրը 370
Աղբյուրների և գրականության ցանկ 382

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՆՐԻԿ ՄՈՒՇԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ

(1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ - 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Նար-Դոս, 1 նրբ., 16 տուն

Ստորագրված է տպագրության՝ 05.12.2019:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 24.875:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

Աբրահամյան Հենրիկ Մուշեղի

Պատմական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր

1968 թ. Հենրիկ Աբրահամյանը ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտուրա և 1973 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն, իսկ 1995 թ.՝ դոկտորական ատենախոսություն, այնուհետև ստացել է դոցենտի և պրոֆեսորի կոչում:

Հենրիկ Աբրահամյանը երկար տարիներ աշխատել է պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալ, այնուհետև՝ դեկանի պաշտոնակատար: 2000-2007 թթ. Հենրիկ Աբրահամյանը եղել է ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ:

Հ. Աբրահամյանը հինգ մենագրությունների, նույնքան բրոշյուրների, ուսումնական ձեռնարկների, դասախոսությունների նյութերի, տասը հատուկ դասընթացների և ավելի քան 100 գիտական, հրապարախոսական հոդվածների, գիտական թեզերի հեղինակ է:

Հենրիկ Մուշեղի Աբրահամյանը ԵՊՀ-ում երկար տասնամյակներ կատարած իր բարեխիղճ աշխատանքի համար արժանացել է մի շարք պարգևների. Երևանի պետական համալսարանի «Ոսկե մեդալի»՝ 2007 թ., Արդարադատության և Բարձրագույն կրթության նախարարությունների մի շարք պատվոգրերի, ՀՀ կառավարության (վարչապետի) շնորհակալագրի՝ 2009 թ., ՀՀ նախագահի շնորհակալագրի՝ 2014 թ., ՀՀ գիտության և կրթության նախարարության բարձրագույն պարգևի՝ «Ոսկե մեդալի»՝ 2018 թ. և այլն:

Հենրիկ Աբրահամյանը ղեկավարել և պատրաստել է պատմական և քաղաքական գիտությունների (միջազգային հարաբերությունների) երեք թեկնածուների: Այժմ նա ղեկավարում է երեք ասպիրանտների և շարունակում իր գիտական ու ստեղծագործական գործունեությունը:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019
publishing.ysu.am